

**Պ Ո Ղ Ո Ս Ա Ղ Ր Ի Ա Ն Ա Պ Ո Լ Ս Ե Ց Ի Ն Ե Վ  
Ի Ր  
« Խ Ր Ա Տ Ի Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն » Ե Ր Կ Ո**

Հայ Առաքելական Եկեղեցու սուրբ հայրերի կյանքն ու գրական վաստակը շատերին այսօր ոչ այնքան են հայտնի, որքան որ դրանք ի հայտ են եկել տարբեր ժամանակներում, և որքան որ դրանք հետ այսու լինելու են հայտնություն: Բանի սպասավոր և գրչության մշակ նրանց անանձնական կյանքն ու անսեփական, այսինքն՝ իրենց ժամանակակիցներին ու մանավանդ հետնորդներին հասցեագրված ժառանգությունը (ուսանելի կյանք և ըմբռնելի գրականություն) մեզ և մեզանից հետո եկողներին մատնացույց են անում դեպի բարին ու առաքինությունը, եղել են հոգևոր ջահ՝ իմացության աշտանակի վրա: Նրանք մեզ ոգեկոչել են հոգևոր միասնության, համերաշխ առաքինության և տիրապաշտ նվիրումի: Եվ թեպետ ժամանակի մեջ մեզ շատ են զգուշացրել, սակայն այլևայլ տարածամության բերումով մենք քիչ ենք զգաստացել. մեզ ընդմիշտ են իմաց տվել, մենք ոչ միշտ ենք իմացել: Ժամանակն է լսելու, ժամանակն է իմանալու:

18-19-րդ դդ. հայոց հոգևոր արժեքների, այլև գիտության ու մշակույթի հաստատման, ամրակայման ժամանակներ են եղել: Թե՛ մայր հայրենիքում և թե՛ տարաշխարհիկ կացության մեջ առաջ է գնացել հայոց հոգևոր կյանքը՝ վանքերում ու վանքապատկան կրթօջախներում, սրբասացության ձայնեղ աղոթքներով և մեկնաբանության ու խրատաբանության խոսուն մատյաններով:

Եվ ահա մեծ մի մատյան է Պողոս Աղրիանապոլսեցու «Խրատի թանգարանը», որ գրվել է 19-րդ դ. առաջին քառորդին, գրվել է իրենից հետո եկողների, ուրեմն նաև մեզ համար, և մենք այսօր է, որ պիտի կարդանք ու իմանանք:

Պողոս պատրիարք Աղրիանապոլսեցու կյանքը եղել է նվիրում Հայ Եկեղեցուն և հայոց հոգևոր գրականության առաջընթացին:

Կենսագրական տեղեկությունները թեև բավականին սուղ են, սակայն ամբողջական են, մանավանդ տարբեր տարիներին ծավալած գործունեության տեսակետից:

Ծնվել է 1763 թվականին, Աղրիանապոլսում, ազգանվամբ՝ Գրիգորյան: Հայրը՝ Գրիգորը, եղել է դերձակ, և որդին մինչև 28 տարեկան դառնալը «հետևել է հորենական արհեստին» (*Ն. արք. Պողոսեան, Սաղիմական, Երուսաղէմ, 1998, էջ 167*):

1790-92 թթ. գնացել է Պոլիս, այնուհետև Եգիպտոս և Բաղդադ՝ հայերեն, արաբերեն և պարսկերեն սովորելու նպատակով: Այսպիսով մինչև 1793 թ., այսինքն՝ բավականին հասուն տարիքը, նա տիրապետելիս է եղել ոչ միայն մայրենի լեզվին (նաև գրաբար), այլև արևելյան կարևոր երկու լեզուների: Մինչ այդ գիտեր թուրքերեն (նրա հեղինակությամբ մեզ է հասել հայատառ թուրքերենով գրված մի «Քարոզ»): Այս փաստերը ցույց են տալիս, որ եղել է ուսումնաստենչ անձնավորություն, մի հանգամանք, որը հետագայում արժանանում է լուրջ ուշադրության Պետրոս պատրիարք Եվդոկացու (1793-1800 թթ.) կողմից: Ուստի նրան ձեռնադրում են արեղա (1797 թ.) և կարգում նվիրակ Ջմյունհայի, Բուրսայի և Կուտինայի: Այնուհետև, 1809 թ. նշանակվում է Պոլսի փոխանորդ, 1814 թ. ձեռնադրվում եպիսկոպոս:

1815 թ. դեկտեմբերի 3-ին Պողոս Աղրիանապոլսեցին ընտրվում է Թուրքիո Հայոց պատրիարք, և հոգևոր այդ սպասավորմանը մնում մինչև 1823 թ. (հոկտեմբերի 18): Եվ մինչև 1841 թ. ստանձնել է հոգևոր զանազան ծառայություններ, հատկապես 1824-1841 թթ., երբ իրականացրել է Սրբոց Հակովբյանց վանքի ծայրագույն կառավարչի գործը: Հետագայում, տարիքն առնելու, տեսողության կորստյան (1842 թ.) հետ «ընկնում է անկողին» (1846 թ.): Վախճանվում է 1853 թ. մայիսի 5-ին և թաղվում Ս.Փրկչի գավթում, հանգուցյալ պատրիարքների կողքին:

Պողոս Աղրիանապոլսեցին ունեցել է «պերճախոս հոգևորականի» համարում: Մեզ են հասել նրա

հեղինակած և թարգմանած երկերը: Գրել է զգալի թվով աշխատություններ, որոնք ավանդված են տպագիր կամ ձեռագիր վիճակով. «Պատմություն անցից, որ եղել է Կ.Պոլիս» (Կ.Պոլիս, 1824 թ.), «Բուրաստան Ս. Երուսաղեմի» (1798 թ., Ձեռ. Սր. 34. 437), «Հաւատամք ի գրոց Յովհաննու Երզնկացոյ» (ՄՄԶ, 3300), «Քարոզ» և այլն: Ժամանակի ընթացքում տարբեր հեղինակների երկերի համառոտումով և թարգմանությամբ թողել է աստվածաբանական և մեկնողական հարուստ գրականություն. «Չանագանութին Հինգ դարուց» (հեղ.՝ Պ.Տ. Ֆերզ, հհ. 1-3, Երուսաղէմ, 1838-1840 թթ., այլև այդ երկի Բառարանը, 1844 թ.), «Մեկնութինք ժԲ Մարգարէից եւ Յայտնութեան Յովհաննու» (հեղ.՝ Կուրնելիոս, համառոտ., 1797 թ., Ձեռ. Սր. 34. 382), «Մեկնութին Հնգամատենի» (հեղ.՝ Կուրնելիոս, համառոտ., 1798 թ., Ձեռ. Սր. 34. 1820), «Մեկնութին Եզեկիէլի եւ Ղանիէլի» (հեղ.՝ Կուրնելիոս, համառոտ., 1798 թ., Ձեռ. Սր. 34. 383), «Մեկնութին Եսայեայ» (հեղ.՝ Կուրնելիոս, Ձեռ. Սր. 34. 267) «Մեկնութին Երեմիայի» (հեղ.՝ Կուրնելիոս, համառոտ., շուրջ 1800 թ., Ձեռ. Սր. 34. 432, թերի), «Անտառ այլաբանութեան» (հեղ.՝ Հերոնիմոս Լաուերդրոս, Ձեռ. Սր. 34. 385), «Անտառ նորագոյն մտածմանց» (հեղ.՝ Գալամատոս, Ձեռ. Սր. 34. 1830):

Ավելորդ չենք համարում ավելացնելու, որ մեզ են հասել բազմաթիվ «Թղթեր», որոնց հեղինակները (Հովհ. Վանանդեցի, Մ. Կյունուշխանեցի և այլք), անդրադառնալով ժամանակի հուզող այս կամ այն հարցին, դրանք ուղղել են Պողոս Ադրիանապոլսեցուն (տե՛ս ՄՄԶ, 139, 175, 2696, 2864, 3300, 9261 և այլն):

Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու երկերի մեջ նշանակալից երևոյթ է «Խրատի թանգարանը», որը գրված է մեծ սիրով ու նվիրումով, երևոյթի վերլուծության և մեկնաբանության ամենայն մանրամասնությամբ, ժամանակի գրաբար լեզվով, որն այդուհանդերձ բավականին մատչելի է և պարզ:

Առհասարակ խրատը մեծից փոքրին մատուցվող խոսք է, իմաստուն և բանիմաց մարդու դաստիարակչություն դեռահասին և թերիմացին, հոգևոր սպասավորի մաղթանք առօրյայից դեպի երկնայինը երագողին ու նախապատրաստվողին:

Հայտնի է, որ հայ միջնադարյան գրականության մեջ խրատը մի առանձին տեսակ (ժանր) է եղել: Լայն առումով խրատը մտնում է առակի ժանրի մեջ: Շատ հաճախ այն կոչվում է և առակ, թեև այս վերջինից տարբերվում է նրանով, որ չի ունենում այլաբանական շեշտվածություն, այլ դիպաշարը կառուցված է լինում ուղղակի իմաստով:

Հոգևոր խրատը բոլորովին տարբերվում է թե՛ նպատակադրումով և թե՛ բովանդակությամբ: Այն սովորեցնում է լցվել առաքինություններով և հեռու մնալ մոլություններից: Հայ իրականության հոգևոր դաստիարակման անսպառ աղբյուր է եղել իր եկեղեցին: Նրանից բխող երկնամբարձ լույսը սփռվել է նաև դեպի այդ եկեղեցին եկող հավատացյալների հոգու մեջ: Մեզանում հոգևոր խրատը գալիս է քրիստոնեության ընդունումից ի վեր: Այդ ժամանակից էլ գրվում են բազմաթիվ մատյաններ, որոնցում սուրբ հայրերի ձեռքով մատնացույց է արվում բարու և առաքինության ճանապարհը, չարից հեռու մնալու և նրան ընդդիմանալու տոկունության միջոցը:

Եվ ահա այդպիսին է նաև Պողոս Ադրիանապոլսեցու «Խրատի թանգարանը», որ մի տեսակ խտացումն է սուրբ հոգևորականի բարեպաշտ փորձի և իմաստնության, որ ավանդում է իր ժամանակակիցներին ու հետնորդներին: Նման խրատներ մեզանում միշտ եղել են, միշտ նպաստավոր են եղել, և այսօր ևս մենք մեծապես զգում ենք դրանց կարիքը: Իր խրատանու մասին Պողոս պատրիարքը հատուկ նկատառումով հետևյալն է գրում. «Ոչ ոք թող չասի, թե անթիվ են սուրբ հայրերի կամ իմաստասերների խրատական գրքերը, մանավանդ որ Աստվածաշունչ մատյանն ամենուրեք անշեղ ուղեցույց է բարու ճանապարհը ցանկացողներին: Եվ ի՞նչ, մի՞թե անհարկի բան է միևնույն օգտակար դեղը զանազան եղանակներով մատուցելը տկարներին, ոմանց՝ դառնահամ, և ոմանց՝ քաղցրահամ, որովհետև մեկն այս, իսկ մյուսն այն է այսորժում ստանալ»:

Եվ այդպես էլ վարվում է սույն «Խրատի» հեղինակը. նախ՝ խրատներ է տալիս այս կյանքով ապրողներին՝ սկսած առաջնորդներից ու քահանաներից, հասնելով իշխաններին ու իշխանավորներին, այնուհետև ընդհանրական միավորին՝ ժողովրդին, խրատում է նրանց լինել ազգասեր, լինել ուսուցիչ,

և ծնող լինելու դեպքում դաստիարակել առաջադեմ ու առողջ հասարակություն, առաքինասեր վարքով ապրող հանրություն: Այնուհետև՝ ընտանեկան հարաբերություններում լինել ծնողասեր, երիտասարդության մեջ՝ աշխատանքով ու բարյացակամ տրամադրությամբ ապրող մշակ: Հասարակության անդամների ձգտումը պիտի լինեն գիտությունը, այս կյանքի բարվոք վիճակը, երջանկությունը: Ինչպես առօրյա կյանքում ենք եռանդուն, այդպես էլ պիտի անհապաղ լինենք առաքինության և խոհեմության, գաղտնապահության և խղճմտանքի մեջ: Բարին ու բարեկամասեր լինելու պարագային մեզ զարդարելու են արդարամտությունը, ճշմարտասիրությունը և հյուրասիրությունը: Առօրյա պահանջմունքի մեջ լինել չափավոր, զբաղվել բնության անխաթար պահպանումով, մշակման ու ծաղկեցման գործով: Հնազանդություն մեծերին և Ամենամեծին՝ Տիրոջը, խոնարհություն Տիրոջ կամքին և երկյուղածություն Նրա զորության հանդեպ: Համբերություն այս տառապալից կյանքում և խոկում մահվան շուրջ: Այս ամենը, որն այլ կերպ մեկնաբանելն ու մանրամասնելը երևի թե հնարավոր չէ, կազմում է «Խրատի թանգարան» երկի այն մասը, որը գրված է բարության, առաքինության հաստատման նպատակով: Դա նկատում ենք գրքի առաջին մասում, որն ավելի ծավալուն է և մանրամասն:

Գրքի երկրորդ մասը ներառում է մարդկային մոլություններից ձերբազատվելուն վերաբերող խրատները: Մարդկային անպահեցողական կյանքից են առաջ գալիս այդ մոլությունները, որոնք այլ բան չեն, քան մոլորություններ: Այստեղ էլ հեղինակը իմաստուն խոհականությամբ նախ պարզաբանում է, թե ինչ արատներ են չարությունն ու հպարտությունը, անտեղի (մանավանդ նյութական) շռայլությունն ու ինացության ժամանակի վատնումը, այնուհետև՝ ցույց է տալիս, որ հոգեկան վրիպումներ են նախանձը և ապերախտությունը, բարկությունը, ազահությունը և անգործությունը, անձնախեղ որկրամոլությունը և հարբեցողությունը և այլն: Նշում է, որ մտավոր հանդարտությանը վնաս են տալիս բամբասանքն ու անտեղի դատապարտումը: Պակաս աղետ չեն մարդու աշխարհային կյանքում տեղ գտնող հայիոյությունն ու մատնությունը, սուտն ու նույնպիսի վկայությունը, նաև նույն կարգի երդումը: Պետք չէ, որ մարդու կյանքին ուղեկից լինեն կախարդությունն ու հուսահատությունը: Եվ այդպիսի մոլություններից զերծ մնալը պահանջում է անկոտրում կամք, անխափան եռանդ՝ գայթակղություններից ձերբազատվելու հարատև պայքարի մեջ: Ամեն օր և ամեն պահ լինել անկոտրում չարի անագորույն ոտնձգությունների հանդեպ: Բարության սերմերի ծլարձակումն ու վերընծյուղումը ապահովել մաքրակենցաղ աշխատասիրությամբ և ջերմեռանդ նվիրումով, մշտաբարուն հոգածությամբ սիրել մերձավորին ու բարեկամին, լույսի ու մտքի սերմանողին:

«Խրատի թանգարանի» վերջին մասում տեղ են գտել նաև էջեր, որոնցում խոսվում է քրիստոնյայի փրկության անհրաժեշտ միջոցների մասին. դրանք են՝ ապաշխարությունը, պահքը, ողորմությունը: Ամենավերջում խոսվում է Աստծու ընտրյալների հավանական նշանների վերաբերյալ: Եվ այս ամենը շարադրվում է պարզ ու ոյուրըմբռնելի ձևով, իր ազգի մարդկանց հոգու մեջ եկեղեցասիրության ամրակայման նպատակով:

Եվ ամենից առաջ եկեղեցասիրություն, այնուհետև հավատ և սեր բարեկամի, ընկերոջ նկատմամբ, այնուհետև նվիրում գործի ու կատարելիքի մեջ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և տարբեր ժամանակներում նրա հայրերի ստեղծած գրական ժառանգությունը այսօր ևս միակ ու անփոխարինելի օրինակ են հայության զավակաց համար: Հիշենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այն միտքը, որ «Եկեղեցին միութիւնն է այն անձանց, որոնք հաւատում են Քրիստոսի վարդապետութեանը, մասնակցում են Նրա կեանքին որպէս անդամներ Նրա հաստատած Ս. Եկեղեցուն, Քրիստոս Ինք լինելով գլուխը այդ մարմնի, առանցքը այդ միութեան. «Եւ զնա (զՔրիստոս) եղ (Աստուած) գլուխ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն որ զամենայն յամենայնի լնու» (Թուղթ առ Եփեսացիս ժԲ 5), (Գարեգին Բ Կաթողիկոս, «Հայաստանեայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», Անթիլիաս, 1994 թ.):

Գիրքը գրված է ներհուն հոգևորականի, իմաստուն խրատողի գրչով: Ամեն մի երևույթ բացատրվում է լայն մեկնաբանությամբ ու վերլուծությամբ: Ամենուրեք նկատելի է խրատողի փորձն ու համո-

զողի հոգեբանությունը. մեջբերումներ և վկայակոչումներ Աստվածաշունչ գրքից, քրիստոնեական եկեղեցու մյուս գրքերից, եկեղեցու հայրերի աստվածաբանական ու մեկնաբանական երկերից, ինչպես նաև հին աշխարհի և հայոց հեռու ու մոտիկ անցյալի հանրածանոթ, խրատաշահ գրքերից, ասույթներից:

«Խրատներն» ունեն հստակ և կուռ կառուցվածք. նյութի շարադրանքը տրվում է բովանդակային ամբողջություն կազմող հատվածների (նաև պարբերությունների) գլխակարգումով, որոնցով ավելի մատչելի են դառնում ողջ խրատի ընկալումն ու յուրացումը:

Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցին 19-րդ դ. այն մտավորական հոգևորականներից է, որոնք գործելով հիմնականում դարի առաջին կեսին, շարունակում էին իրենց կարևորագույն երկերը գրել ժամանակի գրաբար հայերենով:

«Խրատի թանգարան» գիրքը ևս գրվել է գրաբարով, որի պատճառով էլ ոչ բոլորն են, որ ժամանակի ընթացքում ընթերցել են հանրագիտարանի տպավորություն թողնող այդ արժեքավոր երկը: Այդուհանդերձ այն եղել է տարբեր ժամանակների գրասեր ու աստվածապաշտ մարդկանց լայն ընթերցման գիրք: Վերջինս գրված է առհասարակ հարուստ լեզու և գրաբարի սքանչելի իմացություն ունեցող հեղինակի ձեռքով: Այդ են վկայում ոչ միայն գրաբարի դրսևորումն ըստ ամենայնի, այլև նոր ժամանակի (18-19-րդ դդ.) այդ նույն լեզվի բառային և քերականական կառուցվածքին լիովին տիրապետելը, նոր բառերի և բառային նոր իմաստների ազատ ու ճշգրիտ գործածությունը և այլն: Նկատելի են բազմաթիվ նոր բառեր. օրինակ՝ նորաքայլ (Եւ յայտոցիկ մշտամարտ թշնամեաց առաւել քան զայլս վնասին նոքա, որք նորաքայլ են եւ յողոդդուն ի բարեգործութեան ճանապարհի), ազատաքայլ (Իսկ մինչ յարատեւեն ի գործս բարի, լինին ազատաքայլ եւ անսայթաք), կենսաւոր (Իսկ եթէ ոստն իցէ դալար, յայտ է, թէ արմատ նորա է կենսաւոր), աղքատալեզու (Եւ ոչ ածեն ի միտ, թէ ողջոյն ազգն նախատելի լինի առաջի այլոց ազգաց իբրեւ աղքատալեզու) և այլն: Կան բառերի իմաստային նոր կիրառություններ. օրինակ՝ անմէջ «անմիջական, չմիջարկված» (Արդ՝ նուիրումն անծին ծրիապէս՝ է գործ ազատաբարոյի, իսկ ակնկալութիւնն վարձուց է գործ ծառայի, զի այս երկուց ծայրք են անմէջ) և այլն: Հեղինակի խոսքը հագեցած է ժամանակի լեզվամտածողությանը բնորոշ ոճերի ու արտահայտությունների տեղին, պատշաճ գործածությամբ: Միանգամայն տեղի կլինի, եթե ասենք, որ այս գիրքն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, որովհետև գրված է շատ մատչելի լեզվով, հայրական խորհուրդներով ու հանդարտ մատնանշումներով դեպի այս կամ այն երևույթը, դեպի այս կամ այն կարևորությունը կամ անկարելիությունը:

Եվ այս ամենը հանգամանքներ են, որոնց անդրադառնալը հարկավոր է այն առումով, որ «Խրատի թանգարանը» այժմ ներկայացվում է մեր հավատացյալ ժողովրդին՝ ի նպաստ նրա առաջ գնալուն բարությունների մեջ և ի գիտություն նրա թերացումին՝ մոլորություններին տեղիք տալու առումով:

«Խրատի թանգարան» գիրքը թարգմանվել է Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ, որը ամեն մի թարգմանչի համար կարող էր լիովին պարտավորեցնող լինել, և այդպիսի մի պարտաճանաչություն այս դեպքում ըստ կարելիության իրականացված է: Ընթերցելով գրքի այս թարգմանությունը, որը կատարված է գրաբար բնագրի 3-րդ տպագրությունից (Երուսաղեմ, 1870 թ.), շատ ուսանելի ու օրինակելի բաներ կգտնի ընթերցողը, շատ խոտելի ու անհարկի բաներ էլ կարելի կլինի թոթափել, հաղթահարել:

Միանգամայն վստահեցնող է հեղինակի հետևյալ նկատառումը. «Տիրոջ շնորհով հույս ունենք, թե շատերն այս գրքի ընթերցումով իրենց համար օգուտ կքաղեն և առաքինության նազելի զեղեցկության սիրով վառվելով՝ կգարդարվեն բարի գործերով: Որովհետև ինչպես որ մարդն անձնիշխան կամքով Աստծու պատկեր է, նաև բարոյական առաքինությամբ պիտի լինի Աստծու կամքին համաձայն, որով կբարձրանա՝ նմանվելու Աստծուն, ընդունելու առաքինության գործերի արդյունքը՝ երանական փառքը, որ խոստացավ Աստված իր սիրելիներին: Եվ ահա այս մտքով ջանացինք աշխատասիրել այս մատյանը՝ հուսալով Աստծու առատ ողորմությունը, թե մեզ ևս վարձքից անմասն չի թողնի՝ ըստ այսմ. «Ով մեղավորին իր մոլորության ճանապարհից հետ դարձնի, կփրկի իր հոգին մահվանից և կծածկի

բազում մեղքերը» (հմմտ. Հակոբ Ե 20):

Հայոց եկեղեցու մեծ սպասավոր Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու «Խրատի թանգարան» գիրքը արդի հայերեն թարգմանությամբ, կարծում ենք, շատ կողմերով կօգնի մեր հավատացյալ ժողովրդին՝ հավատքի մեջ ամրանալու, առօրյայի մեջ մաքրվելու, մտքի մեջ միակամ լինելու համար:

Վ ա գ գ ե ն չ      Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ի Մ Յ Ա Ն

## Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա վեհափառ հայրապետի հանձնարարությամբ սիրահոժար ձեռնամուխ ենք եղել սույն թարգմանությանը: Թարգմանությունը կատարված է բնագրի երրորդ հրատարակությունից («Թանգարան խրատու, յօրինեալ ի Պօղոս Պատրիարքէ Անդրիանօսօլսեցոյ», Երուսաղէմ, Սրբոց Յակովբեանց տպարան, 1870 թ.):

Սուրբգրային մեջբերումները տալիս ենք ըստ արևելայիայերեն նոր թարգմանության (Ս. Էջմիածին, 1994 թ.), բացառությամբ այն սակավ դեպքերի, երբ արևելահայերեն և գրաբար թարգմանությունների միջև կան իմաստային տարբերություններ, որոնց անտեսումը կարող էր խաթարել հեղինակի արտահայտած ընդհանուր միտքը:

Քանի որ թարգմանությունը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար և գիտական թարգմանություն լինելու կամ կոչվելու հավակնություն չունի, ուստի անտեղի համարեցինք մեր կողմից խիստ անհրաժեշտաբար ավելացվող բառերն առնել ուղիղ փակագծերի մեջ ([ ]), ինչպես դա ընդունված է անել նման որոշ հրատարակություններում:

Ակամա թույլ տրված վրիպակների և չնկատված սխալների համար հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

# Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Մ ար դ ու ն Ե ր կ ու ն ու ն ա կ ու թ յ ու ն է հ ա -  
տ ու կ ՚ ի մ ա գ ա կ ա ն մ ի տ ք ն ու ա գ ա տ  
կ ա մ ք ը , ո Ր ո ն ց ո ՚ վ է ն ա մ ա Ր դ : Մ տ ք ի  
գ ո Ր ծ ը ճ շ մ ա Ր տ ու թ յ ու ն ը ճ ա ն ա չ ե լ ն է &  
բ ա Ր ու ու չ ա Ր ի մ ի ջ & ը ն տ Ր ու թ յ ու ն  
կ ա տ ա Ր ե լ ը , ի ս կ կ ա մ ք ի ն ը չ ա Ր ի ց  
Խ ո Ր շ ե լ ն ու ա գ ա տ բ ե Ր ու մ ո վ բ ա Ր ի ն  
գ ո Ր ծ ե լ ը :

Ե վ ս Ր ա ն ց ո վ , ա ս ե ս Ե ր կ ու թ & ո վ , մ ա Ր -  
դ ը բ ա Ր ծ Ր ա ն ու մ է լ ի ն ե լ ու Ա ս տ ծ ու  
պ ա տ կ ե Ր ն ու ն մ ա ն ու թ յ ու ն ը , ի ն չ պ ի -  
ս ի ն ս տ ե ղ ծ վ ե ց & ա ռ ա ջ ի ն մ ա Ր դ Ա դ ա -  
մ ը ը ս տ ա յ ս մ . « Մ ա ՚ Ր դ ս տ ե ղ ծ ե ն ք Մ ե Ր  
կ ե Ր պ ա Ր ա ն ք ո վ ու ն մ ա ն ու թ յ ա մ բ »  
( Ծ ն ն դ . Ա 2 6 ) :

Մ ա Ր դ ը մ ե ղ ա ն չ ե լ ո վ կ ո Ր ց Ր ե ց Ա ս տ ծ ու  
ն մ ա ն ու թ յ ու ն ը , բ ա յ ց ո չ Ա ս տ ծ ու պ ա տ -  
կ ե Ր լ ի ն ե լ ը : Ո Ր ո վ հ ե տ & հ ա մ ա Ր վ ու մ է ,  
թ ե պ ա տ կ ե Ր լ ի ն ե լ ն ը ս տ բ ն ա կ ա ն կ ա Ր -  
գ ի է , ի ս կ ն մ ա ն լ ի ն ե լ ը ը ս տ բ ա Ր ո -  
յ ա կ ա ն կ ա Ր գ ի : Ե վ ի ն չ բ ն ա կ ա ն է ,  
բ ն ու թ յ ու ն ի ց է & ա ն ե ղ ծ : Ու ս տ ի ի ն չ -  
պ ե ս ո Ր ն ա խ ք ա ն մ ե ղ ա ն չ ե լ ն է Ր մ ա Ր դ ն  
ա ն ձ ն ի շ խ ա ն , ն ու յ ն պ ի ս ի ն մ ն ա ց & ա ն -  
կ ու մ ի ց հ ե տ ո :

Բ ն ա կ ա ն ո վ ո չ ո ք չ ի կ ա Ր ո ղ ժ ա ռ ա ն գ ե լ  
Ա ս տ ծ ու ն . ո Ր ո վ հ ե տ & բ ն ա կ ա ն գ ո Ր ծ ո -  
ղ ու թ յ ու ն ն ա գ ա տ կ ա մ ք ո վ չ ի կ ա տ ա Ր -  
վ ու մ , ա յ լ բ ն ու թ յ ա ն ս տ ի պ մ ու ն ք ո վ , &  
ի ն չ ո Ր կ ա տ ա Ր վ ու մ է բ ն ու թ յ ա ն  
ս տ ի պ մ ու ն ք ո վ , ա Ր ժ ա ն ի չ է վ ա Ր ծ ի կ ա մ  
պ ա տ ժ ի : Ի ս կ բ ա Ր ո յ ա կ ա ն ը , ո Ր ա գ ա տ  
կ ա մ ք ո վ է կ ա տ ա Ր վ ու մ , ա Ր ժ ա ն ի է լ ի -  
ն ու մ վ ա Ր ծ ի կ ա մ պ ա տ ժ ի :

Ու Ր ե մ ն մ ա Ր դ ը բ ա Ր ո յ ա կ ա ն ա ռ ա ք ի -  
ն ու թ յ ա մ բ պ ե տ ք է ն մ ա ն վ ի Ա ս տ ծ ու ն ,  
ո Ր ո վ հ ե տ & ա յ ս է , ո Ր մ ա Ր դ ու ն Ա ս տ -  
ծ ու ն ն մ ա ն է դ ա Ր ձ ն ու մ : Ե վ ք ա ն ի դ ե ռ  
մ ա Ր դ ը չ ի ն մ ա ն վ ե լ Ա ս տ ծ ու ն , չ ի կ ա -  
ր ո ղ գ տ ն ե լ ա յ ն փ ա ռ ք ը , ո Ր կ ո Ր ց Ր ե ց ,  
Ե Ր Բ Ա ս տ ծ ու ն ն մ ա ն է Ր :

Ա յ ս ն մ ա ն ու թ յ ու ն ը հ ի մ ն վ ու մ է Ա ս տ -  
ծ ու կ ա մ ք ի հ ե տ հ ա մ ա ձ ա յ ն ու թ յ ա ն  
վ Ր ա , ի ն չ ի հ ա մ ա Ր Ա ս տ վ ա ծ տ վ ե ց  
պ ա տ վ ի Ր ա ն ն ե Ր ը & ց ու յ ց տ վ ե ց Ի Ր  
կ ա մ ք ի ն հ ա ճ ե լ ի ն , ո Ր պ ե ս գ ի մ ա Ր դ ջ ա -  
ն ա մ ի ա յ ն Ն Ր ա ն հ ա ճ ո յ ա ն ա լ & մ ի ա յ ն  
Ն Ր ա ն ծ ա ռ ա յ ե լ : Ո Ր ո վ հ ե տ & պ ա տ վ ե Ր ը

ն չ ա յ լ ի ն չ է , ե թ ե ն չ պ ա տ վ ի ը ը ի  
կ ա մ ք ը , & ն չ ա յ լ ի ն չ է Ա ս տ ծ ու կ ա մ -  
ք ի ն ծ ա ռ ա յ ե լ ը , ե թ ե ն չ հ ո ժ ա ը կ ա մ ք ո վ  
հ ն ա զ ա ն դ վ ե լ ն ու ա յ դ պ ա տ վ ե ը ը պ ա հ ե -  
լ ը : Ո ը ը ղ հ ե տ & մ ա ը դ ու զ ո ը ը ու թ յ ա ն  
ն պ ա տ ա կ ը պ ի տ ի լ ի ն ի Ա ս տ ծ ու կ ա մ ք ը  
ը ս տ ա յ ս մ . « Ա յ ն , ո ը հ ա ն գ ի ս տ ն է  
հ ո գ ն ա ծ ն ե ը ի , & Ն ը ա կ ա մ ք ը ա ը ա ը ա ծ -  
ն ե ը ի գ ո ը ը » :

Ու ս տ ի ո վ հ ո ժ ա ը ա կ ա մ ս ի ը ը վ պ ա հ ու մ  
է Ա ս տ ծ ու պ ա տ վ ի ը ը ա ն ն ե ը ը , լ ի ն ու մ է  
Ն ը ա կ ա մ ք ի ն հ ա մ ա ծ ա յ ն , ի ն չ ն է լ ը ս տ  
բ ա ը ը յ ա կ ա ն կ ա ը գ ի Ա ս տ ծ ու ն ն մ ա ն վ ե լ ն  
է , ո ը ը ղ հ ե տ & ա ն հ ն ա ը է , ո ը ա ը ա ը ա ծ -  
ն ե ը ն է ու թ յ ա մ բ ն մ ա ն վ ե ն Ա ս տ ծ ու ն :

Ա յ ս մ տ ք ո վ է Ս ու ը բ Գ ի ը ք ը մ ե գ ու -  
ս ու գ ա ն ու մ ծ ա ռ ա յ ե լ Ա ս տ ծ ու կ ա մ ք ի ն ,  
ո ը պ ե ս զ ի կ ա ը ը ղ ա ն ա ն ք ժ ա ռ ա ն գ ե լ  
Ա ս տ ծ ու ն ի բ ը & վ ե ը ջ ի ն ն պ ա տ ա կ :  
Ե վ ք ա ն գ ի Ա ս տ վ ա ծ ո ղ ո ը մ ա ծ է &  
մ ա ը դ կ ա ն գ տ կ ա ը ու թ յ ու ն ն ե ը ի գ ի տ ա կ ,  
ու ս տ ի կ ա մ ե գ ա վ մ ա ը դ կ ա ն գ բ ա ը ք ի  
ու ղ ղ վ ե լ ը , ո ը ը լ լ ի ն ու մ է մ ի ա յ ն ա ռ ա -  
ք ի ն ու թ յ ա մ բ :

Ի ս կ ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն ն ե ը ը հ ի մ ն ե գ  
դ յ ու ը ի ն ս կ զ բ ու ն ք ն ե ը ը վ , ո ը պ ե ս զ ի  
բ ո լ ո ը ի հ ա մ ա ը հ ե շ տ ը ն կ ա լ լ ի ն ե ն , &  
ն չ ո ք պ ա տ ճ ա ռ չ բ ը ն ի ի ը տ կ ա ը ու թ -  
յ ու ն ն ու ա ն գ ո ը ու թ յ ու ն ը ը ս տ ա յ ս մ .  
« Ն ը ա պ ա տ վ ի ը ը ա ն ն ե ը ը ծ ա ն ը չ ե ն » (Ա <Ովհ. Ե  
4), & թ ե . « Ի մ լ ու ծ ը ք ա ղ գ ը է , & Ի մ  
բ ե ը ը թ ե թ & » (Մ ա տ թ . ժ Ա 3 0 ) :

Ք ա ն գ ի ի ն չ կ ա ա վ ե լ ի դ յ ու ը ի ն , ք ա ն  
ս ե ը ը , ք ա ն խ ո ն ա ը հ ու թ յ ու ն ը , ժ ու ժ կ ա -  
լ ու թ յ ու ն ը , հ ե գ ու թ յ ու ն ը , հ ա մ բ ե ը ու թ -  
յ ու ն ը , ն ե ը ո ղ ա մ տ ու թ յ ու ն ը , պ ա հ ե գ ո -  
ղ ու թ յ ու ն ը , ա ղ ո թ ա ս ի ը ու թ յ ու ն ը , ո -  
ղ ո ը մ ու թ յ ու ն ը & ա յ լ ն , ո ը ո ն ք ն ա & ա -  
ն ա շ խ ա տ ե ն ա ը վ ու մ , & ա մ ե ն ո ք կ ա -  
ր ո ղ է ա ն ե լ :

Ի ս կ ե թ ե Ա ս տ վ ա ծ ա մ ե ն ք ի գ պ ա հ ա ն ջ ե ը  
Ս ա մ ս ո ն ի ու ժ ե ղ ու թ յ ու ն ը , Ա ս ա յ ե լ ի ա -  
ր ա գ ը ն թ ա գ ու թ յ ու ն ը , < ե ը ա կ լ ե ս ի ա -  
ր ի ու թ յ ու ն ը , Ա ը ի ս տ ո տ ե լ ի ի մ ա ս տ -  
ն ու թ յ ու ն ը , Վ ե ը գ ի լ ի ո ս ի բ ա ն ա ս տ ե ղ -  
ծ ա կ ա ն ու թ յ ու ն ը , ա յ ն ժ ա մ մ ա ը դ ի կ կ ա -  
ր ո ղ է ի ն ի ը ե ն գ ա ն պ ա տ ժ ա պ ա ը տ հ ա մ ա -  
ր ե լ : Բ ա յ գ ա յ ժ մ ա ն պ ա տ ժ ա պ ա ը տ մ ն ա լ  
չ ե ն կ ա ը ո ղ , ե ը բ չ ե ն ա ռ ա ք ի ն ա ն ու մ .  
ա ռ ա ք ի ն ու թ յ ա ն գ ո ը ը ե ը ը դ յ ու ը ի ն ե ն &  
ա մ ե ն մ ե կ ի հ ա մ ա ը հ ն ա ը ա վ ո ը , ք ա ն ի



նր պահանջում են միայն կամքի հո-  
ծարություն, & այն պատրաստ է, եթե  
կամենում է մարդ:

Տե՛ս Աստուծո՛ւ & մյուս գթությունը, նր  
նչ միայն դյուրիմ սկզբունքներով  
կարգեց առաքինությունները, այլ & ա-  
մենքից միաջափ չպահանջեց, այլ ըստ  
յուրաքանչյուրի կարողություն: Որով-  
հետև & նշադրատներից տուրք է պա-  
հանջում, ո՛չ հիվանդներին՝ ծննդապա-  
հություն, ո՛չ տգետներին՝ խրատ:

Արդար &, Աստված ինչպես որ ամենքի՛ն  
ըստ յուրաքանչյուր կարգի ու աստի-  
ճանի պարգևում է բավական շնորհ,  
նույնպես & ամենքից պահանջում է,  
որ բարիք գործեն այդ շնորհով, որ  
տվեց նրանց ծրիաբար: Որովհետև  
շնորհը տրվում է Աստուծոց, իսկ գոր-  
ծածությունը պահանջվում է մար-  
դուց: Ա՛յս է նշանակում Աստուծո՛ւ  
շնորհի՛ն գործակից լինել՝ Նրան հա-  
ճելի լինելու համար:

Բայց Աստուծո՛ւ շնորհի գործածությու-  
նը կատարվում է բարոյական առաքի-  
նություն. ուստի մարդու կյանքում  
նչինչ ավելի օգտակար ու հարկավոր  
չէ, քան բարոյական առաքինություն  
սովորելը: Իսկ բարոյական առաքի-  
նություններն էլ արդյունավորվում  
են աստվածաբանական առաքինությու-  
նում, որոնք են՝ հավատ, հույս  
& սեր: Հավատը ճանաչել է տալիս  
Աստուծո՛ւն, հույսն առաջնորդում է դե-  
պի Աստված, & սերը՝ միավորում  
Աստուծո՛ւ հետ:

Բարոյական առաքինությունները մի-  
ջոց են աստվածաբանական առաքի-  
նություններն ամբողջական պահելու  
համար: Ուստի աստվածային ու մարդ-  
կային առաքինությունները, միմյան-  
ցից անջատ, չափահաս մարդուն չեն  
հասցնում երանական փառքին՝ Աստ-  
ծուն ժառանգելուն, քանի որ հավատն  
առանց գործերի, & գործերն առանց  
հավատի մեռած են (տե՛ս Հակոբ Բ 14-26), որովհե-  
տև & աստվածաբանական առաքինությու-  
նում այնպիսին են, ինչպիսին  
հոգին է, & մարդկայինները, որ  
նույն ինքն բարոյականներն են, այն-  
պիսին են, ինչպիսին մարմինն է:  
Արդար &, միայն առաքինությամբ է

մ արդ ու կ ամ ք ն ու ղ ղ վ ու մ փ մ ամ ան վ ե լ ու  
Ա ս տ ծ ու կ ամ ք ի ն : Ի ս կ ա ռ ա ք ի ն ու թ -  
յ ու ն ն եր ը մ ե գ ա ն ու մ գ ո թ Վ ու մ ե ն  
ջ ա ն ք թ ա փ ե լ ո վ ու կ թ թ ու թ յ ա մ ք : Ե վ  
ք ա ն ի ո թ մ ար մ ի ն ը մ ար դ ու մ ի տ ք ը հ ա -  
կ ու մ է դ ե պ ի հ ո ղ ե ղ ե ն հ ա թ կ ե թ ը , &  
բ ա գ ու մ ար գ ե լ ք ն եր ե ն հ ա ն դ ի պ ու մ ա -  
ռ ա ք ի ն ի ն եր ի ն ա յ ս կ յ ա ն ք ի ճ ա ն ա պ ա թ -  
հ ո վ Ա ս տ ծ ու մ ո տ ե լ ն ե լ ի ս , ու ս տ ի  
մ ար դ ն ու ն ի խ թ ա տ ն եր ի ու հ ո թ դ ո թ ն ե -  
ր ի ա ռ ա ջ ն ո թ դ ու թ յ ա ն կ ա թ ի ք : Ա յ ս  
պ ա տ ճ ա ռ ո վ ս ու թ ք հ ա յ թ եր ը , վ ա թ դ ա -  
պ ե տ ն եր ն ու հ ա վ ա տ ա գ յ ա լ հ ո գ ի ն եր ի  
տ ե ս ու չ ն եր ը մ ի շ տ հ ո գ ա գ ի ն & հ ո գ ու մ  
ե ն մ ար դ կ ա ն գ ու ս ու լ գ ա ն ե լ & հ ո թ դ ո թ ե լ  
Ա ս տ ծ ու կ ամ ք ի հ ա մ ա ծ ա յ ն բ ա թ ի ք գ ո թ -  
ծ ե լ , ք ա ն գ ի պ ա թ ա վ ո թ ու թ յ ու ն ի գ չ ե ն  
ա գ ա տ վ ի , ե թ ե ի թ ե ն գ ա ն ծ ի դ յ ու թ ու թ -  
յ ա ն հ ա մ ա թ չ հ ո գ ա ն խ թ ա տ ե լ ու ն թ ա ն գ ,  
ո թ ո ն ք կ ա թ ո տ ե ն խ թ ա տ ն եր ի :  
Մ ե ն ք & ս , ա յ ս պ ա թ ա վ ո թ ու թ յ ու ն ն ու -  
ն ե ն ա լ ո վ , Տ ի թ ո ջ ո ղ ո թ մ ու թ յ ա մ ք ա յ ժ մ  
հ թ ա ժ ա թ վ ա ծ լ ի ն ե լ ո վ պ ա տ թ ի ա թ ք ա կ ա ն  
գ ո թ ծ եր ի գ , հ ա ս տ ա տ վ ա ծ լ ի ն ե լ ո վ Ս ք .  
Եր ու ս ա ղ ե մ ի վ ա ն ք ու մ , ո թ խ թ ի ս ու -  
պ ո լ ս ու մ է , չ կ ա մ ե ն ա լ ո վ թ ա ն կ ա թ ծ ե ք  
ժ ա մ ա ն ա կ ն ա ն ա շ խ ա տ վ ա տ ն ե լ , ո թ ո շ  
բ ա թ ո յ ա կ ա ն մ տ ք եր ի մ ի հ ա վ ա ք ե լ ո վ &  
շ ա տ ու թ ի շ ն եր է լ դ թ ա ն գ հ ա վ ե լ ե լ ո վ ,  
մ ա տ ու լ գ ե գ ի ն ք ի թ թ & « Խ Ր Ա Տ Ի Թ Ա Ն Գ Ա -  
Ր Ա Ն » լ ի կ յ ա ն ք ի ն պ ի տ ա ն ի ա մ ե ն տ ե -  
ս ա կ ն մ ու շ ո վ : Ս թ ա ն ու մ յ ու թ ա ք ա ն չ -  
յ ու թ փ ա փ ա գ ո ղ կ ա թ ո ղ է ա ռ ծ ե ռ ն պ ա տ -  
ր ա ս տ գ տ ն ե լ ի թ հ ո գ ու ն ու մ ար մ ն ի ն  
ա ն հ թ ա ժ ե շ տ ք ա ն եր ը :  
Ե վ ո չ ո ք թ ո ղ չ ա ս ի , թ ե ա ն թ ի վ ե ն  
ս ու թ ք հ ա յ թ եր ի կ ա մ ի մ ա ս տ ա ս եր ն եր ի  
խ թ ա տ ա կ ա ն գ թ ք եր ը , մ ա ն ա վ ա ն դ ո թ  
Ա ս տ վ ա ծ ա շ ու ն չ մ ա տ յ ա ն ն ա մ ե ն ու թ ե ք  
ա ն շ ե ղ ու ղ ե գ ու յ գ է բ ա թ ու ճ ա ն ա պ ա թ -  
հ ը գ ա ն կ ա գ ո ղ ն եր ի ն : Ե վ ի ո ն չ , մ ի թ ե  
ա ն հ ա թ կ ի ք ա ն է մ ի & ն ու յ ն օ գ տ ա կ ա թ  
դ ե ղ ը գ ա ն ա գ ա ն ե ղ ա ն ա կ ն եր ո վ մ ա տ ու -  
լ գ ե լ ը տ կ ա թ ո եր ի ն , ո մ ա ն գ դ ա ռ ն ա հ ա մ ,  
& ո մ ա ն գ ք ա ղ գ թ ա հ ա մ , ո թ ո վ հ ե տ &  
մ ե կ ն ա յ ս , ի ս կ մ յ ու ս ն ա յ ս է ա խ ո թ -  
ժ ու մ ս տ ա ն ա լ :  
Մ ա ն ա վ ա ն դ ո թ ի ն չ կ ա ա յ ս տ ե ղ ,  
գ տ ն վ ու մ է , ա յ ո , ք ա գ ու մ գ թ ք ե -  
ր ու մ , ք ա յ գ գ թ ի վ կ ա մ մ թ ի ն ո ճ ո վ ,  
ի ս կ ա յ ս տ ե ղ , ո թ պ ե ս վ ճ ի տ հ ա յ ե լ ու

մեջ, եր & ու մ է մի ա ն գ ա մ ա յ ն պ ա ղ զ ու  
հ ս տ ա կ : Ե թ ե ա ռ ա թ ի ն ի մ ե կ ը ն ա յ ի ս ռ ա  
մ ե ջ , ա յ ս տ ե ղ տ ե ս ն ե լ ո վ գ ե ղ ե ց կ ու թ -  
յ ու ն ն ա ռ ա թ ի ն ու թ յ ա ն , ո ղ ո վ ի ն թ ը  
գ ա ղ դ ա ղ վ ա ծ է , ու ղ ա խ ա ն ա լ ո վ կ ց ն ծ ա  
հ ո գ ո վ : Ի ս կ ե թ ե մ ո լ ի մ ե կ ը լ ի ն ի ,  
ա յ ս տ ե ղ դ յ ու ղ ա վ կ ն շ մ ա ղ ի ի ղ չ ա ղ ա -  
չ ա ղ վ ա ղ թ ի ա ղ ա տ ն ու ղ թ ծ ը & ա ն ա ղ զ  
պ ա տ վ ա կ ա ն ի հ ե տ ղ ա ղ դ ա տ ե լ ո վ կ ջ ա ն ա  
ի ղ ե ն ի ց մ ա թ ղ ե լ չ ա ղ ու թ յ ա ն ղ ծ ե ղ ը :  
Ա ղ դ ա ղ & , ա յ ս մ ա տ յ ա ն ու մ կ տ ե ս ն ե ս ,  
ո ղ մ ի & ն ու յ ն ն յ ու թ ի ն վ ե ղ ա ղ ե ղ ո ղ  
խ ղ ա տ ա կ ա ն ի ս ո ս ղ ե ղ ը , տ ղ ո հ վ ա ծ ղ ա -  
գ ու մ գ լ ու խ ն ե ղ ի , հ ա տ վ ա ծ ա ռ հ ա տ վ ա ծ  
ն ե ղ կ ա յ ա ն ու մ ե ն ի ղ ղ & ն ա խ ն ի ն ե ղ ի ա -  
ռ ա ծ ն ե ղ , ո ղ պ ե ս գ ի ի ս ո ս ղ ե ղ ի ի մ ա ս տ ը  
պ ա ղ զ ու հ ս տ ա կ ց ու յ ց տ ղ վ ի & դ յ ու -  
լ ը ն կ ա լ լ ի ն ի ը ն ղ ե ղ ց ո ղ ն ե ղ ի մ տ ղ ի ն :  
Ա յ ս պ ի ս ո վ , S ի ղ ո ջ շ ն ո ղ հ ո վ հ ու յ ս ու -  
ն ե ն ղ , ղ ե շ ա տ ե ղ ն ա յ ս գ ղ ղ ը ն ղ ե ղ -  
ց ու մ ո վ ի ղ ե ն ց հ ա մ ա ղ օ գ ու տ կ ղ ա ղ ե ն  
& ա ռ ա ղ ի ն ու թ յ ա ն ն ա գ ե լ ի գ ե ղ ե ց կ ու թ -  
յ ա ն ս ի ղ ո վ վ ա ռ վ ե լ ո վ կ գ ա ղ դ ա ղ վ ե ն  
ղ ա ղ ի գ ո ղ ծ ե ղ ո վ : Ո ղ ո վ հ ե տ & ի ն չ պ ե ս  
ո ղ մ ա ղ դ ն ա ն ծ ն ի շ ի ա ն կ ա մ ղ ո վ Ա ս տ ծ ու  
պ ա տ կ ե ղ է , ն ա & ղ ա ղ ո յ ա կ ա ն ա ռ ա ղ ի -  
ն ու թ յ ա մ ղ պ ի տ ի լ ի ն ի Ա ս տ ծ ու կ ա մ ղ ի ն  
հ ա մ ա ծ ա յ ն , ո ղ ո վ կ ղ ա ղ ղ ղ ա ն ա ն մ ա ն -  
վ ե լ ու Ա ս տ ծ ու ն , ը ն դ ու ն ե լ ու ա ռ ա ղ ի -  
ն ու թ յ ա ն գ ո ղ ծ ե ղ ի ա ղ դ յ ու ն ղ ը ե ղ ա ն ա -  
կ ա ն փ ա ղ ղ , ո ղ ի ս ո ս տ ա ց ա վ Ա ս տ վ ա ծ  
ի ղ ս ի ղ ե լ ի ն ե ղ ի ն :  
Ե վ ա հ ա ա յ ս մ տ ղ ո վ ջ ա ն ա ց ի ն ղ ա շ ի ա -  
տ ա ս ի ղ ե լ ա յ ս մ ա տ յ ա ն ը հ ու ս ա լ ո վ  
Ա ս տ ծ ու ա ռ ա տ ո ղ ո ղ ու ն ու թ յ ա ն ը , ղ ե մ ե գ  
& ս վ ա ղ ղ ղ ղ ա ն մ ա ս ն չ ի ղ ո ղ ն ի ը ս տ  
ա յ ս մ . « Ո վ մ ե ղ ա վ ո ղ ի ն ե տ դ ա ղ ծ ն ի  
մ ո լ ո ու ն ու թ յ ա ն ճ ա ն ա պ ա ղ հ ի ց , ի ղ հ ո գ ի ն  
մ ա հ վ ա ն ի ց կ փ ղ կ ի & ղ ա գ ու մ մ ե ղ ղ ե ղ ը  
կ ծ ա ծ կ ի » ( հ մ մ տ . < ա կ ո ղ ե 2 0 ) :  
Ա ղ դ ա ղ & մ ե ծ ս ի ղ ո վ ու ա կ ն ա ծ ու թ յ ա մ ղ  
ե մ ի մ հ ա ղ ղ ե ն ի ա գ գ ի ն մ ա տ ու ց ու մ ա յ ս  
փ ո ղ ղ կ ն վ ե ղ ը ի ղ ղ & ն ա խ ը ն ծ ա ե ղ ա -  
խ ա ղ ղ , Ա ս տ ծ ու փ ա ղ ղ հ ա մ ա ղ :

Ե վ մ ն ու մ ե մ ծ ե գ հ ա մ ա ղ մ ի շ տ ա -  
ղ ո ղ ա ղ ,  
Ա ս տ ծ ու ծ ա ռ ա ն ե ղ ի ծ ա ռ ա Պ ո ղ ո ս  
ա ղ ղ ե պ ի ս կ ո պ ո ս

Ա դ ը ի ա ն ա պ ո լ ս ե ց ի , Կ ո ս տ ա ն դ ն ու -  
պ ո լ ս ի ն ա խ կ ի ն  
պ ա տ ը ի ա ը ք , Ե ը ու ս ա ղ ե մ ի Ս . Ա թ ո -  
ռ ի մ ի ա ք ա ն  
Օ գ ս ս Կ ս ը  
Խ ը ս ս Բ ս Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե ը  
Հ ս ս ս ը ս Կ Ո Ի Թ Յ ս Ն Յ Ո Ի ը ս ք ս Ն Չ Յ Ո Ի ը  
ս Ն Չ Ի Հ ս ս ս ը

**Գ Լ Ո Ի Խ Ա**  
**Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ**

Ա. Ինչպես ղեկավարն է նավի մեջ, գորապետը՝ գործում, հովիվը՝ հոտում, և աչքը՝ գլխի վրա, նույնպես և առաջնորդն է իր քաղաքում ու ազգի մեջ: Եթե ղեկավարը ճարտար է, նավը կարող է անվտանգ հասնել նպատակադրյալ նավահանգիստը: Եթե գորապետը քաջ է, նրա զորքը մարտերում հաղթանակներ է տանում թշնամիների դեմ: Եթե հովիվը զգոն է, նրա հոտը, գայլերի շորթումից ազատ, արածելով գիրանում է դալար մարգերում: Եվ եթե աչքը պայծառ է, ամբողջ մարմինը լուսավոր է լինում: Այսպես եթե առաջնորդն արժանավոր է լինում, հասարակությունն ամբողջապես երջանկությամբ է վայելում:

Բ. Նա է արժանի առաջնորդ լինելու, ով քաջածանոթ է ժողովրդին և հրաժարվում է առաջնորդ լինելուց: Որովհետև ով ինքն է իրեն ներկայացնում և իշխանություն ցանկանում, նա չի իմանում, թե ինչ է նշանակում շատերի առաջնորդ լինել, և չի կարող իր պարտավորությունը կատարել: Բայց ժողովուրդն էլ պետք է ընտրի այնպիսինին, որ իմաստուն ու ջանասեր լինի: Որովհետև երկու շնորհ է հարկավոր առաջնորդին. խոհեմություն՝ օգտակար օրենքներ սահմանելու, և ջանք՝ այդ օրենքները գործադրելու համար:

Գ. Կարևոր է, որ առաջնորդը գիտենա լավ ղեկավարելու եղանակը թե՛ խաղաղ ժամանակներում և թե՛ անհանգիստ. որովհետև այլ է ղեկավարելու կերպը խաղաղ ժամանակ, և այլ՝ անհանգիստ: Իսկ եթե առաջնորդը երկու պարագաներում էլ միօրինակ է վարվում, խոհեմ ու կատարյալ չէ՛:

Դ. Պետք է, որ առաջնորդը զգույշ լինի ամեն ինչում. որովհետև բոլոր մարդիկ անթարթ աչքերով անընդհատ հետևում են, որ դատեն նրան, տեղյակ չեն այն վիճակին, որում գտնվում է նա, և չեն զգում կրած դժվարությունները. այլ ուզում են նրա մեջ տեսնել այն կատարելությունները, որոնք մարդկային կարողությունից վեր են:

Ե. Առաջնորդներն ու իշխանները պետք է ավելի հոգածու լինեն հասարակության կրտսեր անդամների հանդեպ, քան նրանց ծնողները՝ ջանալով քաղաքի կամ ազգի դեռաբույս մանկանց կրթել գիտության ուսմամբ, բարի վարքով ու անհրաժեշտ արհեստներով: Որովհետև այն երեխաները, որոնք փոքր տարիքում սովոր են ուսումնասույց, անգործ կամ չարաբարո լինել, տարիքի առաջանալու հետ հույժ դժվար են դառնում ուսումնասեր, ժրջան ու բարեբարո:

Զ. Առաջնորդները թող ջանան ուսուցանել ժողովրդին արհամարհել տանջանքն ու մահը՝ հանուն ճշմարիտ հավատքի, հեռու մնալ փափկությունից ու ապերախտությունից, աշխատանքում եռանդուն ու անձանձիռ լինել, ճանաչել բարերարի երախտիքները և սիրել ազգն ու հայրենիքը:

Է. Այն առաջնորդը, որ սիրում է միայն մեծարանք, օգուտ ու դյուրություն իր անձին, չի կարող սիրելի լինել ժողովրդին. որովհետև ընդհանուրի օգուտը նախադասելի է սեփական անձի օգտից ու

դյուրությունից:

Ուստի չեն կարող անբասիր լինել նրանք, ովքեր հանգիստ ու հանդարտ կյանք վարելու համար հրաժարվում են հասարակությանը ղեկավարելու ծանրությունը կրելուց: Անբասիր չեն նաև նրանք, ովքեր ցանկանում են ղեկավարող լինել և հնարներ են բանեցնում հափշտակելու համար այդ քաղցր պատառը:

Առաջնորդը, եթե միայն իր հաճույքի ու օգտի համար է իշխանությունը վարում, անիրավ բռնակալ է: Իսկ եթե իրավունքով ու հասարակության օգտի համար է վարում, գթած հայր է և առաջնորդ լինելու արժանի:

Ը. Առաջնորդները պետք է որոշակի ժամանակ հատկացնեն լսելու իրենց հպատակներին, որոնք բողոք ունեն նրա առաջ կամ կամենում են որևէ լուր հաղորդել: Առաջնորդը պիտի ընդունի նաև եկվորներին ու պանդուխտներին, գրուցի նրանց հետ ու տեղեկանա հեռավոր ազգերի սովորույթներից, ազգերի, որոնցից կարող է սովորել իր ժողովրդին օգտակար որոշ օրենքներ:

Թ. Առաջնորդներն ավելի, քան ուրիշներն, արժանի են կարեկցանքի, քան թե դատումի: Որովհետև օժտված լինելով մարդկային տկարությամբ՝ ընկած են անտանելի ծանրության ներքո: Պարտավորված են ղեկավարել բազմաքանակ ժողովրդի, նրան բարիք գործել և միշտ հոգալ կարոտյալների պետքերը: Եվ քանի որ պետքերը բազում են, շատ աշխատանք են թափում նրանք, ովքեր կամենում են բարվոք ղեկավարել:

ժ. Եթե առաջնորդը տեսնում է իր կառավարիչների թերացումն իրենց ծառայության մեջ, պարտավոր է նրանց թերությունները հորդորիչ խոսքերով հայտնել և առանց վրդովման իրավունք պահանջել: Եթե այսպիսով ուղղվեն, կարող է վստահել նրանց հավատարմությանը, իսկ եթե ոչ, պետք է զգուշանա նրանցից, որպեսզի վնաս չկրի:

ժԱ. Մի առաջնորդ, որքան էլ բարեկարգ լինի, հնարավոր է, որ երբեմն իբրև մարդ սխալվի, և անշուշտ գովեստի է արժանի, եթե ունկնդիր լինելով խրատներին՝ ջանում է իր թերությունը հասկանալ և իրեն ուղղել: Ուղղվելու նշանը սեփական թերությունը խոստովանելն է և իմաստուն բարեկամների ծանր խրատները հանդուրժելը:

ժԲ. Ով առաջնորդ չէ, տակավին չգիտի, թե ինչ է շատերին առաջնորդելը, ուստի համարձակորեն դատում է առաջնորդին, թե այս և այն բանում սխալվել է. բայց երբ այդպիսինին է պատահում հասնել առաջնորդական իշխանության, էլ առավել է սխալներ գործում և դատվում ուրիշների կողմից:

ժԳ. Հասարակ մարդն իր մասին կարծում է, թե ամենքից ավելի ունի բոլոր պարագաներում ղեկավարելու մեծ հմտություն, և համարում, թե ինքը չէր սխալվի, եթե տեսուչ լիներ. բայց չգիտի, որ ղեկավարելու իշխանությունը նվաճում է միտքը, և ըստ իշխանության մեծության՝ փոքր սխալները նրա մեջ խիստ մեծ են երևում:

ժԴ. Չարերը, երբեմն կարծելով, թե չարիք են հասցնում իրենց բարի ղեկավարներին, գրպարտությամբ ամբաստանում են նրանց և օտարության մատնում, բայց դրանով մեծ բարիք են գործում նրանց, որովհետև վերջիններս ազատվում են հասարակությանը ղեկավարելու բազմատազնապ հոգսերից և գտնում հանգիստ ու անզբաղ կյանք:

ժԵ. Առաջնորդները պարտավոր են վեճը երկար հետազոտելով քննել դատարանում և հասու լինել հանգամանքների ճշմարտությանը, որովհետև ամեն ամբաստանյալ չէ, որ հանցավոր է, և ոչ էլ հանցանքի մեջ կասկածը կարող է մեկին դատապարտման արժանի դարձնել ըստ մեղադրողների բողոքի:

ժԶ. Առաջնորդն օրենքի պահապան է և հասարակության լավ օրինակ: Ուստի դատի է արժանի ժողովրդի մեղքերի համար, եթե զանց է առնում օրենքի հանդեպ հանցավորներին պատժել և կամ իր անիրավությամբ, ազահությամբ ու սնափառությամբ չար օրինակ լինում ուրիշներին և նրանց գայթակղվելու ու մեղանջելու առիթ տալիս:

ժԷ. Որքան նախամեծար է մեկն ուրիշներից, այնքան ուրիշներից առավել բարեկարգ պիտի լինի: Առաջնորդի փոքր հանցանքը ժողովրդի մեջ պատճառ է դառնում մեծ չարիքների, որոնք երբեմն

ծգվում են բազում դարեր:

Ժողովուրդն ավելի աչալուրջ է առաջնորդի փոքր թերությունները տեսնելու մեջ, քան նրա մեծամեծ առաքինությունները, և նրանից կրած սակավ վնասն առավել է զգում, քան նրա շնորհիվ ստացած բազում օգուտները:

ԺԸ. Առաջնորդներն արժանի են լինում պատժի, երբ իրենց ղեկավարությունը տալիս են անարժանների ձեռքը, ովքեր հասարակությանը չարիք են հասցնում: Որովհետև թեև իրենք անհաղորդ են վնասին, բայց քանի որ չեն ջանում քննել, արժանավորին գտնել ու կառավարչությունը նրան հանձնել, այդ պատճառով էլ նրանցից իրավացիորեն դատաստան է պահանջվում: Առաջնորդը, եթե կամենում է մեկին կառավարիչ դարձնել, պետք է նրան նախ ստորին պաշտոնի կարգի, փորձի նրա գործունեությունն ու հավատարմությունը, զննի նրա առանձին վարքը, հաճախ զրուցի նրա հետ, ծածուկ հարցնի ու իմանա նրանցից, ովքեր նրա հետ ընտանեբար են վարվում, թե ի՞նչ է ավելի սիրում, ո՞ւմ է ավելի հավանում, ի՞նչեր է բնավորությամբ սիրում, ի՞նչերի՝ հանդեպ ատելություն ունի, և նրա մասին բոլոր հանգամանքներին տեղեկանալուց հետո՝ միայն կարգի ավելի բարձր աստիճանի պաշտոնի:

ԺԹ. Առաջնորդը եթե ստիպված է լինում չար մեկին որևէ պաշտոնի կարգելու, նրան միշտ ստորին կարգում պիտի պահի և զգույշ լինի ամեն ինչում, որպեսզի նա ավելի բարձր պաշտոնի չհասնի և գաղտնի ու ներքին մտքերի իրագեկ չդառնա: Առավել ևս պիտի նայի, որ եթե սակավ առ սակավ չուղղվի, որևէ հնարով նրան գործից ազատի: Բայց պետք է խոհեմությամբ վարվել, որպեսզի որևէ աղմուկ չբարձրանա: Որովհետև եթե հնարավոր չէ չարն անմիջապես հեռացնել, հարկ է միշտ սպասել ավելի պատեհ առիթի՝ նրան մեջտեղից հանելու համար:

Ի. Առաջնորդները, երբ բարի ու գործունյա մարդուն որևէ պաշտոնի կամ գործի են կարգում, այնուհետև պետք է աներկմիտ սրտով հավատան նրան, որովհետև առաքինի մարդիկ ավելի կամենում են ազնվորեն ստանալ բարի համբավ, քան ոսկե գանձեր: Բայց պետք է նրան իր չափի մեջ պահեն և չափից դուրս համարձակություն չտան, որովհետև այնպիսին, որ կարող էր միշտ առաքինի ու հավատարիմ մնալ, գուցե անսահման իշխանությամբ խիստ համաձակություն ստանալով՝ ուղիղ ճանապարհից շեղվի:

ԻԱ. Փառքն ու խաղաղությունը ազնվության ու հավատարմության անբաժան լծորդ են: Ուստի երբ առաջնորդի ազնվությունը կամ հավատարմությունը պակասում է, ժողովրդի միջից վերանում են փառքն ու խաղաղությունը, և նրանց փոխարինում են անարգությունն ու խռովությունը:

ԻԲ. Շատ հավասարապատիվ մարդիկ չեն կարողանում տնօրինել վաղեմի օրենքները կամ սահմանել նորերը, մինչև նրանց մեջ չի գտնվում գլխավոր մեկը, ով օրենքներ վճռելու ու սահմանելու բավարար իշխանություն ունի: Որովհետև համապատիվ անձանցից յուրաքանչյուր ոք պնդում է իր կարծիքը հաստատելու վրա, ինչից հակառակություն ու խռովություն են ծնվում:

ԻԳ. Առաջնորդն առանց ճշգրիտ ու երկար քննության, շտապ կերպով վճիռ պիտի չկայացնի դատի ժամանակ, որովհետև չարերն ամեն տեղ շատ են և խորամանկ հնարներով խաբում են անզգույշ դատավորներին ու մոլորեցնում: Այլ պետք է երկու հակառակ կողմերին էլ ունկնդրի և ապա վճիռ կայացնի: Առաջնորդ կամ իշխան մեկը պետք է լսի ամենքին, բայց հավատա քչերին:

ԻԴ. Առաջնորդը կարգված է կրելու ժողովրդին ղեկավարելու ծանրությունը՝ որպես հոտի հովիվ և ընտանիքի հայր: Եվ այս նրա համար դժբախտություն չէ, այլ երջանկություն: Որովհետև հանձին իրեն ցույց է տալիս Աստծու նմանությունը՝ չարերին պատժելով, բարիներին վարձատրելով և ամենքին հորդորելով կատարելու Աստծու օրենքը: Ուրեմն նրա համար բավական փառք է լինել Աստծու օրենքի պահապան և բավական մխիթարություն՝ հավիտենական կյանքի վարձը, որ Աստծու կողմից պատրաստված է նրա աշխատանքի դիմաց:

ԻԵ. Որևէ առաջնորդ, եթե կամենում է իմաստուն ու առաքինի մարդկանց շատացնել, պետք է այդպիսի մարդկանց, որքան էլ քիչ լինեն, պատվի, նրանց օրինակներով շատերին հորդորի դեպի գիտության ուսումն ու առաքինության կրթությունը, և ովքեր առաջանան դեպի լավն ու իմաստությունը, նրանց հարգի ու որևէ պաշտոնի կարգի, որպեսզի ուրիշ շատեր, նրանց հանդեպ մեծարանքը տեսնե-

լով, նմանվելու ջանք գործադրեն, որպեսզի պատիվ ստանան: Քանզի կան շատերը, որոնք այժմ զուրկ են գիտությունից ու առաքինությունից, սակայն հնարավոր էր, որ լինեին իմաստուն ու բարի, եթե լինեին պատվի արժանանալու հույսն ու ակնկալությունը:

ԻԶ. Ով հասարակության տեսուչ է կարգված, պետք է լինի համբերող ու երկայնամիտ, որպեսզի լինի իր անձի և ապա ուրիշների տերը: Որովհետև անհամբերությունը ոչ թե հոգու մի գորություն է, ուրով շտապում են դեպի մի բանի վախճանը, այլ տկարություն է, որովհետև վշտերին տոկալ չեն կարողանում:

Ով սպասել ու համբերել չգիտի, նման է նրան, ով չգիտի լռել ու իր խորհուրդը պահել: Այս երկուսն էլ առաջ են գալիս տկարությունից, որի պատճառով չի կարողանում մեկն իրեն զսպել: Պինակ՝ ով արշավում է սրընթաց կառքով և բավական զորություն չունի պետք եղած դեպքում կանգնեցնելու, գահավիժում է վիհերը. այդպես էլ անհամբերը, չկարողանալով կանգ առնել, ընկնում է թշվառության փոսը: Որովհետև երբեք չի սպասում և չգիտի ժամանակը չափել, այլ ձեռք է զարկում ամեն ինչ իր հաճույքին ծառայեցնելու: Կոտրում է ուստերը՝ ժողովելու համար չհասունացած պտուղը, խորտակում դռները՝ չսպասելով, որ բացվեն, կամենում ինքը հնձել, երբ ուրիշները սերմանում են: Ինչ անում է, կարճատևությամբ շտապում է, չգիտի համբերել ու սպասել հարմար ժամանակի, և որքան մեծ է նրա իշխանությունը, այնքան մեծ է լինում և վնասը:

ԻԷ. Որևէ ազգի առաջնորդ կամ ժողովրդի իշխան, եթե նայի ղեկավարման առթած վշտերին ու մարդկանց ապերախտությանը, իր համար դժբախտություն կհամարի առաջնորդ կամ իշխան լինելը: Բայց նա պիտի գիտենա, որ մարդիկ ապերախտ են լինում, սակայն այդ պատճառով պետք չէ հրաժարվել բարերարելուց: Այլ հարկ է ամեն միջոցով բարի օրինակներով խնամել ու շահել իր ազգն ու ժողովուրդը, ոչ այնքան վերջիններիս, որքան Աստծու սիրո համար: Որովհետև չի կորչում այն բարերարությունը, որ մեկն ուրիշներին անում է Աստծու փառքի համար:

Նաև՝ եթե ապերախտները բազում լինեն, կգտնվեն նաև երախտագետներ, որոնք ճանաչում են երախտիքն ու բարերարությունները և սիրում երախտավորին: Եվ թեպետ հասարակությունը փոփոխամիտ է երախտագետ լինելու մեջ, բայց իսպառ երախտամոռ չի մնում, ճշմարիտ առաքինության համար վաղ թե ուշ դատաստան է անում և բարերարությունը ճանաչում:

Եվ քանի որ ապերախտությունն առավել առաջանում է բարքի վատ լինելուց, այդ պատճառով էլ առաջնորդը կամ իշխանը պիտի ջանա բարեկարգել և ուղղել մարդկանց բարքը և նրանց դարձնել առաքինի, հավատարիմ ու երկյուղած Աստծու հանդեպ, որպեսզի կարողանան ճանաչել իրենց բարերարին ու երախտավորին և սիրեն նրան: Ուստի հասարակությանը կատարյալ բարի դարձնելով՝ առաջնորդն իրեն բազում բարիք է գործում և բնավ չի երկնչում նրանց ապերախտությունից:

Իսկ եթե առաջնորդը կամ իշխանն անիրավ ու անհավատարիմ լինի, զարմանալի ոչինչ չկա, եթե ժողովուրդն էլ ապերախտ լինի: Բայց եթե առաջնորդը կամ իշխանը բարի լինի և աշխատի իր օգտակար խրատներով ու բարի օրինակներով հասարակությանը վարժել բարի սովորությունների և Աստծու օրենքի պահպանությանը, կգտնի ու կվայելի իր աշխատության պտուղը հասարակության առաքինություններում, կամ գոնե կվայելի այն իր մեջ, իր առաքինություններում:

ԻԸ. Երկյուղը հարկավոր է, երբ սերը պակասում է ժողովրդից: Բայց ղեկավարման մեջ այն պետք է ակամա միշտ ունենալ՝ որպես առավել ազդու և առավել զորավոր դեղ:

ԻԹ. Առաջնորդներին ամոթ չէ խոնարհվել ու իբրև տկար լինել՝ տկարներին շահելու համար. քանզի վարժապետն էլ մինչև չի իջնում աշակերտի մակարդակին ու ասում «այբ», աշակերտը չի կարողանում սովորել ու ասել «այբ»:

Լ. Ո՛չ բոլոր ձկներն են միատեսակ խայծով որսվում, և ո՛չ բոլոր մարդիկ են միակերպ խրատներով հորդորվում դեպի բարին: Ուրեմն՝ ըստ մարդկանց այլևայլ վիճակների ու բնավորութեան պետք է խրատական խոսքը հարմարել:

ԼԱ. Տկարամիտ է համարվում այն առաջնորդը, որ տեսնելով ժողովրդի անլուր լինելն իր խրատին՝ հուսահատված հետ է կանգնում նրան խրատելուց: Քանզի իր պաշտոնի համաձայն պարտավոր է

սաստել, հանդիմանել ու մխիթարել ամենայն երկայնատուությամբ: Իսկ եթե այս ամենից հետո անուղղելի մնա, ինքն Աստուծուց կառնի իր աշխատանքի վարձը: Բայց շատ անգամ նայելով առաջնորդի ջանքերին՝ Աստված Իր շնորհով շարժում է ժողովրդի կամքը՝ անսալու նրա խրատական խոսքերին և ուղղվելու:

ԼԲ. Առաջնորդն ու նրա ժողովուրդն այնպես պետք է սիրեն միմյանց, որ դժվար լինի որոշել, թե ով է առավել սիրում: Քանզի պիտի ջանան սիրով միմյանց հաղթել, առաջնորդը՝ ժողովրդի օգտի համար, և ժողովուրդը՝ առաջնորդի հանգստության ու խաղաղության համար:

ԼԳ. Անխոհեմ է առաջնորդը, եթե մեկի սիրո համար ամենքին ասելի է դառնում կամ մեկի օգտի համար ամենքին զրկում, կամ մեկի խորհրդին անսալով՝ արհամարհում է ամենքի խորհուրդները:

ԼԴ. Մեղանչում է առաջնորդը, եթե պատվում է օրինապահ չեղող հարուստներին ու իշխանավորներին և արհամարհում օրինապահ աղքատներին ու հասարակ մարդկանց կամ պատժում է օրենքին անհնազանդ հասարակ մարդկանց, իսկ օրենքը խախտող հարուստներին ազատ արձակում: Որովհետև արդարության թշնամի է նա, ով անպատիժ է թողնում հանցավորին և անվարձ՝ անմեղին:

Առաջնորդ լինելու արժանի չէ ազահ կամ ոխակալ մեկը. ազահն արդարությունը դրամով վաճառում է, իսկ ոխակալն իրավունքը թյուրում՝ մեկի հանդեպ ունեցած ատելության պատճառով:

ԼԵ. Որևէ հանցավորի, որ միայն կշտամբանքի ու սաստերի է արժանի, ոխակալության պատճառով մեծապես պատժելը անիրավություն է: Որովհետև պատիժն արդարության սպասավորն է, և պետք է միայն այդ նպատակին ծառայեցնել այն. իսկ եթե մեկը ծառայեցնում է իր կրքերին, անիրավ է:

Սաստիկ բարկացած ժամանակ տեղին չէ պատժել հանցավորին, այլ պետք է թողնել, մինչև որ սրտի բորբոքումն անցնի, որովհետև բարկությունը խանգարում է մարդու ուղեղը և անվայել բաներ խոսել ու անիրավություն գործել տալիս:

ԼԶ. Առաջնորդը պետք է ամենքի հանդեպ քաղցր լինի. ում կարող է խրատներով շահել առանձին, թող չխրատի հրապարակավ, և ինչ կարող է անել համոզելով, թող չանի սպառնալիքով, և ում կարող է ուղղել սպառնալիքով, թող նրա հանդեպ պատիժ չգործադրի:

Բայց եթե հարկավոր լինի պատժել, պետք է գթությամբ վարվի և ոչ թե ճշտագույն արդարությամբ, որպեսզի չլինի թե հանցավորն ուղղվելու փոխարեն հանդգնություն ծեռք բերի. քանզի առաջնորդը հանցավորների դահիճ չէ, այլ ուղղիչ:

ԼԷ. Որևէ առաջնորդ, եթե ղեկավարման բոլոր գործերում ուրիշների խորհրդով է շարժվում, անխոհեմ է և առաջնորդության անարժան: Իսկ եթե բնավ չի խորհրդակցում ուրիշների հետ, այլ ամեն ինչ գործում է միայն ըստ իր կամքի ու մտքերի, կամակոր է ու հանդուգն: Բայց ով խոհեմ է և ղեկավարելու արժանի, ժողովրդի իմաստունների ու գլխավորների հետ խորհրդակցում է և գործում պատշաճն ու վայելուչը հասարակության օգտի համար:

ԼԸ. Ժողովրդի տեսուչը, եթե կամենա որևէ մեկին համոզել գործելու օգտակար որևէ բան, պիտի նախ խորհի, թե ինչ միջոցներով է հնարավոր դեպի իրեն տրամադրել նրա կամքը. որովհետև ամենքը համաբարո չեն և միատեսակ խոսքերով չեն հորդորվում դեպի գործը:

Ոմանք տրամադիր են վայելչականին, ինչպես երիտասարդները, ոմանք՝ օգտակարին, ինչպես հասուն տարիքի հասածները, ոմանք՝ համբավավորին, ինչպես ծերերը, ոմանք՝ մարդկանց շահավետությանը, ինչպես ազահները, ոմանք՝ փառավորին, ինչպես փառասերները, և այլք՝ իրենց բնավորությանը հաճելի մեկ այլ բանի: Ուրեմն՝ առաջնորդի գործն է յուրաքանչյուրի բնավորությունը ճանաչելը, որպեսզի կարողանա որևէ մեկի միտքը հոժարեցնել, այն մարդու կամքը, որին համոզում է, գործի շարժել: Կարևոր է հաշվի առնել նաև ժամանակի, անձի ու գործողության պարագաները, այլապես գործն անույ կամ թերի կմնա, և երբեմն էլ, փոխանակ օգուտի, վնասի առիթ կստեղծվի:

ԼԹ. Մեղրն ընտիր ու քաղցրահամ է, բայց հաճախ որպես կերակուր մատուցվելիս սեղանավորներին ծանծրացնում է: Քարոզչի խոսքերն ինչքան քաղցրալուր ու ընտիր լինեն, եթե նույն ատենաբանության մեջ հաճախ են կրկնվում կամ խոսքերի հաճախությամբ երկարածովում, ունկնդիրներին ծանծրույթ են պատճառում: Մանավանդ որ շատ խոսելու դեպքում դժվարին է ակամա վրիպումներ



թույլ չտալը կամ անպիտան ու ավելորդ խոսքեր պիտանիններին ու կարևորներին չխառնելը: Ուստի քարոզիչը պիտի զգուշանա երկարաբան ճառերից և չափով ու կշռով խոսի, որպեսզի իր խրատական խոսքերն ավտորժելի ու ազդու լինեն ունկնդիրներին, և ինքը պատիվ ու զովեստներ ընդունի:

Շատախոսությունը ոչ թե իմաստության նշան է, այլ տգիտության. որովհետև տգետներն են սովորաբար շատախոս, իսկ իմաստունները՝ սակավախոս: Այս ամենով իմաստունները պատվի ու մեծարանքի են արժանանում, ինչպես որ տգետ շատախոսները՝ արհամարհանքի:

Խ. Աշխարհի իշխանները գործակալներ են կարգում, որովհետև անձամբ միայն չեն կարող ժողովրդի հոգսը քաշել, ինչպես որ Մովսեսը, Հոթորի խոհեն խրատի համաձայն, ղեկավարման մասնավոր գործերի համար կարգեց զորավոր, աստվածապաշտ ու արդարակրող անձանց (*տես Ելք ԺԸ 21*):

Ուստի առաջնորդները նույնպես, իբրև փոխանորդ ու ժողովրդի վերակացու, կարգում են քահանաների, որովհետև չեն կարող անձամբ ղեկավարել բազում ժողովրդի, որին Տիրոջ կողմից կարգվել են հովիվ ու դես: Ուստի պիտի ամենայն արթնությամբ քննեն ու իմանան քահանաների վարքն ու ղեկավարումը, որպեսզի որևէ արատ կամ թերություն չզտնվի նրանց մեջ, այլ ամեն ինչում լինեն բարեկարգ ու աստվածահաճո, ինչպես պահանջում է քահանայական կարգը, որովհետև քանի որ քահանաներն առաջնորդի պաշտոնյաներն են, նրանց ամեն թերություն վերաբերում է առաջնորդին:

«Ուժգին կանչիր & մի՛ խնայիր, շեփորի պես բարձրացրո՛ւ ձայնդ, պատմի՛ր իմ ժողովրդին իր մեղքերի մասին» (Եսայի ԾԸ 1):

«Հովիվներն իրենք իրենց բտեցին-պարարտացրին & իմ հոտերը չարածեցրին,- այսպես է ասում Տեր Աստված:- Ահավասիկ ես այդ հովիվներին դեմ եմ ու հոտերս վերցնելու եմ դրանց ձեռքից» (Եզեկ. ԼԴ 8-10):

«Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեր & ամբողջ հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին» (Գործ. Ի 28):

«Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ & ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ, ի շինություն Քրիստոսի մարմնի» (Եփես. Դ 11-12):

«Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարմունքով, սիրով, հավատով» (Ա Տիմ. Դ 12):

«Հիսուս Քրիստոսի մի բարի պաշտոնյա կլինես՝ սնված հավատի խոսքերով & բարի վարդապետությամբ» (Ա Տիմ. Դ 6):

## Գ Լ ՈՒ Խ Բ

## Ք Ա Հ Ա Ն Ա

Ա. Քանի որ քահանաներն ամենակալ Տիրոջ պատգամաբեր են կոչվում (*տե՛ս Մատթ. Բ 7*), ուստի ըստ մարդկանց կարողության՝ պատգամաբերի վարք պիտի ունենան: Որովհետև եթե Աստծու ծառա ու սպասավոր անվանվելը մեծ պատիվ է, ո՞րչափ առավել բարձր պատիվ է ամենակալ Տիրոջ պատգամաբեր կոչվելը, որ ոչ միայն սպասավորությունն է պարփակում իր մեջ, այլև միջնորդության պաշտոնը. որովհետև քահանան Աստծու և մարդկանց միջև միջնորդ է:

Դարձյալ՝ քահանան աստվածատեսակ այր է. որովհետև եթե միայն Աստծուն է հատուկ մեղքեր քավելը, ահա նույնն անում է և քահանան սուրբ կարգի զորությամբ՝ ըստ Տիրոջ խոսքի (*տե՛ս Հովհ. Ի 23*):

Դարձյալ՝ Ս. Պատարագի խորհրդի ժամանակ քահանան ձեռքով շոշափում է Այն, Ինչին հրեշտակներն ահով են սպասավորում: Ուրեմն թող մտածեն, թե ինչպիսի գերագույն պատվի են բարձրացել, և ըստ այդմ ապրեն. որովհետև «ու՜մ շատ է տրված, նրանից շատ էլ կուզվի, և ու՜մ շատ է վստահված, նրանից ավելին կպահանջեն» (*Դուկ. ԺԲ 48*):

Բ. Դարձյալ՝ միջնորդին հատուկ է սիրելի ու հաճելի լինել նրան, ու՜մ առաջ բարեխոսում է, իսկ սիրելիությունը հիմնվում է համակերպության վրա. և քանի որ քահանան մարդկանց կողմից միջնորդ է Աստծու առաջ, ապա անհրաժեշտաբար պահանջվում է, որ լինի աստվածատեսակ մարդ, որպեսզի կարողանա լինել Աստծուն սիրելի և մարդկանց համար բարեխոս:

Գ. Ոչ ոք չի կասկածում, որ քահանան պիտի ոչ միայն տեղյակ լինի Հին և Նոր Կտակարաններին, այլև հմուտ՝ իմաստասիրական գիտություններում. քանզի նրա խնդիրն է խրատել, ուսուցանել, բարու մեջ համոզել ու չարից հեռու պահել աշխարհիկ մարդկանց, որոնցից շատերն առատամիտ են և ուշիմ, ձեռնարկումների մեջ հանձարեղ և խոսքի կառուցման մեջ զորավոր: Եթե քահանան տկարանա այդպիսիներին զորավոր փաստերով հաղթել, նրա խրատական խոսքերն այլևս չեն ազդի նրանց համար մտքերի վրա, և գուցե հպարտանալով իսպառ արհամարհեն հոգևոր խրատները, և քահանաների տգիտությունը կարող է նրանց կործանման առիթ լինել: Ուստի քահանան պիտի ամեն ինչով գերազանցի ամենքին, ինչպես վարքի սրբությամբ, այնպես էլ գիտելիքներով:

Դ. Այն քահանան, որ անարի է իր հոգևոր ծառայության մեջ և անփույթ կարևոր գիտելիքները ձեռք բերելու գործում, ոչ միայն երկրի վրա է անպատիվ, այլև հանդերձալում արժանի է պատժի: Ծուլությունն Աստծու պաշտոնյաների մեջ և տգիտությունն աշխարհականների մեջ չար են ու նախատինքի արժանի, իսկ քահանաների մեջ լինում են ամենաչար ու անհնարին անարգանք:

Ե. Քահանաներն, ինչպես արեգակը, պիտի լույս տան խավարած մտքերին, ջերմացնեն Աստծու սիրուց սառածներին, ուստի Քրիստոսն ասաց առաքյալներին. «Դուք եք աշխարհի լույսը» (*Մատթ. Ե 14*): Իսկ եթե որևէ թերություն է գտնվում քահանայի խոսքերում ու գործերում, նույնն է, թե արեգակը սառչի ու մթագնի:

Արդարև, երբ երկիրը միգապատ կամ տղմաշաղախ է լինում, ոչ ոք որևէ ուշադրություն չի դարձնում դրա վրա, որովհետև երկիրը մարդկանց ոտքի տակ է: Մինչդեռ երբ արեգակը կամ լուսինը բնական պատճառով խավարում են, ամեն ոք ակնապիչ է լինում, որովհետև բարձրադիր գոյացություններ են՝ զորավոր ու ազդու: Այսպես էլ՝ ժողովրդից մեկի չարաչար անկմանը ոչ ոք չի նայում ու ոչ ոք չի զարմանում, բայց երբ քահանան է փոքր-ինչ սայթաքում, ամենքի աչքերը նրան են նայում ու զարմանում, և շատերն էլ գայթակղվում են:

Զ. Ջարմանալի է, թե ինչպես են ոմանք միջնորդ մեջտեղ գցում, աղաչանքներ մատուցում, կա-

շառք խոստանում և տեսակ-տեսակ հնարներ բանեցնում, որ քահանայական ձեռնադրություն ստանան: Գուցե սրանք չգիտեն, թե ինչ է քահանա լինելը, կամ չգիտեն իրենց չափը, կամ էլ միայն մարմնավոր պետքերն են հոգում:

Եթե չգիտեն, թե ինչ է քահանա լինելը, թող իմանան, որ երկնավոր հրեշտակ, թափանցիկ լույս, ընտիր ոսկի լինել է: Եթե իրենց չափը չգիտեն, թող փորձեն իրենց, թե ունե՞ն հրեշտակների վարքը, գիտության լույսը և իբրև ոսկի փորձվա՞ծ են համբերության բովում, այլապես մեր Աստվածը ոչնչացնող կրակ է *(տես եբր. ժԲ 29)*, այրում է խոտ, փայտ, խռիվ և ամեն այրվող նյութ *(հմմտ. Ա Կոր. Գ 12)*: Իսկ եթե միայն այստեղի կյանքի մասին են խորհում՝ չհոգալով հանդերձյալի մասին, թող մտածեն, որ այս կյանքն անցավոր է ու սնուտի և ասես առերևույթ ստվեր՝ հավիտենական կյանքի նկատմամբ:

Արդ, ի՞նչ պատասխան են տալու ահավոր ատյանում, երբ լսեն Տիրոջից. «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունե՛իր, ինչպե՞ս այստեղ մտար» *(Մատթ. ԻԲ 22)*: Եվ քանի որ Եկեղեցին երկնավոր հարսնաբանի տիպն ու օրինակն է, ուրեմն այնտեղ մտնող քահանաները՝ իբրև կանչվածներ, պիտի ունենան աստվածահաճ առաքինության մաքուր հանդերձը:

«Այս է իմ պատվիրանը ձեզ, քահանաներ: Եթե չլսեք & չմտածեք ձեր սրտերում փառք տալ իմ անվան,- ասում է Ամենակալ Տերը,- ձեզ վրա անե՞ծք կուղարկեմ» *(Մաղաք. Բ 1-2)*:

«Ուրեմն՝ աղաչում եմ երեցներին... արածեցրե՛ք Աստծու այդ հոտը, որ ձեզ է հանձնված, վերակացու լինելով ոչ թե հակառակ ձեր կամքին, այլ՝ հոժարակամ, ըստ Աստծու» *(Ա Պետ. Ե 1-2)*:

«Այն երեցները, որոնք լավ վերակացու են, կրկնակի պատվի արժանի թող լինեն» *(Ա Տիմ. Ե 17)*:

## Գ Լ ՈՒ Խ Գ

## Ի Շ Խ Ա Ն

Ա. Աշխարհի փառքն՝ իբրև հոյակապ նավ, անդադար ծփում է ծովի հորձանքներում, և ով նավի մեջ է, մահվան տագնապ է կրում և ցանկանում է ավի դուրս գալ, իսկ ով ցամաքում է, հեռվից տեսնելով նավի գեղեցկությունը՝ ցանկանում է նրա մեջ մտնել և չի զգում, թե որքան վտանգ կա առջևում մինչև այնտեղ մտնելը, և որքան դառը վիշտ պիտի կրի այնտեղ գտնվելիս:

Ջարմանալի է, որ մեկը շտապում է նավից դուրս գալ, իսկ մյուսը՝ ներս մտնել. նման նրան, որ երբ ցանցերում բռնված ձկները խուճապի մեջ զեռում են, դրսում գտնվող ձկները կարծում են, թե ուրախալի տոն է այնտեղ, և ցնծությունից խայտալով՝ շտապում են իրենք ևս ներս մտնել:

Մեկը, փառքի տառապանքների փորձն առած, ջանք է գործադրում հեռանալու, իսկ մյուսը, տակավին անփորձ, ջանում է այդ փառքին հասնել: Երանի՛ նրան, ով մտավ այս նավը և անվնաս ելավ. և առավել երանի նրան, ով երբեք այստեղ չմտավ: Բայց ո՞վ կարող է այս ճշմարտությունը հավաստել նրանց, ովքեր դեռ ցամաքում են, այսինքն՝ դեռ փառքի փորձը չեն առել:

Բ. Երբ մասերը խանգարվում են, խանգարվում է և ամբողջը, ինչպես երբ խախտվում է հիմքը, խախտվում ու փլչում է նրա վրա հաստատված շինվածքը: Եվ արդ, մարդու մարմինը բաղկացած է տարրերից՝ իբրև մասերից, և որքան ժամանակ տարրերը բարեկարգ են, մարմինն այնքան ժամանակ

առողջ է, բայց երբ նրանց բարեկարգությունը խախտվում է, մարմինը տկարանում է, հիվանդանում և մեռնում:

Տերության կամ ազգի մարմինը բաղկացած է օրինապահ իշխանից, աշխատասեր հպատակներից, իրավունքի արդարությունից ու սահմանակից ազգերի հետ խաղաղությունից: Իսկ երբ սրանց բարեխառնությունը խախտվում է, իշխանությունը կամ հասարակությունը թուլանում ու նվաճվում է կամ լինում է կործանման վտանգի մեջ, կամ էլ խսպառ կործանվում: Ուստի իշխանը պիտի օրինապահ լինի, որպեսզի նաև մյուս բոլոր մասերը, որոնցից բաղկանում կամ հաստատվում է հասարակությունը, մնան բարեկարգության մեջ, և տերության կամ ազգի ողջ մարմինը մնա զորավոր ու հաստատ: Կառավարիչների սխալներն աղավաղում են իշխանների ու առաջնորդների բարի համբավը:

Գ. Բարերար իշխանն իբրև լուսավայլ արեգակ է, և ինչպես անուսներն ու մտքով կույրերն ըստ արժանվույն չգիտեն այն առողջարար գործությունն ու հարկավոր օգտակարությունը, որ արեգակը ջերմության ու լույսի միջոցով գործում է այս ընդհանուր աշխարհի ամբողջ բնության մեջ, այդպես էլ ռամիկը, ինչպես պետքն է, չգիտի բովանդակ հասարակության մեջ իշխանի գործած ազգօգուտ գործերն ու բարերարությունները:

Բայց բարեսիրտ մարդը պիտի ներսն առնի նրանց տկարամտությունը և չդժգոհի. որովհետև եթե նրանց՝ իր երախտիքները չճանաչելու պատճառով դադարի բարին գործելուց, կդառնա իբրև հասարակ մարդկանցից մեկը, և նույնն է, թե արեգակը խավարի:

Այլ ինչպես հայտնի է, որ երբ արեգակը խավարում է, ողջ բազմությունը դրա վրա պշնում է, և շատերը դրանից բազում բաներ են գուշակում, այդպես էլ երբ իշխանը դադարում է բարիք գործելուց, ամենքը վրդովվում են, տարբեր բաներ մտածում և ոչ տեղին կասկածներով շատ բան խեղաթյուրելով՝ խոսում: Եվ ինչպես արեգակը հարկ եղած օրերն անդադար շարժվում է իր պարտավորությունը կատարելու համար, որն աշխարհի օգուտն է, եթե նույնիսկ աշխարհը չի ճանաչում նրա երախտիքները, այդպես և իշխանը, քանի որ Վերին Նախախնամությամբ բարձրացել է ազգին գլխավորելու պատվին, պարտավորություն ունի բարին անելու և երբեք չդադարելու, եթե նույնիսկ հասարակությունն ընդունակ չլինի երախտագետ լինելու:

Դ. Որևէ վերատեսուչ կամ իշխան ոչ միայն իր առաքինությունների վարձը պիտի ժառանգի, այլև նրանցը, որոնց բարեգործության պատճառն է եղել խոսքով կամ գործով: Իսկ ով անկարգ ձևով է վարվում, ոչ միայն իր ապիրատ գործերի պատիժը կընդունի, այլև նրանցը, որոնց չար օրինակ եղավ իր զեղծ վարքով կամ իր անհոգությամբ նրանց թույլ տվեց չարիք գործել:

Ե. Ժողովրդի գլխավորների վայրկենական սխալները մեծ վնաս է բերում շատերին և ձգվում բազում դարեր: Ուրեմն իմանալով, որ նրանք մարմնավոր մարդիկ են՝ վիճակված բազմավրեպ ու ոյրուսասի բնության, մարդիկ շուտափույթ որոշում պիտի չկայացնեն, այլ արթուն մտքով կշռեն ու քննեն և միայն դրանից հետո վճիռ կայացնեն: Որովհետև եթե դատաստանի մեջ մի անգամ սխալվեն, թեկուզև բազմիցս զղջալու լինեն, նրանց սխալները հետ չեն դառնա:

Զ. Թեպետև հարուստի և հասարակ մարդու բարի ու չար գործերն ըստ էության նույնն են, սակայն ըստ արժեքի նույնը չեն, ուստի հատուցումները ևս համաչափ չեն:

Արդարև, նույն բարիքը, որ գործում են հարուստն ու հասարակ մարդը, օրինակ՝ եթե երկուսն էլ ուղորմություն են տալիս հարյուր դահեկան, դրանում հասարակ մարդն արդյունքով գերազանցում է հարուստին, ուստի և նրա վարձն ավելին է: Եվ չարիքը, որ գործում են երկուսն էլ, օրինակ՝ եթե զրկում են որբին և խլում հարյուր դահեկան, դրանում հարուստը հանցավորությամբ գերազանցում է հասարակ մարդուն, ուստի և նրա պատիժն ավելին է: Որովհետև բարի կամ չար գործերի արդյունքը կամ հանցավորությունը չափվում է ոչ միայն գործի էությամբ, այլև գործողի աստիճանով:

Ուրեմն՝ հարուստները միշտ թող զգույշ լինեն ապիրատ գործ չանելու. որովհետև այն անող հասարակ մարդը դառնում է չար, իսկ հարուստը՝ առավել չար, ուստի և առավել ծանր պատժի արժանի:

Է. Ժողովրդի գլխավորներն են ազգի բարեկարգության կամ անկարգության պատճառը. որովհետև նրանց կենցաղավարությունը, շարժումները, զգեստներն ու զարդերն օրինակ են ծառայում հասա-

րակությանը. համեստ կամ անհամեստ ինչ որ տեսնում են նրանց մեջ, սովորում են նույնն անել: Ուստի և իշխանավորներն, ինչպես որ իրենց ազգի առաքինությանը կամ մոլությանն են հաղորդակից, այդպես և հատուցվելիք վարձին կամ պատիժներին:

Ը. Ինչպես որ հնարավոր չէ կշռել սեփական ազգի օգտի համար տքնող հայրենասեր իշխանների համաչափ աշխատանքի պատիվը, այդպես էլ հնարավոր չէ կշռել նրանց զանցառության զուգաչափ վնասի պատճառած անարգանքը, երբ կարող են օգուտ բերել, բայց որևէ պատճառով հետ քաշվելով՝ չեն ջանում այդ անել: Քաղաքի կամ ազգի կործանման նշան է, երբ գլխավորները չեն մտածում նրա բարեկարգության մասին, այլ մտածում են միայն իրենց հանգստի մասին:

Թ. Ով կարող էր իր ազգի վնասն ու անարգանքն արգելել և իր զանցառությամբ թողնել, որ այն վնասվի կամ անարգվի, հարկավ իր ազգի հետ ինքն էլ է վնասվում կամ անարգվում. որովհետև երբ ապականվում է ամբողջը, ապականվում է և նրա մի մասը:

ժ. Եթե ազգի կամ ժողովրդի որևէ ղեկավար ցուփակյաց ու հեշտասեր է, իհարկե նաև զրկող է: Քանի որ քաջ գիտի, թե մեղկ ու հեշտասեր բարքով ատելի է հասարակությանը, զրկելով ջանում է զանձեր մթերել, որպեսզի գոնե նրանցով կարողանա իր իշխանության մեջ մնալ: Բայց սրանով էլ առավել է սխալվում, որովհետև տրտունջն ու քրթմնջյունը, որպես փշերի խռիվ ընկած կայծ, գաղտնի վառվում են ժողովրդի մեջ և օրավուր ճարակելով ու տարածվելով՝ ապստամբության հրդեհ բարձրացնում:

Իսկ ով զրկելով հարստություն ժողովեց, բռերով ցրում է ժողովըրդին նվաճելու համար, բայց ոչինչ չի շահում. գանձերը սպառվում են, իսկ ապստամբները՝ շատանում, և մի օր գրոհելով՝ իրենց զրկողին իշխանությունից զրկում:

Ուրեմն ղեկավարները թող բարեկարգ լինեն, որպեսզի վայելեն իրենց իշխանությունը. իսկ եթե զրկող լինեն, նրանց դռներին կմերժենան կորուստն ու ապականությունը:

ժԱ. Իշխանների համար ավելի կարևոր է իրենց որդիներին հարըստացնել իմաստությամբ ու առաքինությամբ, քան մեծագանձ ճոխությամբ, քանզի նրանք պատրաստվում են ժողովրդի իշխան ու հրամանատար լինել. իսկ ով չգիտի իր կրթերի վրա իշխել, չի կարող ուրիշներին իշխան լինել:

ժԲ. Իշխանների որդիներից շատերը մոլի են ու իշխանության անարժան, որովհետև իրենց հոր կենդանության օրոք մեծացել են փափկության ու ամբարտավանության մեջ, ուստի երբ սկսում են իշխել, համարում են, թե մարդիկ ծնվել են իրենց ծառայելու համար, և իրենք էլ հասարակ մարդկանց կարգից չեն: Ուստի ուրիշ բանով չեն զբաղվում, եթե ոչ գտնելով նորանոր փափկություններ: Վատնում են հորենական գանձերը և տանջում իրենց հպատակներին՝ նրանց ունեցվածքը թալանելիս: Արհամարհում են ծերերի ու իմաստունների խրատները և անսում իրենց հասակակից շոգմոզ երիտասարդներին: Սրան հետևում են ժողովրդի անհնազանդությունն ու իշխանության կործանումը:

Պետք է իսպառ խցանել կամ հրացած շամփուրով բանալ ականջները նրանց, ովքեր չեն լսում իմաստուն խրատատուների հոգեշահ խոսքերը, այլ լսում միայն շահախնդիր շողոքորթների հոգեկորուստ համոզումները:

ժԳ. Մարմնական հաճույքի հետևից ընկած որևէ հարուստ որքան էլ ջանա հեռու լինել տրտմությունից, այնքան առավել սերտ կմոտենա տրտմաբեր կրքերին. որովհետև աշխարհում չկա մարմնական որևէ ուրախություն, որ կարողանա անմասն լինել տրտմությունից:

Իսկ առաքինի մարդը, թեկուզ չունենա էլ մարմնին անհրաժեշտը, տակավին հոգում ունի երկնային մի ուրախություն ու քաղցրություն, որով միշտ մխիթարվում ու բերկրում է:

ժԴ. Եթե որևէ հարուստ տգետ է, պատիժ է հասարակությանը. որովհետև տգետը նման է կույրի, և հարստությունը՝ նրա ձեռքին գտնվող սրի, և ինչպես որ կույրը, սուրը վերցնելով, անխտիր հարվածում է բարեկամներին ու թշնամիներին, այդպես էլ տգետ հարուստը խանգարում է ժողովրդի ամեն բարեկարգություն:

Ուստի եթե Աստված բարկանում է որևէ քաղաքի կամ ազգի վրա, թողնում է, որ իմաստուններն

աղքատ լինեն, իսկ տգետները՝ հարուստ: Քանզի եթե տգետը հարուստ է, ձգտում է լինել կամ իշխան, կամ իշխանի խորհրդակից, և ժողովուրդն ի՞նչ օգուտ պիտի ստանա նրանից, ով օգուտն ու վնասը չի ճանաչում:

Ուրեմն պետք է Տիրոջից խնդրել, որ կամ հարուստներն իմաստնանան, կամ իմաստունները հարստանան, որպեսզի այդ ազգի հասարակությունն ունենա երջանիկ կյանք ու բարօրություն:

ԺԵ. Հարուստներն ու աղքատները հավասարապես պիտի պահեն օրենքներն ու սահմանադրությունները, որոնք միապես ուղղված են երկուսին էլ: Իսկ երբ օրենքի պահպանության մեջ տարբերություն է լինում, խաղաղությունն իսկույն խանգարվում է: Որովհետև հարուստը, աղքատի պես չպահելով օրենքը, իրեն մարդուց ավելի բարձր մեկն է համարում և հպարտանալով արհամարհում ուրիշներին, իսկ աղքատը, տեսնելով, որ հարուստն ընդհանուրի օրենքը չի պահում, տրտնջում է ու հոգով վհատվում:

Ուստի եթե հարուստներն ու աղքատներն օրենքը միապես պահում են, երկուսն էլ վարձ են ստանում, իսկ եթե հարուստներն օրենքի ոստայնը քանդում են, մեծ սխալ են գործում և դատաստանին պարտական դառնում, որովհետև լինում են Եկեղեցու ամբոխիչ ու այլ չարիքների օրինակ:

ԺԶ. Երբ մեկը ցածր աստիճանից իշխանության ու պատվի է բարձրանում, ազնվականներն արհամարհում են նրան, հավասարները նրա անկումը կամենում և նրանից ցածրերը նախանձաբեկ լինում: Ուստի ով կամենում է իր իշխանության մեջ անկասկած ու ապահով մնալ, թող ազնվականներին հարգի, հավասարներին սիրի և իրենից ցածրերին խնամակալ լինի:

ԺԷ. Եթե որևէ իշխան կողոպտում ու նեղում է իր հպատակներին և նրանց չի թողնում վայելել իրենց գործերի պտուղները, այդպիսինին արտաքին թշնամի պետք չէ, որովհետև ինքն իսկ ձեռք գարկելով ջանում է կործանել իր իշխանությունը, որպես լեռդագավությանը հիվանդ՝ օրըստօրե հյուժվելով մաշվում է և ամենավերջում մեջտեղից վերանում: Արագ է կործանվում նրա իշխանությունը, ով միայն ջանում է միայն զանձեր ձեռք բերել և ոչ թե բարի ու իմաստուն խորհրդակիցներ:

ԺԸ. Մեծ հաղթանակ է տանում նա, ով թշնամուն հաղթում է գթությամբ ու բարերարությամբ և ոչ թե ուժով ու զենքով: Որովհետև ով նվաճվում է ուժով, իր սիրտն աննվաճ է պահում ու սպասում հարմար պահի՝ վրա հասնելու ու նվաճողի զորությունը խորտակելու: Իսկ ով նվաճվում է մարդասիրությամբ, չի մտածում թշնամություն անել, և պատահում է, որ մտերիմ բարեկամ է դառնում, որովհետև բարերարությունը շատ անգամ թշնամությունը վերածում է հավատարիմ բարեկամության:

ԺԹ. Իմաստուն իշխանը, սահմանակից տերությունների հետ խաղաղությամբ վարվելով, ավելի լավ է պաշտպանում իր տերությունը, քան բազում զորքերով ու ամուր պարիսպներով. քանզի ինչ-որ պատահարներով զորքերը ցրվում են, և ամրոցները՝ կործանվում, բայց հավատարմությամբ պահպանված խաղաղությունը հաստատուն է մնում:

Ի. Վարձատրության հույսն ու պատիժների երկյուղը իշխանի ձեռքին արդարության կշեռք են, որով իր ժողովրդին պահում է խաղաղության ու բարօրության մեջ: Քանզի վարձատրության հույսը բարիներին քաջալերում է անդադար կատարելու ազգօգուտ գործեր ու աշխատանքներ, և պատիժների երկյուղը չարերին սանձահարում՝ վնասակար գործեր կատարելուց դադարելու:

Իսկ եթե իշխանն այս կշեռքը խախտի, այսինքն՝ վարձահատույց չլինի բարիներին և չպատժի չարերին, ժողովրդի միջից բարեկարգությունն ու խաղաղությունը կվերանան, և անիրավություն ու աղմուկ կտիրեն. քանզի բարի մարդիկ հուսակտուր եղած կվհատվեն ու կհեռանան, իսկ անպատիժ մնացած չարերը կշատացնեն չարագործությունները:

Իշխանների պարզևներն ու վարձատրության խոստումները նորանոր ձեռնարկումներ են առաջ բերում ժողովրդի օգտի համար:

ԻԱ. Որևէ բարեմիտ իշխան ժողովրդի օգտի համար այս դաշինքով կարող է հանձն առնել այն իշխանությունը, որին ժողովուրդն արժանի համարվեց: Այսինքն՝ եթե ինքն արհամարհի օրենքը և անկարգությամբ շարժվի, իրեն պիտի հանեն իշխանությունից, իսկ եթե օրենքը պահպանի, ինչը պահանջում է իր պաշտոնի պարտավորությունը, ժողովուրդը հլու-հնազանդ պիտի լինի նրա ամեն հրահան-

գին:

Եվ այս պայմանով իշխանը վստահ ու ապահով է դարձնում իր ժողովրդի սիրտը, թե ինքն արդարև կամենում է օրենքը պահպանել ու երբեք չզարտուղել, և պահում է նրանց իր հանդեպ միամիտ հնազանդության մեջ: Այս պատճառով էլ իշխանն ու նրան հնազանդվողները միմյանց հետ սիրով ու օգուտով են մնում:

ԻԲ. Ով կարող է կարոտյալին օգնել գործով, բայց միայն սնոտի խոստմամբ, օդի մեջ ասված խոսքերով է լցնում օգնություն խնդրողի ականջը, կարոտության ժամանակ ոչ ոքի չի գտնի ձեռք մեկնող ու օգնող, այլ կգտնի միայն լեզվի ունայն կարկաչում. որովհետև ինչ սերմանում է մեկը, նույնն էլ հնձում է:

ԻԳ. Որևէ իշխան, եթե իր ժողովրդին նեղության ժամանակ չի օգնում, իշխանության ձգտել է տալիս մարդկանց: Եվ որովհետև գիտեն, որ իրենց կարգավիճակի բերումով չեն կարող դրան հասնել, հանդըզնում են ձեռնամուխ լինել անարժան ու վնասակար միջոցների, որպեսզի գոնե նրանցով հասնել կարողանան: Սրանից առաջ են գալիս իշխանի անկումն ու ժողովրդի ապստամբությունը, որոնք երկուսն էլ չար են:

Ուստի իշխանը պարտավոր է օգնել ժողովրդին, գութ ու խնամք ունենալ, և ժողովուրդը՝ իր վիճակից գոհ լինել և հնազանդության ու ականածության մեջ մնալ:

ԻԴ. Այն իշխանները, որոնք ռամիկներին պատժում են փոքր հանցանքի համար, որը կարող էին ներել առանց արդարության հանդեպ անիրավելու, արդյոք ի՞նչ պատասխան պիտի տան Աստծուն, ով ներում է նրանց մեծամեծ հանցանքները, երբ կարող էր արդար իրավունքով նրանց պատժել:

ԻԵ. Որևէ իշխան, եթե կամենում է, որ չարերը պակասեն, ու բարիները շատանան, բարեբարոնե-րին պիտի մեծարի և չարերին արհամարհի: Որովհետև մարդիկ, բնությամբ պատվասեր լինելով, միշտ հնարներ են բանեցնում պատիվ ստանալու համար և երբ տեսնում են, որ չարաչար ընթացքով չեն կարողանում ստանալ, ջանում են իրենց ուղղել, որպեսզի այդպիսով կարողանան պատվի հասնել: Ուստի և պատիվն առաքինության խթան է լինում՝ մոլեկան թմրությունից զարթնելու և բարիք գործելու համար: Քանզի չարերը չեն պակասում, քանի դեռ հարգի են իշխանի աչքին, և բարիները չեն շատանում, քանի դեռ անպատվության մեջ են:

ԻԶ. Իշխանի հոգին իր հետ կապված ունի ժողովրդի անդամների հոգիները, ուստի եթե կամենում է, որ իր ժողովուրդն առաքինի լինի, թող ինքն էլ առաքինի լինի և ահա կգտնի ամբողջ հասարակությանը դեպի լավը փոխված:

ԻԷ. Իշխանն այնքան սիրտ պիտի ունենա, որքան հպատակ ունի: Քանզի յուրաքանչյուր ոք կամենում է, որ իշխանն իր սիրտը նրան տա և միայն նրա մասին հոգա, յուրաքանչյուր ոք իր անձի համար է ճանաչում նրան, թե միայն իր համար է իշխան և միայն իրեն է նայում. որովհետև ամենքն իրենց օգուտն ակնկալում են նրա ձեռքում գտնել և եթե վշտանում են մեկից, նրանից են օգնություն խնդրում: Իսկ իշխանն ամենքին իր մեջ պահում է և ամենքի մասին հոգում:

Տե՛ս, թե որքան դժվարին է հասարակության իշխան լինել, էլ չեն ասում՝ ծառա. ամբողջ ժողովուրդը ծառայում է մի իշխանի, և միայն մի իշխանը պարտավոր է ծառայել ամենքին:

ԻԸ. Իշխանը շատ անգամ խաբվում է շահասեր մարդկանցից, որոնք իրենց հավատարիմ են ցույց տալիս նրան: Երբեմն իշխանին հասկացնում են որևէ բան, որն իմանալը նրան կարևոր է թվում, նախքան իշխանի հարցնելը նրանցից և սրանով նրա կամքը դեպի իրենց տրամադրելով՝ կարծել են տալիս, թե բարեկամ են: Իսկ ուրիշ անգամ խոսք մեջ գցելով՝ նույն բանից խոսում են կանխապես ասվածից տարբեր կերպով: Եվ եթե առաջին ազդարարության ժամանակ այդ բանի հետ ծանոթությունը լսողին օգտակար էր երևում, երկրորդի ժամանակ խոսքը փոխվում է հօգուտ ասողի և ի վնաս ուրիշների:

Ուրեմն իշխանները թող զգույշ լինեն շահախնդիրներից չխաբվելու, թեպետև այդ հույժ դժվարին է, քանի դեռ ապրում են նրանց հետ, որովհետև խիստ սակավ է հանդիպում հավատարիմ մարդ, որ խոսի ուրիշների օգտի և իշխանին ծառայելու համար:

ԻԹ. Ինչո՞ւ է մարդը պարծենում, թե կարող է տիրել երկրին, հրամայել ծովին, բազում ժողովուրդներ նվաճել, հասարակության համար օրենսդիր լինել, ամենքին պարտավորեցնել օրենքի պահպանության, մինչ թույլ է գտնվում իր վրա իշխելու, իր կրթերը նվաճելու և պահելու այն օրենքը, որ Աստծու կողմից տպված է նրա սրտում: Նա՛ է ճշմարիտ տիրող, ով տիրում է իր կամքին ու կրթերին: Հաղթող է ոչ թե նա, ով հաղթում է ուրիշներին, այլ նա, ով հաղթում է ինքն իրեն:

Լ. Իրավամբ են մեղադրվում նրանք, ովքեր քանի դեռ գտնվում են ցածր կամ միջակ վիճակում, բարեկարգ են ու առաքինի, բայց երբ հարստություն ու փառք են ձեռք բերում, սկսում են անկարգ ու մոլի դառնալ, երբ պետք էր, որ նրանք էլ առավել բարեկենցաղ լինեին, այնքան, որ ամենքն ակնածեին նրանցից:

ԼԱ. Առավել մեծ գործ է ժողովրդի բարքն ուղղելը, քան ավերված քաղաքներ նորոգելը: Ապարդյուն աշխատանք է ավերակներ նորոգելը, եթե բնակիչներն անուղիղ ընթացք ունեն, որովհետև բնակիչների անիրավությունները կարող են արագորեն տապալել քաղաքը, եթե նորակերտ ու ամրակուռ իսկ լինի:

Քաղաքի համար պարծանք է ոչ թե մեծավայելուչ շենքերի շատությունը, այլ աշխատասեր բնակիչների կենսօգուտ առաքինությունները:

ԼԲ. Ի՞նչ օգուտ է մեկին լինել ազնվատոհմ, եթե կյանքում ազնվաբարո և մահվան մեջ բարեհամբավ չէ: Ուրեմն մոլիները թող չպարծենան, թե բարետոհմիկ են, այլ ջանան միշտ բարեկենցաղ լինել, որովհետև տոհմով պատվական ու բարքով անպիտան լինելն ավելի մեծ անարգանք է: Նախնիների մեծամեծ առաքինություններից ծանրանում են որդիների ապիրատությունները, որովհետև սրանք գուրկ գտնվեցին իրենց նախնիների բարեմասնությունից:

ԼԳ. Իշխանն իշխում է իր հպատակների վրա, բայց օրենքն էլ իշխում է իշխանի վրա: Նա է ճշմարիտ իշխան, ով հնազանդվում է օրենքին, ապա թե ոչ բռնակալ է և ոչ թե իշխան:

Նա է օրինավոր իշխան, ով օրենքն է հպատակների վրա իշխել տալիս. որովհետև իշխանը պիտի միաբանվի օրենքի հետ ու իշխի նրա հետ միասին և ոչ թե միայն ինքը:

Գովելի է ոչ թե նա, ով օրենքը քաջ գիտի, այլ նա, ով այն գործադրում է:

Իշխանի վարած իշխանությունն իրենը չէ, որովհետև իր փառքի ու հաճույքի համար ոչինչ չի կարող անել: Իշխանությունն օրենքինն է, որի էլ պաշտպանն է ինքը: Ուստի պիտի հնազանդվի օրենքին՝ օրինակ լինելու հպատակներին:

ԼԴ. Իշխանը բարիք գործելու ազատ հնարավորություն ունի, բայց չարիք գործելու ազատություն չունի. քանզի օրենքը ժողովրդին՝ որպես թանկագին ավանդ, նրան է հանձնել, որպեսզի լինի հասարակության խնամածու հայր, իմաստությամբ ու բարեկարգությամբ ծառայի ամենքի երջանկությանն ու խաղաղությանը, և ոչ թե ամենքը՝ իբրև տառապյալ գերիներ, ծառայեն նրան՝ իրականացնելու նրա սնափառ ու փափկալի բաղձանքները:

ԼԵ. Երկյուղը բավական չէ, որ ժողովուրդն ամուր պահվի իշխանի բոլոր հրահանգներին հնազանդվելու մեջ, սե՛ր է պետք: Որովհետև նրանք գերի չեն, այլ քաղաքացի, և ինչպես որ լավ չէ, որ լիովին ազատ լինեն, այդպես էլ լավ չէ, որ ամբողջովին ծառա լինեն:

ԼԶ. Իշխանները պիտի գուր ունենան իրենց հպատակների հանդեպ, որովհետև երբ հարկը նրանց կարողությունից առավել են ծանրացնում, ապստամբության խորհուրդը, նրանց մեջ զորանալով, ծնում է ժողովրդին դեպի կործանում տանող ատելություն: Այնժամ կամ իշխանը հպատակներին չարաչար ծառայության տակ է գցում, կամ հպատակներն իսպառ մերժում են նրա իշխանությունը, և մեկ մարմնի մեջ չար մասնատում է լինում:

ԼԷ. Անմիտ է այն իշխանը, որ կարծում է, թե կարող է մեծարվել անիրավ բռնությամբ կամ գոռոգությամբ, կամ խստությամբ, որովհետև մեծարելի է նա, ով արդար է, հեզ ու քաղցրաբարո:

Իշխաններն առավել բարեհամբավ ու մեծանուն են լինում իմաստուն ղեկավարմամբ, քան թշնամիների հանդեպ հաղթանակներով:

ԼԸ. Երանելի՛ է այն ժողովուրդը, որի իշխանը նրան կրթում է բարու մեջ, բայց դրանով նաև իշ-



խանն է երանելի լինում, որ գտնում է իր ժողովրդին դեպի լավը փոխված, որովհետև առաքինությամբ զարգանալով՝ ժողովուրդը նրան ավելի կապվում է ուժգին սիրով, քան երկյուղով: Այնժամ ոչ իշխանը ժողովրդին հնազանդեցնելու համար ջանք թափելու կարիք ունի, որովհետև հոժարությամբ հնազանդվում է նրան, ոչ էլ ժողովուրդն է ցանկանում ըմբոստանալ ու ազատվել նրա իշխանությունից, որովհետև վախենում է նրան կորցնելուց, ուստի իր կյանքը նվիրաբերում է նրան:

Նա է իշխանության արժանի, ում կամ Աստված է հայտնում, կամ ժողովուրդը կամենում. որովհետև բռնությամբ՝ ժողովրդի կամքին ու հաճությանը հակառակ, իշխան դառնալը սեփական անձը թշվառ ու հասարակությունը գերի դարձնել է:

Բռնակալ ու անիրավ իշխանը մարդկային ցեղին հասած աստվածային ցասում է՝ շատերին կործանելու համար:

ԼԹ. Դժբախտ են այն ժողովուրդները, որ ղեկավարվում են մի իշխանի կողմից, քանի որ նա ևս սխալական բնության վիճակված մարդ է իրենց պես. մարդկանց ղեկավարելն ու ուղղելը Աստծո՛ւն էր պատշաճ, որովհետև միայն նա՛ է անսխալ: Դժբախտ է և իշխանը, որովհետև ուրիշների նման բազմավրեպ մարդ է և ստիպված է ղեկավարել անթիվ նենգամիտ մարդկանց ու անբամբաս մնալ:

Որևէ լավ իշխան տակավին մարդ է, ունի իր վրա իշխող կրթեր, բարք ու սովորություններ և պաշարված է իրեն խաբող շահասեր մարդկանցով, ուստի միշտ սխալների մեջ է ընկնում՝ երբեմն ի՛ր ատերի պատճառով, երբեմն էլ ուրիշների, և երբ իր մեջ մի թերություն ուղղում է, մյուսի մեջ է գահավիժում:

Խ. Աշխարհի իշխանները բոլոր մարդկանցից ավելի արագ են ծերության հասնում. որովհետև երբ կամենում են իրենց պարտավորությունները կատարել, պատերազմի դժվարություններն ու հասարակության հոգսերը հյուժելով մաշում են նրանց կյանքը, իսկ երբ հոգ չեն տանում իրենց պարտավորության մասին և թողնելով ժողովրդի բարօրության հոգսը՝ իրենց տալիս են մարմնական հեշտությունների, առողջությունը կորցնում են ու մահն արագացնում:

Ով իշխանության է ձգտում, իմաստուն չէ. որովհետև երբ իշխանն արդար իրավունքով է ջանում դատել, այդ անհնարին աշխատանք է նրա համար, իսկ եթե անիրավությամբ՝ մարդկանց առեղծ է դառնում, նաև արժանի հավիտենական դատապարտության:

Իշխանությունը մի ծայտված ծառայություն է. որովհետև իշխանի փառքն ու հարստությունը կախված են շատերից, որոնց իշխում է, իսկ շատերից կախման մեջ լինելը շատերին ծառայել է:

Հարկավոր է, որ իշխանը բոլոր մարդկանցից առավել ժուժկալ ու փափկակեցության թշնամի լինի. որովհետև Աստված նրան իշխան ու մեծ նրա՛ համար չդարձրեց, այլ ժողովրդի օգուտի: Ուստի պետք է իր կյանքի ամբողջ ընթացքում ջանքն ու սերը ժողովրդին նվիրաբերի՝ մինչև ինքնամոռացություն ու հասարակության բարիքի համար ինքնագոհողություն:

ԽԱ. Իշխաններն առավել պիտի հոգան երկու բանի մասին. առաջին՝ իրենց խորհրդակից ունենալու իմաստուն ու առաքինի մարդկանց, ովքեր կծաղկեցնեն օգտակար արհեստները և իրենց՝ իշխաններին, կառաջարկեն բարին գործել, և երկրորդ՝ երկրագործներին շատացնելու մասին, որպեսզի երկիրը լավ մշակվելով պտղագործի՝ ժողովրդի ապրուստի ու սննդի համար:

Իշխանը չի կարող լավ ձանաչել իր շուրջ գտնվող մարդկանց բնավորությունները. քանզի նրանք, միշտ կերպարանափոխ եղած, իրենց բնավորությունը ծածկում են և պես-պես հնարներով ջանում հաճելի երևալ նրա աչքին ու խաբել նրան: Որքան իշխանը մեծ է և իր իշխանության ներքո բազում ժողովուրդներ ունի, այնքան բազում կառավարիչների կարիք ունի, և որքան բազում են կառավարիչները, այնքան բազում են խաբողները: Ուստի հույժ արթնության կարիք ունի, որպեսզի չխաբվի:

ԽԲ. Իշխանն իր կառավարիչներին օգտակար մասնագիտությունների մեջ պիտի կրթի, մասնավոր՝ երկրագործականների մեջ, և արգելի անպիտան արհեստները, որոնց նպատակը փափկություններն ու զարդարանքն են, երբեք չների տղամարդկանց ու կանանց պճնասիրությունը և կերակուրների ու ըմպելիքների շրայությունը, որովհետև չափազանց ճոխություններն ու զեխություններն ապականում են բարքը: Ուստի որպես լավ պարտիզպան՝ անպիտան ճյուղերը պիտի հատի, որպեսզի

պտղաբեր ծառերը չչորանան:

ԽԳ. Իշխանն իրեն վարանման մեջ է գցում, երբ վստահում է կեղծավորությամբ հավատարիմ ձևացող իր կառավարչին: Քանզի նրա հավատարմությանը կասկածելու դեպքում վախենում է նրան վնասել իր բոլոր գաղտնիքներին տեղյակ լինելու պատճառով, ջանում է անտեսել նրա խարդախությունները և կամովին ցույց է տալիս, թե խաբված է: Եվ երբ կեղծավորը զգում է, որ իշխանն իրեն կասկածում է, նենգ հնարներ է խորհում՝ իրեն հավատարիմ ցույց տալու: Ձեռնարկում է իշխանի փառքն ու համբավն ավելացնող նորանոր գործեր, որոնք ի կատար ածելն իր գործին է հարկավոր:

Լեզուն շարժում է իշխանի կամքի համաձայն, որպեսզի նրա մտքից վերացնի գայթակղությունը: Ազնիվ մարդկանց հեռացնում է նրանից, որպեսզի իր խարդախությունները հայտնի չդառնան: Իշխանին հորդորում է հանգստանալ ու փափկություններ վայելել, իսկ ինքը հանձն է առնում նրա կյանքի ու փառքի համար անել ամեն աշխատանք: Այս պատճառով էլ իշխանը միշտ մնում է վարանման մեջ՝ չկարողանալով որոշել, թե նա արդյոք հավատարիմ է, թե նենգավոր ու դավաճան:

ԽԴ. Իշխանները սովորաբար կասկածամիտ ու անզգույշ են: Կասկածամիտ են, որովհետև մարդկանց նենգավոր դավաճանությունը բազմիցս փորձով տեսել են, և անզգույշ են, որովհետև իրենց տալով վայելքներին՝ ղեկավարության ղեկը հանձնել են կառավարիչներին, որոնցից շատերը նրան ազնվությամբ չեն ծառայում: Ուստի և դառնում են կեղծավորների խաղալիք և բոլոր մարդկանցից առավել թշվառ:

ԽԵ. Իշխանները, մանուկ հասակից հարգական գովեստներով մեծացած ու մանավանդ շողոքորթական խոսքերով ապականված լինելով, հույժ խոժոռվում են, երբ մեկն անհավան է գտնվում նրանց մտքերին ու գործերին և ճիշտն առաջարկում: Սիրում են իրենց կամքին հաճելի խոսքեր և իրենց մտքերի ու գործերի գովաբանություններ: Ուստի մարդահաճոները սիրելի են իշխաններին՝ իբրև իրավախոհներ ու քաղաքավարներ, իսկ ճշմարտախոսներն՝ ատելի, իբրև հանցավորներ ու վայրենաբարոներ:

Բայց հարկավոր է, որ իշխանն իրեն բարեկամ ու խորհրդակից փնտրի ու գտնի այնպիսի մարդու, որ կարողանա ճշմարիտն ասել ու երբեք չշողոքորթել, և այդպիսին գտնելիս չկորցնի ու հոժարակամ անսա նրա խոսքերին:

ԽԶ. Իշխանների կենցաղավարությունը ժողովրդի ջինջ հայելին է, որովհետև ամենքը ցանկանում են ըստ իրենց կարողության նմանվել նրանց: Եթե հարուստն առաքինի կյանք վարի, առաքինիները կշատանան հասարակության մեջ, իսկ եթե մոլեկան վարք ունենա, կշատանան մոլիկները: Ուրեմն վա՛յ մոլի հարուստներին, ովքեր իրենց օրինակով ժողովրդի չարիքների պատճառ են դառնում:

ԽԷ. Իշխանը կամենում է, որ ամենքն իր կամքին հետևեն, և ամենքը կամենում են, որ իշխանը հետևի իրենցից յուրաքանչյուրի կամքին. ահա անվերջ վեճ: Ուրեմն թող իշխանը ժողովրդի բարին կամենա, և այնժամ ամենքը կհետևեն իշխանի կամքին. ահա անվերջով խաղաղություն:

ԽԸ. Իշխանավորները պիտի զուշավոր լինեն իրենց խոսքերում ու գործերում, որովհետև ինչ որ խոսում են, ամենքը լսում են, և ինչ որ գործում են, ամենքն՝ իմանում: Քանզի նման են բարձր դիտանոցում կախված ահագին զանգի, որ երբ խփվում է, ամենքը լսում են: Իսկ ռամիկները նման են ծոցակրելի զանգակի, որի ծայրը միայն իրենց է լսելի:

ԽԹ. Իշխանի անիրավությունը խանգարում է երկրի կարգը. հպատակները, նրա անիրավությունից նեղվելով, ջանք են թափում ազատ լինելու, իսկ ազատությունը ստիպում է, որ հրամայող լինեն: Եվ արդ, եթե ամենքը հրամայող լինեն, ո՞վ կլինի հպատակ, կամ ո՞ւմ կհրամայեն. ահա անհաշտ խռովություն ու անվախճան աղմուկ: Ուրեմն թող իշխաններն իրավասեր լինեն, որպեսզի հպատակները հլու-հնազանդ լինեն:

Ծ. Երբ որևէ անկարգություն իշխանի թույլտվությամբ մի անգամ տիրում է հպատակների մեջ, օրենքի ուժն ու պատիժների միջոցով վրեժխնդրությունները խիստ դժվարությամբ են կարողանում բարեկարգել կամ բնավ չեն կարողանում: Ուստի անգամ դույզն-ինչ համարձակություն պետք չէ տալ նրանց, ովքեր կամենում են օրինազանց լինել: Որովհետև ով մեկի փոքր հանցանքն անտեսում է, թույլ

է տալիս նրան գործել մեծամեծերը:

ԾԱ. Եթե իշխանն ազահ է, սովոր է իր հպատակների հարստությունները կողոպտել, և որովհետև հասկացել է, որ հպատակները չեն կարողանում տանել իր անիրավ գրկանքները, ցերեկը հանգիստ չունի, իսկ գիշերը՝ քաղցր քուն, հարաժամ վախենում է իր ստվերից, և ամեն ինչ նրան վտանգավոր է թվում:

Աստված էլ նրա տանջանքներն ավելացնելու համար նրան բեռնավորում է բազում գանձերով, որոնք չի համարձակվում վայելել: Գանձը, որ մթերում է երջանիկ լինելու համար, նրա երջանկությանն արգելք է, որովհետև գանձը կորցնելու երկյուղը նրան երբեք հանգիստ չի տալիս: Ուրախություն չկա նրա սրտում, այլ անհնարին սարսափ. ամեն շշունջից այլայլվում է, և դժնդակ տխրություն է նրա դեմքին նկարվում: Հաճախ լռում է և հառաչում հանկարծ. չի կարողանում թաքցնել սրտի խայթը, որ տոչորում է նրա աղիքները, համեղ կերակուրներն անհամ ու դառն են թվում նրան, և փափուկ գահավորակները՝ գետնախշտի անկողին: Իր որդիներից վախենում է և նրանց թշնամի համարում: Նրա ողջ ունեցվածքն օգուտ չի բերում նրան ու ավագի պես անպիտան է, որովհետև չի կարողանում դրանք վայելել:

Ուրեմն պարզ է, որ ոչ մի բռնակալ չի կարող ապահով լինել, որովհետև որքան անիրավ բաղձանք ունի, այդքան էլ իր համար դահիճ է ձեռք բերել:

ԾԲ. Երբ հարուստը հոժարամիտ է ցածր վիճակ հանձն առնելու, հաջողության երես թեքելուց հետո անվրդով մտքով վայելում է իր հարստությունը. իսկ հակառակ դեպքում միշտ կասկածների մեջ է մնում ու հանգիստ չի ունենում՝ տեսնելով, որ իր վայելած հարստությունն անհաստատ է ու շուտափախուստ:

ԾԳ. Իշխանության հաստատունությունը հիմնվում է հավատարմության, արդարության ու բարերարության վրա՝ թե՛ հպատակների և թե՛ սահմանակից ժողովուրդների հանդեպ: Ուստի երբ սրանք պակասում են, և սրանց փոխարինում են խարդախությունը, անիրավությունն ու անգթությունը, օր օրի տկարանալով՝ իշխանությունը կործանվում է:

ԾԴ. Եթե ժողովրդի կամ ազգի իշխանն ազահ ու հպարտ է, պատերազմի է ելնում իր հանդեպ ակնածություն ու խաղաղություն ունեցող սահմանակից իշխանների դեմ, որպեսզի նրանց տիրի և իր գանձն ու համբավն ավելացնի: Բայց այս անիրավ բաղձանքը պատճառ է դառնում նրա չարաչար կործանման. սահմանակից իշխանները, միմյանց հետ դաշինք կնքելով, կռվի են ելնում նրա դեմ, կոտորում նրա ամբարտավանության եղջյուրը և հասարակության ապականչին մեջտեղից վերացնում:

ԾԵ. Եթե իշխանը սնափառության պատճառով անիրավ պատերազմ է բարձրացնում և ասես խաղալով մարդկային բնության հետ՝ իր ախտերին ու կամքին անհամար մարդկանց զոհում, այդպիսին գազաններից էլ չար է. որովհետև գազաններն իրենց ցեղակիցներին չեն հոշոտում, իսկ այս անագորույն սիրտ ունեցողը, մարդասիրությունն ու մարդկությունը գլխովին մոռացած, սնուտի փառքի ու կորստական հարստության համար ձեռքը թաթավում է իր նմանակից եղբոր արյան մեջ:

Աստված երբեմն այսպիսիների վրեժխնդրությունն ուշացնում է, սակայն իսպառ անպատիժ չի թողնում, վերջում արդար իրավունքով փոխարենը հատուցում է:

ԾԶ. Պատերազմն օրինավոր է, եթե հարկավոր է ժողովրդի բարօրության համար, որովհետև վայել չէ հեղել ժողովրդի արյունը, եթե ոչ՝ նրան ավելի մեծ վտանգից փրկելու համար: Իսկ սնուտի փառքի ու ազահության համար պատերազմելը իշխանի համար անզգալի թշվառություն է. որովհետև անհարկի իրեն վտանգի մեջ է գցում և անթիվ չարիքներ պատճառում իր ժողովրդին առավել, քան թշնամիներին:

ԾԷ. Թշնամու հանդեպ ավելի մեծ հաղթանակ է նրան բարերարելը, քան վնասելը. որովհետև վնասելը տկարի ու չարաբարոյի գործ է, իսկ բարերարելը՝ վեհանձնի ու բարիի, ով այսպիսով թշնամուն ևս իրեն բարեկամ ու մտերիմ է դարձնում՝ ասես թունավոր օձերից հակաթույն պատրաստելով:

ԾԸ. Թշվառ է այն իշխանը, որ կարծում է, թե իր ժողովրդին գրկելով՝ ինքը երջանիկ է. որովհետև իր չարաչար կրքերից հափշտակված՝ չի կարողանում ձանաչել իր պարտավորությունը, որը միայն

բարիք գործելն է, և չգիտի վայելել առաքինության քաղցրությունը:

Իշխանների ծառաներն արժանի են ցավակցության, որովհետև եթե չար են ու մարդկանց խոշտանգում են, իրենց համար շահում են գեհենի պատիժը: Իսկ եթե բարի են և ջանում են հասարակությանը բարիք գործել, անդադար նեղություններ են կրում չարագործների նենգությունից, որովհետև չարերը բարիներին միշտ հակառակ են:

ԾԹ. Այն իշխանները, որոնք չեն մտածում բարերարությամբ ու սիրով դեպի իրենց տրամադրել հպատակների սիրտը, այլ չափից ավելի նեղելով՝ ջանում են նրանց ահարկու երևալ, խանգարիչ ու պատիժ են մարդկային ցեղի համար: Ամենքի վրա ահ են գցում, բայց ամենքից ատվում են: Ուստի իրենք առավել պիտի երկնչեն հպատակներից, քան վերջիններս՝ իշխաններից:

Ով իր ծառաներին թույլ է տալիս անիրավել ու վնասել ուրիշներին, թող հույս չունենա, թե ազատ կմնա նրանց վնասից. որովհետև ովքեր սովորեցին անիրավել ուրիշների հանդեպ, կանիրավեն նաև իրենց տերերի հանդեպ:

Կ. Անիրավ իշխանը ոչ մի բարեկամ չունի. քանզի բարի մարդիկ, նրա անիրավությունից վշտացած, օտարանում են նրանից՝ որևէ չար բան չկամենալով նրան, իսկ չարերը, նրա խստությունից վախեցած, չարիք են նյութում, որ նրան կյանքից զրկեն, ուստի և միշտ վտանգի մեջ է:

ԿԱ. Ով խղճի խայթ չի զգում, նա առաքինությունը չի ճանաչում. և կարծում է, թե մեծությունն ու իշխանությունը ամենքին տիրելն ու շատերին ահարկու երևալն է: Ուստի մտքին դնում է ուրիշներին զրկել և իրեն ծառայեցնել, բայց հույժ խաբվում է, որովհետև մեծությունն ու իշխանությունը բարերար և հասարակությանը սիրելի և ոչ թե երկյուղալի լինելն է:

Բարի իշխանն առավել պիտրծում է աղքատների ու կարոտյալների աղաղակները լսել՝ նրանց բարիք գործելու համար, քան երգերի ու նվագարանների քաղցրաձայնությունը: Իսկ ով միայն փափկանալ է ուզում զանազան հեշտություններով և բնավ հոգ չի տանում ազգօգուտ գործերի մասին, այդպիսին ազգի խանգարիչ է. որովհետև ոչ միայն ինքը չի օգնում ազգին, այլև իր չար օրինակով արգելք է դառնում շատերին՝ օգտակար գործերից հեռու մնալու և միայն իրենց հաճույքներով զբաղվելու:

«Ձեր միջից առանձնացրե՛ք իմաստուն, խոհեմ ու շրջահայաց մարդկանց, որպեսզի նրանց ձեզ վրա իշխաններ կարգեն» (Բ Օրենք Ա 13):

«Ձեզ են ուղղված իմ խոսքերը, ո՛վ բռնակալներ, որպեսզի իմաստություն սովորեք & չսխալվեք» (Իմաստ. Ջ 10):

«Արդ, ո՛վ ժողովուրդների բռնակալներ, եթե իշխանության գահեր & մականներ եք տենչում, ապա պատվեցեք իմաստությունը» (Իմաստ. Ջ 22):

«Արդարության սկիզբը խոսքին իշխանություն է տալիս, իսկ հակառակությունը & կռիվը տանում են դեպի չքավորություն» (Առակ. ԺԷ 14):

«Իմաստուն դատավորը խրատում է իր ժողովրդին... քաղաքը կառուցվում է հզորների իմաստությամբ» (Սիրաք Ժ 1-3):

«Բավական է ձեզ, ո՛վ իշխաններդ Իսրայելի: Արդ, հեռու՛ վանեցեք անիրավությունն ու զրկանքը, օրենքով ու արդարությամբ վարվեցեք, հեռու՛ տարեք բռնությունն իմ ժողովրդից,- ասում է

Տեր Աստված» (Եզեկ. ԽԵ 9):

«Այս աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ չհպարտանան & չապավինեն սնոտի հարստությանը» (Ա Տիմ. Զ 17):

«Զգո՛ւյ՜ջ եղեք, զուցե ձեր այդ իշխանությունը գայթակղություն լինի տկարների համար» (Ա Կորնթ. Ը 9):

## Գ Լ ՈՒ Խ Դ

### Ժ ՈՂ ՈՎ ՈՎ ՈՒ Ր Դ

Ա. Ինչպես որ առաջնորդներն ու իշխաններն են սիրում հասարակությունը և պես-պես աշխատանքներ ու նեղություններ միշտ կրում նրա օգտի ու խաղաղության համար, այդպես էլ հասարակությունն ու բոլոր ստորադրյալները պիտի սիրով հնազանդվեն առաջնորդի ու իշխանի հրամաններին և ճանաչեն իրենցից յուրաքանչյուրի օգտի համար նրանց արած բարերարությունները:

Իսկ եթե չեն ճանաչում իրենց բարերարների երախտիքներն ու հարզը և համառելով արհամարհում են նրանց հրամանները, այնժամ Աստված, ժողովրդի ապերախտության վրա բարկանալով, խնամակալ ու բարեջան առաջնորդներին ու իշխաններին վերցնում է և նրանց փոխարեն տալիս զրկողների ու չարահույզների: Ուստի աստվածային բարկության ու պատիժների նշան է բարեբարո իշխանների պակասումն ու չարաբարոների հաջորդումը:

Բ. Պետք ու պատշաճ է, որ ժողովրդի բոլոր ներկայացուցիչները նախ՝ բարի համարում ունենան օգտաշահ ամեն խոսք ուսուցանող առաջնորդի մասին և ասողի միտքը չհասկանալու պատճառով թյուր կերպով դատելով՝ սրտում չարհամարհեն նրան ու չօտարանան նրանից: Երկրորդ՝ նրան ճանաչեն իբրև հասարակության օգտախնդիր ու հայրենատուր օրենքի վրեժխնդիր և կարգուկանոնի համար նրա՝ ոմանց պատժելու պատճառով միմյանց հետ չշշնջան ու չբամբասեն, թե ատելությունից է այդ անում և այլն: Երբ ժողովուրդն այս երկուսը չի ունենում, առաջնորդի բոլոր խոսքերն ու գործերը հակասական ու կասկածելի են նրան թվում. ուստի վերանում են առաջնորդի հանդեպ ժողովրդի հնազանդությունն ու ժողովրդի հանդեպ առաջնորդի սերը:

Գ. Ազգը բարեբախտ է, եթե ունի խոհեմ ու իմաստուն առաջնորդ, բայց ավելի բախտավոր է, եթե ունի Եկեղեցու առաջնորդներին հնազանդ ժողովուրդ: Քանզի ժողովրդի՝ հոգևոր իշխանավորների խրատական խոսքերին ու պատվերներին հպատակությունն Աստծուն է վերաբերում՝ ըստ այսմ. «Ով որ ձեզ է լսում, Ինձ է լսում» (Պուկ. Ժ 16):

Բայց կան ոմանք, ովքեր ինչ թերություն որ տեսնում են որևէ եկեղեցականի մեջ, բոլոր եկեղեցականների վրա են տարածում և ամենքին քննադատում ու բամբասում: Նրանք գոնե աստվածային Գըրքին թող լսեն. «Քո ժողովրդի առաջնորդին մի՛ հայիոյիր» (Ելք ԻԲ 28):

Դ. Քաղաքի կամ ազգի իշխանը նման է մարմնի վրա գտնվող գլխի, իսկ ժողովուրդը՝ անդամների՝ ըստ յուրաքանչյուր կարգի ու աստիճանի: Եվ ինչպես որ մարմնի բոլոր անդամները ծառայում են գլխին, որպեսզի որևէ վնաս չհասնի նրան, ինչպես երբ թշնամին սուրը պարզում է մեկի գլուխը հատելու, վերջինիս ձեռքն արագորեն առաջ է գալիս հարվածն իր վրա վերցնելու, կամ երբ մարդ քար է շարտում մեկի աչքին, բազուկը դեմքը ծածկում է, և թեպետ գլուխը, աչքերն ու ձեռքերը մի մարմնի անդամներ են, սակայն ձեռքն ինքն է որևիցե արկածի դեպքում առաջ գալիս պաշտպանելու գլուխն ու աչքերը, քանզի բնությունն իսկ ուսուցանում է, թե նվաստը պիտի ծառայի պատվականին, այդպես և Եկեղեցու առաջնորդները, ազգասեր իշխաններն ու գլխավորներն իբրև գլուխ ու աչքեր են, իսկ հա-

սարակությունը՝ իբրև ձեռքեր: Ուրեմն հարկ է, որ ժողովուրդն ազգի գլխավորներին պատվական համարի, հոգաչափ ճգնի, որպեսզի որևէ վնաս չհասնի նրանց, ճանաչի, թե նրանք հայրենասեր ու խորագետ են, և նրանց բարեկարգ հրահանգներին ամենայն հոժարությամբ հլու ու հպատակ լինի: Քանզի գլխավորների տկարանալու կամ պակասելու դեպքում հասարակությունն անմիջապես հուսալքվելով թուլանում է, նրա վայելչությունը, հարգն ու համբավը վերանում են, և օտար ազգերին ոտնակոխ է լինում:

Ե. Խոհականության մեջ մեղուները բոլոր կենդանիներից ավելի գերազանց գտնվեցին՝ իրենց հասարակության վրա մի նախագահ ու իշխան կարգելով, ամենայն ակնածությամբ նրան հնազանդվելու համար: Եթե գլխավոր չունենային նրան հնազանդվելու համար, իրենց միաբանությունը քանդվելով կպառակտվեր, և չէին կարողանա իրենց փեթակները մեղրով լցնել:

Այս օրինակով էլ պատշաճ է իմանալ և բազմաքանակ ժողովրդին, որը եթե առաջնորդ ու իշխան ունի և նրանց հնազանդվում է, լցվում ու հարստանում է հոգու ու մարմնի ամեն բարիքով, իսկ եթե յուրաքանչյուր անհատ ինքն իրեն է գլուխ ճանաչում, ժողովրդի մեջ անկարգություն ու շփոթություն են տիրում, և մարդիկ ամեն բարիքից զրկվում են՝ նմանվելով իշամեղուների, որոնք ո՛չ գլուխ ունեն, ո՛չ կարգ ու ո՛չ միաբանություն, ուստի և չեն կարողանում մեղր պատրաստել, անարգ են և ամենքի կողմից հալածված:

Ուրեմն՝ ժողովուրդը գլխավորներ պիտի ունենա և հոժարական սիրով հնազանդվի նրանց, որպեսզի բարեվայելուչ կարգուկանոնով ու շինությամբ ազգն օրեցօր պայծառանա, հոգևոր ու մարմնավոր բարեմասնությամբ բարգավաճի:

Զ. Խելք ունեցող մարդկանցից ոչ ոք չի կարող երկմտել կամ հակառակել այս հայտնի ճշմարտությանը, թե առանց գլխավորի հնարավոր է հաստատուն լինել որևէ բարեկարգության մեջ: Բայց գլխավորին հատուկ է հպատակներ ունենալը, իսկ հպատակներին էլ՝ միամիտ հնազանդություն իրենց գլխավորի հանդեպ: Ուր այս երկուսից մեկը պակասում է, այնտեղ բարեկարգություն չի գտնվում, և հետևաբար որևէ ազգօգուտ շահեկանություն բնավ չի երևում, որովհետև երբ վերանում է պատճառը, վերանում է և գործը: Իսկ պատճառը բոլոր գործերի, որոնցով ազգը պանծալի է լինում, բարեկարգ սահմանադրությունների հաստատումն է:

Ի՞նչ օգուտ, որ ազգի մեջ կամ քաղաքում խոհեմ ու ազգասեր իշխան կա, եթե հասարակությունը նրան չի հնազանդվում և նրա օգտակար խոսքերին չի անսույն: Եվ ի՞նչ օգուտ է ժողովրդի հնազանդ ու բարեմիտ լինելը, եթե նրա մեջ արժանավոր իշխան չկա, որ նրան առաջնորդի դեպի բարին ու օգտակարը, հասարակությանը պաշտպանելու համար դիմագրավի վտանգավոր դիպվածներին ու իրեն վտանգի ենթարկի:

Այսուհանդերձ, խոհեմ իշխանն առանց ժողովրդի կարող է, իբրև հասարակ մարդկանցից մեկը, անվրդով ապրել, միայն իր ու իրենների հոգսերը քաշել և իր առանձնության մեջ երջանիկ լինել, բայց բազմաքանակ ժողովուրդը չի կարող առանց իշխանի ու բարեկարգ սահմանադրության, յուրաքանչյուրն իր անձի օրենսդիրը լինելով, անխռով մնալ ու երջանիկ լինել:

Քանզի ժողովրդի ներկայացուցիչներից շատերն աջն ու ձախը չեն ճանաչում, օգտակարն ու վնասակարը տարբերել չեն կարողանում, ուստի շատ անգամ իրենց բարերարին բամբասում ու անիրավ դատումով վշտացնում են, որով մեղանչում են ոչ միայն մեծամեծ բարիքներ գործած իշխանի հանդեպ, այլև նրանց այդպիսի իշխան տված Աստծու. այս պատճառով էլ Աստծուց բազմիցս պատժվում են իրենց ապերախության համար:

Ը. Ազգի ողջ հասարակությունը խիստ վայելուչ կերպով նման է ծառի. գլխավորները գրավում են արմատի ու բնի տեղը, իսկ ժողովուրդը՝ ոստերի: Եվ ինչպես որ ծառերի ոստերն են ամեն քամուց շարժվում, և նրանց միջի անզորները, հաճախ չկարողանալով տոկալ քանու զորությանը, կոտրվում են ու բնից հեռու ընկնելով՝ չորանում, այդպես էլ ժողովրդի միջի տկարամիտներն են ամեն շշուռից հղմվելով վրդովվում և իրենց գլխավորների խորհուրդներն ու կամքն արհամարհելով՝ իրենց նրանցից հեռացնում, որով ոչ այլ ինչ են շահում, եթե ոչ իրենց վնասն ու ազգի կործանումը:

Թ. Ազգի փառքը նրա գլխավորներն են. որովհետև որքան գործերով ու խոսքերով մեծաշուք ու գորավոր են գլխավորները, այնքան գովելի է ազգի անունը, և երանելի է համարվում նրա յուրաքանչ-յուր անհատ, ինչպես որ հարավի դշխոն երանում էր Սողոմոնի ծառաներին, որ այնպիսի իմաստուն տիրոջ էին ծառայում *(տե՛ս Գ Թագ. Ժ 8)*:

Ուրեմն՝ այն ժողովուրդը, որ սիրում ու պատվում է իր գլխավորին, իր փառքը մեծացնում է:

Իսկ գլխավորների փառքն ազգի առանձին-առանձին անհատներն են: Բայց նրանց այս փառքը ոչ թե անհատների շատության մեջ է, այլ օրենքի բարեկարգության և միմյանց հետ միաբանության. որովհետև անխրատ ու խաժամուժ մեծաքանակ ամբոխներն առավել վնաս են գործում, քան օգուտ: Սակայն վայել է, որ բարի իշխանը, բիրտ ու աներես անձանց անշնորհք խոսքերից ու գործերից վշտանալով, ազգօգուտ գործերից հրաժարվի: Քանզի ազգի հասարակության մեջ գտնվում են ո՛չ սակավ ազնվաբարո, խոհեմ ու բարեսեր անձինք, որոնք քաջ ճանաչում են երախտավորներին ու իշխանների պատիվը: Միայն թե նրանք համազգիներին պիտի հորդորեն հնազանդ լինել երախտագետ ու պատվադիր ազգասեր բարերարներին և նրանց համար աղոթել, որ օրըստօրե շքեղափայլ պայծառանան բարօրության ու հաջողության, հասարակության հանդեպ սիրո ու խնամքի մեջ, ինչով առավել ազգը կփառավորվի նրանց մեջ, իսկ նրանք՝ ազգի մեջ: Քանզի Աստված, երբ տեսնում է գլխավորների ու ժողովրդի ջանքն ու սերը, ինքն է շտապում ամենքին լցնել հոգևոր ու մարմնավոր բարիքներով՝ ըստ այսմ. «Այնպես պիտի լինի, որ դեռ նրանք ծայն չտված՝ պիտի լսեմ նրանց, դեռ նրանք չխոսած՝ պիտի ասեմ, թե՛ ի՞նչ եք ուզում» *(Եսայի ԿԵ 24)*:

«Եղբայրներ, աղաչում ենք ձեզ,  
որ ճանաչեք & գնահատեք ձեր վաստակավորներին,  
Տիրոջ կողմից ձեր վրա նշանակված վերակացուներին, ինչպես նա & ձեզ խրատողներին.  
& առավելագույն սիրո արժանի համարեցե՛ք նրանց՝  
իրենց աշխատանքի համար» (Ա ԹԵՍ. Ե 12-13):

«Լսեցե՛ք ձեր առաջնորդներին & հանգանդվեցե՛ք նրանց, որովհետև & նրանք հսկում են ձեր  
հոգիների համար, քանի որ հաշիվ են տալու ձեր փոխարեն» (Եբր. ԺԳ 17):

«Ամեն մարդ, որ իշխանության տակ է,  
թող հպատակի նրան. քանզի չկա իշխանություն,  
որ Աստծուց չլինի» (Հռոմ. ԺԳ 1):

## Գ Լ ՈՒ Ն Ե

## Ա Ջ Գ Ա Ս Ե Ր

Ա. Ինչպես որ մարդու մարմինն է անդամներից՝ իբրև մասերից բաղկացած մի ամբողջություն, այդպես և ազգի հասարակությունն է մի ամբողջություն, որի մասերը կամ անդամներն ազգի բոլոր անհատներն են: Եվ ինչպես որ մարմնի անդամներից մեկի հիվանդության պատճառով վշտանալու դեպքում մյուս բոլոր անդամները ջանում են դարմանում տալ ու բժշկել նրան, որպեսզի մահաբեր հիվանդությունն ամբողջ մարմինը չապականի, որով իրենք ևս կապականվեն, այդպես և ազգի հասարակության բոլոր անհատները պարտավոր են օգնական ու դարմանիչ լինել ձախողակի պատահարներով վշտացած ընկերոջ տկարությանն ու ցավերին, որպեսզի ախտը հետզհետե չտարածվի հասա-

րակության մյուս բոլոր անդամների վրա. որովհետև ողջ ազգի տկարանալու և կործանվելու դեպքում անշուշտ կկործանվեն և իրենք:

Ուստի ովքեր կարող են, բայց չեն ջանում ցավակից ու օգնական լինել իրենց ազգակիցներին, արժանի են դատաստանի, որովհետև անհոգությամբ ամբողջ ազգի կործանման պատճառ են դառնում:

Ով իր հաջողության ժամանակ ձեռք չի մեկնում փորձության ենթարկվածներին, իր ձախողության ժամանակ չի գտնի իրեն ձեռք մեկնող մեկի:

Բ. Աստվածային ամենիմաստ տեսչությունը, որ քաղցրությամբ խնամում է իր արարածներին, բոլոր մարդկանց միօրինակ չստեղծեց, այլ ոմանց՝ հարուստ, ոմանց էլ՝ աղքատ, որպեսզի աղքատների ողորմելի վիճակը հարուստների գուրջ շարժի, հարուստներն իրենց ունեցվածքից հոգան աղքատների կարիքները, և փոխնիփոխ միմյանց բարեգործության պատճառ լինելով՝ ամենքն Աստծուց վարձ ընդունեն: Եթե ամենքն աղքատ լինեին, ո՞վ կկարողանար ողորմություն տալ, և եթե ամենքը հարուստ լինեին, ո՞վ կխոնարհվեր ողորմություն առնելու:

Ուրեմն՝ ովքեր կարող են ողորմել, թող գոհանան Տիրոջից, որ նրանց ունեցվածք տվեց կարոտյալներին օգնելու, որպեսզի իրենց բարերարության դիմաց անեզրական վարձ ընդունեն: Նույնպես և աղքատներն իրենց կարիքները հարուստների տվածով հոգալիս թող գոհությամբ երախտահատույց լինեն Տիրոջը և պարգևողներին, որպեսզի արժանի դառնան Աստծուց վարձ ստանալու:

Նույնիսկ եթե բազմությունը երախտագետ չլինի, հարուստները պիտի չդադարեն բարերարելուց, եթե կամենում են Աստծուն նմանվել: Որովհետև ահա շատերը, Աստծուց բազում բարիքներ ստանալով, չեն ճանաչում նրա բարերարությունը, սակայն նա տակավին բարիք է գործում նրանց:

Գ. Ազգասեր մարդուն բավական չէ միայն ժողովրդի օգուտը սիրել ու նրա համար աշխատել, նաև պիտի ատի ու հեռու հալածի նրան, ով ընդդիմանում է իր բարվոք դիտողությանն ու ջանում վնաս հասցնել հայրենիքին:

Դ. Հայրենասերին վայել չէ իսպառ համակվել տրտմությամբ ու վիատությամբ՝ տեսնելով, որ բազում մարդիկ միմյանց հանդեպ ատելությամբ են լցված, ամերես բարեկամ են ձևանում, իսկ իրենց սրտում չարիք խորհում. կեղծում են, իբր միմյանց օգուտն են կամենում, այնինչ գործով չեն դադարում վնասելուց. որոգայթներ են լարում իրենց երախտավորների ոտքերին և դավաճանության հայտնի դառնալու ժամանակ մի կողմ քաշվում ու անմեղ ձևանում. խրատվում են ու չեն զգաստանում, հանդիմանվում ու չեն պատկառում: Բայց հայրենասերը պետք է քաջալերվի ու մխիթարվի նրանով, որ կան և սակավ մարդիկ, որոնք ճշմարտապես սիրում են իրենց ընկերներին, ջանում նրանց բարիք գործել, ընդհանուրի օգտի համար իրենց վտանգի են մատնում և սուտ բարեկամների թշնամությունից սրտաբեկ լինելով՝ հետ չեն քաշվում:

Ե. Ով բարերարելու կարողություն ունի, բայց կարիքավոր մեկը չի գտնվում, որ իրենից օգնություն խնդրի, ինքն անարդյուն է մնում, իսկ եթե գտնվում են կարոտյալներ, բայց ինքը նրանց օգնել չի կամենում, պարտապան է մնում: Որովհետև ի՞նչ օգուտ է հարուստ լինել և աղքատներին ձեռք չմեկնել, կամ գիտնական՝ և տգետներին չուսուցանել, կամ խորագետ՝ և փորձանավորներին խորհուրդ չտալ, կամ ուժեղ՝ և տկարներին տկարությունից չազատել: Որովհետև նրա բոլոր բարիքները, որ ընդարձակ աշխարհում որևէ մեկին օգուտ չտվեցին, բնավ օգուտ չեն տա նրան անծուկ գերեզմանում, ավելին՝ պատիժ ու դատապարտություն կդառնան նրա անձին, որովհետև անաչառադատ ատյանում Տիրոջից լսելու է. «Չար ու վատ ծառա, ինչո՞ւ Իմ դրամը լուսայափոխներին չտվիր, որպեսզի Ես գալով տոկոսներով միասին պահանջեի այն» (*տես Մատթ. ԻԵ 26, Դուկ. ԺԹ 23*):

Զ. Ով որևէ մասնավոր անձի բարերարում է, որպես հատուցում նրանից շնորհակալություն է ստանում, իսկ ընդհանուրի բարերարին ոչ ոք չի համարում հատուկ իր երախտավորը, որպեսզի զոնե շնորհակալությամբ իր պարտքը հատուցի նրան: Ուստի ընդհանուրի բարերարն իր աշխատանքի հատուցումը ստանում է Տիրոջից, ով անթերի հատուցում է յուրաքանչյուրին ըստ գործերի:

Է. Ով կարոտյալին կարող է օգնել խոսքով ու գործով, բայց միայն բերանի խոսքով է օգնություն



մատուցում և ոչ թե գործով, գործի վարձին պարտապան է դառնում, որովհետև կարող էր, բայց չկամեցավ կատարել: Կորցնում է վարձը նաև իր լեզվի, որով աշխատեց նրա համար: Իսկ ով գործով օգնել չի կարող և միայն խոսքով է ջանում նպաստ մատուցել՝ միջնորդությամբ, խրատով կամ մխիթարությամբ, հոժարության համար գործի վարձը ստանում է, որովհետև կամենում էր, բայց ձեռնհաս չէր կատարելու:

Մարդիկ դժոխքում պատժվելու են ոչ միայն գործած չարիքների համար, այլև այն բարիքների, որոնք պարտավոր էին անել, բայց զանց առան:

Ը. Կանացի ու անարի սրտին է հատուկ աշխատանքի ծանրությունից երկնչելն ու ազգօգուտ գործերից ետ կանգնելը, երբ դժվարությունների հանձնառությամբ կարելի է դրանք կատարել: Այսպիսին ոչ միայն անվարձ է մնում, այլև պարտապան, որովհետև անելուն ձեռնհաս էր, բայց չարեց:

Իշխան լինելը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակության բեռը կրելը:

Թ. Ամբողջ աշխարհով տարածված մարդկային ցեղերն իրենց սերնդի սկիզբը մեկից ունեն և միմյանց եղբայրներ են, ուստի պարտավոր են սիրել միմյանց, և ընկերները պիտի օգնեն միմյանց: Իսկ ով վնասում է ընկերոջը, վնասում է իրեն, որովհետև նույն արյունից են շաղախված:

ժ. Ուրիշներին ծառայեցնող բռնակալը նման է գայրացած գետի, որ փոխանակ հեզիկ ընթացքով երկիրը ոռոգելու, ուժգին հոսանքով իր հունից դուրս վայթելով, ավերում է այն հանդերն ու ծառատանները, որոնց միջով անցնում է:

ժԱ. Իշխանների բռնությունները չեն կարող քաղաքում զարգացնել որևէ օգտակար արհեստ. այդ կարող են անել արհեստավորների վարձատրությունն ու ժողովրդի օգուտը. որովհետև մարդիկ իրենց օգտի համար են ջանում արհեստներ ստեղծել կամ կատարելագործել:

ժԲ. Բարերար ու իմաստուն իշխանի կողմից առաջնորդվող մարդիկ երջանիկ ու ամեն բարիքով լի են ապրում, ուստի իշխանին սիրում են իրենց կյանքից առավել և կամենում ամեն բարիք նրան նվիրել, քանի որ ամեն ինչ նրա շնորհիվ ունեն: Բայց իշխաններն էլ պարտավոր են սիրել իրենց հպատակներին իբրև որդիների, որպեսզի իրենք ևս նրանց կողմից սիրվեն իբրև հայր:

ժԳ. Իր ժողովրդի բարու ու հանգստյան համար աշխատող իշխանին ժողովուրդը նույնպես օգնում է նեղության ժամանակ. նրա համար չի խնայում իր ունեցվածքը, որ նրա ջանքերով է ձեռք բերել: Եվ այսպես հասարակության ունեցվածքն իշխանինն է լինում առանց զըրկողության ու հափշտակության. նա հասարակության անդամների համար իբրև բարեգութ հայր է, իսկ նրանք՝ իբրև հավատարիմ որդիներ:

ժԴ. Բարի ու ազգասեր իշխանը չի հոգում իր կյանքի համար պահապաններ կարգելու մասին, որովհետև հասարակության սերը պահպանում է նրա կյանքը. հասարակության անդամները գիտեն, որ նրան կորցնելով՝ կկորցնեն իրենց երջանկությունը, ուստի իրենց նվիրում են նրա պահպանությանը՝ նրա շնորհիվ ձեռք բերած իրենց երջանկությունը պահպանելու համար:

ժԵ. Ազգի կամ քաղաքի օգտի համար աշխատանքը կարող է լինել երկու տեսակ՝ կամ հայրենիքի սիրո համար անձնվիրությամբ, առանց վարձատրության ակնկալության, կամ էլ աշխատանքի վաճառմամբ, վարձ ստանալու համար: Արդ, անձի անվարձահատույց նվիրումը հատուկ է ազատաբարոյին, իսկ վարձի ակնկալությունը՝ ծառային, որովհետև այս երկու ծայրերն անմեջ են:

Բայց արդարությունը պահանջում է, որ հասարակությունն անվարձահատույց աշխատող բարերարի երախտիքի չափն իմանա և փոխարենը շնորհակալություն կամ վարձ հատուցի: Միայն թե երախտավորը որևէ ակնկալություն չունենա, որպեսզի ազնվական ազատությունն անարգ ծառայություն չդառնա. որովհետև ծառաներն են աշխատանքի դիմաց վարձ առնում: Անհնար է, որ ընկերոջ օգտի համար բարիք գործողը կորուստ ունենա:

ժԶ. Ընկերոջ օգտի համար ի սեր Աստծու անվարձահատույց աշխատելն Աստծուն ծառայել է և ընկերոջը բարերարել: Իսկ վարձի ակնկալությամբ ընկերոջ համար աշխատելը մարդկանց ծառայել է և սեփական անձին բարերարել: Ով պատվի ու հարստության ակնկալությամբ է աշխատում հասարակության օգտին, պատվի ու հարստության ծառա է, իսկ ով աշխատում է ազատորեն՝ առաքինության

հանդեպ սիրուց միայն, պատվի ու հարստության վրա իշխող է:

ԺԷ. Փառքը բարերարության մեջ է և ոչ թե հարստության: Ուրեմն ով կամենում է փառք ստանալ, թող չդադարի ուրիշներին բարիք գործելուց: Ոչ ոք չի կարող ճշմարիտ մեծարանք ու փառք ունենալ, եթե բարերարություն չունի: Հասարակության օգտին պետք է աշխատել սոսկ առաքինության հանդեպ սիրուց և ոչ թե փառքի, գովության ու շահի համար: Որովհետև եթե մեկն իբրև աշխատանքի վարձ ընդունի փառք, գովություն կամ ինչք, կկորցնի առաքինության հարգը և ասես ոսկին կփոխանակի հողով:

Հնում մի օրենսդիր հարուստ իր ազգի համար բազում օգտակար օրենքներ սահմանեց, ժողովրդին երդմնեցրեց իր բացակայության ընթացքում այդ օրենքներից ոչ մեկը չխախտել և ապա իր հայրենիքից գաղտնի հեռանալով օտար երկիր՝ այնտեղ իբրև մի աղքատ մարդ մնաց մինչև մահ: Այս արեց ազգի հանդեպ սիրուց, որպեսզի երդման պարտավորության տակ օրենքները հաստատուն ու մշտնջենավոր մնան:

Եգիպտացի Սեքրուպը, որ դարձավ աթենացիների իմաստուն թագավոր, այնքան էր կամենում հասարակության բարին, որ մինչև իսկ չուզեց իր որդուն թագավորության հաջորդ կարգել՝ մտածելով, որ գուցե իր որդուց առավել արժանավոր այլ մեկը գտնվի:

ԺԸ. Բնավ զարմանալի չէ, եթե բարի ու հասարակության հանդեպ երախտավոր իշխանը վարկաբեկվի նրանց կողմից, ում բարիք է գործել: Որովհետև այս իսկ է այժմ աշխարհի օրենքը, երախտավորն ամենքից պիտի ատվի: Ուստի և բարերար իշխանը, այս իմանալով, բնավ չի նեղվում ստացած դաժան հատուցումից, այլ մխիթարվում է իր դյուցազնական առաքինություններով, որոնք ի վիճակի են նրա սիրտը սփոփելու, մանավանդ որ համոզված է, թե վայել է, որ բարի իշխանը բազում բարիքներ գործի հասարակության համար՝ գիտենալով հանդերձ, որ ապաշնորհներից իբրև հատուցում բազում չարիքներ պիտի ստանա:

ԺԹ. Ընկերային կենցաղավարությունը, ուր ընկերության անդամները միմյանց հետ հաղորդակցությամբ բարիք են գործում հասարակությանը, նման է անվավոր ժամացույցի. մեկը հողն է մշակում, մյուսը՝ խաչներն արածեցնում, մեկը ուտայնանկությամբ է զբաղվում, մյուսը՝ երկաթ մշակում, մեկն օգտակար օրենքներով հասարակությանն է կառավարում, մյուսը՝ զենքի ուժով հայրենիքը պաշտպանում, մնացած բոլորը նույնպես Աստծուց ստացած պես-պես շնորհներով, աշխատանքի արդյունքներով ծառայում են հասարակությանը:

Եվ օրինակ՝ եթե որևէ անիվ ժամացույցից պակասում կամ խանգարվում է, այնուհետև ժամացույցը չի կարողանում պարտուպատշաճ գործողությունն անվրեպ կատարել, այլ մերթ կաղիկաղ է ընթանում, մերթ էլ արգելակվելով կանգնում, նույն ձևով էլ, եթե հասարակության կարևոր անդամներից մեկը պակասի կամ խանգարվի, ողջ հասարակությունը վտանգի մեջ կհայտնվի կամ իսպառ կկործանվի, օրինակ՝ եթե պակասի մշակը, ուտայնանկը կամ դարբինը, կամ էլ եթե խանգարվի զինվորական բարեկարգությունը կամ օրենքի արդարությունը, օրինակ՝ եթե զինվորը քաջասիրտ ու հայրենասեր լինելու փոխարեն վատասիրտ ու հայրենիքի դավաճան լինի, և իշխանը կամ դատավորն օգտակար ու իմաստուն օրենքների փոխարեն անիրավ ու հասարակությանը վնասակար օրենքներ սահմանի, մանավանդ եթե իր կամքն օրենք դարձնի:

Ուրեմն՝ ազգասերը պիտի փութա այդ անդամների պակասը լրացնել ու խանգարվածին ուղղել: Իսկ եթե վերջինս չկամենա ուղղվել, պատեհ է այդպիսինին հասարակության մարմնից կտրել-հեռացնել, որպեսզի մյուս անդամներին էլ չփչացնի: Ահա սրանում են հաստատված ընկերային կենցաղավարության երջանկությունն ու թշվառությունը:

Ի. Ազգի երջանկության համար չորս բան է խիստ անհրաժեշտ. առաջին՝ մեծ ու առաջնային համարել օրենքի պահպանությունը, երկրորդ՝ անհրաժեշտ բաներն ունենալու համար յուրաքանչյուրը պիտի աշխատի, երրորդ՝ նեղության ժամանակ ընկերոջը թիկունք կանգնել, չորրորդ՝ հասարակության օգտի ու բարու համար ջանք թափել:

Երջանիկ է այն ազգը, որի առաջնորդները բարեկարգ են, իշխանները՝ հայրենասեր, քահանա-

ներն՝ իմաստուն, դատավորներն՝ արդար, ուսուցիչներն՝ առաքինի, ծերերը՝ խորհրդատու, երիտասարդները՝ ջանասեր:

ԻԱ. Աստված անում է ոչ թե այնքան, որքան կարող է, այլ որքան կամենում է. իսկ մարդն անում է ոչ թե այնքան, որքան կամենում է, այլ որքան կարող է, Աստված էլ մարդուց այնքան բարիք է պահանջում, որքան մարդը կարող է գործել: Բայց հայրենասեր մարդը պիտի նախընտրի ազգին օգտակար գործերը, քան փառավորները, երբ երկուսը միաժամանակ գործելու հնարավորություն չկա:

ԻԲ. Ով իր սրտում բնակված ունի Աստծու հանդեպ սերը, չի դադարում իր ընկերոջը սիրելուց: Իսկ ընկերոջը սիրելը նրան բարիք գործելն է, որովհետև սերը հիմքն ու արմատն է, իսկ բարերարությունը՝ ոստն ու բողբոջը, և եթե ոստը դալար է, նշանակում է՝ նրա արմատը կենսունակ է: Իսկ ով ընկերոջ հանդեպ սերը լոկ խոսքով է ցուցադրում և որևէ օգտակար գործ նրա համար չի անում, Աստծու հանդեպ սիրո մեջ կատարյալ չէ:

ԻԳ. Ով գուրբն ու մարդասիրությունը կորցնում է, այլևս մարդ չէ, այլ այլանդակ գազան: Ուստի երբ վտանգի մեջ է ընկնում, նրան կարելից ու օգնական մեկը չի գտնվում, այլ ամենքը հեռու են մնում նրանից՝ իբրև մի ահավոր գազանից: Որովհետև ով ուրիշների հանդեպ անգուրբ է, Աստծու արդարությունը թույլ չի տալիս, որ նա որևէ մեկից գթություն գտնի: Ուստի թող ոչ ոքի չմեղադրի իր նեղության մեջ, որովհետև իր անգուրբ սրտին արժանի հատուցում է ստանում:

ԻԴ. Ով օգնել կարող է, բայց հանձն չի առնում, անգուրբ է, իսկ ով կարող է ու հանձն է առնում, բայց չի օգնում, անգուրբ ու անիրավ է, որովհետև կարոտյալին ավելի է սրտաբեկում:

Բարեգութ սրտի նշան է, նեղության մեջ լինելով հանդերձ, ըստ ձեռնհասության նեղյալին օգնել ջանալը:

ԻԵ. Ամենքին ամեն ժամանակ օգնելը գործն է Աստծու, բոլոր խնդիրքները կատարելը՝ ծառայի, որոշ խնդիրքներ կատարելն ու որոշներ գանց առնելը՝ ազատի, խնդրածը չստանալու համար տրտնջալը՝ անիրավի, խնդրածը ստանալով հանդերձ ապերախտ գտնվելը՝ անհավատի, խնդրածը չստանալու համար չտրտնելը՝ բարեբարո անձի:

ԻԶ. Քաջ ու երկայնամիտ մարդը չի հուսաբեկվում, երբ իր օգտի համար արած իր խնդիրքի կատարումը հապաղում է, այլ քաջությամբ համբերում է, մինչև ստանա:

ԻԿ. Իսկ ով անարի ու փոքրոգի է, խնդիրքի կատարման հապաղելու պարագային վիատվում է ու հետ կանգնում: Եվ նա, ով մոռանում է մեկից ստացած բարերարությունը և զանգատվում խնդրածը չստանալու համար, անիրավ է ու ապերախտ:

ԻԸ. Հետին անմտություն ու հակաբնական բան է սեփական անձը վատաբանելը: Եվ զարմանալի է, թե ինչպես են ոմանք վատաբանում իրենց ազգը՝ նրանից չարախոսելով, կարծես միայն իրենք են ընտիր ու պատվական, իսկ ամբողջ ազգը՝ անարգ ու վատ: Կրքից կուրացածները չեն տեսնում, թե ամեն մաս ամբողջին է պատկանում ու նրանում պարունակվում, իսկ եթե ամբողջը վատ ու արհամարհելի է, քաջ հայտնի է, որ նրա որևէ մաս և՛ս նրա հետ անարգ ու վատ է:

Արդ, եթե ողջ ազգի հասարակությունն արհամարհելի է ու վատ, ապա իրենք իսկ չարախոսները, որ ազգի ողջ հասարակության անդամ ու մաս են, արհամարհելի են ու վատ: Ուրեմն չարաչար կուրություն է սեփական ազգը վատաբանելը:

ԻԸ. Մոլի մարդը, երբ իր ազգի կողմից հանդիմանվում ու անարգվում է, գնում միանում է այլ ազգի՝ իրականացնելու իր ցանկությունները. որովհետև այլևս հույս չունի իր ազգի ներսում իր չար կամքը կատարելու և կորցրած պատիվը վերագտնելու:

Ապա սկսում է չարախոսել իր ազգից՝ վերջինիս վրա առանց խղճմտանքի կուտակելով բյուր բանբասանք, իրեն անմեղ և օտարների աչքին հաճելի դարձնելու համար:

Ավա՛ղ մտքի կուրությանն ու մեծ անզգամությանը: Կամենալով հարզանք գտնել՝ առավել է անարգվում, որովհետև նախատելով իր ազգին՝ իրեն է նախատում. քանզի եթե արմատը լավը չէ, ապա ոստը՝ նույնպես: Եվ այսպես չարիքի վրա չարիք է ավելացնում, որովհետև առաջ միայն իր ազգի ներսում էր չար, իսկ հիմա, եղածին ավելացնելով ազգատեցության անարգ ու տմարդի գործը, դառնում է

ամենաչար ու հայրենիքի դավաճան: Ինչով կամենում էր իր չարությունը վարագուրել, դրանով այն առավել հայտնի է դարձնում, որովհետև լսողները, բազմիցս անգույշ լինելով, հավաստի են համարում նրա զրպարտությունները, բայց սեփական ազգի հանդեպ նրա ապերախտության պատճառով արհամարհում ու մերժում են նրան՝ մտածելով, որ եթե իրենների հանդեպ անհավատարիմ եղավ, օտարների հանդեպ ինչպե՞ս հավատարիմ կլինի:

Ազգատյացը, տեսնելով, որ չարդարացավ իր սին հույսը, որով ակնկալում էր իր ցանկությունները կատարել և միաժամանակ իբրև ճշմարտասեր պատիվ գտնել, այնուհետև դեպի հայրենիք դառնալ չի փորձում, որովհետև չի կամենում իր սխալները ճանաչել: Ուստի իսպառ հուսահատված՝ շատացնում է անհնարին հերյուրանքներ ու ստեր՝ մե՛րթ մի ազգի վրա, մե՛րթ մյուսի, որպեսզի գոնե նրանցից մեկին բարեհաճ երևա, սակայն միշտ անարգ ու վատահամբավ է մնում:

Արդ, այսպիսիների չարության պատճառով շատ ազգերի մատյաններ լի են միմյանց մասին զրպարտություններով, որովհետև հայրենատյացը իր հանցանքները ծածկելու համար առանց խղճմտանքի ստում է, իսկ լսողն՝ առանց քննության հավատում ու դատում, ինչից միշտ անհնարին աւտելություն է ծնվել ու ծնվում ազգերի միջև:

Ի՞նչ. Մարդկանցից յուրաքանչյուրի վրա այնքան հարկ կա սիրելու իր հայրենիքն ու ազգը, որ հարկադրաբար վրա հասած բանական պատճառների ստիպմունքով նա պարտավոր է ոչ միայն իր արտաքին բարիքները՝ ունեցվածքն ու ստացվածքը, այլև մարմնի կյանքը նվիրել ի սեր և հոգուտ ընդհանուրի բարու, որովհետև այս է ազգասիրության իրավունքի կշիռը: Որովհետև եթե մեկի մարմնի վտանգմամբ կամ մահվամբ շատերը կարող են հոգու կամ կյանքի կորստի վտանգից փրկվել, թող վնասվի այդ մեկը, որ փրկվեն շատերը:

Եվ այդ դեպքում նա ոչ թե մեռած է համարվում, այլ անմահ հիշատակով հավերժացած: Որովհետև միշտ կենդանի է մնում իր ազգի կամ հայրենիքի հետ, որի փրկության պատճառը եղավ: Իսկ ավելի ճիշտ՝ ազգն է ապրում նրա մեջ, ով ազգի համար իրեն ու իր ունեցվածքը զոհաբերեց, ըստ այնմ՝ քաղցր է հանուն հայրենիքի մեռնել:

Բայց միշտ պետք է զգուշանալ, որ սեփական հոգու կորստյան վտանգ չլինի, որովհետև ի՞նչ օգուտ ամբողջ աշխարհը շահելուց ու սեփական անձը, այսինքն՝ հոգին, կորցնելուց (*տե՛ս Մատթ. ժԶ 26*): Քանզի ամեն մարդ իր հոգու փրկությունը պիտի նախադասի իր ազգից ու հայրենիքից: Ուր հոգին վնասվում է, այնտեղ որևէ օգտակար բան չի գործվում. որովհետև արդարությանն ու աստվածային վճռին դեմ է ուրիշների պատճառով սեփական հոգին կորստյան մատնելը:

Ղարծյալ՝ եթե մեկի ունեցվածքի կորստյամբ կամ մարմնի մահվամբ փրկվելու է մյուսի հոգին, առաջինին լավ է, որ իր ինչքը կորսվի և ինքը մարմնով մեռնի, որպեսզի մյուսի հոգին ապրի: Որովհետև մեկի հոգու փրկությունն առավել է, քան մյուսի բոլոր գանձերն ու մարմնական կյանքը. մի հոգու փրկության հետ աշխարհի ոչ մի գանձ և ոչ մի մարմնական կյանք չի կարող փոխանակվել:

Ղարծյալ՝ եթե երկու հոգուց մեկին հարկը ստիպի մեռնել միայն մարմնի մահվամբ, յուրաքանչյուրն էլ պիտի ջանա իր կյանքը պահպանել, որովհետև սեփական անձի հանդեպ սերն առաջնային է ընկերոջ հանդեպ սիրո համեմատ: Այս օրինակով նաև պետք է վարվել ունեցվածքի կորստյան դեպքում. ամենքը պիտի պահպանեն նախ իրենցը, հետո նոր՝ ընկերոջինը:

Եվ դարձյալ՝ եթե պատահի, որ մեկը կամ հոգին կորցնի, կամ ունեցվածքն ու կյանքը, պիտի հոգին պահի, իսկ ունեցվածքն ու մարմնի կյանքը կորցնի. որովհետև ոչ թե հոգին է ունեցվածքի ու մարմնի համար սահմանված Աստծուց, այլ ունեցվածքն ու մարմինը՝ հոգու համար:

Լ. Հայտնի է, որ մարդկային մեր ցեղը մեկից սկզբնավորվեց, և ապա մարդիկ, տեղով, լեզվով, կրոնով և քաղաքական կառավարմամբ միմյանցից զանազանվելով, բաժան-բաժան եղան: Եվ քանի որ մարդու բնության մեջ արմատացած է ընկերոջը գերազանցելու ձգտումը, ազգերն օրըստօրե ջանացին միմյանցից փոխ առնել ապրելուն անհրաժեշտ բաների մեջ օգտակարն ու ամենադյուրինը, ինչով այժմ պայծառացած՝ ազգ ազգի վրա պանծում է:

Սակայն ազգային գործերն այնժամ են դեպի լավն ընթանում, երբ ազգի անհատ անձինք, մի կամ-

քով գոտեպնդված, ջանում են ստեղծել ընդհանուրի բարին և ինչ մի անգամ ձեռք են բերում, հատկապես այն հաստատուն են պահում, որով ողջ ազգը, մարդկությանը պիտանի ամեն ինչից անպակաս, աշխարհում բախտավոր կյանք է վայելում: Բայց հնարավոր չէ, որ այս ազգօգուտ իրողությունը մեկի կամ սակավ մարդկանց կողմից իրականացվի: Որովհետև եթե մեկով կամ մի քանիսով սահմանափակվեն, նրանց պակասելու դեպքում կջքանար նաև այդ օգտաբեր գործը: Ուրեմն պարզ է, որ ամենքի վրա տարածվելով է պահպանվում: Եվ ամենքի մեջ ո՞վ կարող է տիրաբար պարծենալ ինքն իրենով, թե ինքը մի ազգի բարօրության պատճառն է, մինչ նույն այդ մեկը, ով էլ որ լինի, շատերի օգնության կարիքն ունի: Որովհետև Աստուծոց բացի չկա մեկը, որ ինքնուրույն ընդունակ լինի անելու այն, ինչ կամենում է:

Ուրեմն՝ որևէ օգտակար բան կատարելը պատշաճում է մարդկանց միությանը և լինում միայն ազգասիրությամբ, որպեսզի միմյանց օգնությամբ կարողանան ունենալ այն, ինչ չունենին, և անկորուստ պահեն մի անգամ ձեռք բերածը:

Երբ տեսնում ես, թե կա մի մեծ ազգ, իմացիր, որ կան նրանում շատեր, ովքեր ազգասեր բարքով, մեղուների նման միաբանված, նախանձախնդիր են իրենց հայրենի ազգի պահպանությանը, այլապես այդ ամբողջ ազգը կանհետանար:

Որովհետև ազգը պահպանվում է սեփական օրենքով, կառավարմամբ, լեզվով ու սովորույթներով: Սրանց եղծվելու և կորչելու դեպքում կորչում է և ազգը, որովհետև այսպիսի տարբերությունների վերանալու դեպքում բոլոր մարդիկ, ինչպես որ նույնն են բնությամբ, նույնը կլինեին և ազգությամբ, և աշխարհը կդառնար մի ընդհանուր բաղնիք, ուր անհանդերձ մարդիկ չեն տարբերվում միմյանցից, թե ո՞ր ազգից են:

Ուստի կրոնը, լեզուն, սովորույթը և այլն ազգի զարդն ու հանդերձն են, որոնք գեղեցկանում են ազգասեր անձանց ամենօրյա աշխատանքով: Ոմանք կրոնն են պահպանում, ոմանք՝ լեզուն կատարելագործում, մի մասը գիտություններն է զարգացնում, մյուսները՝ օգտակար արհեստները, իսկ այլ պիտանի բաներն օտար երկրից են ներմուծում: Եվ սրանք առանց միմյանց չեն լինում, որովհետև մեկի պակասելու դեպքում պակասում կամ թերանում են նաև մյուսները՝ միմյանցից կախում ունենալու պատճառով: Ուրեմն բոլորն էլ պիտանի են ազգի առողջության ու կատարելության համար:

Բայց նրանցից ոչ ոք իր մասին չի կարող ասել, թե միայն ինքն է ազգը պահող-պահպանողը, և ոչ ոք պիտի չուրանա, թե այն պահող-պահպանողը միայն ինքն է: Ուստի ասածիցս պարզ է, որ որևէ ազգի յուրաքանչյուր անհատ այսպես պիտի ասի ու հավատա, որպես թե ողջ ազգը միայն իր կարիքն ունի, այլև թե եղբայրությանն օգնել է հարկավոր: Որովհետև ոչ թե ինքը, այլ միաբան եղբայրությունն է պահում ազգը, ինչով ազգի հետ ինքն էլ է պահվում: Ուստի ով օգնում է եղբայրությանը, իրեն է օգնում:

Ա. Ազգասիրության հատկություններից է առևտրով կամ արդյունավոր գործով ազգակիցներին օգուտ բերել ջանալը: Որովհետև համարվում է, թե մեկի օգուտը մյուսինն է. եթե այսօր նա է քեզանից օգտվում, վաղը գուցե դու՛ր ուրիշներից կամ նրանից օգտվես: Արդ, ազգակիցների միջև այնպիսի սերտ միասնություն պիտի լինի, որպես թե ազգի բոլոր անհատները մի անձ ու մի հոգի են: Բայց, ավա՜ղ, այժմ կարծես իսպառ անհետացել է ազգասիրության ոգին մեր ազգի մեջ. որովհետև կամենում են ավելի շատ օտարների, քան համազգիների հետ առևտուր անել և առավել սիրալիք են օտարների, քան յուրայինների հանդեպ:

ԼԲ. Ազգի համար փոքր պարծանք չէ սեփական լեզու, գիր, օրենք ու կրոն ունենալը, և փոքր ազգասիրություն չէ դրանք հաստատուն պահելն ու օրըստօրե շքեղացնելը, որով ոչ միայն բովանդակ ազգն է փառավոր լինում, այլև նրա յուրաքանչյուր անհատ, որովհետև ազգի փառքը նրա անհատներով է երևում: Ազգասեր այս ջանքը տեսնվում է բոլոր քաղաքակիրթ ազգերի մեջ:

Եվ ինչո՞ւ մեր ազգակիցներից ոմանք առավել ջանասեր են օտար ազգերի լեզուն ու գրականությունը սովորելու մեջ, քան հայերինը: Լեզվին տեղյակ շատերն էլ միմյանց հետ այլ լեզվով են խոսում ոչ միայն փողոցներում ու շուկաներում, այլև իրենց տներում. գուցե և դա պարծանք են համարում:

Այս անփույթ ախտով շատերը յոթանասուն, ութսուն ու իննսուն թվականների հայերեն անունները մոռացել են. տասը թվականից մինչև վաթսունը հայերեն են հաշվում, իսկ դրանից հետո թուրքերեն անունները գործածում, առանց մտածելու, որ ամբողջ ազգն այլ ազգերի առաջ նախատելի է դառնում իբրև աղքատալեզու:

Ազգին մեծ անարգանք է սեփական լեզու ու գրականություն չունենալը, որովհետև չի համարվում, թե առանձին ազգ է: Ուստի ավելի մեծ նախատինք է այն ազգին, որ ունի, բայց չգիտի, և էլ ավելի մեծ արհամարհանք կա այն ազգի նկատմամբ, որ գիտի, բայց չի գործածում:

Լեզուներ իմանալը, այո՛, գովելի է ու օգտակար, որովհետև մեկը որքան լեզու գիտի, այնքան մարդ է համարվում: Բայց նախ պետք է սեփական իմանալ և ապա ուրիշներինը: Ուստի ով չգիտի իր ազգի լեզուն, գիրն ու գրականությունը, դեմ է դուրս գալիս բնությանը, որը նախ արմատն է առաջ բերում և հետո՝ ոստերը: Ուրեմն ամենքը նախ մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը պիտի լավ սովորեն և ապա այլ ազգերի լեզուները:

Այս պատճառով էլ առաջնորդներն ու գլխավորները, որոնց են հանձնված ազգի խնամքն ու տեսչությունը, պարտավոր են ամենայն հոգատարությամբ ջանալ կրթել ազգի մանուկներին մայրենի լեզվով, գիր ու գրականությամբ, մանավանդ այն քաղաքներում, ուր հայերեն բնավ չգիտեն:

Եթե առաջին հոգաբարձուները հոգ տանեին սովորեցնելու նրանց մեր մայրենի լեզուն, նրանք արդեն հայերենախոս կլինեին: Եվ եթե այժմյան տեսուչներն ու խնամածուները տակավին անփույթ գտնվեն, նրանց հաջորդների օրոք ամենքը այլալեզու կլինեն, որովհետև օրըստօրե բազում վայրերում մեր ազգի մեջ պակասում է հայոց լեզվի գործածությունը:

Շատերն էլ, անտեղյակ լինելով հայոց լեզվի պատվականությանն ու հնությանը, ոչինչ են համարում այն: Բայց մեր լեզուն կատարյալ է և շատ այլ ազգերի, գուցե և բոլորի լեզուներից էլ հին:

Հավաստի է թվում, ինչը նաև կարելի է բազում փաստերով ցույց տալ, թե սա է այն սկզբնական լեզուն, որով խոսում էին Ադամը, նրա որդիներն ու սերունդները մինչև Բաբելոնյան աշտարակաշինությունը: Որովհետև Նոյ նահապետն ու նրա ընտանիքը խոսում էին Ադամի լեզվով, քանի որ մինչև ջրհեղեղը երկրի վրա ուրիշ լեզու չկար: Եվ երբ, ի պատիժ աշտարակաշինության, լեզուները խառնակվեցին, Նոյը կենդանի էր Հայաստանում: Սկզբնական լեզուն նրա տանն անխառն մնաց, և Նախիջևանի ու Այրարատի բնակիչներն այդ լեզվով կրթվեցին: Իսկ երբ Հայկը Բաբելոնի կողմերից վերադարձավ Արարատյան երկիրը, հույժ հավանական է, որ կիրառեց նույն լեզուն, որով խոսում էին տեղի բնակիչները, մանավանդ որ այդ լեզուն Հայկի հենց մայրենի լեզուն էր, որով խոսում էր նախքան լեզուների խառնակվելը: Բայց, ավա՛ղ, կան ոմանք, որ այդ լեզվի հարզը չճանաչելով՝ իզուր այն արհամարհում են, որով անպատիվ են դարձնում ազգը, նրա հետ և իրենց, որ ազգի մասն են:

«Եղբորից օգնություն ստածաց եղբայրը նման է  
ամուր քաղաքի. նա հզոր ու բարձր է  
ինչպես հաստատուն թագավորություն» (Առակ. ԺԸ 19):

«Գոտեպնդվեցե՛ք, գավակնե՛րս,  
հաստա՛տ մնացեք ձեր օրենքի վրա,  
որովհետև դրանով պիտի փառավորվեք» (Ա Մակբ. Բ 64):

«Երիտասարդների բարության ու առաքինության օրինակ թողնեմ, որպեսզի նրանք հոժար  
կամքով & քաջությամբ,  
կյանքի գնով կարողանան պաշտպանել սուրբ օրենքները» (Բ Մակբ. Զ 28):

«Արժանի է նա, որին այս շնորհը պիտի անես,  
որովհետև նա սիրում է մեր ազգը,

& ժողովարանը նա՛ շինեց մեզ համար» (Ղուկ. Է 4-5):

«Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն  
ավերվում է, & ինքն իր մեջ բաժանված ամեն տուն՝  
կործանվում» (Ղուկ. ԺԱ 17):

«Եվ, ամենազլխավորը, եղե՛ք համախորհուրդ, կարեկից, եղբայրասեր, ազնվագութ, խո-  
նարի» (Ա Պետ. Գ 8):

«Նախընտրեց չարչարվել Աստծու ժողովրդի հետ, քան մեղապարտ հաճույքներ վայելել»  
(Եբր. ԺԱ 25):

## Գ Լ ՈՒՆ Զ

## ՈՒՍՈՒՑ Ի Չ

Ա. Ուսուցիչները պարտավոր են առաքինի լինել, որովհետև աշակերտներն առավել սովորում են այն, ինչ տեսնում են իրենց ուսուցչի մեջ, քան այն, ինչ տեսնում են մյուս բոլոր մարդկանց մեջ: Միայն թե տարբերությունն այն է, որ եթե ուսուցիչը կատարյալ առաքինի է, աշակերտը թեպետև նրան նմանվում է, սակայն շատ անգամ չի հասնում նրա կատարելության չափին: Իսկ եթե ուսուցիչը մոլի է, աշակերտը նրա հոռության չափին ոչ միայն հասնում է, այլև շատ բանով գերազանցում ու լինում ավելի հոռի:

Ուսուցչի վարքի միայն լավ օրինակն առավել օգուտ է աշակերտին, քան բազում դասերն առանց լավ օրինակի:

Նախատինքի է արժանի նա, ով ուրիշներին կրթել է ջանում, երբ իր հանդեպ անփույթ է. այսպիսինի համար իրավացի է ասել. «Բժի՛շկ, բժշկի՛ր քո անձը»: Որովհետև նա, ով գիտի ուսուցանել միայն բնական գիտություններ, բայց ոչ բանականությանն արժանի գործեր, տերևախիտ, բայց անպտուղ ծառ է:

Բ. Անկիրթ ու տգետ մանուկը նման է անբան արարածի, որովհետև չգիտի խոսքով ղեկավարվել, որը հատուկ է բանականներին, այլ ղեկավարվում է կրքերով, որը բնորոշ է անբաններին: Իսկ երբ իմաստություն է սովորում, սկսում է կրքերը նվաճել, խոսքով ղեկավարվել՝ վերածվելով բանական մարդու:

Ծնողները զավակներին որպես անբան են ծնում, իսկ ուսուցիչները՝ նրանց բանական դարձնում: Ծնողները զավակներին միայն ապրել են տալիս, իսկ ուսուցիչները՝ լավ ապրել:

Գ. Եթե մանուկները լավ իմանային, թե ինչ է մարմնի սնունդը և ինչ՝ հոգունը, ուսուցիչներին կկոչեին լավ հայր, իսկ ծնողներին՝ միայն հայր. որովհետև ծնողները կերակրով սնուցում են մարմինները, մինչդեռ ուսուցիչներն իմաստությամբ ու առաքինությամբ՝ հոգիները:

Դ. Մեծ զգուշություն է պետք իշխանների որդիներին դաստիարակելիս՝ ի նկատի ունենալով, որ նրանք պատրաստվում են հասարակության ղեկավար դառնալ:

Ե. Եթե արտերը չմշակվեն, լավ բերք չեն տա. մանուկները եթե չդաստիարակվեն, առաքինություն չեն պտղաբերի: Մարդկանց կյանքում չկա մի բան, որ այնպես առաջնորդի դեպի առաքինություն, ինչպես խրատական խոսքերն ու բարի գործերի օրինակները:

Զ. Խրատի ոգին բարին կատարելն ու ուսուցանելն է: Ով խրատ է տալիս, ինքը նույնպես պիտի գործով կատարի այն, այլապես խրատական խոսքերը ոչ մի զորություն չեն ունենա:

Է. Ով պատրաստվում է ուրիշներին խրատող լինել, նախ ինքը թող խրատ առնի ուրիշներից:

Ը. Թեև իմաստունների խրատները խիստ են թվում, բայց հույժ օգտակար են, ինչպես որ բժիշկնե-

րի դեղերը թեպետ դառն են, բայց առողջարար են հիվանդների համար:

Խրատական գավազան է պետք նրանց, ովքեր չեն զգաստանում խրատական խոսքով. որովհետև ըստ առածի՝ ով խոսքն ականջով չի լսում, լսում է թիկունքով, երբ ծեծ է ուտում:

Թ. Ով կարգված է ուրիշներին ուսուցանելու այն, ինչ չգիտեն, թող ջանա ինքն էլ ուրիշներից սովորել այն, ինչ չգիտի: Իսկ եթե ինքը սովորելու եռանդ չունի, պարզ է, որ ուրիշներին էլ չի ջանում ուսուցանել: Որովհետև ով իր օգուտը չի կամենում, ուրիշների օգուտը բնավ չի կամենա: Մանավանդ որ նրան բավական չէ գիտելիք ունենալը, պետք է և ուսուցանելու կերպն իմանալ, ապա թե ոչ շատ կաշխատի և սակավ կշահի:

Ժ. Եթե դասատուներն իրենց գիտեցածը ժլատությամբ են ուսուցանում աշակերտներին, ժլատներից էլ ավելի են դատվելու: Որովհետև ժլատները վախենում են դրամն ի պետս ծախսել կամ կարոտյալներին մի բան տալ՝ իմանալով, որ ինչքան ուրիշներին տալիս են, այդքան պակասում է իրենց ունեցվածքից, բայց դասատուներն այդպիսի երկյուղ չունեն, որովհետև նման են լուսավոր ճրագի, որից ինչքան էլ ճրագներ վառվեն, իր լույսը չի պակասի: Մանավանդ որ փորձով գիտեն, որ դասատվությամբ իրենց գիտելիքներն աճում են և ոչ թե նվազում՝ ըստ առածի. «Ով ուսուցանում է, ինքն էլ է սովորում»:

Սակայն դասատուները թող զգուշանան մտքով ուշիմ, բայց բարքով հանդուգն աշակերտներին ուսուցանելուց, ինչպես որ լավ չեն անում նրանք, ովքեր սուրը տալիս են չարաբարոնների ձեռքը: Որովհետև բնատուր ուշիմությունը, ձեռքբերովի գիտությամբ զորանալով, նրանց մեջ դառնում է իրենց և ընկերների վնասի պատճառ:

ԺԱ. Բնության պատվական ծիրքերը, ինչպես սրամտությունը, լավ հիշողությունը, լեզվի ճարտարությունը և այլն, որոնք բարեկարգ իմաստունների գովեստի պատճառ են, անզգույշ իմաստունների համար նախատիճ են դառնում: Մոլի իմաստունն այլանդակ հրեշ է, որովհետև ունի մարդու գիտելիքներն ու անբանների գործերը: Մարդիկ սոսկում են, երբ արեգակը խավարային մեզ է սփռում, և երբ իմաստունը մոլեկան գործ է անում:

ԺԲ. Բարեսիրտ մարդու համար անհնարին ցավ է տգետներին պատվի բարձրացած և իմաստուններին նվաստացած ու կոխան եղած տեսնելը: Ինչպես որ թանկարժեք ակն է գեղեցկորեն փայլում անարժեք քարերի շարքում, այդպես էլ իմաստուն մարդն է փայլում տգետների մեջ: Չի մեռնում այն իմաստունը, որ գրային աշխատանքով երկրում հիշատակ է թողնում:

«Բարվոք խոհեմությունը շնորհ է պարգևում, & օրենքի իմաստությունը միքի բարիք է» (Առակ. ԺԳ 15):

«Եվ ձեր խոսքը թող լինի միշտ լի Տիրոջ շնորհով,  
որպես թե աղով համեմված լինի,  
որպեսզի դուք իմանաք, թե ինչպես պետք է  
պատասխան տաք յուրաքանչյուրին» (Կող. Դ 6):

«Ջանա՛ Աստծու առաջ ներկայացնել քեզ փորձված,  
որպես մի մշակ, որ ամոթով չի մնում,  
ճշմարտության խոսքը ուղիղ ներկայացնող» (Բ Տիմ. Բ 15):

**Գ Լ Ո Ի Խ Է**

**Ծ Ն Ո Ղ**



Ա. Այն հայրը, որ իր կենդանության օրոք լավ է դաստիարակում իր զավակներին, մահվանից հետո իր հիշատակը հավերժացնում է: Կենդանի զավակի լավ կենցաղավարությունը փառավորում է մեռած հոր անունը:

Բ. Եթե ծնողները մեռնելով իրենց զավակներին թողնում են աղքատ, բայց իմաստուն, ավելի մեծ ունեցվածքի ժառանգորդ են դարձնում նրանց, քան եթե թողնում են հարուստ, բայց տգետ:

Գ. Եթե չես կամենում զավակներիդ պատճառով տրտմել, մանուկ ժամանակ հանդիմանությամբ ու սաստով տրտմեցրո՛ւ նրանց: Ոչ այնքան վիշտ է զավակին վաղամեռիկ, որքան չարաբարո տեսնելը:

Դ. Հորն անօգուտ է զավակին լավ վարքով կրթելը, եթե մայրը զավակին թույլ է տալիս չարիք սովորել:

Ե. Ով իր որդուն փափկակեցությամբ է մեծացնում, կաթի փոխարեն թույն է խմեցնում, որովհետև մանկական փափկակեցությունը տարիքի աճելու հետ թույնից էլ ավելի է վնասում: Անգութ է մայրը, եթե իր զավակին չի սնուցում, բայց առավել անգութ է, եթե փափկակեցություն է սնուցում:

Զ. Փափկակեցությունը մանուկների մեջ նման է կակուղ փշի, որը մանկան մեծանալու հետ ինքն ևս կարծրանում է, մինչև որ խայթում է նրանց, ում մոտենում է:

Է. Եթե ծնողներն իրենց զավակների հանդեպ խիստ զթառատ լինեն, նրանց զավակները նրանց հանդեպ բոլորովին անգութ կլինեն: Հայրական սերը թշնամություն է դառնում, եթե զավակի հանցանքները ներելով՝ նորից մեղանչելու պատճառ է տալիս:

Ը. Իրավամբ խորթ մայր է կոչվում այն ծնողը, որը գիտի զավակներ ծնել, բայց չգիտի լավ դաստիարակությամբ մեծացնել: Նա է հարազատ մայր, ով գիտի ե՛լ ծնել, ե՛լ համեստ վարքով մեծացնել:

Թ. Մանուկներն առավել սովորում են մայրերից, քան հայրերից, որովհետև մայրական դաստիարակությամբ են մինչև չափահասություն մեծանում: Ուրեմն մայրերը պիտի լավ կրթեն իրենց մանուկներին, որպեսզի հետո լաց չլինեն կենդանի զավակի վրա առավել, քան մեռածի:

Ժ. Ծնողները պարտավոր են իրենց մանուկներին բարի վարքի մեջ կրթել հոգեշահ խրատներով և իրենց առաքինագործ կենցաղավարության օրինակներով, քանզի թեև մատաղ հասակի մանուկը բնական խառնվածքով բարի է, սակայն չարաբարոների մեջ մեծանալով և իր ծնողների վատ կենցաղավարությունը տեսնելով՝ դառնում է վատ ու մոլի:

ԺԱ. Չարաբարո հոր նախատինքը որդու չարաչար վարքով ծանրանում է, որովհետև որդին հորից սովորեց չար լինել:

ԺԲ. Ծնողները նախատինքի ու պատիժների են արժանի, եթե իրենց որդիներին թողնում են անգործ թափառել:

ԺԳ. Եթե ծնողներն անփույթ են լինում և իրենց որդիներին չեն տալիս գիտության ուսման, որպեսզի լավ մարդ դառնան, և ոչ՝ կարևոր արհեստների, որպեսզի նրանք իրենց կարիքները հոգան, արժանի են դատաստանի, որովհետև իրենք են նրանց անկարգ ու անգործ լինելու պատճառը:

ԺԴ. Չվերը փչանում են, երբ թխսամայրը դրանք անխնամ է թողնում ու շրջում, ինչպես կամենում է: Մանուկներն անպիտան են դառնում, եթե ծնողները նրանց չեն պահում իրենց թևի տակ և հոգ չտանելով նրանց մասին՝ կամենում իրենց անձանց հանգստավետությունը:

ԺԵ. Եթե մեկը կամենում է, որ իր զավակը լավ մարդ դառնա, թող նրան հանձնի այնպիսի դաստիարակի, որ ոչ միայն գիտուն է, այլև առաքինի: Որովհետև մանուկը սովորում է այն, ինչ մի անգամ տեսնում է իր ուսուցչի մոտ. աչքով տեսնելն առավել է արթնացնում դեպի լավը բաղձանքը, քան ականջով լսելը:

ԺԶ. Հայրերի համար փառք չէ իրենց զավակներին միայն գիտուն տեսնելը, նաև բարիք գործող պիտի լինեն, որովհետև գիտելիքներն անհրաժեշտ է ձեռք բերել բարիք գործելու համար:

ԺԷ. Եթե հարուստների զավակներն անդաստիարակ են, վերջում աղքատ են դառնում: Եթե աղքատների զավակները դաստիարակված են, վերջում հարուստ են դառնում:

ԺԸ. Մարդ երիտասարդ ժամանակ լինում է այնպիսին, ինչպես որ դաստիարակվել է մանուկ ժա-

մանակ: Ուստի եթե որևէ հարուստ կամենում է, որ իր զավակը լավ երիտասարդ դառնա, թող մանուկ հասակում նրան լավ կրթի:

ԺԹ. Եթե հարուստ մարդու զավակը նախնիներից ժառանգած փառքն ու համբավը բավական է համարում և չի ջանում գիտելիքներով ու առաքինությամբ օրըստօրե ավելացնել, արկածների ժամանակ դրանք կորցնելով՝ անարգության մեջ է միշտ մնում, որովհետև մանուկ ժամանակ չսովորեց փառք ձեռք բերել:

Ի. Երբ հայրերը տեսնում են իրենց զավակներին վատ բաներ անելիս, պարտավոր են քաղցրությամբ խրատել նրանց. եթե զավակներն անհնազանդ գտնվեն, թող չափավոր սաստուճով նրանց ուղղության բերեն: Երիտասարդներին համարձակություն տալը նույնն է, ինչ ամեհի ձիերի սանձը թողնելը, կամ բորբոքված կրակի մեջ ձեթ լցնելը, և կամ վշի պարկի մեջ կայծ գցելը: Գովելի ժլատություն է երիտասարդներին ու դեռահասներին համարձակություն չտալը:

ԻԱ. Չափահաս մարդիկ անպատշաճ բաներ տեսնելիս կամ լսելիս երբեմն հետևում են դրանց, երբեմն էլ խորշում. իսկ մանուկները բնավ չգիտեն խորշել, այլ ինչ լսում ու տեսնում են, անմիջապես կամենում են անել:

ԻԲ. Եթե ծնողներն իրենց զավակներին մեծացնելիս բարվոք վարվեցողություն չունեն, նրանց զավակները լավ ժառանգ չեն կարող դառնալ:

Ծնողական սերը, որ բնությունը տվեց զավակների հանդեպ ունենալու համար, պետք ու պատշաճ է միառժամանակ սրտում ծածուկ պահել և զավակին հայտնել, երբ չափահաս դառնա և կարողանա ճանաչել ծնողական սիրո հարգն ու իր պարտավորությունը:

Ուստի քանի դեռ զավակը մանուկ է և խոսել չգիտի, թող նրան քաղցր կաթով սնի, որևէ կերակրով հագեցնի և անպաճույճ հագուստով ծածկի: Եվ երբ երեխան յոթնամյա դառնա, թող նրան դպրոց տանի, ուր ուսուցիչը նրան կարդալ կսովորեցնի, ապա գրել ու թվերով գործողություններ կատարել, մինչև տասնամյա դառնա: Դրանից հետո նրան անգիր կսովորեցնի ու հասկանալ կտա քրիստոնեական հավատի ու բարոյական առաքինությունների սկզբունքները: Եվ եթե մանուկն ուշիմ, ժրջան ու եռանդուն է, ուսուցիչը նրան քերականության դասեր կտա, որպեսզի օրըստօրե հասկանա բառերի նշանակությունը, խելամուտ լինի ընթերցանության նյութերի իմաստներին և կարողանա ըստ մեր հայոց լեզվի կանոնների ու սովորության խոսք շարադրել: Եվ թող կրթությունը շարունակի, մինչև հասնի տասներեք կամ տասնչորս տարեկան հասակը:

Այս ամբողջ ժամանակ երեխային հարկավոր են ծնողների ու դաստիարակների սաստն ու խրատը, որպեսզի դեռ թարմ ու մատաղ հասակից սովորի չարից հեռու մնալ և բարուն հետևել:

Այս ամենից հետո երեխան պարտուպատշաճ խնամքի կարիք ունի: Եթե իրենք իսկ ծնողները փափագում են իրենց որդուն արժանի դարձնել սրբազան կարգի ու աստիճանի, և երեխան հոժար է, թող թողնեն նրան ուսումը շարունակել՝ արտաքին ու հոգևոր գիտություններ սովորելու և առաքինության մարզերում կրթվելու այնքան ժամանակ, որքան նրան պետք է: Իսկ եթե ծնողները կամենում են իրենց որդուն աշխարհի կարգի մեջ մտցնել, թող նրան անհրաժեշտ արհեստների ուսման տան, որով կարողանա ապրուստի միջոցները հոգալ:

Բայց զավակների այս բարեկարգ դաստիարակությունն այժմ ծնողների մեջ չի տեսնվում, ուստի հազվադեպ է երևում նաև զավակների որդիապարտ հնազանդությունն իրենց ծնողների հանդեպ: Քանզի ծնողները մանկան կաթնաբույծ հասակից սկսած մինչև պատանեկան տարիքը նրան զգվում ու փայփայում են, լավ զգեստներով պըճնում, նրա երեսին ծիծաղում, խաղահրապարակներում ու զբոսավայրերում շրջեցնում, անհապաղ կատարում նրանց ամեն կամք ու քմահաճույք, և թեպետ երեխա ժամանակ դպրոց ուղարկում են, բայց հասարակ ընթերցանություն ու գրել սովորելուց հետո նրան վաճառանոց են մտցնում:

Իսկ եթե նույնիսկ մանուկն ուշիմ ու եռանդուն է և կամենում է քերականություն ու կարևոր գիտություններ սովորել, իսկույն սաստում են նրան՝ ասելով. «Մենք քեզ քահանա կամ վարդապետ չենք դարձնելու», և չգիտեն, որ պարտավոր են նրան բանական մարդ դարձնել և ոչ թե մարդու կերպա-

րանքով մեկը թողնել:

Ուրեմն թող ծնողները լսեն, թե կարևոր է, որ բոլոր երեխաները, ըստ յուրաքանչյուրի կարողության, քերականություն սովորեն, որպեսզի գոնե աստվածաշունչ Հին և Նոր Կտակարանների խոսքերի բացահայտ իմաստները հասկանան, խելամուտ լինեն Աստծու օրենքին, որ պատվիրում է ամբողջ սրտով սիրել Աստծուն և հանուն Աստծու՝ ընկերոջը, ծնողներին հնազանդվել և իրենց ձեռքի աշխատանքով նրանց պատվել:

Վերջապես պիտի ասեմ, որ եթե ծնողներն իրենց զավակներին լավ մեծացնեն ու կրթեն, որդիներն էլ լավ ժառանգ ու իրենց ծնողների փառքը կլինեն: Բայց քանի որ ուսումնատյաց բարքը ծնողների մեջ արմատացել է, այդ պատճառով էլ մեր օրերում շատացել է նաև զավակների՝ իրենց ծնողների հանդեպ անհնազանդությունը:

ԻԳ. Քաղաքը կործանված է կամ մոտ է կործանման, եթե ծնողներն անփույթ են իրենց զավակներին գիտության, առաքինության ու աշխատանքի մեջ կրթելու գործում, որովհետև տգիտությունը, մոլությունն ու անգործությունը վնասի ու թշվառության աղբյուր են:

ԻԴ. Մեծ ամոթ է ծնողներին իրենց զավակներին անխրատ թողնելը, մինչև որ վերջիններս ուրիշների խրատի կարիքն են ունենում ուղղության գալու համար: Ծնողների փոքր-ինչ անհոգությունը թողնում է, որ նրանց զավակների մեջ աճեն մեծամեծ մոլություններ, որոնք հետո շատ աշխատանքով հազիվ են ուղղվում կամ իսպառ անուղղելի մնում: Քանզի նավապետի անհոգությունից էլ ջրերը, անցքերի միջով տակավ-տակավ մտնելով նավի մեջ, նավագագում լճանում են և դուրս թափվելու համար մեծ ջանքեր պահանջում, երբեմն էլ նավը խորտակում:

Ուստի ծնողները պիտի զգույշ լինեն և թույլ չտան, որ իրենց զավակների վարքի մեջ մոլություններ մուտք գործեն, որովհետև այնուհետև դրանցից ազատվելը դժվարին է:

ԻԵ. Անխրատ զավակը սովոր է ստախոս լինել, որովհետև երբ գաղտնի կատարած սխալ արարքների մասին հարցվում է ծնողներից, սուտ պատասխան է տալիս, որպեսզի չհանդիմանվի: Այսպիսի մանկանը ծնողները կրկնակի պատիժներով պիտի խրատեն, մեկը՝ արարքների, և մյուսը՝ ստախոսության համար, որպեսզի սովորի այնուհետև սխալ արարքներից ու սուտ խոսելուց հեռու մնալ:

ԻԶ. Բարի հայրը, եթե ունի բարի զավակ, երկուսն էլ երանելի են: Որովհետև հոր բարի համբավը մեծացնում է զավակի փառքը, և զավակի բարի համբավը՝ աճեցնում հոր հանդեպ մեծարանքը: Ուրեմն թող ծնողները ջանան իրենց զավակներին բարու մեջ կրթել, որովհետև եթե անհոգությամբ նրանց թողնեն չարիք սովորել, նրանց վատանունությամբ կաղավաղվի իրենց բարության համբավը, նաև արժանի կրթման դատաստանի:

ԻԷ. Ողորմելի է այն մանուկը, ում ծնողները չարաբարո են, որոնցից և ինքն է սովորում չար լինել: Եվ երանելի է նա, ում ծնողները բարեբարո են, որոնցից և ինքն է դաստիարակվում լավը լինելու: Իսկ եթե հայրը բարի է, և մայրը՝ չար, շատ անգամ մանուկն էլ է չար լինում, որովհետև մանուկներն իրենց մատաղ տարիքում առավել սովորում են մայրերից, քան հայրերից: Ուստի եթե ծնողները կամենում են, որ իրենց զավակները բարի լինեն, նախ թող իրենք բարի լինեն:

ԻԸ. Բարի հոր բարի զավակն ավելացնում է հոր պատիվը, որովհետև հորից սովորեց բարի լինել: Չարաբարո հոր բարի զավակ լինելը զավակի պատիվն է ավելացնում, որովհետև ինքնուրույն սովորեց բարի լինել:

ԻԹ. Ծնողներն իրավունք չունեն բնությունից զանգատվելու, որ իրենց չարաբարո զավակ ունենալ տվեց. քանզի զավակներին ոչ թե բնությամբ չար ծնեցին, այլ իրենց անհոգությամբ նրանց չար դարձրին: Քանզի հողն էլ, եթե անդարման է մնում, մոլախոտ ու փշեր է բուսցնում:

Լ. Ծնողները պարտավոր են իրենց զավակներին լավ կրթությամբ զարգացնել, որպեսզի մանուկներն օգտակար արիեստներով ու գիտություններով զբաղվեն, օրենքի պահպանությանն ուշադիր և Աստծու ու մարդկանց հանդեպ հավատարիմ լինեն:

ԼԱ. Ոչ այնքան ցավալի է ունեցվածքի ու հարստության կորուստը, որքան ամոթխածության ու բարի անվան, որովհետև ունեցվածքն ու հարստությունը վերստին ձեռք բերել հնարավոր է, բայց ամոթ-

խածությունն ու բարի անունը՝ ոչ բնավ, որովհետև բրուտի մի անգամ փշրված անոթի նման երբեք չեն վերականգնվում:

Ուրեմն՝ ծնողները թող զգույշ լինեն իրենց զավակներին պարկեշտության մեջ պահելու համար: Թող զավակներն էլ զգույշ լինեն անկորուստ պահելու համեստությունն ու բարի անունը: Որովհետև երիտասարդական բորբոքն անցավոր է, հաճույքը՝ վայրկենական, բայց այս կյանքում ամոթահարությունն ու ցավն են մշտնջենավոր, իսկ հանդերձալուծ հավիտենական է պատիժը:

ԼԲ. Ի՞նչն է սրանից ավելի աղետալի. մինչ հայրը մեծ տառապանքով փող ու հարստություն է հավաքում, որպեսզի զավակը երջանիկ ապրի, զավակը վատնում է դրանք, որպեսզի թշվառ ապրի: Եվ ի՞նչն է այս թշվառությունների պատճառը, եթե ոչ ծնողական անկարգ խնամքը. որովհետև հայրը ջանում է իր զավակին հարստացնել բազում գանձերով, բայց ոչ՝ մի փոքր գիտությամբ. կամենում է ժառանգորդ դարձնել ստացվածքների, բայց ոչ՝ առաքինությունների:

ԼԳ. Եթե իշխանները կամենում են, որ իրենց զավակներն իշխան դառնան, թող նրանց մեծացնեն ոչ թե իբրև որդիների, այլ իբրև ծառաների: Որովհետև ով իր հոր ծառան չի եղել, չի կարող ուրիշների իշխան լինել: Նա՛ գիտի հրամանատար լինել, ով հրամանակատար է եղել:

ԼԴ. Աշխարհից ուրախությամբ է հեռանում նա, ով աշխարհում բարի զավակ է թողնում, և աշխարհին տրտմությամբ է հրաժեշտ տալիս նա, ով իրենից հետո չար զավակ է թողնում:

Ուստի ծնողը ճիշտ է վարվում, եթե մեռնելիս փոքր զավակին հանձնում է բարեկամին՝ խնամելու ու խրատելու համար: Քանզի եթե մանուկը խնամածու չունի, չարերին ընկերակցելով՝ ինքն էլ է չար ու անզգամ դառնում և այնուհետև բարիների խրատներից ոչ մի օգուտ չի ունենում: Որովհետև ըստ ժողովրդական առածի՝ «Խափշիկն օճառ չի ուզում, անմիտն օգտակար խրատ չի առնում»:

ԼԵ. Ով իր զավակին սիրում է, զգույշ է լինում նրա պահպանության համար, այլապես զավակին չի սիրում: Քանզի զգուշավոր պահպանությունն առաջ է գալիս կորցնելու երկյուղից, իսկ կորցնելու երկյուղը ծնվում է սիրուց, ուստի ուր չկա սիրո գործ, այնտեղ չկա սեր:

ԼԶ. Մայրերը թող զգույշ լինեն իրենց դուստրերի հանդեպ, որպեսզի նրանց համեստությունը որևէ բանով չարատավորվի: Որովհետև համեստությունը նման է դյուրաբեկ ապակու, որը թեթև բախումից փշրվում է, կորցնում իր հարգը, և այն վերականգնել հնարավոր չէ:

ԼԷ. Այն մայրը, որ դստերը պահում է տանն ինչպես բանտում և թույլ չի տալիս գրուցել ուրիշների հետ, դրանով ոչ թե ցույց է տալիս, թե իր դուստրը չար ու անպատկառ է, այլ զգուշանում է, որ այդպիսին չդառնա: Որովհետև ամոթխած ու բարի օրիորդը որքան խնամքով ու զգուշությամբ պահվի, այնքան ավելի պարկեշտ ու լավը կլինի:

ԼԸ. Եթե մանկամարդը համեստ ու անխոս նստի տանը, բոլոր ուրիշները նրա բարեբարոյության մունետիկն ու քարոզողը կդառնան:

ԼԹ. Իր զավակին թշնամու պես է սիրում այն մայրը, որ դստերն ազգականների կամ դրացիների հետ ուղարկում է ինչ-որ բան տեսնելու կամ զբոսնելու և թողնում է, որ նա մի քանի օր նրանց տանը մնա՝ ասելով. «Երկար ժամանակ է, ինչ զավակս տանն արգելված է, և սիրտը ծանրացել է. թող փոքրինչ դուրս գա, սիրտը բացվի, հովանա: Տեղն օտար չէ, մեզ ազգական ու մերձավոր են»:

Բայց ավա՛ղ նրա մտքի կուրությանն ու անզգայությանը: Հույս ունի և սպասում է, որ բացվի դստեր սիրտը, բայց շուտով նրա աչքերն են բացվում, և իրեն համեստությունից մերկացած է տեսնում:

Տանից դուրս գալով՝ ամոթխածությունը կորցնում է և տուն մտնելով՝ այլևս չի կարողանում գտնել: Զբոսանքի մի քանի օրվա զվարճությունն անփարատելի տրտմության է փոխվում, և ցնծալից բերկրանքը՝ սուգ ու կոծի:

Ուրեմն՝ որդեսեր մայրերը միշտ պիտի հսկեն դուստրերին՝ պահպանելու համար, և չթողնեն հեռանալ իրենց քղանցքից: Որովհետև նրանք նման են հավի ձվերի, որոնց թխսամայրերը պարտավոր են թևերի տակ պահել մինչև նրանց՝ ձվերից դուրս գալը և այնուհետև իրենց հետ շրջեցնել մինչև նրանց մեծանալը:

Իսկ եթե ձվերը թևերի տակ չպահեն, ներսից կփտեն, և եթե ձագերին թույլ տան իրենցից հեռանալ, անգղներից կհափշտակվեն: Այս օրինակով էլ մայրերը պարտավոր են միշտ հոգ տանել դուստրերի մասին, իսկ եթե նրանց հանդեպ անփույթ լինեն, նրանց չարության պատճառն իրենք կլինեն և պատժապարտության արժանի կդառնան:

Խ. Եթե մայրը բացահայտ ցույց է տալիս բնական սերը, որով սիրում է իր դստերը, վերջինիս գաղտնի թշնամի է դառնում: Որովհետև դուստրը, անչափահաս ժամանակ մորից համարձակություն ստանալով, որքան տարիքով մեծանում է, այնքան ավելի է համարձակություն ձեռք բերում՝ մինչև ծնողի խոսքերին չհնազանդվելն ու նրա խրատին չանսալը: Եվ որովհետև մատաղ տարիքից սովորել է, որ իր բոլոր քմահաճությունները պիտի կատարվեն, մեծանալով մորից նույնն է պահանջում, և երբ վերջինս գլանում է կատարել, խոժոռվում ու տրտմում է, երբեմն էլ վիճում ու հակառակում:

Եվ այս ամենի գլխավոր պատճառը ծնողի թուլությունն է, որ սկզբում դստերը համարձակություն տվեց քմահաճությունները կատարելու: Եվ երբ ծնողը դժվարանում է դստերը զսպել, մաշվում և իրեն ու դստերն ավաղում է: Արդարև, մեծ ջանք է հարկավոր այդպիսինին զսպելու և նրա բարի անունը չարատավորելու համար: Ուստի ծնողը պետք է սկզբում իր սերը ծածուկ պահի և հայտնի դարձնի դստեր մեծանալու ժամանակ, ինչի շնորհիվ երկուսն էլ բարեվիճակ կլինեն:

ԽԱ. Այն օրհորդների բարի համբավը, որոնց ձայնն ուրիշները չեն լսում, ամենքին հայտնի է դառնում: Այն կույսը, որ մեկի հետ բարձրաձայն է խոսում, ինքն իր ձեռքով իր բարի անունն արատավորում է: Որովհետև եթե օրհորդը վաղ տարիքից սովորում է բարձրաձայն խոսել ծնողների, եղբայրների ու ազգականների հետ, ինչպես՝ ս է հնարավոր, որ մեծանալիս իր ձայնը զսպի և զգույշ լինի, որ օտարներից ոչ ոք չլսի: Այն մանկամարդը, որ սովոր է բարձրաբարբառ խոսել, ամենայն հավանականությամբ հանդուգն ու անպատկառ է:

ԽԲ. Լավ կլիներ, եթե այն տունը, ուր աղջիկներ են բնակվում, պատուհան կամ դուռ չունենար՝ փողոցները նայելու: Որովհետև երբ աղջիկները կանգնում և ուղիղ նայում են անցորդների կերպարանքին, նրանց մաքուր միտքն ամբոխվում է, նման կրակի կայծի՝ բամբակի խրձի մեջ ընկնելուն, և ժամ առ ժամ բորբոքվելով՝ կիզում ու այրում է նրանց ողջամտությունն ու համեստությունը: Ուստի այն երիտասարդուհին կամ կույսը, որի աչքը պատուհանին է, կամ անամոթ է, կամ սկսել է անամոթանալ: Որովհետև ամեն հրդեհ էլ մի դույզն կայծից է բորբոքվում, և ամեն մեծ վնաս փոքր վնասից է առաջ գալիս:

ԽԳ. Մայրերը թող հանգիստ թույլ չտան իրենց դուստրերին կենցաղավարել երիտասարդի հետ, եթե նույնիսկ վերջինս մերձավոր կամ ազգական է: Որովհետև մուլեկան ցանկությունը խռովում է միտքը, մինչև մարդ իրեն մոռանում է և անբան կենդանու պես վարվում:

ԽԴ. Թող դուստրերը չտրտմեն, երբ իրենց մայրերի կողմից զգուշությամբ պահպանվում են. որովհետև նրանց անկատար հասակը, չհասկանալով պահպանության տված օգուտը, զուցե տրտմեցնում է նրանց, բայց հետո, երբ դուստրերի մայր դառնան, կհասկանան:

ԽԵ. Եթե հողն ուխտի արգելել ջրերի գոլորշիները, և օդը՝ սաստիկ քամին, ծովը միշտ խաղաղ ու անխռով կմնա: Եթե օրհորդն իր աչքերը պահպանի արատավոր բաների նայելուց և ականջները՝ անպատեհ բաներ լսելուց, հանդարտ ու համեստ կմնա: Իսկ քանի դեռ աչքերը պատուհանին են, և ականջը՝ ուրիշների բերանին, անհնար է, որ տանը համեստ ու ամոթխած մնա:

Ով կույս ժամանակ մնում է տանը որպես բանտում, ամուսնանալիս բարի բախտ կգտնի: Շատաշրջիկ կույսը դևերի խաղալիք է:

ԽԶ. Կանայք ճիշտ են վարվում, որ իրենց ականակուռ ու ոսկեղեն զարդերի տուփը մեծ աչալրջությամբ են պահում, և եթե պատահում է, որ գնան իրենց ազգականների տուն, իրենց հետ վերցնելով տանում են ու փականքով ամրացնում, որպեսզի գողերի կողմից չկողոպտվի: Բայց ճիշտ չեն վարվում, որ այնքան ուշադիր չեն լինում իրենց դուստրերի հանդեպ, որքան իրենց զարդերի, և այն բանից հետո, երբ դուստրերը համեստությունը կորցնում են, մայրերը զուր ու ապարդյուն հառաչում են ու կոծում:

Եվ որովհետև բնության օրենքով առավել պիտի սիրեն իրենց զավակներին, քան բոլոր մեծագին զարդերը, ուրեմն թող առավել աչալրջությամբ պահեն նրանց, որպեսզի կորստյան վտանգը նրանց համեստությանը չհասնի, և դրա հետ մեկտեղ գա ունեցվածքի, զավակի և բարի անվան կորուստը:

ԽԷ. Քանի դեռ դուստրը փոքր է, մայրն աշխատում է նրան կերակրել ու խնամել, իսկ երբ չափահաս է դառնում, մայրը հանգստանում է, և դուստրը՝ աշխատում:

Բայց մարմնի այս հանգիստն ավելացնում է ծնողի մտքի աշխատանքը. պարտավոր է շրջահայաց ու զգույշ լինել դստեր պահպանությանը, որովհետև ինչպես ժողովրդական առածն է ասում, որքան զավակը մեծանում է, այնքան մեծանում են և ծնողի ցավերը:

ԽԸ. Ով իր աղջկան որպես փեսացու է ընտրում ազնվական, բայց մոլեկան տղամարդու, իր պատիվն ու հանգիստը կորցնում է:

ԽԹ. Պետք է նայել ոչ թե փեսացուի հարստությանը, այլ նրա խոհեմությանը: Որովհետև ով հարուստ, բայց մոլի փեսա է ընտրում, իր դստերը մշտնջենավոր գերի է դարձնում:

Ծնողներն իրենց պարտավորությունը չեն կատարում, եթե մեծ անվան ու համբավի պատճառով չեն հոժարում իրենց դուստրերին տալ համեստ արհեստավորների, եթե վերջիններս մեծ հարստություն չունեն: Եվ երբ նրանց դուստրերն անտեսվում են հարուստներից՝ վերջիններիս հարս դառնալու, տարիքն առնելով՝ իրենց կյանքի բոլոր օրերում, իբրև այրի, տանն են մնում:

Իսկ այս չարիքի պատճառն այն ծնողների սնափառությունն է, որոնք հարստություն են փնտրում և ոչ թե համեստություն:

ԾԱ. Ծնողների համար հույժ դժվար է և մեծ զգուշության կարիք ունի փեսայի ընտրությունը, որովհետև իրենց դստեր երջանկությունը կան թշվառությունն ամբողջապես սրանից է կախված:

Ուստի թող որևէ երիտասարդի փեսա ընտրեն ոչ թե նրա համար, որ ազնիվ տոհմից է, այլ որ կարող է ազնիվ տոհմի սկիզբ դառնալ: Որովհետև կան շատեր, որ իրենց տոհմի ազնվությունն իրենցով սպառում են, կան էլ այնպիսիք, որ իրենցից են սկզբնավորում:

ԾԲ. Ոչ թե բարիքներով լեցուն խնջույքն է հարսանիքը վայելուչ դարձնում, այլ փեսայի ու հարսի համապատասխանությունը: Տըրտմության տուն է այն հարսնարանը, որի փեսան ու հարսը միմյանց չեն համապատասխանում:

«Պատվիրեցե՛ք ձեր որդիներին, որպեսզի պահեն ու կատարեն օրենքի բոլոր խոսքերը» (Բ Օրենք ԺԲ 46):

«Ով չի գործադրում խրատի զավագանը, նա ատում է որդուն, իսկ ով սիրում է իր որդուն, նրան խրատում է հոգածությամբ» (Առակ. ԺԳ 24):

«Եթե դուստրեր ունենաս, զգույշ եղիր, քո դեմքի լրջությունն անպակաս արա նրանցից. ամուսնացրու նրանց իմաստուն մարդկանց հետ & մեծ գործ արած կլինես» (Սիրաք Է 26-27):

«Ով խրատում է իր որդուն, նրանից օգուտ կտեսնի & ծանոթների մեջ նրանով կպարծենա» (Սիրաք Լ 2):

«Ով ուսուցանում է իր որդուն, թշնամու նախանձը կշահի & բարեկամների առջև նրանով կպարծենա: Երբ նրա հայրը վախճանվի, կարծես թե չի մեռել,

որովհետև իրենից հետո թողնում է իր նմանին» (Սիրաք L 5):

«Հայրեր, մի՛ գայրացրեք ձեր որդիներին, այլ մեծացրե՛ք նրանց Տիրոջ խրատով & ուսումով»  
(Եփես. Զ 4):

«Որդիներ, ամեն ինչում հնազանդ եղե՛ք ձեր ծնողներին, որովհետև հաճելին այդ է Տիրոջ ա-  
ռաջ» (Կող. Գ 20):

«Ուզում եմ, որ այդ երիտասարդ կանայք ամուսնանան, որդիներ ծնեն, տնարար լինեն & հա-  
կառակորդին  
առիթ չտան նախատինքի» (Ա Տիմ. Ե 14):

## Գ Լ ՈՒՆ Ը

### Ա Մ ՈՒՍ Ն ՈՒԹ Յ ՈՒՆ

Ա. Բարեհաջող է ամուսնությունը, եթե ամուսինները միմյանց հանդեպ հավատարիմ են և միմյանց սիրում են ինչպես սեփական անձը, մինչև որ այր ու կին չեն երևում իբրև երկու տարբեր անձ, այլ մի հոգի՝ բնակված երկու մարմնի մեջ. նաև ողջամիտ են ու աշխատասեր, ուրախ, հանդարտ, ընտանիքի փոխնիփոխ հոգածուներ, տղամարդը՝ դրսի գործերով զբաղված, կինը՝ տան կարգավորությամբ, միմյանց մխիթարող ու օգնող, այնպես, որ ապրում են ոչ այլ բանի, եթե ոչ միմյանց օգտակարության ու հաճելի լինելու համար:

Բ. Պետք է ոչ թե գեղեցիկ կին փնտրել, այլ բարեբարո: Գեղեցիկ տեսքով, բայց չարաբարո կինը գեղեցկախայտ օձ է:

Ով փափագում է հույժ գեղեցիկին կնության առնել, վերջիվերջո կամ խելագարվում է, կամ աղքատության մեջ ընկնում:

Գ. Կնոջ գեղեցկությունը նրա կերպարանքի վայելչությունը չէ, որ օր առ օր եղծվում է, այլ համեստությունն ու հնազանդությունը, որոնք մինչև վերջ էլ չգիտեն պակասել:

Դ. Ով ամեն ինչում իր կնոջ կամքին է հետևում, իրեն գերի է դարձնում, իսկ ով միշտ ընդդիմանում է, իրեն թշնամի է դարձնում: Ուստի ամուսնացածը խոհեմության կարիք ավելի ունի, քան ամուրին, որովհետև ամուրին հոգ է տանում միայն իրեն լավ կառավարելու մասին, իսկ ամուսնացածը՝ միաժամանակ իրեն ու իր ամուսնուն:

Տղամարդուն վայել չէ կնոջը որպես անարգ աղախին պահել, ոչ էլ՝ որպես ամուսնուն հրամայող տիկին, այլ չափավորության մեջ պահել:

Ե. Կինն անզգամ է, եթե իր ամուսնու կամքին հակառակվում ու կռվում է, ամուսինը խելագար է, եթե նրա հետ հրապարակավ վիճում է:

Զ. Եթե կինը բարի է, պետք է նրան էլ առավել խնամել, որ ավելի բարի լինի. իսկ եթե չար է, պետք է համբերել, որ էլ առավել չար չլինի:

Է. Իմաստուն զորավարը, որ կարողանում է ղեկավարել մի մեծ բանակ, չի կարողանում կառավարել միայն մի դաժան կնոջ: Որովհետև հնարավոր չէ, որ մարդկային խոհեմությունը կառավարի նրան, ով մարդկությունից դուրս է կենցաղավարում:

Ը. Կնոջ անզգամությունը երկրաշարժից ավելի է կործանում ամուսնու տունը և նրա ամբողջ ունեցվածքը քանուց բորբոքված հրդեհի նման մոխիր դարձնում: Ով կամենում է դժոխքի տանջանքի մասին ինչ-որ բան իմանալ, թող սովորի նրանից, ով անզգամ կին ունի:

Թ. Ավելի մեծ արիության կարիք կա կանանց անզգամությունը տանելու համար, քան հզոր թշնա-

միների բռնությունը: Որովհետև անզգամ կանանց բարկությունը գազանական է, նախանձը՝ դիվական, և սերը՝ կեղծավոր:

Ժ. Կանանց ցեղի համար սովորական մոլություն է իրենց ունեցած բարիքը ոչինչ համարել և ցանկանալ այն, ինչ չունեն, եթե նույնիսկ դրա ձեռքբերումն անօգուտ կամ դժվարին է:

ԺԱ. Երբ կանայք մի փոքր համարձակություն են ձեռք բերում, իրենց ամբարտավանությունն աճեցնում են: Երբ դույզն-ինչ անպատվություն են զգում, մեծ խռովություն են բարձրացնում, որովհետև ամեն ինչ խռոչորացույցով են տեսնում: Ուստի մեծ զգուշություն է հարկավոր նրանց չափավորության մեջ պահելու համար:

ԺԲ. Թվում է՝ կանայք դժկամ ու անհավան են տղամարդկանց գլխավոր լինելուն՝ մտքում ասելով. «Ինչո՞ւ տղամարդիկ մեզ վրա հրամանատար կարգվեցին, և մենք հրամանակատար եղանք»: Եվ քանի որ բացահայտ ընդդիմանալ չեն կարող՝ գիտենալով, որ դա աստվածային կարգադրությամբ է, սկսում են լռելյայն հակառակվել և զանգատվում են տղամարդկանց բարքից, թե՛ «մեզ տիրողաբար են հրամայում»:

ԺԳ. Իրեն անզերծ ծառայության է վաճառում նա, ով ինքն աղքատ լինելով հարուստ կին է առնում: Եթե կամենում ես իմանալ, թե որ գերին է չափազանց ողորմելի ու դժբախտ, իմացի՞ր, որ նա է, ով իր կնոջ ծառան դառնալով՝ տղամարդու կերպարանքը կորցնում է:

ԺԴ. Իմաստուն չէ այն մարդը, որ կարծում է, թե կնոջ սերը հաստատուն է: Որովհետև նրանք ինչպես որ բարքով են հողդողդուն, այնպես էլ սիրով: Կինն ինչպես որ առաջինն է իր ամուսնուն սիրողների մեջ, քանի դեռ նա կենդանի է, այդպես էլ առաջինն է նրան մոռացողների մեջ, երբ նրա մահվանից հետո ուրիշի հետ է ամուսնանում:

ԺԵ. Երբ մանկամարդ կինն ամուսնու մեռնելու ժամանակ պատշաճից ավել է ճշում ու լալիս, իր պատիվը կորցնում է: Քանզի շատերը վայել զրպարտությամբ ասում են նրա մասին, թե լալագին կոծով կամենում է կարծել տալ, թե ամուսնուն հավատարիմ է, որպեսզի մեկնումեկը կամենա իրեն կնության առնել:

ԺԶ. Կանայք ոչինչ այնպես չեն փափագում, որքան ուրիշներին տեսնել և ուրիշներից տեսնվել: Ուստի կանանց վրա օրենք դրվեց տանը նստել, որպեսզի ուրիշները նրանց չտեսնեն:

ԺԷ. Տղամարդկանց համար այս է վայելու՛չ՝ աշխարհում հավերժական հիշատակ թողնել պատերազմական քաջագործություններ, օգտակար մեծագործություններ, իմաստուն գրքեր և նորանոր արհեստների գյուտեր. իսկ կանանց ցեղին վայելու՛չ է իրենց համեստության համբավը թողնել:

ԺԸ. Բնական է, որ տղամարդիկ սակավախոս են, իսկ կանայք՝ շատախոս. որովհետև տղամարդը երկրի կավից ստեղծվեց, իսկ կինը՝ կողոսկրից: Արդարև, երբ կավը կավի է զարկվում, մեղմ շաչյուն է լըսվում, բայց երբ ոսկորը ոսկորի է բախվում, ականջների վրա ազդող ծայն է արձակում:

Ով իր գաղտնիքը կանանց ականջին է պատմում, շուտով քարոզվելիս է տեսնում տանիքների վրա:

ԺԹ. Եթե կանանց շատախոսության մեջ բամբասանք չլիներ, ոչ ոք նրանց վրա չէր բարկանա՝ գիտենալով, որ շատախոսությունը նրանց բարքի մեջ բնածին է:

Ով կամենում է դատարկաբանություն լսել, թող կանանց հետ զրուցի:

Ի. Քանի դեռ կանայք մի հոգի ունեն, դժվարությամբ են նվաճվում, ապա երբ երկուսն ունեն, այսինքն՝ հղի են, ո՞վ կարող է նրանց հաղթել. իսկույն կորցնում են մեկը, գուցե երկուսն էլ: Ուստի պետք է խոհեմությամբ ապրել նրանց հետ, որոնք բրուտի անոթի պես մի փոքր բախումից փշրվում են: Բնավ զարմանալի չէ, որ մանուկներն անխրատ են լինում. որովհետև կանանցից են ծնվում և նրանց կաթով սնվում:

«Ժրաջան կինն իր ամուսնու պսակն է. ինչպես փայտի համար վնասակար է որդը, այնպես էլ չարագործ կինը կորստի կմատնի ամուսնուն» (Առակ. ԺԲ 4):



## Գ Լ ՈՒ Խ Թ

### Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ

Ա. Երիտասարդները թող այնքան կրթվեն իմաստունների ու առաքինիների մոտ, որ երբ բաժանվեն ու հեռանան նրանցից, կարողանան անկորուստ հիշել նրանց խոսքերը՝ իբրև բարեխրատ ուսուցիչ:

Ով իմաստություն ու սիրալիր քաղաքավարություն ունի, ուր էլ գնա, ինչպիսի ծախորդությունների մեջ էլ ընկնի, փառք ու բարի համբավ կգտնի: Իմաստուն երիտասարդը նման է խորարմատ ծառի, որին փորձությունների հողմերը թեպետև շարժում են, բայց կործանել չեն կարող:

Բ. Մեծ տոհմի պատկանող երիտասարդը, մանկությունից գեխության ու գեղծ վարքի սովոր լինելով, վերջում թշվառության մեջ է ընկնում և նախատինքի թիրախ դառնում աշխարհում: Որովհետև տոհմի պայծառության պատճառով առաջ եկած մեծամտությունը նրան չի թողնում խոնարհվել դեպի չափավորությունը, և սովորություն դարձած մոլությունն արգելում է լավ վարք ձեռք բերել:

Գ. Ազնվական երիտասարդներից շատերն իրենց հարստության պատճառով բազում մոլություններ են սովորում, բայց հարստությունը կորցնելով՝ մոլությունները չեն կորցնում:

Դ. Ջարմանալի է, որ աղքատների զավակները ջանում են դրամ ձեռք բերել, որպեսզի հարուստ դառնան, իսկ հարուստների զավակները դրամը վատնելու հետևից են ընկած, որպեսզի աղքատ դառնան: Եվ շատ են այսպիսիները, որ կորցնելով հայրական հարստությունը՝ շրջում են աղքատ ու կարոտյալ:

Ե. Երիտասարդական հասակը դյուրասահ է դեպի ամեն վայելք: Ուստի եթե նույնիսկ որևէ ավտորժելի բան երիտասարդին անմեղ թվա, տակավին պետք է կասկածի, իմաստուններից ու փորձառուներից խորհուրդ հարցնի և նրանց խրատի համաձայն վարվի:

Զ. Մարդ պետք է չհավատա սեփական անձին, որպեսզի չլինի թե ինքն իրեն խաբի, և պետք է չմոռանա սեփական կրթերը, որոնցից ինչ-որ ժամանակ խաբվեց, որպեսզի այլևս չխաբվի նրանցից:

Ճանապարհին անժանոթ որևէ ուղևոր հետևում է առաջնորդի. բայց զարմանալի է, որ դեպի ծերություն ճանապարհորդող երիտասարդը չի հետևում ծերերի առաջնորդությանը:

Է. Կա մարդ, որ սխալվում է, բայց դրանով ճանաչում է իր թերությունը, զգաստանում և դրանից օգուտ քաղում: Մարդ էլ կա, որ սխալվում է, բայց դրանով առավել է համառում իր կարծիքին և վնասվում: Որովհետև անգիտության սխալները դառնում են հանդուգն խելագարություն և չարաչար վնասում: Ուստի ոչ այնքան մեղադրելի է նա, ով սխալվում է, որքան նա, ով չի կամենում իր սխալները ճանաչել և ուղղվել. իսկ ով կամովին չի ուղղվում, ակամա վնասվում է:

Ը. Ուր չկա ապագայի կանխատեսություն, անցյալի փորձառություն ու ներկայի բարեկարգություն, միտքը գահավիժում է դեպի զանցանքներ գործելը: Բայց ով իր սխալը ճանաչում ու խոստովանում է, հանդիմանության արժանի չէ, քանզի սխալը ճանաչելն ու խոստովանելը նշան է նրա հոգու ազնվության: Եվ եթե այդ սխալով սովորեց գալիք արկածներից զուշանալ և իր ընթացքը բարեկարգել, որովհետև չկա մի ծայրագույն հանցանք, որ խոնարհ խոստովանությամբ ներելի չլինի, ապա ոչ ոք պիտի չվհատվի, թեկուզև վտանգների մեջ ընկած լինի, այլ անվեհեր սրտով ջանք թափի ազատվելու հնարներ գտնելու համար:

Թ. Այն երիտասարդները, որոնք պատվում են արգո ծերունիներին, որոնց իմաստուն է դարձրել բազում բաների փորձառությունը, իրենց ծերության շրջանում պատիվ ու հարգանք կգտնեն իբրև փորձառու և խոհեմ անձինք. որովհետև ինչ սերմանում է մեկը, նույնն էլ հնձում է:

Ժ. Մարդիկ երջանիկ կլինեին, եթե երիտասարդական հասակում ունենային փորձառու ծերերի

խոհեմությունը և ծեր տարիքում՝ առույգ երիտասարդի ուժը:

Երանի՜ թե երիտասարդները ծերերից խոհեմություն փոխ առնեին, և ծերերը երիտասարդներից՝ ուժ. որովհետև ծերը զգում է շատ բան, որ չէր զգում երիտասարդ ժամանակ, և երիտասարդը կարող է շատ բան, որ չի կարողանալու անել ծեր ժամանակ:

ԺԱ. Բարեվիճակ է այն մանուկը, որ հասակի զարգանալու և աճելու հետ զարգանում ու հարստանում է գիտելիքներով ու առաքինությամբ: Ծերության հետևանքով մարմնի ուժի պակասելու դեպքում էլ այդպիսինի խոհեմությունն ու առաքինությունը չեն պակասում:

ԺԲ. Երիտասարդները գոռոզ ու ինքնահավան են, որ վստահեցնում են իրենց, թե կարող են ամեն ինչ անել, և համարձակ խուժում են ամեն վտանգի մեջ և որոգայթն ընկնում: Աստված երբեմն երիտասարդներին թույլ է տալիս սխալվել, որպեսզի ճանաչեն մարդկային տկարությունն ու զգաստանան և այլևս սեփական ուժերին չվստահեն:

ԺԳ. Ծերերի սխալները դժվարությամբ են ուղղվում, որովհետև նրանց ծանր է թվում խրատներին անսալը, որով նմանվում են հինավուրց ծառի, որի ծռությունը ոչ մի հնարով չի ուղղվում: Ծերերն իրենց թերությունը ճանաչելու դեպքում էլ չեն կարողանում զգաստանալ, որովհետև վատ սովորությունը նրանց համար երկրորդ բնություն է դարձել: Նորահասակ երիտասարդները նման են մատաղատունկ ծառի և հեշտ են ուղղվում, եթե անսում են բարի խրատների:

ԺԴ. Եռանդուն երիտասարդներն ավելի խրատների կարիք ունեն, քան դրամի: Որովհետև եթե խրատված ու բարեկարգ են, եթե դրամ չունենան իսկ, նրանց համար բնավ դժվար չէ այն ձեռք բերել և օգտակար գործերի համար բանեցնել: Իսկ եթե դրամ ունեն, բայց անխրատ են, հնարավոր է, որ այն վատնեն մոլեկան գործերի վրա և ի վնաս իրենց՝ միշտ աղքատության մեջ մնան:

Իսկ աղքատության մեջ տառապող ծերերն առավել դրամի կարիք ունեն, քան խրատների, քանզի բազմամյա փորձառությամբ վաղուց արդեն խրատված են: Նաև այն, որ պատեհ չէ կարծել, թե դրամն անվայել գործերում կծառայի նրանց. այլ ավելի պետք է հուսալ, թե օգտակար գործերում կօգնի: Եվ որովհետև այլևս աշխատել ու դրամ վաստակել չեն կարող, որ ապահովեն իրենց կյանքը, ուստի վշտանում են, երբ խրատներ են լսում, և մխիթարվում են, երբ դրամ են ստանում:

ԺԵ. Երիտասարդներն առավել հակամետ են շռայլության, քան ժլատության, որովհետև հույս ունեն, թե երբ էլ կամենան, կարող են ունեցվածք ձեռք բերել: Իսկ ծերերը միշտ ավելի ժլատ են լինում, քան շռայլ, որովհետև հույս չունեն, թե կարող են ունեցվածք ձեռք բերել, երբ կամենան: Ուստի առած կա, թե ծերի մեջ բոլոր մոլությունները ծերանում են, բայց ազահությունը մանկանում է:

ԺԶ. Ծերերի մոլությունները նման են հնացած ախտերի, որոնք խիստ դժվարությամբ են ապաքինվում և կամ բնավ չեն ապաքինվում: Իսկ երիտասարդների մոլությունները նման են նոր սկիզբ առած հիվանդությունների, որոնք չնչին դարմանումներով կարող են բժշկվել:

ԺԷ. Երբ զգայական բաղձանքը գլուխ բարձրացնելով տիրում է կամքին, բանականության լույսը մթագնում է, և դարուփոսերը նրան հարթ ճանապարհներ են թվում: Եվ զարմանալի չէ, եթե երիտասարդները, զգայական ցանկությամբ հափշտակված, գահավիժում են տեսակ-տեսակ անկարգությունների մեջ. որովհետև նրանց մտքի լույսը մթագնել է՝ մարդկային մեր բնության ուղիղն ու վայելուչը տեսնելու, նրանցով ընթանալու և դեպի կորուստ կարապետող շավիղներից խոտորվելու համար: Առանց հոգին վշտացնելու հնարավոր չէ, որ մարդը մարմնական հաճույքներ վայելի: Ուրեմն՝ ով մարմնի հաճույք է փնտրում, հոգու համար վիշտ ու տանջանք է փնտրում:

ԺԸ. Եթե երիտասարդական առույգ հասակն իրեն կից համեստություն չունի, տեղին է այն իր բուն իմաստով խելագարություն կոչել: Որովհետև իրոք, իբրև խելագար երիտասարդը չի կարողանում բարու ու չարի միջև ընտրություն կատարել և վտանգների մեջ է ընկնում:

ԺԹ. Ով մոլիների հետ է կենցաղավարում, սակավ առ սակավ նրա առաքինական ամրությունը թուլանում է, և որովհետև դժվար է, որ խիստ առաքինի մեկը հաստատուն մնա ու չզայթակղվի, ապա է՛լ առավել դժվար է, որ երիտասարդ տարիքն անկործան մնա:

Պետք է փախչել այն երկրից, ուր առաքինություն չի բնակվում:

Ի. Որևէ ազնիվ կերակուր, լցվելով աղտեղի ամանի մեջ, անմաքուր ու նողկալի է դառնում: Առաքինի երիտասարդը, վատահամբավ մարդկանց հետ ընկերանալով, ինքը ևս վատահամբավ ու արհամարհելի է դառնում:

«Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր, եթե ոչ Քո խոսքերը պահելով» (Սաղմ. ՃԺԸ 9):

«Ուղիղ են այն երիտասարդի ճանապարհները, որ մաքրությամբ է ընթանում» (Առակ. Ի 11):

## Գ Լ ՈՒ Խ Ժ

## Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Մարդկային ցեղին հատուկ է ընկերոջը հայտնել սեփական մտածումներն ու զգացումները՝ հաճելի կամ տհաճ: Ուստի յուրաքանչյուր ազգի տրվեցին ծայնային նշաններ կամ բառեր՝ դրանցով արտահայտելու համար մտածումներն ու ներքին խոսքերը, և միայն քաղաքակիրթ ազգերին պարզակվեցին գրավոր նշաններ կամ գրեր՝ կերպավորելու և ցույց տալու համար բառերը կամ խոսքերը:

Եվ քանզի հնչական բառերն ու խոսքերն առժամայն ու ցնդելի են և օգուտ չունեն հեռավոր տեղերում գտնվող ու ապագայի մարդկանց համար, ուստի Աստծու մասնավոր պարզև համարվեցին նշանագրերը, որոնք մտքի խոսքը, դրա հետ նաև բանավոր խոսքը հեռավոր տեղերում գտնվող ու ապագայի մարդկանց են հասցնում և անցյալի ու ներկայի գործերը սերնդեսերունդ հավերժացնում:

Հրեշտակները գրի կարիք չունեն, որովհետև խոսելու պետք չունեն, այլ ինչ որ կամենում են հայտնել, այն տպավորում են միմյանց մտքերում: Անբան արարածները միտք ու խոսք չունեն, ուստի բանավոր խոսքն ու գիրը նրանց պետք չեն, որովհետև ինչ որ մեկը մյուսին հայտնելու կարիք է ունենում՝ բնության պահպանության համար, անհող ու անխոս ծայնային նշանով է կատարում:

Ուրեմն՝ միայն բանական ու քաղաքակիրթ մարդուն գիրը պիտանի եղավ՝ դրանով առաջնորդվելու հոգևոր ու մարմնավոր պետքերի մեջ: Աստվածային պատվիրանները նույնպես գրով դրոշմվեցին, ավետարանական ու առաքելական պատգամներն էլ գրով ավանդվեցին, և բովանդակ աշխարհի բոլոր օրինադրությունները, կարգերն ու կառավարությունը, ինչպես նաև մասնավոր անձանց դաշինքները, սակարկություններն ու առևտուրը գրով են իրականացվում:

Ուստի ով գիր ու ընթերցանություն սովորելն անպիտան է համարում, արհամարհում է Աստծու շնորհը, որովհետև գիրն Աստծու շնորհի ազդմամբ է պարզակվել մարդկությանը, նաև հավասարվում է անբան արարածներին, որովհետև մտածածը չի կարողանում գրով արտահայտել: Նույնիսկ անբաններից էլ անբան է, որովհետև նրանց գիր պետք չէ, իսկ սրան պետք է, բայց արհամարհում է ու չի սովորում:

Բ. Ով գիրք է կարդում, խոսում է մարդկանց հետ, որոնք աշխարհի սկզբից մինչև իր օրերն առնդհատ հաջորդությամբ ապրեցին աշխարհում, և լսում նրանցից այն, ինչ որ ժամանակին ասացին կամ արեցին կյանքի ընթացքում: Եվ նրանց խոսքերից ու գործերից խրատվելով՝ սովորում է վնասակար բաներն ատել և օգտակարները սիրել՝ անձը պահպանելու համար, ծախսորդությունների մեջ գորանալ և տարադեպ պատահարների մեջ անընկճելի մնալ, իր զգայարանների ու զգացողությունների մոլորություններն ուղղել, հոգու կրքերը, ցանկություններն ու բոլոր շարժումները բարեկարգել, խոկալ, կամենալ ու գործել բարին՝ երջանիկ լինելու համար:

Գ. Ով գիրք է գրում, խոսում է մարդկանց հետ, որոնք իր օրերից սկսած մինչև աշխարհի վերջը

հետզհետե աշխարհ են գալու, և նրանց սովորեցնում այն ամենն, ինչ կարևոր է մտքի լուսավորության ու բարքի ուղղության համար, ճանաչել տալիս մարդկության պարտավորությունն ու հարգը՝ առաքինությունը պատվելն ու մոլություններն ատելը, սեփական կարիքների ու օգտի համար ջանք թափելն ու աշխատելը՝ երջանիկ լինելու համար:

Ուստի ամենքին հարկավոր է գոնե գրաճանաչ լինել, որպեսզի իմանան, թե իրենք մարդիկ են:

Ավելի օգտակար զբաղմունք չկա, քան ընթերցանությունը:

Դ. Բնավ մի՛ գարմանա, թե ինչպես է, որ ոմանք գրքերով ուսում չեն փափագում. որովհետև ահա անասուններն էլ մարդկային կերակուր չեն կամենում:

Ե. Եթե մարդուց գիտությունը վերցվի, որևէ զանազանություն չի գտնվի մարդու և անասունի միջև: Ավելի ցանկալի է լինել աղքատ ու իմաստուն, քան տգետ ու մեծատուն:

Ով հարստանում է ունեցվածքով, բարեկամներին պակասեցնում ու թշնամիներին շատացնում է, իսկ ով իմաստությամբ է հարստանում, բարեկամներին շատացնում ու թշնամիներին պակասեցնում է: Նա է շատ հարուստ, ով շատ բան գիտի, և նա է շատ աղքատ, ով ոչինչ չգիտի:

Զ. Ով անմահություն է կամենում, թող ջանա լինել մեծագործ իշխան կամ իմաստուն գրող, որովհետև սրանց հիշատակը մահվանից հետո անմահ է մնում:

Է. Մարմնի քաղցը հագեցվում է սակավ կերակրով, իսկ մտքի քաղցը հագեցում չգիտի, որովհետև որքան ավելի է միտքը սովորում, այնքան մեծանում է նրա քաղցը, և երբ չի գտնում ուսանելի օգտակար բան, դիմում է վնասակար բաների, քանզի հագուրդ չունի:

Ուստի պետք է մտքին անպակաս տալ հոգեշահ կերակուր՝ նրա քաղցը հագեցնելու համար, որպեսզի չլինի թե մարդն ընկնի վնասակար բաների մեջ և հոգևոր կյանքից զրկվի:

Ը. Փոփոխ կերակուրներն այսորժակը գրգռում են ուտել տալու համար, որպեսզի մարդը մարմնով ապրի. պես-պես գիտությունները միտքը դրդում են աշխատելու, որպեսզի մարդը հոգով ապրի, և եթե մեկի միտքը մի բանից ծանծրանա ու տաղտկանա, այլ գիտությամբ զբաղվի և օգուտ ստանա:

Թ. Իմաստուն է ոչ թե նա, ով գիտի ինչքան է պետք, այլ ով գիտի ինչքան է կարելի իմանալ:

Ժ. Իմաստուններին հատուկ է շատ իմանալ ու սակավ խոսել, ինչպես որ տգետներին հատուկ է շատ խոսել ու սակավ իմանալ կամ ոչինչ չիմանալ:

ժԱ. Ավելի լավ է աչքի կուրությունը, քան մտքի. աչքով կույրը չի տեսնում արևի լույսը, մտքով կույրը չի ճանաչում իր անձը: Քանզի ամեն ոք պիտի իմանա, թե մարդու կյանքն ինչ նպատակի է կարգված: Իսկ եթե չգիտի ու չի կամենում իմանալ, ասես խավարում մոլորված շրջում է և իրեն առաջնորդելու համար այլևս ուղեցույց չի փնտրում՝ նմանվելով լայնատարր ծովում գտնվող նավի, որը չունի ճարտար, աստղերի ընթացքին քաջատեղյակ և կղզիներին ու սահմաններին ծանոթ ղեկավար. և ի՞նչ է սպասում նրան, եթե ոչ խորտակում ու կործանում:

ժԲ. Նախընտրելի է իմաստունների հետ տրտմել, քան անմիտների հետ զվարճանալ. որովհետև իմաստուններից կարելի է սրտի մխիթարություն ստանալ, իսկ անմիտներից՝ միայն մտքի տանջանք:

ժԳ. Միայն իմաստուններն ունեն երջանիկ կյանք: Որովհետև եթե տգետն ապիկար մեկն է, գուցե ուրիշներին հպատակ դառնա, եթե ազնվական է, գուցե ամբարտավանանա, եթե հարուստ է, գուցե մոլի դառնա մարմնական հաճույքներում, եթե աղքատ է, գուցե աչք դնի օտարների ունեցվածքին, եթե ուժեղ է, գուցե հանդուգն դառնա. քանի որ բանականության լույսը տգիտության խավարով մթազնել է, արքունական կուռ պողոտան գտնել չի կարողանում, այլ աջ կամ ձախ է խտորվում: Իսկ իմաստունը, քանի որ իրեն իբրև առաջնորդ ունի բանականությունն ու իբրև նպատակ՝ առաքինությունը, ընթանում է անխտոր ու անսասան:

ժԴ. Նույն վիճակը չունեն իմաստունն ու տգետը: Եթե իմաստուն մեկը մեծամեծ սխալներ իսկ գործի, տակավին կարող է իրեն ուղղել: Իսկ տգետը, եթե փոքրիկ վրիպում իսկ թույլ տա, անուղղելի կմնա, եթե իմաստուններից մեկը ձեռք չմեկնի նրան, որովհետև տգետը չգիտի, թե ինչպես է պետք գլորված վիճակից կանգնել:

ժԵ. Տգետներն իմաստունների վրա զարմանում են, թե ինչպես են կարողանում մեծ ու սքանչելի

գործ գլուխ բերել, որովհետև կարողություն չունեն նրանց մտքի խորախորհուրդ դիտողականությանը հասու լինելու՝ գտնելու համար այն նախապայմանները, որոնց դեպքում գրեթե հարկադրաբար է առաջ գալիս այդպիսի գործը:

Իմաստունները տգետների անմիտ գործերի վրա չեն զարմանում. խելամուտ են ու գիտեն, որ տգետներն արագորեն, առանց գործի նախապայմանները քննելու էր, որ գործի կատարմանը ձեռնամուխ եղան:

ԺԶ. Իզուր են մարդիկ տագնապում՝ հատելով ծովում ու ցամաքում ոսկի ձեռք բերելու համար: Որովհետև եթե ձեռք բերեին իմաստություն ու առաքինություն, որոնք յուրաքանչյուրի դեռերի մոտ են, կամ դյուրավ կստանային ոսկին, կամ ոսկին նրանց պիտանի չէր լինի, և իզուր չէին աշխատի:

ԺԷ. Եթե իմաստունները շատ լինեին, և տգետները՝ սակավ, վաղուց արդեն տգետները հալածված կլինեին. բայց այժմ իմաստուններն են տգետներից հալածվում, որովհետև խիստ սակավաթիվ են:

ԺԸ. Մարդուն մարդ է հարկավոր, որ մարդուն մարդ դարձնի. եթե մարդը մարդ չլինի, մարդուն մարդ չի դարձնի:

ԺԹ. Առաքինությանը հատուկ է իր վարձն անկորուստ պահել. իմաստուն ու առաքինի մեկը, եթե նույնիսկ ծառայության տարվի, տակավին բարության շնորհքը կփայլի նրա դեմքին, սիրելություն ու պատիվ կգտնի իբրև իր առաքինության ու իմաստության վարձ և երջանիկ կլինի:

Ի. Իմաստունների քաղցր ու համոզիչ խոսքերն ավելի են հաղթում թշնամիներին, քան պատերազմողների ահավոր ռումբերը:

ԻԱ. Ավելի լավ է սիրելի լինել սակավաթիվ իմաստունների, քան թե բազում տգետների:

ԻԲ. Թող գիտունը չհպարտանա իր պայծառ մտքով, որովհետև տակավին դյուրասահ մարմնի մեջ է:

ԻԳ. Այս աշխարհն աղտեղի լիճ է, նրանում կա մուտք ու ելք, մարմինդ՝ նավ, և խելքդ՝ թի, վարի՛ր դու թիդ, որ ելնես:

ԻԴ. Մարդիկ սոսկում են, երբ արեգակը փոխում է իր բնությունը, սփռում խավարային մեգ, և երբ իմաստունը, ինքն իրեն դավաճանելով, մոլեկան գործ է անում: Լավ է սովորել լավ գործել, քան լավ խոսել:

ԻԵ. Ո՞վ է, որ չի մեղադրի երկրին, որ համբերում է՝ կրելով մի իմաստունի, որի խոսքերը բարի են, իսկ գործերը՝ հոռի. առաքինության մասին ճոռոմաբանում է լսողներին զարմացնելու համար և ժողովրդին գայթակղեցնելով՝ մոլություններ գործում:

Ցորենը փոխարկվում է որոմի, եթե մի իմաստուն դառնում է մոլի:

ԻԶ. Գիտության արդյունքը վարքի ուղղությունն է. ուրեմն եթե որևէ գիտուն բարի վարք չունի, արդյունքից խոտորված է և իրականում գիտուն չէ, որովհետև գործի պսակիչն ու տեսակավորիչը արդյունքն է:

ԻԷ. Սակավ ամոթ չէ իմաստունին, եթե որևէ անգրագետ նրանից ավելի բարեգործ է: Ճշմարիտ իմաստունը նա չէ, ով բազում գիտություններ է սովորել, այլ նա, ով նաև սովորել է բարիք գործել:

Ջարմանալի է, որ գիտուններից ոմանք խոսելիս ու գիրք գրելիս արթնամիտ ու ուշադիր են, որպեսզի չսխալվեն, բայց բարքի գործերում չեն ջանում զգուշանալ չվրիպելու համար:

Մարդուն ի՞նչ օգուտ է շատ բան գիտենալն ու ինքն իրեն չճանաչելը:

ԻԸ. Իմաստունն իր չարաչար վարքով շատերին ավելի է գայթակղեցնում, քան մի մոլի գռեհիկ: Որովհետև գռեհիկն ամենքի աչքին անարգ է, և ոչ ոք չի կամենում նրան նմանվել, իսկ իմաստունը հայելի է և հասարակության համար նպատակակետ, որին շատերն են նմանվում և նրա մոլորության ետևից ընթանում:

ԻԹ. Շատերը բազում գրքեր գրեցին և տվեցին աշակերտներ՝ նրբամիտ ու գիտուն, այո՛, բայց ոչ՝ բարի ու առաքինի: Որովհետև գրքերը գրելիս այն բանի համար չաշխատեցին, որ դրանք ընթերցողները բարիք գործել սովորեն ու բարի լինեն, այլ միայն փքացած մտքով ջանացին իրենց գիտելիքները հայտնել:

Իհարկէ, մարդ պիտի սովորի իմաստասիրական գրքերից ոչ այն բանի համար, որ միայն գիտուն հռչակվի, այլ մանավանդ որպէսզի բարի լինի: Քանզի գիտուն ու առաքինի մարդը նման է մաքուր ոսկու՝ թանկարժէք ակո՛վ ընդելուզված ու զարդարված: Իսկ եթէ մարդ երկուսն էլ միաժամանակ չկարողանա ձեռք բերել, նախընտրելի է լինել բարի, քան գիտուն:

Լ. Նա է ճշմարիտ գիտուն, ով յուրաքանչյուրին օգտակարն է ուսուցանում: Իսկ ով գիտի, բայց ափսոսում է ուսուցանել իրենից խնդրողներին, ոչ միայն գիտեցածը կորցնում է, այլև ինքն իր դէմ է դուրս գալիս և բոլոր մարդկանց թշնամի դառնում: Որովհետև ոչ ինքն է վայելում ունեցած բարիքը և ոչ ուրիշներին տալիս: Այդպիսինին արժե խելագարների հետ շղթայել՝ որպէս սեփական անձն ու հասարակության օգուտը չճանաչողի:

ԼԱ. Ոչ ոք իրեն դժբախտ ու թշվառ չի համարում անժանոթ ու անհաս բարիքների պակասության կամ այնպիսի բարիքի պատճառով, որը կարծում է, թէ ունի, բացի նրանից, ով գիտեր որևէ բարեմասնություն, որ կարող էր ձեռք բերել, բայց չջանաց այդ անել, և կամ ուներ և անհոգությամբ կորցրեց:

Ուստի տգետները, ովքեր անհասանելի են համարում առաքինությունն ու շնորհը, որոնք կարող էին ձեռք բերել, և մոլիները, որոնք իրենց զրկված չեն համարում նախկինում ունեցած, բայց կորցրած հոգևոր բարիքներից, արդարև դժբախտ ու թշվառ են: Եթէ սրանք մտածեին, թէ առաքինություն գործելն ու շնորհի ստանալն անհնարին չեն, կամ թէ հոգևոր որևէ բարեմասնություն կորցնելն այս կյանքի բոլոր բարիքները կորցնելուց ավելի չար է, հիրավի կցանկանային մահու չափ աշխատություն ու վիշտ կրել դրանք ստանալու համար, քան թէ մի օր իսկ ապրել առանց դրանց: Ուրեմն՝ ով կամենում է տգետների մեջ առաքինության ու շնորհի հանդէպ սիրո բաղձանք արթնացնել, թող նրանց ծանոթացնի առաքինությանը, վերջինիս հնարավոր լինելը ցույց տա և մոլիներին զգալ տա հարզը բարու, որից զրկվեցին, որպէսզի նրանց ցանկությունն ինքնական շարժվի՝ առաքինություն ու շնորհի ստանալու և կորցրած բարիքները նորից ձեռք բերելու համար:

ԼԲ. Թե Աստված ինչ հայտնեց և որքան հայտնեց, միայն այն է, որ մարդիկ պարտավոր են իմանալ, իսկ ինչ որ կամեցավ ծածկել, դրանք պետք չէ քննել: Աստծու գաղտնիքները քննելն անպատիժ չի մնում, որովհետև Աստված շատ բան ծածկում է մարդկանց տկարության և իր անսահման բարության ու իմաստության պատճառով: Մեզ օգտակար է իմանալ այն, ինչը կախում ունի մեր անձնիշխան կամքից, այն է՝ խորհել ու գործել բարին: Իսկ ինչ մեզանից կախված չէ, դրանց գիտությունն Աստված միայն իրեն պահեց, և ո՛չ պակաս օգուտ է մեզ համար դրանք չիմանալը:

ԼԳ. Մարդկանց գործերի նախապատճառներն են զգայությունը, իմացականությունը, կամքն ու կիրքը: Եթէ իմացականությունը գիտության լույսով պայծառացած չլինի, զգայությունը նրան իր կրքի ետևից կշեղի, վերջինս էլ կշեղի կամքը, որը գործողության դրդիչն ու բուն պատճառն է: Իսկ շեղված կամքի ներգործությունը, մարդուն մարդկային կենցաղավարությունից օտարացնելով, զցում է անբանների կարգը, որովհետև մարդն անբաններից տարբերվում է միայն իմացականության լույսով ու ուղիղ կամքով, իսկ բանականության մթագնելու և կամքի շեղվելու դեպքում մարդու և անասունի միջև խտիր չկա:

Փորձով հայտնի է, որ խելագարներն ու մանուկները, որոնցից առաջինների իմացականությունը խանգարված է, իսկ վերջիններինը դեռ չի հասունացած, ինչ որ անում են զգայության դրդմամբ են անում, ուստի օրենքը նրանց արժանի չի դարձնում պատիժների ու վարձատրության, որովհետև նրանց գործերը ոչ թէ մարդկային, այլ մարդու գործեր են, այսինքն՝ դրանք կատարում են ոչ թէ գիտակցաբար ու ազատ կամքով, այլ կուրորեն ու ասես բնազդաբար:

Ուրեմն՝ պետք է անհրաժեշտ գիտելիքներով լուսավորել մտքի աչքերը, որպէսզի չլինի թէ իբրև կույր մուրացիկ՝ զգայության առաջնորդությամբ հածելով՝ միտքը շրջի հացի փշրանքների համար, այսինքն՝ մարմնական հեշտանքի համար՝ զգայական կրքերի դռների մոտ, և իսպառ սովալլուկ լինի: Ով գիտության լույսից զուրկ է, մտքով կույր է, շրջում է քաղցած և ապրում անբանի պես:

ԼԴ. Տեսական գիտելիքը մարդուն խոսքի մեջ իմաստուն է դարձնում, իսկ գործնականը՝ ձեռքի գործերում բազմահնար. առաջինը դեգերում է բնականի կամ գերբնականի շուրջ, մինչև երկրային

զգայություններից բարձրանում է ճանաչելու իմանալի աշխարհը, իսկ երկրորդը զբաղվում է արհեստներով ու նյութերով, մինչև իր ստեղծածին բնական իրի տեսք է տալիս:

Սակայն ո՛չ տեսականը և ո՛չ էլ գործնականը մարդուն բարի չեն դարձնում, որովհետև հնարավոր է, որ շատերը տեսական ու գործնական գիտություններում քաջավարժ լինեն, բայց վարքով՝ մոլի: Իսկ մարդուն բարի է դարձնում բարոյական գիտությունը: Որովհետև այլ գիտություններն իրենց հերթին միտքը կատարելագործում են դեպի ճշմարիտը, միտքն էլ իր հերթին՝ կամքն ուղղում դեպի բարին, և մարդիկ Աստծուց վարձատրվում կամ պատժվում են կամքի և ոչ թե մտքի գործողությունից: Ուստի պետք է բարոյական գիտելիքներ ձեռք բերել կամքը դեպի բարին ուղղելու համար:

«Իմաստությունն ավելի շատ է օգնում իմաստունին, քան քաղաքում գտնվող տասը իշխան» (Ժող. է 20):

«Ձանց անելով իմաստությունը՝ նրանք ոչ միայն վնաս կրեցին բարին չճանաչելու համար, այլև աշխարհում անմտության հիշատակ թողեցին» (Իմաստ. Ժ 8):

«Ով թաքցնում է ատելությունը, նա հայտնի է դարձնում նենգությունը» (Առակ. ԺԷ 2):

«Խելք ձեռք բերողը սիրում է իր անձը, & իմաստություն պահողը բարիք է պահում» (Առակ. ԺԹ 8):

## Գ Լ ՈՒՆ Ժ Ա

## Ա Յ Ս Կ Յ Ա Ն Ք Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ա. Մարդը երկու վիճակ ունի, մեկը՝ այս կյանքինը, մյուսը՝ հանդերձյալինը: Եվ սրանցում վայելած բարիքները բարերար Աստծու պարգևն են: Որովհետև ինչպես որ Աստված Ինքը ստեղծեց մարդուն, այդպես էլ նրան անհրաժեշտ բոլոր բաները չափով, կշռով ու կարգով, Իր առատ ունեցվածքից, Ինքը շնորհեց և ամեն օր շնորհում է յուրաքանչյուրի օգտի համար. որովհետև ով տալիս է լինելը, տալիս է և լինելուն հետևող բաները:

Այս երկիրն էլ, իբրև բարելից սեղան, զարդարեց մարդկանց վայելքի համար և ընդհանուր բարիքները՝ լույս, օդ և անձրևի ջուր, որոնք խիստ հարկավոր ու կարևոր են, ամենքին միապես տվեց:

Իսկ մասնավոր բարիքները միայն Իրեն վերապահեց տալ նրան, ում կամենում է, որքան կամենում է, երբ կամենում է, ինչպես և կամենում է. թե՛ բնական բարիքները, այսինքն՝ մարմնական կյանքի տևողությունը, առողջությունը, ուշիմությունը, ուժեղությունը և այլն, և թե՛ ստացական բարիքները, այսինքն՝ իշխանությունը, փառքը, հարստությունը և այլն: Սրանք պարզև են տրվում ոչ թե մարդկանց կամքով, այլ Աստծու կարգադրությամբ՝ ըստ այսմ. «Բարձրյալն է տիրում մարդկանց թագավորությանը և այն պիտի տա, ում որ կամենա» (Ղան. 7 29):

Քանի որ աշխարհի բարիքներն ու վայելքները ներկա են, զգալի ու չափավոր, եթե մեկը կամենում է նրանցից մեկնումեկն ունենալ, ապա այն պետք է ուրիշից վերցվի: Եվ կամ՝ ինչ որ մեկն ունի, ուրիշն այն նույն քանակով չունի, և երբ շատերը ցանկանում են միևնույն բանն ունենալ, իսկույն ծնվում են վեճեր ու խռովություններ, որովհետև ստիպված են լինում միմյանցից խլել ու հափշտակել այն, ինչը կամենում են ունենալ:

Ուստի եթե Աստված մարդու կամքին թողներ աշխարհի բարիքներն ունենալը, ինչպես կամենում են, որքան կամենում են և ուր կամենում են, այս աշխարհն ավազակների ու հափշտակողների հրապարակ կլիներ, և ամենքը զրկող ու անհրավ կլինեին: Ուժեղները տկարներին կհաղթեին, և տկարներն էլ միաբանվելով ընդդեմ ուժեղների կելնեին, մինչև որ միմյանց ջնջեին երկրից: Որովհետև զգալի առարկան ներկա դառնալով յուրաքանչյուրի զգայական բաղձանքը շարժում է դեպի իրեն սիրելի ու ձեռք բերելը:

Իսկ հանդերձյալ կյանքի հավիտենական ու երկնային բարիքները, որոնք իմանալի ու անչափ են, Աստված հանձնեց մարդու կամքին, որպեսզի ով կամենա ու խնդրի, նրան տա: Ինչպես երբ Ջեբեղեոսի որդիները` Հակոբն ու Հովհաննեսը, խնդրեցին երկնքի արքայության փառքի մեջ Քրիստոսի աջ ու ձախ կողմերում նստել, Քրիստոսն ասաց. «Ես չէ, որ պիտի տամ, այլ տրվելու է նրանց, որոնց համար պատրաստված է» (*Մարկ. Ժ 40*): Այդ փառքն ամենքի համար է պատրաստված, բայց Աստված կամենում է, որ ամենքը գան դեպի ճշմարտության գիտությունն ու այն խնդրեն: Եվ քանի որ ամենքը չէ, որ գալիս ու խնդրում են, ուստի տրվում է միայն նրանց, ովքեր խնդրում են: Ջեբեղեոսի որդիներն այն խնդրեցին ու Տիրոջից ստացան:

Բայց Աստված իր կողմից նախ յուրաքանչյուրին ծրի տալիս ու պարզում է բավական շնորհ, որով զորանալով` կարողանան արժանանալ առավելագույն շնորհի, մինչև փառքին հասնելը` ըստ այսմ. «Ողորմություն ու ճշմարտություն է սիրում Տեր Աստվածը մեր, որ շնորհք ու փառք պիտի տա» (*Մատթ. 29 12*): «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի» (*Հովհ. Է 37*): «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա՛, վաճառիր ինչ ունես ու աղքատներին տուր» (*Մարկ. Ժ 21*):

Որովհետև արքայության փառքն այժմ մարդու զգայարաններին չի ենթարկվում, որ դրանք մարդու ցանկությունը շարժեն այն խնդրելու համար, այլ միայն ընդունվում է հավատի զորությամբ և տեսանելի դառնում հոգու աչքով: Ուստի ով ամուր հավատով ու սիրով է այն խնդրում, գտնում է ու վերցնում:

Քանզի եթե այս աշխարհի բարիքների պես հավիտենական բարիքներն էլ Աստված ինքը բաշխեր նրանց, ովքեր չեն խնդրում իրենից, ապա ուրեմն ամենքին էլ միապես պիտի տար: Սակայն այդ ժամանակ միմյանցից զատվելով չէին տարբերվի խնդրողներն ու չխնդրողները, չարերն ու բարիները, հավատացյալներն ու անհավատները, մանավանդ ի դերն կելնեին շնորհի` հավատի ու առաքինությունների արդյունքները:

Ուրեմն անարգվածները չեն կարող Աստծուն մեղադրել, թե անարգվեցին. քանզի նրանց անարգության պատճառն Աստված չէ, այլ իրենք, որ չկամեցան և ըստ արժանվույն չխնդրեցին. որովհետև գրված է. «Խնդրեցե՛ք Աստծուց, և Նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնե՛ք» (*Մատթ. Է 7*):

Ուստի Աստված Ինքը ասես Իր ձեռքով տեսակ-տեսակ ճանապարհներով առաջնորդեց մարդկային ցեղին դեպի երկնային բարիքները` բնական ու գրավոր օրենքներով, տեսիլքներով, հրաշքներով, նահապետների ու մարգարեների օրինակներով ու խրատներով, վերջում էլ` մեր Տեր Քրիստոսով, որպեսզի չասեն, թե չգիտեինք:

Այլև մարդու բնության մեջ դրեց անմահության, փառքի ու հանգստյան փափագ, որն այս կյանքում մարդն իրականացնել չի կարող. որովհետև ամեն ոք կամենում է ապրել, փառքը շատացնել և անվախճան ժամանակով հանգիստ վայելել: Ահա Աստված խոստացավ այդ տալ, որովհետև մարդկանց համար երկնքում պատրաստված են անմահ կենդանություն, անխոնարհելի փառք ու անտրտում հանգիստ, միայն թե կամենան և ըստ արժանվույն խնդրեն դրանք, ինչպես պետք է խնդրել` ըստ այսմ. «Ով խնդրում է, ստանում է, և ով փնտրում է, գտնում է» (*Մատթ. Է 8*):

Արդ, եթե մեկն այս կյանքի վիճակում ապրի` ըստ Աստծու կամքի, ամեն ինչում նրանից գոհանալով, և բավարարվի նրանով, ինչն Աստված կարգեց, չափեց ու տվեց յուրաքանչյուրին նրանց օգտի համար, և առաքինական գործերով աշխատելով` խնդրի երկնքի արքայությունը, հանդերձյալ կյանքի վիճակում այն աներկբայորեն կգտնի:

Դարձյալ` եթե այս կյանքում Աստված աշխարհի բարիքներն ամենքին միօրինակ տար, աշխարհի



կարգն ու կառավարությունը կեղծվեին: Եվ եթե բոլոր մարդկանց նույն վիճակում ու կարգում միշտ անփոփոխ պահեր, մարդիկ կկարծեին, թե բնությունից ունեն դրանք՝ իբրև սեփականություն. և այդ- ժամ հարուստներն ու ուժեղները հպարտանալով հանդգնություն ձեռք կբերեին, իսկ տկարները հու- սահատվելով կսրտաբեկվեին: Եվ եթե բոլորի խնդրանքները կատարեր, շատերն Աստծուց բազում անարժան բաներ կհայցեին՝ ի վնաս իրենց և ընկերների:

Իսկ եթե երբեք որևէ մեկի թույլ չտար իր խնդրանքների ու բաղձանքների կատարմանը հասնել, մարդկանց կամքի ազատությունը խափանած կլիներ:

Ուրեմն՝ Աստծու մեծ իմաստության ու բարերարության նշան է այս, որ Իր կամքին հանձնեց այս կյանքի բարիքները տալը, ում որ կամենում է, որպեսզի մարդիկ միմյանց հետ խաղաղ կյանքով ապ- րեն: Իսկ երկնային կյանքի բարիքները մարդու կամքին հանձնեց, որպեսզի տա նրանց, ովքեր կխնդրեն դրանք:

Որովհետև երկնքում մարդու կամքը միաբանվում է Աստծու կամքի հետ, և ծայրագույն բարին, որ այնտեղ վայելում են, ոչ ոքից չի պակասում, որովհետև անհուն է և միապես հագեցնում ու բավարա- րում է ամենքի իղձն ու փափագը: Ինչ որ ունի մեկը, նույնն ունի և մի ուրիշը, և երբ մեկն ունի, ուրիշից չէ, որ վերցվում է, և բոլոր երանելիներն անթերի են վայելում այդ բարին, մինչև այլ բան չկամենալն ու այլ բանի կարիք չունենալը, որովհետև կան բոլոր բարիքները: Ուստի այնտեղ ո՛չ նախանձ կա, ո՛չ ա- տելություն, ո՛չ զրկանք և ո՛չ հափըշտակություն:

Բ. Սրանից ավելի աղետալի ի՞նչ վիճակ կա, որ մեկը ծննդյան օրվանից մինչև մահվան օրը խար- դախ դաստիարակի ձեռքում լինի. ահա այս իսկ է ամեն մարդու վիճակը: Որովհետև մարդը ծնվում է իբրև մի տխմար մանուկ, և շուտով սնուցելու համար նրան իր գիրկն է առնում այս պատրողական աշ- խարհը, որի աչքերը սիրանշմար են, իսկ միտքը՝ չարահնար. շուրթերը քաղցրավենիքի պես անուշակ են, իսկ խոսքերը՝ լեղուց էլ դառը. կերպարանքը նման է սիրելիի, բայց սիրտը՝ մահաբեր թշնամու. ա- տամներն ախորժելի են, իսկ խածվածքը՝ անբուժելի. նրա ձեռքը նագելի է, բայց ապտակը՝ երկաթյա:

Երբ մատի ծայրով մեկին քաղցրության համը ճաշակել է տալիս, իսկույն նրա կոկորդը լցնում է դառը  
լեղիով: Ոմանց խեղությամբ է վտանգում՝ մանուկ հասակում, ոմանց՝ ծաղիկ հիվանդությամբ՝ երիտասարդ հասակում, ոմանց՝ խե- լագարությամբ՝ հասուն տարիքում, ոմանց՝ աղքատությամբ՝ տկար ծերության օրոք, ուրիշների էլ տա- ռապեցնում է դաժան ծառայության մեջ՝ կյանքի բոլոր օրերին:

Բայց առավել չարն այն է, որ ամենքը թեկուզ փորձով գիտեն նրա դավաճանությունը, սակայն տակավին չեն զգաստանում, ավելին՝ նրա հանդեպ սիրուց նաև իրենց կորստյան են մատնում:

Գ. Հիմար է նա, ով խաբվում է անցավոր բարիքներով: Որովհետև այս կեղծուպատիր աշխարհը թունավոր ժանգն իբրև ոսկի է ցույց տալիս, տրտմական կրքերը՝ իբրև հաճելի, վնասակար գործերն՝ իբրև օգտակար, և ովքեր հավատում ու խաբվում են, նրանց զրկում է հոգևոր բարիքներից: Ուստի պետք է աչալրջությամբ ապրել, որովհետև ովքեր անհոգ ննջում են, արհավիրքով են արթնանում:

Դ. Այս ի՞նչ անմտություն է, որ մարդիկ ծնվում են աշխարհում, բնակվում աշխարհում, սիրում աշ- խարհը, միշտ կամենում մնալ աշխարհում, սակայն խելամուտ չեն լինում աշխարհի բնությանն ու բարքին, որը եթե իմանային, համբերությամբ կտանեին աշխարհի վտանգավոր արկածներն ու չէին տրտնջա: Որովհետև ուրիշ ի՞նչ կարելի է հուսալ աշխարհից, եթե ոչ նեղություն ու վիշտ. որովհետև տալիս է այն, ինչ ունի. իսկ նա նեղություն ու վշտեր ունի. ուրեմն դրանք են աշխարհից ընդունելու աշ- խարհի որդիները:

Ե. Մարդիկ լալագին աղաղակով են մտնում աշխարհ, բայց աշխարհից լուռ ու անձայն ելնում: Ա- սես այն օրից, որ մտան աշխարհ, նրա ցավագին կրքերի փորձն առան, և ամենքը մի ծայնով լաց ե- դան. բայց աշխարհից ելնելիս ասես փախչելով ազատվում են նրա տառապանքներից, ուստի լռում են ու ծպտուն չեն հանում՝ փախչողների սովորության համաձայն: Իսկ աշխարհի բնակիչները, տեսնե- լով նրանց փախուստը, գոռում-գոչում են, աղաղակ բարձրացնում, որ արգելեն, բայց նրանք, որ իրենց օձիքն աշխարհի ձեռքից ազատեցին, երբեք ետ չեն դառնում՝ նրանից չբռնվելու համար, այլ անդարձ

գնում են դեպի այնտեղ, ուր առաջնորդում են իրենց գործերի արդյունքները:

Զ. Ով աշխարհից զանգատվում է, կամ խելագար է, կամ խելագարությունից նոր զգաստացած: Որովհետև յուրաքանչյուր ոք իր կրթերից ավելի է վնասվում, քան աշխարհից: Եվ արդյոք ի՞նչ է աշխարհը, եթե ոչ երկնքում ու երկրում գտնվող զգալի գոյությունների պարունակություն: Եվ ահա Աստծու այս բոլոր արարածները բարի են, և նրանց մեջ խոտան չկա:

Որովհետև սկզբնատարրերը՝ հողը, ջուրը, օդն ու հուրը, միմյանց հետ համադրությամբ ու հատուկ զորությամբ, որն ակամա առաջ է գալիս նրանց միախառնումից, գոյացնում են մարդու կազմվածքը, և մարմինը բանական հոգով շարժվում է գործելու: Աստղերը սպասավորում են օրվա ու գիշերվա լուսավորությանը, հողը ծառայում է կենդանիների ու բույսերի սննդին ու աճմանը՝ մարդկանց խնամքի համար, գազաններն ու սողուններն օգնում են մարմնի բժշկությանը և այլ կարիքների: Ուրեմն ո՞ր մեկից մարդը զանգատվի. չէ՞ որ բոլորն էլ օգտակար ու պիտանի են: Ուրեմն մարդը վնասվում է իր սխալ դատողությունից և անկարգ ցանկություններից:

Ոսկին բարի բան է, քանի դեռ երկրի ընդերքում է, բայց ազահությունը տանջանքի գործիք այն դարձրեց: Գինին անմեղ բան է, քանի դեռ կարասում է, սակայն հարբեցողությունը խելագարության պատճառ այն դարձրեց: Կերակուրը տրվեց մարդկանց սնելու համար, իսկ որկրամոլությունը զեխության նյութ այն դարձրեց: Հագուստը մարմինը ծածկելու համար սահմանվեց, բայց փափկասիրությունը պճնանքի առարկա այն դարձրեց: Տունը համակեցության համար ստեղծվեց, բայց ամբարտավանությունն այն ընդարձակեց մինչև սնափառության աճումը: Մարմնական ցանկությունը բնավորվեց տեսակի պահպանման համար, բայց անողջախոհությունն այն վերածեց շնության անկարգ բաղձանքի:

Տեսա՞ր, ո՞վ մարդ, դո՞ւ ես, որ Աստծու բարի ու օգտակար պարգևները չարիք դարձրիր՝ ի վնասք անձի: Դու աշխարհի մասն ես և «փոքր աշխարհ» ես կոչվում, բայց քո անկարգությամբ մեծ չարիք ես դառնում աշխարհի համար: Աշխարհից իզուր ես զանգատվում, քանի որ դո՞ւ ես, որ տանջում ես քեզ իբրև թշնամի, զուցե թշնամուց էլ ավելի. որովհետև օտար թշնամին չի կարող քեզ չարչարել այնքան, որքան դու ես չարչարում: Ուրեմն զգաստացիր կամավոր խելագարությունիցդ և այսուհետև մի՛ բամբասիր Աստծու անմեղ արարածներին, այլ միայն քե՛զ:

Է. Անմիտն այն չարիքները, որ հարկավոր եղավ կրել իր կրթերի անկարգության պատճառով, վերագրում է երկնքին ու բողոքում նրանից և ուշադրություն չի դարձնում այն բանի վրա, որ կրակի մեջ ընկնողն այրվում է, փշերի մեջ թավալվողը՝ խոցոտվում: Ուստի և ամեն ոք, ում կրթերն անկարգ են, մոլություններ է գործում, իսկ ով մոլություններ է գործում, հարկադրաբար վնասվում է:

Ը. Տանջվող ու տառապող ամեն ոք կամ մեղապարտ է, կամ անմեղ: Եթե մեղապարտ է, պիտի համբերի, որովհետև իր գործած հանցանքների պատիժն իրավացիորեն է կրում: Իսկ եթե անմեղ է, նույնպես պիտի համբերի, որովհետև Տիրոջից նրան հատուցում է սպասվում այն խոշտանգումների դիմաց, որոնք անարդարացիորեն կրում է մարդկանց անիրավության պատճառով: Ուստի վայել չէ տառապողին իրավացիորեն թե հանիրավի բնությունից կամ Աստծուց զանգատվել, այլ տառապանքները համբերությամբ պիտի տանի՝ մտածելով, որ այս աշխարհի վշտերն ու տառապանքները փոփոխական ու անցավոր են և մշտնջենավոր հանգստի ու փառքի պատճառ:

Թ. Մարդը հանիրավի է տրտնջում Աստծուց, երբ չքավորում է կամ հիվանդանում և կամ որևէ ձախողության մեջ ընկնում: Որովհետև ունեցվածքը, առողջությունն ու հաջողությունները Տեր Աստծու կողմից ավանդ են տրված մարդկանց: Ուստի երբ պահանջում ու ստանում է իր ավանդը, ոչ ոք պիտի չտրտնի կամ տրտնջա, այլ մանավանդ պիտի գոհությամբ համբերի, որ երկար տարիներ ձրիապես վայելեց նրա պարգևները: Սրանով նա քաղցրացնում է Տիրոջ կամքը՝ վերցրածը նորից տալու, եթե այն օգուտ է մարդուն:

Ճ. Մարդիկ, որ աշխարհում ունեցվածք ու հարստություն, ստացվածք ու զավակներ ունեն, նրանց տերը չեն, այլ ավանդապահները, որովհետև ամեն ինչ Աստծունն է, ով բաժանում է յուրաքանչյուրին, ինչպես կամենում է: Ուստի ոչ ոք իրավունք չունի Աստծուց տրտնջալու, երբ Աստված նրանից իր ավանդը վերցնում և ուրիշին է տալիս: Որովհետև երբ Աստված տեսնում է, որ մեկը բարվոք չի գործա-

ծում դրանք կամ չի կամենում գործածել, նրանից իր ավանդը վերցնում է և տալիս ընկերոջը: Իսկ եթե նա բարվոք է գործածում, Աստված ուրիշ բարիքներ էլ է ավելացնում, և եթե մեկը սրանք էլ բարվոք չի գործածում, դարձյալ վերցնում է նրանից և տալիս ուրիշի: Ուստի եթե մեկը կամենում է երկար վայելել Աստծու պարգևները, թող դրանք բանեցնի Աստծու կամքի համաձայն: Իսկ եթե չար կերպով բանեցնի կամ վարանի բանեցնել, նորից իրեն ձեռնունայն կտեսնի:

ԺԱ. Ով այս կյանքում սգում ու տառապում է, հանդերձյալ կյանքում ուրախանում ու հանգստանում է: Այս պատճառով էլ այս աշխարհում եղած կյանքն Աստծու կողմից չսահմանվեց երկարատև լինել, որպեսզի մարդիկ երկար ժամանակ վշտեր կրելուց հուսաբեկ չլինեն: Այլ կարճատև ստեղծվեց, որպեսզի առանց տրտունջների կարողանան մինչև վերջ համբերել և նեղությունների սակավօրյա ժուժկալությամբ հավիտենական հանգիստ ու խնդություն ժառանգեն:

ԺԲ. Աշխարհի իշխանները, երբ մեղապարտներին պատժում են, նրանց հանցանքը հրապարակում են, որպեսզի մարդիկ չասեն, թե հանիրավի դատապարտեցին: Իսկ Աստված, քանի որ մարդասեր ու ամեն ինչում արդար է, երբ հանցավորին որևէ ձախորդությամբ պատժում է, չի կամենում, որ նրա հանցանքները հայտնի դառնան. որպեսզի հանցավորը չվարկաբեկվի մարդկանց մեջ: Քանզի աշխարհի իշխաններն իրենց անձերն են խնայում, իսկ Աստված՝ մեղապարտին:

ԺԳ. Ով իր վիճակից գոհ չէ, մեղանչում է Աստծու տեսչության դեմ, ով ըստ Իր անքնին խորհուրդների՝ քաղցրությամբ խնամում է ամենքին: Ոմանց թույլ է տալիս աղքատանալ, ոմանց էլ՝ ամենքի օգտի համար հարստանալ: Նախ՝ որովհետև ողջ աշխարհի կառավարումը պահանջում է ունենալ առաջնության ու հետնության ինչ-որ կարգ՝ ըստ իշխանության, հարստության, խոհեմության, քաջության և ըստ ուրիշ հանգամանքների ևս, որպեսզի փոխադարձաբար օգնելով միմյանց՝ մարդիկ իրենց կյանքը բարվոք խաղաղությամբ վարեն: Եվ ապա՝ որովհետև կարգերի տարբերությունն ու զանազանությունը սակավ չեն նպաստում ամեն մարդու՝ արժանանալու համար հավիտենական վարձատրությանը: Որովհետև ավելին ունեցողը, հոգևոր ու մարմնավոր բարիքներով երախտավոր լինելով նվազի հանդեպ, և նվազն էլ, բարերարությունների համար երախտագետ լինելով, նրանք երկուսն էլ միասին արժանի են դառնում հավիտենական վարձի: Ուստի եթե իշխանավորներն իրենց վիճակից դժգոհում են գործերի ու բազմաշխատ կյանքի ծանրության պատճառով, իսկ հպատակներն՝ իրենց աղքատության կամ քրտնաջան աշխատանքի պատճառով, արդարև մեղանչում են աստվածային նախախնամության ընդհանուր կարգի դեմ:

ԺԴ. Շատ անգամ մարդիկ վախենում են այնպիսի բանից, որից չարժեք վախենալ, և տրտմում մի բանի համար, որի համար պետք չէր տրտմել: Որովհետև վախենում են ձախորդություններից, երբ տեսնում են դրանց մոտենալը, և տրտմում, երբ չարիքներ են հասնում: Եվ չեն մտածում այն մասին, որ ձախորդություններն անցավոր ու փոփոխական են, և վայել չէ մարդուն, որն անմահական հոգի է ժառանգել, վեհերոտ լինել ու ցավերից տրտմել:

ԺԵ. Ջարմանալի ոչինչ չկա, որ մարդիկ հաջողության կորստի համար մտահոգվում ու տրտմում են, իսկ անմեղության կորստի համար բնավ չեն մտահոգվում. որովհետև ամբողջովին մարմին դարձած՝ մարմնականն են միայն տեսնում և բնավ չեն հոգում աստվածայինի ու հոգևորի մասին: Ուստի արժանապես են զրկվում այստեղ մարմնավոր բարիքներից և այնտեղ՝ հոգևոր փառքից:

ԺԶ. Ով իր հաջողության ժամանակ սրտի միամտությամբ ծառայում է Աստծուն, իր ձախորդության ժամանակ իրեն ձեռք մեկնող և օգնական է Նրան գտնում: Թեպետ մարդիկ Աստծուն բազում անգամ թողնում են, բայց Աստված նրանց ոչ մի անգամ չի թողնում:

Աստված երբեմն թույլ է տալիս, որ մեկն ընկնի ինչ-ինչ վտանգների մեջ, որպեսզի մի փոքր խրատվելով՝ ուղղության գա: Երբ տեսնում է, որ դրանցով չի զգաստանում, թողնում է, որ հանդիպի առավել ծանր ու դաժան վշտերի: Եվ եթե սրանցով էլ բնավ չի խրատվում, նրան աչքաթող է անում, և որպես արագընթաց սուրհանդակ՝ նրան հասնում են անհնարին կորուստ ու ապականություն:

ԺԷ. Դժբախտություններն ու վշտերը մարդուն որպես խթան տրվեցին՝ թմրությունից արթնանալու և հասկանալու, որ այս աշխարհը ոչ թե երջանկության վայր է, այլ նեղության ու տառապանքի:

ժԸ. Ով ապրում է աշխարհում, անհնար է, որ իր վիճակում անփոփոխ մնա, այլապես աշխարհը պիտի փոխի իր բնությունը: Որովհետև շատ անգամ աշխարհը մի ձեռքով տալիս է, իսկ մյուսով վերցնում, մի աչքով ուրախացնում և մյուսով լացեցնում: Ուստի պետք է փքվել, երբ մեկին հաջողություններ է տալիս, և տրտմել, երբ վերցնում է դրանք, որովհետև այս է նրա բնությունը՝ լինել դյուրափոփոխ: Ով հույս ունի միշտ հաջողության մեջ մնալ, թող նախ տիրի բնությանն ու ժամանակին. իսկ քանի որ ընդունակ է դրան, մեկի ունեցած հաջողություններին թող չվստահի:

ժԹ. Անցած հաջողությունները, ձախորդության ժամանակ հիշվելով, վշտերը բազմապատկում են, և անցած ձախորդությունները, հաջողության ժամանակ հիշվելով, բերկրանքը շատացնում են: Բայց երկուսում էլ պետք է զգաստ լինել, որպեսզի չլինի թե բարեհաջող դիպվածները հանդգնության առիթ դառնան, և ձախորդ պատահարները տեղի տան հուսահատության:

Ի. Թե ծնունդը ծյունն ու անծրեղ պակասում են, ամռանը աղբյուրները ցամաքում են: Թե մարդկանց ձախորդ պատահարներն իսպառ պակասում են, հաջողության ժամանակ լեզուները գոհանալուց դադարում են:

ԻԱ. Չարերի հաջողությունը կարճատև ու անհաստատ է, որովհետև փայլակների կամ ասուպների մնան փառքով փոքր-ինչ փայլում են, բայց իսկույն ընկնում ու անհետանում են: Աստված երբեմն չարերին թույլ է տալիս հաջողություններ ունենալ և անիրավություն գործել որևէ բարի նպատակի համար, որպեսզի առաքինիներին սովորեցնի վշտերն արիաբար կրել, որով նրանց վարձն ու փառքն աճում են:

ԻԲ. Դժբախտություններն ու անհաջող ելքերը մարդուն շատ անգամ այնպես անզգա են դարձնում, որ մինչև իսկ թույլ չեն տալիս իր օգուտը ճանաչել: Բայց ով իմաստուն ու նախատես է, իսպառ չի վհատվում, որովհետև գիտի տրտմությունը բարեխառնել և զգաստ ու անընկճելի մնալ: Անհաստատ մտքի նշան է անսպասելի պատահարների ժամանակ վրդովվելը, քանզի հաստատուն միտքը դիպվածների փոփոխության դեպքում անփոփոխ է մնում:

ԻԳ. Այս կյանքի դյուրափոփոխ վիճակի մասին խոկումը բարեբախտությամբ հպարտացածների հանդգնությունը թուլացնում է և դժբախտության պատճառով վհատվածների բեկված սրտերը զորացնում: Որովհետև հիշելով, որ հաջողությունն ու ձախորդությունը, սրընթաց կառքի անիվների պես անդուլ պտտվելով, փոխաբառով հաջորդում են միմյանց. հարուստն իր հաջողության ժամանակ չափավորություն է ձեռք բերում, իսկ նվաստն իր ձախորդության ժամանակ քաջալերվում, և երկուսն էլ, հրաժարվելով ծայրահեղ խոտորումներից, գալիս են դեպի միջին սահմանը, որտեղ և գտնվում է առաքինությունը:

ԻԴ. Հարուստ կամ փառավոր լինելուց հետո թշվառության մեջ ընկնողին մնում է հանձն առնել այս երկուսից մեկը՝ կամ տրտմությունից մեռնել, կամ տրտմությանը հաղթել: Եվ քանի որ իր մահով չի կարող կորցրած հարստությունը կամ փառքը վերագտնել, ուստի լավ է, որ նա բոլոր վշտերն արհամարհի ու կենդանի մնա, որովհետև այս դեպքում հույս կա առաջին բախտավորությանը նորից հասնելու:

ԻԵ. Ուրախությունն առավել ներգործում է լեզվի, քան սրտի վրա, իսկ տրտմությունը՝ առավել սրտի, քան լեզվի: Որովհետև ուրախը սրտում ունեցած բերկրանքի չափից ավելի է խոսում, իսկ տրտմածը խոսում է սրտում կրած ցավերի համեմատ ավելի պակաս, մանավանդ հույժ տրտմածը շատ անգամ բնավ չի կարողանում խոսել:

Տրտմածը վշտերից ավելի շատ հանգստանում է իր սրտի ցավերը պատմելով, քան ուրիշներից սփոփանքի խոսքեր լսելով:

ԻԶ. Իմաստուն մարդը դժբախտություններին համբերում է. որովհետև մարդիկ իմաստություն նրա համար են սովորում, որ կարողանան նեղություններին համբերել: Իսկ ով համբերել չգիտի, իմաստուն է: Ինչպես որ ոսկին փորձվում է բովի մեջ, այդպես էլ իմաստունը՝ ձախորդ դիպվածներում:

Աստված իմաստունին երբեմն թույլ է տալիս վտանգների մեջ ընկնել, սակայն թույլ չի տալիս կորչել, այլ վտանգի մեջ է զգույն միայն նրա համար, որ նա վտանգի փորձառությամբ առավել իմաստուն

ու զգույշ դառնա:

Ով բազում մարդկանց մեջ է ապրում, թող զգուշավոր ու նախատես լինի, որպեսզի անակնկալ դիպվածներին ոչ ինքը վրդովվի, ոչ էլ ուրիշին վրդովեցնի:

ԻԷ. Չախորդությունը մեծ դաստիարակ է: Այն, ինչ մարդիկ չգիտեն բարեբախտության մեջ, այդ ամենը հարկադրաբար սովորում են իրենց նեղության ժամանակ. քանի որ ով ձախողությունների մեջ չի ընկել, ոչինչ չգիտի, որովհետև չի ճանաչում ո՛չ ուրիշներին, ո՛չ ինքն իրեն, ո՛չ չարերին և ո՛չ բարիներին:

ԻԸ. Բազում անգամ մարդն իր սխալներից ավելի է օգուտ քաղում, քան բարեհաջող գործերից: Որովհետև մեծամեծ գործերից ու հաջողություններից մարդ հպարտանում ու իմաստությունը կորցնում է, իսկ իր սխալներից խոհեն ու զգույշ դառնում, սովորում իր չափը ճանաչել ու ինքնավստահ չլինել: Բարեբախտ հաջողությունները միտքը հափշտակում են, իսկ ձախող պատահարները՝ զգաստության բերում: Բարի նշան է ցույց տալիս ինքն իրեն ամբաստանողը, որովհետև երևում է, որ իր նախկին անուղիղ ընթացքից զգաստացել է:

ԻԹ. Նախապես ուրիշներին պատահած ձախողակի դիպվածները ոչ սակավ են խրատում մարդկանց ու զգաստացնում, մանավանդ իշխաններին ու ղեկավարներին՝ մտածել տալով, թե այդ դաժան վախճանը կարող է իրենց էլ պատահել, ինչպես պատահեց ուրիշներին:

Լ. Անցած դեպքերի փորձառությունը, որ ներկա գործերի հմտությունն է, տալիս է ապագայի ծանոթությունը: Որովհետև ով ձախողակի դիպվածների ու վշտերի փորձն առել է, ավելի լավ գիտի ղեկավարել, քան նա, ով ոչ մի ձախողություն չկրեց:

Չախողությունը մեծամեծ մարդկանց փառքն ավելացնում է, որովհետև դրանով կատարյալ ու ամեն ինչում զգույշ են դառնում:

ԼԱ. Աստված երբեմն ձախողակի պատահարներով խրատում է մարդուն, ով անկարգ բաղձանքից հաղթված լինելով՝ մոտ է անկման, որպեսզի զգաստանա և այդպիսի ցանկությունից հեռու փախչի:

Ով իր տկարության ու կրքերի զորության փորձը չի առել, տակավին իմաստուն չէ, որովհետև իրեն չի ճանաչում և չգիտի իրեն պաշտպանել:

ԼԲ. Չախորդությունների ժամանակ վիատվելը վտանգի կշիռը ծանրացնում է և նրա ելքը դժվարացնում, իսկ արիությունը վտանգը թեթևացնում է և ելքը գտնել տալիս: Վշտերն ու նեղություններն անհնարին թշվառության են վերածվում, երբ հույսը հատնում է, և համբերությունը՝ վերանում: Չախորդություններից հաղթվելը պատշաճ է ոչ թե արի սրտին, այլ կնաբարոյին:

ԼԳ. Իրավացի նախատինքից ու վնասից զերծ չի մնում նա, ով վատ երկյուղով կամ ծուլությամբ հրաժարվում է այն բանից, ինչը նրա վիճակը պահանջում է անել թե՛ բարեբախտության և թե՛ դժբախտության ժամանակ:

Քանի դեռ վտանգը հեռվում է, պետք է կանխատես լինել ու երկընչել, իսկ երբ գալիս հասնում է, այդժամ պետք է արի սիրտ ստանալ՝ ավելի մեծ, քան առջևում սպասող վտանգը, և քաջությամբ այն արհամարհել:

ԼԴ. Չախորդությունները մարդուն սովորեցնում են բարեգութ ու կարեկից լինել վշտացածների հանդեպ, ուստի և ձախորդության դառնությունը դեռ չճաշակած հարուստներն իրենց աստված են կարծում և մարդկանց ոչինչ համարելով կամենում են ամենքին ծառայեցնել իրենց ախտերին: Երբ լսում են աղքատության, օտարության, վշտի մասին, չեն հասկանում, թե ինչ են դրանք, և դրանք երազ են թվում նրանց: Բայց երբ ձախորդության փորձն առնում են, նրանց ապառաժ ու խիստ սրտերը փոխարկվում են մարմնեղեն սրտերի, և հարուստները, զգալով, որ ուրիշներն էլ իրենց նման մարդիկ են, նրանց հետ գթությամբ են վարվում:

ԼԵ. Չախորդություն ու օտարություն չտեսած մարդը չգիտի փորձանավորներին ու նժդեհներին կարեկից լինել. որովհետև ով որևէ դժբախտություն ճաշակել է, նա գիտի վտանգվածներին օգնել:

ԼԶ. Լավ վիճակում է նա, ով ինչ-որ ժամանակ սխալվել է, բայց դարձյալ զգաստացել: Որովհետև սխալներով խրատվելով՝ մարդն այնուհետև իրեն ուղղում է և սովորում, թե ինչ է պետք անել և ինչպես

վարվել:

Վտանգի փորձառությունը մեղկ ու անզգա մարդկանց համար անօգուտ է, որովհետև դրանով էլ չեն սովորում զգաստանալ:

ԼԷ. Եթե մեկը որևէ գործի մասին է մտածում, միշտ նախապես պիտի հաշվի առնի ծախողակի դիպվածները, որոնք կարող են գործի ընթացքում պատահել: Որովհետև ճշմարիտ խոհեմությունն ամեն վտանգ նախապես տեսնելն է, և ճշմարիտ արիությունը երևում է դրանց առաջացման դեպքում դրանք արհամարհելու մեջ: Որովհետև ով նախապես չի տեսնում հնարավոր վտանգները, չի կարող դիմադրելու համար բավական վստահություն ունենալ և անվնաս ազատվել:

ԼԸ. Ղյուրին է անուղղաներին խրատելը կամ բարկացողներին համոզելը, կամ վիատվածներին քաջալերելը, բայց հույժ դժվարին է խոսքով ասածը գործով կատարել: Որովհետև մարդիկ ուրիշներին սովորեցնել լավ գիտեն, բայց իրենք իրենց սովորեցրածն անել չեն կարողանում: Ահա մեկը կարող է ուրիշների դեմքը տեսնել ու նշմարել նրա վրայի բծերը, իսկ սեփական դեմքը տեսնելու համար հայելու միջնորդության կարիքն ունի: Արդ, հայելի են այն պես-պես դիպվածների փորձառությունները, որոնցով մարդ սովորում է խրատվել, համոզվել ու քաջալերվել՝ ուրիշներից սովորելու կարիքը չունենալով: Իսկ ով փորձառու չէ, իմաստունների խրատների կարիքն ունի, որոնց եթե չանսա, մտքերի մեջ կվարանի ու հուսահատված կվտանգվի:

Նա, ով չգիտի ծախողության ժամանակ իրեն մխիթարել, տառապանքների հոգսերով միշտ տագնապում է և շատ անզամ ընկնում հուսահատության մեջ, որը բոլոր չարիքների մեջ մեծագույնն է: Քանզի չի հասկանում, որ այս աշխարհի կյանքն անդուլ գլորվում է հաջողության ու ծախողության միջև և ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի մեջ դադար չի առնում. որովհետև այս աշխարհը մարդկանց միշտ բարեբախտության մեջ պահելու երաշխավոր չեղավ և ամենքին հաջողություններ տալ երբեք չխոստացավ:

Եվ քանի որ որևիցե վիճակ, որում մարդիկ գտնվում են, հաստատուն չէ, ուստի պետք չէ ծախողությունների մեջ հուսահատվել, ոչ էլ հաջողությունների մեջ ապահով ու անհոգ լինել. հարթ դաշտում անվեհեր արշավելիս ձին կարող է գլորվել: Եվ որովհետև սրանցից յուրաքանչյուրը՝ հաջողությունն ու ծախողությունը, հողդողդուն ու փոփոխական են և հարատև չեն, ուստի մարդուն մնում է հաջողությունների մեջ զգաստ լինել և ծախողությունների մեջ՝ արի:

ԼԹ. Այս կյանքը պատրողական ու խաբուսիկ է, բարեբախտությունն ու հարստությունն էժան վաճառում է անարժաններին և արժանավորներին զրկում: Անզգույշները, սրանից խաբվելով, հղփանում են մարմնական հեշտանքների ու զվարճալից զբոսանքների մեջ: Բայց երբ բախտի անիվը շրջվում է, քաղցր հեշտանքը դառնության ու զզվանքի է փոխվում, իսկ ուրախությունը՝ տրտմության: Ուստի պետք է սեփական անձը նախահայաց զգուշությամբ զսպել, որովհետև ծանր է այն տուգանքը, որ պատրաստ սպասում է առօրյա հաճույքների դիմաց:

Խ. Ով ունեցած հաջողությամբ չհագնալով՝ ավելին է տենչում, որևէ ծախողության պատահելու ժամանակ արագորեն ընկճվում ու հուսահատվում է:

ԽԱ. Ապերախտ ու տմարդի է նա, ով շատ տարիներ Աստծու պարգևները վայելած լինելով՝ ծախողության մեջ ընկնելիս անմիջապես սկսում է Տիրոջից տրտնջալ ու վիատվել:

Ով ծախողություններին անտրտունջ համբերում է, քաջահույս ու արի է, իսկ ով տրտնջում ու զանգատվում է, երկչոտ ու վեհերոտ է:

ԽԲ. Իմաստուններն առավել վախենում են հաջողությունից, քան ծախողությունից: Որովհետև հաջողությունը հաճախ մարդուն հանդուգն է դարձնում՝ գահավիժելու վտանգների մեջ, իսկ ծախողությունը՝ զգուշավոր ու զգաստ, որպեսզի մարդն այլևս դրանց մեջ չընկնի:

Ծխանելիքները, կրակի մեջ զցվելով, իրենց անուշահոտությունն ավելի լավ են արձակում. առաքինիները, նեղությունների մեջ ընկնելով, իրենց առաքինություններն էլ ավելի են ցույց տալիս:

ԽԳ. Ով իր օգուտն ու վնասը չի ճանաչում, թշնամի է իրեն: Եվ իրոք, ոմանք, թանձր տգիտությամբ անզգայանալով կամ ուժեղ կրքերով հափշտակվելով, իրենց օգուտն ու վնասը չեն ճանաչում և իրենց խոսքով կամ գործով իրենք իրենց զգելով վտանգի մեջ՝ զանգատվում են ուրիշներից՝ ասելով. «Այս

կամ այն մարդը մեզ այս թշնամությունն արեջ»։ Թշվառները չգիտեն, որ ամեն ոք միայն ինքն իրենից է վնասվում։ Ուստի թող ոչ ոք չմեղադրի ուրիշի, այլ միայն իրեն։ Թող հետամուտ լինի ճանաչելու օգտակարը՝ այն անելու համար, և վնասակարը՝ նրանից խորշելու համար, որպեսզի կարողանա իրեն պահպանել ու ապահով մնալ։

ԽԴ. Քո ցավերն ապաքինելու համար չկա համբերությունից ավելի ճարտար բժիշկ, և ոչ զորավոր ձեռք՝ նեղությունից ազատելու համար, և ոչ առատածեռն հարուստ՝ քեզ բարիքներով լցնելու համար, և ոչ կարեկից բարեկամ՝ քո տրտմությունները փարատելու համար։ Որովհետև համբերությունն ամեն ցավի դեմ դեղուձար է։

Մարդիկ դժբախտությունները որքան ոչ կամովին են կրում, դրանք այնքան առավել են ծանրանում։

ԽԵ. Ամեն վիշտ ու նեղություն, որ Աստծու թողտվությամբ է գալիս մարդու վրա, նախապես գործված մեղքերի վրեժխնդրություն է. որովհետև ով կամովին է մեղանչում, պատժվում է ակամա։ Բայց ով հոգու խոնարհությամբ համբերում է, աստվածային արդար ցասումը քաղցրության է վերածում և ազատություն գտնում։ Վշտերին համբերելն Աստծու շնորհ է։

ԽԶ. Անմիտ է նա, ով իր թշնամուն չի ճանաչում ու բարեկամ է կարծում, քանի դեռ նրանից չի վնասվել։ Եվ հիրավի, եթե անմիտ չլինեք, զոնե ինչ-ինչ նշաններից ելնելով՝ նախապես կկասկածեք նրան և իր անձի հանդեպ զգույշ կլինեք։

Ստույգ է, որ շատ են աշխարհի չարերը, որոնք թշնամություն են նյութում և մարդկանց վտանգների մեջ զգույն։ Եվ որովհետև անհնար է ամենքին վերացնել կամ ուղղության բերել, ուստի, որքան հնարավոր է, հարկ է զգաստ ու աչալուրջ լինել՝ անվնաս մնալու համար։

Բայց եթե մեկը կարելի զգուշությունից հետո վնասվի, այդ պետք է վերագրել բնության ու աշխարհի հարկադիր ու անփոփոխելի օրենքին՝ ըստ Աստծու նախախնամության։ Այդտեղ շատ բնական կամ բարոյական իրողություններ, որոնք մեզ պատահական են թվում՝ պատճառներին մեր տեղյակ չլինելու պատճառով, հարկավ պիտի լինեին։ Որովհետև այսպես էր պահանջում այն պատճառների համընթացությունը, որոնցից և առաջ են գալիս այդ գործերը՝ օգտակար կամ վնասակար։

ԽԷ. Բախտի հանկարծահաս արկածները տանելն ավելի մեծ քաջություն է, քան թշնամիների հանդուգն հարձակմանը դիմադրելը։

Ձախորդություններից չի պարտվում նա, ով ունի խոնարհություն, համբերություն ու հնազանդություն, որովհետև սրանք երեքն էլ միմյանց անբաժան ընկեր են և իբրև երեքսակ պարան՝ ուժի գործադրումից չեն կտրվում։

ԽԸ. Թեպետ մարդիկ ամեն ժամ նորանոր ձախորդ դիպվածների մեջ են ընկնում, բայց կարծելով, թե բոլոր ձախորդություններն անցան-գնացին և հետագայում միշտ հաջողությունները պիտի հաջորդեն, քաջահույս լինելով՝ ուրախանում են. սակայն երբ ձախորդ դիպվածները դարձյալ վրա են հասնում, իսկույն վիատվում ու տրտմում են։ Բայց հաջողության հույսը մարդուն երբեք չի լքում, և ձախորդություններն էլ իսպառ չեն վերջանում։ Այս հույսով մարդիկ միշտ խաբվում են և մտադրվում այլևս չխաբվել։ Թվում է, թե այս հուսադրությունն Աստծուց է հաստատված մարդու բնության մեջ, ապա թե ոչ, իսկույն հուսաբեկ լինելով, մարդիկ այլևս պիտի չկարողանային իրենց մխիթարել։

Բայց կատարյալ ու իմաստուն մարդը, գիտենալով, որ նորանոր արկածները չեն պակասում, միշտ իրեն պատրաստում է մի նոր փորձություն կրելու և վերջինիս գալու ժամանակ անխռով ու անտրտում է մնում։ Եվ եթե ձախորդությանը միառժամանակ տեղի տալով՝ հաջողություն է հաջորդում, տակավին չի ուրախանում, որովհետև գիտի, որ հաջողությունը դյուրասահ ու անհաստատ է։ Ուստի և այդ հաջողության մեջ դարձյալ փորձության է սպասում. ոչ թե որ ցանկանում է այն, այլ որ ստույգ վկայում է, թե հաջողության ետևից մի նոր ձախորդություն պիտի հասնի։ Այդ պատճառով էլ միշտ միօրինակ է ապրում. ո՛չ հաջողությունների համար ուրախանում է, ո՛չ էլ ձախորդությունների դեպքում տրտմում՝ ըստ այս առածի, թե՛ «Իմաստուններին դիպված չի պատահում, ո՛չ տրտմություն և ո՛չ զարմացում»։

Ոչ միայն կյանքի ընթացքում է պես-պես կրթություն անհողողող, այլև մեռնելիս էլ անվրդով է լինում. մահը մտքում միշտ անմոռաց պահելով՝ մեռնելու համար բարեպես ուղղում է իրեն: Ուստի իմաստունները միշտ մեռնում են և երբեք չեն մեռնում. մեռնում են, որովհետև մահը միշտ աչքի առաջ ունեն, չեն մեռնում, որովհետև բարվոք մեռնելով՝ կենդանի են համարվում: Մահը կատարյալներին ու իմաստուններին չի վնասում, այլ օգնում է, որովհետև աշխարհի տառապանքներից ազատելով նրանց՝ հասցնում է հավիտենական հանգիստը:

Խթ. Թող ոչ ոք Աստծու նախախնամությունից ու դատաստանից չզայթակղվի, թե Աստված ինչպես է չարաբարոներին թույլ տալիս այս կյանքում ապրել հաջողության մեջ, իսկ բարեբարոներին՝ տառապանքի:

Արդարև, որքան էլ մեկը չար լինի, հնարավոր է, որ երբեմն նաև որևէ բարի գործ արած լինի, բայց ոչ՝ երկնային վարձի արժանի: Նմանապես՝ որքան էլ մեկը բարի լինի, նա ևս կարող է երբեմն չար բան գործել, բայց ոչ՝ դժոխային վրեժի արժանի: Եվ Աստված, քանի որ արդար է, ոչ ոքի անվարձ չի թողնում. այս կյանքում չար մեկի գործած սակավ բարին հատուցում է անցավոր բարիքների հաջողությամբ և թողնում հանդերձյալում պատժվելու նրա բազում չարիքների համաձայն: Այդպես և՛ այս կյանքում բարեգործ մեկին մարդկային տկարությամբ կամ տգիտությամբ գործած փոքր չարի դիմաց այս կյանքում անցավոր տառապանքով է պատժում, բայց հանդերձյալում այս կյանքի ընթացքում գործած բազում բարիքների փոխարեն վարձահատույց է լինում՝ իր անսուտ խոստման պատճառով, որն արեց իր բարության առատությունից: Որովհետև հավիտենական վարձի արժանի բարին, որ մարդ գործում է, մարդու գործությունից չէ, այլ Աստծու շնորհի գործությունից, իսկ վարձն Աստված հատուցում է իբրև պարտք՝ իր խոստմանը հավատարիմ լինելու համար՝ ըստ այսմ. «Ձեր վարձը շատ է երկնքում» (Մատթ. Ե 12):

Դարձյալ՝ Աստված երբեմն, երբ չարերը պիտի չդառնան դեպի բարին, ժամանակից շուտ նրանց վերցնում է աշխարհից, որպեսզի նրանց պատիժն ավելի չժանրանա կամ բարիներին չվնասեն: Երբեմն էլ կենդանի է թողնում, որպեսզի զգաստանալով ուղղվեն, կամ բարիները նրանցով կրթվեն: Երբեմն ժամանակից շուտ վերցնում է բարիներին, որպեսզի դեպի մեղքերը չսահեն կամ առավել չվշտանան: Երբեմն էլ նեղության մեջ է պահում նրանց, որպեսզի առավել մաքրվեն կամ ուրիշներին բարի օրինակ լինեն, և նրանց վարձը շատանա:

Արդարև, այս աշխարհը կառավարվում է Աստծու իմաստությամբ, նախախնամվում նրա ողորմությամբ ու արդարությամբ, որ չզիտի վրիպել կամ որևէ մեկին անիրավել: Քանզի վտանգներն էլ՝ երկնքից, երկրից, տարերքներից կամ մարդկանց անիրավությունից եկող, ոչ թե պատահականորեն են հասնում մարդկանց, այլ ըստ Աստծու անքնին դատաստանների՝ ըստ այսմ. «Ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից, ո՛չ էլ լեռների անապատից, այլ Աստված է դատավոր» (Մադմ. 47 7):

Ուրեմն՝ կարճամիտների լեզուները թող պապանձվեն՝ չխոսելու ընդդեմ Աստծու նախախնամության ու դատաստանի, այլ միայն գոհանան նրանից, որ ամեն ինչ արեց ու միշտ անում է բարվոք կերպով:

«Ինչ որ աչքս ուզեց, ինձ գրկեցի դրանից, & ոչ մի ուրախության համար սրտիս համար արգելք չդրի...  
ահա ամեն ինչ ունայնություն է  
& հոգու տանջանք» (Ժող. Բ 10-11):

«Մարդը նման է ունայնության,  
& նրա օրերն անցնում են ստվերի պես» (Սաղմ. ԺԽԳ 4):

«Մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի:  
Խոտը չորանում է, նրա ծաղիկը՝ թափվում» (Եսայի Խ 6-7):



«Այն ամենը, ինչ աշխարհի մեջ կա, մարմնի ցանկություն է, աչքերի ցանկություն» (Ա Հովհ. Բ 16):

«Ոչ ոք, երբ փորձության մեջ լինի, թող չասի.  
«Աստուծոց եմ փորձվում»,  
քանի որ Աստված չարից չի փորձվում  
& ինքն էլ չի փորձում ոչ ոքի:  
Յուրաքանչյուր ոք փորձվում է հրապուրվելով  
& խաբվելով իր ցանկություններից» (Հակոբ Ա 13-14):

## Գ Լ ՈՒ Խ Ժ Բ

### Ե Ր Զ Ա Ն Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Չկա մեկը, որ երջանկություն չկամենա, բայց չգիտենալով նրա տեղը՝ անընդհատ իզուր տատանվում է: Մերթ կարծում է, թե երջանկությունը համադամ խորտիկների մեջ է, և երբ շատ է զվարճանում, ծանծրանալով թողնում է այս և հարստություն ցանկանում՝ հույս ունենալով, թե երջանկությունը նրա մեջ է: Երբ ճաշակում է աշխատանքը, որը պիտի աներ ունեցվածքի ձեռքբերման ու պահպանության համար, դրան անհավան լինելով՝ ձգտում է իշխանության: Երբ հանգստյան փոխարեն նրանում գտնում է հայտնի թշնամիների վտանգներ ու սուտ բարեկամների որոգայթներ, այն իբրև անտանելի բեռ թողնում է և ուրիշ բան փնտրում:

Եվ ինչպես որ ծովն ընկածն այստեղ-այնտեղ է ձեռքը կարկառում՝ գտնելու մի բան, որով կարողանա փրկվել, այդ ձևով էլ սա է դիմում ամեն բանի, թերևս իր բաղձանքը կատարի: Բայց իզուր է ջանք թափում ու նեղություն քաշում, որովհետև քանի մեկը տոգտ ու մոլի է, սիրտը չի կարող հանգիստ գտնել: Որովհետև երջանկությունը, որը մտքի ու ցանկությունների հանդարտությունն է, ուրիշ բանի մեջ չի գտնվում, եթե ոչ իմաստության ու առաքինության:

Ուստի յուրաքանչյուր մարդ պիտի փնտրի ու ձեռք բերի իմաստություն ու առաքինություն, որոնցով կկարողանա գտնել բնական երջանկությունն այս աշխարհում և գերբնականը՝ հավիտենական կյանքում:

Բ. Մարդու համար բնական է երջանկություն փնտրելը: Այդ պատճառով մանուկներն էլ, երբ սկսում են նոր-նոր քայլել, բնածին մի ախորժանքով ցանկանում են անդադար շրջել, որպեսզի կարողանան որևէ տեղ երջանկությունը գտնել: Խաղալիս վեր-վեր են ոստոստում՝ կարծելով, թե այնտեղ է բնակված: Ձեռքը կարկառում են՝ վերցնելու այն, ինչ տեսնում են՝ համարելով, թե հենց այդ է իրենց փնտրածը: Հետամուտ են լինում իմանալու այն, ինչ մարդիկ իրար ականջի խոսում են, որովհետև նրանց այնպես է թվում, թե գրուցում են այն բանից, ինչն իրենք փափագում են:

Բայց երբ ծերության են հասնում, այնժամ լավ հասկանում են, որ երջանկությունը չի գտնվում երկրի վրա, ոչ էլ օդի բարձրադիր մասերում և ոչ այլ բաներում, որոնցում փնտրում էին: Եվ իրենց կարծիքը փոխելով՝ համարում են, թե երկրի ընդերքում է գտնվում, ուստի իրենց գլուխն ու մեջքը երկրին են կպցնում: Չեն ցանկանում վեր կենալ և ոչ էլ գնալ ու որևէ տեղ շրջել. իրենց սիրած ամեն ինչից տաղտկացած խորշում են և ծանծրանում են նրա մասին լսելուց, ում առաջ փափագում էին: Եվ հուսաբեկվածի պես վարանած դեգերելով՝ մտքերով տազնապում են և չգիտեն, թե ինչ անեն: Ամենավերջում, ապավինելով մահվանը, արթուն աչքով սպասում են նրան՝ հաստատ համոզված լինելով, թե միայն նա կարող է երջանկության հասցնել և նրան էին մանուկ տարիքից կաթոգին բաղձանքով

փնտրում:

Ով կամենում է բախտավոր լինել, թող ապավինի Աստծուն, սակայն չծուլանա իր պահպանության համար անել այն, ինչ կարող է: Որովհետև Աստված կամենում է, որ մարդիկ ինչ որ կարող են, անեն, և ինչ չեն կարող, իրեն հանձնեն: Բայց մարդ կա, որ կամենում է Աստծուն իր համար իբրև սպասավոր ունենալ, և ինչ որ պատշաճում է, որ մարդն անի, այն թողնում է, որ Աստված կատարի, և երբ չի կատարում, Աստծուց դժգոհում է՝ չտարբերելով Աստծուն վայել գործերը մարդուն վայել գործերից:

Արդ, դու արա՛ այն, ինչ կամենում ես ու կարող ես անել, և Աստծուն հանձնիր այն, ինչ կամենում ես, բայց չես կարող անել: Եվ եթե կամեցածդ քեզ օգտակար է, Աստված կկատարի, իսկ ինչ Աստված չի կատարում, իմացիր, որ այն քեզ բնավ օգտակար չէ, որովհետև Աստված քո օգուտն ավելի լավ գիտի, քան որ դու ճանաչում ես ու կամենում:

Գ. Մարդու բնությունը միշտ վայելքներ է փափագում՝ նրանցում հավիտյան հանգստանալու համար, և մահվանից փախչում է, ինչն անմահության բաղձանք է: Իսկ բնությունը սրանում չի վրիպում, որովհետև բնության գործն Աստծու գործ է, և ինչ որ բնությունն ունի, Աստծուց ունի: Ուրեմն ինչո՞ւ է օրենքը վայելքներն արգելում մարդկանց և մահը բարի համարում: Արդարև, բնությունը ոչ թե այստեղի վայելքն ու կյանքն է փափագում, այլ հանդերձյալինը, հակառակ դեպքում բնությունն ինքն իր հետ կռիվ կտար, քանզի փորձով գիտենք, որ ով իրեն հանձնում է վայելքների, բնությունը նրա մեջ տակավին չի հանդարտվում, այլ նրանում տաղտկանալով՝ զզվում է և ցանկանում այլ բաղձալի բան: Այսպես էլ, եթե մեկը ծերության կամ փորձության տառապանքներից նեղվում է, մահ է կամենում:

Իսկ եթե մարդու բնությունն ըղձար այս վայելքը կամ այս կյանքը, ապա նրանցից չէր ծանծրանա, այլ իսկույն նրանցում, ասես իր կենտրոնում, դադար առնելով՝ հավիտյան կհանգստանար: Ուստի պարզ է, որ նա ուրիշ բան է կամենում՝ այն, ինչ մարդիկ չեն զգում, այդ պատճառով էլ նեղվում ու տագնապում են և բնությանը մեղադրում: Բնությունն արդարև անսխալ է իր բաղձանքներում, և օրենքն իրավամբ է մարդկանց արգելում տրվել այս աշխարհի սնոտի վայելքներին, որպեսզի երջանիկ լինելու համար իրենց կամքն ուղղեն դեպի հավիտենական վայելքներն ու անվախճան կյանքը և չհակառակվեն Աստծուն, ով բնությունն իբրև ճշմարիտ օրենք հաստատեց:

Դ. Երջանկությունն Աստծուն ամեն ինչից առավել սիրելն է: Որովհետև ինչպես Աստված է մարդուն Իր բոլոր արարածներից ավելի սիրում, այդպես էլ կամենում է, որ և Ինքը մարդկանցից սիրվի ամեն ինչից ավելի: Ով Աստծուն չի սիրում, ինչպես պետք է սիրել, անհանգիստ վարանում է. որովհետև անհնար է, որ մարդու բաղձանքը հանգըստանա այլ բաներով, եթե ոչ միայն Աստծով: Ուստի երբ մարդիկ Աստծուց դուրս մի բան են սիրում, չեն կարող անձանձրույթ հարամնալ նրանում: Որովհետև միայն Աստված է սիրո առարկա, որով կարող է հանգստանալ մարդու բաղձանքը:

Ե. Ամենքը սրտում ավելի զգուշությամբ պիտի պահեն Աստծու երկյուղը, քան բոլոր բարիքները, քանի որ նրանով կարելի է ձեռք բերել ճշմարիտ առաքինությունները, որոնք առաջնորդում են դեպի երջանկություն: Ով Աստծու դատաստաններից չի երկնչում, կամ Աստծու կատարյալ սերն ունի, կամ հոգով ամբողջովին մեռած է:

Զ. Ապերջանիկ ու թշվառ է նա, ով ուղիղ հավատք ու առաքինի վարք չունի, որովհետև հոգով կույր է և չի կարողանում տեսնել աստվածային լույսի պայծառությունը: Թեկուզև մեկը իմաստուն լինի և խոստովանի, թե ամեն ինչ գիտի, այնպիսին հպարտացած է և ոչինչ չգիտի. որովհետև չունի ճշմարիտ գիտությունը, որն ուղիղ հավատով Աստծուն ճանաչելն ու Նրան բարի գործով ծառայելն է:

Ավելի լավ է Աստծուն սիրել առանց սիրո գիտական սահմանումն իմանալու, քան սիրո սահմանումն իմանալ առանց Աստծուն սիրելու:

Ճշմարիտ հավատացյալը գործադրում է այն, ինչին հավատում է: Ուստի ով հավատում է, թե բարվոք ապրողի համար երջանիկ վիճակ է պատրաստված, և ինքը չար կերպով է վարվում՝ չհավատացողի պես, թերի հավատ ունի: Որովհետև չար բան գործել չի կամենում նա, ով հավատում է, թե յուրաքանչյուրին ըստ իր գործերի հատուցում է սպասում:

Ոչ ոք չի կարող Աստծու կամքը կատարել հավիտենական կյանքը ժառանգելու համար, եթե Աստ-

ծուց չխնդրի և իրեն չտրվի այն կատարել՝ ըստ այսմ. «Խնդրեցե՛ք Աստծուց, և Նա կտա ձեզ» (Մատթ. Է 7):

Է. Աստծու կողմից մարդն ազատ ու անձնիշխան ստեղծվեց, բայց իր երջանկությունը չիմանալով՝ որպես շղթայակապ գերի ծառայում է մոլություններին: Արդարև նա է ազատ, ով բռնությունից զերծ է և ինքնուրույն է բարիք գործում. որովհետև ունեցվածք, հաջողություններ ու մարմնի ինչ-ինչ անդամներ կորցնելու և մահվան իշխանության տակ ընկնելու դեպքում էլ կամքը տակավին ազատ ու բարեհոժար է: Իսկ ով իր անձնիշխանությունը չարաչար է վարում, թեկուզև ազատ ու հրամանատու մեկը լինի, իրեն մոլությունների ծառա է դարձնում, ինչից առավել անարգ ու ետին ծառայություն չկա:

Ուրեմն՝ մարդիկ, որ ազատ են ծնված, թող ծառա չդարձնեն իրենց: Ճշմարիտ ազատը նա է, ով իր կամքը հաստատել է բարու մեջ և հոժարությամբ է բարին գործում: Բարի լինելը, այսինքն՝ սակավ բարիքներով բավարարվելը, բավական չի համարվում, այլ պետք է ջանալ ավելի բարի լինել, այսինքն՝ բարի գործերն օր առ օր շատացնել:

Ով ծառայում է Աստծուն ու հպատակվում նրա օրենքներին, ճշմարիտ ազատ է, ինչ վիճակում էլ որ լինի:

Ը. Երջանիկ է նա, ով իրեն Աստծու առաջ միշտ ներկա է ճանաչում և Աստծուն՝ իր առաջ ներկա, ինչպես որ կա էլ իրականում: Մտածելով, թե Աստված ո՛չ այլ մեկի մասին է հոգում, եթե ոչ իր, ինքը նույնպես ո՛չ այլ ինչ է խորհում, եթե ոչ Աստծու կամքը կատարելը: Որովհետև Աստված ամեն ինչ արեց մարդու համար և մարդուն՝ միայն Իր համար, ուստի հարկ է, որ մարդ միայն Աստծուն ծառայի: Իսկ սա այնժամ է լինում, երբ մարդ ինչ որ մտածում, ասում ու կատարում է, այդ ամենն Աստծու փառքին է վերածվում:

Եվ երբ իրեն Աստծու առաջ ներկա է ճանաչում և Աստծուն՝ ամենուրեք ներկա, գործերը տեսնող ու մտածումները քննող, վնասակար դիպվածների պատահման ժամանակ բնավ չի վրդովվում, որովհետև ստույգ գիտի, որ Աստված սիրում է իրեն, միշտ կամենում իր օգուտը և երբ թույլ է տալիս, որ վնաս պատահի, սա նույնպես իր օգտի համար է: Արդ, ով այսպես է մտածում, իսկապես ուրախ ու խաղաղ է իր բովանդակ կյանքում:

Թ. Երջանիկ է նա, ով ոչ ինքն է ուրիշին ծառա և ոչ էլ ուրիշներին է իր կամքին ծառայեցնում:

ժ. Պատճառն ու գործը, քանի որ առնչակից են, փոխառփոխ միմյանց են նայում ու ցույց տալիս: Արդ, պատճառները չորսն են՝ արարչական, որի կամքով է գործը, նյութական, որից է գործը, տեսական, որով է գործը, և վախճանական, որի համար է գործը:

Եվ որովհետև մարդու արարչական պատճառն Աստված է, նյութականը՝ հողը կամ տարրերը, տեսականը՝ բանական հոգին, ու վախճանականը՝ երանական փառքը, ուստի մարդը, իբրև Աստծու գործ, առնչություն ունի իր արարչական պատճառի՝ Աստծու հետ ու դեպի նրան է միտում, որովհետև ցանկանում է ծառայել նրան: Եթե նույնիսկ չի կարողանում ճանաչել ճշմարիտ Արարչին, իբրև Աստծու, որևէ արարածի է ծառայում՝ իր կողմից աստված կարծվածին, որովհետև բնությունն ինքն է դեպի այդ ձգտում:

Առնչություն ունի և այն նյութի հետ, որից գոյացավ: Այդ պատճառով էլ, քանի որ հողից (կամ տարրերից) է, մարմնով հակվում է դեպի այն, մինչև որ նրա մեջ տարրալուծվում է:

Առնչություն ունի և տեսական պատճառի՝ հոգու հետ, որովհետև չի կամենում նրան թողնել, որպեսզի չապականվի: Ուստի մարդը խորշում է մեռնելուց, որովհետև մեռնելը հոգու բաժանումն է մարմնից: Իսկ հոգին, իբրև անմարմին գոյացություն, ինքնաբերաբար միշտ ցանկանում է անմարմինների վիճակն ու մարմնի բանտից ազատում, խիստ սիրում է խոկալ իմանալիների մասին և հոգևոր մխիթարություն է փնտրում: Եվ որովհետև անմահ լինելով՝ միշտ անմահություն է տեսնում, տակավին մարմնում բնակված՝ կամենում է ապագայի համար հավիտենական հիշատակ թողնել, ինչը նշան է նրա անմահության:

Առնչություն ունի և վախճանական պատճառի հետ. որովհետև երանությունը, հանգիստ ու բաղձանքների կատարում լինելով, դեպի իրեն է քաշում բոլոր իր համար կարգվածներին: Ուստի ամեն ոք

իր հանգիստն է կամենում, ինչպես ճանապարհորդը՝ ժամանած տեղում: Որովհետև քանի դեռ բնութ-  
յունը չի հասել իր վերջին նպատակին, չի հանգստանում: Սակայն մարդու վերջին նպատակը, ըստ  
Աստծու սահմանման, այս կյանքում չի տրվում, այլ հանդերձալում: Որովհետև երկրի վրա չկա մի ա-  
րարած, որ կարողանա բավարարել մարդու փափագը: Այդ պատճառով էլ մարդիկ այս կյանքում  
միշտ անհանգիստ են, եթե նույնիսկ աշխարհի բոլոր բարիքներով հղիացած լինեն:

Սա հայտնապես ցույց է տրվում առաքինիների մտքի հանդարտությամբ և աշխարհասերների ա-  
լեծուփ մտքերով: Առաքինի մարդիկ, իրենց շավիղներն ուղղելով դեպի Աստված, զանց են առնում աշ-  
խարհի բարիքները և վերջին նպատակին հասնելու համար իբրև միջոց ընտրելով առաքինությունը՝  
ամեն ինչում անդորր մտքով նավարկում են՝ ժամանելու վերջնական երջանկության նավահանգիստը՝  
բնավ չհոգալով անցավոր իրերի ու աշխարհի փոփոխությունների մասին: Իսկ աշխարհասեր մարդիկ  
վարանական մտքով անհանգիստ խուճապում են և չեն կարողանում գոնե մի վայրկյան մտքի անդոր-  
րություն գտնել, եթե նույնիսկ մեծահարուստ իշխան կամ ինքնակալ կայսր լինեն:

Քանի որ բնությունը բուռն բերմամբ դիմում է դեպի նպատակը, մարմնի դույզն-ինչ հանգստութ-  
յուն գտնելիս զգայական կույր բաղձանքով հարում է նրան՝ իբրև իր նպատակի: Բայց տեսնելով, որ չի  
կարողանում նրանով հանգստանալ, այն բաց է թողնում և ուրիշը ցանկանում, դրանից էլ զզվում և ու-  
րիշներ փափագում: Եվ այսպես ամենքը, մի հաճույքից դեպի մյուսը ուստնելով, անդադար թափառում  
են՝ հասնելու իրենց նպատակին, բայց չիմանալով, թե այն ինչ է կամ որտեղ է գտնվում՝ ապարդյուն  
տագնապում են:

Ուրեմն թող ճանաչեն, որ Աստված է մարդու ստույգ նպատակը, որին հնարավոր է հասնել միայն  
առաքինության ճանապարհով:

Ուրեմն թող թողնեն աշխարհասիրությունը և առաքինության հետևեն, որպեսզի կարողանան  
փնտրածը գտնել, այլապես հնարավոր չէ, որ հասնեն իրենց նպատակին ու երջանիկ լինեն:

Բայց կան և աշխարհասերներ, որոնք այն գտնելու համար աշխարհի իրերում են դեռ դեգերում,  
սակայն ոչ մարդու փափագն է դադարում նորանոր վայելքներ փնտրելուց և ոչ վայելքներն են պակա-  
սում: Եվ աշխարհի վայելքների հետ մարդու սրտի այս վեճը տևում է մինչև գերեզմանի դուռը, ուր հու-  
սաբեկ եղած՝ մարդը լավ հասկանում է, որ իզուր չարչարվեց աշխարհի իրերում իր վերջին երջան-  
կությունը գտնելու: Բայց սրանից հետո այն ձեռք բերել անկարելի է, որովհետև սկսում է սերմանել այն  
ժամանակ, երբ ուրիշները հնձում են:

ԺԱ. Մարդկանց սիրած ո՛չ բոլոր բաներն են սիրո արժանի: Որովհետև սիրում են աշխարհն ու նրա  
վայելքները: Ուստի հաճախ փոխում են իրենց մի տիրոջը մի ուրիշով և ո՛չ մեկի, ո՛չ մյուսի հանդեպ  
հաստատուն չեն մնում: Ուրեմն եթե կամենում են միշտ սիրո մեջ մնալ, ճշմարիտ բարին թող սիրեն, ո-  
րովհետև միայն նա է սիրո արժանի:

ԺԲ. Եթե մարդը չունենար Աստծուց իրեն խոստացված հանդերձալ երջանիկ կյանքը, երկրի վրա  
նրանից ավելի թշվառ մեկը չէր գտնվի: Ծնվում է արտասուքով, սովորում աշխատանքով, ապրում  
տառապանքով ու մեռնում ցավերով: Ուստի ամենքը պիտի ջանան բարի գործերով հասնել խոստաց-  
ված երանավետ կյանքը ժառանգելուն:

ԺԳ. Բարիներն ու չարերն իրենց Աստծու ծառա են հավասարապես խոստովանում, բայց արդյուն-  
քում տարբերվում են: Բարիներն իբրև որդի են ծառայում. աշխատում են միայն Աստծու փառքի ու սի-  
րո համար և իրենց ու յուրայինների խնամքն աստվածային կամքին հանձնում: Ուստի Աստված նրանց  
մասին հոգ է տանում այնքան ժամանակ, որքան այս երկրում են, և երկնքում էլ հավիտենական փառ-  
քը շնորհում: Որովհետև Աստծու մեծությանն այսպես է վայելում՝ անհուն բարիքով՝ Իր հավիտյանում  
վարձահատույց լինել նրան, ով սեփական հավիտյանում սիրեց Աստծուն ու հավատարմությամբ ծա-  
ռայեց Նրան: Եվ այս փոխարինությունն ըստ գործի կամ գործողի արժողության չէ, այլ ըստ ընդունող  
Աստծու բարության ու ողորմության առատության: Որովհետև ըստ առաքյալի՝ «Այս ժամանակի  
չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ»

*(Հռոմ. Ը 18):*

Իսկ չարերն իբրև վարձկան են ծառայում, որովհետև աշխատում են սեփական փառքի ու սիրո համար, և իրենց ու յուրայիններին Աստծուն չեն հանձնում, որովհետև կամենում են ամեն ինչ իրենց ուզածով անել: Ուստի Աստված էլ չարերին, իբրև վարձկանների, միայն ժամանակավոր բարիքներով է վարձատրում (իսկ վարձատրում է, որովհետև իր արարածներն են): Ուստի նրանց կյանքի սպառնալից հետ սպառվում է և նրանց վարձը՝ վարձու մշակների նման, որոնք օրվա երեկոյանալու ժամանակ, սակարկված դրամն առնելով, գնում են, որովհետև իբրև որդի չծառայեցին, որ որդու ծառանգությունը ստանան: Եվ որովհետև իրենց հավիտյանում արհամարհեցին անհուն բարին, որ խոստացավ Աստված իր հավատարիմ ծառաներին, Աստծու հավիտյանում անհուն բարիքից իրավամբ են զրկվում:

«Երանի նրանց, ովքեր անբիժ ուղի են բռնում & ընթանում են Տիրոջ օրենքով» (Սաղմ. ԺԺԸ 1):

«Ես երանի եմ տալիս այն ժողովրդին, որն այս վիճակում է. նա & երանի՛ այն ժողովրդին, որի Տերն Աստված է» (Սաղմ. ԺԽԳ 15):

«Երանի՛ այն մարդուն, որ կլսի ինձ, & այն մարդուն, որ կպահի իմ ճանապարհը, որովհետև ինձ գտնողը կյանք է գտնում & Տիրոջից փրկություն ընդունում» (Առակ. Ը 34):

«Արդ ինչպե՞ս է, որ ամբարիշտները միշտ ողջ են մնում, տարիքը առնում, նույնիսկ լողում են հարստության մեջ» (Հոբ ԻԱ 7):

«Երանելի՛ են նրանք, որ պահում են Նրա պատվիրանները: Նրանք իրավունք ունեն ուտելու կենաց ծառից & մտնելու քաղաքի դռներով» (Հայտն. ԻԲ 14):

## Գ Լ ՈՒՆ Ժ Գ

## Ա Ռ Ա Ք Ի Ն ՈՒԹ Յ ՈՒՆ

Ա. Առաքինությունն օգտակար բաների գործադրությունն է և արարքներում ու կրքերում վնասակար բաներից խորշումը՝ երկու մոլեկան ծայրերի միջև հաստատված ուղիղ բանականության առաջնորդությամբ: Դարձյալ՝ առաքինությունը հոգու բարեկարգ ունակություն է, որով մարդն ըստ օրենքի է վարվում մտքերի, խոսքերի ու գործերի մեջ, որոնք վերաբերում են կամ Աստծուն, կամ իրեն, կամ ընկերոջը:

Արդարև, օրինապահ, բարեպաշտ, արդար ու երկյուղած է կոչվում նա, ով անթերի կատարում է Աստծուց կամ բանականության լույսից իր վրա դրված օրենքները և խորշում օրենքով արգելվող ամեն ինչից, սակայն այդպիսին տակավին չէ և չի կոչվում կատարյալ առաքինի: Քանզի երբ մարդ կատարյալ է, պահանջվում է, որ անի մի բան, որ գերազանցում է ընդհանուր կանոնական պատվերներին ու հարկադրություններին: Որովհետև մարդկանց օրինադրված աստվածային պատվիրանը ինչ էլ որ լինի, մարդու համար պարտք է համարվում, որը եթե մարդ կատարում է, պարտքից ազատվում է,

իսկ եթե չի կատարում, պարտապան է մնում և զրկվում այն վարձից, որ Աստված խոստացավ նրանց, ովքեր իր բոլոր հրամաններն ամբողջական են պահում:

Իսկ նա, ով Աստծու հանդեպ սիրո առավելությունից կատարում է ընդհանրապես պահանջվածից էլ գերազանց բարի գործեր, այնժամ կատարյալ առաքինի է կոչվում: Նրա վարձն ուրիշների համեմատ այնքան է շատանում, որքան ինքը նրանց գերազանցում է բարի գործերում: Քանզի «առաքինություն» բառն «առավելությունից» է առաջ եկել, որպես թե «բարին ուրիշներից ավելի արեց»: Ուստի ինչ որ մեզանում առաքինություն է կոչվում, արաբերեն «Ֆազելեթ» է կոչվում, որն առավելություն է նշանակում: Մանավանդ որ առաքինի բառը կազմված է «այր» բառից, որից ածանցվում են նաև «արու» և «արի» բառերը, և ստուգաբանվում է որպես «այրություն կամ արիություն ունեցող», այսինքն՝ ուրիշներից ավելի արքենի, քաջ, վեհանձն, զորավոր: Այս մտքով է Եղիշեն ասում. «Առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ»:

Արդ, օրինապահ են կոչվում նրանք, ովքեր հրամայված բոլոր օրենքները պահում են: Նաև բարեպաշտ կամ բարեգործ են կոչվում, որովհետև Աստծու կամ սուրբ Եկեղեցու սահմանած օրենքները բարի են: Նաև արդար են կոչվում, որովհետև հնազանդվողների՝ Տիրոջ հրամանները կատարելն արդարություն է: Նաև երկյուղած են կոչվում, որովհետև երկնչում են Աստծուց, որ բարկանում է իր հրամանները չկատարողների վրա: Ուրեմն՝ որպեսզի մեկը կատարյալ առաքինի լինի, պիտի մյուս մարդկանցից ավելի շատ բարի գործեր անի և չարիքներից խորշի:

Բայց ի՞նչ կարելի է ասել նրանց մասին, ովքեր ոչ միայն թերանում են գերազանց առաքինական գործերում, այլև շատ բաներով թերանում են նրանցում, որոնք բոլորը միօրինակ պարտավոր են պահել. նույնիսկ Աստծու հրամանների ու սուրբ Եկեղեցու օրինադրությունների հակառակն են անում: Ուրեմն ովքեր օրենքները չեն պահում, թող Աստծուց չակնկալեն օրինապահների ու առաքինիների վարձը ստանալ: Հանդգնություն է, մանավանդ հիմարություն, առանց արդյունքի հուսալ ու ակնկալել վարձատրություն:

Բ. Առաքինությունը երկու տեսակ է՝ աստվածաբանական ու բարոյական: Աստվածաբանականը բաժանվում է երեքի՝ հավատի, հույսի և սիրո: Բարոյականը բաժանվում է չորսի՝ խոհեմության, արդարության, արիության ու ժուժկալության, որոնք առանց միմյանց չեն գործում ու որևէ մեկին կատարյալ առաքինի դարձնում. ուր դրանցից մեկն անթերի է կատարվում, մյուսները հարկադրված շղթայաբար հետևում են նրան:

Քանզի ով կատարյալ հավատ ունի, ուրեմն և աներկմիտ հույս ու անկեղծ սեր ունի: Եվ ի նշան կատարյալ սիրո արդյունքի՝ պահանջվում են բարոյական առաքինությունների գործեր, որոնք կատարվում են խոհեմությամբ, արդարությամբ, արիությամբ ու ժուժկալությամբ: Սրանցով, ասես սանդուղքով, բարձրանում են դեպի կատարյալ առաքինությունը և արժանի դառնում վայելելու ու ժառանգելու երկնային փառքը, որ խոստացավ Աստված իրեն սիրողներին: Ուստի առաքինությունները միջոցներ ու ճանապարհ են դեպի երկնային փառքը, որին առանց սրանց հասնել երբեք հնարավոր չէ:

Սակայն ճշմարիտ առաքինությունները կախում ունեն Աստծու շնորհից ու նրանով են արդյունավորվում, իսկ Աստծու շնորհը պարզվում է Քրիստոսի չարչարանքների արդյունքից: Ուստի ճշմարիտ առաքինությունները միայն քրիստոնյաների մեջ են գտնվում, և միայն քրիստոնյաներն են ճշմարիտ առաքինի:

Թեպետև կան քրիստոնեական հավատը չունեցող անձինք, որ բանականության լույսի ու բնական օրենքի ազդմամբ ապրում են խոհեմությամբ, արդարությամբ, արիությամբ, ժուժկալությամբ, նաև ձեռք են բերել ճգնողական, զգաստ, պարկեշտ, խոնարհ, համբերատար վարք, այլև ողորմած ու աղոթասեր են, սակայն իսկական առաքինի չեն համարվում:

Որովհետև առանց Աստծու շնորհի, այսպիսի բարոյական գործերը բնական գործողությունների պես բաներ են համարվում, իսկ բնական ճանապարհով ոչ ոք չի կարող գնալ դեպի գերբնական երջանկությունը, ուստի ապարդյուն են դառնում Ամենասուրբ Երրորդության երանական փառքի ստացման համար:

Աստծուն ժառանգելու համար հարկավոր է շնորհ, որ բխում է Քրիստոսի չարչարանքների արդյունքից: Ուրեմն՝ Սուրբ Երրորդության ու Խոսքի մարդեղության հավատը չունեցողը ճշմարիտ առաքինի չէ: Որովհետև չի կարող ընդունել աստվածային շնորհն ու դրան արժանի լինել, հետևաբար և Աստծու երանական փառքը ժառանգել: Ուստի ամեն ինչից առաջ պետք է քրիստոնեական ճշմարիտ հավատն ունենալ և ապա առաքինական ունակություններն ու բարի գործերը:

Թեպետ Քրիստոսից առաջ բնական ու գրական օրենքով շատերը հաճոյացան Աստծուն, սակայն ոչ՝ առանց Քրիստոսի շնորհի, որովհետև հավատում էին գալիք Մեսիային՝ ըստ այսմ. «Աբրահամը՝ ծեր հայրը, ցանկացավ Իմ՝ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ» (*Հովհ. Ը 56*): Եվ թե՛ «Շատ մարդարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք եք տեսնում, բայց չտեսան, և լսել, ինչ որ դուք եք լսում, բայց չլսեցին» (*Մատթ. ԺԳ 17*):

Գ. Արդ, մարդկանց ամեն ազգ որևէ ճշմարիտ կամ սխալ հավատք ունի՝ իբրև իմացական բնության պարտք, ինչ պատճառով և արաբները հավատը կոչում են «դին» կամ «դեյն», որը նշանակում է պարտք: Քանզի իմացական միտքը ստիպված փնտրում է ապաստանի մի տեղ, որին ապավինի ու հանգիստ գտնի, երբ վարանած տարակուսում ու տանջվում է այն բաների պատճառով, որոնց չի կարող բնականապես հասու լինել և պարզ ու հստակ ըմբռնել:

Որովհետև իմացականության հատկություն է իմանալ մի բան, որ բնականից վեր է, և այս է, որ հավատքն ուսուցանում է: Ապա թե ոչ՝ մարդը կլիներ ավելի անարգ, քան անբան կենդանիները, որոնք մարդուց ավելի են զգում բնական բաներն ու սրանց ազդեցությունները և գիտեն կառավարվել իրենց բնությունից:

Այս աշխարհն ու նրանում եղածները ստեղծվեցին Աստծու անհուն կարողությամբ, և մարդն իր հունավոր կարողությամբ պատրաստեց արհեստական իրեր՝ իր կարիքները հեշտությամբ հոգալու համար, և ըստ ձեռնհասության՝ աշխատանքով գտավ բնության բազում գաղտնիքներ: Բայց բնականով չէր կարող թևակոխել այն բանի մեջ, որ բնականից վեր է, այլ գերբնական գործության կարիքն ուներ:

Որովհետև էություն ու գոյություն ունեցող ամեն ինչ երեքի է բաժանվում՝ արհեստականի, բնականի ու գերբնականի: Արհեստականը մարդու մտքից վար է, որովհետև տեսակավորվում է իբրև մտքի ստեղծագործություն, բնականը հավասար է մտքին, իսկ գերբնականը մտքից վեր է, ուստի մարդ գերբնական շնորհի կարիքն ունի, որպեսզի կարողանա իրենից վեր ելող բաներն իմանալ:

Արդ, առաջին մարդ Ադամը գերբնական շնորհ էր ընդունել, որով ճանաչում էր մի ճշմարիտ Աստծու ու ծառայում նրան, ինչը և հետնորդներին ավանդեց: Սակայն ջրհեղեղից հետո, երկրի վրա մարդկանց բազմանալով, նրա սերունդները մոռացան ճշմարիտ մի Աստծու հետ ծանոթությունը և անձնատուր եղան տեսակ-տեսակ մոլորությունների: Սակայն կրոնասիրությունն իսպառ չանհետացավ մարդկանց մեջ, որովհետև ժողովուրդների յուրաքանչյուր բազմություն հետամուտ եղավ որևէ պաշտելի բան հնարելու:

Քանզի բնական է մարդու համար այս իղձը՝ ունենալ մեկին պաշտելու, որն ամեն ինչից վեր համարվի և բոլոր արարածների արարիչ ու խնամող լինի, որը մեր լեզվով կոչվում է Աստված: Ըստ նախնի հայրերի՝ այս բառը ստուգաբանվում է «աստ էած» մեզ, այսինքն՝ հաստեց, կամ՝ «ի հաստունն ածող», այսինքն՝ հաստիչ: Սակայն կարող է ստուգաբանվել նաև որպես «ազդված», այսինքն՝ հայտնված կամ հրապարակված և կամ ծանուցված: Քանզի ոչինչ այնքան չի հայտնված ու ծանուցված արարածներին, որքան Աստծու գոյությունը, ինչպես որ ոչինչ այնքան լուռ ու ծածկված չէ, որքան ինչությունն Աստծու, ով առավել ծանոթ է բացասական անվամբ, քան հաստատական, որովհետև մտքից վեր է: Այս պատճառով էլ պարտավոր ենք միայն Նրա գոյությունը ճանաչել և Նրան ծառայել, ինչին նաև մեր բնությունն է ինքնաբերաբար ձգտում:

Ուստի մարդիկ հեթանոսական այլևայլ կրոններ սահմանեցին՝ թելադրությամբ դևի, որը շեղեց նրանց դեպի բազմաստվածություն և կուռքերի ու արարածների պաշտամունքի զանազան աղանդներ, որպեսզի նրանցով զբաղվելով՝ դադարեն ճշմարիտ աստվածգիտությունը փնտրելուց:

Բայց նրանց մեջ գտնվեցին իմաստասեր մարդիկ, ովքեր բնական լույսով ճանաչեցին, թե սնոտի են կուռքերի պաշտամունքները, և ձգտում էին գտնել բնության հեղինակին՝ մի և միակ ճշմարիտ Աստծուն, մինչև իսկ մտքով բարձրանում էին դեպի աստղերի կամարները: Այդտեղից՝ արարածների շարժումից ու սկզբնավորումից հասկացան, որ կա ինքնագո գերագույն Էակ՝ անշարժ ու անսկիզբ. ինչպես որ նրանց միջի վսեմախոհն էր ասում, «կա Մեկը, որ շարժում է և չի շարժվում, ամենագոր է, և հարկ է Նրան ծառայել»:

Թեպետ նրանք ճանաչեցին Աստծուն, բայց ոչ այնպես, ինչպես հարկ էր ճանաչել, ոչ էլ կարողացան իբրև աստծու փառավորել կամ նրանից գոհանալ, ինչպես ցույց է տալիս առաքյալը: Քանզի հնարավոր չէր, որ մարդը բնական գիտությամբ բարձրանար դեպի գերբնականի հետ ծանոթությունը, որովհետև զգալի կարողությունը չի զուգակշռվում իմանալի առարկայի հետ:

Ուստի գթալով Իր ձեռքի գործերին՝ Աստված Իրեն հայտնեց նահապետներին զանազան տեսիլներով, օրինակներով, խոստմամբ ու գրավոր օրենքով, որոնցով, ինչպես նորակիրթ մանուկների, վարժում էր մեր մարդկային բնությունը ճշմարիտ հավատքի ուսման այբբենարանով: Եվ հուսկ հետո Իր Որդի ու մեր Տեր Քրիստոսով հայտնեց ու սովորեցրեց աստվածապաշտության ճշմարիտ ու կատարյալ հավատքը, որ նույն ինքը քրիստոնեական սուրբ և ուղղափառ հավատքն է:

Այո՛, բացի քրիստոնեական սուրբ հավատքից, որքան էլ զանազան աղանդներ կամ կրոններ լինեն, ճշմարիտ հավատք չեն. որովհետև կամ չեն հասել ճշմարիտ աստվածածանոթությանը, ինչպիսին կռապաշտությունն է, կամ թերի են մնացել ճշմարիտ աստվածածանոթության մեջ, ինչպիսին հրեականությունն է, կամ էլ տեսական ու գործնական մոլորություններով խոտորվել են ճշմարիտ հավատքի ուղղությունից, ինչպիսին են հերետիկոսական աղանդները, որոնք թյուր ավանդություն են, անպիտան՝ հավիտենական փառքը ժառանգելուն: Ուրեմն՝ միայն քրիստոնեականն է ճշմարիտ հավատք, միայն որով են ճանաչում ճշմարիտ Աստծուն, մի էություն երեք Անձերով՝ Հորով, Որդով ու Սուրբ Հոգով, և հավատում Աստծու Խոսքի մարդեղությանը, ինչպես և ուսուցանում է սուրբ Եկեղեցին հանգանակի ու դավանության մեջ:

Դ. Ինչպես որ մեկ է ճշմարիտ Աստվածը, այդպես և բոլոր ազգերի մեջ և ուղղափառ քրիստոնյաների լեզուներով ըստ էության մեկ է ճշմարիտ հավատքը, որ առաքյալներից մինչև այժմ՝ անընդհատ հաջորդությամբ, մեկ, սուրբ, ընդհանրական ու առաքելական Եկեղեցու մեջ հաստատուն է մնում ու կմնա հավիտյան: Ուստի ողջ աշխարհի բոլոր ուղղափառ եկեղեցիները, բոլոր ուղղափառ ազգերի հետ միասին, են և կոչվում են Ընդհանրական Եկեղեցի: Այսպիսին է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին՝ հիմնված սուրբ առաքյալների քարոզության, ուղղափառ ժողովների սահմանադրության ու սուրբ հայրերի ողջամիտ վարդապետության վրա: Յուրաքանչյուր քրիստոնյա, ինչ ազգից էլ որ լինի, եթե հավատքի նույն ճշմարտությունն ունի, ուղղափառ է: Եվ եթե ճշմարիտ հավատքն ունենալու հետ նաև ըստ սուրբ Եկեղեցու կանոնների բարի գործեր կատարի և բարի խոստովանությամբ ելնի աշխարհից, Աստծու որդեգիր է ու երկնքի արքայության ժառանգ:

Ե. Շատերը միայն ճանաչում են, թե իրենք քրիստոնյա են, բայց չունեն քրիստոնեական հավատքի և ուղղափառ վարդապետության հարկավոր գիտելիքները: Ուստի հավատքի ու հավատքին վերաբերող բաների մասին խոսք բացվելու ժամանակ ընդդեմ ուղղափառության խոսելով մեղանչում են կամ ականջին տհաճ բաներ խոսելով՝ գայթակղության առիթներ տալիս: Ուրեմն՝ արժան է, որ ամենքը գիտենան հավատքին վերաբերող ու փրկության համար կարևոր բաները:

Ձ. Ծնողները, ուսուցիչները, կնքահայրերն ու խոստովանահայրերը պարտավոր են երեխաներին ուսուցանել հավատքի էական մասերը և մեր ուղղափառ վարդապետությունը՝ ըստ սուրբ Եկեղեցու ավանդության, ինչպես նաև բարոյական առաքինությունները: Որովհետև ուղղափառ հավատքն է, որ Աստծուն ճանաչել է տալիս, նա բոլոր առաքինությունների հիմքն ու խարխիսն է, որին հարում է հույսը, որը հավատքի ծանուցած խոստացված բարիքները ժառանգելու աներկմիտ ակնկալությունն է: Սրան է հարակցվում և սերը, որը միավորիչն է այն բանի հետ, ինչին մարդ հավատում է և ինչի վրա հույսը դնում: Ուստի հավատքն Աստծուն ճանաչել է տալիս, հույսը՝ հասցնում Նրան, իսկ սերը՝ միա-



վորում Նրա հետ:

Կատարյալ սերը գործելուց դադարել չգիտի: Եթե սիրելուց մի պահ դադարի, իսկույն իր գորուքունը կորցնելով՝ շիջում է և ասես մեռնում: Ուստի Նրան միշտ հարկավոր է սիրո գործեր կատարել, այսինքն՝ ամեն ինչից վեր սիրել Աստծուն, ամեն ինչում գոհանալ Նրանից, օրհնել Նրան, Աստծու սիրո համար չխնայել ո՛չ ունեցվածք, ո՛չ սիրելիներ, ո՛չ մարմին ու ո՛չ կյանք, բոլոր մեղքերից հեռու մնալ, միամիտ սրտով ծառայել Նրան, կատարել Նրա բոլոր ցանկությունները, ճանաչել Նրա երախտիքները, ամեն ինչում հույսը Նրա վրա դնել և կատարել սիրո ամբողջությանն ու կատարելությանը վերաբերող մյուս բոլոր աստվածահաճո առաքինությունները: Սերը հավատի ու հույսի պսակն է և ըստ առաքյալի՝ օրենքի լրումը, որովհետև սիրո պատվիրանից են կախված ամբողջ օրենքն ու մարգարեները:

Ուստի հավատն ասես արմատ է, հույսը՝ ոստ, իսկ սերը՝ պտուղ:

Է. Հավատացած ու հուսացած բաները ժառանգելու դեպքում հավատն ու հույսը գործելուց դադարում են և միայն ունակությամբ մնում: Իսկ Աստծու հանդեպ սերը երբեք չգիտի դադարել՝ թե՛ գործունեությամբ և թե՛ ունակությամբ. ու դեռ ավելին, երբ Սիրելիին փարվում ու նրա հետ միավորվում է, առավել է աճում ու զորանում: Իսկ Աստծու հանդեպ սիրո նշանն ընկերոջ հանդեպ սերն է. որովհետև Աստծուն պետք է սիրել սեփական անձի համար, իսկ ընկերոջը՝ Աստծու: Եվ ո՞վ կողբա նրանց վիճակը, ովքեր լոկ խոսքով են խոստանում սեր ունենալ, բայց իրականում Աստծու ու մարդկանց հանդեպ սիրո և ոչ մի արդյունք ցույց չեն տալիս:

Ը. Առաքինին իր ողջ կյանքում երկնչում ու դողում է, որ իր առաքինության արդյունքները չկորցնի՝ ըստ այսմ. «Ահով և դողով դուք ձեր փրկության համար աշխատեցե՛ք» (*Փիլյ. Բ 12*): Բայց այս երկյուղը նրան տրտմական ու տանջող կրքեր չի պատճառում, այլ միշտ քաղցր բերկրանք է առաջ բերում՝ ըստ այսմ. «Եվ սիրտս ուրախանա՛ ակնածելով քո անունից» (*Սաղմ. 25 11*): Այդպիսին որքան բարձր է թռչում դեպի առաքինության բարձունքը, այնքան նրա մեջ զորանում է անկման երկյուղը. և որքան երկյուղում է անկումից, այնքան վեր է սլանում դեպի առաքինությունների ծայրագույն գագաթը: Ուստի հոգ չի անում ունեցվածքից ու իշխանությունից զրկվելու, հայրենիքից տարագրվելու, առողջությունն ու մարմինը կորցնելու համար, որովհետև քաջ գիտի, որ դրանք անցավոր են ու բնությամբ կորստալկան, իսկ առաքինության վարձը, որ արքայության փառքն է, անկողոպտելի է ու հոգու հավիտենական հարստություն: Ուստի աշխարհի պես-պես ձախորդություններից, որ կարող են իրեն պատահել, չի տխրում ու ընկճվելով չի հուսալքվում, այլ խնդամիտ բերկրանքով հրճվում ու զորանում է հոգով, որովհետև աներկբա հույս ունի Տիրոջից ստանալու իր աշխատանքների վարձը հավիտենական կյանքում:

Թ. Առաքինի ու կատարյալ մարդն իր գործած բարին չի մտաբերում ու ցավում է այն բարու համար, որ ծուլության պատճառով չկատարեց: Բարերարի երախտիքը միշտ հիշում է ու մեկից կրած անիրավությունն իսպառ մոռանում: Իր սակավ ունեցվածքը բավական է համարում և ուրիշների շատը՝ ոչինչ: Ընկերակցում է բարի մարդկանց և չարերի հետ հաղորդակցությունից հեռու մնում: Մեծամեծների առաջ ակնածալից ու լուռ է և հավասարների ու փոքրերի հետ քաղցրությամբ է կենցաղավարում: Հեզ ու խոնարհ բարք ունի, քաղցրախոս ու սակավախոս է և ամենքի հանդեպ՝ հավատարիմ: Հաջողության մեջ չի բարձրամտում և ձախորդության մեջ չի հուսահատվում, բարեկամ է սակավ մարդկանց, բայց թշնամի՝ ո՛չ մեկին: Ամենքին բարիք է գործում, որքան կարողանում է, և ոչ ոքի որևէ չարիք չի պատճառում, թեև կարող է: Իսկ մեր օրերում ոչ ոքի չի վնասում նա՛, ով վնասել չի կարողանում. որովհետև ժամանակի չար լինելու պատճառով որևէ տեղ հագիվ կարելի է գտնել մեկի, որ վնասել կարողանա, բայց չվնասի:

Ժ. Առաքինին նախընտրում է կյանքից զրկվել, քան իր բարի համբավը բժավորել՝ մտածելով, որ այս աշխարհի կյանքը դյուրեղծական ու անցավոր է, իսկ բարի համբավը՝ անմահ ու մշտնջենավոր, և անմտություն է մշտնջենավորն անցավորի հետ փոխանակել: Բայց առաքինուն հատուկ է բարին գործել առանց բարի համբավի ակնկալության, և եթե վատ համբավ էլ տարածեն, դրա համար չտրտմել, այլ ջանալ, որ իրեն որևէ չարիք չպատճառեն:

ժԱ. Ով ուրախանում է, երբ ուրիշներն իրեն բարեհամբավում են, և տրտմում, երբ իր մասին վատ համբավ են տարածում, ուրիշների կամքին ու լեզվին է ծառայում: Քանզի մարդիկ ճշմարիտին կամ ստին չեն նայում, այլ համբավում են, ինչպես կամենում ու ախորժում են:

ժԲ. Ամեն մեծագործ շինվածք երկար ժամանակի ընթացքում կարող է անհետանալ, բայց բարի անունը բնավ չի կորչում: Նախընտրելի է մեռնել բարի անվամբ, քան ապրել վատ համբավով: Ով աշխարհում բարի համբավ է թողնում, նա մահվանից հետո էլ է կենդանի մնում, իսկ վատահամբավը կենդանվույն մեռած է, եթե նույնիսկ երկար տարիներ ապրի:

ժԳ. Կատարյալն ու պատվելին նա չէ, ով կատարելության համբավ ու պատիվ ունի, այլ նա, ով ունի իր մեջ կատարելություն ու պատվի արժանավորություն: Որովհետև կան շատերը, որ կատարելության համբավ ու պատիվ ունեն, բայց կատարելություն իրենց մեջ ու պատվի արժանավորություն չունեն: Եվ կան շատերը, որ կատարելության համբավ ու պատիվ չունեն, բայց ունեն կատարելություն իրենց մեջ ու պատվի արժանավորություն: Ավելի լավ է կատարյալ ու պատվելի լինել, քան կատարելության համբավ ու պատիվ ունենալ:

Պատիվը ծխի նման է, և ով նրան հետապնդում է, նրա աչքերից արցունքը չի պակասում:

ժԴ. Պետք է ջանալ գովեստի արժանի լինել, բայց գովեստ լսելուց պետք է փախչել: Ով ախորժում է իր գովեստը լսել, իսկույն կորցնում է իր արժանավորությունը: Կատարյալ մարդը, երբ իր մասին գովեստ է առերես լսում, սրտում իրեն արհամարհում է: Սեփական անձի մասին գովեստ լսելու ախորժակը սնափառության նշան է: Ճշմարիտ գովեստը դեմ հանդիման՝ նման է սուտ մարդահաճության:

ժԵ. Շատերն են գովվում, բայց նրանցից սակավն է գովեստի արժանի: Համբավը շատ անգամ չի համապատասխանում նրան, ինչը գովեստով հռչակվում է, որովհետև հասարակությունը սովոր է մի բան հռչակել առանց լավ տեղեկանալու, ճշմարտությունից հեռու կերպով: Համբավն արևի տակ եղող մարմնի ստվերն է, որ մարմնի համեմատ մերթ աճում է ու մերթ նվազում: Ուստի չարժե ամբողջապես հավատ ընծայել համբավին, այլ պետք է ճշմարտությունը փնտրել:

ժԶ. Իմաստունների ու առաքինիների գովեստալից համբավը, որ հնչում է ռամիկների բերանում, նման է օդի, որ ոյուրավ փոխվում է ամեն գույնի: Որովհետև եթե պատշաճ է հավատալ, թե ծովի ջրերը կարող են քամուց անշարժ մնալ, պատշաճ է հավատալ և ռամիկների տարածած համբավին: Սակայն ինչպես որ մեղմ քամուց ջրերը շարժվում են, այդպես էլ մի աննշան կարծիքից փոփոխվում են նրանց դատումն ու տարածած համբավը:

Բարեմիտներին է թույլատրելի որևէ մեկի մասնավոր բարիքները գովեստով հռչակել:

ժԷ. Առաքինի մարդը պիտի ներանձնավոր լինի, որպեսզի մարդկանց հետ սակավ խոսի, իր հետ՝ հաճախ և Աստծու հետ՝ միշտ: Առանձնությունը հոգին բռնադատում է երկինք ելնելու և Աստծու հետ խոսելու, որովհետև Աստված մեկի սրտում խոսում է միայն նրա միայնության մեջ:

Մարդու խոսակցության առարկան, ինչպես մարդն ինքը, երեք բանի է հանգում՝ կամ Աստծու գովաբանությանը, կամ որևէ ճշմարիտ բան ուսանելուն, կամ կարևոր բաներ ուսուցանելուն: Իսկ ով սրանցից օտար մի բան է խոսում, մարդկության սահմանից խտորվում է, որովհետև իսկույն ընկնում է կամ Աստծուց տրտնջալու, կամ մոլորության ուսման, կամ անարժաններին ուսուցման մեջ:

ժԸ. Առաքինությունն առավել աճում է Աստծու համար նեղություններ կրելիս, և ով գիրկը սիրով հանձնում է խաչին, ոչ մի դժվարություն չի զգում: Որովհետև երբ մեկը մտքում հաստատուն կերպով դնում է վշտեր կրել՝ Աստծու հանդեպ հավատն ու սերը պահպանելու համար, վշտերն իսկույն ավարտվում են: Եվ ով հիշում է մեր Քրիստոս Աստծու չարչարանքները, համբերում է աշխարհի ամեն նեղության, մանավանդ որ իրեն ավելի դառնագին վշտերի ու նեղության է արժանի համարում:

Փշալից ցանկապատն արգելում է հափշտակողներին այգի մտնել ու նրա պտուղները փչացնել. նեղություններն ու վշտերը հոգիների թշնամուն թույլ չեն տալիս մտնել առաքինու սիրտն ու նրա բարեմտությունը կողոպտել:

Ով կարող է խաչն ուսերին կրել, նրան վայել չէ այն գետնաքարշ անել:

ժԹ. Բարիք գործողը չէ, որ արժանի է վարձի, այլ բարու մեջ համբերությամբ հարատևողը. որով-

հետև իսպառ համբերությունն է գործը բարի պսակողը: Ով հետ է կանգնում բարուց, որ սկսել է գործել, արածը խանգարում է, և հայտնի չէ, թե կկարողանա՞ դրանից ավելի լավն անել:

Ի. Առաքինու վարձն ու պարծանքն աճում են, երբ կարողանում է բարիքների արդյունքը դառնալ վշտերում շատացնել, որովհետև այդ ժամանակ նմանվում է երկրին, որը փշերի մեջ շուշաններ է բուսեցնում: Քանզի մարդիկ էլ զարմանում ու գովում են, երբ տեսնում են փշահեղձ հողը՝ լի շահեկան պտուղներով:

ԻԱ. Թող առաքինիները չտրտմեն՝ տեսնելով ուրիշներին հաջողության մեջ ճոխացած, և իրենց՝ անհաջողության մեջ տկարացած: Այնժամ պիտի տրտմեն, երբ տեսնեն, որ հարստությամբ հղվացածներն առաքինությունների հանդեպ փույթ չունեն:

ԻԲ. Դժվարին ու ասես անհնարին գործերը դյուրին են նրա համար, ով անձանձիր ջանում է ելք գտնել: Դյուրին գործերը դժվար են նրա համար, ով մեղկությամբ դանդաղում ու հուսահատվում է: Ով կանենում է առաքինի լինել, թող աշխատի իրեն կրթել առաքինության գործերի մեջ: Եվ թեպետ սկզբում նրան թվում է, թե դժվարություն է կրում, բայց հետո զգում է անսպասելի մի դյուրություն ու հանգիստ, ինչպես ճանապարհին հոգնածը՝ իջևան, և նավագնացը՝ նպատակադրյալ նավահանգիստը հասնելիս:

ԻԳ. Զինվորի համար քաջություն է ոչ թե պատերազմ մղելը, այլ թշնամուն հաղթելը: Ով խաղաղ ժամանակ իր քաջությամբ պարծենում է, պատերազմի ժամին շուտով փախուստի է դիմում:

Երկրի վրա մարդու կյանքը պատերազմ է, և հաղթողներն են մրցանակին տիրանում: Արդ, կա մարդ, որ իր հետ է մարտնչում, ուրիշը՝ աշխարհի հետ, մի ուրիշն էլ՝ մարդու. մեկը հաղթում է, մյուսը՝ պարտվում: Մարդն ինքն իրեն հաղթում է, երբ նվաճում է իր անկարգ բաղձանքները. հաղթում է աշխարհին, երբ արհամարհում է փառքն ու հարստությունը. հաղթում է մարդուն, երբ ամենքին բարիք է գործում և համբերում անիրավ մարդկանցից ընդունած վնասներին:

ԻՍկ ինքն իրենից պարտվում է, երբ մարմնի ցանկություններն է կատարում. աշխարհից պարտվում է, երբ փառքի ու հարստության է ծառայում. մարդուց պարտվում է, երբ չարը չարով է հատուցում: Ուրեմն՝ ջանանք ամեն ինչում հաղթող լինել, որպեսզի փառքի պսակը վերցնենք:

ԻԴ. Անարի ու վատասիրտ է, ով ունեցվածքի կամ հարստության կորստյան ահից հանձն է առնում անիրավել Աստծու կամ ընկերոջ հանդեպ: Ավելի լավ է քաջությամբ մեռնել, քան հանցավորությամբ ապրել:

ԻԵ. Եթե ծերերը երիտասարդներից ավելի չջանան բարիք գործել, արդարանալ չեն կարող, որովհետև ծերերի մեջ ախտավոր կրքերի ուժը թուլացած է: Եվ քանի որ մոտ են այս կյանքից հեռանալուն, պարտավոր են հավիտենական ուղու պաշարը միշտ պատրաստ ունենալ:

ԻԶ. Ով երիտասարդ տարիքում, պատճառ բերելով հասակի ու կրքերի եռանդը, առաքինաբար չի ապրում՝ մտքին դնելով առաքինություն գործել ծեր ժամանակ, այդպիսին երբ ծերության է հասնում ու մահվան դռներին մոտենում, պատճառ է բերում մարմնի տկարությունը: Բայց քանզի հնարավոր չէ գերեզմանում առաքինություն գործել, ուստի իրավամբ է ժառանգում իր ծուլության պատիժը:

ԻԷ. Մարմնի կյանքը հոգին է, և հոգու կյանքը՝ կենդանի հավատը: Հավատի կյանքը սերն է, և սիրո կյանքը՝ հույսը: Հույսի կյանքն Աստծու խոստումն է, և խոստման կյանքը՝ ճշմարտությունն Աստծու, որ խոստման մեջ հաստատուն է: Ուրեմն պինդ բռնենք հավատի ճշմարտությունը, որով ճշմարիտ Աստծուն ճանաչում ենք, նրան սիրում ու ակնկալում նրա աներևույթ պարգևները, որ խոստացավ շնորհել նրանց, ովքեր հավատով, հույսով ու սիրով ծառայում են իրեն:

ԻԸ. Այս կյանքի փառքն ու մարմնական վայելքը նախքան ստացվելը քաղցր են թվում, բայց ստացվելուց հետո մարդու ախորժակը դառնացնում են: Իսկ գիտությունն ու առաքինությունը, որոնք մտքի ու հոգու վայելք են, հակառակն են գործում. նախքան ստացվելը դառն ու դժվարին են թվում, բայց ստացվելուց հետո հոգին քաղցրացնում են: Սրա մասին է ասում մարգարեն. «Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, թե որքան քաղցր է Տերը» (Սաղմ. 149):

ԻԹ. Առաքինությունն ինչպես որ գեղեցիկ է, այդպես և փափուկ է, այնքան, որ նույնիսկ դույզն-ինչ

թերությամբ մեծապես արատավորվում է: Որովհետև նման է պարզ հայելու, որ շոգիներից աղոտանում է, կամ դյուրաբեկ ապակու, որ մի թեթև բախումից փշրվում է: Ուստի առաքինիները թող զգուշանան որևէ թերությունից, որպեսզի իրենց առաքինության գեղափայլ դեմքը չտգեղանա:

Լ. Երկրում ապրող ու աշխարհի վայելքներն ունեցող ամեն մեկը չէ, որ աշխարհասեր է համարվում, այլ նա, ով մտքով բևեռված է այս աշխարհի սիրուն ու վայելքին: Քանզի հնարավոր է մարմնով բնակվել երկրում ու հոգով ձեմել երկնքում՝ ըստ այս առածի. «Աշխարհում կա, անապատում չկա»:

ԼԱ. Ինչ որ անում ես քո ընկերոջը, այն անում ես քո Արարչին. Աստված Իրենն է համարում այն, ինչ անում ես ուրիշին, որովհետև նա էլ է իր արարածը, և հատուցում է քեզ ըստ արածիդ՝ բարի թե չար: Ուրեմն ջանա բարիք գործել քո ընկերոջը, որպեսզի քեզ էլ բարի լինի: Որովհետև ինչ սերմանում ես, նույնն էլ ժողովում ես:

ԼԲ. Մարդիկ շատ անգամ կռիվ են տալիս իրենք իրենց հետ, որովհետև կորցնում են այն, ինչ կարծում են, թե ունեն, և բռնվում նրանից, ինչից փախչել են կամենում: Ինչպես որկրամուկը, կամենալով վայելել ու երկար ապրել, որովայնը պես-պես կերակուրներով ու ըմպելիքներով է խճողում, սակայն նրանցով առավել է տանջվում ու իր կյանքը կարճացնում: Հպարտը, ցանկանալով ամենքից փառավորվել, իր մասին մեծ-մեծ բարբառում է, բայց դրանով էլ առավել է վարկաբեկվում, որովհետև ամենքը հպարտին արհամարհում են: Գողն անաշխատ կյանքի փափագով ձեռնարկում է ուրիշների ունեցվածքը գողանալու, բայց ի վերջո բռնվելով՝ չարաչար մեռնում է:

Ուրեմն՝ միայն առաքինին է կարող երջանիկ ապրել:

ԼԳ. Կյանքից ավելի պատվական ոչինչ չկա. բայց նրանից ավելի անարգ ոչինչ չկա մոլիների աչքում, որոնք անվայել բաների համար այն ապարդյուն վատնում են:

Քանզի սնափառը կյանքը վտանգում է փառքի համար, ազահը՝ ունեցվածքի, բղջախողը՝ հեշտանքի, ռիսակալը՝ վրեժխնդրության: Սրանք իրավամբ են կյանքից զրկվում, որովհետև նրա հարզը չեն ճանաչում:

ԼԴ. Չկա մեկը, որ մի բան չսիրի և մի բանի չհուսա, որպեսզի դրա մեջ իրականանան իր բաղձանքները: Քանզի սիրո և հույսի նպատակը բաղձանքների իրականացումն է: Ուստի բարիներն ու չարերն ունեն բաներ, որոնք սիրում են ու որոնց վրա հույսը դնում, և որոնցից են ակնկալում ստանալ իրենց ցանկացած ու հուսացած բաների իրականացումը՝ իբրև իրենց սիրո ու հույսի վարձ ու փոխհատուցում:

Արդ, բարիները սիրում են Աստծուն ու հույսը դնում նրա վրա, ուստի Աստծուց է պարգևվում նրանց վարձը, որ հավիտենական հանգիստն է: Իսկ չարերը սիրում են այս աշխարհն ու հույսը դնում աշխարհի իրերի վրա, ուստի աշխարհից գնալիս Աստծուց անվարձ են մնում, որովհետև ինչ որ սիրում էին և ինչի վրա հույսը դնում, մնաց այնտեղ՝ աշխարհում: Քանզի այս աշխարհը չի կարող իրեն սիրողներին հանդերձյալ կյանքում վարձատրել, սակայն բարիների սիրած Աստվածը, որ երկնքի ու երկրի տերն է, բարիների բաղձանքները կատարում է՝ հենց ինքը դառնալով հանդերձյալի հանդեպ նրանց սիրո ու հույսի վարձը:

ԼԵ. Թեպետև հաստատուն ու խորարմատ ծառերի ոստերն ամեն քամուց չարժվում են, սակայն արմատներն անկործան են մնում: Այս կերպ առաքինի մարդը հարմարվում է ժամանակի պտույտների փոփոխմանը՝ իր բարեմտության մեջ անշարժ մնալով: Քանզի եթե ժամերի ու ժամանակների փոփոխման դեպքում մարդն իր բարեմտությունից շեղվի, բացի վնասից, ուրիշ ոչինչ չի շահի: Ժամանակի հարաշարժ դիպվածներում մարդու իմաստությունն այս է՝ բարեմտության մեջ հաստատուն մնալ:

«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, ողորմությամբ Աստծու, որ պատրաստեք ձեր մարմինները՝ որպես զոհ կենդանի, սուրբ, աստվածահաճո. այդ է ձեր բանական պաշտամունքը» (Հռոմ. ԺԲ 1):

«Ճիշտ է այս խոսքը, & ուզում եմ, որ դու հաստատ մնաս սրանում, որպեսզի Աստծուն հավատացողները ջանք թափեն բարի գործեր կատարելու, քանի որ այդ է բարի & օգտակար՝ մարդկանց համար» (Տիտ. Գ 8):

## Գ Լ ՈՒՆ Ժ Դ

### Ն ՈՂԵՄ ՈՒԹՅՈՒՆ

Ա. Պատվի ու համբավի պահպանը մտքի խոհեմ դատումն ու ընտրողությունն է: Որովհետև ով բարվոք է խորհում, բարվոք էլ դատում է և գործը կատարում համաձայն ժամանակի պարագաների: Ոչ ոք չի կարող որևէ բանում մեղադրել նրան, այլ հակառակը՝ գովեստ ու մեծարանք է նրան մատուցում:

Բ. Ամեն ինչ միայն սեփական դատողությամբ անելն ինքնահավանություն է, և ամեն ինչ միայն ուրիշների դատողությամբ անելը՝ հիմարություն:

Գ. Որևէ ծերունի, որ տարիքի մեծության հետ ունի մտքի կատարելություն, գովեստի է արժանի. ուրովհետև բազմամյա փորձառությամբ սովորեց լավը վատից ու օգտակարը վնասակարից տարբերել: Ուստի երիտասարդները թող դժվարին բաների վճիռը փորձառու ծերերից առաջ չկայացնեն, այլ նախ նրանց հետ խորհրդակցեն և որոշեն նրանց դատման համաձայն անել:

Եթե ծերը խոհեմ չէ, ինչպես պահանջում է այդ արգո հասակը, անփորձ երիտասարդ է, և եթե երիտասարդը եռանդուն չէ, ուժաթափ ծեր է:

Դ. Իմաստություն չէ միամիտ սրտով արագորեն համաձայնելը որևէ խորհրդի, եթե նույնիսկ այն օգտակար թվա, քանի դեռ նրա բոլոր պարագաները չեն քննվել. որպեսզի չլինի թե որևէ վնաս պատահի, և գղջում ու կսկիծ հետևեն:

Ե. Մտքի խաբեություն է անցած ժամանակներում ստուգիվ տեղի ունեցած ամեն անցք երկբայական կարծելը, ապագայում տեղի ունենալիքներին չհավատալը և հավաստի համարելը միայն նրանք, որոնց իրականացումը ներկայում ակներև է: Որովհետև այսպիսիք ներկայի գործերի միջոցով անցյալ ու ապագա գործերին խելամուտ չեն լինում բանականների պես, այլ անբանների պես ճանաչում են միայն ներկայի գործը, որին ականատես եղան և որը նույնպես շուտով մոռանում են. կամ ինչ որ պատճառների բերումով է առաջ գալիս, պատահականություն են համարում և չգիտեն, թե իրենց անհավատության պատիժը սեփական վնասներով պիտի կրեն:

Զ. Մեծ զգուշության կարիք ունի իշխաններին որևէ բան ասելը կամ խորհուրդ տալը՝ նրանց ուղղելու համար: Որովհետև եթե նույնիսկ նրանք ճանաչում են ասված խոսքերի ճշմարտությունն ու իրենց սխալները, զայրանում են, եթե խրատական խոսքերում փոքր-ինչ ծանր ու խիստ բառեր են լինում: Որովհետև շողոքորթների հետ կենցաղավարությամբ սովորել են շողոքորթվել ու միշտ հաճելի բաներ լսել: Ուստի նրանց խայթելու համար պարզ խոսքերի ճշմարտությունը բավական է, երբ կամենում են ճանաչել իրենց սխալները:

Է. Խոհեմը մի բան ձեռք բերելու համար շատը կորստյան վտանգի մեջ չի դնում և շատ անհավաստի բաների համար մի հավաստին ձեռքից բաց չի թողնում:

Ը. Եթե պատահի կռվել մեկի հետ, մարդ պիտի քննի, թե նախ՝ կռվելու արդար իրավունք ունի՞, երկրորդ՝ ո՞ւմ հետ պիտի կռվի, կամ նա ի՞նչ զորություն ունի, երրորդ՝ իր կարողությունը բավակա՞ն է նրան հաղթելու: Առավել հուսալի է հաջողակ ելքի հասնել խոհեմ մտքով, քան գազանական վստահությամբ:

Թ. Քաջ զորավարին վայել չէ վախկոտությամբ հետ կանգնել պատերազմից, թեկուզ այն վտան-

գավոր լինի, երբ հայրենիքի օգուտն է ստիպում: Ավելի լավ է, եթե նա փառքով մեռնի, քան անարգանքով ապրի: Բայց և պետք չէ հանդուգն համարձակությամբ մխվել թշնամու ներսը՝ կորստյան մատնելով սեփական անձը: Խելագարություն է, որևէ տեղից հաղթության ակնկալություն չունենալով, սեփական անձը մահվան վտանգի մեջ գցելը:

Ով խոհեմությամբ չի վարվում՝ կշռելով իր գործության չափն ու թշնամու վիճակը, ավելի հանդուգն է, քան արի, և ավելի արժանի է նախատինքի ու պատժի, քան գովեստի ու պսակի: Հաղթություն ստանալու միջնորդը հարմար առիթի սպասելն է:

Ժ. Եթե մեկը կամենում է ձեռնարկել որևէ մեծ ու դժվարին գործի, պիտի իմաստունների ու առաքինիների հետ խորհրդակցի և նրանց անսա, որպեսզի գործի ծախողվելու դեպքում ոչ ոք չկարողանա նրան մեղադրել:

ԺԱ. Բնության դեմ մարտ է մղում, ով ձգտում է կատարել գործեր, որոնք իր կարողությունից վեր են:

Ով ջանում է որևէ գործ կատարել ու չի սպասում հարմար ժամանակի, նման է ծառի, որը ժամանակից շուտ ծաղկում է, բայց ցրտից վնասվելով՝ չի կարողանում պտուղ տալ:

ԺԳ. Եթե մեկը կամենում է մի բան ասել կամ անել, նախապես դրա բոլոր պարագաները պիտի քննի, որպեսզի հետո որևէ վնաս չհասնի ու վերջին զոջումը ոչինչ չարժենա: Խորախորհուրդ քննության կարիք ունի այն գործը, որին արդեն ձեռնարկած լինելով՝ անհնարին է հետ դառնալ:

ԺԴ. Մարդիկ բազմիցս սակավ օգտի համար շատ բաներով վնասվում են. որովհետև նայելով միայն առջևում եղող օգտին՝ ուշադրություն չեն դարձնում մեծամեծ վնասների վրա, որոնք կարող են գործին հետևել: Իսկ եթե ուշիուշով գնեին, թերևս վնասները զգային ու զգուշանային, ուստի ո՛չ սակավ օգուտին ձգտեին, ո՛չ էլ բազում վնասներ կրեին:

ԺԵ. Որևիցե ազգի կամ քաղաքի խորհրդականները պարտավոր են կրքերից, այսինքն՝ սիրուց ու ատելությունից ազատ լինել, որպեսզի հասարակության օգուտը կարողանան տնօրինել:

ԺԶ. Եթե մեկը խորհրդակցության կանչվի, թող չշտապի իր կարծիքը հայտնել, մինչև խոսելու հերթը չհասնի իրեն:

ԺԷ. Երբ բազմամարդ ժողովում խոսք է բացվում որևէ կարևոր խնդրի մասին, պետք չէ նայել, թե ով է խոսում, այլ թե ի՞նչ է ասում, որովհետև կարող է պատահել, որ հասարակ մարդկանցից կամ փոքրերից մեկի խոսքն ավելի օգտակար լինի, քան բազում իշխանավորների կշռադատումները: Ուստի վայել չէ անձի նվաստության պատճառով մեկի խոսքերն արհամարհելի համարել:

ԺԸ. Լավ խոսել իմանալը բավական չէ, պետք է գիտենալ և ժամանակի ու տեղի հարմարությունը: Չարաչար է նվագում քնարահարը, որ մեռելատանը հարսանեկան երգեր է գեղգեղում: Եվ ով ուրախ խնջույքի ժամանակ դժբախտությունների ու տրտմալից բաների մասին է խոսում, գեղեցիկ զարնան քաղցր սյուքը ձմռան ցրտաշունչ քամի է դարձնում:

ԺԹ. Սեփական անձի մասին զգույշ ու չափավոր է պետք խոսել, որպեսզի խոսքերն ինքնագովեստի չվերածվեն. եթե նույնիսկ ստույգ ու հավաստի է ասվածը, տակավին կարող է երկբայական լինել: Ով չսովորեց զգուշությամբ խոսել, այնպիսինին վայել է իսպառ լռել:

Ի. Գովեստի արժանի մարդուն պետք է նրա առաքինության չափի համաձայն գովել և ոչ թե ավելի: Իսկ եթե հարկը ստիպի խոսել մեկի թերության մասին, պետք է զեղչունով խոսել և ոչ ճշտիվ:

ԻԱ. Մարդուն ավելի ցանկալի է ուրիշներին խրատելը, քան սեփական անձը. գուցե համարում է, թե ուրիշների շահն ու վնասն ավելի գիտի, քան իրենը: Ուստի իմաստուն թե տգետ մեկն է, հոժարամիտ կերպով խրատում է ուրիշներին, իսկ իրեն կամ երբեք չի խրատում, կամ էլ հազիվ երբեմն է իրեն խորհրդատու ու խրատիչ դառնում: Սակայն արժե իմանալ, որ ամեն ինչում յուրաքանչյուր ոք առավել պարտավոր է իր մասին հոգալ, քան ուրիշների:

ԻԲ. Մարդ պիտի մտածի, թե ամեն մարդուց էլ կարող է իրեն չարիք հասնել, բայց ինքը ոչ մեկին որևէ չարիք պիտի չպատճառի:

Խոհեմություն չէ տկար թշնամուն իսպառ հետապնդելը. չլինի թե վերջինս հուսահատվելով դի-

մադրի ու հարձակվի իր հալածչի վրա:

Բազում բարեկամներ երբեմն չեն կարողանում օգնել, երբ մեկն ընկնում է տառապանքի մեջ, բայց միայն մի թշնամին կարող է մարդուն վնասել, քանի դեռ սա հաջողության մեջ է: Ուստի պետք է ջանալ թշնամի բնավ չունենալ:

ԻԳ. Երկու բան է հույժ հարկավոր ազգի կամ քաղաքի երջանկության համար՝ խոհեմություն և զորություն: Խոհեմություն՝ օգտակար օրենքներով ու խոհեմ մտքով ազգը կամ քաղաքը ղեկավարելու համար, զորություն՝ երկիրն արտաքին թշնամիներից քաջությամբ պաշտպանելու և խաղաղությունն ամբողջել կամեցող ապստամբողներին վտարելու համար:

Հասարակությունը նման է մի մարմնի, որի աչքերը խոհեմությունն են, իսկ ձեռքերը՝ զորությունը: Եվ ինչպես որ ձեռքերն առանց աչքերի պիտանի չեն գործին, դեռ նույնիսկ վնասակար, որովհետև փոխանակ թշնամիներին հարվածելու, անգիտանալով բարեկամներին են հարվածում, այդպես և զորությունն է առանց խոհեմության վնասակար: Ուստի ազգին կամ քաղաքին մեծ վնաս է, երբ խոհեմ ղեկավարները պակասում են:

ԻԴ. Եթե հանձարեղ մարդն իր ճարտարամտությունը հասարակության օգտի համար չի բանեցնում, նման է նրան, ով գեղեցիկ ոտքեր ունի, բայց քայլել չի կարողանում:

ԻԵ. Կան մարդիկ, որ ուրախությամբ են գնում որևէ գործի կամ զբաղմունքի, բայց շատ անգամ տրտմությամբ են վերադառնում կամ բնավ չեն կարողանում վերադառնալ: Քանզի լավ կշռել չգիտեն տեղի, ժամանակի ու ընկերների հետ կապված հանգամանքները, ուստի անզուշաբար են շարժվում ու չարաչար վնասվում: Մարդուն բավական չէ իր անելիքի մասին մտածելը, այլև պետք է մտածել նրա բոլոր պարագաների մասին՝ վտանգների մեջ չընկնելու համար, կամ եթե ընկնի, այդ նախատեսած լինելով, սակավ վնասվի ու ելք գտնի:

ԻԶ. Ավելի զգուշություն է պետք փոքր չարիքների, քան մեծերի հանդեպ: Որովհետև երբ մարդիկ տեսնում են, որ վտանգը մեծ ու մահաբեր է, հնարներ են փնտրում ու վտանգից ազատվում են, իսկ երբ տեսնում են, որ փոքր է, այն չնչին ու անվնաս բան են համարում ու այդ մասին հոգ չեն անում, այդ պատճառով էլ բռնվում են նրանից ու վնասվում: Ուստի խոհեմ մարդը ոչ լիովին վստահ պիտի լինի, ոչ էլ խիստ կասկածոտ, այլ պիտի միջին զգուշավոր շավիղն ունենա: Որովհետև վստահը հաճախ վտանգների մեջ է գահավիժում, իսկ կասկածամիտը վտանգի երկյուղից միշտ տանջվում է:

ԻԷ. Հնարավոր է, որ մարդն իմանա ծովի խորությունները, բայց ոչ՝ սրտի գաղտնիքները, և իմաստուն չէ նա, ով կարծում է, թե մեկի խոսքերից ու գործերից ճանաչում է նրա մտքերը: Որովհետև շատ անգամ մեկի սիրտն այլ է, և նրա խոսքերն ու գործը՝ այլ, և իմաստուն մեկը որքան էլ համարի, թե նենգավորի մտքերին իրազեկ է, խաբվում է նրանից, որովհետև նենգավոր մարդու սիրտն անհնարին անդունդ է:

ԻԸ. Սիրտը լեզվի հետ է փոխանակում, ով իր սրտի ցավերը պատմում է նրան, ով սովոր է միայն սնոտի խոստմամբ օգնել և մատի ծայրով իսկ գործին չմոտենալ:

Զգուշավոր մարդն իր սրտի ցավերը դեմքի կամ շարժումների արտաքին նշանով չի հայտնում՝ գիտենալով, որ ոչ մի օգուտ դրանից չի ստանում:

ԻԹ. Գիտուն մեկը, որ պատրաստվել է մի երևելի խնդրի մասին խոսել, յուրաքանչյուր բառ պիտի կշռի և պարզ ու հստակ մտքերով բացատրի: Որովհետև թեպետ իր դիտավորությունն ուղիղ, և խոսքերը ողջամիտ են, բայց եթե խոսքերում մթին կամ երկդիմի բան կա, լսողներն այն թյուր մտքով են հասկանում, մանավանդ եթե հակառակասեր ու ճշմարտատյաց են, և դառն թշնամությամբ վատա-համբավում են նրան՝ իբրև մոլորամիտի:

Իսկ եթե լսողները մոլորամիտ են, ճիշտը ծեքում, չարաչար են մեկնաբանում, այն իբրև վկայություն վերցնում իրենց խեղաթյուր կարծիքին և ռամիկներին գայթակղեցնում ու նրանց մեջ շուկներ ու խռովություն գցում: Ուստի որևէ բան խոսելիս մեծ զգուշություն է հարկավոր գիտուններին, որպեսզի չարահույզ մտքերը չկարողանան չար բան խոսելու պատճառներ գտնել:

Լ. Խոհեմը ոչ թե բացարձակորեն է դատում, այլ համեմատությամբ: Քանզի հավասար իշխանությամբ

յան բարձրացած ամենքը չէ, որ նաև հավասար փառք ունեն, և հավասար պատժի ենթարկվող ամենքը չէ, որ նաև հավասար տանջանք ունեն. որովհետև փառքն ու տանջանքը զանազանվում են անձերի զանազանությամբ համապատասխան: Արդարև առավել փառավորվում է իշխանական պատվի բարձրացած հասարակ մեկը, և առավել տանջվում՝ պատիժների ենթարկվող ազնվական իշխանը: Որովհետև նվաստ սկզբի փառավոր վախճանն ավելի վսեմ ու պանծալի է երևում, և փառավոր սկզբի թշվառ վախճանն ավելի դառն ու տանջալի է թվում:

14. Կա հիվանդություն, որ դեղով է բուժվում, կա էլ, որ բուժվում է պահեցողությամբ: Կա բաղձանք, որն իրագործվելու համար ջանքի ու աշխատանքի պետք ունի, կա էլ, որ կարիքն ունի ժամանակի ու համբերության: Ուստի ով չգիտի սրանք զանազանել ու տեղին գործածել, նրա բաղձանքն ու ցանկությունը չեն իրականանում, ինչպես որ նպատակադրյալ տեղը գնալն ու հասնելը ջանք է պահանջում, և արտում մանգաղելը՝ ժամանակ, մինչև բերքը հասնի: Բաղձանք էլ կա, որ միաժամանակ թե՛ ջանքի և թե՛ ժամանակի կարիքն ունի, ինչպես գիտությունների ու արհեստների բաղձանքը: Ուստի աշխատանքի կամ համբերության ժամանակն իմանալը բաղձանքն ու ցանկությունն իրականություն է դարձնում:

15. Խոհեմներն ինչ-ինչ արտաքին նշաններից շատ անգամ ճանաչում են մարդկանց ներքին հոժարությունը: Ուստի սուտ չէ, ինչպես նրանք ևս համարում են, թե ով ուրախությամբ է փոխ առնում, բազմիցս տրտմությամբ է հատուցում, և ով տրտմությամբ է վերցնում, ուրախությամբ է վերադարձնում:

Որովհետև ով ուրախամիտ է փոխ առնում, երևում է, թե անիրավ մեկն է ու չի կամենում վերադարձնել, կամ շատ ուշ: Ուստի երբ բռնադատվում է պարտքը տալու, ասես ոչ կամովին ու տրտմությամբ է հատուցում: Իսկ ով տրտմությամբ է վերցնում, երևում է, թե իրավասեր մեկն է, և որոշել է պարտքը հատուցել: Քանի որ պարտքը կարիքի ստիպմամբ է վերցնում ասես ոչ ինքնակամ, ուստի ուրախությամբ է վերադարձնում:

16. Քանի դեռ մեկի հետ ընտանեբար ես կենցաղավարում, մըտքումդ դիր, թե ժամանակ կգա, երբ նրանից խռովությամբ կբաժանվես: Ուստի զգաստ եղիր ու քո գաղտնիքները մի՛ հայտնիր նրան, որպեսզի հետո չզղջաս:

17. Եթե մեկի հաջողությունը տեսնես, մտքումդ մի՛ դիր, թե քեզ էլ կպատահի: Բայց երբ մեկի ծախորդությունն ես տեսնում, այնպես հավատա, թե հնարավոր է՝ քեզ էլ պատահի. որովհետև վտանգավոր դիպվածները մարդկանց ավելի վաղ են հասնում, քան հաջողությունները:

18. Ավելի հարկավոր գիտություն չկա, քան ինքնաճանաչումը: Ով ճանաչում է իրեն, ճանաչում է Աստծուն, և ով ճանաչում է Աստծուն, նաև սիրում է Նրան ու ցանկանում հաճոյանալ Նրան, որով ժամանում է կատարելության գագաթը: Ուրեմն՝ մարդը պիտի գիտենա, որ ինքը սովորական մարդկանցից մեկն է՝ վիճակված մահկանացու տկար ու վաղանցուկ բնության, ամեն ինչում ու ամենուրեք միշտ կարոտ աստվածային օգնականության, և ինչ որ ունի՝ թե՛ բնական, թե՛ ստացական, Աստծուց ունի:

19. Յուրաքանչյուր մարդ կարող է իր վարքն ուղղել, եթե խորհի, ինչպես և պետք է խորհել, թե արքայության փառքը միայն իր համար է պատրաստված, և միայն ինքն է գնալու արքայություն, եթե Աստծուն ծառայում է: Այդպես և դժոխքն է միայն իր համար, և միայն ինքն է գնալու դժոխք, եթե Աստծուն չծառայի: Կամ թող իր մասին խորհի, թե մարդկանց աշխարհախումբ բազմության մեջ է, որտեղից անակնկալ ժամի հափշտակելու են իրեն՝ տանելու կամ դեպի հավիտենական փառքը, կամ դեպի տանջանքներ:

Արդ, արդյոք ի՞նչ պիտի աներ այդտեղ այդժամ, թող այժմ այստեղ անի, որովհետև նույն բանն է պատահելու ամեն մարդու:

20. Աշխարհում շատ բաներ են տեսնվում, որոնց պատճառները գաղտնի են: Բայց մարդկանցից ոմանք, հետաքրքրասիրության ախտից դրդված, խուզարկում ու քննում են, որ կարողանան պատճառներին հասու լինել: Սակայն ինչ որ եղել է, լինում է ու լինելու է, կամ Աստծուց է, կամ մարդկանցից և կամ բնությունից:

Աստվածային անհաս իմաստության գործերի հանդեպ շատերը հանդգնությամբ մեղանչում են, ո-



րովհետև աշխարհի կառավարման, փոփոխության, չարերի հաջողության ու բարիների դժբախտության և այլնի կարգավորության պատճառը չկարողանալով իրենց դատողության հետ զուգակշռել՝ այլևայլ անտեղի մտածությունների ու օտարոտի կարծիքների մեջ են ընկնում, որից անթիվ ամբարշտություններ են առաջ եկել:

Մարդկանց կատարած գործերի հանդեպ թյուր դատողությամբ վրիպում են, որովհետև գործողի մտքին, որ մի նպատակի է ուղղված, զանազան նպատակներ են վերագրում՝ յուրաքանչյուրն իր կարծիքի համաձայն, որից էլ ոչ սակավ չարիքներ են առաջ գալիս:

Բնության գործերի վերաբերյալ մոլորվում են, երբ մի ընդհանուր բան որևէ մասնավոր փորձառությունից են հետևեցնում կամ սնուտի կարծիքներով ցնորում, թե գիտեն այն բաների մասին, որոնց պատճառները գաղտնի են: Շատերն էլ բնության գաղտնիքները քննելիս, թեև մասամբ կարողացան դրանք իմանալ, բայց շատ բաներում սխալվեցին: Եվ այն պատճառով, որ կամեցան բնության գործերը բռնի հետևեցնել իրենց կարծիքներին, անհամար տարածայն կարծիքներ ու վեճեր հուզվեցին բնագետների ու փիլիսոփաների մեջ, ցարդ հուզվում են և երևի թե բնավ վերջ չեն ունենա:

Քանզի այլ բան տեղի չի ունենում բնության մեջ, եթե ոչ պատճառների ու գործերի շարունակություն: Շատ անգամ պատճառը հայտնի է, իսկ գործը՝ ծածուկ, և ավելի հաճախ գործն է հայտնի, իսկ պատճառը՝ ծածուկ: Ուստի զգուշություն է պետք այնպիսի բաներից ճառելիս, որոնց պատճառն ու գիտությունը կամ ծածկված են մարդկանցից, կամ էլ չափով հայտնված, որպեսզի Աստուծու կամ մարդու հանդեպ չմեղանջենք կամ սխալվելով նախատվենք իբրև տգետ կամ հանդուգն:

ԼԸ. Երբ խոհեմ մարդը հասարակության համար մի մեծ գործ է անում, չի պարծենում ու այն հռչակում՝ մարդկանցից գովեստ ստանալու համար, որովհետև չի հիշում, թե ինքն է արել, այլ արածն արդեն մոռանում է և ջանում ավելի մեծ բարիքներ գործել ամենքին: Որովհետև ով իր գործերով պարծենում է, թեև մեծ ու գովեստի արժանի լինի, իր հարզն ու գովեստը կորցնում է: Թեթևամիտ մարդն էլ, նախքան որևէ գործի ձեռնարկելը կամ նախքան այն ավարտելը, մեծապես պարծենում է ու գործը հրապարակում: Բայց երբ չի կարողանում գործի ավարտին հասնել, չի ամաչում ասել. «Այսպես չէի կարծում», ուստի և ամենքի առաջ ծաղրի առարկա է դառնում:

ԼԹ. Խոհեմ մարդն իր մասին որևէ բարի բան չի պատմում՝ գովեստ լսելու համար, ոչ էլ չար բան՝ նախատինք ընդունելու: Որովհետև եթե բարի բաներն է պատմում, լսողներն արհամարհում են նրան իբրև սնափառի, իսկ եթե չար բաներն է պատմում, լսողներն անարգում են նրան ու գայթակղվում: Ուստի խոհեմություն չէ ասել այն, որը սեփական անձի գովեստի կամ անարգանքի է վերածվում:

Խ. Ոչ ամեն ինչ, որ ճշմարտության կերպարանքն ունի, ճշմարիտ է, և ոչ ամեն ինչ, որ ստության կերպարանքն ունի, սուտ է: Քանզի շատ բաներ են իրոք եղել, լինում են ու կլինեն, որ մարդկանց մտքին հակասող են թվում, և շատ բաներ են մարդու մտքին համաձայն պատմվում, որ իրոք չեն եղել և գուցե հավիտյան չլինեն: Ուստի պատշաճ չէ սուտ համարել այն ամենն, ինչ մեզ անհնարին է թվում, և կամ ճշմարիտ համարել այն ամենն, ինչ հնարավոր է թվում: Այլ պետք է խոհեմությամբ գործի էությունն ու պարագաները քննել և հետո՝ հավատ ընծայել կամ չընծայել:

Երբ մարդիկ իմանում են մեկի խոսքերից ու գործերից ինչ-որ բան, որ ճշմարիտ է, դրա վրա հիմնվելով՝ կարծում են, թե գիտեն նաև նրա սրտի բոլոր մյուս գաղտնիքները, և մի բացահայտ ու հավաստի դրությունից իսկույն բազում անծանոթ ու երկբայական հետևություններ են անում՝ իբրև ճշմարտություն, ուստի բազմիցս անախտան են դարձնում և այն, ինչ ճշմարտությամբ իմացան: Քանզի երբ մի ճշմարիտ բան են իմանում, դրանից չի հետևում, թե գիտեն և այլ բոլոր ճշմարիտ բաները, այլ պետք է նորից խորհել, քննել և ճշտիվ, աստիճան առ աստիճան վերլուծել տվյալ իրողության բոլոր կարելի ու կարծելի պարագաները, մինչև ամեն կողմից ճշմարտության նշույլը փայլի: Ինչպես՝ երբ տանը մի բան կորչում է, և այնտեղ է մի մարդ, որ ժամանակին մի բան է գողացել, բոլորը կարծում են, թե նա՝ գողացավ: Այո՛, ճշմարիտ է, որ նա ինչ-որ ժամանակ մի բան է գողացել, բայց դրանից չի հետևում, որ այժմ էլ է նա գողացել: Ուստի պետք է զգույշ լինել մի ճշմարիտ բան իմանալու դեպքում անծանոթ ու երկբայական հետևություններ դրանից չանել և իբրև ճշմարտություն պնդել:

ԽԱ. Մարդիկ ավելի լավ գիտեն բարվոք խոսել, քան բարվոք գործել: Եթե իմանային այնպես անել, ինչպես ասում են, աշխարհում չարեր կ'ամ բնավ չէին լինի, կ'ամ հույժ սակավ կ'լինեին:

ԽԲ. Միամտությունն առանց խորագիտության հիմարություն է, և խորագիտությունն առանց միամտության՝ խորամանկություն. միամտությունը խորագիտությամբ, և խորագիտությունը միամտությամբ խոհեմություն է. ինչպես մեր Տերն էլ աղավնու միամտությանը հարեց օձի խորագիտությունը (*տնՆ Մատթ. Ժ 16*), որպեսզի մարդկանց սովորեցնի երկու վնասակար ծայրերից խորշել և խոհեմության մեջ հաստատվել:

ԽԳ. Թող իմաստունը չամաչի խոնարհվել և ուրիշներից խորհուրդ հարցնել՝ կարծելով, թե նրանք իր խոհեմության չափին չեն հասնում: Որովհետև ահա ածելին էլ սրվում է վարսավիրի կակուղ կաշվով, և երկաթը պնդանում՝ հեղուկ ջրի մեջ մխվելով:

«Այն ժամանակ բարի խոհերը պիտի զգուշացնեն քեզ,  
& արդար մտքերը քեզ պիտի պահպանեն» (Առակ. Բ 11):

«Մի՛ խոտորվիր ո՛չ դեպի աջ & ո՛չ էլ դեպի ձախ.  
ոտքդ ե՛տ դարձրու չար ճանապարհից» (Առակ. Դ 27):

«Գործի վախճանը լավ է նրա սկզբից,  
համբերատար հոգին՝ գոռոզամիտ հոգուց» (Ժող. Է 9):

«Փառքն ու անարգանքը խոսքի մեջ է,  
& մարդու կործանումն՝ իր լեզվի վրա» (Սիրաք Ե 15):

«Եթե բարիք ես անում, իմացի՛ր՝ ում ես անում,  
& շնորհ կստանաս քո բարիքի դիմաց»:  
«Այսուհետ & խորագե՛տ եղեք օձերի պես  
& միամիտ՝ աղավնիների նման» (Մատթ. Ժ 16):

«Ձեզանից ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել,  
նախ նստելով չի հաշվի իր ծախսերը,  
թե ավարտելու համար բավական դրամ ունի՞»  
(Դուկ. ԺԴ 28):

## Գ Լ ՈՒ Խ Ժ Ե

## Գ Ա Ղ Տ Ն Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ոչ այնքան վտանգավոր է չվարժեցված երիվար հեծնելը, որքան անփորձ բարեկամին գաղտնիքներ հայտնելը: Ուստի մարդ որևիցե բարեկամի, առանց խտրության, պիտի չհայտնի իր սրտի գաղտնիքները, այլ միայն նրան, ում փորձով ճանաչում է, թե գաղտնապահ է:

Ջուրը ծակ սափորի մեջ է լցնում, ով հոգու ծածուկ բաները հայտնում է նրան, ով գաղտնիք պահել չգիտի:

Բ. Եթե մեկը կամենում է որևէ գաղտնիք հրապարակել, թող գաղտնապահության դաշինքով այն

հայտնի ռամիկին, որովհետև ռամիկն առավել գաղտնիքների մունետիկ է, քան գաղտնապահ: Ուստի հուսալի է հավատարիմ գաղտնապահություն գտնել ոչ թե ռամիկների մեջ, այլ իմաստունների, այն էլ՝ ո՛չ ամեն իմաստունի, այլ սակավների, հո՛ւյժ սակավների, որոնց ընտրության համար մեծ զգուշություն է հարկավոր:

Գ. Մեծ բան է խնդրում նա, ով խնդրում է իր հայտնած գաղտնիքը պահել:

Դ. Ով գաղտնապահ է, բերանը սրտում է պահում, և ով գաղտնապահ չէ, սիրտն է բերանում պահում: Բայց կան մարդիկ, որ գաղտնիքը համարում են ծանր բեռ, որն իրենք չկարողանալով տանել՝ կրելու համար տալիս են ուրիշներին՝ որպես բեռնակիրների:

Ե. Հպարտը, սնափառության ախտով հափշտակված, սիրում է իր գաղտնիքները պատմել, ինչն իրեն գովեստներ է բերում, և ինչով իր սրտի գաղտնիքներն ուրիշներին հայտնի է դարձնում:

Զ. Բարկացողը չի կարող իր գաղտնիքը պահել. սաստիկ բարկանալու ժամանակ նրա արյունը եռում է, իրեն չի զսպում, որ չխոսի, և իսկույն իր գաղտնիքները սրտից դուրս է թափում, ուստի դյուրին է գաղտնի մտքերը նրանից գողանալ: Բարկացողը նման է թանկարժեք հեղուկով լցված տիկի, որի վրա երբ բռնություն են գործադրում, իսկույն պայթում է և պարունակությունը դուրս թափում:

Է. Գաղտնապահը որևէ գաղտնիք պահելու համար թող սուտ չխոսի և գաղտնիքների հայտնի դառնալու երկյուղից դեմքն այլայլված ցույց չտա: Որովհետև դեմքն ու աչքերը սրտի առաջնորդն ու դեսպանն են, և մարդիկ այսպիսի նշաններից արագորեն կռահում ու իմանում են գաղտնիքները: Ուստի խոսելիս մարդ միայն վնասակար մըտքերը պիտի ծածկի՝ ստախոս չլինելու համար, և խոսքերի կարգն անշփոթ պահի՝ ցույց չտալու համար դեմքին նշույլն այն գաղտնիքների, որոնց մասին կամենում էր լռել:

«Առանց խորհրդի գործ անող մարդը նման է պարիսպները կործանված քաղաքի» (Առակ. ԻԵ 28):

«Ովքեր քեզ հետ խաղաղության մեջ են, թող մեծաթիվ լինեն, բայց քո խորհրդակիցը հազարից մեկը թող լինի» (Սիրաք Զ 6):

**Գ Լ Ո Ի Խ Ժ Զ**

**Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք**

Ա. Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից և արտաքուստ՝ օրենքից: Որովհետև եթե խիղճը, թյուր կամքից թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնազանդության բերում: Խիղճը, իբրև բնության կողմից հաստատված ներքին արդար դատավոր, և օրենքը, իբրև Աստծուց հաստատված արտաքին իրավարար, կշեռքի երկու թաթի նման արդարության մետը կենտրոնում են պահում:

Եթե մարդիկ միայն խղճով ղեկավարվեին, բազում անձնասերներ բնության կողմը կբռնեին, ուղիղը կթյուրեին, և ոչ ոք չէր լինի, որ հանդիմաներ և ուղղեր նրանց: Իսկ եթե միայն օրենքով ղեկավարվեին, շատերն էլ պարզամիտներին որևէ չարակամությամբ կխաբեին և անօրեն բաներն իբրև օրենք կառաջադրեին կատարելու: Ուստի երկուսն էլ՝ խիղճն ու օրենքը, կարևոր են՝ մարդկանց առաջնորդելու և հասցնելու համար առաքինության՝ իբրև մոտակա նպատակի, և դրանով էլ՝ երջանկության, իբրև վերջնական նպատակի: Որովհետև, ըստ առածի, «Աստվածն ու բնությունը երբեք հենց այնպես չեն գործում»:

Բնական օրենքում խիղճը պիտի հետևի ուղիղ բանականությանը՝ ըստ այսմ. «Հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում» (*Հռոմ. Բ 14*), իսկ եկեղեցական օրենքում պիտի հետևի աստվածային օրենքին, որովհետև աստվածային օրենքում միայն ուղիղ բանականությունը բավական չէ, այլև Աստծու օրենքի հետ համաձայնություն է պահանջվում:

Բ. Մտքի լույսն Աստծուց մարդու բնության մեջ ներտպված հավիտենական օրենքի մի նշույլ է, որով մարդ գործում է արժանավորն ու վայելուչը և մերժում ոչ արժանավորն ու անվայելուչը: Աստվածային օրենքն Աստծուց պարզևկեց իբրև նրա կամքի թարգման. որպեսզի նա, որ միայն բնությամբ էր մարդ և ճանաչում էր միայն բնական կանոնները, օրենքով նաև բարոյապես մարդ դառնա և ճանաչի աստվածային կանոնները: Եվ կամ նա, որ նախ բնականից Աստծու պատկեր էր, օրենքի պահպանությամբ նաև Աստծու նման լինի՝ աստվածային մարդ: Ուստի ուղիղ բանականությունն ու օրենքը միաբան ուղղում են մարդու բարքը՝ խորհելիս, խոսելիս ու գործելիս խիղճն ուղղության մեջ պահելու համար: Այս պատճառով էլ, ով ուղիղ մտքից ու օրենքի հրամանից խոտորվում է, Աստծուն ու իր բնությանը դեմ է դուրս գալիս:

Գ. Եթե մեկն ամեն ինչում անսում է խղճին՝ իբրև խղճահար, էլ առավել է սխալվում, ուստի խղճի հետ խոհեմությամբ պետք է վարվել: Պետք չէ իսպառ արհամարհել այն կամ լիովին հետևել նրան, այլ բանականության լույսով ու օրենքով բարեկարգել այն և տարակուսական բաներում, ուր խիղճը տկարանում է որոշում կայացնել, դիմել իմաստուններին ու օրինազետներին և նրանցից սովորել, թե ինչ է պետք անել: Եվ այն բաներում, ուր երկուստեք չեն պակասում որևէ բան անելու կամ որևէ բանից խորշելու համար ընդունելի փաստերը կամ պատճառները, ընտրել անկասկածն ու ավելի ապահովը:

Դ. Խղճահարությունը չար բան է, բայց ավելի չար է անխիղճ լինելը: Ուստի պետք է խղճմտանավոր լինել, այսինքն՝ իբրև փոքրոզի ամեն ինչից չվախենալ, իբրև հանդուգն՝ ամեն ինչին չվստահել, այլ իբրև արի՝ չվախենալ, ուր պետք չէ, և վախենալ, ուր պետք է:

Ե. Մարդու կամքը հանդուգն է և բանականության սահմանից շատ անգամ ելնում է, ուստի խիղճը նրան որպես սանձ տրվեց, որպեսզի առանց բանականության առաջնորդության չարշավի: Իսկ եթե մեկը խղճի ազդարարությանը չի անսում, պարտական է դառնում դատաստանի: Բայց քանի որ դատողը մարդ է, տկարանում է արդարությունը որոշել, ուստի դատաստանն իսկույն հանձնում է պարտապանի խղճմտանքին, որովհետև նա է սրտի գաղտնիքների անխաբ դատավորը, որպեսզի պարտապանը նրան երդում տա, և եթե ընդդեմ խղճմտանքի դատման է երդվում, երդումը սուտ է լինում, և այդպիսին Աստծու դատաստանին պարտական է մնում:

Զ. Եթե անասունները մարդկանց հետ խոսելու կարողություն ունենային, արդարև կկշտամբեին նրանց, ովքեր ընդդեմ բանականության ու խղճմտանքի ազդարարության են գործում: Եվ քանի որ անասունները բանականություն չունեն, ուստի և պատիժների պարտավորության տակ չեն ընկնում, և նրանց վրա գործերի դատավոր ու քննիչ չի կարգված: Իսկ մարդիկ, քանի որ որպես առաջնորդ ունեն բանականությունը և որպես ազդարար՝ խիղճը, եթե վերջինիս չեն անսում, դատաստանի տակ են ընկնում: Ուստի մարդուն նախատինք է բանականություն ունենալն ու անբան կենդանու պես վարվելը:

Է. Մարդկանցից շատերն իրենց սրտում քաջ գիտեն, որ ինչ-ինչ գործերում ու խոսքերում սխալվել են, բայց իրենց խղճմտանքի դեմ գործելով՝ ջանում են խոսքով արդարացնել իրենց: Այս է նրանց՝ չարիքների մեջ համառելու նշանը, որովհետև երևում է, որ չեն կամենում ուղղել իրենց սխալները: Մտերմության ու սիրո արժանի չէ նա, ով հայտնի ճշմարտությանը համառելով՝ հակառակում է՝ սխալված չերևալու համար:

Ը. Ով իր խղճմտանքի դեմ է գործում, չի կարող նրա խայթոցից զերծ լինել. խղճի խայթը մահվանից էլ խիստ է. մահը մի անգամ է մեռցնում, իսկ խղճի խայթը՝ ամեն ժամ: Ուստի ով իր խիղճն իբրև իր անձի անխաբ դատավոր ունի և նրա օրենքներին ու հրամաններին հնազանդվում է, սրտի ներքին տանջանքներից ազատ ու խաղաղ է մնում:

Թ. Մարդու խիղճը նման է շան, որն օտարների վրա հաչում ու նրանց հալածում է, իսկ ծանոթներին քծնում ու շողոքորթում: Որովհետև երբ մեկը որևէ չար բան է խորհում կամ գործում, խիղճը շու-

տով հաչում ու ջանում է չարը հալածել՝ իբրև մարդու բնությանն օտար ու թշնամի մեկի: Իսկ երբ մտքում ելումնուտ գործելուն չարը տակավ առ տակավ ընտելանում է, այնուհետև խղճմտանքը նրա հետ իբրև ծանոթի հետ է վարվում ու հանդիմանելուց դադարում, այդ պատճառով էլ մարդը համար-ծակ գլորվում է ամեն տեսակ մոլորությունների մեջ, որոնցից նախկինում, խղճից տանջվելու պատ-ճառով, խուսափում էր: Ուստի պետք է սկզբից ևեթ ջանալ որևէ չարի տեղի չտալ ու խիղճը միշտ ար-թուն պահել, որպեսզի մարդը չգահավիժի չարիքների խորխորատները:

«Արդար&, երկչոտն ինչ-որ առանձնահատուկ չարություն ունի, որն ինքն է վկայում՝ դատապարտելով իրեն, & խղճմտանքից նեղվելով՝ միշտ անհնարինն է կանխագգում» (Իմաստ. ԺԷ 10):

«Քանզի մեր պարծանքն այս է. մեր խղճմտանքի վկայությունը. այն, որ սրբությամբ ու Աստծու ճշմարտությամբ & ոչ մարմնավոր իմաստությամբ, այլ Աստծու շնորհով ենք ընթացել աշխարհում» (Բ Կորնթ. Ա 12):

«Դուք ծեր մեջ աչառություն արած չեք լինի & չար խորհուրդների դատավոր չեք լինի» (Հակոբ Բ 4):

«Սիրելիներ՛ր, եթե մեր սրտերը մեզ չդատապարտեն, համարձակություն կունենանք Աստծու առաջ» (Ա Հովհ. Գ 21):

## Գ Լ ՈՒՆ Ժ Է

## Ա Ր Դ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Արդարությունը գանգատվում է, երբ մարդիկ իրենց դատում են ո՛չ այնպես, ինչպես դատում էին ուրիշներին:

Բ. Դատավորը հանցավորին պատիժների պիտի չենթարկի, եթե առանց իրավունքի հանդեպ մեղանչելու կարող է նրան անպատիժ թողնել, որովհետև պատժելով ոչ թե իրավունքը պաշտպանում է, այլ անգութ է դարձնում:

Գ. Կան մարդիկ, որ կամենում են արդար օրենքները ծառայեցնել իրենց կամքին: Սրանք անօրեն-ներն ու կամապաշտներն են, որոնք չեն հասկանում, որ օրենքը պիտի իշխի մարդու կամքի վրա, և ո՛չ թե մարդու կամքը՝ օրենքի: Որովհետև եթե մարդու կամքն օրենք լիներ, կլինեին այնքան օրենքներ, որքան մարդիկ:

Բայց օրենքը նաև իրեն հնազանդվողներ է պահանջում: Եթե ամենքն իրենց կամքն իբրև օրենք ներկայացնեին, ամենքն իշխող կլինեին, և ո՞վ կհնազանդվեր օրենքին, բացի միայն այն դեպքից, եթե միայն մի մարդ մնար աշխարհում: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր ազգի նախկին օրենսդիրները բարի օրենքներ սահմանեցին, որպեսզի ամենքը մի կամքով միաբանվեն: Եվ բնության՝ յուրաքանչյու-րին տված առանձին կամքը մարդիկ մեկ օրենքի մեջ միավորեցին, ինչի վրա նույնիսկ բնությունը զարմացավ՝ տեսնելով, որ մարդիկ իրենց կամքը կառավարելու հնարներ գտան:

Դ. Չարժե բնակվել այն քաղաքում, ուր օրենք կամ օրինապահ դատավոր չկա. որովհետև ուր օ-րենք չկա, մարդիկ անօրեն են լինում, և ո՞վ կարող է անօրենների մեջ անվնաս մնալ: Կամ եթե օրենք

լինի, բայց դատավորն օրենքի հրամանները չգործադրի, զրկվածն ո՞ւր պիտի դիմի իրավունք փնտրելու. որովհետև այդպիսիք օրենքը ջատագովում են, բայց իբրև անօրեններ վարվում և օրենքը եղծելիս եղծում են քաղաքն ու հասարակությունը:

Հասարակությանը վերաբերող օրենքները կամ բարեկարգությունները ամենքի հավանությամբ պիտի հաստատվեն:

Ե. Երջանիկ է այն քաղաքը, ուր կան իմաստուն ու արդար դատավորներ, որոնք նույն կերպ են նայում աղքատների ու հարուստների, եկվորների ու բնիկների դատաստանին, կաշառքի կամ վախի, կամ էլ սիրո պատճառով իրավունքը չեն թյուրում:

Զ. Գործի ոչ մի վճիռ չի կարող հաստատուն մնալ, եթե իրավունքի վրա հիմնված չլինի: Ուստի երբ մարդիկ, մի ինչ-որ ժամի միմյանց հետ համաձայնելով, վճռում են իրենց վերաբերող որևէ գործ ա-նել, վերջում տարածայնում են միմյանց ու վճիռն իզուր է դառնում, եթե իրավունքով չի հաստատվել:

Է. Եթե մարդն իր ընկերոջ հետ անենգ ու խաղաղ ապրեր, դատավոր ու դատաստան ավելորդ կլինեին նրանց: Այդժամ ոչ ոքի միջև վեճ չէր ծագի և ոչ ոք դատի գնալու կարիք չէր ունենա, որովհե-տև դատավորը մարդկանց խարդախության ու անիրավության պատճառով սահմանվեց, որպեսզի ե-թե մարդիկ միմյանց հանդեպ անիրավ լինեն, դատավորն իրավունք անի: Արդարությունը սոսկում է, երբ դատավորը, որ իրավունքի պահապանն է, իր դատաստանից հալածում է արդարությունը, իսկ զրկվածը նրանից իրավունք է խնդրում:

Ով իրավունքն ատում է, ատում է նաև նրանց, ովքեր իրավունքից են խոսում:

Ը. Ով զրկում և ուրիշների ունեցվածքը հափշտակում է, իր ունեցվածքը ժառանգելու իրավունքը կորցնում է, ուստի ով ցանկանում է իր ունեցվածքը խաղաղությամբ վայելել, թող հատուցի նրան, ում զրկեց: Որովհետև ով զրկանքով ուրիշների ունեցվածքն է ժողովում, ասես իր հագուստի մեջ կրակ է ծրարում:

Թ. Սրանից ավելի իրավացի ի՞նչ հատուցում կա, երբ նա, որ իր կյանքի ընթացքում ուրիշների ցա-վերով ու վնասներով է իր ունեցվածքը ձեռք բերել, թողնի գնա սրտի ցավերով ու հոգու վնասներով: Անշուշտ անիրավություն կլիներ, եթե նա, որ զրկանքով էր ունեցվածքը մթերել, հանգիստ սրտով վա-յելեր դրանք: Զրկանքով հավաքված գանձերը պահվում են կասկածներով ու կորչում ցավերով:

Ժ. Թրեքի հանդեպ հանցավոր է, ով իր պարտավորությունը չի կատարում: Արդարև, իշխանավո-րը վարձահատուցման դաշինքով իր սպասավորին իր մոտ պահում է, որ ծառայի, և սպասավորն էլ ծառայում է, որ վարձ ստանա. եթե իշխանավորը զլանում է սակարկված վարձը տալ կամ սպասավո-րը հավատարմությամբ չի ծառայում, մեկը զրկող է դառնում, մյուսը՝ գող, և երկուսն էլ, իրենց պարտա-վորությունները չկատարելով, օրենքի հանդեպ հանցավոր են համարվում:

ԺԱ. Ով առանց իրավունքի շատերի տեր է դառնում, իրավունքը նրան ուրիշների ծառա է դարձ-նում:

ԺԲ. Արդար հատուցում է լինում, երբ նա, որ վնաս հասցրեց նրան, ումից չարիք չէր տեսել, վնաս է կրում նրանից, ում բարիք էր գործել:

ԺԳ. Ով առաջնորդում է մատնության ու դավաճանության, իր օրինակով սովորեցնում է ուրիշնե-րին նույն կերպ վարվել և իր հանդեպ:

Մարդու բնավորությունն է բազում բարի օրինակներից սակավ բարիք և սակավ չար օրինակնե-րից բազում չարիք սովորել:

ԺԴ. Աստված յուրաքանչյուրին փոխարենը հատուցում է ըստ նրա հոժարության, բաղձանքի ու ջանքի: Եթե մեկը հոժարում ու ջանում է բարի կամ չար բան կատարել և չի կարողանում գործով գլուխ բերել, միևնույն է՝ վարձի կամ պատժի է արժանանում:

Քանզի գործերը, որ ունեն բարի կամ չար մտադրություն, սրա դիմաց փոխարինության են արժա-նի, որովհետև կամքի հրամանով են գործում. այլպես կլինեին մարդու գործ՝ բնական ու հարկավոր, և ո՛չ թե մարդկային գործ՝ բարոյական ու կամավոր: Եվ քանի որ կամավորությունն է, որ գործը հա-տուցման արժանի է դարձնում, ուստի և կամքից ելնող բաղձանքը՝ բարի կամ չար բան կատարելու,

վարձատրության կամ պատժի արժանի է դառնում՝ կան շատ, կան սակավ, ըստ յուրաքանչյուր մարդու շատ կամ սակավ, հարատև կամ անցողական ըղձանքի ու ջանքի:

ԺԵ. Քրիստոսի ճշմարիտ հավատացյալն իբրև Աստծու որդի ու ժառանգ է, իսկ անհավատը՝ իբրև ծառա ու վարձկան: Ուստի երբ նրանք հավասար ծանրությամբ որևէ չարիք են գործում, արդարությունը պահանջում է, որ անհավասար պատիժներով պատժվեն՝ հավատացյալն ավելի սաստիկ պատժվի, քան անհավատը: Քանզի որդիների ապստամբությունն առավել չար է և առավել մեծ պատժի արժանի, քան ծառաների ապստամբությունը:

Ուրեմն՝ ճշմարիտ հավատացյալները պարտավոր են բոլոր մարդկանցից առավել իրենց անծերի փրկության համար ահուդողով աշխատել՝ ըստ այսմ. «Եթե ձեր արդարությունն ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայություն չեք մտնի» (Մատթ. Ե 20):

«Արդարի բերանն իմաստություն է բարբառում,  
իսկ լեզուն արդարություն է խոսում» (Սաղմ. ԼԶ 30):

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

## Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. Ոչինչ ավելի արժանի չէ պատվի, քան ճշմարտությունը, բայց ոչինչ ավելի անարգված չէ, քան նա: Մարդիկ միմյանց հետ խոսելիս նրա փառքը մեծացնում են և իբրև ճշմարտության ջատագով ցույց տալիս իրենց, բայց իրենց գործերում շարունակ արհամարհում են նրան և պատվում ստությունը:

Սակայն ճշմարտությունը, իր մարդասիրությունը գործադրելով, երկայնմտությամբ դիմանում է իր անարգանքներին և լիովին չի հեռանում աշխարհից՝ սպասելով նրա դարձին: Կամենում է, որ ինչպես որ խոսելիս են ամենքը ճշմարտությանը մոտ, նրան միանան նաև գործելիս: Ուստի ամեն ոք, որ բարիք է գործում, ճշմարտությանն է միանում, որովհետև ամեն բարի բան ճշմարիտ է, և ամեն ճշմարիտ բան՝ բարի: Իսկ ով չարիք է գործում, ճշմարտությունից հեռանում է, որովհետև այն բանն է չար, որ ճշմարտություն չունի:

Տեսա՞ր ճշմարտության ներողամտությունը. իրեն անարգողներից իսկույն վրեժխնդիր չի լինում ու իրավունք պահանջում, այլ ամենքին ընդհուպ մոտենում ու հաճախ օգնում է, որ շահի նրանց, թեպետ ամենքը չէ, որ նրան մոտ են գտնվում ու ընդունում նրա օգնությունը:

Բ. Թող ոչ ոք չհուսա ստախոսից բարի բան ընդունել, քանզի ստախոսը որևէ բարի բան չունի. ով ճշմարտությունը կորցնում է, կորցնում է բոլոր բարիքները, որովհետև ճշմարտությունն է ամեն բարիք:

Ստախոսը միայն այն է շահում. թեև ճիշտ էլ ասի, ոչ ոք նրան չի հավատա:

Վայել չէ դասվել այն մարդկանց թվում, որոնք սովոր են սուտ խոսել:

Գ. Չկա ավելի գովելի բան, քան ճշմարտությունը, բայց, ավա՛ղ, այժմ նրանից ատելի ոչինչ չկա: Կան շատեր, որ խոսքով պարծենում են, թե ճշմարտասեր են, բայց սրտով ատում են ճշմարտությունը:

Եվ ճշմարտությունը, ճանաչելով մարդու գաղտնիքները, աշխարհում ծպտված է շրջում, որպեսզի իսպառ չհալածվի: Բայց նրանք, որ սրտով արդար են, նրան ճանաչում ու պատվասիրում են:

Դ. Ճշմարտությունը, հալածվելով մարդկանցից, որոնց սիրտն ու բերանը տարբերվում են, բնակվում է անմեղ անասունների մեջ, որոնց սիրտն ու բերանը նույնն են:

Ե. Ուր լույս կա ծագած, այնտեղ խավար չի բնակվում. ուր ճշմարտությունն է թագավորում, այնտեղ դևեր չեն գտնվում:

Նա, ում խոսքերում ճշմարտություն կա, և գործերում՝ արդարություն, դեպի երկինք սլանալու համար կրկնակի թևեր ունի:

Զ. Ուր ճշմարտություն չկա, այնտեղ չկա և բարություն. որովհետև սրանք երկուսն անբաժան ընկերներ են՝ էության միմյանց հետ նույնն են և միայն կերպարանքով են տարբերվում: Ուրեմն պարզ է, որ չարերի մեջ չկա ճշմարտություն, որովհետև բարի չեն. իսկ ովքեր ճշմարտություն չունեն, նրանց միտքը խավարած է, որովհետև ճշմարտությունն է մտքի լույսը: Ուստի և չարերը մոլորության բոլոր խորքերն ընկել ու այդ չեն հասկանում:

Ուրեմն՝ եթե մեկը կամենում է չար մարդուն բարի դարձնել, նախ պիտի ճշմարտությամբ լուսավորի նրա միտքը, որպեսզի միտքն ինքը հափշտակվի դեպի բարու հանդեպ սերը, ապա թե ոչ՝ խրատիչն իզուր է տքնում, ասես խուլ ականջների է ջանում հայտնի դարձնել երգերի ներդաշնակությունը:

Է. Եթե մարդու լեզուն իր պարտավորությունն ու չափը ճանաչեր, գուցե չարգելափակվեր բերանի ներսում՝ ատամների պարիսպների ու շուրթերի դռների ետևում՝ իբրև բանտախցում: Նրա պարտավորությունը ճշմարիտը խոսելն է, որովհետև լեզուն խորհուրդների ու մտքերի թարգմանն է, և նրա չափը՝ պատշաճը խոսելը: Բայց իր պարտավորությունը չի ճանաչում, եթե խոսքերում հավատարմություն չի պահում, ասում է իր ըմբռնմանն ու դատողությանը դեմ որևէ բան, և իր չափը չի ճանաչում, եթե պատշաճից ավելի է խոսում: Ուստի իր պարտավորությունն ու չափը չճանաչող լեզուն իրավամբ է պատժվում:

Եվ բնավ զարմանալի չէ, եթե զառամյալ ծերերի ու պառավների լեզուները պատշաճից ավելին են խոսում: Որովհետև նրանց ատամների պարիսպը խրամատված է, և շուրթերի դռները՝ թուլացած:

Ը. Ով շահախնդիր չէ, սովոր է ճշմարտախոս լինել, քանզի շահասերներն են, որ ճշմարիտը չեն ասում և կամ ստում են: Տորենի հետ որոմ է խառնում, ով ճշմարիտին որևէ սուտ է խառնում:

Թ. Վտանգից ազատվելու համար երբեք վայել չէ ստել. եթե մարդկային հնարը չի կարողանում փրկել, պետք է աղոթքով Աստծուն ապավինել, ելքը նրանից խնդրել և երբեք չվհասվել ու չստել. որովհետև Աստված ամբողջապես ճշմարտություն է և միշտ ճշմարտություն է կամենում: Ուստի ով որևէ ստով աղավաղում է ճշմարտությունը, մեղանջում է ընդդեմ Աստծու և ընդդեմ իր խղճի: Աստված լավ գիտի փրկել, եթե օգուտ է, հակառակ դեպքում՝ ավելի լավ է ճշմարտությունը պահելով մեռնել, քան ստության հանցանքով ապրել: Սակայն երբեմն Աստված թույլ է տալիս չարերին սուտ խոսել՝ փրկելու համար բարիներին, որոնք նախընտրում են կյանքից զրկվել, քան ստել:

Ճ. Կա երեք ճշմարտություն՝ սրտի, բերանի և գործի: Բայց շատ անգամ մարդկանց աչքին ոչ մի գորություն չունի սրտի ու բերանի ճշմարտությունը, եթե չի ետևի գործի ճշմարտությունը, որովհետև առաջին երկուսը կարող են ստել կամ չգործադրվել: Արդ, միայն Աստծուն է հատուկ ճանաչել սրտի ճշմարտությունը. միմյանց հավատարիմ մարդիկ ճանաչում են բերանի ճշմարտությունը, իսկ հասարակությունը ճանաչում է գործի ճշմարտությունը:

Ուստի խոհեմ չէ նա, ով մարդկանցից պահանջում է այն, ինչ հատուկ է Աստծուն, այսինքն՝ երբ մարդկանցից պահանջում է ճանաչել իր սրտի հոժարությունն ու բաղձանքը, թե ստուգապես է կամենում այսինչ բանը. այսպիսին պիտի իր հոժարությունը նաև խոսքով հայտնի: Խոհեմ չէ նա, ով ամենքից պահանջում է այն, ինչ հատուկ է հավատարիմ անծանց, այսինքն՝ հասարակությունից պահանջում է հավատալ իր բերանի խոսքերին. հարկ է, որ այսպիսին իր խոսքերը նաև գործերով ցույց տա:

Սուտն էլ է երեք՝ սրտի, բերանի և գործի: Մարդ կա, որ մի բան մտածում է և այլ բան խոսում, մարդ էլ կա, որ մի բան խոսում է և այլ բան կատարում, և ուր այս երեքից մեկը համաձայն չէ մյուսներին, այնտեղ սուտ կա: Բայց խոհեմ կառավարողին երբեմն պատշաճում է ճշմարտությունը քողարկել, այսինքն՝ սրտում խորհել մի բան և խոսել կամ գործել մի ուրիշը, բայց սա ճշմարտությունն աղավաղել չէ, այլ միայն նրանից խույս տալ ու այն ծածկել: Այսպես է պահանջում հասարակության օգուտը. քանզի երբեմն բարին հաղթում է ճշմարիտին:

ԺԱ. Ով շահասիրության պատճառով մի անգամ իր երդումը կամ դաշինքը դրժում է, իրեն վնասում է, որովհետև ուրիշ անգամ նրան ոչ ոք չի հավատա, թեև երդվի պահել իր խոստումը: Վնասում է նաև



հասարակությանը, որովհետև աշխարհից վերցնում է երդմամբ հաստատված հավատարմության հարգը:

ԺԲ. Ավելի լավ է պատերազմում քաջությամբ մեռնել՝ հավատարմության դաշինքը հաստատուն պահելու համար, քան թշնամուն հաղթել ուխտադրուժ երդմնազանցությամբ:

ԺԳ. Վայել չէ վնաս հասցնել նրան, ում թշնամի ես համարում երկբայական կասկածով, որովհետև ավելի լավ է, որ նա չարագործ լինի, քան թե դու:

Նախկին դարերում շատ բաներ գործվեցին, բայց մարդիկ այժմ կան չեն հավատում դրանց, կան դժվարությամբ են հավատում: Եվ ներկա ժամանակներում էլ ստույգ գործվում են շատ բաներ, որոնց հետագայում ծնվողները կան չեն հավատա, կան դժվարությամբ կհավատան: Ուստի մենք պիտի զգուշանանք տեղի ունեցող դեպքերի մասին ստելուց, որպեսզի հետագայում ծնվողներն անստույգ չհամարեն մեր ժամանակներում ճշմարտապես գործված իրողությունները: Ով երբեք չի հավատում որևէ մեկի, ոչ ոք չի կարող հավատալ նրան:

ԺԴ. Ո՛չ ամեն հակառակություն է իրավացի. որովհետև կան ոմանք, որ մեկին ինչ-որ հարց տալով՝ ճշմարիտ պատասխան են լսում, բայց ուղիղ միտք չունենալով՝ խոսքը թյուրում են և հանիրավի հակառակում:

Շատերն էլ, որևէ ճշմարիտ բան լսելով, չեն կամենում հավատալ, մինչև չփորձեն, և երբ փորձում են, վկայում են, թե իրենց լսածը ճշմարիտ էր, բայց վնասներ կրելով են դրան հասնում:

ԺԵ. Ինչ որ ասում է մեկը, պիտի ճշմարիտ լինի. բայց ամեն ճշմարիտ բան չէ, որ պետք է ասել:

ԺԶ. Բնական է մարդուն ճշմարիտը փնտրելը և բարին ցանկանալը. որովհետև ճշմարիտը մտքի՝ կարողության առարկան է, և բարին՝ կամքի, և ամեն կարողության հատուկ է բնականաբար դիմել դեպի իր առարկան: Բայց շատերը, ճշմարիտի ու բարու կատարյալ ճանաչումը չունենալով, վարանած դեգերում են դրանք փնտրելու և երբ չեն կարողանում ձեռք բերել, անհասանելի են համարում: Բայց եթե ուշիուշով նայեն, կարող են դրանք ճանաչել ու ձեռք բերել, որովհետև անհասանելի չեն մարդկանց:

Արդարև, ճշմարտությունն առարկայի համակերպությունն է իմացության հետ, իսկ բարին այն բանն է, որ համաձայն է ուղիղ բանականությանը: Ուստի եթե մեկը մտքով հետազոտում է՝ առարկան ըմբռնելու այնպես, ինչպես այն կա, ճշմարտությանը հասու եղավ. և ով բանականության լույսով առաջնորդվում է դեպի գործերի ընտրությունը, բարին գտնում է, իսկ եթե այլ կերպ է վարվում, ճշմարտությունից ու բարուց վրիպում է և մոլորության ու չարիքների մեջ է ընկնում: Ուրեմն՝ պետք է խիստ ուշադիր լինել առարկայի բնությունը հետազոտելիս՝ ճշմարիտը ճանաչելու համար, և խոհեմ մտքով վարվել մի գործողություն մյուսից տարբերակելիս՝ բարին գտնելու համար. այս է մարդու կատարելությունը:

Ուստի իմաստունները, որ ճշմարիտը ճանաչում են, և առաքինիները, որ բարին են գործում, զվարթամիտ և ուրախասիրտ են: Իսկ տգետները, որ սուտն են իբրև ճշմարիտ ընդունում, և մոլիները, որ իսկական բարու փոխարեն առերևույթ բարին են սիրում, մտքով ու կամքով միշտ տանջվում են և հանգիստ չունեն. որովհետև միայն ճշմարիտն է մտքի հանգստացուցիչը, ինչպես որ բարին՝ կամքի:

ԺԷ. Բնական բաների ճշմարիտ լինելը փորձերով է հաստատված. որովհետև բնական կամ զգալի գոյացության շուրջ բոլոր տարակուսանքները կամ դժվարին խնդիրները ոչ թե խոսքով են լուծվում, այլ միայն փորձով: Որովհետև խոսքը որքան էլ զորավոր լինի, միայն հավանել է տալիս մտքին, բայց չի կարող նրան հանգստացնել կամ իբրև ապացուցված ճշմարտություն՝ բռնադատել հավատալու, որովհետև քաղցածը խոսքով չի հագնում, այլ ուտելու հաց է փնտրում:

ԺԸ. Շարունակ նորանոր բաներ լսել ցանկացող մարդիկ հաճախակի խաբվում են, որովհետև հետամուտ չեն լինում առարկայի ճշմարտությունը քննելուն ու ճանաչելուն:

ԺԹ. Ճշմարտությունն արտասվում է, երբ նենգավորներն ու ստախոսները նրան ասում են. և եթե որևէ տեղ հավատարիմներ ու ուղղախոսներ չգտնվեին՝ նրան մխիթարելու, այս աշխարհից իսպառ կչվեր ու կգնար, կբնակվեր երկնքում, ուր չկա նենգություն ու ստություն:

«Ամբողջ երկիրը ապավինում է ճշմարտությանը,  
երկինքը օրհնում է ճշմարտությունը, ամեն ինչ սասանվում  
& դողում է նրա առաջ» (Ա Եզր. Դ 36):

«Ստախոս շուրթերը պիղծ են Տիրոջ առջ&,  
ճշմարտության հավատարիմ բերանը հաճելի է Նրան»  
(Առակ. ԺԲ 22):

## Գ Լ ՈՒՆ Ժ Թ

## Բ Ա Ր Ե Կ Ա Մ

Ա. Մարդու բնությունը, քաղաքացիական ու ընկերային լինելով, բարեկամության կարիքն ունի թե՛ ուրախության, թե՛ տրտմության մեջ: Իսկ ով մեկի հետ բարեկամական սեր չունի, մարդու բնության սահմանից դուրս է գալիս, որովհետև բարեկամների ընկերակցությամբ ուրախությունը մեծանում է, իսկ տրտմությունը՝ բարեխառնվելով նվազում: Եվ ով չգիտի, թե ինչ է բարեկամությունը, նա չգիտի, թե ինչ է մարդը:

Բ. Կենսօգուտ խորհրդածությունը երկխոսություններով բեղմնավորվում է և ասես կենդանություն առնում ու աճում, որովհետև երկու կարծիքի միմյանց հետ բաղդատմամբ երևում են պատշաճ ու վայելուչը և գաղափարը հարմար ժամանակ դյուրությամբ իրագործելու եղանակը: Իսկ երբ գաղափարը մեկի մոտ ծածուկ է մնում, ինքնիրեն բթանում է կամ մոռացվելով կորչում: Ուստի մարդ պիտի խոհեմ ու գաղտնապահ բարեկամ ունենա՝ նրա հետ խորհելու համար: Եթե այն, ինչ կամենում է անել, բարի է, բարեկամի օգնությամբ ավելի բարի կդառնա, իսկ եթե բարի չէ, բարեկամի ազդարարությամբ ինքը դրանից հետ կկանգնի: Որովհետև խորհուրդների ու գործերի օգուտը կամ վնասը ուրիշին ավելի պարզ ու հստակ է երևում, քան իրեն:

Գ. Ճշմարիտ բարեկամությունը հիմնականում գտնվում է իմաստունների, մարդասերների ու առաքինիների մեջ: Ուստի ով մեկի հետ հավատարիմ բարեկամություն ունի, նշան է, թե ունի նաև իմաստություն կամ մարդասեր բարք ու բարվոք կենցաղավարություն. այսպիսիների հետ են մարդիկ հոժարում ու ջանում բարեկամություն անել: Իսկ նա, ով ոչ մի բարեկամ չունի, նշան է, թե տգետ է կամ մարդատյաց, կամ մոլի, որովհետև այսպիսիներից ամենքը խուսափում են:

Դ. Ճշմարիտ բարեկամությունը բարիների ու չարերի փոխադարձ հաղորդությունն է. որպեսզի բարիների հաջողություններով չարերի սրտերն ուրախանան, և բարիների՝ չարերի հանդեպ կարեկցությամբ, չարերի տրտմությունները թեթևանան. այլապես բարեկամությունը փոխարկվում է շահասիրության:

Ե. Ավելի լավ է իմաստուն բարեկամներ ունենալ, քան բազում գանձեր. որովհետև իմաստուն բարեկամը նեղ օրն օգտակար խրատներով օգնում է, իսկ գանձերն ու հարստությունը՝ բնավ:

Զ. Ճշմարիտ բարեկամներին հատուկ է միմյանց հավատարիմ լինել, իսկ հավատարիմներին հատուկ է միմյանց հետ սերտ բարեկամություն ունենալ:

Բարեկամության օրենքը հաստատվում ու պահպանվում է հավատարմության մեջ. ուր հավատարմություն չկա, այնտեղ չկա և բարեկամություն:

Է. Բարեկամից զրկվելն առավել դառն ու ցավալի է, քան ունեցվածքից զրկվելը. որովհետև ունեցվածքը թշնամիներին շատացնում ու իրեն ձեռք բերողի հանգիստը վերացնում է, իսկ բարեկամությունը թշնամիներին նվազեցնում է ու բարեկամի անձը հանգստացնում:

Ը. Ով մեկի հետ արագ է բարեկամանում, արագ էլ քակտում է բարեկամության կապը:

Թ. Կեղծ բարեկամն անծրևային բարակ առու է, և ինչպես որ առուն է անծրևի պակասելու դեպքում ցամաքում, այդպես և կեղծ բարեկամն է հաջողության սպառվելու դեպքում անհետանում:

ժ. Շահախնդիր ու կեղծավոր բարեկամին հատուկ է իր բարեկամի ձախորդության ժամանակ փախչողների մեջ առաջինը լինել, երբ նրա հաջողության ժամանակ կոչնականներից առաջինն էր հրավիրվում:

Ձախորդությունը բարեկամության փորձաքար է, և ով որևէ ձախորդության մեջ չի ընկել, չի կարող կեղծ բարեկամին ճշմարիտից տարբերել:

ժԱ. Կեղծ բարեկամը հայտնի թշնամուց առավել չար է. որովհետև հայտնի թշնամիներից մարդ սովոր է զգուշանալ, իսկ ծածուկ թշնամիներից կասկած չունենալով՝ չարաչար վնասվում է:

ժԲ. Չարմանքի արժանի է, որ երբ մարդիկ ծի կամ էշ են գնում, նրա բնավորությունն ու բարքը քննում են, իսկ երբ որևէ բարեկամ են ձեռք բերում, միայն նրա արտաքին կերպարանքին են նայում, իսկ նրա բնավորության հանդեպ փույթ չունեն: Ով իր համար առաքինի ու ճշմարտախոս մարդկանց չի ընտրում իբրև բարեկամ ու խորհրդակից, հարկ է, որ խորամանկ շողոքորթների նենգավոր խոսքերից վնասվի:

ժԳ. Սրանից ավելի վտանգավոր ի՞նչ հիմարություն կա, որ արատավոր անասուններին մարդիկ առանց դանդաղելու արտաքսում են իրենց տանից, իսկ մուլի բարեկամներին շարունակ իրենց սեղանակից ու խորհրդակից են պահում:

ժԴ. Ով բարի բարեկամ է ձեռք բերում, գտնում է բոլոր բարիքները, իսկ ով չար բարեկամ է ձեռք բերում, ամեն բարիք կորցնում է: Նախընտրելի է առանց բարեկամի մնալ, քան չարի հետ ընկերանալ: Բարեկամ պետք է ձեռք բերել մանավանդ նրա համար, որ մեկի ունեցած բարին ամբողջական մնա և չունեցածն էլ բարեկամի միջոցով ձեռք բերվի: Իսկ չար բարեկամը մեկի ունեցած բարին վերցնում է նրանից և նրա չունեցածն էլ բնավ չի կարող տալ. որովհետև նրանք, որ չար են, ուրիշին բարիք գործել չեն կարող:

ժԵ. Եթե կամենում ես, որ մեկը քեզ բարեկամ ու հավատարիմ լինի, նախ դու նրան անկեղծ բարեկամ եղիր, որպեսզի քո բարությունն ուրիշներին քեզ բարեկամ դարձնի: Որովհետև եթե դու ուրիշների բարին չես կամենում, մի՛ հուսա, թե ուրիշները քեզ բարիք կկամենան:

ժԶ. Իմաստունների համար ավելի ուրախալի բան չկա, քան առաքինի բարեկամների հետ կենցաղավարելն ու կարևոր ու օգտակար բաների մասին գրուցելը: Իմաստուններին ավելի դյուրին է աշխարհի բոլոր վայելքները կորցնել, քան առաքինի բարեկամների ընկերությունից զրկվել:

ժԷ. Պատշաճ է երկնաքաղաքացի անվանել նրանց, ովքեր բարեպաշտական գործերով, բարեկամության սերտ սիրով միմյանցից անբաժան են մնում: Այս է երկրում երկնային կյանք վարելը. որովհետև երկնայիններին է հատուկ հաստատուն մնալ Աստծու և ընկերոջ հանդեպ սիրո մեջ: Ուստի ով բարիների հետ բարեկամությամբ է ապրում, բարի գործերով, նախքան երջանիկների աշխարհը ելնելը անշուշտ նրանց կենցաղավարությունն իր մեջ կրում է:

ժԸ. Ճրագը, որքան էլ լուսափայլ լինի, պատրույգի հատման պետքն ունի, իսկ եթե անհարդար մնա, դյուրահալ ու աղոտալույս կդառնա: Այսպես և մարդը, որքան էլ բազմահանձար լինի, բարեկամների խորհրդակցության կարիքն ունի, որպեսզի չլինի թե խորհրդածված որևէ կարևոր գաղափար, ճրագի յուղի պես հալչելով, սպառվի, կամ ավելորդ պարագաներով առցվելով՝ մտածումի պայծառությունը թուլանա:

ժԹ. Իմաստուն բարեկամների խրատն ավելի լավ է պահպանում իշխանին, քան անհեղ զորքի բազում գնդերը: Վտանգների մեջ են ընկնում, ովքեր իմաստուն բարեկամների խրատն արհամարհում են:

Ի. Ճշմարիտ բարեկամության նշաններից մեկն ընկերոջ գաղտնիքները սրտի գաղտնարանում պահելն ու օտարներին չմատնելն է, որովհետև բարեկամության հիմքը գաղտնապահությունն է, և առանց դրա ընկերոջ սերը հաստատուն լինել չի կարող: Ճշմարիտ բարեկամ չէ, ով իր բարեկամի հետ

գժտվելով՝ հավատարմության կնիքը խափանում ու ընկերոջ գաղտնիքները հրապարակում է:

ԻԱ. Հարազատ բարեկամը նման է հայելու, կշեռքի և փորձաքարի: Ինչպես որ հայելու մեջ մեկը տեսնում է իր դեմքի վայելչությունը կամ արատը, կշեռքով իմանում իրի ծանրության չափը և փորձաքարով՝ ոսկու մաքրության աստիճանն ու արժողությունը, այդպես և բարեկամի ազդարարությամբ մեկը կարող է լավ հասկանալ, թե առանձնության մեջ իր մտածածը վայելուչ, կատարյալ ու պատշաճավոր է՝ ըստ ժամանակի, տեղի և ըստ այլ բոլոր պարագաների: Քանզի մարդ բազում անգամ, թեկուզև իմաստուն լինի, առանձին՝ առանց խորհրդակցի, ընկնում է սխալների մեջ կամ ինչ-ինչ բաներում տարակուսում կամ խորհածն անորոշ ու անգործածելի թողնում: Դրա համար էլ մեկ ուրիշի կարիքն ունի, որպեսզի սխալներն ուղղի, տարակուսանքները փարատի և խորհածը, եթե հարկավոր ու օգտակար է, խրախուսի ի գործ դնել: Ուստի ով անկեղծ ու իմաստուն բարեկամ ունի, չի սխալվում, քանզի երկու աչքն ավելի լավ է տեսնում, քան մեկը: Իսկ ով խորհրդակցից բարեկամ չունի այն գործերում, որ պատրաստվել է կատարել, թող զգույշ լինի, որովհետև գուցե կամ վրիպումների մեջ է ընկել, կամ ընկնելուն մոտ է:

ԻԲ. Հարազատ բարեկամությունը պահանջում է որևէ հավասարություն ունենալ՝ կամ հարստությամբ, կամ պատվով, կամ իմաստությամբ և կամ խոհեմությամբ, այլապես բարեկամության անունը փոխարկվում է կամ շահասիրության, կամ շողոքորթության, կամ դասառության և կամ կույր հավանության: Ուստի անհաստատ է այն բարեկամությունը, ուր որևէ հավասարություն չկա:

ԻԳ. Բարեկամության հոգին անկեղծ սերն է, որովհետև առանց դրա բարեկամությունն անկենդան դի է կամ ինչ-որ պաճուճապատանք, որն արտաքինից մարդու նման է, իսկ իրականում՝ կեղծիք և ինչպես որ դյուրավ կործանվում է այն շինվածքը, որ հաստատված չէ վեմի վրա, այդպես էլ արագ խափանվում է այն բարեկամությունը, որ հիմնված չէ սիրո վրա:

ԻԴ. Բարեկամությունն ինչպես որ տեսքով գեղեցիկ է, այդպես էլ բնությամբ փափուկ է: Ուստի և դույզն պակասությամբ ծանր հիվանդանում է և փոքր-ինչ անհոգությամբ՝ մեծամեծ վերքերով ծածկվում: Քանզի մարդիկ սիրելիների չնչին նետերից ավելի կարեվեր են սրտից խոցվում, քան թշնամիների հրացայտ զնդակներից: Շատ անգամ բարեկամության սաստիկ սերն անզգուշության պատճառով փոխարկվում է անհնարին ատելության, ուստի միշտ փոխադարձ դարմանման կարիքն ունի, որպեսզի առավել ու առավել զորանա:

ԻԵ. Բարեկամի մոտ առանց որևէ կարևոր առիթի հաճախելը տաղտկություն ու անպատվություն է բերում: Խիստ հազվադեպ և ուշ-ուշ այցելություններն էլ ջերմ սերը հովացնում են՝ ըստ առաժի. «Ով աչքից հեռու է, մտքից էլ է հեռու»: Ուստի ով կամենում է բարեկամի աչքին հարգելի ու սիրելի լինել, թող ոչ հաճախ այցելի, ոչ էլ խիստ ուշ-ուշ, այլ այցելության ժամանակը մտքի լծակներով կշռի:

ԻԶ. Կատարյալ բարեկամությունն այնժամ է լինում, երբ երկուսը մի սիրտ ու մի հոգի են ունենում. ինչ կամենում է մեկը, կամենում է և մյուսը, և ինչ ասում է մեկը, ասում է և մյուսը. եթե մեկն անում է, մյուսն էլ է անում, և եթե մեկը դադարում է անելուց, դադարում է և մյուսը. այնքան, մինչև որ ոչ թե երկու անձ են երևում, այլ մի հոգի՝ բնակված երկու մարմիններում: Այդժամ է, որ հնարավոր է տեսնել կյանքի անձանձիր քաղցրությունն ու հավերժ ուրախությունը. միասին ապրում են ու միասին մեռնում, դեռ ավելին՝ բնավ էլ չեն մեռնում, որովհետև իրենց հոգիներում ներգոյացած ունեն անմահ ու մշտնջենավոր սերը:

ԻԷ. Կատարյալ բարեկամության նշան է, եթե մեկն իր օգուտը հանձնի իր բարեկամի կամքին և ափ. «Այն են ինձ օգուտ համարում, ինչ կամենում է ինձ անել իմ բարեկամը»:

ԻԸ. Սիրո ու բարեկամության անարժան է նա, ով մոռանում է իր բարեկամի երախտիքը: Կա մարդ, որ շատ անգամ մեծամեծ բարերարություններ է ընդունել մեկից, բայց երբ մի ուրիշ անգամ ինչ-որ դիպվածով կամեցածը չի գտնում, արագ մոռանում ու ոտքի տակ է տալիս բարեկամի այդ բոլոր երախտիքները, խոժոռվում ու արհամարհում նրան:

ԻԹ. Ճշմարիտ բարեկամ չէ նա, ով իր բարեկամին հորդորում է իրեն գործակցել ի վնաս ուրիշներին: Այսպիսին արտաքուստ բարեկամության անունն է կրում, բայց իրականում թշնամություն է նյու-

թում. որովհետև գործակից դարձնելով իր անօրենությանը՝ բարեկամին մեղանշել է տալիս:

Լ. Բարեկամությունը սիրուց է ծնվում. իսկ սիրուն, պարտադիր չէ, որ սիրեցյալ առարկան մոտ լինի, քանզի կարելի է սիրել և խիստ հեռավորն ու բացական: Ուստի ովքեր տեղի հեռավորության պատճառով դադարում են իրենց ընկերոջը սիրելուց և չեն ջանում նրան բարիք գործել, սիրո մեջ կատարյալ չեն:

ԼԱ. Սրտի ցավերը սաստկանում են, երբ մեկի վշտի վրա ուրիշներն ուրախանում են: Ցավերը թեթևանում են, երբ վշտացածին ուրիշները կարեկցում են: Ուստի ով սրտում ցավեր է կրում, թող դրանք թաքցնի թշնամուց, որպեսզի չուրախանա, և ինքն ավելի տրտմի, և թող հայտնի բարեկամին, որպեսզի նրա վշտակցությամբ ինքը ցավերից թեթևանա ու մխիթարվի:

ԼԲ. Նրանք են ճշմարիտ բարեկամ, ովքեր փոխառփոխ վերցնում են միմյանց ծանրությունն ու ցավերը: Կան և այնպիսիք, որոնք իրենց ընկերներին խոսքով կոչում են բարեկամ ու սիրելի, բայց սրտում նրանց համարում բեռնակիր գրաստներ. որովհետև իրենց բեռները նրանց ուսերին են միշտ բարձում, իսկ իրենք նրանց բեռներին երբեք չեն մոտենում: Սրանք կեղծավոր ու սուտ բարեկամներ են:

ԼԳ. Սիրո արժանի չէ նա, ով ոչ ոքի չի սիրում, ինչպես պետք է սիրել, որովհետև կամ նրա հարզը չի ճանաչում, կամ էլ արհամարհում է նրան: Ճշմարիտ սիրո նշան են ոչ թե խոսքերը, այլ գործով արդյունքները: Ուր կա իմ ու քո, այնտեղ սեր չկա:

ԼԴ. Նրան է պետք բարեկամ ճանաչել ու նրա հանդեպ սերն ամուր պահել, որը հայտնում է քո սխալներն առանց որևէ շահասիրության: Եթե նույնիսկ խոսքերը խիստ լինեն ու քո կամքին հակառակ, հաճիր ընդունել, որովհետև քո օգտի համար են: Հիմար է նա, ով իր բարեկամին ատում է, որովհետև նրա կողմից հանդիմանվում է:

ԼԵ. Միայն նրան մի համարի թշնամի, ով քեզ չարիք է հասցնում, այլև նրան, ով բարեկամ է համարվում, բայց քեզ չի հայտնում քո սխալները և իր շահասիրության պատճառով կեղծուպատիր գովեստով քեզ ներբողում է, որից խաբվելով՝ վտանգի մեջ ես ընկնում ու վատանում դառնում:

ԼԶ. Ճշմարիտ բարեկամությունը բոլորին պարտավորեցնում է ընկերոջը բարիք կամենալ ու գործել. իսկ խոսքով կամ գործով սխալված եղբորը խրատելն ու հանդիմանելը ընկերոջը բարիք կամենալ ու գործել է: Ուստի ով կարող լինելով զանց է առնում ու չի ջանում խրատներով կամ հանդիմանությամբ իր եղբորը մեղքերից դարձնել, սիրո պատվիրանի դեմ մեղանշում է:

Ճշմարիտ բարեկամության օրենքը չի կատարում, ով իր բարեկամի որդուն անխրատ է տեսնում և չի խրատում կամ հանդիմանում:

ԼԷ. Բնական ու աստվածային օրենքով պարտավոր ենք ունեցվածքից նպաստներ տալով օգնել ընկերոջը, երբ մարմնավոր կարիքի մեջ է: Ուստի առավել ևս պարտավորություն ունենք խրատների ու հանդիմանության նպաստներով օգնել հոգով կարոտյալին: Վարձատրության արժանի է, ով մեկին ուղիղ ճանապարհով է առաջնորդում. բայց պետք չէ տարակուսել, թե անվարձ կմնա նա, ով արգելում է մեկին ծուռ ճանապարհով գնալ:

ԼԸ. Եղբայրական հանդիմանությունը հավասար ու համապատիվ բարեկամների մեջ է գործադրվում. որովհետև որևէ իշխանավոր կամ դատավոր, եթե հանցավորին հանդիմանում է, դա իշխանությամբ կատարված կշտամբանքի սաստ է, իսկ եթե փոքրն է հանդիմանում մեծին, դա հանդգնություն է: Սակայն խոհեմությամբ ու զգուշությամբ որդին իր հորը, կրտսերն իր երեց եղբորը, կինն իր ամուսնուն, և հպատակն իր իշխանին կարող է խրատել ու հանդիմանության գործ կատարել, բայց սա ոչ թե հանդիմանություն է կոչվում, այլ ազդարարություն. ասես հուշում է նրան այն խոսքերի կամ գործերի անպատշաճությունը, որոնցից կամենում է նրան հեռացնել:

ԼԹ. Բարեկամության սիրուց առաջ եկած հանդիմանությունը պահանջում է այս պայմաններն ունենալ: Նախ՝ հանցանքը ստույգ պիտի լինի. որովհետև հանցավորության համար հանիրավի հանդիմանությունը սիրտը կարեվեր խոցում է: Երկրորդ՝ հանդիմանությունը հանցանքին համաչափ պիտի լինի կամ պետք եղածից նվազ. որովհետև ով չափից ավելի է հանդիմանում, փոխանակ վերքը բուժելու՝ էլ

առավել է բորբոքում: Երրորդ՝ հանդիմանությունը հարմար ժամանակ և առանձին պիտի լինի. որովհետև բազմության առջև կատարված հանդիմանությունը ոչ թե զգաստության խրատ է, այլ թշնամանք: Չորրորդ՝ հանդիմանությունը ցավակցաբար պիտի լինի՝ մեղմ ու ազդու խոսքերով. որովհետև ով վրեժխնդրության հոգով ու խիստ խոսքերով է հանդիմանում, հանդգնության առիթ է տալիս: Հինգերորդ՝ ուղղվելու հույս պիտի լինի. որովհետև անուղղելիին հանդիմանելն առավել վտանգավոր է:

Խ. Ով իր բարեկամի թերությունը չի հայտնում ու խրատական խոսքերով չի հանդիմանում՝ բարեկամին չվշտացնելու կամ չխոժոռեցնելու համար, ճշմարիտ բարեկամ չէ, այլ հակառակը՝ թշնամի. որովհետև թշնամության գործ է, կարողություն ունենալով, բարեկամի սխալը չուղղել, որի պատճառով սխալին հետևում են նաև այլ մեծամեծ վնասներ, որոնք եթե դրանից հետո կամենա խափանել, չի կարողանա: Բայց եթե խրատի, իսկ նա չանսա, թող բարեկամներից ոմանց իր հետ վերցնի և նրանց հետ միասին խրատի, որպեսզի թերևս եղբորը շահի: Իսկ եթե նրանց էլ չանսա, թող ասի եկեղեցու առաջնորդին, որով պարտավորությունից կազատվի: Եվ եթե առաջնորդին էլ չլսի, թող իբրև հեթանոս ու մաքսավոր լինի (*հմմտ. Մատթ. ժԸ 15-17*):

«Լավ է բարեկամի ապտակը, քան թշնամու նենգ համբույրը» (Առակ. ԻԷ 6):

«Բացահայտ հանդիմանությունը լավ է սքողված բարեկամությունից» (Առակ. ԻԷ 5):

«Հավատարիմ բարեկամը հզոր պատվար է, իսկ ով գտնի նրան, գանձ է գտել» (Սիրաք Զ 14):

«Մերձավորի մոտ հավատարմություն ունեցիր նրա աղքատության ժամանակ, որպեսզի նրա հարստության օրոք ուրախ լինես» (Սիրաք ԻԲ 28):

## Գ Լ ՈՒ Խ Ի

## Հ Յ ՈՒ Ր Ա Ս Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Առաքինություններից մի քանիսն առանձնական են, որոնք իրենց գործողներին միայն մխիթարում են, և այդպիսիք են աղոթքն ու ծնրադրությունը, Աստծու և աստվածայինների մասին բարեպաշտ խոկումը, մեղքերի զղջումը, ծոմապահությունն ու պահեցողությունը և ապաշխարության այլ գործերը: Սրանք կրոնին են վերաբերում: Իսկ մի քանիսն էլ ընկերային են, որոնք միևնույն ժամանակ և՛ իրենց գործողներին են մխիթարում, և՛ ընդունողներին, և այդպիսիք են կարոտյալներին ողորմելը, գերիներին ազատելը, հիվանդներին ծառայելը, տրտմածներին մխիթարելը, բուլորին բարիք գործելը: Սրանք էլ բարոյականությանն են վերաբերում:

Արդարև սրանք երկուսն էլ գովելի են, բարի, աստվածահաճո և վարձի արժանի, բայց եթե ընկերային առաքինություններն առանց սնափառության են գործվում, ավելի գովելի են ու ավելի մեծ վարձի արժանի: Որովհետև ոչ միայն գործողին են օգուտ ու շահ բերում, այլև ընկերոջը, դեռ նույնիսկ իրենց գործերի օրինակներով շատերին մղում են ուրիշներին բարերարելու:

Այսպիսին է և հյուրասիրությունը, որ ոչ միայն հյուրընկալին է ուրախացնում, այլև հյուրին, և իր մեջ պարունակում է նաև առաքինության բազում այլ մասեր՝ մարդասիրություն, եղբայրասիրություն, քաղաքավարություն, օտարականի հանդեպ մարդասիրություն, ողորմություն, խոնարհություն, քաղցր բարք և այլն:

Բ. Նա՛ քաջ գիտի, թե ինչ է հյուրասեր ու օտարասեր լինելը, ով ինչ-որ ժամանակ օտար երկրում

նժդեհ ու պանդուխտ է եղել, չքավոր կամ հիվանդ:

Գ. Հյուրասեր է ոչ թե նա, ով սեղանի է կանչում հացկատակների կամ բարեկամների՝ նրանց շնորհ անելու կամ իր փառքի համար, այլ նա, ով աղքատների, անտունների ու նժդեհների է ժողովում իր տանը, կերակրում ու մխիթարում նրանց առանց փոխադարձ ակնկալության:

Դ. Զվարթուն դեմքերն ու քաղցր խոսքերն ավելի են հագեցնում հյուրերին, քան բազմախորտիկ սեղանն ու անուշահամ ըմպելիքները:

Ե. Մոլի ու խելագար է այն հյուրընկալողը, ով այն դիտավորությամբ է օտարականներին հյուրընկալում, որ գան պատիվ ու մեծարանք մատուցեն իրեն:

Զ. Ով հյուրերի առաջ իր մասին մեծաբանում է, ոչ միայն իր վարձը կորցնում է, այլև անարգվում որպես ամբարտավան: Հյուրն էլ մեծաբան տանտիրոջը կամ պիտի գովի ու մարդահաճո դառնա, կամ լուռ մնա ու տմարդի երևա: Ավելի լավ է քաղցրախոս աղքատի սեղանից ցամաք հաց ուտել, քան մեծաբան հարուստի խնջույքում՝ համադամ կերակուր:

«Քաղցածներին բաժանի՛ր քո հացը  
& անօթևան աղքատներին տա՛ր քո տունը.  
Եթե մերկ մարդ տեսնես, հագցո՛ւ նրան» (Եսայի ԾԸ 7):

«Հաղորդակի՛ց եղեք սրբերի կարիքներին.  
հետամո՛տ եղեք հյուրասիրության» (Հռոմ. ԺԲ 13):

«Եղբայրասիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ:  
Մի մոռացեք օտարասիրությունը, որովհետև  
դրա շնորհիվ ոմանք հրեշտակներ հյուրընկալեցին  
առանց իմանալու» (Եբր. ԺԳ 1-2):

«Ամեն ինչից առաջ միմյանց միջև ամուր սե՛ր ունեցեք,  
քանի որ սերը ծածկում է մեղքերի շատությունը:  
Հյուրասե՛ր եղեք միմյանց հանդեպ առանց տրտնջալու»  
(Ա Պետ. Դ 8-9):

## Գ Լ ՈՒՆ Ի Ա

## Չ Ա Փ Ա Վ ՈՐ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Երջանիկ է այն քաղաքը, որի բնակիչները ժրաջան են ու վայելում են իրենց աշխատանքի վարձը, ձեռք են բերել միայն ապրելուն անհրաժեշտ բաները և փախչում են ավելորդից ու զվարճություններից. կայքն ու կարասին, հագուստն ու տունը, կերակուրներն ու ըմպելիքները համեստ են ու չափավոր: Այնտեղ կարելի է տեսնել քաղաքացիների միջև խաղաղություն ու ընտանիքի միաբանություն, օրենքին հպատակություն ու մեծերի հանդեպ հնազանդություն, մարդահաճոների հանդեպ ատելություն, բարեսիրտների հանդեպ սեր և ուրախ ու ազատ կյանք:

Բ. Ով իր ունեցած առաջին անհրաժեշտության առարկաները բավական չհամարելով խելքը տալիս է ճոխությունների՝ զարդ ու զվարճության, զրկվում է նաև առաջին անհրաժեշտության առարկաներից. և ով իր վիճակից գոհ չէ, ունեցածն էլ է կորցնում և ապա փնտրում է ու չի կարողանում գտնել:

Գ. Սակավապետը հանգիստ ու անտրտունջ է իր կյանքը վարում. որովհետև կարևոր բաները, որոնց կարիքը հարկավ ունի, սակավ են, և դրանք դյուրավ կարող է գտնել: Չի տանջվում սնափառությամբ:

յունը սնուցանող ավելորդություններ ձեռք բերելու համար և դրանք չունենալիս չի տրտնջում, որովհետև դրանք կարիքը չունի:

Ով շատ բանի կարիք ունի, անհանգիստ ջանում է դրանք ձեռք բերել և երբ չի կարողանում ձեռք բերել, տանջվում ու տրտնջում է: Իսկ տրտունջը ոչ միայն միտքն ամբոխում ու կյանքը մաշում է, այլև ընկերներին ծանծրացնում. ամենքը զզվում, տաղտկանում ու հեռանում են տրտնջացող բերանից, ուստի և ոչ ոք չի կամենում տրտնջացողի հետ կենցաղավարել կամ նրան բարիք գործել: Որովհետև տրտնջացողի բարքն այս է՝ բարերարից դժգոհ լինել, եթե նույնիսկ շատ երախտիք է ընդունել նրանից, և չափազանց շատ տրտնջալ, եթե մի կարճ ժամանակ նրա բարերարությանը չի արժանացել:

Դ. Համեստը լավ ապրելու համար բավարարվում է կարևոր սակավ բաներով, ուստի միշտ խաղաղ և ուրախ է: Իսկ փառամոլն անդադար ջանում է դրան ձեռք բերել ճոխությունների համար, ուստի հոգսերից ու զբաղմունքներից հանգիստ չունենալով՝ տառապում է: Էլ չեն ասում, որ շատ անգամ շահ ունենալու համար անվայել միջոցներ է բանեցնում, որպեսզի իր պատիվը որևէ կերպ չպակասի, այս պատճառով էլ խղճմտանքից չարաչար տանջվում է: Ուստի ավելի լավ է չափավոր ու համեստ լինել և զվարթամիտ ապրել, քան հարուստ, բայց փառամոլ լինել և մտքով ու մարմնով տանջվել:

Ե. Ի՞նչն է ավելի ցանկալի մարդկությանը, քան այն, որն առավել օգտակար է մեր կյանքը երջանկաբար պահպանելու համար: Այդ դեպքում ինչո՞ւ այդքան ցանկալի չէ ապրելուն անհրաժեշտ բաներով բավարարվելը, ինչը մարդու կյանքը զվարթ, առողջ ու երկար է պահում:

Զ. Միջին դասակարգի քաղաքացիական կենցաղավարությունն ավելի ապահով ու հանգիստ է, քան այլ դասակարգերինը: Եթե մեկը խիստ ցածր դասակարգից է, ուրիշներն իշխում են նրա վրա, ուստի միշտ նեղության ու վշտերի տառապանքի մեջ է: Եթե խիստ բարձր դասակարգից է, ինքն է ուրիշների վրա իշխում, ուստի շարունակ թշնամություն է կրում նախանձողներից: Իսկ ով միջին դասակարգին հատուկ կյանք է վարում, ոչ լիովին ընկճված է մեկի իշխանության տակ՝ որպես նվաստ մեկը, ոչ էլ նախանձողներից թշնամություն է կրում որպես մի իշխանավոր: Ուստի միշտ խաղաղ ու անվրդով է՝ բավարարվելով չափավորով:

Է. Սրտի տրտմություն է շատ իղծեր ունենալն ու սակավին հասնելը, և հոգու բերկրություն է սակավ իղծեր ունենալն ու շատին հասնելը: Ուստի թող ոչ ոք շատ ստացվածք չկամենա, որպեսզի չունենալու դեպքում չտրտմի, այլ սակավ ու անհրաժեշտ բաների մասին մտածի, որոնք ձեռք բերելը դյուրին է: Եվ եթե պատահի, որ շատին հասնի, այնժամ նրա հոգին բերկրանք ապրի, ինչպես հողը պեղելիս գանձ գտնողը:

«Լավ է մի պատառ համով հացը՝ խաղաղությամբ,  
քան միս ու բարիքով լի տունը՝ թշնամությամբ» (Առակ. ԺԷ 1):

«Իրոք, աստվածապաշտությունը շահի մեծ աղբյուր է»  
(Ա Տիմ. Զ 6):

## Գ Լ ՈՒՆ Ի Ք

## Ե Ր Կ Ր Ա Գ ՈՐ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Հողը գթած մայր է, որ երբեք չի դադարում իր որդիներին բարի պարգևներ բաշխելուց ու հարստացնելուց, և որքան ավելի են ջանք թափում այն մշակելու, այնքան ավելի է շահեկան պտուղներ նրանց մատուցում: Ուստի բնակիչները պարտապան են մնում, եթե հողն անմշակ են թողնում, իսկ իրենց՝ կարիքավոր:

Բ. Պետք է ջանք թափել ու աշխատել այնպիսի արհեստներում, որոնցով մարդու կյանքը սնուց-



վում ու պահպանվում է. և ահա այդպիսին է մշակության արհեստը: Էլ չեն ասում, որ աշխատանքը մարմինն առողջ է պահում ու զորացնում, իսկ ծուլությունն՝ այն հիվանդագին ու տկար դարձնում:

Գ. Բարեբախտ հարստություն պետք է համարել մշակությունը, որ աննախանձ ընծեռում է մարդկանց կյանքին իսկապես հարկավոր բաները: Իսկ եթե մարդը հողը մշակելով կարող է ստանալ ինչ որ իրեն հարկավոր է, ուրեմն իզուր է երկրի ընդերքը փորելով չարչարվում ոսկի ու արծաթ փնտրելու:

Դ. Մարդկանցից շատերն ամեն օր մահու չափ պատերազմով ու արյան հեղմամբ տառապում են գտնելու երջանիկ հարստությունը, որ հողը մշակելու մեջ է, և չիմանալով, թե որտեղ է, իզուր դեգերում են ամբողջ երկրով մեկ: Խոր անդունդներում չէ թաքցված, այլ պատրաստ՝ նրանց ոտքերի տակ է: Եթե մշակեն այն, ոչ միայն ապրելու միջոցներ կգտնեն, այլև խաղաղություն, առողջություն և երկար կյանք, ավելի, քան իրենց կարծած այլ եղանակով ձեռք բերելիքը:

Ե. Սնափառությունը թշվառության աղբյուր է: Որովհետև շատերը չափազանց ճոխության ձգտելու պատճառով կարևորներից էլ են զրկվում և կարիքի մեջ տառապում: Ուստի ովքեր կամենում են ամենահարկավոր բաներով բավարարվել, խնդություն ու խաղաղություն են գտնում:

Զ. Մարդկանց հանգստին, զարդարանքին ու վայելքներին ծառայող բոլոր արհեստներից առավել պետք է ծաղկեցնել կյանքին հարկավոր արհեստները, ինչպիսիք են երկրագործությունը, հովվությունը, դարբնությունը, ոստայնանկությունը և հյուսնությունը: Այն ժողովուրդները, որ հարկավոր բաներով են բավարարվում և հետամուտ չեն լինում վայելչականներին, անմեղ ու հանգիստ կյանքով են ապրում, անիրավ հափշտակությամբ ու բռնությամբ չեն տանջում ուրիշներին և չարաչար աշխատանքներ չեն կատարում՝ ավելորդ բաներ ստանալու համար, որոնք կյանքի անհրաժեշտություն չեն, այլ սնոտի վայելչություն: Բնությունը սովոր է սակավով բավարարվել, իսկ ցանկությունը «բավական է» ասել չգիտի երբեք:

Է. Եթե ճարտար արվեստագետները սիրո ու հարգանքի են արժանի, որովհետև ստեղծում են բարձրարվեստ գործեր, որոնք թեպետ ուշիմ մտքի արդյունք են, սակայն կյանքի անհրաժեշտություն չեն, ապա ինչպե՞ս գովելի չէ մշակը, որի գործը կարևոր ու կենսօգուտ է և արվեստագետների գործերի պես մարդկանց վայելքների համար չի ստեղծված: Որովհետև քրտնաջան աշխատանքի արդյունքով կերակրում է քաջահանձար արվեստագետներին և մարդկանց ամեն մի դասակարգի:

Մշակությունը պետք չէ արհամարիել, որովհետև առողջ միտք ունեցող ոչ մեկը չի արհամարհում անուս գյուղացու ձեռքով արված որևէ պիտանի գործ, այլ այն հավանում է և իր համար մեծ շնորհ ու երախտիք համարում:

Ը. Աթենքի Հերեկտոն թագավորը, որ արծաթե դրամների կիրառությունը գտավ, հպատակներին օրինադրեց հողը մշակել և նրա պտուղներով սնվել, անասուններին կերակրել և նրանց կաթը գործածել իբրև կերակուր և բուրդը՝ հագուստի հումք, և ասում էր. «Հողն իր պտուղն անպակաս տալիս է իբրև մարդկանց սնունդ, երբ մարդիկ աշխատում են նրա վրա»: Բայց երբ տեսավ, որ դրամի պատճառով մարդիկ երկրագործությունը թողեցին, իրենց բարքն ապականեցին, և դրամասիրության ախտից չարիքները շատացան երկրի վրա, հույժ զղջաց և սրտի դառնությունից իշխանությունը թողնելով՝ առանձնացավ լեռների անմարդի խորշը և այնտեղ աղքատ ու թախծալից մնաց մինչև իր կյանքի վախճանը:

«Ով չի ուզում աշխատել, թող հաց էլ չուտի» (Բ Թես. Գ 10):

**Գ Լ Ո Ի Խ Ի Գ**

**Ծ Ա Ռ Ա Յ Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

Ա. Այն ծառան կամ սպասավորը, որ միայն իր հանգիստն է փափագում, լավ չի ծառայում իր տի-

րոջը. որովհետև բարի ծառան հանձն է առնում նեղություն կրել իր տիրոջ օգտի համար, իսկ վատ ծառան դժվարությունից խույս է տալիս և նրան չի օգնում հարկավորության դեպքում:

Բ. Ի՞նչ օգուտ խոսքով տիրաջան երևալուց և գործով դավաճան լինելուց. որովհետև լեզուն չէ, որ տիրասեր է դարձնում, այլ անխարդախ սրտից առաջ եկող գործը: Շահախնդիր ծառան չի կարող իր տիրոջը հավատարիմ լինել և գործերում՝ բարեջան:

Գ. Այն ծառան, որ նենգում է իր տիրոջը և հարում թշնամուն, արժանի է պատժվելու նրա կողմից, ում թևակից եղավ: Որովհետև ով իր բարերար տիրոջը դավաճանեց, հույս չկա, թե ուրիշ մեկին հավատարիմ կլինի:

Դ. Ծառայի կամքը պիտի լինի այն, ինչն ունի տերը՝ սիրել, ում նա սիրում է, և ասել, ում նա ատում է: Իսկ ով ջանում է տիրոջը դեպի իր կամքը հակել և գործել այնպես, ինչպես ինքն է ուզում, ոչ թե ծառա է, այլ տեր: Ոչ էլ ծառային վայել է քննել գործի պարագաները, ընտրություն կատարել՝ կամենալով հարմարն ու ոչ հարմարը. այլ պետք է միայն ջանալ պատվերը հոժարակամ հնազանդությամբ կատարել:

Ե. Սպասավորի հավատարմությունը երևում է դժվարությունների մեջ. որովհետև նա է հավատարիմ, ով եռանդագին սիրով ու զվարթությամբ է վշտերը տանում, իսկ ով խոժոռվում ու տրտնջում է, արժանի չէ սպասավորության ու վարձատրության: Մի չնչին ծառայություն՝ արված մեծ սիրով, առավել հաճելի է, քան մի մեծ աշխատանք՝ արված նվազ սիրով:

Զ. Ծառայի հնազանդությունն առաջ է գալիս տիրոջ բարերարությունից, և ուր բարերարությունն առավել է, այնտեղ առավել է հնազանդությունը:

Է. Արդարությանը դեմ է բազմավաստակ սպասավորին նրա ծերության կամ տկարության ժամանակ անխնամ թողնելը. որովհետև նա, ով կարողություն ունեցած ժամանակ հավատարմությամբ ծառայում էր, հարկ է, որ խնամարկվի իր տկարության ժամանակ, ապա թե ոչ հավատարիմ սպասավոր հնարավոր չի լինի երբևէ գտնել:

Ը. Եթե տերերը բարի լինեին, չար ծառա չէր լինի. որովհետև ծառաները ոչ այլ բան են ցանկանում ու ոչ այլ նպատակ հետապնդում, եթե ոչ իրենց տիրոջը նմանվել ու նրանց պատվին հասնել:

Թ. Այն է Աստծու հանդեպ կատարյալ ծառայությունը, որն առաջ է գալիս միայն Աստծու հանդեպ սիրուց, իսկ ճշմարտապես սիրողը հանձն է առնում կորցնել ունեցվածք, պատիվ, սիրելիներին և նույնիսկ իրեն՝ չկորցնելու համար Աստծու հանդեպ սերը: Անկատար ծառայությունն է, որ առաջ է գալիս պատիժների հանդեպ երկյուղից. որովհետև ով երկյուղից է ծառայում ու հնազանդվում, առավել սիրում է իրեն, քան Աստծուն:

«Մի՛ չարչարիր ծառային, որ ջանասիրությամբ է աշխատում, & վարձկանին, որ քեզ նվիրված է հոգով» (Սիրաք է 22):

«Քո հոգին թող սիրի իմաստուն ծառային & նրան չզրկի ազատությունից» (Սիրաք է 23):

«Ծառանե՛ր, ամեն ինչում հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե մարդահաճո կերպով, ցուցադրական ծառայությամբ» (Կող. Գ 22):

Գ Լ Ո Ի Խ Ի Դ

Հ Ն Ա Զ Ա Ն Դ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա. Խոնարհության գեղեցիկ դուստր է պատշաճ անվանել նազելի հնազանդությունը, որի բազմա-

պատիկ շնորհները միայն վայելողներն են ճանաչում: Որովհետև բարոյապես ազատ է դարձնում մարդու կամքը, որը բանականության հանդեպ հնազանդությամբ բնականորեն ազատ լինելով՝ նրա հանդեպ անհնազանդությամբ բարոյապես դարձել է կրքերի ծառա: Եվ այս ազատությունն անաշխատ թագավորություն է, առանց պատերազմի հաղթություն: Այնտեղ կարելի է տեսնել բոլոր թշնամիների պարտություն, այնտեղ խաղաղության երփներանգ ծաղիկներ են վերընծյուղվում, այնտեղ սիրո ու խնդության կենսոգուտ պտուղներ են աճում:

Արդարև, մարդկանց որդիներ, որ կամենում եք ձեզ կցորդ ունենալ խոնարհության վայելչագեղ օրհորդին՝ հնազանդությանը, ինչը և Աստված է կամենում, փութացե՛ք նրան ընդառաջ ելնել ու ողջագուրվել, առնել ու բերել նրան ձեր սրտի սենյակը և իբրև պանծալի դշխոյի՝ բազմեցնել ձեր կամքի ու հոժարության գահին, որպեսզի դուք ևս, ականակուռ թագ դնելով ձեր գլխին, փառքով պսակվեք:

Բ. Հնազանդությունը ենթադրում է որևէ դրական գործողություն՝ կամ ներսից, կամ դրսից: Ներսից, օրինակ, կամքի հնազանդվելը մտքի լավ առաջադրությանը և կամ ինչ-որ բան կամենալն ըստ հրամայողի կամքի: Իսկ դրսից, օրինակ, աչքերով նայելը, լեզվով խոսելը, ձեռքերով գործելը և այլն: Ուրեմն հնազանդության պաշտոնը որևէ դրական գործողությունն է, և հնազանդությունն է մտքից կամ հրամայողից առաջադրված վայելույշ, օգտակար ու բարի ամեն ինչի գործադրիչը:

Գ. Հնազանդը սեփական կամք չունի. նրա կամքը հրամայողի կամքն է, և սրանով ոչ թե վերացվում է մարդու անձնիշխանությունը, այլ առավել հաստատվում: Որովհետև մարդու համար մեծ իշխանություն է իր կամքն այնպես կառավարել, որ հնազանդվի մտքի ամեն հրահանգի, որը միտքն իրեն հատուկ ճանաչմամբ օգտակար է համարում և մարդուն առաջադրում կատարել: Ապա թե ոչ մարդն անկարող կլիներ իր կամքը շարժելու, որով իսպառ կվերանար անձնիշխանության ազատությունը, որովհետև կամքը, կույր բաղձանք լինելով, բարին ու չարն ընտրել չէր կարողանա, եթե մտքին չհնազանդվեր:

Ուստի երբ միտքը, տեսնելով իր անձի օգուտը, կամքին հորդորում է ուրիշի կամքին հնազանդվել, արդեն միացել է վերջինիս հետ, և այնուհետև այն ոչ թե ուրիշի կամք է, այլ սեփական, և մարդն ասես ինքն իրեն է ազատաբար հնազանդվում: Եվ ուրեմն՝ ով ազատ կարողությամբ ենթարկում է իր կամքն ուրիշի կամքին, որն իր սեփական կամքն է դարձրել, ոչ թե իր անձնիշխանությունը կորցնում է, այլ առավել հաստատում:

Դ. Աստծու կամքին հնազանդվելը բնական է բոլոր արարածներին: Քանի որ բնության հեղինակն Աստված է, ուստի և բոլոր արարածները հնազանդվում են Աստծու հավիտենական, անփոփոխ օրենքին, իսկ Աստծու օրենքին հնազանդվելն աստվածային կամքին հնազանդվելն է, որովհետև օրենքը կամքի կողմից է հաստատված:

Արդ, աստվածային օրենքը, հաստատուն ու անեղծանելի մնալու համար, տպվեց մարդու մտքի մեջ և կոչվում է բնական օրենք, կամ աստվածային հայտնությամբ գրի առնվեց և կոչվում է գրավոր կամ շնորհական օրենք: Փրինագետ մարդիկ կամ նրանք, որոնց հանձնված է օրենքի պաշտպանությունը, ջանք են թափում ամեն օր հրապարակել դրանք ամենքին, և լսողները պարտավոր են հնազանդվել ու փութալ դրանք կատարելու:

Կան և եկեղեցական ու հասարակական օրենքներ, որոնք թպետ հատուկ կերպով չեն հրամայվել Աստծուց, սակայն նպաստում են Աստծու կամքի կատարմանը. եկեղեցականը վերաբերում է ճշմարիտ կրոնի բարեկարգությանը, իսկ հասարակականը՝ հասարակության բարվոք կառավարմանը: Ուստի ով այս օրենքներին չի հնազանդվում, արժանի է պատիժների՝ իբրև Աստծու կամքին հակառակող:

Ե. Հնազանդությունը հնազանդվողներին ցմահ պարտական է դարձնում: Եթե մեկը մի անգամ անհնազանդ է գտնվում, առաջին վարձն էլ է կորցնում. որովհետև մարդ ի՞նչ շահ կստանա օրենքին հնազանդվելուց, եթե վերջում օրինազանց ելնի աշխարհից:

Զ. Մարդիկ ինչ-ինչ գործողություններ, որոնք պիտի անեին, չկատարելու դեպքում ինչ-որ պատճառաբանությամբ կարող են իրենց անբասիր ներկայացնել: Սակայն անկարելի է, որ նրանք անբասիր մնան, եթե անհնազանդ գտնվեն նրանց, որոնց աստվածային կամ մարդկային օրենքով պարտավոր

են հնազանդվել: Ուստի ամեն ոք պարտավոր է պատասպարվել հնազանդության դրոշակի ներքո: Իսկ ով ըմբոստանում է, արժանի է պատժի, որովհետև գրված է. «Անհնազանդ որդին կորստյան պիտի մատնվի» (Առակ. ԺԳ 1):

Է. Ոչ ոք ինքնուրույն ընդունակ չէ կյանքի ընթացքում անվրեպ ընթանալու առանց առաջնորդի: Քանզի ով անձանոթ ճանապարհով է գնում, ուղին ցույց տվող մեկի կարիքն ունի: Մարդիկ աշխարհ գալիս այս կյանքի ճանապարհին անձանոթ են լինում, ուստի կարիքն են ունենում իրենց կյանքում անցնելիք ուղիղ ճանապարհն ուրիշներից սովորելու, որպեսզի մարդկային կենցաղավարության ուղիղ պողոտայից դեպի չար գործերն ու կրքերը չխոտորվեն: Այս տեղի է ունենում գիտակներին հնազանդվելով. որովհետև ով չգիտի դեպի որ կողմը դիմի, պիտի ուրիշներից սովորի, որպեսզի կարողանա տեղ հասնել:

Եթե մարդը հմուտների կողմից չկրթվի խոսքերի, գործերի, վարքի և գիտելիքների մեջ, անբան արարածներից էլ անարգ կլինի: Անբան արարածները կառավարվելիս իբրև դաստիարակ ունեն բնությունը, իսկ մարդիկ կառավարվելու համար միմյանց կարիքն ունեն. տգետները՝ գիտուններից սովորելով, տկարները՝ կարողներից խնամարկվելով: Եվ այս բարեմասնությունները չեն կարող առաջանալ որևէ այլ կերպ, եթե ոչ ուսուցիչների ու խնամակալների հանդեպ հնազանդությամբ:

Նորածին մանուկն անխնամ մնալով կամ մեռնում է, կամ այլանդակ դառնում. որովհետև եթե նրա փափուկ անդամները չեն պնդանում խանձարուրների մեջ, գորտի պես է քայլում: Ուստի Աստված՝ մարդկանց բնության խնամածուն, մեր առաջին ծնողներին կատարյալ հասակով ստեղծեց և նրանց մտքի մեջ տպեց բոլոր հարկավոր գիտելիքները՝ կառավարելու համար մեր մարդկային նորաբույս, մանուկ բնությունը: Նրանց սերունդները, վարժությամբ սովորելով նրանցից, հետնորդներին ավանդեցին, և նրանց մեջ եղած խոհեմները դար առ դար՝ մինչև հիմա, բազում փորձերով շատ կենսօգուտ հարմարություններ ավելացրին մարդկանց կյանքի դյուրության համար: Բայց այս ամենը եղավ ու լինում է հնազանդ հոգով:

Եթե ետիները չանսային ի գործ դնել առաջիններից լսածն ու տեսածը, այժմ նախնիների ժառանգներին հաջորդությամբ հասած օգտակար ոչինչ չէր լինի: Ուստի ներկայիս մարդկանց հարկավոր էր կամ ունենալ այն բոլոր շնորհները, որ ուներ նախկին մարդը, կամ ամեն բարեմասնությունից զուրկ մնալ, կամ էլ յուրաքանչյուրը բազում չարչարանք պիտի կրեր՝ նոր-նոր գտնելու համար կյանքին օգտակար պարագաներ: Արդարև, երեխաները պիտի հնազանդվեն հմուտներին՝ սովորելու ամեն հարկավոր բան, թե՛ արհեստներին վերաբերող, թե՛ գիտություններին, թե՛ մանավանդ բարոյականությանը, որպեսզի կարողանան կյանքի ընթացքում անսխալ քայլել և տառապանքի այս հովտից բարվոք կերպով դուրս գալ:

Ը. Աշակերտները պարտավոր են իրենց ուսուցիչներին հնազանդվել արհեստներ սովորելու մեջ, ինչ արհեստ էլ որ լինի՝ թե՛ ազատական և թե՛ ծառայական, աշխատանքը կամավոր սիրով հանձն առնել և ըստ կարողության ջանք թափել մինչև կատարյալ գիտելիքներ ունենալը: Բայց շատերն անհնազանդությամբ, սկզբից ևեթ հետ մնալով, օգտաբեր ուսման մեջ կաղում են, որով զրկվում են բարեբախտությունից, որը պիտի ծեռք բերեին, եթե հնազանդվելով ի գործ դնեին ուսուցիչների պատվերները:

Բայց ուսուցիչներն էլ պարտավոր են ուսուցանել աննախանձ ու եռանդազին, որպեսզի աշակերտները, ապարդյուն չարչարանքից վիատվելով, չթուլանան, այլապես ուսուցիչները դեմ դուրս կգան Աստծուն, ով կամենում է, որ մարդիկ բարի ուսումնառության մեջ միմյանց օգնեն:

Թ. Հնազանդվել Աստծուն, ծնողներին, ուսուցիչներին, իմաստուններին ու ծերերին, այլև բարերարներին, ինչպիսին են թագավորները, իշխանները կամ առաջնորդները, ոչ միայն գրավոր ու շնորհական օրենքն է պահանջում, այլև բնական օրենքը: Որովհետև մարդիկ տգետ ու անդաստիարակ են ծնվում, հետո կարիք ունենում գիտուններից սովորելու և խնամակալներից դաստիարակվելու: Ուրեմն ով սրանց չի հնազանդվում, չարաչար մեղանջում է և արժանի է պատժի:

Արտաքին կերպարանքով ու բերանի խոսքով ոչ ոք իրեն Աստծուն անհնազանդ ցույց չի տալիս, բայց սակավ կարելի է գտնել գործով հնազանդներ: Իսկ Աստված ոչ թե խոսքերին է նայում, այլ գործերին: Ուրեմն՝ ով կամենում է իմանալ, հնազանդ է Աստծուն, թե ոչ, թող քննի իր գործերը. եթե աստ-

վածային օրենքին համաձայն են, հնազանդ է, իսկ եթե ուրիշ կերպ են, թող իմանա, որ անհնազանդ է:

ժ. Հնազանդությունն ուրիշի կամքին անկարգաբար հպատակվելը չէ, այլ ունի չափ, կարգ ու կանոն: Չափը հնազանդվողի կարողությունն է. ոչ ոք պարտավոր չէ իր կարողությունից վեր լուծ վերցնելու: Կարգն արժանապատվությունն է նրանց, որոնց հնազանդվել է պահանջվում. ինչպես՝ հայրը մորից արժանապատիվ է, երեց եղբայրը՝ կրտսերից, թագավորը՝ իշխաններից, հոգևոր առաջնորդները՝ աշխարհական տերերից, և վայել չէ նվազին առավելից նախամեծար համարել: Եվ կանոնն աստվածային կամքն է. սա է ուղղության հավիտենական կանոնը՝ տաված մարդկանց մտքում, և ոչ ոք իրավունք չունի նրանից զարտուղելու:

Իսկ եթե մարդ ընդդեմ Աստծու կամքի բռնադատում է մեկին որևէ բանում հնազանդվելու, հնազանդության կանոնը եղծում է, ուստի ոչ ոք պարտավոր չէ նրան հնազանդվել:

ժԱ. Մարդիկ հեշտությամբ են հնազանդվում նրանց, որոնցից վախենում են, որպեսզի որևէ վնաս չկրեն: Բայց եթե վնասը հոգևոր է, պետք չէ վախից հնազանդվել, որովհետև ավելի լավ է կորցնել ունեցվածք, պատիվ ու մարմնավոր կյանքը, քան հոգին:

ժԲ. Ոմանք հնազանդության դիմաց վարձ չեն ստանում Աստծուց, որովհետև հնազանդվում են նրանց, որոնց համբավն ու մեծությունն աշխարհային փառքով է բարձր և ոչ թե աստվածայինով, և երբ սրանք սնուտի հողմածիզ բարձրությունից ընկնում են, կորչում է նաև նրանց հնազանդվողների վարձը: Սա առաքինական հնազանդություն չէ, այլ ծառայական ու մոլի, և այս ախտով այժմ շատերն են հիվանդ: Իսկ եթե առաքինիներին ու իմաստուններին հնազանդվեին, նրանց մեծությանն ու փառքին, որ Աստծու առաջ է բարձր, իրենք էլ հաղորդակից կլինեին:

ժԳ. Հլու-հնազանդ մարդը թեկուզև մեռնի, նրա համբավն ու փառքը, որ նրա հնազանդության պտուղն են, անմահ կմնան: Որովհետև թեպետ նա այս աշխարհից գնաց, բայց աշխարհում կենդանի թողեց բազում բարի գործերը, որոնք հնազանդությամբ սովորեց կատարել: Մարդու փառքը գործն է, և մարդիկ գործերով են զանազանվում, որովհետև մարդկային բնությամբ ամենքն էլ նույնն են:

ժԴ. Բռնի հնազանդությունն իր հետ կրում է մի գաղտնի ապստամբություն. որովհետև նվաճվածը միշտ հարմար ժամանակ է փնտրում բռնի լծից ազատվելու, և երկուսն էլ մտքով տանջվում են. բռնակալը՝ որպեսզի թույլ չտա ապստամբել, և նվաճվածը՝ թե բռնությունից ինչպես ազատվի: Սա չարաչար հնազանդություն է, որ ավելի անարգ է, քան գերությունը: Ով գերի է, մի անգամ վշտացավ գերի դառնալիս և այնուհետև գիտի, որ գերու վիճակում է, ուստի այնքան էլ չի վշտանում, մանավանդ որ գուցե գերիչը նրան խնայի որպես իր ունեցվածքի և չտառապեցնի: Իսկ ով պատերազմի օրենքով գերի է, իրեն ազատ է ճանաչում, թեկուզև հպատակ կամ հարկատու լինի, ուստի երբ հպատակների կամ հարկատուների օրենքից էլ ավելի է բռնադատվում չարաչար հնազանդության, մեծապես տառապում է և մտածում ապստամբել: Ուրեմն պետք չէ մեկին հնազանդեցնել բռնի կերպով, այլ քաղցրությամբ ու բարերարությամբ:

ժԵ. Հավասարապատիվ իշխաններին դժվար է միմյանց հնազանդվել, որովհետև ամեն ազնվական ծանր է համարում իր նմանին հնազանդվելը. սրանից առաջանում են միմյանց հանդեպ անհնարին խռովություն ու հակառակություն և հասարակության համար՝ վիշտ ու վնաս: Ուստի հարկ է Աստծուն աղաչել, որ ազգի կամ քաղաքի գլխավորներին սեր պարգևի, որովհետև սրանք միայն սիրո շաղկապով կարող են միաբանվել ու միմյանց հնազանդվել հօգուտ սեփական անձերի ու հասարակության:

ժԶ. Հնազանդության վերանալու դեպքում ամեն տեսակ կառավարումից վերանում են բարեկարգությունները: Պրինակ՝ եթե զորապետները չհնազանդվեին արքային, և զորքերը՝ զորապետներին, թշնամիներին ինչպե՞ս կհաղթեին: Թեպետ պատերազմը քաջությամբ է մղվում, բայց նաև պահանջում է զորապետի բոլոր հրամաններին հնազանդություն, որով հեղված արյունն անգին է դառնում: Իսկ եթե ինքնարշավ պատերազմեն՝ առանց զորապետի հրամանի, նրանց արյան հեղումը ոչ մի արժեք չի ունենա: Այսպես և աշխարհում բոլոր բարեկարգությունները հնազանդության օրենքի վրա են հիմնված:

ժԷ. Մանուկները պարտավոր են սիրով ու զվարթությամբ հպատակվել իրենց ծնողների և ուսու-

ցիչների, այլև եղբայրների կամ խնամածուների բոլոր հրահանգներին՝ տեղի չտալով նրանց զայրույթին: Որովհետև չար ու վտանգավոր է նրանց բարին կամեցող ու առաջադրող ծնողների, վարպետների, եղբայրների և կամ այցելուների կամքին հակառակվելը. մանկական տարիքն ընդունակ չէ ինքնուրույն կերպով իր օգուտը խորհելու և կատարելու: Ուստի զավակները թող սովորեն հնազանդ լինել իրենց ծնողներին, որպեսզի իրենց որդիներն էլ իրենց հնազանդվեն, որովհետև ինչ ցանում է մեկը, նույնն էլ հնձում է:

ԺԸ. Հնազանդությունը սեփական կամքն ուրիշի հրամանին ենթարկելն է՝ կան սիրուց, կան վարձատրության համար, կան երկյուղից: Ով սիրուց է հնազանդվում, սիրում է նրան, ում հնազանդվում է: Ով վարձատրության համար է հնազանդվում, սիրում է նրա ունեցվածքը, որն ակնկալում է ստանալ նրանից: Ով երկյուղից է հնազանդվում, ինքն իրեն է սիրում՝ հնազանդվելով չպատժվելու համար:

Արդարև երեքն էլ բարի ու օգտակար են: Բայց առաջինը հույժ գովելի է ու կատարյալ՝ լինելով որդիության կարգում, որովհետև որդիներին է հատուկ սիրուց հնազանդվել ծնողներին: Երկրորդը վարձկանության կարգում է, որովհետև վարձկաններին է հատուկ վարձի համար հնազանդվել վարձատուներին: Երրորդը ծառայության կարգում է, որովհետև ծառաներին է հատուկ պատժի երկյուղից տերերին հնազանդվելը, որն ավելի ծառայություն է, քան հնազանդություն՝ կամավոր չլինելու պատճառով: Իսկ հնազանդությունն ազատ կամքով է լինում, մանավանդ որ ամեն ոք, որ ծառա է, հարկ է, որ նաև հնազանդ լինի, բայց ո՛չ ամեն ոք, որ հնազանդ է, պիտի նաև ծառա լինի:

«Հնազանդությունն ավելի լավ է, քան ընտիր զոհը,  
& անսալն ավելի լավ է, քան խոյերի ճարպը» (Ա Թագ. ԺԵ 22):

«Ինչպես մեկ մարդու անհնազանդությամբ  
շատ մեղավորներ եղան, նույնպես & մեկի հնազանդությամբ շատ արդարներ պիտի լինեն»  
(Հռոմ. Ե 19):

«Ի սեր տիրոջ հնազանդ եղեք  
մարդկային ամեն իշխանության՝ թե՛ թագավորին,  
որպես գերագույն հեղինակություն ունեցող մեկի,  
թե՛ դատավորին, որպես նրանից ուղարկվածների,  
այն բանի համար, որ նրանք չարագործներին պատժում են, իսկ օրենքը պահողներին գովում»  
(Ա Պետ. Բ 13-14):

## Գ Լ ՈՒ Խ Ի Ե

## Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Իրենց տեսակակիցների հետ ընկերությամբ կենցաղավարելը ցանկալի է բոլոր կենդանիներին, առավել ևս մարդկային ցեղին, որի ներկայացուցիչները շատ անգամ շատ բաներում փոխառափոխ միմյանց օգնության կարիքն են ունենում՝ ձախորդ պատահարի, հիվանդության, կարևոր բաների պակասության ժամանակ: Եվ որովհետև մարդիկ տգետ ու տկար են ծնվում, բոլոր կենդանիներից էլ ավելի ունեն խնամքի և ուսման կարիք՝ ապրելու և երջանիկ լինելու համար: Բայց սրանք չեն կարող գտնել առանձնակեցության մեջ, այլ միայն ընկերային վիճակում:

Որ բնական է մարդուն ընկերային կենցաղավարության ձգտելը, հայտնի է փորձով: Որովհետև ահա անմարդի անապատում գտնվելիս մարդ տրտմում ու տառապում է և մարդկանց խումբն օգնություն տեսնելիս ուրախանում է ու մխիթարվում: Սակայն պետք է ընտրել այնպիսի ընկեր, որ ուրախության մեջ ուրախակից լինի և տրտմության մեջ՝ կարեկից ու մխիթար: Եվ որքան քաղցր ու ցանկալի է

բարի ընկերը, այնքան դառն ու տաղտկալի է չար ընկերը: Առաջինը դժվարին դիպվածներում գիտի ցավերի ծանրությունը վերցնել ու տառապանքը թեթևացնել, իսկ երկրորդն անակնկալ վտանգներ է պատճառում ու վշտի վրա վիշտ ավելացնում:

Բ. Շատ չար մարդիկ կան, որոնք եթե չար ընկերոջ չպատահեին, չար չէին լինի. և կան բազում բարիներ, որոնք եթե բարի ընկերի չհանդիպեին, բարի չէին լինի: Ուրեմն՝ չար կամ բարի լինելու պատճառը հաճախ ընկերությունն է: Երիտասարդները թող զգուշանան չարերի հետ ընկերությունից, եթե չեն կամենում չար ու վատահամբավ լինել. որովհետև երիտասարդական տարիքը, դեպի մոլորությունները դուրսասահ լինելով, չար ընկերոջ օրինակով արագորեն չարիք է սովորում: Հիմար է նա, ով անխտիր ամենքի հետ ընկերանում է:

Գ. Ջարմանալի ոչինչ չկա, որ բազում բարեբարո մարդիկ հազիվ մի չար մարդու են կարողանում ուղղել, իսկ մի չարը բավական է շատերին մոլորեցնելու համար: Քանզի շատ առողջներ էլ մի բորոտի մաքրել չեն կարողանում, բայց մի բորոտ կարող է ավտահարել շատերին:

Դ. Շատերը, չարերին ընկերակից լինելով, ոչ միայն հետին չքավորության հասան՝ հայրական ժառանգությունը վատնելով, այլև ամոթխածության ու պարկեշտության անգին գանձը կորցրին և անարգ անուն ձեռք բերելով՝ խայտառակվեցին աշխարհում ու կորան հավիտենական կորստով: Ուստի ընկերների ընտրությունը մեծ զգուշության կարիք ունի:

Ե. Չարասեր մարդիկ շողոքորթ ու կեղծ բարքով արտաքուստ բարի են երևում, բայց իբրև գեղեցկամորթ օձ՝ սրտի ներսում մահվան թույն են թաքցրած պահում և անփորձ երիտասարդներին խաբելով՝ զցում պես-պես մոլորությունների մեջ: Ուստի եթե երիտասարդը մեկի հետ կենցաղավարել է կամենում, թող քննի նրա ընկերներին. եթե բարեհամբավ են, թող ինքն էլ նրանց ընկերակցի, իսկ եթե վատանուն են, թող այդ մեկից խորշի, որպեսզի ինքն էլ վատանուն չլինի. որովհետև ըստ առածի՝ «Մարդն իր ընկերոջով է ճանաչվում»:

Զ. Երիտասարդներին դժվար է հեռու մնալ չարաբարո ընկերներին տեսնելուց. որովհետև այդ տարիքը՝ առույգ ու եռանդուն, ցանկանում է գնալ զբոսանքների ու սրճարաններ և շատերին ընկերակից լինել: Բայց պիտի իմանան, որ բարեբարո մարդիկ սակավ, իսկ չարերը հույժ շատ են, ուստի չարաբարո ընկերների չհանդիպելու համար նախընտրելի է սակավ բարիների հետ կենցաղավարել, քան շատերի հետ անխտիր:

Է. Ավելի լավ է բարի ընկերների հետ վշտեր կրել, քան չար ընկերների հետ հեշտալի վայելքներ ըմբռնել: Առաջինը մահվանից փրկող է, իսկ երկրորդը՝ մարմնի ու հոգու անողորմ դահիճ:

Ը. Եթե մեկն ընկերանում է չարերի հետ, կամ պիտի համաձայնի նրանց, կամ հակառակի: Եթե համաձայնի, ինքն էլ չար կդառնա, իսկ եթե հակառակի, նրանց թշնամի կդարձնի իրեն: Ուստի մարդ միշտ պիտի զգույշ լինի կենցաղավարության մեջ, որպեսզի չլինի թե ընկերակից լինի չարերին. որովհետև ընկերանալը դյուրին է, բայց հեռանալը՝ դժվարին:

«Որդյա՛կ իմ, մի՛ նախանձիր չար մարդկանց  
& մի՛ ցանկացիր ապրել նրանց հետ» (Առակ. ԻԴ 1):

«Ով չար է իր անձի հանդեպ,  
ո՞ւմ համար բարի կլինի» (Սիրաք ԺԴ 5):

«Իրենց գործերի՛ց կճանաչեք նրանց. մի՞ թե  
փշերից խաղող & տատասկից թուզ կքաղեն» (Մատթ. Է 16):

«Հեռացի՛ր հերձվածող մարդուց՝  
մեկ կամ երկու անգամ նրան խրատելուց հետո.  
իմացի՛ր, որ շեղված է այդպիսին» (Տիտ. Գ 10-11):

## Գ Լ ՈՒ Խ Ի Ձ

### Խ ՈՆ Ա Ր Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ինչպես որ չկա ավելի մեծ չարիք, քան հպարտությունը, այդպես էլ չկա ավելի մեծ բարիք, քան խոնարհությունը: Որովհետև առաջինն Աստծու ու մարդկանց առաջ ասելի է դարձնում, իսկ երկրորդը՝ սիրելի ու հաճելի: Առաջինը հանգիստ չտալով տառապեցնում է, երկրորդը՝ անվրդով խաղաղությամբ հանգստացնում:

Եթե մարդ խորհի, թե ինքն ինչ էր առաջ, ինչ է այժմ և ինչ է լինելու ապագայում, բնավ չի կարողանա հպարտանալ: Քանզի սկիզբն անարգ նյութից է, ծնունդը՝ ցավերով, ապրելը՝ տառապանքով, իշխանությունը՝ անօգուտ, փառքը՝ վաղաթառամ, կյանքը՝ կարճատև, մահը՝ հարկադիր, մարմինը՝ ապականացու և որդերի կերակուր: Այս բոլորից և այլ բաներից ևս մարդ դուրսով կարող է իր բնության թշվառ լինելը հասկանալ և խոնարհ դառնալ:

Բ. Ճշմարիտ խոնարհ չէ՛ նա, ով միայն խոսքով է իրեն անախտան խոստովանում, բայց նույնն ուրիշից լսելով՝ վրդովվում, խոժոռվում ու բարկանում: Այստեղից պարզ է, որ այդպիսին ավելի հպարտ է, քան խոնարհ, քանզի խոնարհ խոստովանությամբ կամենում է մարդկանցից գովեստներ ստանալ ու փառք որսալ: Դեռ ավելին՝ ստախոս ու կեղծավոր է, որովհետև լեզվի վրա մի՛ բան ունի, իսկ սրտում ուրիշ բան է խորհում և որպես խարդախ ոսկեգործ՝ ոսկու փոխարեն արույր է ջանում գործածել:

Գ. Խոնարհը բարի ու շատերին օգտակար գործը սովոր է ծածուկ անել՝ գովությամբ չհռչակվելու համար, քանզի Տիրոջից է ակնկալում հատուցումը ստանալ: Իսկ հպարտը, մի փոքր բարի գործ որ անում է, ցանկանում է հրապարակել, որպեսզի մարդկանցից գովեստներ ստանա՝ իբրև իր գործերի վարձ, ուստի և Տիրոջից վարձատրություն չի ստանում: Խոնարհը եթե իր մասին գովեստ է լսում մեկից, ամաչում ու տրտմում է, իսկ հպարտը գոռոզանում ու բերկրում է և կամենում էլ ավելին լսել:

Դ. Քանի որ խոնարհությունը բարի է, ոչ ոքի միջև խտրություն չի դնում, այլ բոլոր իրեն սիրողներին էլ ընդունում է. որովհետև բարուն է հատուկ սեփական բարությանն ամենքին հաղորդ դարձնելը: Խոնարհությունն ասես մաքուր աղամանդ է, որ գիշեր ու ցերեկ փայլում է. իրենց վիճակից գոհ և ամենակարևոր բաներով բավարարվող աղքատների մեջ շողշողում է, բայց աղոտալույս, իսկ ազգօգուտ գործերով հարստացող ունևորների մեջ, որպես քաջարվեստ ակնագործի կողմից բազում անկյուններով տաշված աղամանդ, ցուլում է մեծ պայծառությամբ և ամենքի աչքը դեպի իրեն գրավում:

Ե. Կատարյալ խոնարհը, որքան էլ մեծամեծ շնորհներ, ունեցվածք, պատիվ ու մեծություն ունենա, իր մասին նվաստ կարծիք ունի. իր ունեցած առավելությունները չի տեսնում, այլ կամենում է իր թերությունները տեսնել՝ դրանք շտկելու համար, որով էլ՝ առավել է արժանանում Աստծու շնորհներին:

Զ. Թող ոչ ոք խոնարհությունը չհամարի հոգու անգորություն կամ մտքի հիմարություն, կամ կամքի թուրություն, այլ թող ճշմարտապես իմանա, թե խոնարհությունը ոգու արիության, մտքի իմաստության ու կամքի ուղիղ լինելու նշան է:

Քանզի անարին, հիմարն ու մոլին երբեք չեն կարող խոնարհվել, որովհետև ամենքը չէ, որ կարող են ունենալ այնքան մեծ գորություն, որ հաղթեն հպարտության ու բարկության անբան կրքերին և հեզ ու խոնարհ լինեն: Ուստի ով կամովին խոնարհվում է ամենքի առաջ, գորեղ, իմաստուն ու բարի է: Եվ ընդհակառակը՝ անգոր, հիմար ու մոլի է նա, ով խոնարհություն չունի, որովհետև չի կարող իր մոլեկան կրքերը նվաճել և կյանքի պատերազմական դաշտում խոնարհության հաղթանակը շահել:

Է. Կան շատեր, որ մարդկանց առաջ գովում են խոնարհությունը իրենց խոնարհ ցույց տալու համար, իսկ ճշմարիտ խոնարհը՝ Աստծու ուզածի պես, խոնարհությունը գովում է այն պատճառով, որ բարի ու գովության արժանի է և ոչ թե՛ որ ինքը դրանով խոնարհ կարծվի ու փառավորվի, մանավանդ որ ճշմարիտ խոնարհը երբեք չի համարում, թե հասել է կատարյալ խոնարհության, այլ միշտ կրթում է



իրեն՝ դրան հասնելու համար:

Ը. Նա՛ չէ՛ խոնարհը, որ մեծամեծների առաջ իրեն նվաստացնում ու խոնարհի կերպարանք է առնում, բայց մտքով իրեն նրանց հավասարապատիվ կամ նրանցից էլ բարձր համարում, այլ նա, ով իրեն բոլորից նվաստ է համարում, թեև մեծ առաքինություններ ու այլ ձեռքբերովի բարիքներ նրանցից ավելի ունենա:

Թ. Խոնարհ չէ նա, ով բարի հաջողություններ ունենալիս ու մարդկանցից պատիվ ստանալիս հանդարտ ու խոնարհ է երևում, իսկ ծախորդության մեջ ընկնելիս ու արհամարհանք կրելիս վրդովվում ու դառնանում: Ճշմարիտ խոնարհությունը մոլությունների ծառա չէ, որին իբրև անարգ գերու կամ անբան գրաստի մեկն ըստ իր ուզածի կապի ու արձակի, կամ իբրև ավելորդ զգեստ մեկը հագնի ու հանի-շպրտի, այլ ազատ է ու ինքնիշխան, հոգու հարկավոր զարդ ու մարդկային ցեղի պարծանք:

Ուստի ճշմարիտ խոնարհն ամեն ժամ և ամենուրեք հանդարտ ու անվրդով է մնում. ո՛չ պատիվ ստանալիս անբարտապանանում է, որովհետև իրեն երբեք պատվի արժանի չի համարում, ո՛չ էլ արհամարհվելիս վշտանում է, որովհետև գիտի, որ անարգանքի արժանի թերություններ ունի:

Ժ. Իզուր է ջանում խոնարհ երևալ նա, ով փառքի է ձգտում. թեև արտաքուստ խոնարհ կերպարանք ունենա, բայց ներքուստ հպարտության հոգին է իր մեջ կրում: Իսկ ճշմարիտ խոնարհը որքան ավելի է շատացնում առաքինությունները, այնքան առավել է ամաչում և իբրև ծառի բազմապտուղ ուստ՝ որքան ավելի է պտուղներով բեռնավորվում, այնքան ավելի է խոնարհվում: Ուստի իր ունեցած բոլոր բարիքներն Աստծու շնորհին է վերագրում, Տիրոջից շնորհակալ լինում և միշտ իրեն անարժան համարում՝ երկնչելով, թե միգուցե մեծամըտանա. բայց սրանով էլ ավելի մեծ պարզների է արժանանում:

ժԱ. Խոնարհը ոչ միայն երկարակյաց ու առողջ է լինում, այլև բոլոր ժամանակներում վնասներից ազատ է մնում: Որովհետև ոչ ոքից չի խռովում, չի տրտմում, չի հուսահատվում, չի զայրանում (որովհետև սրանք են զանազան հիվանդությունների ու մահվան պատճառները), մեկի հետ չի թշնամանում, ուստի և ոչ ոք ջանք չի թափում նրան վնասելու, և այսպես խաղաղ ու երջանիկ կյանքով է կնքում իր օրերը:

ժԲ. Նա է հեզն ու խոնարհը, ով թեպետ կարող է վրեժխնդիր լինել իր դեմ արված անիրավությունների համար, բայց աստվածավախ երկյուղածությամբ ներում է: Իսկ հպարտը մի փոքր հանցանքի համար ջանում է վրեժ լուծել, որպեսզի ուժեղ երևա:

ժԳ. Թող մեծամիտները չխաբեն իրենց, թե անպատիժ կմնան թախծագին պաղատանքով ներում հայցող զղջացողի հանցանքը չներելու դեպքում: Թեպետև Աստված երկայնամիտ է և հապաղում է պատժել, որպեսզի թերևս թողնեն իրենց խստասրտությունը, բայց հետո, երբ տեսնում է, որ համառում են, սաստկապես է պատուհասում. որքան մեկն իր ձեռքը հեռու է տարածում, այնքան ուժգին է ապտակ հասցնում: Ոչ մի ներման արժանի չէ նա, ով ներողամիտ չէ:

ժԴ. Ով կամենում է մեծամտությունից ձերբազատվել, թող աչքերը բարձրացնի ու նայի հոյակապ դամբարաններին. թող մտածի, թե մարդիկ, որ մի ժամանակ մեծաշուք փառքով բարգավաճելով ճոխանում էին երկրի վրա, ինչպես են այժմ, հողի տակ նեխած ու հող դարձած, կոխան լինում ամենքի կողմից:

ժԵ. Իշխաններն ու մեծատունները դյուրավ կարող են խոնարհություն ձեռք բերել, եթե մտածեն, թե ինչ բարձր աստիճանի են հասել. որովհետև ով բարձր տեղ է բնակվում, անկումից ավելի պիտի վախենա, քան ներքևում գտնվողը: Ուստի իշխանները, որ շատերից բարձր են կանգնած, թող շատերից ավելի իրենց պահեն խոնարհության մեջ, որ չընկնեն, քանզի աշխարհում եղած մեծությունն ու փառքը որքան ավելի բարձր են, այնքան ավելի վտանգավոր ու երկյուղալի են:

«Ներքեից արմատ են արձակելու,  
վերեից պտուղ են տալու» (Դ Թագ. ԺԹ 30):

«Խոնարհների & հեզերի խնդրանքը միշտ քեզ հաճելի են» (հմմտ. Սաղմ. ՃԱ 17):

«Ուշ դարձրեց Նա խեղճերի աղոթքին & չարհամարիեց խնդրանքը նրանց» (Սաղմ. ՃԱ 17):

«Ինչքան մեծ լինես, այնքան խոնարհեցրո՛ւ քո անձը & շնորհ կգտնես Տիրոջ առջև» (Սիրաք Գ 20):

## Գ Լ ՈՒՆ Ի Ե

### Հ Ա Մ Բ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Համբերությունն արիության այն զորությունն է, որով դիմակայում են անզուսպ կրքերին: Սա ոչինչ չի ավելացնում այն գործողություններին, որոնք կատարում են մարդու ներքին ու արտաքին գործարանները, այլ միայն մի զորություն է, որը բնավորված է զսպելու և արգելելու համար այն ամենը, որը խոհեմությունը չի թույլատրում կատարել: Խոհեմությունը կատարելի ու խորշելի բաներն ընտրելն է, արիությունը՝ ի գործ դնելը, իսկ այն զորությունը, որ դիմադրում ու խանգարում է կատարել խոհեմության կողմից արգելվածը, կոչվում է համբերություն: Ուստի համբերողը բուռն կրքերի վրա տիրող է, իսկ անհամբերը՝ կրքերից հաղթահարված ու տկար:

Եվ խորհրդաբար կոչվեց համբերություն, այսինքն՝ համբերողություն: Որովհետև երբ բարկության կիրքը սրում ու տաքացնում է արյունը, նրա քաղցրությունը կծու և դառը համի է փոխարկում, որովհետև ինչպես փորձով հայտնի է, երբ քաղցրահամ որևէ բան սաստիկ եռում է, կծու և դառնահամ է դառնում: Իսկ համբերող մարդու կիրքը հանդարտվում է, և արյունը զովանում ու նորից ստանում է առաջին բնական քաղցր համը: Այդ պատճառով էլ այս զորությունը կոչվեց համբերություն, այսինքն՝ համբերողություն:

Բ. Համբերողից բացի ոչ ոք չի կարող հաղթել աշխարհի դժվարություններին, և անժուժկալից տկար ոչ ոք չկա: Որովհետև չկա այնքան ծանր ու դժվարին բան, որին կատարյալ համբերությունը չհաղթի, և ոչ թեթև մի բեռ, որն անհամբերությունը չծանրացնի, որովհետև որևէ դյուրաբառնալի բան համբերության պակասի դեպքում անտանելի է դառնում: Ուստի անհամբեր մարդն ամեն ինչում տաղտկանում, խռովվում ու հուսահատվում է, և ոչ միայն ինքն է տանջվում, այլև ամենքին տանջանք պատճառում, այդ պատճառով էլ ամեն տեղ անարգ ու թշվառ է:

Գ. Դժվարություն պատահելու ժամանակ արդյոք մեկն ի՞նչ է շահում անհամբերությամբ, եթե ոչ ավելի մեծ վշտեր: Եթե դժվարությանը համբերեր, վշտերը կդադարեին վիշտ լինելուց: Քանզի բազում անգամ անհամբերությունը սին պատկերացման միջոցով դժվարություն է երևակերպում այնտեղ, ուր դժվարություն բնավ չկա, կամ սակավը շատացնում ու փոքրը մեծացնում է՝ նմանվելով խոշորացույց ապակու, որ լուսն փիղ է ցույց տալիս, կամ մեղամաղձության ախտից տառապողի, որ չեղածը եղածի տեղ է դնում: Ուստի շարունակ տանջվում է նա, ով համբերություն չունի:

Դ. Մարդ չի համբերում նրան, ինչ նրա կամքը չի հաճում: Եթե ամեն ինչ մարդու ուզածով լիներ, արդարև նրա կամքը կհաճեր, կհավաներ ու կմիաբաներ դրանց, և այդժամ պետք չէր լինի, որ մարդը համբերության կարողությունն ունենար: Իսկ այժմ կա համբերության կարողությունը՝ ի բնե տաված մարդու կամքի մեջ: Ուստի աշխարհում պիտի լինեն մարդու կամքի հաճությանը ներհակ ինչ-ինչ գործողություններ կամ պատահարներ՝ դրանց համբերելու համար: Եվ քանի որ ամեն կարողություն իր ներգործության առարկան ունի, ապա համբերության կարողությունն էլ, իբրև իր ներգործության առարկա, ունի մարդու կամքին հակառակը՝ վշտերն ու նեղությունները:

Ուստի ով չի կամենում կրքերին համբերել, թող աշխարհից վերացնի բոլոր հակառակ ներգործություններն ու վշտերը: Իսկ եթե սրա կարողությունը չունի, թող անի այն, ինչ կարող է, այսինքն՝ դժվարություններին համբերի: Իսկ եթե չի ակործում համբերել, աշխարհից անհամբերն ինքը կվերցվի, որ չի կամենում հնազանդվել տիեզերքի ընդհանուր կարգին, որ բաղկացած լինելով հակընդդեմ էություններից՝ հակընդդեմ ներգործություններ է առաջ բերում:

Ե. Համբերությունն այնտեղ է երևում, ուր մարդուն անցանկալի բաներ են պատահում՝ հիվանդություն, ծախորդություն, չքավորություն, անպատվություն, նաև սիրելիների մահ և սրանց նման այլ վշտացուցիչ դիպվածներ: Արդ, սրանց մի մասն աստվածային կարգադրությամբ է լինում, մի մասը՝ մարդկանց պատճառով, մի մասն էլ մեկի կամքից կամ անզուգուշությունից է առաջ գալիս:

Ասա՛, ո՛վ անհամբեր, սրանցից ում վրա է արժան բարկանալ. որովհետև անհամբերությունը բարկությունից է առաջանում: Եթե բարկանում ես բնության հեղինակի վրա, որն Աստված է, թե ինչու է թույլ տալիս, որ այս դաժան պատահարները գան, հակառակվում ես քո Արարչին: Եթե բարկանում ես քեզ վշտացրած մարդկանց վրա, ուրեմն հարկադրված ես բոլոր մարդկանց դեպի քո կամքը հակել, որ քո կամքին հաճելին անեն, իսկ սա անկարելի է, որովհետև մի հոգին կարողություն չունի շատերի կամքը նվաճելու և հնազանդեցնելու իրեն, մանավանդ որ քեզ է պատշաճում նվաճվել նրանց կամքից և հնազանդվել: Իսկ եթե քո անձի վրա ես բարկանում, որ քեզ չարիք հասցրեց, ահա ինքդ քեզ հետ ես ոգորում, և սա անհնարին հիմարություն է: Ուրեմն՝ ինչ որ կամքիդ հակառակ կրում ես, պարտավոր ես կամովին համբերել:

Զ. Անհնար է, որ մարդը վտանգից ամենևին զերծ մնա, քանի դեռ այս կյանքում կենցաղավարում է: Ուստի արկածներ հասնելու ժամանակ պետք է արհաբար տոկալ ու համբերել և իբրև անդրդվելի վե՛մ՝ այս կյանքի ծովի փորձությունների ալիքները փշրել ու հետ դարձնել. որովհետև ավելի լավ է տառապանքներին համբերել ու ապրել, քան անհամբեր բարքով հուսահատվել ու մահվան հանդիպել:

Է. Մարդ պիտի համբերություն ունենա ոչ միայն իր շահի համար, այլև աստվածասիրության, եղբայրասիրության ու ազգասիրության: Քանզի մարդ կա, որ գիտի համբերել միայն իր օգտի համար, իսկ ուր որևէ շահ չունի, թեպետև շատերին օգտակար լինի, չի կամենում համբերել: Բայց պետք է համբերել աստվածասիրության համար, երբ Աստծու անվան փառավորման հույս կա, եղբայրասիրության համար, երբ դրանով քո եղբորն օգուտ ես տալիս, և ազգասիրության համար, երբ ողջ ազգը բարեհամբավ է լինում: Քանզի անհամբերությամբ պատահում է, որ Աստծու փառքն է խափանվում, պատահում է, որ քո եղբայրը սայթաքում կամ կործանվում է, երբեմն էլ ողջ ազգը պախարակվում կամ վնասվում է: Ուստի պետք է ջանալ համբերություն ձեռք բերել՝ վարձատրվելու համար այստեղ ու հանդերձալում:

Ը. Համբերությունն առանց որևէ սանձի բարկության անբան կիրքը բանականության հնազանդության տակ է դնում: Նա մի գեղեցիկ օրհորդ է, որ ընդառաջ է ելնում ամեհի առյուծին՝ գազանացած բարկությանը, և դեմքի գեղեցկությամբ, կերպարանքի բարեձևությամբ, խոսքերի անուշությամբ ու ծայրի վայելչությամբ հեզ ու հանդարտ դարձնում կարգ չհասկացող գազանին, ավելի լավ, քան երկաթե կապանքներով:

Ո՞վ կարող է համբերության պտուղներն իմանալ, եթե ոչ նա, ով գիտի համբերել: Քանզի ի՞նչ չար առաջ չէր գա բազմահույլ ամեհի կրքերից, ասես ծովի միմյանց բախվող ալիքներից, եթե համբերությունն իբրև ապարած վե՛մ չխորտակեր նրանց ուժը: Համբերողի այս հաղթանակն ընդդեմ ամեն դժվարության ու կրքի, մեծ ու բերկրալի է. որովհետև նա, ով մտաբերում է վտանգը, որից համբերությամբ ազատվեց, ցնծալի տոն է կատարում: Ուստի եղի՛ր համբերության ծառան, որպեսզի բարկության ծառայությունից ազատ լինես. իսկ ով ծառայում է համբերությանը, բոլոր կրքերը ծառայում են նրան:

Թ. Ընդհանուր բնությունը քաջավարժ դաստիարակ է՝ անհամբերին համբերության բերելու և խոսելու ու գործելու ժամանակը խոհեմ խորհրդով ընտրել տալու համար: Ամեն ինչ չէ, որ ամեն ժամի

կարող է լինել. մի բան պիտի այստեղ և այժմ լինի, մի ուրիշն էլ՝ մի այլ տեղ և այլ ժամանակ: Ուստի ով խելամուտ չէ սրանց ընտրությանն ու հանգամանքներին, ոչինչ չի կարող կարգին խոսել կամ գործել:

Տե՛ս, թե ծառերն ինչպես գիտեն տերև, ծաղիկ ու պտուղ տալու ժամանակը, և հավերժ ձու ածելու, թուխս նստելու և ձագեր հանելու: Իսկ եթե սխալ ժամանակ են կատարում այն, ինչին կարգված են բնության կողմից հաստատուն օրենքով, խեղվում ու չքանում են: Արդարև սովորի՞ր համբերել, ո՛վ մարդ, ու պահել բանական բնության կարգը, որպեսզի անգգա ու անբան արարածներից ավելի անգգա ու անբան չերևաս:

Ժ. Շատերն օտարների դառը նախատինքներին վախից համբերում են, բայց բարեկամների ծանր թվացող խրատական խոսքերին սիրուց մղված չեն համբերում: Սրանք նման են դիվահարի, որը բանտապետի հանդեպ վախից զգաստանում է, իսկ բարեկամի ցուցաբերած սիրուց կատաղում, երբ պետք էր առավել համբերել սիրելիներին, քան օտարներին:

Եվ թող ոչ ոք չասի, թե կամքին հակառակ, ստիպված է օտարին համբերում: Արդարև եթե վայել է օտարին համբերել կամքին հակառակ, ապա առավել ևս վայել է համբերել բարեկամին կամովին, հոժարությամբ: Եթե ոչ կամավորի առաջ գիտես խոնարհվել, ինչո՞ւ ես կամավորից նահանջում: Ուրեմն պարզ է, որ սեր չունես, ուստի բոլոր արարածներից էլ անարգ ես. որովհետև չկա արարած, որ իր նմանի հանդեպ սեր կամ մղում չունենա: Տես՝ ի՞նչ հետին անարգության ես հասել, ո՛վ անհամբեր:

ԺԱ. Այն, ինչ ամենքը գովում են և ունենալիս պարծենում, բարի ու օգտակար է, որովհետև անկարելի է, որ բոլորն էլ խաբվեն ու սխալվեն: Իսկ արդ, համբերությունն ամենքը գովում են և պարծենում, թե ունեն, նույնիսկ անհամբերները. նշանակում է՝ բարի և օգտակար է մարդկանց: Եվ ուրեմն՝ ով չգիտի համբերել այն նեղությանը, որին պետք է համբերել, անխոհեմ է և մեղադրության արժանի. որովհետև անխոհեմություն է բարի ու օգտակար որևէ բան մերժելը, և մեղադրության արժանի՝ սեփական պարտավորությունը չճանաչելը:

ԺԲ. Ծանր-ծանր հիվանդություններ բուժելու համար աշխարհում ոչ մի դեղ այնպես գորավոր չհամարվեց, ինչպես համբերությունը: Որովհետև անպիտան էին դառնում բոլոր դեղերն ու բժիշկների հնարները, եթե հիվանդն անհամբեր էր լինում բժշկի պատվերները պահելու մեջ: Ուստի համբերությունն է գործի պակիչը, և ով ձախողակի դիպվածներին համբերում է, վերջում հաջողակ էլք ու հանգիստ է գտնում:

ԺԳ. Իմաստունների քաջահանձար խորհրդածությունները հիմարություն կհամարվեին, եթե նրանց չընկերանար համբերությունը, որպեսզի իմաստուններն իրենց մտածումներն ի գործ դնեին՝ սպասելով հարմար առիթի ու ժամանակի: Ուստի անհամբեր մարդը, թեկուզև նրբամիտ ու խորախորհուրդ լինի, հիմար է և ոչինչ չգիտի, որովհետև չի կարող իրականացնել այն, ինչ նախապես մտածել է:

ԺԴ. Շատերը կարող էին հասնել իրենց բաղձանքներին, եթե իմանային համբերել որքան պետք էր, ինչը որպես լավ ուղեցույց՝ անշեղ ճանապարհներով կառաջնորդեր նրանց դեպի նպատակակետը: Իսկ անհամբեր բարքով, ընթացքի մեջ շտապելով՝ ճանապարհը կորցրին և ծուռումուռ ու անել չավիղներում դեգերելով՝ չկարողացան հասնել իրենց բաղձանքների նպատակին:

ԺԵ. Չկա ավելի զորեղ բարեկամ, որ կարող է մեկին նեղությունից ազատել, քան համբերությունը: Շատերը, տառապանքի մեջ ընկնելով, համբերությունն իրենց զորավիզ չունենալով, վիատվելով հուսահատվեցին ու կյանքից զրկվեցին: Եթե սրանք իմանային հույսով համբերել, կարող էին տառապանքից ազատվել և վշտերը մոռանալով՝ կուրախանային կենդանի արարածների հետ, բայց արդեն մեռելների հետ են:

ԺԶ. Աշխարհում շատ բան կա մարդու կյանքը պահպանելու համար, սակայն ոչ բոլորն են նույնքան կարևոր: Կան բաներ, որոնք եթե պակասում են, մարդու կյանքը տակավին պահպանվում է, թեև ո՛չ վայելչաբար, օրինակ՝ աղը, յուղը, միսը, գինին և այլն: Բաներ էլ կան, որոնք եթե պակասում են, պակասում է և մարդու կենդանությունը, դրանցից են, օրինակ, օդը, ջերմությունը, հացը, ջուրը: Այսպես էլ մարդուն պետք են բազում առաքինություններ, որոնցից մի քանիսը եթե պակասում է, մարդը կարող է մարդ լինել, թեև ո՛չ կատարյալ, օրինակ՝ իմաստությունը, արիությունը, առատածեռությունը,

զվարթախոսությունը և այլն: Բայց առանց համբերության մարդը չի կարող մարդ լինել, որովհետև համբերությունը մարդուն այնպես է պետք մարդավայել ապրելու համար, ինչպես օդը, հացն ու ջուրը՝ կենդանի մնալու համար: Ուստի ով չգիտի համբերել, չգիտի նաև մարդավայել ապրել:

«Համբերությամբ սպասեցի Տիրոջը, &  
Նա նայեց ինձ ու լսեց իմ աղոթքը» (Սաղմ. ԼԹ 1):

«Վա՛յ ձեզ, որ կորցրել եք համբերությունը» (Սիրաք Բ 16):

«Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի» (Մատթ. Ժ 22):

«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով՝ հասնեք նրա խոստմանը»  
(Եբր. Ժ 36):

## Գ Լ ՈՒՆ Ի Ը

## Մ Ա Հ Վ Ա Ն Խ Ո Կ ՈՒ Մ

Ա. Մարմնավոր կյանքի տևողությունը պատշաճ էր կոչել մահվան անընդհատ հաջորդություն: Եվ քանի որ կյանքն ամեն վայրկյան քայլափոխում է դեպի մահ, նույնն է, թե ամեն վայրկյան մեռնում է, և որքան շատանում են տարիները, այնքան առավել մահեր է կրում: Ուստի հիրավի հիմարություն է սեփական անձը անմահների կարգում դասել և հոգևորի հանդեպ փույթ չունենալ: Ընդհակառակը՝ պետք է ամեն կետում սեփական անձը մեռնելու ենթակա ճանաչել և բարիք գործել, որը հոգու կյանք և երջանկության պատճառ է:

Բ. Թեպետ Աստված մարդկանց օգտի համար նրանցից ծածկեց մահվան ժամանակն իմանալը, բայց կյանքի մեծ տևողությամբ չթողեց մոռանալ, ինչպես առաջին դարերում, երբ հարյուրավոր տարիներ էին ապրում՝ ինը հարյուրն իսկ անցնելով: Այլ առաջին դարի մարդկանց կյանքի հազիվ տասանորդը հետնորդներին թողեց, որովհետև արդեն հազվադեպ է մարդու կյանքը տարուբերվում իննսուն կամ հարյուր տարիների շուրջ, այդ էլ՝ ցավերով ու հեծությամբ:

Աստված այս արեց ոչ միայն մարդկանց չարությունը կարճելու համար, այլև նրանց զգաստացնելու, որպեսզի գոնե այս չափավոր թվով հասկանալով մարդու կյանքի կարճ լինելը՝ ամեն ժամ արթուն ու պատրաստ լինեն իրենց կյանքը բարիք գործելով տնօրինելու: Եվ ոչ միայն սրանով, այլև ինչ-ինչ հայտնի նշաններով ևս ճանաչել տվեց մահվան մերձենալը՝ մազերի սպիտակությամբ, ծերությամբ, հիվանդությամբ ու մարմնի պես-պես տկարություններով: Ուստի մարդիկ մեղադրանքներից ազատ չեն, եթե սրանց ազդարարությունից դեռ չեն զգում մահվան մերձենալը:

Գ. Որքան մեկը տարիքով մեծանում է, այնքան գերեզմանին առավել է մոտենում. որովհետև մարդու ապրելը դեպի մահը խոնարհում է, և ծերանալիս մարդ մահվան դռներին է հասնում:

Դ. Ոչինչ այնպես ստույգ չէ, ինչպես մահը, և ոչինչ այնպես անստույգ չէ, ինչպես մահվան օրն ու ժամը: Սակայն խոհեմ մարդն անտեղյակ չէ, քաջ գիտի, որ յուրաքանչյուր վայրկյանն էլ իր մահվան ժամանակն է:

Իսկ արդ, ժամանակը երեքի է բաժանվում՝ անցյալի, ներկայի և ապառնու: Անցյալն ու ապառնին մարդու իշխանության տակ չեն, որովհետև մեկն անցավ-գնաց, և մյուսը դեռ չի եկել, իսկ ներկան հարափոս ու անկայուն է, լինելիս իսկույն չքանում ու անցյալի է վերածվում, անուն ունի, բայց իրականում չի երևում, որովհետև անցյալի ու ապառնու միջև մի հարափախուստ սահման է: Ներկա (ներ-կա) կոչվեց, որովհետև իբրև կես՝ անբաժանելի կերպով կանգնած է (կա) երկու ժամանակների մեջտեղում, և

ահա միայն ներկա ժամանակն է գործածության մեջ, և մարդու կյանքը նրա մեջ է հաճում:

Ժամանակն էլ ստեղծական ու փոփոխական առարկաների փոփոխական տևողություն է և ժամանակ է կոչվում, որովհետև միշտ գալիս-ժամանում է: Սա մեզ համար լինում է արեգակի շարժմամբ, որով չափվում են րոպեն, ժամը, օրը, ամիսն ու տարին: Իսկ տարի է կոչվում, որովհետև միշտ տանում է մեր կյանքի ժամն ու ժամանակը: Տե՛ս, ուրեմն, ինչպիսի՜ անկայուն հատվածի մեջ է գետեղված մարդու կյանքը:

Արդ, ով այս լավ է հասկանում, իրեն մեռնելու ենթակա է ճանաչում ներկա ժամանակի ցանկացած վայրկյանում, որովհետև ամեն վայրկյան էլ հնարավոր է, որ մեռնի: Այս մտածությամբ մահը միշտ իր առջև է պահում ըստ այսմ. «Հավատա՛, թե յուրաքանչյուր օր քեզ համար վերջին անգամ է ծագում»: Եվ այսպես գիտի օրհասի ժամանակը, թե այն կետում, ուր գտնվում է, մեռնելու է, որովհետև չգիտի, թե կարող է կենդանի մնալ հաջորդ վայրկյանին, որ դեռևս ապառնի է:

Ե. Մարդն ապրում է շունչի տուրևառությամբ, իսկ սա առաջ է գալիս սրտի շարժումից ու բաբախումից: Արդ, եթե սրտի բաբախումը դադարի, մարդն իսկույն կմեռնի. բայց ոչ ոք չգիտի, թե երբ կդադարի, որովհետև հնարավոր է, որ այն վայրկյանը, որում մեկը շունչ է առնում, վերջինը լինի: Ուստի ամեն շունչ առնելիս պիտի ասի. «Սա վերջին վայրկյանն է», որով միշտ զգաստ կմնա: Սա նկատումն է սրբբերի, որոնք ամեն շունչ առնելիս իրենց մեռնելու ենթակա են ճանաչում. իսկ ով հասկանում է, թե արդեն մեռնում է, չի կարող մեղանչել:

Ուրեմն՝ մահվան խոկումը մարդուն մեղքերից ազատ է պահում:

Զ. Մահը մարդկանց վրա Աստծուց կարգված անհրաժեշտ ուստիկան է, որ ծննդյան օրվանից բռնած պահում է յուրաքանչյուր մարդու օձիքը՝ տանելու և կանգնեցնելու Աստծու առաջ: Ուստի խիստ հանդուգն է նա, ով չի զարհուրում՝ գիտենալով, որ ընկել է անխաբ ուստիկանի ձեռքը, ով կարող է քարշ տալով տանել նրան անաչառ արքայի աստյանը՝ դատելու համար: Արդ, ով միշտ մտածում է այս մասին, երբեք չի կարող մեղանչել:

Է. Թվում է, թե երկրի վրա մարդու կյանքը երեք օր է, մի օր՝ ծննդյան, մի օր՝ մահվան, և մի օր էլ՝ նրա կյանքի ամբողջ ժամանակը, լինի երկար, թե կարճ: Բայց ավելի թվում է երեք վայրկյան. մարդը ծնվում է մի վայրկյանում, ապրում մի վայրկյան, մեռնում մի վայրկյանում, որովհետև ամեն վայրկյան էլ հնարավոր է, որ մեռնի: Եթե նույնիսկ շատ տարիներ ապրի, այդ կհամարվի որպես ժամանակի մի վայրկյան. որովհետև տարիները բաղկացած են ամիսներից, ամիսները՝ օրերից, օրերը՝ ժամերից, ժամերը՝ վայրկյաններից, և տարիները ոչ այլ ինչ են, եթե ոչ վայրկյանների բազմապատկություն: Սրանից հետևում է, որ աշխարհում մարդկանց կրած վայելքն ու տանջանքը վայրկենական են: Ուստի մեծ անմտություն է վայրկենական վայելքի կամ տանջանքի համար Աստծու հանդեպ մեղանչել, որովհետև երկուսն էլ մի վայրկյան են տևում և իսկույն անցնում:

Ը. Մարդու կյանքը թեկուզ բազում տարիներ տևի, միևնույն է, կարճ է: Կեսը քունն է հավիշտակում, մի մասը մանկական տարիքի անզգայությունն է տանում, մի ուրիշ մաս դատարկախոս ընկերներն են գողանում, գուցե մի մաս էլ՝ մարմնի տկարություններն ու ցավերը: Ուստի պետք է ջանալ բարի ու օգտակար բաների համար գործածել այն ժամանակը, որ ձեռքներիս ունենք:

Թ. Մարդկանցից ոչ ոք մինչև հիմա չի կարողացել և երբեք չի կարողանա իսկությամբ նկարագրել մահվան պատկերը, որովհետև այն միայն մեռածները տեսան ու իմացան, բայց նրանցից ոչ ոք չվերադարձավ աշխարհ՝ ապրողներին հայտնելու, թե մահն ինչպիսին է: Ուստի ապրողները որքան էլ զարհուրելի ներկայացնեն այն, տակավին չեն կարող լրիվ հայտնել, որովհետև անծանոթ են նրան: Մահը միշտ անողորմ է գտնվում այս առնչությամբ, որովհետև մի անգամ է գալիս ապրողների մոտ և այն էլ՝ վերջին կետում: Թեպետ այնժամ մարդիկ իմանում են, թե ով է, ինչպիսի պատրաստությամբ է պետք սպասել նրան, ինչպես պետք է ընդունել, արդյոք ինչ է մեզանից պահանջում, սակայն այդ ամբողջ գիտությունն անօգուտ է, որովհետև դրանից հետո ոչ ոք չի կարող այն ի գործ դնել:

Ճ. Մահը մի անգամ է պատահում մարդկանց, բայց նրա երկյուղով պաշարված մարդիկ գրեթե ամեն ժամ կենդանվույն մեռնում են: Սակայն իզուր տանջանք է երկնչելը նրանից, որից ազատվել հնա-

րավոր չէ: Միայն պետք է պատրաստ գտնվել, որպեսզի չլինի թե իբրև չարագուշակ դահիճ՝ մահը քեզ կանչի մահվան գուբը, այլ իբրև ավետաբեր հրավիրակ քեզ կանչի հավիտենական օթևանը:

ԺԱ. Իմաստունը մահվանից չի զարհուրում, որովհետև այն ճանաչում է իբրև մարդկային կազմվածքի բնության անհրաժեշտ պարտք: Առաքինին չի զարհուրում, որովհետև գիտի, որ նա բարեհրավեր առաջնորդ է դեպի Աստված տանող ճանապարհին: Աներկյուղ և ուրախ է մեռնում, ով միշտ մահը մտքում է պահում և սգում իր հանցանքների վրա: Երկյուղով ու տրտմությամբ է մեռնում, ով մահը չի հիշում և մարմնի ու աշխարհի հաճույքների մեջ զվարճանում է:

ԺԲ. Եթե կամենում ես մահվանից չերկնչել, այն միշտ մտքիդ մեջ պահիր, որպեսզի ընտելանաս նրան իբրև բարեկամի և չզարհուրես նրանից, երբ առնի-տանի քեզ այլ աշխարհ: Եթե կամենում ես տեղեկանալ նրա բնությանն ու բարքին, հաճախակի այցելության գնա մահամերձ հիվանդներին և տես, թե ինչպես են նրանք մեռնում: Որովհետև մահվանը հատուկ է նույն կերպ վարվել ամենքի հետ՝ թե՛ մեծատունների, թե՛ աղքատների, որովհետև ոչ ոքից չի երկնչում: Եվ սովորելով մեռնել՝ աներկյուղ կլինես մահվանից, որը քո հատուկ պարտավորությունն է՝ բնության կողմից աստվածասահման ու անհեղի Օրենքով քեզ վրա դրված: Թող նա՝ մահվանից երկնչի, ով մահը չի հիշում և նրան ընտել ու բարեկամ չէ, ուստի երբ մահը նրա մոտ է գալիս, երևում է նրան իբրև սոսկալի թշնամի, որ եկել է նրան անգերձ ու դաժան ծառայության վարելու:

Ով միշտ իր մահը մտքում ունի, մեռնելիս չի զարհուրում, որովհետև մահը՝ իբրև ընտանի մեկը, գալով հրավիրում է սեփական հայրենիքում հանգստանալու: Ով մահվանից միշտ հեռու է փախչում, մահն անհաշտ թշնամի է դարձնում. գալիս է որպես անհեղ արքայի զինվոր՝ խստությամբ տանելու այնտեղ, ուր մարդը գնալ չի կամենում:

ԺԳ. Ի՞նչ օգուտ բարի անվամբ ապրելուց և վատությամբ մեռնելուց. որովհետև չարաչար մահը եղծում է բարի կյանքը, որն ապրեց մեկը երկար ժամանակ: Իսկ բարի մահն անցած ժամանակների անբարի կյանքը մոռանալ է տալիս: Բայց քանի որ մարդ չգիտի, թե որ օրը պիտի մեռնի, որպեսզի բարի մահվամբ իր կյանքը կնքի, որովհետև մահը որպես գիշերային գող գալիս է մի ժամի, երբ ոչ ոք չի կամենում մեռնել, ուստի մեծ սխալ է գործում նա, ով բարի դառնալու համար վախճանի օրվան է սպասում: Եվ քանզի ամեն օր էլ կարող է կյանքը վախճան գտնել, ապա ամեն օր էլ մարդ պիտի բարի լինի, որպեսզի բարի մահվամբ կնքի իր վախճանը:

ԺԴ. Այն է բարի մահը, երբ մարդ մեռնում է Աստծու շնորհի մեջ. որովհետև ինչպես որ մարմնի կյանքը հոգին է, այդպես էլ հոգու կյանքն Աստծու շնորհն է: Մարմինը մեռնում է, երբ նրանից բաժանվում է հոգին, հոգին մեռնում է, երբ նրանից բաժանվում է աստվածային շնորհը: Մարդու հոգին բնությամբ անմահ է, բայց աստվածային շնորհից զրկվելիս բարոյապես մեռած է համարվում: Իսկ շնորհը պահպանվում ու աճում է առաքինությամբ: Ուստի առաքինի մարդն Աստծու շնորհի մեջ է, և այդ պատճառով առաքինիների մահը բարի է:

ԺԵ. Երեք պատճառով է մահը դառն թվում՝ աշխարհի սիրո, խղճմտանքի և փրկության անստուգության: Ուստի մի իմաստասեր ասում էր. «Քանի որ չգիտես, թե որտեղ ու երբ է քեզ մահը սպասում, դու նրան ամեն ժամ սպասիր, որպեսզի անպատրաստ չլինես նրա գալստյան ժամանակ»:

ԺԶ. Մարդն ազատություն ունի նմանվելու հրեշտակներին ու անբան արարածներին: Եթե հոգով է շարժվում, նմանվում է հրեշտակներին, իսկ եթե մարմնով, նմանվում է անբան արարածներին: Արդ, քանի դեռ մարդը կենդանի է, թեպետ կարող է կյանքն անցկացնել անբան արարածների նման, բայց չի կարող մահվանից հետո աննորոգելի ու անպատիժ մնալ, ինչպես անբան արարածները. քանզի ունի բանական ու անմահ հոգի՝ հրեշտակների նման, ուստի չար հրեշտակների պես էլ պատժվում է հավիտենապես: Ուրեմն յուրաքանչյուր ոք թող իր վախճանի մասին մտածի և վարվի, ինչպես և կամենում է:

ԺԷ. Բարի ու իմաստուն մարդը քաջաբողջ վիճակում մահամերձ հիվանդների միտքն ունի: Այդ ժամանակ հիվանդը ճշմարտապես է զգում շատ բան, որ առողջ ժամանակ չէր զգում, որովհետև այդ ժամանակ լավ է հասկանում առաքինության օգուտն ու պատվականությունը և աշխարհային վայելքի

ու փառքի ոչնչությունն ու վնասը: Մարդիկ առողջ ժամանակ որքան էլ մոլի լինեն, մահվան ժամանակ զգաստանում են և ցանկանում առաքինաբար ապրել: Բայց, ավա՜ղ, ոչինչ չեն կարող շահել, որովհետև արեգակը մոտ է մայր մտնելուն:

ԺԸ. Ոչ ոք լավ չի ձանաչում մահվան դառնությունը, բացի նրանից, ով առել է մահվան համը: Բայց ի՞նչ օգուտ է այս իմանալն այն ժամանակ, երբ այլևս չի կարող քաղցրացնել մահվան դառնությունը: Սակայն և այժմ իսպառ անտեղյակ չի մնում նա, ով գլխին աչքեր ունի, որովհետև կարող է փոքր-ինչ իրազեկ դառնալ մահվանը և իր օգուտը տնօրինել: Եթե մեկն, իրեն հոգեվար հիվանդի տեղը դնելով, մտքում նկարի մահվան անհրաժեշտ պատկերը, փոքրիշատե կիմանա այդ ժամի անհնարին տագնապն ու դառնությունը: Ուստի և նա, որպես մեռածների մեջ կենդանի մեկը, առողջ ժամանակ հոգում ու պատրաստում է անդառնալի ուղու և հավերժական կյանքի կարևոր պարագաները, որոնցով դառնությունը քաղցրության է փոխվում, և մահվան տագնապը՝ հանգիստ քնի, առաջնորդելով դեպի անվախձան կյանք:

ԺԹ. Բոլոր ազգերի գերեզմանատները խորհրդով սահմանվեցին լինել բազմամբոխ հրապարակներում կամ քաղաքների մուտքի կամ ձանապարհների անցումների մոտ: Որպեսզի քաղաքում գտնվող մարդիկ, մահարձանները տեսնելով, զգաստանան ու հիշեն, որ իրենք էլ են այնտեղ թաղվելու, և քաղաք մտնողները մտքներով անցկացնեն, թե քաղաքում էլ են մարդիկ մեռնում: Քանզի մեռյալների անմռունչ խոսքերը մարդկանց ավելի են արթնացնում մահվան օրը հիշելու և զգաստանալու, քան ապրողների մեծածայն ազդարարությունները:

Ի. Մեռյալների մահարձանների վրա լավ են գրում, թե՛ «Սա հանգստյան տապան է...», որովհետև մարդը մեռնելով հանգստանում է աշխարհի տառապանքներից, քանի որ փորձություն է մարդկանց կյանքը երկրի վրա:

Սակայն եթե մարդիկ կարողանային միմյանցից գատել չարերին ու բարիներին, սա հարմար էր գրել միայն բարիների մահարձաններին, իսկ չարերի մահարձաններին ավելի լավ էր դրոշմել՝ «Սա տանջանքների տապան է...»: Քանզի չարերը մեռնելով աշխարհի առօրյա վշտերից անցնում են դեպի հավիտենական տանջանքները, այսինքն՝ մահվանից դեպի մահ, ինչպես որ բարիները՝ կյանքից դեպի կյանք:

ԻԱ. Եթե մեկը գերեզմանատներն անվանի ստախոսների բնակարան, չի սխալվի. որովհետև այնտեղ թաղվածները կենդանության ժամանակ շատ բաներ էին ասում ու խոստանում կատարել, այսինքն՝ կառուցել, քանդել, ուտել, խմել, պճնվել, շրջել և այլն, բայց դրժելով իրենց խոստումը՝ գնացին այնտեղ, դադար առան և ոչինչ չեն անում:

ԻԲ. Գերեզմանատունն այնպիսի դպրոց է, որտեղ մեռյալները սովորեցնում են ապրողներին, համրերը՝ խոսողներին: Այբբենարանը կամ ընթերցանության գիրքը շիրիմների մահարձաններն են, որոնք եթե մեկն ուշիուշով ընթերցի, բազում կենսօգուտ բաներ իր համար կգանձի: Կհասկանա, թե ովքեր են թաղվածները, ում են սպասում, ինչ խորհում, ինչպես են իրենց ժառանգություններն ու ստացվածքները թողած՝ մերկ ու կողոպտված պառկել այստեղ: Ճոխաբան լեզուները լուռ են, քաջարվեստ մատները՝ անգործ, սիգաճեն ընթացքը՝ կաշկանդված, ովքեր չէին տեղավորվում հոյակապ ապարանքներում, երկկանգուն տապանի մեջ են ամփոփված: Սրանք և սրանցից էլ ավելի օգտակար խրատներ են սովորում ապրողները մեռյալներից:

ԻԳ. Ովքեր սովոր են իրենց կյանքում հոգալ տների, ապրանքների և առևտրի մասին, իրենց մահվան ժամանակ էլ միայն դրանց մասին են մտածում, դրանք հանձնում հաջորդներին և պատվիրում դրանց համար աշխատել, կարծես թե պիտի վերադառնան աշխարհ: Մտածում են այն բաների մասին, որոնց հրաժեշտ են տալիս, և չեն մտածում նրանց մասին, դեպի որոնք պատրաստվում են գնալ: Խոսում են անցավոր բաներից և ո՛չ թե հավիտենականից: Պատվիրում են ավարտել իրենց հիմք դրած շինությունները, զարդարել իրենց տնկած այգիներն ու բուրաստանները, տոկոսներով բազմապատկել իրենց գանձած մայր դրամը, հոգալ իրենց վարձու տված փողի մասին, արդյունավորել իրենց սկզբնավորած շահավաճառությունը: Սրանից ավելի էլ ի՞նչ անմիտ խորհրդածություն ու ջանք՝



փույթ չունենալ ճշմարիտ անհրաժեշտությունների հանդեպ և հոգալ այն բաների մասին, որոնք բնավ պետք չեն իրենց:

ԻԴ. Մարդիկ զգույշ են մարմնավոր ունեցվածքի պահպանության մեջ, բայց անհոգ՝ հոգևոր բարիքների պահպանության մեջ: Սակայն ով իմաստուն է, մարմնավոր ստացվածքներից ավելի ջանք է թափում չկորցնել հոգևոր բարիքները:

ԻԵ. Մարդկային գործերն ըստ էության անցավոր ու անկայուն են, բայց ըստ կամքի գործառնության՝ անփոփոխ ու մնայուն, որովհետև ինչին որ մի անգամ կամքը հարում է և ազատ գործառնությամբ այն սիրում, ախորժում է հավիտյան նրա մեջ մնալ, եթե հնարավոր է: Ուստի ըստ բաղձանքի և հոժարության է չափվում բարու կամ չարի հավիտենական հատուցումը:

Դարձյալ՝ քանի որ կամքը սիրո աթոռ է, նրա գործելն ու մի բանի հարելը այն սիրել է: Երբ բարուն է հարում, Աստծուն է սիրում, ով հավիտենական է, որովհետև միայն Աստված է իսկապես բարի և բարության աղբյուր՝ ըստ այսմ. «Ոչ ոք բարի չէ, այլ միայն Աստված» (Պուկ. ժԸ 19): Եվ երբ որևէ չարի է հարում, Աստծու սիրուց հետ է դառնում դեպի արարածների հանդեպ սերը: Այս պատճառով էլ մարդու ժամանակավոր գործերի դիմաց հատուցվում է հավիտենական վարձ կամ պատիժ, որովհետև իր սիրած կամ ատած առարկան հավիտենական Աստվածն է:

Արդարև, ամեն կետում մարդու կամքը կարող է հարել կամ որևէ բարի բանի, կամ չար՝ ունակաբար կամ գործառնաբար, և մարդ չգիտի, թե մահվան հասնելիս բարի՞ կամքի մեջ է գտնվում, թե՞ չար: Ուրեմն՝ մարդ ամեն ժամ պիտի կամքը հաստատի բարի մտածումների ու աստվածահաճ գործերի մեջ, որպեսզի որպես հավիտենական վարձ ընդունի ամենաբարի Աստծուն: Քանզի յուրաքանչյուրի կամքի գործառնությունից է կախված հատուցումը՝ բարի, թե չար:

ԻԶ. Մահը բարիներին երկու շնորհ է անում. մեկը՝ նրանց ազատում է աշխարհի չարիքներից, որոնցում տառապում էին, և մյուսը՝ նրանց հասցնում իրենց փափագած երկնային բարիքները ժառանգելուն: Ընդհակառակը՝ չարերին երկու վնաս է տալիս. մեկը՝ նրանց զրկում է աշխարհի վայելքներից, որոնցով զվարճանում էին, և մյուսը՝ նրանց մատնում դժոխքի տանջանքներին, որոնցից երկնչում էին: Ուստի բարիներն ուրախությամբ են մեռնում, իսկ չարերը՝ կսկիծով:

ԻԷ. Մահը ոչ ոքի հետ աչառանքով չի վարվում, ուստի և ոչ ոք նրանից պիտի չզանգատվի: Եթե աշխարհից վերցնել միայն ծերերին, ո՞վ կարող էր երիտասարդների մոլությունները զսպել, եթե երիտասարդներին, ո՞վ կարողություն կունենար ծերերի ազահությունը հաղթահարելու: Եթե միայն ցավագարներին կյանքից զրկել, արդյոք ո՞վ կարող էր ուժեղների հանդգնությունը չափավորել. եթե մարմնով առողջներին, ո՞վ ձեռնհաս կլինեք ցավագարներին ու հիվանդներին խնամելու: Եթե միայն աղքատներին կյանքից հեռացնել, մի՞թե մեկը կարող էր հարուստների հպարտությունը նվազեցնել, եթե միայն հարուստներին, ո՞վ կարող էր աղքատների թիվը հաշվել: Եթե առաքինիներին վերացնել, այս աշխարհը դժոխք կդառնար, որովհետև միայն դիվագգի մարդիկ կմնային, եթե չարերին, աշխարհում հույժ սակավ մարդիկ կգտնվեին, որովհետև բարիները սակավաթիվ են: Արդարև, մահն ամենքի հետ միօրինակ է վարվում, որպեսզի ամենքին զգաստ ու անտրտում պահի: Ուստի ոչ ոք իրավունք չունի նրանից տրտնջալու, որովհետև ամեն մարդ էլ կարող է մահվան կողմից հափըշտակվել, որ տարիքում էլ որ լինի:

ԻԸ. Հույժ սրտնեղություն ու մտքի տանջանք է մեկի գալստյանը սպասելը, մանավանդ երբ նա ուշանում է: Ուստի ավելի լավ է, որ ուրիշները սպասեն քո այցելությանն իրենց, քան թե դու սպասես նրանց գալստյանը քեզ մոտ: Անհնարին տանջանք կլինեք ապրողներին, եթե սպասեին իրենց մեռած սիրելիների մյուս անգամ աշխարհ գալուն, բայց այժմ ապրողները չեն տանջվում, որովհետև մեռյալներին չեն սպասում, այլ մեռյալներն են ապրողներին սպասում, որ գան իրենց մոտ:

ԻԹ. Ով հանցանքի պատճառով բանտ է նետվում, ուրիշ ոչինչ չի մտածում, բացի ազատվելուց: Մարդիկ, առաջին մարդու հանցանքով բռնվելով, ասես նետվեցին բանտ՝ այս բազմավիշտ աշխարհը, ուր ամբողջ կյանքում մնում են որպես արգելարանում և ազատվում մեռնելիս: Ուրեմն մահն է աշխարհի վշտալից բանտից ազատողը: Բայց Աստված, ողորմած ու այս աշխարհում մարդկանց կրած ամեն

ինչի գիտակ, կարճեց մարդու կյանքի ժամանակը և միայն իրեն պահեց բանալին, այսինքն՝ մահվան վճիռը, որպեսզի ոչ ոք, դառն վշտերից տաղտկանալով, չհամարձակվի մահ կամ ինքնասպանություն փնտրել: Ուստի Աստծու կամքով պատահող մահը ոչ միայն մարդուն ազատում է աշխարհի տառապալից բանտից, այլև հասցնում ավելի լավ կյանքի: Այս պատճառով է, որ մահը կոչվում է ավելի լավ կյանքի դուռ:

Արդարև, որքա՞ն ավելի դառն կլինեն մարդու կյանքը երկրի վրա, եթե մահ չլիներ: Հայտնի է փորձը չարաչար հիվանդների, գառամյալ ծերերի, հետին ջքավորների և անզերծ փորձանավորների, որոնց ամենքի մխիթարիչը մահն է:

Չկա հիվանդի ցավերը բուժելու համար ավելի ճարտար բժիշկ, քան մահվան օրհասը: Որովհետև ուր քաջարվեստ բժիշկների ուժեղ դեղերն ազդեցություն չեն թողնում, սա առանց որևէ դեղի ապաքինել գիտի: Ուստի Աստծուց մեծ ողորմություն է մարդկանց՝ նրանց մահկանացու ստեղծելը, որը փոքր պատիվ է մարդուն, քանի որ Աստված միայն իրեն իմանալ ու կամենալ տվեց մահվան օրն ու ժամը: Ուրեմն՝ մահվանից մի՞ երկնչիր, այլ ջանք թափիր, որ բարի մահվամբ ելնես աշխարհից:

Լ. Երանելի է այն մարդը, որ գիտի, թե պանդուխտ է երկրի վրա, ուստի ժամանակ առ ժամանակ իր բուն հայրենիք՝ երկինք է առաքում բարեգործությունների գանձերը, որ ձեռք բերեց իր ողջ կյանքում, և իր կտակագրությամբ պատրաստելով ճանապարհի պարագաները՝ սպասում է մահվան՝ իբրև հմուտ առաջնորդի գալստյանը, ճանապարհ ընկնելու երկինք, որպեսզի հավիտյան վայելի իր աշխատանքների արդյունքը:

Բայց մարդ կա, որ գիտի, որ այս երկիրն իր հայրենիքը չէ, այլ առժամանակյա բնակության մի իջևան, որովհետև մարդն անբան արարածների նման չի ծնվել երկրի համար, այլ հրեշտակների նման՝ երկնքի, բայց բնավ չի հոգում այդ մասին և չի ջանում այնտեղ ամբարել իր գանձերը՝ անվախձան կյանքով վայելելու համար:

Եվ թեպետ մահվան կարապետ հիվանդությունը շատ անգամ գալով լուր է տալիս նրան, բայց նա տակավին չի զգաստանում պատրաստվելու համար: Եվ երբ մի օր, իբրև գիշերային գող հանկարծակի վրա հասնելով, բռնադատում է տանել, այդժամ մարդը զգում է իր արած սխալը, բայց արդեն ուշ է: Որովհետև թեպետ ըստ ձեռնհասության աճապարում է պատրաստվել, բայց ոչ բոլոր կարևոր պարագաներով, և այլևս չի կարող կտակ կազմել, որպեսզի իր մահվանից հետո ամեն ինչ բարեկարգ ու օրինավոր լինի: Ուստի շատ անգամ խռովություն է ծագում ժառանգորդների մեջ, և եղբայրներն իրար դեմ դատ վարելով՝ դատական կռիվներում շատ ունեցվածք են վատնում, և եթե հոգևոր հովիվների ու մտերիմ բարեկամների համոզումներով չխաղաղվեն, հայրական ամբողջ ժառանգությունը չի կարող բավականացնել նրանց իզուր կատարված ծախսերին:

Ուրեմն թող ամեն ոք փութա, քանի դեռ ժամանակ ունի, հաստատուն կտակագրությամբ պատրաստել իր հոգու և մարմնի պետքերը: Այս գովելի սովորությունը, որը հաստատուն օրենքով պահում են այլազգի քրիստոնյաները, այժմ նվազած է երևում մեր ազգի մեջ, թերևս առաջնորդների ու իշխանների անհոգությունից. այն հույժ արդար, պիտանի ու օգտակար է, մանավանդ քրիստոնյա ու բարեպաշտ մարդու համար:

ԼԱ. Չկա ավելի թշվառ ու ողորմելի մարդ, քան նա, ով մահճում ընկողմանած՝ արտաքուստ տանջվում է մահաբեր ցավերից, իսկ ներքուստ՝ խղճմտանքից, մի կողմից տեսնում մահվան ահաբեկումը՝ վարելու նրա հոգին մի անժանոթ աշխարհ, և մյուս կողմից նշմարում է ժառանգների՝ իր ունեցվածքը կարգի բերելը, իր մարմինը զերեզման տանելու համար: Գանձերի ու ստացվածքների արկղերը, որ իրար կողքի զետեղված են նրա աչքի առաջ, ավելացնում են նրա տառապանքները, որովհետև հիշեցնում են զրկյալներին, որոնցից հանիրավի հափշտակեց, և կարոտյալներին, որոնց զլացավ տալ: Առողջության սին հույսը, որ նրան տալիս են մերձավորները, չի կարող նրան մխիթարել, որովհետև իր մարմնի անդամները հյուժված ու թուլացած է տեսնում:

Ուստի ով կամենում է անտրտում մեռնել, ինչից անհնարին է խուսափել, կենդանության օրոք թող կտակագիր անի. եթե մեկին զրկել է, թող հատուցի նրան, եթե զլացել է օգնել եկեղեցիների ու վանքե-

րի կարոտյալներին, թող ըստ արժանվույն տա, և միտքը խոստովանությամբ ու հաղորդությամբ մաքրելով իր գործած չարիքների պատճառած խղճմտանքից՝ թող հրաժեշտ տա այս կյանքի տառապանքներին՝ երկնքում հանգստանալու համար:

ԼԲ. Մարդ կա, որ հիվանդին խրատում է հաստատուն կտակագրով տնօրինել հոգու և մարմնի բոլոր պետքերը, աղքատներին ողորմությունը, պատարագի, եկեղեցիների ու վանքերի նպաստները և այլ հոգողությունները հոգուտ իր զավակների ու ընտանիքի՝ հուշելով նրան, թե այդ բոլոր պատրաստությունները ոչ թե մահվան գալուստն են մոտեցնում, այլ առողջություն խոստանում. որովհետև միտքը բազմատազնապ հոգսերից թեթևացնելով և սիրտը գործված չարիքների պատճառած խղճմտանքից մաքրելով՝ հիվանդին նաև ցավերից են թեթևացնում: Մանավանդ որ քանի դեռ կտակագիրը կենդանի է, ոչ ոք իրավունք չունի նրանից ոչինչ պահանջելու, որովհետև կտակը մահվանից հետո է վավերական: Բայց երբ ինքն է հիվանդանում, չի հիշում ուրիշներին իր տված խրատը, և եթե բարեկամներից մեկն առաջարկում է նրան կտակ կազմել, խոժոռվում ու երես է դարձնում՝ ասելով. «Մի՞թե ամեն ոք, որ հիվանդանում է, մեռնելու է»: Ապա ավելացնում է. «Սրտումս զգում եմ, որ ես այս հիվանդությամբ չեմ մեռնի: Բայց եթե առիմահ հիվանդանամ, այնժամ որոշել եմ հոգ տանել կտակ կազմելու մասին»: Այս և այսպիսի անտեղի խոսքեր է հանդըզնում ասել, ինչպես այս՝ «Միայն Աստված է, որ գիտի մահվան օրը»:

Ուստի մարդ լավ կաներ, եթե այն խրատը, որ ուրիշ հիվանդներին էր տալիս, թղթին արձանագրեր և հիվանդանալիս գործով կատարեր: Քանզի մահը ոչ ոքի իբրև խորհրդակից չունի, որպեսզի նրան ազդարարի օրհասական ժամը, ոչ ոքի կողմնապահություն չի անում, որ հապաղի, ոչ ոքից չի երկնչում, որ հեռու մնա, ոչ ոքի կենդանի չի թողնում, որ ինքն էլ նրա հետ անմեռ մնա:

Եվ քանի որ մարդկանց սահմանված է մի անգամ մեռնել, գուցե այս հիվանդության ժամանակ մեռնի, որովհետև ի վերուստ հայտնություն չունի, թե մի ուրիշ անգամ պիտի մեռնի: Ուստի ով ուրիշներին ուսուցանում է, իսկ իրեն՝ ոչ, շատ ծեծի է արժանի, ինչպես այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտի, բայց նրա կամքի համաձայն չի գործում (*հմտ. Դուկ. ԺԲ 47-48*):

ԼԳ. Բժիշկը, եթե չգիտի մեկի հիվանդության պատճառը, չի կարող նրան առողջացնել. որովհետև ում օշարակ է պետք, անդացուցիչ դեղեր է տալիս, և ով խարանների կարիք ունի, նրա երակն է կտրում: Այս պատճառով էլ բազում բժիշկներ շատ անգամ միմյանց հետ խորհրդակցելով իսկ չեն կարողանում հիվանդին բժշկել. որովհետև նրանք, միայն մարմնական հիվանդությունների գիտակ լինելով, անտեղյակ են հոգու հիվանդություններին, և ո՞վ գիտի, գուցե նրա հիվանդությունը, ում ջանում են օգնել, խղճմտանքի արդյունք է:

Ով հոգում վերքեր ունի և շարունակ տազնապում է մտքի խայթից, նա մարմնի մի դույզն հիվանդությունից տկարանում և ցավերի մահիճն է ընկնում: Այդպիսինին ինչպե՞ս օգնեն բժիշկների հնարները, կամ նրան ի՞նչ օգուտ մարմինը բուժող դեղերից: Այս կերպ շատերն են հիվանդացել, որոնց հնարավոր չէ ճանաչել:

Ուստի հիվանդի մերձավորները պարտավոր են առանց դանդաղելու հոգևոր բժիշկ տանել նրա մոտ, որ ծածուկ խոստովանության միջոցով իմանա նրա հոգու ցավերը և օգտակար դարմանը մատուցի նրան, իսկ հիվանդը, հոգով ազատվելով գործած չարիքների պատճառած խղճմտանքից, առողջանա նաև մարմնական հիվանդությունից: Եվ եթե նաև մահ վրա հասնի, բնավ չտազնապի, այլ ասես քաղցր քնի մեջ հանգչի, իր հոգու փրկությամբ բերկրելով՝ զվարթ դեմքով ճանապարհ ընկնի երկնքի պատրաստ օթևանները և փոխանակ այն սզի ու տրտմության, որ թողնելու է իր մերձավորներին, հոգեզվարճ սփոփանք ու մխիթարություն թողնի:

ԼԴ. Նա է ճշմարիտ բարեկամ, ով բարեկամին օգնում է նրա մեծ նեղության մեջ: Իսկ ուրիշ մեծ նեղություն մարդու կյանքում լինել չի կարող, նրա մահվան օրվանից բացի: Ուստի ճշմարիտ բարեկամը, լսելով բարեկամի հիվանդության մասին, գնում և օգտակար խրատներով օգնում է նրան, որպեսզի վերջինս փութա ապաշխարության սուրբ խորհուրդն առնել և կտակագրություն անել:

Բայց, ավա՜ղ, մեր օրերում շատերին ենք տեսնում, որ պարծենում են, թե հիվանդի բարեկամն են,

և նրան այցելության գնալով՝ զրույց չեն բացում ապաշխարության ու կտակագրության մասին, այլ նրա հիվանդության ու բժիշկների մասին ավել-պակաս խոսելով՝ դառնում ու հուսադրում են նրան առողջանալ, և իբրև մարգարե կամ մարգարեի որդի՝ նշանակում մահճից ելնելու և վաճառանոց գնալու նրա օրն ու ժամը: Եվ խեղճ հիվանդը, հավատալով նրանց խոսքերին, հապաղում է իր պատրաստությունը տեսնել, և երբ մահվան օրհասը նրան ստիպում է, հազիվ ապաշխարության խորհուրդն ամենելով, ելնում է աշխարհից: Այսպիսիք ճշմարիտ բարեկամ չեն հիվանդին, այլ շողոքորթ, չասեմ թե՛ թշնամի: Որովհետև փոխանակ հիվանդին շտապեցնելու՝ անդառնալի ճանապարհի պատրաստությունը տեսնելու, առողջության սուտ խոստմամբ նրան հապաղեցնում են, փոխանակ նպաստամատույց լինելու, նրա վնասի պատճառն են դառնում:

Արդարև, բոլոր մարմնավոր ծառայությունների ու բարերարությունների դիմաց մարդ կարող է ըստ արժանվույն հատուցել, բայց անհնար է, որ հոգևոր խրատի դիմաց մարդն արժանի հատուցում մատուցի: Հոգին անգին է, ուստի և խրատը, որ տրվում է հոգու փրկության համար, նույնպես անգին է: Իսկ անգին բանի համար որպես արժանի հատուցում պահանջվում է անգին վարձատրություն, բայց քանի որ մարդկանց համար անկարելի է այն տալ, ուստի հոգևոր անգին խրատների դիմաց Աստված է անգին վարձ տալով հատուցում:

ԼԵ. Ծնողական սերն այնքան սաստիկ ու զորավոր է, որ որդու մեռնելու դեպքում անմեռ է մնում ծնողի սրտում, մանավանդ եթե որդին բարեբար է: Բայց հավատացյալին վայել չէ չափից ավել սգալ ու տրտմել. որովհետև եթե որդին բարի էր, չարժե լալ, որովհետև չարերի միջից հեռացավ և գնաց իր բարի գործերի արդյունքները վայելելու, իսկ եթե չար էր, բնավ չարժե լալ, որովհետև կանխահաս օրհասով չարը մեջտեղից վերցվեց, և նրա պատիժը չավելացավ. իսկ եթե կենդանի մնար, կարող էր ուրիշ չարիքներ էլ գործել՝ ավելացնելով իր պատիժը: Երբեմն էլ Աստված թույլ է տալիս, որ բարի որդին մեռնի, որպեսզի հանկարծ չար չդառնա, և չար որդուն կյանքից զրկում է, որպեսզի ավելի չար չդառնա:

ԼԶ. Մեռյալի վրա մեծ կոծ անելը և վայերով ու ճիչով ողբալը մարդկային բանականությանը հակասում է և անվայել է քրիստոնեական հույսին ու կրոնին: Եթե մեկն ուղիղ հավատով ու բարի վարքով հրաժեշտ տվեց այս կյանքին, անմահական կյանքում բերկրում է, իսկ դու իբրև անհույս մեկը տրտմությամբ սզում ես, ասես հարություն չի առնելու: Իսկ եթե չարաչար վարքով մեռավ, բավական է նրան այն սուգը, որն ունի ինքն իր վրա, որովհետև եթե նույնիսկ ամբողջ աշխարհը մի վայրում հավաքվի ու կոծի, այս սուգը չի կարող հավասարվել այն սուգին ու տրտմությանը, որ մեռյալն ունի իր կորստյան վրա:

Եթե ասեն՝ բարյացապարտ մեկն էր մեռյալը և շատերի երախտավոր, արդարև արժեր, որ ասողներն իմանային, թե սաստիկ սուգով չեն կարող շնորհապարտ լինել: Եթե ախորժում են, թող իրենց մտքում անմոռաց պահեն նրա երախտիքները և խոսքով ու գրով հիշատակեն նրա բարության համբավն ու նրա աշխատանքների ազգօգուտ արդյունքները սերնդեսերունդ՝ հավիտենապես: Մանավանդ նրա օրինակից հորդորվելով՝ թող յուրաքանչյուրը, ըստ կարողության, բարի ու երախտավոր լինի իր հայրենիքին:

Իսկ եթե ասեն՝ բազմորդի ու աղքատ էր մեռյալը և զավակներին ու ընտանիքը որբ ու անխնամ թողեց, այդ դեպքում ինչո՞ւ չեն հասկանում, թե սուգն ու տրտմությունը ոչ մի օգուտ չեն տալիս, որովհետև չեն կարող հոգալ որբերի ու այրու պետքերը: Այլ թող իրենց սուգը գթության փոխարկեն և մարդասեր կամքով խնամածու լինեն որբերին մինչև չափահաս դառնալը և չթողնեն, որ մատղաշ ու անխնամ որբերն իրենք հոգան իրենց կարիքները, և որ կարիքավոր մնա հանգուցյալի ընտանիքը:

Եվ եթե ասեն, թե՛ մեռյալը մեզ սիրելի էր ու բարեկամ, արդ, նրանք բարձրագույն ծայնարձակությամբ իզուր պիտի չաղաղակեին և սզով ու կոծով չսևավորվեին, այլ սիրո մեջ հաստատուն մնային և շտապեին անել այն, ինչ վայել է բարեկամությանը՝ մեռյալի համար աղոթել և պատարագի նպաստ ու ողորմություն տալ, նրա տունը բարելից ու շեն պահել և խնամքով աճեցնել նրա զավակներին, ուսուրերին գիտության ու պիտանի արհեստների ուսման տալ, դուստրերին բարեկարգությամբ պահել ու

ամուսնացնել և բարեկամության սիրով հոգածու լինել նրա ընտանիքին, այնպես, ասես թե նա կենդանի է:

Իսկ եթե ասեն, թե ծաղիկ հասակում մեռավ, այդպիսիք թող իմանան, որ այդ էլ էր հարկավոր ու գրեթե բնական հաշվի առնելով այն պատճառները, որոնցից առաջ եկավ տարածված մահը:

Արդարև մարդու մարմինը, ըստ բնության արարչապետի անփոփոխելի օրենքի, բաղկացած է այլապես տարրերից կամ նյութերից, որոնք տարբեր հատկություններ, տարբեր շարժումներ ու տարբեր գործառնություններ ունեն:

Հողը հաստատուն է, անթափանցելի և մյուսներից ավելի ծանր: Ջուրը մածուցիկ է և մտնելով մարմնի գործարանների բոլոր կազմությունների մեջ՝ նրանց դյուրաշարժ լինել է տալիս: Օդը հոսանուտ է և մարմնի մյուս տարրերին միջոց է տալիս՝ հարկավոր գործերի համար շարժվելու: Կրակը միշտ գործուն ու շարժուն է: Ուստի և մարմինը, բաղկացած այս տարրերից կամ նյութերից, ունի նրանց զանազան հատկությունները, այսինքն՝ անթափանցություն, ծանրություն, դանդաղություն, բաժանելիություն, տարածություն և շարժականություն:

Արդ, երբ այս տարրերը հավասարակշիռ են, զորացնում ու պահպանում են մարդու մարմինը, բայց երբ հավասարակշռությունը կորցնում են, մարմինը տկարացնում ու մահ են առաջ բերում, և որոնք պահպանության ու կյանքի պատճառ էին, դառնում են ապականության ու մահվան պատճառ: Քանզի կրակը շատանալով արագացնում է նյութի մասերի շարժումը և խանգարում մարմնի կազմությունը. ջուրն առատանալով թուլացնում է ջլերն ու նյարդերը. օդը, մարմնի անհարմար մասի մեջ լցվելով, մահաբեր ախտեր է բերում:

Տարրերն իրենց հավասարակշռությունը կորցնում են, երբ բազմամյա աշխատանքից մարմնի գործարանները տկարանում են, և օրըստօրե նվազում է այն տարրերի ձգողական շարժումը, որոնք իրենց էությանը համապատասխան մասերը դեպի իրենց էին ձգում մարմնի սնման, աճման և կյանքի պահպանության համար: Եվ ընդհակառակը՝ տարրերը սկսում են վանողական շարժմամբ հեռացնել իրենց էությանը չնմանվող նյութերը և տկարանում ու քայքայվում են: Սրանցից էլ առաջ է գալիս ծերունական մահը՝ ըստ Աստծու սահմանման:

Տարրերն իրենց հավասարակշռությունը կորցնում են նաև կամ կերակուրներից ու ըմպելիքներից, կամ խառնակյաց վարքից, կամ օդի ապականությունից, կամ կրքերի ամբոխումից, կամ էլ այլ բազում ու զանազան պատճառներից, որ կարող են խանգարել մարմնի ու նրա գործարանների կազմությունը: Ուստի և տարրերը վանողական շարժմամբ մերժում են այն նյութերը, որոնք չեն համապատասխանում իրենց էությանը, և նվազում ու քայքայվում են: Սրանցից էլ առաջ է գալիս տարածված մահը:

Այս երկուսը, այսինքն՝ ձգողական շարժումը, որով կյանքը պահպանվում է, և վանողական շարժումը, որով կյանքը քայքայվում է, հաստատուն օրենքով Աստված սահմանել է մեր բնության մեջ մինչև աշխարհի վերջը: Եվ երբ բնության օրենքը փոխարինվի շնորհական օրենքով, և լինեն նոր երկինք ու նոր երկիր, այնժամ կնորոգվի և մեր խոնարհ մարմինն Աստծու Որդու փառավոր մարմնի նմանությամբ, և յուրաքանչյուրն իր գործերի հատուցումը կստանա:

Եվ արդ, թե՛ ծերունական և թե՛ երիտասարդական մահերը բնական ու հարկավոր են, եթե խելամտությամբ քննենք այն պատճառները, որոնցից առաջ են գալիս: Ինչ որ կրակի մեջ է ընկնում, հարկավոր այրվում է, և ինչ որ գահավիժում է, հարկավոր ջախջախվում է: Այսպես էլ ամեն պատճառ հարկավորապես է գործում, ուստի և ամեն գործ հարկավոր ու բնական է՝ հաշվի առնելով այն պատճառները, որոնք զուգընթացում և գործն առաջ են բերում: Ուստի պետք չէ մեռյալի մահվան համար տրտմությամբ հուսալքվել, այլ զգաստությամբ պատշաճը տնօրինել և փութալ այն կատարել:

«Մարդը թե մեռնի, կապրի՞ նա դարձյալ՝  
ամբողջացնելով օրերն իր կյանքի: Պիտի սպասեմ, մինչև որ կրկին գոյություն առնեմ» (Հոր  
ԺԴ 14):

«Մեղմ լա՛ց եղիր մեռյալի վրա,  
քանզի նա գտավ իր հանգիստը» (Սիրաք ԻԲ 11):

«Ո՛վ մահ, որքան դառն է քեզ հիշել այն մարդու համար,  
ով խաղաղ ապրում է իր հարստության մեջ» (Սիրաք ԽԱ 1):

«Ո՛վ մահ, բարի է քո դատաստանն այն մարդու համար,  
որ կարիքի մեջ է & ուժից ընկած» (Սիրաք ԽԱ 3):

«Եթե ցորենի հատիկը, հողի մեջ ընկնելով, չմեռնի,  
միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի,  
բազում արդյունք կտա» (Հովհ. ԺԲ 24):

«Քանի որ մեղքի վարձը մահն է,  
իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք՝  
մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ. Զ 23):

Հ Ա Տ Ո Ր Բ

Մ Ո Լ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր Ի

Մ Ա Ս Ի Ն

# Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Ի ն չ պ ե ս ո ռ ք ն ա կ ա ն ք ն ու թ յ ու ն ը չ ի կ ա ռ ո ղ պ ա հ ե լ ի ռ է ու թ յ ու ն ն ու գ ո յ ու թ յ ու ն ը մ ի ա յ ն կ ո ռ գ ո ղ գ ո ռ ու թ յ ա մ ք դ ե պ ի ի ռ ե ն ձ գ ե լ ո վ ն յ ու թ ի ի ռ գ ո յ ու թ յ ա ն ը հ ա ռ մ ա ռ ու օ գ տ ա կ ա ռ մ ա ս ե ռ ը , ա յ լ & հ ա ռ կ ա դ ռ վ ա ծ է վ ա ն ո ղ գ ո ռ ու թ յ ա մ ք մ ե ռ ժ ե լ ու ա յ ն մ ա ս ե ռ ը , ո ռ ն ե ռ հ ա կ ու վ ն ա ս ա կ ա ռ ե ն ի ռ ա ռ ո ղ ջ ու թ յ ա ն ը , ա յ դ պ ե ս & ք ա ն ա կ ա ն ք ն ու թ յ ու ն ը չ ի կ ա ռ ո ղ պ ա հ ե լ մ ա ռ դ կ ու թ յ ա ն ս ա հ մ ա ն ն ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն ն ե ռ ի կ ի ռ ա ռ ու թ յ ա մ ք , ո ռ ո ն ք հ ա ռ մ ա ռ ու օ գ տ ա կ ա ռ ե ն ն ռ ա գ ո յ ու թ յ ա ն ը & ե ռ ջ ա ն ի կ ե ն դ ա ռ ձ ն ու մ , ե թ ե ն ա & չ խ ու ս ա փ ի մ ո լ ու թ յ ու ն ն ե ռ ի ց , ո ռ ո ն ք մ ա ռ դ կ ու թ յ ա ն թ շ ն ա մ ի ու ա պ ա կ ա ն ի չ ե ն & մ ա ռ դ ու ն թ շ վ ա ռ ե ն դ ա ռ ձ ն ու մ :

Ա հ ա & ո ռ & է օ գ տ ա կ ա ռ դ ե ղ ա ռ ո ղ ջ ու թ յ ու ն չ ի պ ա ռ գ & ու մ , ե թ ե չ ա ռ գ ե լ վ ե ն վ ն ա ս ա կ ա ռ կ ե ռ ա կ ու ռ ն ե ռ ն ու ը մ պ ե լ ի ք ն ե ռ ը , & ե ռ կ ի ռ ը պ տ ու ղ ն ե ռ ո վ չ ի ք ա ռ գ ա վ ա ճ ու մ , ե թ ե ա ռ մ ա տ ա խ ի լ չ լ ի ն ե ն ա ն պ ի տ ա ն փ շ ե ռ ն ու խ ո տ ե ռ ը :

Ք ա ն գ ի մ ա ռ դ ն է լ ի ն չ պ ե ս ո ռ պ ա հ պ ա ն վ ու մ է ա ռ ա ք ի ն ու թ յ ա մ ք , ա յ դ պ ե ս է լ ա պ ա կ ա ն վ ու մ է մ ո լ ու թ յ ա մ ք ո չ մ ի ա յ ն ք ա ռ ո յ ա պ ե ս , ա յ լ & ֆ ի գ ի կ ա պ ե ս , ո ռ ո վ հ ե տ & մ ո լ ու թ յ ու ն ն ե ռ ը ո չ մ ի ա յ ն չ ա ռ ե ն , ո ռ ո վ հ ե տ & հ ա կ ա ռ ա կ վ ու մ ե ն ու ղ ի ղ ք ա ն ա կ ա ն ու թ յ ա ն ն ու ա ս տ վ ա ծ ա յ ի ն օ ռ ե ն ք ի ն , ա յ լ ն ա & վ ն ա ս ա կ ա ռ ե ն , ո ռ ո վ հ ե տ & խ ա ն գ ա ռ ու մ ե ն կ ա գ մ վ ա ծ ք ն ու մ ա հ ն ա ռ ա գ ա ց ն ու մ :

Ա յ ս պ ա տ ճ ա ռ ո վ է լ Ա ս տ ծ ու ց ե ռ կ ու տ ե ս ա կ պ ա տ վ ի ռ ա ն ա վ ա ն դ վ ե ց , հ ա ն ձ ն ա ռ ա կ ա ն գ ո ռ ծ ե լ ու ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն , ո ռ ո վ մ ա ռ դ ը պ ա հ պ ա ն վ ու մ & ե ռ ջ ա ն ի կ է լ ի ն ու մ , & հ ռ ա ժ ա ռ ա կ ա ն խ ու ս ա փ ե լ ու մ ո լ ու թ յ ու ն ի ց , ո ռ ո վ մ ա ռ դ ն ա պ ա կ ա ն վ ու մ ու թ շ վ ա ռ ա ն ու մ է :

Ք ա ն ի ո ռ ա յ ս գ ռ ք ի ա ռ ա ջ ի ն հ ա տ ո ռ ու մ խ ո ս ե ց ի ն ք ո ռ ո շ ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն ն ե ռ ի մ ա ս ի ն , ո ռ ո ն ք կ ա ռ & ո ռ ե ն ա մ ե ն տ ա ռ ի ք ի մ ա ռ դ կ ա ն ց հ ա մ ա ռ ( մ ա ն ա վ ա ն դ ի մ հ ա ռ ա գ ա տ ա գ գ ի հ ա շ վ ի ա ռ ն ե լ ո վ ա յ ն վ ի ճ ա կ ը , ո ռ ու մ ա յ ժ մ գ տ ն վ ու մ է ) ք ա վ ա կ ա ն ի ն ք ն ա կ ա ն խ ո ս ք ո վ ն ռ ա ն ց



հ ն ռ դ ո ռ ե լ ն վ հ ե տ ա մ ու տ լ ի ն ե լ ա ռ ա ք ի -  
ն ու թ յ ու ն ն եր ի ն , ո ռ ո ն ք մ ա ռ դ ու ն ո չ  
մ ի ա յ ն ք ա ռ ի ե ն դ ա ռ ծ ն ու մ & ա ն ս ա հ -  
մ ա ն վ ա ռ ծ ի ժ ա ռ ա ն գ ո ռ դ , ա յ լ & ա ն կ ա -  
ր ո տ , ք ա ռ ե հ ա մ ք ա վ ու եր կ ա յ ն ա կ յ ա ց ,  
ու ս տ ի ա յ ս եր կ ռ ո ռ դ հ ա տ ո ռ ու մ կ խ ո -  
ս ե ն ք ն ա & մ եր մ ե ջ տ ա ռ ա ծ վ ա ծ մ ո -  
լ ու թ յ ու ն ն եր ի մ ա ս ի ն , ո ռ ո ն ք մ ա ռ դ ու ն  
ո չ մ ի ա յ ն չ ա ռ ե ն դ ա ռ ծ ն ու մ & հ ա վ ի -  
տ ե ն ա կ ա ն դ ա տ ա պ ա ռ տ ու թ յ ա ն ա ռ ժ ա ն ի ,  
ա յ լ & ա դ ք ա տ , ա ն ա ռ գ ու վ ա դ ա մ ե ռ ի կ :

**Օ Պ Տ Ա Կ Ա Ր**

**Խ Ր Ա Տ Ա Ք Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Ն Յ Ո Ւ Ր Ա Ք Ա Ն Չ Յ Ո Ւ Ր  
Ա Ն Չ Ի Հ Ա Ս Ա Ր

**Գ Լ Ո Ւ Խ Ա**

**Չ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ա. Յուրաքանչյուր ոք կարող է իր անձի դատավորը լինել, որովհետև բարոյականության մեջ որպես օրենսգիրք ունի բնության օրենքը և ընկերության մեջ՝ քաղաքական օրենքը: Եթե այս օրենքներին չի հնազանդվում, անիրավ դատավոր է դառնում, և նրանից պետք է երկնչել: Որովհետև ով օրենքն արհամարհում է, ոչ ոքից չի երկնչում, և չի թողնում մի չարիք, որ չհամարձակվի գործել: Սրա մասին առած կա. «Ով Աստուծուց չի երկնչում, նրանից երկնչի՛ր»: Ուստի բարիները պարտավոր են չարերից զգուշանալ, որովհետև չարերը նպատակ ունեն միշտ վնասել բարիներին:

Բ. Ով կամենում է վնասել ուրիշներին, նախ իրեն է վնասում. որովհետև անհնար է առանց սեփական վնասի ուրիշներին վնաս հասցնել, քանզի չարը նախ այն խորհողի համար է չար:

Գ. Չարագործներն ատում են հանդիմանողներին և սիրում իրենց նմաններին ու նրան, ով անտեսում է իրենց հանցանքներն ու չի նախատում: Ուստի ով չարերին սիրելի է, կամ չար է, կամ չարերին ներող:

Դ. Չարերը չեն համարձակվում բարիների առաջ երևալ, ինչպես բժակալած աչք ունեցողները՝ արևի լույսի: Բայց երբ բարիները պակասում են, չարերը հետզհետե գլուխները բարձրացնում են՝ նմանվելով խավարասեր չղջիկներին, որոնք իրենց բներից ելնում են արեգակի մայր մտնելուց հետո:

Ե. Երկրի համար ավելի թեթև բեռ է իր ծանրությունը, որ կրում է, քան չարագործ մարդը:

Զ. Չարերը երբեք չեն կարող միաբանել բարիների հետ: Որովհետև ինչ սիրում են չարերը, բարիներն այն ատում են, և ինչ սիրում են բարիները, այն ատում են չարերը, և այս երկուսն էլ միշտ ջանում են միմյանց ընդոտնել. և եթե միմյանցից չխուսափեին, թերևս սպառված կլինեին կամ չարերը, կամ բարիները: Բայց այժմ չարերը շատ են, իսկ բարիները՝ սակավ, և եթե Աստված բարիներին չպահեր, չարերը նրանց կվերացնեին աշխարհից, քանզի միշտ հանդիմանվում են նրանցից: Թեպետ բարիները վշտեր են կրում չարերից, բայց առանց վարձատրության չեն մնում, ինչպես որ չարերը՝ առանց պատիժների: Բայց պետք չէ զարմանալ, թե ինչու են առաքինիներն ավելի սակավաթիվ, քան մոլիները: Որովհետև ահա հողը շատ է, բայց շահաբեր հանքերը կամ նրանց մեջ եղող մետաղները՝ սակավ:

Է. Մարդիկ ինչո՞ւ են զայրանում, որ չարերն օրըստօրե բազմանում են: Քանզի մանուկների օ-

րենքն է սովորել այն, ինչ լսում են, և անել այն, ինչ տեսնում են: Արդ, եթե մարդիկ, որ ավելի շուտ ծնվեցին, բարի լինեին, նրանցից հետո ծնվածներն էլ բարի կլինեին: Ուստի եթե մարդիկ կամենում են, որ չարերը սակավ լինեն, առաջինները պիտի բարի լինեն, որպեսզի հետիններն էլ նրանցից բարի լինել սովորեն, այլապես հետո ամենքին չար ու առավել չար կտեսնեն: Քանի որ մարդիկ սովոր են ամեն ինչում միմյանց գերազանցել, ուստի չարիքներում ևս հետիններն առաջիններին կհաղթեն, և այնժամ բարի մարդու անունը կարելի կլինի գտնել միայն գոքերում, և ոչ մի բարի մարդ չի մնա աշխարհում:

Ը. Ով վախենում է իր պատիվը կորցնելուց, թող զսպի իրեն անկարգ չլինելու: Իսկ ով մի անգամ պատիվը կորցնում է, համարձակություն է ստանում առանց ամոթի գործելու բոլոր չարիքները:

Թ. Չարերը միշտ հակառակ են միմյանց, և մեկը մյուսի իշխանությունը չի կամենում, որովհետև միմյանց չարությունը քաջ գիտենալով՝ հնարներ են մտածում իրար կործանելու: Բայց երբ բարիներն են իշխանության հասնում, չարերը ոյուրավ համաձայնում են, որովհետև ակնկալում են բարիներից ներում ստանալ նախկինում իրենց գործած անիրավությունների համար: Ուստի չարագործների մեջ ճշմարիտ սեր ու միաբանություն չկա, որովհետև երբ նրանցից մեկը բռնվում է, իսկույն մատնում է իր խորհրդակցին, սա էլ՝ իր ընկերոջը, և նրանց միաբանությունը դառնում է իրենց ամենքի կորստյան պատճառը:

Ժ. Երբ չարագործները վտանգի մեջ են ընկնում, խելահաս չեն լինում իրենց հանցանքներին, այլ մեղադրում են Աստծուն, թե՛ «Հանիրավի՛ այս չարիքը բերեց մեզ վրա», ինչի համար կրկնակի պատժի են արժանի. մեկը՝ գործած ապիրատությունների համար, իսկ մյուսը՝ Աստծուց անիրավ կերպով գանգատվելու: Այնինչ նրանք պիտի իմանային, որ ոչ ոք Աստծուց չի պատժվում, եթե նախ չի մեղանչել Աստծու դեմ. որովհետև Աստված իր անբավ գթության պատճառով սովոր է մեկին արժանիից էլ նվազ պատժել, ուր մնաց թե՛ իզուր տանջել:

ԺԱ. Թեկուզ ժահահոտ առարկաները հողով ծածկվեն, միևնույն է՝ փչում են իրենց զարշահոտությունը: Որքան էլ չարերը ջանան իրենց բաղձանքը թաքցնել, իսկույն հայտնի է դառնում բարիներին, որովհետև չարերի սրտերն ապականված են: Չարերն այնքան են հանդըզնում, որ քարեր են նետում բոլոր բարեգործների վրա, բայց բարիների համբերելու դեպքում չարերի քարերն ընկնում են իրենց իսկ գլխին:

ԺԲ. Ապրողների չարաչար ընթացքն անմահացնում է մեռած բարի մարդկանց հիշատակը և ավելացնում նրանց կսկիծը մարդկանց սրտերում, որովհետև բարիներին կորցրին, իսկ չարերին ունեն: Ուստի երբ բարիները մեռնում են, առաքինիները սգում են, ոչ թե որ նրանք մեռան, այլ որովհետև աշխարհում չարերը մնացին, իսկ բարիները պակասեցին: Չարերն ապրում են, որպեսզի միշտ մեռնեն. բարիները մեռնում են, որպեսզի միշտ ապրեն:

ԺԳ. Եթե տերևները չպահպանեին ծառերի պտուղները, գուցե ծառերը նրանց չկրեին իրենց ոստերի վրա. եթե չարերն առաքինիների կրթիչ չլինեին, թերևս երկիրը չտաներ այդ անպետք բեռները: Եվ արեգակը գուցե զլանար իր լույսը ծագեցնել չարագործների վրա, եթե Աստված չհրամայեր նրան ծագելու բարիների ու չարերի վրա: Չարագործի վերանալու դեպքում ոչ միայն մարդիկ են ազատվում նրա վնասից, այլև ինքը չարագործն ազատվում է պատժի ծանրությունից, որն օր առ օր ավելանում է նրա վրա, քանի կենդանի է մնում: Ուստի եթե չարերն ապրում են, ապա դա կամ մարդկանց պատժելու համար է, կամ իրեն՝ չարագործին:

ԺԴ. Չարերը որքան ավելի են բարձրանում փառքով, այնքան ավելի է մոտենում նրանց անկումը: Որովհետև երևում է, թե Աստծու արդարությունը համբերում է, մինչև նրանց մեղքերի չափը լրանա, որ իսպառ կործանի: Բայց շատ անգամ Աստված չարերին խնայում է տալ ընտրողական աչք՝ ճանաչելու առաքինի բարեկամներին, որովհետև խրատի արժանի չեն նրանք, ովքեր կամենում են խրատը մերժել:

ԺԵ. Բնավ մի՛ գայթակղվիր, երբ տեսնում ես, որ մեկը մեծ ոճիր գործելու դեպքում անպատիժ է մնում, իսկ մի փոքր հանցանքով մեղանչելու դեպքում չարաչար պատժվում: Քանզի սովոր է Աստված համբերել չարագործներին, որ զոջան, բայց երբ նրանք համառում են մեղքերի մեջ, նրանց մի փոքր

հանցանքի պատճառով ծանր պատիժ է հասցնում, որով հատուցում է նրանց նախապես գործած մեծամեծ չարիքների պատիժը:

ժԶ. Անօրենը, երբ անգերծ վտանգների մեջ է ընկնում, այդժամ է ճանաչում, թե Տերն արդար է, և չարերից վրեժ է լուծում: Որովհետև նա, ով իր հաջողության մեջ աչքերը փակում է, որ չտեսնի ճշմարտությունը, ծախորդության ու մահվան վտանգի է սպասում՝ աչքերը բարձրացնելու, որ ճանաչի Աստծու ճշմարտությունն ու իրավունքը, բայց ապարդյուն, որովհետև չի կարող այդժամ փրկություն գտնել:

ժԷ. Մոլիներն առաքինություն չգործելու պատճառ են բռնում իրենց բնության տկարությունը, բայց իրենք իրենց խաբում են: Որովհետև ոչ թե մոլությունը բնական բան է, և առաքինությունը՝ բնությանն օտար, այլ բնությունն առավել հարմար է առաքինություններ գործելուն, քան մոլություններ. ապա թե ոչ Աստված անողորմ կլիներ մարդկանց հանդեպ, որը մտածելն իսկ ամբարշտություն է: Ուստի թող ոչ ոք չասի. «Բարիք գործել կամենում եմ, բայց չեմ կարողանում». այլ մանավանդ թող ասի. «Կարող եմ, բայց չեմ կամենում»:

ժԸ. Ինչպես որ մարմնական հիվանդություններն են կարճ ժամանակում մարդուն ախտահարում, բայց երկար տաժանմամբ հազիվ վերանում, այդպես էլ հոգու մոլեկան ախտերն են սակավօրյա գործառնությամբ սովորական դառնում, բայց բազմաժամանակյա ժուժկալությամբ հեռանում:

ժԹ. Եթե մեկը ժրաջան աշխատի, կարող է ուղղել արհեստի մեջ ունեցած թերությունները: Այդպես, մեկը կարող է ազատվել բարքի մոլեկան սովորությունից, որ բնության տկարությունից է արմատացել մարդու մեջ, եթե արի ոգով մշտապես ջանք գործադրի:

Ի. Եթե մարմնի հիվանդությունները դեղերով կամ պահեցողությամբ չբժշկվեն, վերջում մահվամբ կավարտվեն: Իսկ հոգու հիվանդությունները, եթե ուսմամբ ու առաքինական կրթությամբ չբուժվեն, մահվամբ կհավերժանան:

Չար է մարմնի ախտը, որովհետև մարմինը սպանում է, բայց ավելի չար է հոգու ախտը, որովհետև միևնույն ժամանակ մեռցնում է և՛ մարմինը, և՛ հոգին: Ուստի տկարամիտ ենք ու բյուր հանդիմանության արժանի, որովհետև մարմնի հիվանդությունից զարհուրում ու դեղ ենք փնտրում, իսկ հոգու հիվանդությունից բնավ չենք երկնչում ու չենք շտապում բժշկվել:

ԻԱ. Կան մարդիկ, որ այնքան չար ու մոլի են, որ գեհենի երկյուղից ազատ մնալու և ամեն տեսակ չարիքների մեջ առանց խղճի խայթի արշավելու համար չեն կամենում հավատալ, թե կա մարդկանց գործերի հատուցում: Սակայն նրանց անհավատությունը չի կարող խափանել ճշմարտությունը, որի մասին նաև մարդու խոսքն է վկայում, և խելագարություն է ընդդեմ սեփական ճանաչման մարտնչելը՝ ըստ այսմ. «Մի՞թե նրանց անհավատությունն Աստծու հավատարմությունը խափանեց. քավ լիցի» *(Հռոմ. Գ 3-4)*:

ԻԲ. Ով մտածի, որ ինչ որ ծածուկ գործում է, մարդկանց հայտնի է դառնալու, կամ իսպառ կխուսափի չար գործերից, կամ գործի կեսից կանգ կառնի:

ԻԳ. Մարդիկ կարճ ժամանակում բազում չարիք են սովորում և երկար ժամանակում՝ հազիվ մի բարի բան: Քանզի բարին ասես թանկարժեք ակն է, իսկ չարը՝ անարգ խիճ, ուստի առաջինը դժվարագյուտ է, իսկ վերջինը՝ ամեն տեղ դյուրապատրաստ: Այլև՝ բարին գոյանում է բոլոր մասերի ամբողջությունից, իսկ չարը՝ որևէ պակասությունից:

ԻԴ. Բարիներն ու չարերն աշխատանքով միաբանվում են, բայց կամքով տարբերվում: Որովհետև բարիները չեն հավանում իրենց գործած բարիքը, ուստի ջանում են է՛լ ավելի բարի գործեր անել, և օրըստօրե առաջ գնալով՝ հասնում բարեգործության գերակատար աստիճանին, իսկ չարերը հավանում են իրենց գործած չարիքը, ուստի նրան հետևում են և օր առ օր ավելի չար դառնում: Քանզի բարին վերջանում է, երբ գործողն այն հավանում ու կանգ է առնում, իսկ չարը վերջանում է, երբ գործողն այն չի հավանում ու գործելուց դադարում է:

ԻԵ. Եթե Աստված միայն լսեր մարդկանց բերանի խոսքերը, ոչ ոքի չէր դատապարտի, որովհետև ամենքը խոսելիս ցույց են տալիս, թե մոլություններն ատում են, բայց գործով շարունակ ավելացնում են դրանք: Սակայն Աստված ոչ թե խոսքերին է նայում, այլ գործերին և ըստ այդմ դատաստան անում:

ԻԶ. Ապրելու արժանի չէ նա, ով ապրում է անմեղների կյանքին վնաս հասցնելով: Մեկն ուրիշների կյանքի տերն է դառնում, երբ իր կյանքը նրանց համար զոհում է:

ԻԷ. Մարդիկ, եթե քաջ ճանաչեին մարմնի ողորմելի վիճակը, մեռյալներին կերանեին, որովհետև մեռյալները, մարմնից անջատված լինելով, ազատ են այդ թշվառությունից, իսկ ապրողները, տակավին մարմնի մեջ լինելով, տառապում են նրա մեջ: Բայց ապրողներն այժմ լավ չեն ճանաչում մեղքերի տգեղությունն ու մեղավորների պատիժների սաստկությունը, ուստի անզգուշաբար մեղքերի մեջ են սահում և դատապարտության տակ ընկնում: Իսկ մեռյալները, թեպետև ամեն ինչ ճանաչում են, բայց չեն կարող ապաշխարությամբ քավել կենդանի ժամանակ գործած մեղքերը, այդ պատճառով էլ դատապարտության տակ են մնում: Ուստի ապրողները պիտի մեռյալի միտքն ունենան, որպեսզի մեղքերի պատճառով չդատապարտվեն:

«Ինչպես ազոխը վնասակար է ատամներին,  
իսկ ծուխը՝ աչքերին, այդպես էլ անօրենությունը  
վնասակար է նրանց համար,  
ովքեր առաջնորդվում են նրանով» (Առակ. Ժ 26):

«Իրենց կուտակած մեղքերից տագնապած՝  
նրանք պիտի հասնեն դատաստանի օրվան,  
& նրանց գործած անիրավությունները պիտի  
կշտամբեն նրանց ձակատ առ ձակատ» (Իմաստ. Դ 20):

## Գ Լ ՈՒՆ Բ

### Հ Պ Ա Ր Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ճշմարիտ փառքն ու պատիվը բովանդակվում են մարդկության վիճակի մեջ և նրանից դուրս չեն գտնվում: Իսկ ով բարձրամտելով իրեն բոլոր մարդկանցից վեր է դասում և իր համար բոլորից ավելի մասնավոր փառք ու պատիվ փնտրում, դուրս է գալիս մարդկության կարգից, ուստի այդպիսին բանական մարդ չէ՝ մարդկության պատիվը չճանաչելու պատճառով, այլ գազան, հրեշ և այլանդակություն:

Բ. Ճշմարիտ փառքի ու պատվի է արժանի նա, ով մարդասեր ու բարերար է և ճանաչում է մարդկության հարգը: Եվ փառքի անարժան է, ով իրեն բոլոր մարդկանցից նախամեծար է համարում և ցանկանում ամենքից փառավորվել: Ուստի հույժ իրավացիորեն է ամենքից արհամարիվում նա, ով բոլորին արհամարիեց:

Գ. Որևէ հպարտ ու փառամուլ, մարդահաճոններից զովեստներ լսելով, փքվելով գոռոզանում է և հիմարաբար ցանկանում, որ բոլոր մյուսներն էլ զովեն իրեն, և չի հասկանում, թե սուտ գոռոզություն են այն զովեստները, որ մարդահաճոններն իրեն տալիս են իրենց շահասիրության պատճառով: Առերես ասված զովեստը, թեկուզև ճշմարիտ լինի, սին է և սնապարծության գրգռիչ:

Դ. Գոռոզները սովոր են ապերախտ լինել, որովհետև երբ իրենց մի բարեկամից ծանձրանում են, չեն հիշում նրա հավատարմությունն ու երախտիքները, այլ իսկույն մերժում են նրան: Որովհետև մտերիմ խորհրդակիցներ ու երախտավորներ կորցնելը բնավ ցավ չէ նրանց, և ով մի անգամ անհաճ է նրանց թվում, այլևս երբեք չեն կամենում նրա հետ տեսակցել:

Ե. Հպարտը նման է ցլաջլից պատրաստված մտրակի, որը երբ ուժի գործադրության տակ թեքվում է, երկու ծայրերն էլ խոնարհվում ու դեպի միմյանց են գալիս, իսկ երբ ձեռքից բաց է թողնվում այդ ծայրերը, իսկույն գլուխները բարձրացնելով, առաջին ձևն են ստանում: Այսպես և հպարտները, երբ

նեղությունների մեջ են ընկնում, ակամա կորանում ու խոնարհվում են, բայց երբ ազատվում են, այլևս մեծամտում են, ուստի և ասելի են Աստծուն և մարդկանց:

Զ. Շատերը բարեբախտության են հասնում, բայց չիմանալով նրա հետ բարվոք վարվել՝ արագորեն կորցնում են: Ինչպես հպարտ իշխանը, թեպետև գիտի իր տկարությունն ու թշնամու զորությունը, բայց իր ամբարտավանության պատճառով չի կամենում խոնարհվել հաշտության պայմանագիր կնքելու, որպեսզի նվաստացած չերևա, որով իսպառ կորցնում է իր պատիվն ու իշխանությունը:

Է. Անմտություն է անկայուն հաջողությամբ բարձրամտելով փառք ու համբավ կորցնելը: Հաջողությունները խաբուսիկ են, որովհետև մշտնջենավոր ու անկորուստ են երևում, բայց փոփոխական ու հոսանուտ են:

Ը. Հպարտ մոլիները հաջողությունների մեջ հանդուգն են լինում, իսկ ծախորդությունների մեջ՝ երկչուտ: Որովհետև ովքեր փոքր-ինչ առաջ ամբարտավանությամբ ուռել էին, իրենց բարեբախտությունը կորցնելով՝ շուտով կորանում ու ընկճվում են և մի վայրկյանում անցնում հակառակ ծայրը:

Թ. Երբեմն սնափառության հանդեպ սերը, զրգռվելով ամբարիավաճությունից, այնքան է կատաղում, որ հարուստին գետնով է տալիս: Ուստի պարզ է, որ ոչ ամենքն են պահում ունեցած դիրքի հարգը, այլ մանավանդ շատերն իրենց անարգությանն են այն փոխարկում, որովհետև չգիտեն, թե ինչպես է պետք դիրքը բանեցնել:

Ժ. Ավելորդի ցանկությունը սին փառամոլության պատճառով մարդկանց առավել է տանջում, քան ապրելուն հարկավոր բաների բաղձանքը: Որովհետև եթե մեկը կամենում է առաջին անհրաժեշտության բաներով բավարարվել, ոյուրավ կարող է դրանք ձեռք բերել ու երջանիկ ապրել:

ժԱ. Ազնվականները հաճախ են փառամոլ լինում, որովհետև «ազնվական» անունից խաբվելով՝ ամեն տեղ ձգտում են փառք ու պատիվ ստանալ: Այո՛, անմեղադրելի բան է ըստ արժանիքի փառք փնտրելը, բայց չափավորությունը կորցնելով՝ չար ու մոլեկան է դառնում, մինչև որ կորստյան է մատնում կամ սեփական անձը, կամ պատիվը:

ժԲ. Ազնվականության հոգին մեծագործությունը, իմաստությունն ու առաքինությունն է, այլապես ազնվականությունը մեռած է համարվում: Ուրեմն ազնվականները թող չպարծենան իրենց տոհմի պայծառությամբ, եթե չունեն ազնվատոհմությանն արժանի գործ: Որովհետև ինչպես որ յուրի պակասելու դեպքում ճրագը մարում է, այդպես և մեծագործության, իմաստության ու առաքինության պակասելու պարագայում վերանում է ազնվականների տոհմականության հարգը:

ժԳ. Փառասիրության բաղձանքը մարդուն շատ անգամ չափից ավել է խոսել տալիս իր արած գործերի կամ իրեն պատահած դեպքերի մասին՝ մտքում կարծիք դնելով, թե դրանով էլ ավելի մեծ պատվի արժանի կլինի, բայց խաբվում է, որովհետև ունեցած պատիվն էլ է կորցնում: Ուստի պետք է ճշմարտապես եղած բաների մասին չափավորությամբ և ոչ թե չափն անցնելով խոսել, որպեսզի նրանց մեջ սին պարծանքի նշան չերևա, և լսողներն իրենք մղվեն զովելու և պատվելու:

ժԴ. Ով իր կարողությունից ավելի է ձգտում բարձրագույնին, վերջում ամոթապարտ լինելով՝ խոնարհվում է, և ով ջանում է միշտ իր կամքը կատարել, իրեն անհանգիստ է դարձնում:

ժԵ. Ի՞նչն է պատճառը, որ խելացի մարդիկ երբեմն չեն տեսնում հայտնի վտանգներն ու նրանց մեջ են ընկնում, իսկ պարզամիտները տեսնում են և զգուշանում. և ինչպե՞ս են տգետները հարստություն ձեռք բերում, իսկ գիտունները նրանց դռներին դեգերում: Պատճառն այն է, որ խելացիներն ու գիտունները շատ անգամ ապավինում են իրենց և ոչ թե Աստծուն, ուստի և Աստված նրանց թույլ է տալիս միառժամանակ հեծել ու հոգոց հանել, որպեսզի ճանաչեն իրենց բնության տկարությունը, որովհետև նրանք կարծում են, թե մարդու ձեռքում է երջանկաբար ապրելը: Իսկ պարզամիտներն ու տգետները, Աստծուն ապավինելով, վտանգից զերծ են մնում և բարի գործերում հաջողություն գտնում:

ժԶ. Մարդկանցից ոմանք, երբ տեսնում են, որ մեկը մի անգամ հոգու կրքերից հաղթահարվել է, իսպառ արհամարհում են նրան և իրենցով հպարտանալով՝ պարծենկոտությամբ ասում. «Արդյոք ի՞նչ են կրքերը, եթե ոչ կամքի սպասավորներ, որոնք եթե երբեմն ըմբոստանում են, ոյուրին է դրանց նորից հնազանդեցնել: Ուրեմն ինչպե՞ս կարելի է մարդ համարել նրան, ով վատթար մեղկությամբ հաղթվում

է կրքերից»: Բայց երբ այսպիսի մեծաբանները մյուսներից ոչ պակաս հաղթահարվում են ատելության կամ սիրո կրքից, խոնարհվում ու խոստովանում են մարդկային բնության տկարությունը և սովորում կարեկից ու ներող լինել:

ԺԷ. Հպարտ ու ամբարիստ մարդն ամենքին ատելի է, որովհետև ինչպես որ նա է արհամարհում ամեն մարդու, արժե, որ բոլոր մյուսներն էլ արհամարհեն նրան: Հպարտության այս ախտն առավել տիրում է հարուստների զավակների վրա, որովհետև հարուստներն իրենց զավակներին, զրեթե օրորոցից սկսած, սնուցում են ավելի ամբարտավանությամբ, քան կաթով՝ անթերի կատարելով նրանց քմահաճությունները: Եվ մինչև մարմնի կազմավորումը նրանց մեջ ամբարտավանության ախտն է հաստատվում, ուստի իրենց դյուցազուններ են համարում և արհամարհում ամենքին, ու նաև իրենց ծնողներին:

Որովհետև ինչպես որ մինչ մանուկ էին, ծնողները կատարում էին նրանց քմահաճությունները, այդպես էլ մեծանալով կամենում են, որ իրենց կամքը կատարեն, ուստի և կամապաշտ են դառնում. ոչ միայն նրանով, որ իրենք իրենց կամքին են ծառայում, այլև որ կամենում են, որ բոլոր մյուսներն էլ ծառայեն, և եթե մեկը մի բանով հակառակվում է կամ չի կատարում, իսկույն անշիջանելի բարկությամբ զայրանում են: Ուստի մեղավոր են համարվում ծնողները, եթե իրենց զավակներին կամապաշտության պատճառ են տալիս:

ԺԸ. Հպարտը չի կամենում հնազանդվել մարդկանցից որևէ մեկին, այլ միայն դևերին, որովհետև չի կամենում որևէ մեկին իրենից գերազանց համարել, բացի դևերից, որոնց միշտ հնազանդ է, և եթե իրեն չհանձներ դևերի ծառայության, թերևս մարդկանց հնազանդվեր: Արդարև, ծառա է նա՛, ով միայն իր տիրոջն է հնազանդվում և ոչ ուրիշի. և հպարտը, քանի որ դևերի ծառա է, նրանց է միայն հնազանդվում և ոչ բնավ ուրիշի:

ԺԹ. Սնափառները, թեև երբեմն բարիք գործում են, բայց դա չեն անում այն մտքով, թե Աստծուն ու մարդկանց բարի ու հաճելի է, այլ որովհետև ծառայում է իրենց ամբարտավանությանը, քանի որ նրանց համար բարին ու չարը նույնն են: Ուստի բարիքը գործում են, որպեսզի մարդկանց աչքին բարեգործ երևան:

Ի. Մարդկանցից շատերն իրենց գործած բարին Աստծուն չեն վերագրում, այլ իրենց զորությանը, և քանի որ նրանք մոռանում են Աստծու պարգևները, որոնցով կարողացան բարիք գործել, ուստի Աստված չի տալիս նրանց վարձը: Ճշմարիտ բարեգործությունն այն է, որ կատարվում է Աստծու սիրո ու պատվի համար և վերագրվում Աստծուն՝ իբրև ամեն բարիքի աղբյուրի և տվիչի, որովհետև նա է, որ տալիս է, ընդունում և վարձատրում:

ԻԱ. Ով սովոր է խոսքով պարծենալ, գործով անապիտան է. որովհետև գործունյա մարդն ավելի շատ գործով է խոսում, քան խոսքով: Պետք է ձեռքերը հետ պահել, երբ ամբարտավան լեզուն խոստանում է տալ:

ԻԲ. Չկա աշխարհում մի ամրակուռ շինվածք, որը ժամանակի հնությունից չխարխլվի, ոչ էլ հզոր իշխանություն, որը թշնամուց չկործանվի, և ոչ հմուտ արվեստագետ, որին ուրիշները չգերազանցեն: Ուստի թող ոչ ոք չհպարտանա իր կորովամտությամբ, թե ոչ ոք չի կարող իր չափին հասնել, որովհետև գուցե ուրիշներն ավելի լավ կարողանան իմանալ ու գործել:

ԻԳ. Խիստ զարմանալի է, որ մարդկանց մեջ հպարտները շատ են, բայց իրենց հպարտ չեն ճանաչում. քանի որ հպարտությունը մասնավոր գերազանցության հանդեպ սեր է, չի թողնում սեփական տկարությունը ճանաչել: Այս ախտով հիվանդանում են նաև բարեգործները, որովհետև կամ կարծում են, թե իրենց ունեցած բարին իրենց զորությամբ են ձեռք բերել, և կամ իրենց արժանավորության համար Աստծուց է իրենց տրվել:

ԻԴ. Ամեն հպարտ կամ տգետ է, կամ հանդուգն: Տգետ է, որովհետև չունեցած բարին կարծում է, թե ունի, քանզի հպարտներին հատուկ է մտքով կուրանալ, և հանդուգն է, որովհետև ունեցած սակավ բարիքներով կամենում է ընկերների մեջ առավել բարձր երևալ, որով և արհամարհում է ուրիշներին՝ իբրև բարիքներից զուրկ եղողների: Եվ որովհետև այս ախտն առավել չար ու դաժան է, ուստի մարդն

առավել զգուշության կարիք ունի նրանով չհիվանդանալու համար:

ԻԵ. Աշխարհի բարիքներն ու պատիվն այնպես պիտի ունենաս, ասես դրանք երազում ունես. որովհետև երբ կարծում ես, թե իսկապես ունես, իսկույն անհետանում են: Դու հավատում ես, թե քո ձեռքում են, բայց չկան, որովհետև չես կարող արգելել նրանց փախուստը քեզանից: Ուստի անմիտ է, ով այս առօրյա կյանքի ունեցվածքով ու պատվով մեծամտում ու հպարտանում է:

ԻԶ. Մարդկանցից շատերը դյուրավ ամբարտավան են դառնում ու բանականության կարգից ելնում, եթե իրենց ընկերակից ու օգնական ունեն հարստությունը: Ուստի աստվածային տեսչությունը հաճախ նրանց թույլ է տալիս ընկնել աղքատության կարիքի մեջ, որպեսզի իսպառ չխելագարվեն:

Քանզի մարդկանց կիրքը նման է գազանի, որը եթե մեծ խնամք է գտնում, այսինքն՝ ունեցվածքի ճոխություն, հույժ ամեհի է դառնում, այնքան, որ դժվար է լինում նրան շղթայակապել և հպատակեցնել կամքի բանական հրամանին: Իսկ եթե կեր սակավ է գտնում, տկարանում ու նվաճվում է. որովհետև աղքատությունը կրքի ամբարիսկավաճ ցանկության շղթա է, որ խոնարհեցնում է նրան՝ հնազանդվելու ուղիղ բանականության կողմից առաջնորդվող կամքի հրահանգին:

ԻԷ. Հպարտը նման է կրակի. ինչպես որ կրակը, ուր էլ լինի, զգացվում է բնական հատկությունից, որովհետև սաստիկ տաք ու այրող է, այդպես էլ հպարտը, ինչ վայրում էլ գտնվի, ճանաչվում է իր հատկությունից՝ ուրիշներին արհամարհող ու նախատող է, որովհետև միայն իրեն է գովում և կամենում է ամենքից գովեստ ընդունել:

Այդ պատճառով էլ շատ անգամ նախատելի թերությունների մեջ է ընկնում, որպեսզի թերևս խոնարհվի, կամ ծախորդությունների մեջ, որպեսզի ճանաչի, թե ինքն էլ է սխալական մարդ, ապա թե ոչ իրեն մի աստված կհամարեր: Այս պատճառով բոլոր ժամանակներում հպարտները նախատակոծ ու խայտառակ են եղել, միշտ լինում են և կլինեն ապագայում՝ ըստ Աստծու արդար դատաստանի, ում փորձը չի պակասում, թե նրանք կարող են հասկանալ, թե ինչ էին, և ինչ դարձան ամբարտավանների մեծությունն ու փառքը:

ԻԸ. Ամբարտավան մարդը, եթե ինչ-որ պատահականությամբ որևէ բարու պատճառ է դառնում, այնքան է մեծամտում ու պարծենում, որ կորցնում է արած բարու հարգն ու ժառանգելիք վարձը և իբրև կշկչան հավ՝ մի ձվի համար ականջ է խլացնում:

Որովհետև չգիտի գործը կշռել ըստ ճշմարտության չափի, այլ կշռում է ըստ իր կրքերի: Ուստի ավելի ու ավելի է բարձրանտանում ու հպարտանում և ստացած պատիվներն անբավական համարում՝ շարունակ նորն ըղձալով, մինչև իսկ աստվածային պատիվ ունենալ և նմանվել փառավոր Բարձրյալին: Եվ որովհետև այս ամբողջովին չար ախտը հպարտներն ընդունեցին Բելիարից, ապա նրա հետ ընդունում են և նրա պատիժը, եթե անզղջում են լինում:

ԻԹ. Հպարտը ոչ ոքի առաջ չի ուզում խոնարհվել: Բայց քանի որ պատվասեր է, շատ անգամ խոնարհվում է մարդահաճելու՝ հարգանք ստանալու համար: Որովհետև ով մեկից մեծարվել է ցանկանում, հարկադրաբար նրան հաճոյանալ է ջանում, ինչի պատճառով մտքով տանջվում է, թե ինչպես կարող է հաճելի լինել: Ուստի մեծարում է նրանց, որոնք մեծարանքի արժանի չեն, որպեսզի նրանցից փոխադարձ պատիվ ստանա: Քանզի այսպիսիք սովոր են կեղծիքով ու մարդահաճությամբ միմյանցից առաջ անցնել պատվելու մեջ՝ հպարտությունը սնուցանելու համար և ոչ թե ի փառս Աստծու և ի սեր եղբայրության, ինչպես հրամայում է օրենքը:

Իսկ երբ մի փոքր վշտանում է իր եղբորից, և պատվի հույսն անհետանում է, տե՛ս այնժամ, թե ինչ պիտի նախատական նետեր է արձակում նրա վրա: Ում առաջ գովվելով հռչակում էր, հետո անարգելով վատահամբավում է, և ում նախ հարգական անվամբ էր հիշում, այնուհետև նախատական անվամբ ծանակում է, և ում տեսնելիս ծիծաղադեմ փարվում էր, այժմ խոժոռադեմ, նողկանքով նրանից երես է դարձնում: Ուստի ամբարտավանների խոնարհությունն առերևույթ է և ոչ ճշմարիտ:

Լ. Ջարմանալի է, որ ամեն ոք, ուր էլ գտնվի, պարսավում է հպարտությունը՝ որպես չար ու վնասակար բան, և գովում խոնարհությունը՝ որպես բարի և օգտակար: Հապա ի՞նչն է պատճառը, որ միշտ և ամեն տեղ հպարտները բազում են, իսկ խոնարհները՝ սակավ: Սրանք թերևս չունեն բարու և չարի

ճանաչումը: Քանզի մեծ նախատինք է մտավոր բնությանը, բարին ու չարը ճանաչելով, բարին թողնել ու չարիք գործել: Բայց թվում է, թե անպատեհ է կարծել, թե տակավին մարդիկ չեն կարողանում բարին ու չարը ճանաչել՝ անթիվ օրինակներից և Աստվածային Գրքի ու իմաստունների խրատների քննունդից հետո, որոնք միաբան ուսուցանում են, թե հպարտությունը չար է, և խոնարհությունը՝ բարի:

Ուրեմն՝ քաջահայտ է, որ մարդիկ կամ բնության տկարությունից, կամ հոգու զորեղ կրքերից և կամ բանսարկուի գրգռումով են սահում դեպի հպարտությունը, կամ էլ գուցե խորշում են խոնարհության անշուք ու ցածուն կերպարանքից, որպեսզի նվաստ չերևան:

Իսկ արդ, բնության տկարությունից մեկն առավել պիտի խոնարհվի, քան հպարտանա: Տկար եմ ասում նրան, ով չի կարողանում կշռել իր կարողությունը և բարեկարգությամբ վարել մտքի ու կամքի գործառնությունները, մարմնի ուժն ու զորությունը, իշխանությունն ու հարստությունը: Քանզի հնարավոր է, որ ուրիշներն իրենից ավելի շատ ունենան բնության ու բախտի այս բոլոր բարիքները: Իսկ նա, ով գիտի, որ ուրիշները շատ բանով գերազանցում են իրեն, իսկույն սկսում է խոնարհվել իր հպարտությունից, որովհետև խելագարություն է ընդդեմ սեփական ճանաչման հանդգնելը:

Դարձյալ՝ վայել է, որ մեկը չիմանա կրքերի զորության մասին: Որովհետև զգայական բաղձանքի կրքերը շատ անգամ մթազնում են բանականության լույսը, թյուրում ուղիղ կամքը և մոռանալ տալիս անծի տկարությունը: Մանավանդ որ բնական կամ ստացական բարիքները երբեմն հպարտության պատճառ են դառնում: Ուստի եթե մեկը սրատես աչքով դիտի նախապես իր շուրջ տեղի ունեցած դեպքերն ու այն վիճակը, որում այժմ գտնվում է, և նրանցով գուշակի ապագան, իսկույն կխոնարհվի:

Դարձյալ՝ պետք է մտքում անմոռաց պահել բանսարկուի չարիմաց հնարները, որ առավել ջանադիր է մարդկանց հորդորելու դեպի հպարտություն, քան դեպի այլ մոլություններ, և զգուշանալ հպարտությունից: Որովհետև այս ախտը հեշտությամբ է դեպի ներս, հոգու մեջ սպրդում, դժվարությամբ ճանաչվում, շատերի մեջ անբուժելի մնում, և եթե ուրիշ մոլություններ մարդուն մեղավոր են դարձնում, սա ամբողջովին դև է դարձնում: Ուստի մարդ ունի մեծ արթնության կարիք՝ չհետևելու դևի թելադրությանը, որովհետև դևը, բազմահնար խորամանկությամբ մարդու ունեցած բարեմասնություններն ուրիշների ունեցածից ավելի մեծ, չքնաղ ու շատ ցույց տալով, հպարտանալ է տալիս, այսինքն՝ արհամարհել ուրիշների բարեմասնություններն ու միայն սեփականը սիրել, միայն այն հավանել:

Դարձյալ՝ մարդը պարտավոր է ճանաչել ու իմանալ պանծալի խոնարհության պատվի ու փառքի բարձրությունը և խոնարհների նվաստ կերպարանքի պատճառով, իբրև արհամարհելի բան, չարհամարհել ու չատել նրա չնաշխարհիկ պատվականությունը: Որովհետև թեպետ խոնարհը մոլիների առաջ անշուք ու անմիտ է թվում, բայց առաքինիների առաջ փառաշուք ու մեծիմաստ է:

Որովհետև մարդու ճշմարիտ փառքն ու իմաստությունը վայելուչն ու օգտակարը ճանաչելն ու դրանք ձեռք բերելն է: Իսկ ի՞նչն է ավելի վայելուչ ու օգտակար մարդուն, քան ամենքին սիրելի լինելն ու ուրախամիտ ապրելը: Եվ ահա խոնարհը բոլոր բարիներին սիրելի է և խաղաղ ու ուրախ կյանք է վարում: Ուստի ով իրեն սիրում է և կամենում է հարգի ու պատվական լինել Աստծու և մարդկանց առաջ, թող խոնարհամիտ լինի:

ԼԱ. Ավելի մեծ մեղք չկա, քան հպարտությունը, որովհետև իր հետ շղթայված ունի բոլոր մեծամեծ մոլությունները: Քանի որ հպարտը չի կամենում, որ այլ մեկն իրենից բարձր լինի, այդ պատճառով էլ նախանձոտ է լինում, և չտանելով ուրիշների հաջողությունները՝ բարկությամբ է վառվում, չկարողանալով նրանց հաջողություններին արգելք լինել՝ հուսալքվում ու ծուլության մեջ է ընկնում: Իսկ քանի որ ծուլն այլևս շահելու հույս չունի, դառնում է ագահ: Ագահությամբ ձեռք բերված դրամը գրգռում է նրան ուտել-խմելու, և նա որկրամուլ է դառնում: Եվ բազում կերակուրներից ու ըմպելիքներից բորբոքվում է ցանկության ախտը, և նա դառնում է բղջախոհ:

Ուրեմն՝ հպարտությունն է բոլոր զլխավոր մոլությունների մայրն ու դայակը, նրանից են առաջ գալիս մեղքերի անթվելի ծնունդները, որոնցից մեկն իսկ բավական է մարդուն կորստյան հասցնելու: Ուստի պետք է հպարտությունից ավելի փախչել, քան մահաբեր թոյնից:

ԼԲ. Հպարտը ցանկանում է ամենքից պատիվ ստանալ, բայց ամենքից անարգվում է. որովհետև



ով ատելի է Աստծուն, ատելի է ամենքին: Հպարտը կամենում է, որ ամեն ոք իրեն ծառայի, իսկ ոչ ոք չի կարող այս տանել, ուստի ամենքն ատում են հպարտին:

14. Հպարտն իրավամբ է կոչվում տգետ ու խելագար, որովհետև տգետ ու խելագար անձանց պես իր չափը չի ճանաչում: Բայց սրանց միջև տարբերությունն այն է, որ խելագարը ոչ միայն անմեղադրելի է, այլև ցավակցության արժանի, տգետը թեպետև մեղադրելի է, որ չջանաց իրեն ճանաչել, բայց ներման տեղ ունի, որովհետև ստույգ չարությամբ չի գործում, այլ անգիտությամբ, իսկ հպարտը, որ կամովին է տգիտանում ու խելագարվում և ամբարտավան մտքով չի կամենում իր չափը ճանաչել, առավել մեղադրելի է և դատապարտության արժանի:

17. Հպարտը, ինչպես նաև ամբարտավանը՝ կազմված «ամբ», «արտ», «վան» բառերից, հարմարապես ստուգաբանվում են «դեպի ամպի կողմը՝ երկրից դուրս (արտաքս) վանված»: Որովհետև ամբարտավանը հավատում է, թե բարձրացել է մինչև ամպերը՝ իր սկզբնահայր Սաղայելի օրինակով, որ ասում էր. «Իմ աթոռն ամպերի մեջ կդնեն և Բարձրյալին կնմանվեն» (*տե՛ս Եսայի ԺՂ 13-14*): Այդ պատճառով էլ հպարտների անկումը սոսկալի է: Որովհետև ով սաստիկ բարձրությունից է ընկնում, խիստ մանր է փշրվում:

Քանի որ այս դաժան ախտը հատուկ է մտքին, և քանի որ միտքը, աննյութ ու հոգեղեն լինելով, նյութական բաներից միշտ օտարանալ է ձգտում, և թեպետ բանական հոգին նյութական մարմնի մեջ է բնակվում, որովհետև մարմինն իր գոյացական տեսակն է, բայց միշտ փափագում է գերազանցել նրան, երբեմն հպարտներն այնքան են հանդըզնում, որ իրենց մարդուց վեր են համարում: Սրանով վաղուց ախտացավ և Սաղայելը, մինչև որ իրեն իբրև անմարմին ու իմացական գոյացություն տեսավ:

Սակայն հպարտները կարող են ամենքից գերազանց լինել և բարձրագույն պատվի բարձրանալ՝ պահելով ճշմարտությունը, այսինքն՝ խոնարհությունը: Որովհետև ճշմարտությունն այս է, որ մեկն իրեն ճանաչում է այնպիսին, ինչպիսին կա, այսինքն՝ արարած է, մահկանացու, տկար, ինքնուրույն կերպով գոյություն ունենալու անընդունակ և իր ապրելուն անհրաժեշտ բաներն ուրիշից ունի:

Արդարև, այս ամենը մտածելով՝ հպարտը ճանաչում է իրեն, ճանաչում նաև Աստծուն: Ով ճանաչում է Աստծուն, ձգտում է սիրել նրան, որովհետև սերը ճանաչված առարկայի հետ ծանոթությունից է ծնվում: Ով Աստծուն սիրում է, միանում է նրա հետ, որովհետև սերը սիրողին սիրելիի հետ միավորողն է: Եվ ով միանում է Աստծու հետ, գերագույն պատվի է բարձրանում: Եվ ահա ով փափագում էր մարդուց ու նյութական գոյացություններից վեր լինել, հոգու խոնարհությամբ հասնում է իր փափագին և Աստծու հրեշտակի պես լինում: Ուրեմն թող հպարտները փոխեն իրենց կարծիքն ու խոնարհ լինեն, սիրեն Աստծուն և փառավորվեն Նրա կողմից, այլապես դժոխքում պիտի կրեն իրենց սկզբնահոր՝ Սաղայելի պատիժը:

16. Հպարտը, ցանկանալով ամենքից փառք ու պատիվ ստանալ, երբ ինչ-որ բարիք է գործում հասարակության օգտին, ջանում է ամենքի առաջ հրապարակել: Եվ երբ ամենքն ականապիշ նայում են նրան ու գովում, էլ՝ ավելի քաջապիճ արիությամբ է մղվում օգտակար գործերի, որպեսզի համբավն առավել տարածվի, և ինքը փքվելով մեծամտանա: Իսկ երբ մարդկանց լեզուները դադարում են նրան գովելուց, իսկույն վիստվելով թուլանում է գործի մեջ, որովհետև նրա քաջության խթանը մարդկանց գովեստներն են: Ուստի երբ գովեստները դադարում են, դադարում է նաև ինքը և այս պատճառով Աստծու առաջ անվարձ է մնում:

12. Հպարտությունը, դիվական ախտ լինելով, Աստծուն ատելի է և մարդկանց այնքան զարշելի, որ իրենք իսկ հպարտները հանձն չեն առնում խոստովանել, թե հպարտ են: Իսկ ինչո՞ւ են հպարտանում. պարզ է, որ չեն զգում իրենց հպարտանալը, որովհետև մտքով կույր են: Եթե մտքով կույր չլինեին, չէին կարողանա կամքով հպարտանալ, որովհետև հպարտանալը կամքի գործ է, նրանով, որ մարդ ցանկանում է ավելի բարձր երևալ, քան իր բոլոր վիճակակիցները: Սակայն կամքը պիտի հետևի բանականության լույսին, այսինքն՝ մտքին: Եթե միտքը կույր է և կամքին չի առաջնորդում անխտոր ընթանալու, կամքն ըստ իր կամենալու սահում է ամեն տեսակ վտանգի մեջ, որովհետև չի կարողանում վայելն ընտրել: Ուստի հոգևոր բժիշկները պարտավոր են նախ լուսավորել հպարտների միտ-

քը, որպեսզի կարողանան ճանաչել իրենց մոլությունները և խորշեն հպարտությունից, այլապես ախտն օրըստօրե կգորանա, մինչև որ հպարտներն իսպառ կորչեն: Որովհետև հպարտներին հատուկ է ոչինչ կամ նվազ համարել իրենց ունեցած պատիվը և ցանկանալ ստանալ այն, ինչ չունեն՝ ըստ այսմ. «Քեզ ատողների ամբարտավանությունն անընդհատ պիտի աճի» (Սաղմ. 49 23):

ԼԷ. Հպարտությունը մի մահաբեր ախտ է, որի հանդեպ գրեթե բնածին հակում ունեն ազնվականներն ու հարուստները: Բայց զարմանալի է, թե ինչու են նրանով անմտաբար հիվանդանում նաև աղքատներն ու նվաստները: Անմիտ սիրամարգը, նայելով իր տզեղ ոտքերին, փքվելուց դադարում է, իսկ սա, մտավոր լինելով, պարզվում է՝ անբան կենդանուց ավելի անմիտ է, որովհետև ամեն օր իր աղքատությունը տեսնելով՝ տակավին հպարտանում ու բարձրամտանում է, որով իբրև մի ծիծաղելի հրեշ՝ ամենքի կողմից ծանակվում է:

ԼԸ. Եթե հպարտը մտքով երևակայեր, թե աշխարհում միայն Աստվածն ու ինքն են և ուրիշ ոչ ոք, և աշխարհն ու նրանում եղող ամեն ինչ Աստված միայն իր՝ մարդու համար է ստեղծել, միայն իր մասին է հոգում և իր բոլոր մտքերն ու գործերը քննում, բնավ չէր մեծամտանա: Որովհետև այդժամ ո՞ւմ պիտի կարողանար գերազանցել, եթե ոչ Աստծուն, քանի որ այլ մեկը չէր լինի երկրի վրա, որին կարծեր, թե գերազանցում է: Բայց անհնար է, որ միտք ունեցող արարածն այնքան խելագարվի, որ իրեն Աստծուց բարձր համարի: Եվ այսպես ոչ միայն հպարտությունից, այլև բոլոր մոլություններից ու մեղքերից մարդը հեռու կգտնվեր, ոչ ոքի չէր վնասի և ոչ ոքից չէր տրտնջա, որովհետև Աստծուց բացի ոչ ոքի չէր ճանաչի, թե կա աշխարհում:

«Մարդու ամբարտավանության սկիզբը  
նրա ապստամբելն է Տիրոջ դեմ,  
նրա սրտի ստահակությունը՝ իր Արարչի դեմ» (Սիրաք Ժ 14):

«Ի՞նչ շահ բերեց մեզ հպարտությունը, & ի՞նչ նպաստ բերեց մեզ ամբարտավանությամբ պարծենալը» (Իմաստ. Ե 8):

«Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի» (Ղուկ. ԺԸ 14):

## Գ Լ ՈՒՆ Գ

## Շ Ռ Ա Յ Լ ՈՒԹ Յ ՈՒՆ

Ա. Ճշմարիտ հարստությունը հարկավոր բաներով բավարարվելն է՝ մարմինը սնելու և ծածկելու համար: Շատերը կան, որ անհրաժեշտ բաներով չբավարարվելով՝ իրենց ունեցվածքը վատնում են մեծամեծ ապարանքներ կառուցելու և ընտանիքի ու կահ-կարասու ավելորդ զարդերի վրա, իրենց գանձերը սպառելով անպիտան վայելքների վրա՝ կորցնում են նաև պիտանի բաները, որ ունեին կյանքն ապահովելու համար, և ընկնում են հետին չքավորության ու անարգության մեջ:

Բ. Մարդիկ այնժամ են ճանաչում ավելորդ բաները, երբ բավարարվում են անհրաժեշտով, որովհետև ավելորդ բաները ոչ ոքի հարուստ չեն դարձնում, այլ սնափառ ու շռայլ: Իսկ իմաստուն մարդը սովոր է բնությանը հարկավոր բաներով բավարարվել, փախչում է ավելորդից, որը մարդկանց սնափառությունը ստեղծեց, միշտ խաղաղ ու անվրդով է և թշնամիներից վախ չունի:

Գ. Ջգեստների ու կահ-կարասու թանկարժեք ու ավելորդ զարդերը և կերակուրների ու ըմպելիք-

ների բազմատեսակ պատրաստությունները կործանում են հարուստների տունը և հասարակությանն անթիվ չարիքներ պատճառում: Որովհետև միջակները ցանկանում ու ջանք են գործադրում շքեղությամբ նմանվել հարուստներին, իսկ նվաստները՝ միջակներին: Հարուստները, դա տեսնելով, սկսում են էլ ավելի շատացնել իրենց վայելքները և ընկնում են չափազանց ծախսերի մեջ, որպեսզի նրանցից էլ ավելի բարձր երևան: Միջակներն էլ ջանում են նմանվել նրանց, մի մասը սնափառության այստից դրդված, մի մասն էլ՝ անարգ ամոթից, և նվաստներն էլ խելագարված ջանում են նրանց ընթացքին հետևել:

Եվ հարուստները, շքեղություններն այսպես ավելացնելով, պակասեցնում են իրենց հարստությունը, միջակները հետզհետե տնանկ դառնում, իսկ նվաստներն իսպառ չքավորում են ու ընկնում հուսահատության մեջ: Եվ առհասարակ ամենքը սկսում են անվայել միջոցներով հագեցնել իրենց կարիքները՝ անիրավում են, զրկում, ստում, խաբում և գործում այլ բազում չարիքներ՝ ի վնաս իրենց և ընկերոջ: Եվ այս բոլոր չարիքների ու վնասի աղբյուրը սին փառասիրության բաղձանքն է:

Արդարև, իմաստուններից ու առաքինիներից ոմանք ամեն օր հալումաշ են լինում այդ ամենը տեսնելով և կամենում վերացնել նրանց վնասակար սովորությունները՝ սահմանելով լավ օրենքներ, հասարակության յուրաքանչյուր անդամին իր չափի մեջ պահելու համար: Բայց չեն հաջողում, որովհետև չափի մեջ մնալը դեմ է մոլեկան սովորությանը, որ վաղուց արմատացել է նրանցում: Որովհետև ամենքը բնական մի բերումով ցանկանում են դրամ ձեռք բերել՝ սնափառության անտեղի ծախսերը հոգալու համար, և ուրիշ բան չեն խորհում, եթե ոչ հարստանալ և ուրիշներից ավելի փառավոր երևալ:

Այս ախտն այնքան է բնավորվել նրանց մեջ, որ նույնիսկ նրանք, որ անհրաժեշտ բաներից զուրկ են, ջանք են գործադրում փառաշուք երևալ և դրամ փոխ առնելով՝ ծախսում են ավելորդ զարդերի ու կերակուրների վրա: Իսկ ով ջանում է բարեկարգ կենցաղավարությամբ ուղղել ու չափավորել իր ավելորդ զարդերի կիրառումն ու ծախսերը, ամենքից արհամարհվում է իբրև չքավոր կամ կծօի: Ուստի հասարակության վարքի այս մահաբեր ժանտախտը բուժելու համար պետք է փնտրել ու գտնել մի իմաստուն ու հայրենասեր ղեկավարի, որ խոհեմ խրատներով, բարեկարգ կանոնադրությամբ և իր կենցաղավարության օրինակներով կարողանա ուղղել ու բարեկարգել:

Դ. Դժվարին է հաղթել չար սովորությանը, որ բնության տկարության պատճառով արմատացել է, բայց այն իսպառ անհաղթելի չէ, մարդ կարող է հաղթել ու վտարել, եթե անսա իմաստունների խրատներին ու արի ոգով շարունակ ջանք գործադրի:

Ե. Որևէ հարուստ, եթե ունենում է կյանքի ապահովմանն ու դյուրությանն անհրաժեշտ ամեն ինչ, բայց չի իմանում դրանք բարեկարգությամբ վայելել, այդ բոլոր բարիքները շռայլությամբ պակասում են, և ինքը նախատելի ու թշվառ է դառնում: Որովհետև նրան ի՞նչ օգուտ է ճոխությունը, եթե ըստ պատշաճի գործածել չգիտի:

Զ. Իշխանի փառքն ու հարստությունը հասարակությանը տված օգուտն է: Բայց կան ոմանք, որ կարծում են, թե այն հաստատված է համադամ կերակուրների և տեսակ-տեսակ ըմպելիքների մեծաշուք պատրաստության մեջ, և այլևս չեն գգում, որ դրանով ոչ միայն դյուրապատրաստ են ընկնելու մեղքերի մեջ, այլև կորցնում են մարմնի ուժն ու առողջությունը և արագացնում մահը: Բազմախորտիկ սեղանը հիվանդությունների շտեմարան է ու կյանքի թունավորիչ: Պարզ ու չափավոր սեղանը կերակուրը համեղ է դարձնում, մարմինը զորացնում է և միտքը լուսավորում:

Է. Ով կարող է չափավոր աշխատանքով ձեռք բերել հարկավոր բաներն իր գավառում, անմիտ տանջանք է նրան դեպի հեռավոր երկրորներ ճանապարհ կտրելը՝ ավելորդ բաներ ձեռք բերելու, և օտարության մեջ վշտեր կրելը:

Ը. Մարդն ավելի տանջվում է իր կրքերից ու ցանկություններից, քան որևէ բան ձեռք բերելուց: Քանզի մի բան ցանկանալով՝ անհանգիստ տառապում է, մինչև ձեռք է բերում: Դրանից հետո նրա ցանկությունը փոխվում է ուրիշ բան ձեռք բերելու, և երբ մարդ դրան հասնում է, սկսում է մեկ այլ բան ցանկանալ, և մարդու ցանկությունն անդադար փոփոխվում է, մարդ նորանոր բաներ է ցանկանում և այսպես իր կրքերից տանջվում:

Թ. Ճշմարիտ փառքն ու հարստությունն առաքինության ու բարերարության մեջ են: Ուստի մեծամեծները պիտի փախչեն սնապաճույճ շքեղությունից և միայն առաքինություն ու բարերարություն ունենան, որովհետև առաքինի գործերն ու ազգօգուտ բարերարություններն են իշխանավորի, նրա տան ու տոհմի ճշմարիտ զարդերն ու փառքը: Այս տեսնելով՝ հասարակությունը մղվում է իշխանավորին նմանվելու:

Ժ. Ով կամենում է բարձրահարկ տուն կառուցել, թող իր սիրտը լայն պահի. որովհետև ում սիրտը լայն է, նեղ բնակարանն ընդարձակ է դառնում նրա համար, իսկ նեղսիրտ մարդուն այս բովանդակ աշխարհն էլ փոքր է թվում:

ժԱ. Մարդիկ, որոնք փառասիրությունից ու սին հարստությունից հափշտակված, չեն ախորժում խրատ ու հանդիմանություն լսել, մեծ սխալ են գործում, որովհետև կամենալով իրենց ունեցած մի թերությունը ծածկել՝ սահում են շատի մեջ և անուղղելի արարքներ գործում ի վնաս իրենց և ցեղակիցների:

ԺԲ. Շռայլությունը նրանց՝ շռայլներին, բավական պատիժ կլիներ, եթե նույնիսկ դրա համար Աստուծուց կամ մարդկանցից պատիժ չտրվեր նրանց, որովհետև մի օրում ինքնըստինքյան կպակասեր նրանց գանձը, կցամաքեր շռայլության աղբյուրը, կդառնային հեգ ու թշվառ և մի պատառ հացի կարոտ:

ԺԳ. Շռայլը որքան առավել է դրամ վատնում, այնքան առավել պատիվ է ստանում դրամը ստացողներից: Բայց երբ դրամը սպառվում է, իսկույն պատիվը չքանում է, և շռայլն ընկնում է անարգ վիճակի մեջ:

ԺԴ. Շռայլությունն աղքատության մայր ու դայակ է և բազմադիմի մոլությունների ու վնասների պատճառ: Շռայլ մեկը, որ իրեն նախատինք է համարում հարկավոր բաներով բավարարվելը, արդարև ջանում է հնարներ գտնել դրամ ձեռք բերելու, որպեսզի կարողանա ավելորդ ծախսերով վատնել՝ իր մոլեկան բաղձանքները կատարելու համար, ուստի սկսում է խաբել, կողոպտել, գրկել ու անիրավել:

Ուրեմն՝ շռայլը ոչ միայն իրեն է թշնամի, որ անմտաբար վատնում է իր ժառանգությունն ու ստացվածքը և աղքատության մեջ ընկնում, այլև ուրիշներին. որովհետև խարդախությամբ հափշտակում է նրանց ունեցվածքն ու դրամը, անտեղի ծախսելով՝ չի կարողանում վերադարձնել և այս կերպ մեծ վնաս է հասցնում շատերին: Ուստի մեծ բարիք է գործում հասարակությանը, ով չափավորում և ուղղում է շռայլին կամ վտարում մարդկանց միջավայրից:

«Որդյակ, անձնատուր մի՛ եղիր հեշտասիրությամբ  
& թշնամիներից ոտնակոխ չես լինի:

Մի՛ ուրախացիր փափուկ կյանքով & մի՛ կապվիր դրա հետ:  
Գրավ դրած & պարտք վերցրած փողերով մի՛ աղքատացիր» (Սիրաք ԺԸ 30-33):

«Գիտեմ, թե ինչ պետք է անեմ. կքանդեմ իմ շտեմարանները & ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը  
& իմ ամբողջ բարիքները ու ինքս ինձ կասեմ.  
«Ո՛վ մարդ, կե՛ր, խմի՛ր & ուրախ եղի՛ր» (Ղուկ. ԺԲ 18):

**Գ Լ ՈՒՆ Դ**

**Ն Ա Ն Ա Ն Ձ**

Ա. Ինչպես որ ստվերն է առաջ գալիս մարմնի վրա արև ընկնելուց, այդպես և նախանձը ծնվում է

առաքինի մարդու բարի գործերի հաջողումից: Ուստի ով կամենում է փշրել նախանձոտ մարդու ա-տամները և նրան սրտաթափ անել ու մեջքը կոտրել, թող ջանա այլ ավելի մեծ առաքինությունների մեջ թևակոխել և ամենքի մեջ բարի համբավ ձեռք բերել, որովհետև առաքինագործ մարդու բարի համբավը նախանձոտ մարդու կյանքի դահիճն է:

Բ. Նախանձոտ մարդիկ ավելի չար կերպով խածատում են ազգակիցներին ու երախտավորներին, քան օտարներին. որովհետև այլ ազգերի կողմից գովությամբ հռչակվող բարի մարդիկ իրենց ազ-գի նախանձոտ մարդկանցից, որոնց մեծամեծ բարիքներ են գործել, առանց պատճառի զուր բամբաս-վում ու թշնամանվում են:

Գ. Չկա հոգուտ հասարակության արված մի մեծագործություն, որ կարողանա զերծ մնալ նախան-ձոտ մարդկանց թունավոր նետերից: Եթե իշխանի գործը մեծարժեք ու օգտակար է, նախանձը գործո-ղին վատաբանում է՝ ասելով. «Ափսոս, որ սա գործն արեց ոչ թե Աստծու փառքի համար, այլ որպեսզի մարդկանցից փառք որսա»: Իսկ եթե գործը չափավոր է, գործն է արհամարհում՝ ասելով. «Վայ սրան, որի անունն ավելի մեծ է, քան իր գործը. որովհետև եթե սրա տեղն ուրիշը լիներ, ամենայն հավանա-կանությամբ այս գործից ավելի մեծ ու օգտակար գործեր կաներ»:

Իսկ եթե ժամանակի տարադեպ արկածներից կամ թշնամիների թելադրությամբ որևէ վտանգ հե-տևի, ո՞ր սանձը կարող է նախանձոտ մարդու ապերասան լեզուն զսպել. պատճառ չեղող բանը պատ-ճառի տեղ դնելով՝ ամբողջ վնասը թափում է բարեգործի գլխին ու ասում. «Այս բոլոր չարիքների սկիզբն ու պատճառը սա՛ եղավ»:

Դ. Ով բնության բարիքներ ունի՝ գեղեցկություն, խելամտություն, ճարտարախոսություն, կամ բախ-տի բարիքներ՝ իշխանություն, հարստություն ու համբավ, երբեք չի կարող իրեն զերծ պահել նախան-ձոտ մարդու հարվածներից և անսպի մնալ նրա թունավոր ժանիքներից: Բայց հնարավոր է նրա ձեռ-քերը կապել նրան բարիք գործելով և նրա ատամները փշրել՝ բնության ու բախտի բարիքներին ավե-լացնելով նաև բարոյական առաքինությունների մեծամեծ բարիքները:

Թեպետ այս ամենով նրա ձեռքերը կաշկանդվում են, ու ատամները՝ փշրվում, բայց դեռ արծակ է մնում լեզուն, որով չի դադարում չարախոսելուց, գուցե ավելի, քան առաջ, և քանի որ խածատելու համար ատամներ չունի, սրտի գայրոյթից չարություններ է խոսում ու վատ համբավ տարածում:

Բայց այդ ամենը վերջում իր պատիժն է դառնում. նախանձի հուրը կիզում է նրա երկկամներն ու սիրտը, կյանքը կարճանում է, և հավիտենական հուրն էլ անվախճան կյանքով պիտի այրի նրա հոգին ու մարմինը: Ահա սա է նախանձոտ մարդու ջանքերի ու գործերի արժանի հատուցումը. որովհետև ինչով որ մեղանչում է մեկը, նույնով և պատժվում է:

Ե. Նախանձոտ մարդը շատ անգամ այն աստիճան հոռության է հասնում, որ բարեգործի հանդեպ ունեցած ատելությունից խափանում է հասարակության բարին: Եվ թեպետ իր դիտավորությունը հա-սարակության բարին խափանելը չէ, այլ միայն բարերարի համբավը, բայց քանի որ վերացնելով պատճառը՝ վերացնում է և գործը, ապա և նախանձոտ մարդը, կամենալով խափանել բարերարի փառքն ու համբավը, խափանում է և բարի գործը: Սրան պատշաճում է Տիրոջ այն խոսքը, թե՝ «Դուք չեք մտնում և մտնողներին էլ արգելում եք» (*Ղուկ. ԺԱ 52*):

Զ. Ի՞նչն է արեգակից ավելի լուսավոր. բայց չեն պակասում ամպերը՝ մթագնելու նրա լույսը: Ի՞նչն է առաքինիից ավելի մեծահարգ. բայց չեն պակասում նախանձները՝ նվազեցնելու նրա հարգը:

Ինչպես գնդակը, անկյուն չունենալով, անդադար գլորվում է, այսպես և նախանձոտ մարդը, խիղճ չունենալով, միշտ քննադատում է ուրիշների բարի գործերը:

Է. Ով անհավան է ուրիշների հաջողություններին, երևում է, որ չարաբար ու կարոտ մեկն է: Եվ քանի որ նախանձոտ մարդը չի կամենում, որ որևէ մեկը որևէ բարի բան ունենա, իրավացի է, որ ինքն էլ կարիքավոր ու ամեն բարիքից զուրկ լինի:

Ը. Նախանձոտ մարդն առանց տանջողի տանջվում է, երբ լսում է ուրիշի հաջողությունների մա-սին: Թեև կրակը երբեմն մոխրով է ծածկվում, սակայն չի դադարում կրակ լինելուց, այլ խառնվելիս արծակում է իր կայծերը: Նախանձոտ մարդը, թեև երբեմն բարեսրտության քողի տակ ծածկում է իր

ժանտահոտությունը, սակայն ներսում՝ հոգու մեջ, պահում է նախանձի բոցը, քանզի երբ լսում կամ տեսնում է մեկի հաջողությունները, իսկույն մախանքից գրգռվելով շանթահարվում է և անշիջանելի հրով վառվելով՝ տոչորվում:

Թ. Նախանձոտ մարդը գուցե չգիտի, թե որքան չար է ուրիշների բարեբախտությունից իր տրտմելն ու նրանց դժբախտությունների վրա ուրախանալը: Բայց երբ մեկ այլ նախանձոտ մարդ անում է նրան նույնը, ինչ նա արեց ուրիշներին, այնժամ ճանաչում է դառնությունն այն չարիքների, որ սովոր էր անել: Որովհետև ինչ անում է մեկը, նույնն էլ կկրի:

ժ. Երբ նախանձոտ մարդն ուրախանում է քո ծախորդությունների վրա, դու մի՛ տրտմիր. կգա ժամանակ, երբ դու կուրախանաս, և նա կտրտմի, որովհետև ինչ չափով չափում է մեկը, նույնով կչափվի նրան:

ժԱ. Ով բարիքներից անմասն է, նախանձոտներից ազատ է: Իսկ ով բարիքներ է գործում, պիտի համբերի նրանց չարակնությանը. որովհետև եթե մեկը չի կամենում նախանձողներ ունենալ, պիտի բարի գործեր չկատարի: Բայց նախընտրելի է լինել բարի և ունենալ նախանձողներ, քան բարիքներից զուրկ և նախանձողներից ազատ լինել:

«Խանդը դաժան է դժոխքի նման,  
նրա թռիչքը նման է հրի բոցի թռիչքին» (Երգ Ը 6):

«Մահը աշխարհ է եկել բանսարկուի նախանձով» (Իմաստ. Բ 24):

«Ավելի չար մարդ չկա, քան նա, ով չարակամ է ինքն իր նկատմամբ, & նրա չարության հատուցումն է» (Սիրաք ԺԴ 6):

## Գ Լ ՈՒՆ Ե

## Ա Պ Ե Ր Ա Ն Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ապերախտությունը մի այլանդակ գազանություն է, որ ոտնակոխ է անում Աստծու և մարդկանց բարերարությունը, և քանի որ ընդունած խնամքը չի ճանաչում, չի կարող որևէ մեկից խնամք գտնել:

Բ. Եթե մեկը, նեղության վտանգից ազատվելով, իր փրկությունն Աստծու բարերարության արդյունք չճանաչի և երախտագետ մտքով շնորհակալ չլինի նրանից, այլ փրկությունը միայն իր զորությանը վերագրի, անշուշտ կկրի իր ապերախտության պատիժը: Թեպետ Աստված երբեմն այսպիսիներին թույլ է տալիս պատուհասից գերծ մնալ, բայց թող այն չհամարվի նրանց համար բարի բան, որովհետև ավելի ծանր վրեժխնդրություն է պահվում նրանց, որը պիտի ուրիշ անգամ կրեն:

Գ. Որքան առավել մեծ է երախտիքը, այնքան առավել ապաշնորհ է երախտամոռը. որովհետև ըստ երախտիքի չափի է կշռվում ապերախտի հանցավորությունը:

Դ. Ով բարերարին երախտահատույց լինել կարող է, բայց զլանում է, անարժան է գթության. որովհետև ով իր պարտքը չի հատուցում, երբ կարող է, արժանի է պատժի, որն ընդունելիս կկամենա պարտքը հատուցել, բայց չի կարողանա:

Ե. Ով չգիտի, թե բարերարությունն ինչ է, չի կարող երախտահատույց լինել, և ով բարերարությունն իր օգտի համար չի գործածում, բարերարի ձեռքերը կապում է:

Զ. Սրանից ավելի մեծ ի՞նչ ապերախտություն կա, որ մարդ շատ տարիներ մեկից բարի պարգևներ ու իր ցանկությունների կատարումն ընդունի և երբ նա մի դույզն ծառայություն խնդրի, սա տրտնջա և չկամենա դրա կատարումը հոժարությամբ հանձն առնել:

Այսպիսիք նրանք են, որ իրենց մանկությունից վայելում են Աստու պարգևները, նրա աննախանձ բարերարությունից ընդունել են իրենց պետք եղածը, մինևույն ժամանակ կյանքի ու հաճույքների համար վայելչություններ, բայց երբ Աստված թույլ է տալիս, որ մի փոքր փորձություն հասնի իրենց, գանգատվում են երկնքից ու տարրերից, իբր անգթությամբ են իրենց հետ վարվել, և չեն կամենում համբերել ու հոժարությամբ տանել. ցանկանում են միշտ վայելել իրենց տիրոջ բազմապատիկ շնորհները և համաձայն չեն գոնե միառժամանակ վշտանալ, երբ Աստված իրենց խրատում է:

Է. Որքան ավելի բարձր պատվի է մեկը հասնում, այնքան ավելի է պարտավորվում երախտահատույց լինել իր բարերար Աստծուն. որովհետև Աստված ըստ պարգևների չափի տոկոսներ է պահանջում ըստ այսմ. «Ում շատ տրվեց, նրանից շատ կպահանջվի» (Պուկ. ԺԲ 48):

Ուստի յուրաքանչյուրը պարտավոր է Աստծուց իր ընդունած պատվի ու հարստության չափի ու աստիճանի համաձայն՝ երախտագետ մտքով բարի գործեր հատուցել Աստծուն կամ այդ պատվից ու հարստությունից հրաժարվել:

«Հատուցեցին ինձ չար՝ բարու փոխարեն,  
& իմ սիրո դիմաց՝ ատելություն» (Սաղմ. ԸԸ 5):

«Ով բարիքի փոխարեն չարիք է հատուցում,  
չարը չի պակասի նրա տնից» (Առակ. ԺԷ 13):

## Գ Լ ՈՒՆ Զ

## Բ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Բարկությունն անվանել բոլոր չարիքների աղբյուր անտեղի չէ, որովհետև չկա չարիք, որ բարկությունից առաջ չգա՝ հայիոյանք, հարված, սպանություն, գերություն, ունեցվածքի կորուստ, քաղաքների ավերում, խաղաղության, սիրո և բոլոր բարիքների վերացում. մի խոսքով՝ բարկությունը մարդկային ցեղի ժանտախտ ու դժոխքի դուռ է:

Բ. Բարկությունը հոգու կիրք է, որի պատճառը սրտի շուրջ արյան եռքն է, որի չափը երբ անցնում է, մարդու մեջ մեծամեծ վնասներ են գործվում, մինչև իսկ երակները պայթելու և տարածած մահվան հասնելու աստիճան: Որովհետև «բարկ» բառը նշանակում է սաստիկ ու ազդու, ուստի առած կա, թե բարկ քացախն իր ամանին վնաս է: Այս պատճառով էլ բժիշկները մարդկանց պատվիրում են սաստիկ բարկությունից զգուշանալ, քանզի դրանից առողջը հիվանդանում է, և հիվանդը՝ մեռնում, երբեմն էլ բարկությունը հիվանդանալու ժամանակ ու տեղ չի թողնում, այլ իսկույն նույն տեղում, իբրև անողորմ դահիճ, կյանքից գրկում:

Գ. Բարկացողը ոչ միայն իրեն է վնասում, այլև այն ընկերոջը, որի վրա բարկանում է. որովհետև նման է խախտուտ որմի, որը փլչելիս ոչ միայն ինքն է փշրվում, այլև խորտակում ու փշրում է նրանց, ում վրա ընկնում է: Շատ անգամ բարկացողն այնքան է խելագարվում, որ ինքն իր վրա է հարձակվում ու իրեն կորստյան մատնում:

Դ. Մոլեկան բարկության տգեղությունը լավ ճանաչում է նա, ով այդ ժամանակ իր դեմքը նայում է հայելու մեջ և կամ մտաբերում սաստիկ բարկացածների կերպարանքը: Այդժամ իմանալով, թե որքան տգեղ ու գարշելի է բարկության ախտը՝ զգուշանում է նրան տեղի տալ և ավելի լավ է համարում հեզությամբ մեռնելը, քան բարկությամբ ապրելը:

Ե. Բարկությունը գինով արբեցության պես կորցնել է տալիս մարդու բանականությունը, այն աստիճան, որ բարկացողը չի հասկանում, թե ինչ է խոսում կամ լսում, և իբրև դիվահար՝ ոչ ոքից չի ակնածում, վնասից չի խուսափում, իրեն նետում է կրակի մեջ ու սրի վրա և միևնույն ժամանակ կորցնում թե՛ մարմինը, թե՛ հոգին:

Զ. Բարկացողը բարքով բնավ չի տարբերվում կատաղի շնից: Որովհետև ինչպես շունը, թողնելով քարը գողին, հաչում, գռմռում ու խածատում է քարը, այսպես և սա է անտեղի հայիոյում, գայրանում, ամենքի հետ կռվում, որով անարգ ու արհամարհելի է ամենքի աչքին դառնում: Մարդու համար ավելի մեծ նախատինք է սեփական կրքերից հաղթահարվելը, քան բազմաթիվ թշնամիներից, և ավելի մեծ պարծանք է անբան բարկությանը հաղթելը, քան բազում ժողովուրդներին տիրելը: Չկա ավելի ազատ մեկը, քան նա, ով գերծ է մոլեկան կրքերից, և ոչ ավելի մեծ հաղթող, քան նա, ով հաղթում է դրանց: Որովհետև այդպիսին երկրում վարում է երկնային խաղաղ ու անվըրդով կյանքը:

Է. Բարկությունը թեպետ ամենքի մեջ էլ չար ու դաժան է, բայց իշխանավոր մարդու մեջ ավելի չար ու դաժան է: Որովհետև հասարակ մեկը բարկանալիս իրեն ավելի է վնասում, քան ընկերոջը, իսկ իշխանավորը բարկանալիս մեծամեծ վնաս է հասցնում ամենքին: Ուստի պետք և արժան է, որ իշխանավորները բարկությանը տեղի չտան կամ արագ կերպով հեզության անցնեն:

Ը. Բարկությունը չար ու զգուշալի ախտ է, որովհետև ոչ միայն տկարամիտներին ու դաժանաբարոներին է ախտահարում, այլև խելացի ու բարի մարդկանց, այն ժամանակ, երբ ըստ կրոնի պահանջի ծոմապահության մեջ են կամ սովոր լինելով գործածել քթախոտ, սուրճ կամ ծխախոտ, այլևս չեն գործածում:

Ուստի ամենքը պարտավոր են իրենց կրթել հեզության մեջ, որպեսզի անտեղի կամ մեկի փոքր հանցանքի համար չբարկանան: Քանզի մի թերություն, որ ինքնըստինքյան թեթև է կամ անզիտությամբ գործված, ավելի դյուրավ ուղղվում է խրատական փափուկ խոսքերով, քան սաստիկ բարկությամբ:

Թ. Բարկությունը բարկացողի սրտում երբեմն ոխակալությամբ ծածկվում է, ինչպես կրակը՝ մոխրի տակ, որպեսզի հարմար ժամանակ քինախնդիր լինի: Որովհետև կան ոմանք, որ հենց նույն տեղում իրենց բարկությունը հայտնում են և իբրև մի փոքր քամուց շարժված ծով՝ մեծամեծ ալիքներ բարձրացնում, խռովվում ու խռովում ուրիշներին: Այսպիսիք են հիմարները, կասկածամիտները, թեթևամիտներն ու տաքարյունները:

Բայց կան և ոմանք, որ երկար ժամանակ բարկությունն անմեռ են պահում սրտում, ուստի ոխակալ են: Սրանցից շատերը, նախքան իրենց ատելիներին բարկության հրով այրելը, իրենք են բոցակեզ լինելով այրվում դժնիկի նման:

Ժ. Բարկությունը վրդովում է բանականությունը, տալիս գործել անվայել բաներ՝ չթողնելով գործել վայելուչը: Ուստի ով կամենում է բարկացածին համոզել, որ հեզ դառնա, թող մի փոքր թողնի, որ սաստիկ գայրացումից հանդարտվի, կամ սկզբում համաձայնի նրան՝ բարկությունն արդարացնելով, իսկ հետո սակավ առ սակավ համոզի նրան ու հանգստացնի: Անհաղթ թշնամիներն ավելի դյուրավ հաղթահարվում են համոզիչ խոսքերով, քան ահավոր ռմբարկուների մեծամեծ ռումբերով:

ժԱ. Կրակը վառողով է ջանում հանգցնել, ով ջանք է գործադրում բարկացածին բարկությամբ հանդարտեցնել:

ժԲ. Ոչ մի բարկացող չի կարող իմաստուն լինել, որովհետև բարկությունն իմաստության հետ չի բնակվում: Իսկ Աստծու բարկությունը ոչ միայն անիրավների հանդեպ արդար վրեժխնդրություն է, այլև նրանց բարիքների պատճառ. որովհետև տանջելով շատ անգամ չարերին բարի է դարձնում և անպիտաններին՝ պիտանի:

ժԳ. Բարկությունը հաճախ տեսնվում է ծերերի ու հիվանդների մեջ, որոնք ստեպ տրտնջում են ընտանիքի ու սպասավորների ծառայությունից և բարկանում նրանց վրա՝ կարծելով, թե ուրիշներն էլ են բարկանալու առիթ տալիս: Բայց հույժ սխալվում են, որովհետև նրանց շուրջ եղող բոլոր մարդիկ էլ, ներելով նրանց տկարությունը, ցույց են տալիս, թե նրանց բարկությունն արդար է, որպեսզի չլինի թե՛ ծերը հիվանդանա, կամ հիվանդը մեռնի:



Արդարև, ծերը, կորցնելով առույգ հասակն ու մարմնի կարողությունը, երբ չի կարողանում վայելել հաճույքները, որ տեսնում է, սրտի ներսում տառապում է, ուստի ինչ որ անում են նրան, անախորժ է թվում նրան, տրտնջում է ու զայրանում: Հիվանդն էլ, ցավերից վշտացած, անտեղի բարկությամբ վշտացնում է նրանց, որոնք տքնում են իր առողջության համար: Այնինչ նրանք պետք է ավելի բարկանային իրենց բնության վրա, թե ինչու ծերացան կամ հիվանդացան, քան թե ընտանիքի ու սպասավորների: Ոչ սակավ վարձ պիտի ստանան Աստուծուց նրանք, որոնք համբերությամբ խնամում են ծերին ու հիվանդին. որովհետև վերջիններս մանուկ են համարվում, որի միտքը տկար է և ընդունակ չէ ճանաչելու մարդու երախտիքն ու շնորհակալ լինելու նրանից:

ԺԴ. Եթե որևէ իշխանավոր կամենում է բարկության ախտից զերծ մնալ, թող չծառայի իր քմահաճույքներին. որովհետև բարկությունն ավելի առաջանում է կամապաշտությունից, քան ծառայողների հանցավորությունից:

ԺԵ. Բարկացողն անտանելի վիշտ է իր ընկերակիցների համար, որովհետև ինչ որ ուրիշները խոսում կամ գործում են, իրեն անարգանք է թվում: Որովհետև ինչպես որ ցուլերն են կատաղում կարմիր գույնից, գազանները խռովվում իրենց ստվերներից, և գրաստները խրտնում ճանապարհին ընկած դիակներից, այդպես էլ բարկացողն ունայն ու սին պատճառներից վրդովվում ու աղմուկ է բարձրացնում:

ԺԶ. Բարկությունը մշտնջենավոր տանջանք է բարկացողի համար. որովհետև եթե վերջինս նավաստի է, քամու հետ է կռվում, եթե ջրեպան՝ գրաստների հետ, եթե երկրագործ՝ եզների հետ, եթե պայտար՝ ծիերի ու էշերի հետ, և շատ անգամ նախատում է նրանց ու հայիոյում:

Ուրեմն նրանք պիտի անբան ու անզգա արարածներին բանական դարձնեին կամ իրենք անբան ու անզգա լինեին, որպեսզի նրանց հետ նույն բնությունն ու բարքն ունենալով՝ միմյանց հետ խաղաղությամբ վարվեին:

Եվ հիրավի, բարկացողների բնությունը բնավ օտար չէ անբան ու անզգա էակների բնությունից, որովհետև կամենում են, որ անբան ու անզգա արարածները հնազանդվեն իրենց ամեն քմահաճության ու հրամանի:

Բայց կան ոմանք, որ անբան արարածներից ավելի անբան են և անզգաներից ավելի անզգա, որովհետև կռվում են իրենց հանդերձի քղանցքի հետ, թե քայլքին խանգարեցին, և քարի հետ, թե խոչընդոտ եղավ: Եվ պատահում է, որ իբրև խելացնոր՝ իրենք իրենց հետ են խոսում, իրենց նախատում ու հայիոյում և եթե չհանդարտվեն, գուցե իրենց հարվածներ տան ու մեռցնեն:

ԺԷ. Բարկության ախտի դեմ դյուրապատրաստ դեղ է մարդու բնության տկարությունը ճանաչելը, որն առավել տկար է մանուկների, կանանց, երկչոտների ու թեթևամիտների մեջ, և սպասավորների սխալները ներելը, որ ակամա գործվում են նրանց անգիտությունից կամ տկարությունից. որովհետև եթե նույնիսկ կամենան իրենց պարտավորությունն անթերի կատարել, միևնույն է, հնարավոր է, որ ինչ-ինչ բաներում թերանան:

Ուստի տանուտերը ներողամիտ ու համբերող պիտի լինի և ոչ թե վառողի պես բոցակիզի նրանց, որպեսզի չլինի թե հուսահատվելով կորցնեն իրենց հավատարմությունը և մտածեն նրան չարիք հասցնել:

ԺԸ. Բարկացող իշխանավորը, սպասավորի մի փոքր թերության համար մեծապես զայրանալով և անվայել բաներ խոսելով կամ հայիոյելով, հլու սպասավորին հանդուգն է դարձնում և հավատարիմին՝ անհավատարիմ: Իսկ հեզաբարո իշխանը քաղցր խրատներով ու խելամիտ հանդիմանությամբ անկիրթին զգոնության է բերում, անզուսպին՝ հլության, օտարին որպես հարազատ դարձնում և ազատ սպասավորին՝ հոժարամիտ, արծաթագին ծառա:

ԺԹ. Մարդ կա, որ իրավամբ է բարկանում, սակայն չափի մեջ չմնալով՝ հետզհետե սաստկացնում է իր սրտնեղությունն ու զայրույթը՝ սուր բարկության գազաթին հասնելու աստիճան: Եվ այդժամ բանականության լույսը խավարում է անմիտ կրքի միգապատ ծխից, և նա գահավիժելով կործանվում է հոգու ու մարմնի անհնարին վտանգների մեջ, կորցնում բարկանալու իր իրավունքը և մեղքի տակ

ընկնում:

Ուստի ավելի լավ է սկզբում հանցավորին մեղմորեն խրատել ու հանդիմանել, քան թե բարկության կրքին տեղի տալ. որովհետև բարկանալը դյուրին է, բայց առանց վնասի հանդարտվելը՝ դժվարին. որովհետև ըստ առածի՝ ով բարկությամբ է վեր կենում, վնասներով կնստի:

Ի. Բարկությունը կարևոր կիրք է՝ բնավորված մարդու բնության մեջ, և հանիրավի հասցված վնասի համար վրեժխնդիր լինելու արդար բաղձանք է՝ ըստ այսմ. «Եթե բարկանաք, մի՛ մեղանչեք» (Սաղմ. 7:5): Որովհետև չափավոր բարկությունը՝ ըստ տեղի, անձի և ըստ այլ բոլոր պարագաների, արդարությունը վերականգնում է և անհրավությունը վանում: Իսկ երբ իբրև բոց վառվելով ու բորբոքվելով՝ չափն անցնում է կամ կռվում ընդդեմ իրավունքի ու արդարության, այդժամ չար ու անպիտան կիրք է, որ բարկացողություն է կոչվում, և երբ ցրտասառույց թմրությամբ դեմ դուրս չի գալիս անհրավությանը և չարիքների համար վրեժխնդիր չի լինում, այդժամ անզգայություն է:

Ուստի պետք է գտնել ուղիղ միջասահման կետը երկու մոլեկան ծայրերի, այսինքն՝ բոցավառ բարկության ու ցրտասառույց անզգայության միջև, իսկ դա հեգությունն է, որն այս երկու ծայրահեղ մոլությունների միջին սահմանում գտնվող առաքինություն է:

Ուստի բարկանալը նրա վրա, ով Աստծուն ընդդիմանում է, բարի նախանձ կամ նախանձավորություն է կոչվում: Բարկանալը նրա վրա, ով ընդդիմանում է ուղիղ բանականությանը, սրտմտություն կամ գայրագում է կոչվում: Մեկի բարկանալը նրա վրա, ով ընդդիմանում է իրեն, ատելություն կամ վրեժխնդրություն է համարվում:

ԻԱ. Բանական բարկությունը, որ մասնավոր անվամբ կոչվում է սրտմտություն, ցասմնական զորության գործն է և բնությունից մարդուն տրված զենք՝ նրանով արհանալու, իրեն վնասից պաշտպանելու և իր բնության հակառակորդին վանելու համար: Բայց երբ բանականության դեմ ապստամբում է, կոչվում է անբան բարկություն կամ բարկացողություն և պաշտպանելու փոխարեն մարդուն վտանգի մեջ է գցում, և մարդը չի կարողանում բանական արարածի պես խորհել, խոսել ու գործել, այլ ամեն ինչ անկարգաբար է անում՝ ի վնաս իրեն և ընկերոջ:

ԻԲ. Շունը հաչում է դռան բախոցի վրա՝ չիմանալով, թե բախողն ով է՝ ընտանի, թե օտար. բարկացողն ամեն ինչի համար բարկանում է՝ օգտակարն ու վնասակարը չճանաչելով: Բայց սաստիկ բարկությամբ իրեն ավելի է վնասում, քան ուրիշին, և պիծակի նման ուրիշներին խայթելով՝ ինքն է մեռնում:

ԻԳ. Բարկացողը խելագարներից ու դիվահարներից անարգ է. որովհետև նրանք իրենց կամքից անկախ են անարգության հասնում, իսկ սա՝ կամովին: Նրանք շատ անգամ վախենալով զգաստանում են, իսկ սա բնավ չի երկնչում: Ուստի նրանք կարեկցության են արժանի, իսկ սա՝ վրեժների ու պատիժների:

ԻԴ. Վայրի գազանները որքան էլ կատաղեն, իրենցից ծնվածներին վնաս չեն պատճառում, իսկ բարկացողն այլևս չի խնայում զավակներին ու ընտանիքին, ուստի ավելի վատթար է, քան կատաղի գազանները:

ԻԵ. Բարկությունն ավելի տեսնվում է հպարտների մեջ, քան այլ մոլիների, որովհետև հպարտը կամենում է, որ ամեն ոք իր կամքին հետևի: Ուստի երբ մեկն իր հպարտի կամքին դեմ բան է անում, կամ իրեն անհաճո մի բան խոսում, իսկույն բարկությունից պայթում է, առանց մտածելու, թե գործը կամ խոսքը բարի՞ է, թե՞ չար, բավական է, որ ինքը չի հավանում: Եվ եթե չի կարողանում դա խափանել, իր կրքից տանջվում է, մինչև որ նույնիսկ մեռնում է. որովհետև բարկությունը ժանտ ծնունդ է, որն իր ծնողին սպանում է:

ԻԶ. Իսկ խոնարհը հանգիստ ու երկար է ապրում. որովհետև եթե բարի է այն, ինչ խոսում կամ գործում են ուրիշները, համաձայնում է նրանց, իսկ եթե չար է, բարկությամբ չի բորբոքվում, այլ դրանից հեռու է մնում:

ԻԸ. Բոլոր բարկացողները փոքրոգի են: Որովհետև մարդ բարկանում է այն բանի վրա, ինչին անկարող է տոկալ, և այդժամ ցասմնական կիրքը բորբոքում է արյունը սրտի շուրջ, ինչի պատճառով

բարկացածը բոցաշնչում ու հառաչում է և սառը ջուր կամենում սրտի տապը զովացնելու համար: Այստեղից խիստ տաք գոլորշիներ, ասես սաստիկ հնոցից, ջլերով ու նյարդերով ելնելով մինչև ուղեղը, մթագնում են բանականության լույսը և ասես անբան դարձնում՝ բազում անգամ պես-պես ախտերի և երբեմն մահվան պատճառ դառնալով: Այդ պատճառով էլ ում ժունգները լայն են, նա բարկությունից շուտ է հանդարտվում, որովհետև արյան ծխամած գոլորշիները ժունգների լայնամիտ խողովակներով դյուրավ դուրս են գալիս ուղեղից: Իսկ ում ժունգները փոքր ու սուր են, նա դժվարությամբ է հեզ դառնում. որովհետև գոլորշիները, հաջող ելք չունենալով, ուշ են ուղեղից վտարվում: Իսկ արյունը, որ վառվել էր սրտի շուրջ, բարկության կրքի թափից եռալով, տարածվում է երակներով և ողջ մարմինը ջերմացնում. ուստի բարկացածի դեմքն արյան գույն է ներկվում, և կրակի կայծակներ են թափվում նրա աչքերից: Եվ սիրտը, արյան պակասելու պատճառով, զրկվում է իր բնական ջերմությունից և սկսում դողալ. ուստի և աշխարհաբար հայերենով բարկանալը կոչվում է սրդողել, այսինքն՝ սրտդողել, որից առաջանում է նաև ծեռքերի, ոտքերի և ողջ մարմնի դողդոջում:

Ուրեմն մեկի բարկության պատճառը փոքրոգի լինելն է. որովհետև եթե մեծահոգի լիներ, ցասմանական կրքին չէր թողնի ապստամբել բանականության դեմ. քանզի բարկացածը շատ անգամ անցնում է բանականության սահմանը: Ուստի ով բարկությունից հաղթվում է, թեպետև մեծատուն մեկը լինի, մեծահոգի չէ, այլ մանավանդ տկար ու փոքրոգի:

Գեղեցիկ բարկություն է սեփական բարկության վրա բարկանալը:

«Ձայրացկոտ մարդը կռիվ է հարուցում, բայց համբերատարը խաղաղեցնում է այն» (Առակ. ԺԵ 18):

«Ընկեր մի՛ լինիր բարկացկոտ մարդուն & մի՛ առնչվիր դյուրաբորբոք բարեկամի հետ» (Առակ. ԻԲ 24):

«Ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի» (Մատթ. Ե 22):

«Թող ամեն մարդ արագ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ & ծանր՝ բարկանալու մեջ, որովհետև մարդու բարկությունը Աստծու արդարությունը չի կատարում» (Հակոբ Ա 19-20):

## Գ Լ ՈՒ Խ Է

## Ա Գ Ա Հ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ազահությունը դրամի ու ունեցվածքի անկարգ բաղձանք է: Ազահներն իրենց ողջ կյանքում տանջանքով են ապրում, որովհետև միշտ տառապում են գանձեր մթերելու համար, և ցավերով մեռնում, որովհետև գանձերն իրենց կամքին հակառակ են թողնում և գնում են անդառնալի ուղիով: Ազահների գավակները շատ անգամ շռայլ են լինում, և ինչ որ ծնողները ժողովեցին քառասուն կամ հիսուն տարում, սրանք այն վատնում են նույնքան օրերում:

Բ. Ընչասիրության անկարգ բաղձանքն իր հետ ունի գաղտնի դավաճանություն և երբեմն հայտնի զրկանք: Քանի որ շատերը հագիվ են կարողանում իրենց վնասներով լրացնել մի զրկանքի վնասի տեղը, ինչպես երբ ազահ բռնավորն իշխանավորներից մեկին կեղեքում է, իշխանավորն էլ իր ստորադրյալներին է կեղեքում, նրանք էլ ուրիշներին՝ մինչև հետին չքավորները, ուստի ընչասիրության

բաղձանքը շատերին վնասելու բաղձանք է:

Գ. Ապրելուն անհրաժեշտ ունեցվածքը հնարավոր է ձեռք բերել, և կյանքը պահելու համար ավելորդ ունեցվածքը պետք է կորցնել: Ուստի որքա՞ն անմիտ են ազահները, որ ունեցվածք ձեռք բերելու կամ պահելու համար կորստյան վտանգի մեջ են դնում իրենց կյանքը:

Դ. Ժխտները, սակավ դրամ խնայելով, կորցնում են իրենց մեծ պատիվը, մինչ պատշաճ էր, որ նրանք ամեն ինչ տային և պահեին պատիվը, որն առավել արժե, քան բոլոր գանձերը:

Ե. Ով կաշառք տալու համար դրամ չունի, թող իրավունք չակնկալի կաշառակեր դատավորից, որովհետև նա ոչ թե օրենքի իրավունքին է նայում, այլ միայն տրվող կաշառքին:

Ուստի կաշառակեր դատավորի ատյանում անմեղ աղքատները դատապարտվում են, և հանցավոր հարուստներն՝ արդարանում: որովհետև կաշառքը հանցավորությունը փոխակերպում է անմեղության և անմեղությունը՝ հանցավորության:

Զ. Ազահը, եթե սրտում գանձեր չունի, նշանակում է գանձերն են իրենց մեջ շղթայել ազահի սիրտը. ուստի երբ գանձերը կորչում են, կորչում է և նրա սիրտը, և անկենդան է մնում, որովհետև ազահների կյանքը նրանց գանձերն են:

Է. Ազահներն ու ընչաքաղցները, որ բանտարգել են անում դրամները, թող գոնե նրանց տեսքին նայեն ու խրատվեն: Քանզի դրամներն ունեն բոլորչի ձև, ուստի նրանց հատուկ է անդադար շրջաններ կազմել՝ հայտնելով, թե պետք է անընդհատ շրջեն մեկից մյուսը և հագեցնեն ամենքի կարիքները:

Ը. Ոսկու դեղինության պատճառը թերևս մարդկանց հանդեպ երկյուղն է, որոնք ընկել են ոսկու ետևից՝ բռնելու և փոխանակելու համար անարգ հաճույքների հետ կամ ազահական բարքով ամրափակելու բանտում: Այս պատճառով էլ ոսկին զարհուրած թաքուն է շրջում և փախչելու հնարներ մտածում: Որովհետև եթե մարդիկ այն փնտրեին օգտակար ու համեստ նպատակով, անշուշտ նա հայտնի կշրջեր, ամենքի հետ կընտանենար և բնավ չէր կամենա խույս տալ, ուստի մարդիկ իրենց պետք եղած ժամանակ անաշխատ կգտնեին այն և անընդհատ չէին տառապի:

Թ. Ընչաքաղցն ամեն տեղ ու ամեն ժամանակ սխալվում ու վնասվում է, բայց այնժամ է ավելի սխալվում ու վնասվում, երբ ամուսնանում է հարուստ, բայց անզգամ կնոջ հետ, որը կարող է բավական պատիժ լինել նրա ազահությանը. որովհետև կորցնում է հանգիստն ու դյուրությունը և ձեռք բերած գանձերը, զուցե և կյանքը, որ կապել է գանձերին:

Ժ. Ազահ վաճառականը խստագույն պատիժների է արժանի. որովհետև իր անհագ բաղձանքը հագեցնելու համար իր կարողությունից ավելին է ձգտում, ուրիշներից ապառիկ համաձայնությամբ բազում ապրանք ժողովում, ծովով ու ցամաքով հեռավոր երկրներ ուղարկում և երբ որևէ ձախողությամբ ունեցվածքը կորցնում է, տնանկությանն է ապավինում՝ ոչինչ չհատուցելով, որովհետև ոչինչ չունի: Այս վնասակար ախտով հիվանդանում են ուրիշ նրանից սովորածներ, որովհետև օտարների ունեցվածքն առնելով վատնում են և կործանում շատերի տունը:

ԺԱ. Ազահ զրկողներն իրավունքը չեն ճանաչում, որովհետև անիրավ զրկողների իրավունքն իրենց զենքերն են: Ուստի անիրավների հետ կամ հարկավոր է զենքով վարվել, կամ ինքնակամորեն նրանց իրավունքին հնազանդվել: Իսկ եթե մեկը չի կարող զենքով վարվել, պետք է հնազանդվի նրանց ամեն հրամանի և տա ունեցած ամեն ինչ. որովհետև ավելի լավ է ունեցվածքից զրկվել, քան կյանքից:

ԺԲ. Եթե իշխանների սրտից ազահությունը վերանա, տառապալից դժբախտությունները կտարագրվեն քաղաքներից, և թշվառությունները՝ գյուղերից, որովհետև գլխավորների ընչաքաղց բաղձանքն է, որ աշխատասեր հասարակությանը տառապեցնում է քաղցով, մերկությամբ, կապանքներով ու պանդխտությամբ, և նրանց աղաղակը միշտ երկինք է ելնում՝ իջեցնելու աստվածային արդար ցասումը:

ԺԳ. Ազահության ախտը կարճում է կյանքը. որովհետև ազահը մտքով տանջվում է, թե ինչպես ձեռք բերի չունեցածը, ինչպես պահպանի ունեցածը և սրանով միշտ հյուծվում և մաշվում է: Որովհետև դրամ ձեռք բերելն աշխատանքով է, պահելը՝ երկյուղով, և կորցնելը՝ ցավերով:

ԺԴ. Տոկոսների ցանկությունը շատ անգամ նաև մայր դրամն է կորցնում:

ԺԵ. Ազահը թող իրեն ազատ չհամարի, քանզի ոսկի շղթաներով կապված է: Եվ իրոք, մեծ անմտություն է կապվելը նրան, ինչը մարդու կենդանության ժամանակ երկյուղ է ծնում, իսկ մահվան ժամանակ՝ ցավ:

ԺԶ. Ազահը չի ցանկանում երկինք ելնել, որովհետև գիտի, որ այնտեղ ոսկի չկա. սակայն ցանկանում է իջնել սանդարամետը, որովհետև կարծում է, թե այնտեղ ոսկի գուցե գտնի:

ԺԷ. Պետք է զարմանալ, թե ինչպես են գողերը համարձակվում ազահների ունեցվածքը գողանալ՝ տեսնելով, որ գողերին կախում են: Որովհետև կամենում են շուտով կախաղան ելնել և դժոխք գնալ, ուր ազահները շատ են. թերևս այնտեղ կարողանան գողանալ նրանց ունեցվածքը:

ԺԸ. Հարստությունն ունեցվածքի առատության մեջ է, այլ բաղձանքի: Որովհետև կա մարդ, որ սակավով բավարարվելով՝ շատը չի ցանկանում և հարուստ է համարվում, կա էլ, որ շատն ունի, բայց անհագ բաղձանքի պատճառով, որով տառապում է էլ՝ ավելին ձեռք բերելու համար, չքավոր է համարվում. որովհետև ցանկությունը ծնվում է չունեցած բանի կարիքից:

Եվ որովհետև ազահը հերիք չի համարում այն, ինչը բավականին ունի, այլ չունեցողի պես միշտ ցանկանում ավելին ձեռք բերել, չքավոր ու կարիքավոր է թվում:

ԺԹ. Ազահը պինդ պահում է այս աշխարհի ունեցվածքը, որ կյանքի ընթացքում ձեռք բերեց, որպեսզի կարողանա անթերի հատուցել աշխարհին այն օրը, երբ նրանից պահանջի:

Ի. Ազահը, չճանաչելով մարդկային բնության տկարությունը, թե շատ տարիներ կենդանի մնալ չի կարող, մթերում-կուտակում է շատ տարիների գանձեր: Թեպետ գանձերը կարող են մնալ երկար ժամանակ, որպեսզի մարդիկ դրանք վայելեն, բայց բնությունը դաշնակից է գանձերին, որ թույլ տա գանձի տիրոջը վայելել, որքան կամենում է. որովհետև մինչ գանձերն ամփոփված պահվում են արկղի մեջ, գանձի տերը, հակառակ իր կամքին, գնում է գերեզմանի մեջ ամփոփվելու: Ուստի թող չխնդա ազահը, թե շատ ունեցվածք ունի, որովհետև իրեն մնում է միայն պատանքի երկկանգուն կտավ:

Ուրեմն՝ ով ճանաչում է իր բնության տկարությունը, թող գանձերից այնքան պահի, որքան իրեն պետք է, իսկ ավելորդով կերակրի կարոտյալներին՝ որպես հավիտենական պաշար. քանզի ամեն ինչ թողնելու է աշխարհում և մերկ գնալու գերեզման: Ով ոսկին սիրով է ժողովում կենդանի ժամանակ, մահվան ժամին առանց ցավերի չի կարող այն թողնել:

«Ինչպես անհագ են դժոխքն ու կորուստը,  
անպես էլ անհագ են ազահ մարդու աչքերը» (Առակ. ԻԷ 20):

«Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա,  
ուր ցեց & ժանգ ոչնչացնում են,  
& ուր գողեր պատերն են ծակում ու գողանում» (Մատթ. Զ 19):

**Գ Լ Ո Ի Խ Ը**

**Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

Ա. Ի՞նչ ավելի անզգա թնրություն կա, քան տանջանքների մեջ գտնվելով՝ իրեն երջանիկ համարելը: Ահա այսպիսին են դատարկաշրջիկները, որ շրջում են ամեն ինչից ձանձրացած՝ գտնելու իրենց բաղձանքի իրականացումը, և ոչ մի տեղ չգտնելով՝ չարաչար տանջվում են ու չեն գիտակցում այդ: Սրանք ծնվում են իբրև մարդ և մեռնում անբան արարածներից ավելի վատթար: Որովհետև անբան արարածներն անգործությունը չեն ճանաչում, իսկ սրանք գիտեն, ինչպես և պետք է նրանց իմանալ,

բայց անզգայացած մտքով հարատևում են նույն վիճակի մեջ:

Թող ոչ ոք չկարծի, թե անասունը կամ գրաստն ախտառում անգործ է կապված. նրա գործն իր տիրոջ կամքին հնազանդվելն է միայն՝ թե՛ գործով, թե՛ անգործությամբ: Թող ոչ ոք անգործ չհամարի նաև վայրի երեներին. նրանց գործը ճարակելն է՝ իրենց քաղցը հագեցնելու համար, և մշտապես հանգիստ են ապրում, որովհետև զբաղվում են այս գործով, որ բնությունից է հատկացված նրանց:

Իսկ դատարկաշրջիկ մարդը, որ չի ջանում կատարել իր պարտավորությունը՝ մտքով կամ մարմնով աշխատելը, անբաններից ավելի վատթար է. ծանծրայից տանջվում է և բնավ հանգիստ չի գտնում:

Բ. Արդյոք ո՞վ է ավելի անմիտ, քան դատարկաշրջիկը, որ չգիտի, թե ուր է գնում. տեղից տեղ է անցնում, որպեսզի օրը սպառվի, և ծանծրացած հառաչում է, թե արեգակը մայր չի մտնում, նեղսրտությամբ տառապում է օր ու գիշեր, փնտրում հանգիստ ու չի գտնում: Բնությունը, որ անգործությունից փախչում է, ներքուստ նրան դրդում է որևէ գործով զբաղվելու, ուստի և նա սկսում է նարդի կամ թուղթ խաղալ: Ողորմելին չգիտի, թե նեղսրտության փարատիչ դեղն օգտակար գործերով զբաղվելն է, և սրտի հանգիստը՝ չափավոր աշխատանքը և ո՛չ թե անպիտան ու վնասակար նարդին կամ թղթախաղը:

Եվ այս օգտակար դեղը գտնելը դժվար չէ նրան, որովհետև ամեն տեղ պատրաստ սպասում է նրան: Բայց չի փնտրում ձեռք բերելու համար, որովհետև չգիտի, թե ինչ թշվառ վիճակի մեջ է ընկած, իսկ այդ չգիտակցելն ավելի չար է, քան հենց թշվառ վիճակի մեջ ընկնելը:

Գ. Մարդ կա, որին ժամանակը չի բավարարում, մարդ էլ կա, որի համար ժամանակն ավելանում է: Քանզի ժրաջանները կամենում են, որ ժամանակը երկարի, որպեսզի աշխատեն օգտակար ու բարի գործերի վրա, և չեն կամենում նույնիսկ մի փոքր վայրկյան կորցնել, որովհետև գիտեն, որ ժամանակն անգին է, և այն, ինչ մեկը մի անգամ կորցնում է, այլևս չի կարող ձեռք բերել:

Իսկ անգործները ցանկանում են, որ ժամանակը կարճանա, տրտնջում են, թե օրը երկարեց, և չգիտեն, թե ինչպես այն անցկացնեն, որովհետև ժամանակն ավելորդ բան ու ծանծրայի պատճառ է նրանց թվում:

Դ. Մարդն ավելի մեծ բաղձանք չունի, քան երկար ապրելը, որպեսզի կարողանա բազում բարի գործեր կատարել: Ուստի և բարի մարդիկ ջանում են իզուր չկորցնել ժամանակը, և ուրիշ ոչ մի բանի կորուստն այնքան ցավ չէ նրանց, որքան ժամանակի կորուստը: Ուրեմն որքա՞ն ավաղելի են անգործները, որ անմտորեն այն կորցնում են, և չարերը, որ բարի ժամանակը չարիքների համար են վատնում:

Ե. Եթե մեկն անգործությունը բոլոր չարիքների աղբյուր կոչի, չի սխալվի. որովհետև չկա մի մոլություն, որ անգործությունից առաջ չգա: Դևերն աշխատանքից հանգստանում են և այլևս չեն դրդում մարդկանց մեղք գործելու, երբ շատ են դատարկաշրջիկները, որոնք դևերից էլ ավելի են պատճառ դառնում նորանոր չարիքների:

Աշխատանքից փախուստը լեռներում շատացրեց ավազակներին՝ թափելու անմեղ ճանապարհորդների արյունը, սակայն ավազակների արյունն էլ է վերջում թափվում մահապատժի վայրում: Կախաղաններն անպիտան կլինեին ավազակների համար, եթե նրանց պիտանի լիներ արդար վաստակով աշխատանքը:

Զ. Անհնար է, որ մարդու միտքն անգործ ու դատարկ մնա: Ուստի դատարկաշրջիկը նեղսիրտ է, և ջանասերը՝ հանգիստ: Դատարկաշրջիկն արժանի է նեղսրտության, որովհետև չի փնտրում հանգիստ, որը միայն օգտակար աշխատանքի մեջ է գտնվում:

Ուստի և անգործը, որ օգտակար գործերով չի զբաղվում, ստիպված զբաղվում է վնասակար բաներով, որ ավելի չար է, քան ոչինչ չանելը:

Է. Կարծր կեղևն անվնաս է պահում պտուղները թռչուններից. ժրաջան աշխատանքը մարդու միտքն անմերձենալի է դարձնում դևերի համար, որովհետև դևերը չեն կարողանում պարապ ժամանակ գտնել՝ աշխատողին դեպի չարիքները հրապուրելու:

Ը. Մարդիկ, որ բորոտներին քաղաքից վտարում են, որպեսզի առողջներին չվարակեն, լավ կանեին, եթե դատարկաշրջիկներին ևս հեռացնեին, որպեսզի աշխատասերներին էլ ծուլության այստի մեջ չներքաշեին: Ջազիր գոլորշիներն ապականում են օդը, և վատթար ծուլությունը՝ մարդկանց բարքը:

Թ. Աստված աշխարհին արարեց մարդուն ծառայելու համար, որպեսզի մարդն էլ Աստծուն ծառայի. իսկ ծուլը չի ծառայում Աստծուն, ուստի և անարժանությամբ է վայելում աշխարհը և նրանում եղած բոլոր բարիքները:

ժ. Ծուլը հասարակության թշնամի է, որովհետև առանց աշխատելու կամենում է հասարակության բարիքները վայելել, բայց ստույգ օրենք է, թե չաշխատող ձեռքը պիտի չուտի:

ժԱ. Եթե մեկը միշտ անգործ է շրջում, թող մարդկանց միջից վտարվի իբրև անպիտան ու անարգ, որպեսզի իշամեղվի պես ուրիշների վաստակը չուտի և ուրիշ շատերի համար չար օրինակ չլինի:

ժԲ. Ոչ մի թշնամի այնքան զորավոր չէ մի ողջ ազգ կործանելու համար, որքան անգործությունն ու ծուլությունը: Ամուր պարիսպը, որը թշնամիների ուժը չի կարողանում քանդել, բնակիչների անգործությամբ հեշտությամբ կործանվում է:

ժԳ. Չար է որևէ մեկի համար, եթե շեղվում է այն նպատակից, որին ի բնե կարգված է: Իսկ մարդը ծնվել է օգտակար աշխատանքի համար: Ուստի եթե անգործ ու դատարկակյաց է, իր նպատակից շեղվում է, և այս չարիքը բոլոր չարիքներից էլ մեծ է:

ժԴ. Այն մարդը, որ Աստծուն սիրում է և հասարակությանը բարիք գործում, երկնային հրեշտակ է: Ով սրտից հանում է Աստծու սերն ու չարիք հասցնում ուրիշներին, դժոխային դև է: Եվ ով միայն իր մարմինն է պարարում ու նրա ցանկությունը կատարում, երկրային անբան է:

Իսկ արդյոք ո՞ւմ է նման անգործն ու ծուլը. թվում է, թե սրանցից և ո՛չ մեկին, որովհետև մարդկային ցեղի ամեն կարգից էլ դուրս է գտնվում: Քանզի այլ մարդիկ որևէ բարի կամ չար բան անում են, որոնցով թերևս երևում է, թե կենդանի են, իսկ ծուլերը՝ իբրև անզգա արծան, ամբողջ օրը պարապ ու անգործ են, չգիտեն, թե իրենք մարդիկ են և չեն ձանաչում մարդու պարտավորությունը, ուստի և բոլորից էլ անարգ են:

ժԵ. Բնավ անպատշաճ չէ կարծելը, թե դևերը մարդու մտքի մեջ զցեցին քաղաքներում կառուցել զվարճության վայրեր, որպեսզի մարդիկ, մարմնի թարմանալու նպատակով գնալով այնտեղ, սովորեն անգործությունն ու ծուլությունը, և իրենք առանց ջանք գործադրելու պահեն նրանց իրենց ծոցում: Քանզի դևերը բնավ չեն աշխատում որսալ դատարկակյաց մարդկանց. վերջիններս ինքնակամ արդեն ընկել են դևերի կորստական ծուղակները:

ժԶ. Անհրաժեշտ աշխատանքներից հանգստանալը և մարմինն առույգ պահելու համար թարմանալն ու զվարճանալը պետք է դեղի գործածության պես սակավ ու հազվադեպ լինեն. որովհետև ինչպես որ, օրինակ, դեղի հաճախակի կիրառությունն առավել վնասում է, քան օգնում, այդպես էլ երկար հանգստանալը մարմինն ավելի տկարացնում է, քան կազդուրում:

ժԷ. Մարդ պիտի չուրախանա, թե շատ տարիներ ապրեց, այլ պիտի անդրադառնա, թե ինչպես ապրեց՝ բարի՞, թե՞ չար կյանքով: Որովհետև ըստ նրան տրված կյանքի օրերի շատության ու սակավության է պահանջվում թե՛ բարի և թե՛ չար գործերի հաշիվը:

ժԸ. Ժամանակը բողոք է բարձրացնում երկինք և իրավունք պահանջում, երբ տեսնում է, որ մարդիկ սուղ ժամանակում մեծամեծ չարիքները դուրսով են կարողանում գործել, իսկ փոքր բարիքները երկար ժամանակում ու մեծ դժվարությամբ են գործում:

ժԹ. Մարդիկ ոչ թե ժամանակն ունեն իրենց ձեռքին, այլ ժամանակի գործածությունը: Ուստի ով գիտի ժամանակը բարվոք գործածել, դուրսով բազում բարիքներ է գտնում իր ծոցում: Լավ ասաց այս աստղը. «Չկա վայելուչ ազահություն, բացի ժամանակի ազահությունից»:

Ի. Եթե բնությունն ու ժամանակը մարդկանց իրենց խորհրդակից անեին, ամեն ինչ կհաջողվեր մարդկանց կամքի համաձայն:

ԻԱ. Մարդը երկու գերեզմանների միջև քայլող ձանապարհորդ է, գերեզմանից ելնում է գերեզման

գնալու-մտնելու, այսինքն՝ ծնվում է մոր արգանդից և գնում թաղվելու հողի արգանդում:

Ուստի մարդն անմիտ է, եթե կարծում է, թե այն ճանապարհը, որով արագ անցնում է, մշտնջենավոր բնակության վայր է, և եթե թողնում է, որ հարմար ժամանակն իզուր անցնի:

ԻԲ. Մարդկանցից շատերն այնքան անմիտ են, որ չգիտեն մահն ու կյանքն իրարից տարբերել և իրենց գործերը տնօրինել ըստ երկու վիճակներից յուրաքանչյուրի պահանջի: Քանի դեռ կենդանի են, մեռյալի գործն են անում, և երբ մահվանն են մոտենում, ջանում են կենդանի եղողի գործը ցույց տալ:

Քանզի երիտասարդության տարիներին հոգևոր ու մարմնավոր անհրաժեշտությունների մասին չհոգալով՝ անգործ շրջում են ու չեն աշխատում կարևոր բաներ ձեռք բերելու համար, ավելին՝ հայրական ժառանգությունից ինչ որ ունեն, շռայլությամբ անմտորեն վատնում են, կարծես թե հասել է նրանց մահվան օրը և պիտի աշխարհն ու նրանում եղած ամեն ինչ թողնեն և մերկ ու կողոպտված գնան:

Իսկ երբ մահվանն են մերժենում և անհրաժեշտ վճռով ստիպված լինում մեկնել աշխարհից, սկսում են հոգալ հոգուն ու մարմնին անհրաժեշտ բաների մասին, կարծես երիտասարդական առույգ հասակի ու անցավ առողջության մեջ են և կարող ու ձեռնհաս են ամեն ինչ պատրաստելու:

Բայց ավա՜ղ նրանց իզուր տառապանքին. մահվան ստվերը, շուտով ընկնելով նրանց բիբերի վրա, չի թողնում իրենց անձերի համար որևէ օգտակար բան գործել:

ԻԳ. Հանգստանալ նշանակում է որևէ բան գործելուց դադարել. իսկ ով որևէ գործով չի զբաղվում, նա չգիտի, թե ինչ է հանգստանալը: Ուստի ով կամենում է հանգստի քաղցրությունը վայելել, թող մարմնով աշխատի:

ԻԴ. Պարապությունն ու ծուլությունն ապականում են բնությունը և այն դարձնում որպես փշալից հող, իսկ չափավոր աշխատանքն այն զորացնում է և դարձնում որպես պտղալից հող:

Մանուկների հոգիների համար ժանտամահ է տասնամյա տարիքից հետո առանց ուսման ու արհեստի մնալն ու պարապ շրջելը:

ԻԵ. Աստված, որ իր անպարտական բարերարությամբ ստեղծեց մարդուն, իր ողորմությամբ ձրի տվեց նաև մարդու կյանքին խիստ անհրաժեշտ բաները՝ օդը, արեգակի լույսը և անձրևի ջուրը, բայց մարդուն թողեց ապրել իր աշխատանքով, այսինքն՝ հողը մշակել, որպեսզի այն ցորեն բուսցնի որպես կերակուր:

Եթե Աստված առանց մարդու աշխատանքի ձրիաբար բավական ցորեն աճել տար հողում, մարդն անգործ ու ծուլ կմնար և կյանքի բազում վտանգներ կկրեր, որոնք առաջանում են ծուլությունից: Որովհետև ծուլությունը մարդու կյանքի թշնամին է: Իսկ երկրագործությունն այնպես սահմանեց Աստված, որ ցանկացած մարդ կարողանա ի գործ դնել՝ չունենալով հնարամտության ու իմաստության կարիք:

Ուստի ծուլները դատարկաշրջիկ լինելու պատճառ չունեն. ահա պատրաստ է հողը նրանց ոտքի տակ, թող այն մշակեն, ցորենի հաց ուտեն և սառը ջուր ձրի խմեն: Եվ թող վայելեն արեգակի լույսը և Արարչին փառք տան: Ապա թե ոչ, արժանի չեն հաց ուտելու, արև տեսնելու և Աստծու պարգևները վայելելու:

ԻԶ. Մի կարծիր, թե պարապությունը մարմնի հանգիստ է, որովհետև այն առավել տանջանք է նրան. սակավ առ սակավ հիվանդացնում է մարմինը, մինչև որ անբուժելի ցավերի մեջ է գցում:

ԻԷ. Պարապ մարդիկ ժամանակն իբրև բեռ են կրում իրենց վրա կամ իրենց համարում ժամանակի ծառա: Սակայն իրենք են անտանելի բեռ ժամանակի վրա, որին իբրև ծառայի անվայել գործերի համար են բանեցնում: Բայց կզան օրեր, երբ ժամանակը նրանց ձեռքից կազատվի, և այնժամ կճանաչեն նրա հարգը:

Մրանք նման են հագեցած որովայնին, որը մեղրն արհամարհում է, բայց երբ քաղցում է, ցամաք հաց է փափագում, բայց չի գտնում:

ԻԸ. Բնությունը ժլատ չէ ամենքին ժամանակ մատակարարելիս, բայց ծուլները, ժամանակը շռայլաբար վատնելով, ոչ մի օգուտ չեն ունենում: Մարդու երջանկությունը հաստատված է ժամանակի բարվոք կիրառության մեջ, և թշվառությունը՝ իզուր կամ չարիքների համար այն կորցնելու մեջ:



ԻԹ. Շատերն են ժամանակի կիրառության մասին բարվոք խոսում, բայց սակավ մարդիկ են բարվոք գործածում: Ովքեր ժամանակի հարգը չգիտեն կենդանի ժամանակ, իզուր են հույս տածում իմանալ մեռնելիս. որովհետև քանի դեռ կենդանի են, տրտնջում են, թե ինչպես անցկացնեն ժամանակը, և երբ մահը գալիս է, զանգատվում են, թե ժամանակը վերցվում է:

Արդ, եթե ժամանակը հարգի և պիտանի է, ինչո՞ւ անգործ վատնեցին այն իբրև ավելորդ բան. իսկ եթե անպիտան է, ինչո՞ւ են ավաղում նրա վերցվելու համար: Ով չի հոժարում իմանալ բարու հարգը, երբ այն ունի, իզուր է իմանալ, երբ նրանից վերցվում է:

Լ. Այս աշխարհը դպրատուն է, ուր մարդիկ պարտավոր են սովորել ժամանակի բարվոք գործածությունը միայն: Ով իր կյանքն անգործ է անցկացնում, նրա կյանքը նրան պատիժ է դառնում:

ԼԱ. Ժամանակը, իբրև սրընթաց գետ, անդուլ հոսում է՝ իր հետ տանելով նաև մեր կյանքը, և ով մի անգամ գնում է, այլևս չի վերադառնում. սակայն մենք երազ տեսնողի պես քնած գնում ենք՝ այդ չիմանալով և կարծում, թե տակավին նույն տեղում ենք:

ԼԲ. Ժամանակի մեծագույն հարգն ու անկշռելի արժողությունը մեռյալներն են քաջ ճանաչում, որոնք եթե մի վայրկյան իսկ կարողանային վերստին ձեռք բերել, անգին գանձ կհամարեին և նրանով բազում օգուտ կստանային իրենց հոգու փրկության համար: Բայց ավա՛ղ, այժմ ապրողները շատ ժամանակ են ապարդյուն վատնում ի վնաս հոգու և թեպետ մահվանից հետո կճանաչեն իրենց սխալները, բայց անօգուտ կլինի, որովհետև ժամանակը, որպես աղեղից արծակված նետ, այլևս հետ չի դառնում:

«Մինչ & ե՞րբ պիտի գամված մնաս, ո՛վ ծուլ,  
կամ ե՞րբ պիտի զարթնես քնից:  
Մի քիչ քնով ընկնես, մի քիչ նստես, մի քիչ ննջես,  
մի քիչ էլ ձեռքերդ հանգչեցնես կրծքիդ,  
& ահա աղքատությունը, ինչպես չար ուղեոր, կհասնի քեզ,  
& կարիքը՝ իբր & ժիր սուրհանդակ, կկանգնի դռանդ առջև: Բայց եթե ծուլ չլինես, ապա քո ամառը  
պիտի հասնի աղբյուրի մեծան,  
& կարիքը, ինչպես ինքնահալած չարամիտ այր,  
պիտի փախչի հեռու» (Առակ. Զ 9-11):

## Գ Լ ՈՒ Խ Թ

## Ո Ր Կ Ր Ա Մ Ո Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Մարդու բոլոր ցանկությունները հաճելի են բարեխառնության մեջ, և երբ բարեխառնությունը վերանում է, հաճույքն էլ է վերանում և վերափոխվում բնության պատժի: Քանզի ի՞նչ ավելի ախորժելի բան կա քաղցածի համար, քան որովայնի հագուրդը, և ի՞նչ ավելի վշտագնիչ բան, քան չափն անցնելը: Կամ ի՞նչ ավելի փափագելի բան կա ծարավ մարդու համար, քան սառը ջուր խմելը, և ի՞նչ ավելի տանջող բան, քան ջրի շատությունից որովայնի պայթելը:

Ուրեմն՝ պետք է բարեխառն ու ժուժկալ լինել բնական հաճույքները վայելելիս, ապա թե ոչ բնության պատժի են վերափոխվում ու մահն արագացնում:

Բ. Բազմատեսակ հիվանդությունները, որոնց պատճառով մարդիկ բազմազան դեղերի կարիքն են ունենում, այն պատճառով են հաճախ պատահում, որ մարդիկ չգիտեն կենցաղավարության ճիշտ եղանակը: Որովհետև խառնակեցիկ վարքը մահվան թույնի է փոխարկում կերակուրը, որը սահմանված է կյանքը պահպանելու համար, և բազմախորտիկ սեղանը կարճում է կյանքը, որը դեղերը չեն

կարողանում երկարացնել:

Գ. Աղքատներն ավելի հազվադեպ են հիվանդանում, քան հարուստները, որովհետև չեն կարողանում գտնել զանազան կերակուրներ: Իսկ հարուստները, ընկնելով տեսակ-տեսակ համադամ խորտիկների ետեվից, իրենց ավելի թունավորում են, քան սնուն: Նույնիսկ դեղորայքն էլ է իսկական թույն, խանգարում է բնությունը և պիտի գործածվի միայն հարկադրված պարագայում և ոչ թե անխտիր կերպով:

Մարդկանց մեծ ու անվնաս դեղը մարմնի ուտելու և խմելու վայելքներում ժուժկալությունն ու բարեկարգությունն է, մտքի հանդարտությունը և մարմնի չափավոր աշխատանքը, որով արյունը քաղցրանալով՝ հեռացնում է վնասակար ու ավելորդ նյութերը: Ուստի մեծ ամոթ է մարդկային ցեղին այսքան հիվանդություններ ունենալը. որովհետև եթե բարեկարգ կենցաղավարեին, առողջ ու դեղերի անկարոտ կլինեին:

Դ. Մարդկանց մեջ կան և ոմանք, որ այնպիսի մեծաջան խնամքով են մարմնի մասին հոգ տանում ամբողջ օրն այն սնելով ու դարմանելով, որպեսզի վերադարձնեն երիտասարդական առույգ վիճակին կամ գոնե չթողնեն ծերանալ ու տկարանալ, որ մարմինը ծիծաղում է նրանց անմտության վրա, որովհետև անդադար դիմում է դեպի ծերություն և ամեն քայլափոխի ուժից ընկնում է և մոտենում մահվան ու ապականության:

Իսկ ինչո՞ւ չեն զգում, թե ներհակ տարրերից բաղադրված ցանկացած մարմին ծնվում է շարունակ շարժման ու փոխադարձ առնելության մեջ և ապականվում ըստ իր բնության անփոփոխ ու հարկադիր օրենքի և ոչ թե ըստ մարդկանց քմահաճույքի:

Պատկերացրու, թե մարդու մարմինն իր անձին պիտանի մի երիվար է, որը չափով կերակրվելու դեպքում հեծյալին իր վրա վերցնում ու թեթևությամբ տանում է նպատակադրյալ վայրը, բայց եթե մեկը չափից ավելի է դարմանում, կատաղաբար աքացի է տալիս, հեծյալին վայր զցում ու վնասում:

Ե. Մարդու մեջ ոչինչ ավելի մեծարված չէ, քան որկորը, բայց նրանից ապերախտ ոչինչ չկա. որովհետև որքան ավելի է պատիվ ստանում, այնքան ավելի անշնորհակալ է դառնում և հանդգնում առավել մեծարանք պահանջել: Եվ այնքան անագորույն է, որ իրեն սիրողին իրեն մշտնջենավոր գերի է դարձնում:

Զ. Հովիվը, եթե իր շանը միշտ ոչխարի մտով է կերակրում, նրան գայլ է դարձնում, և ով իր մարմինը սովորաբար պարարտ կերակրով է սնուցանում, այն գազան է դարձնում, մինչև որ ստամբակելով այլևս չի հնազանդվում հոգու կամքին, այլ կամքը բռնադատում է ծառայելու իր հաճույքներին:

Է. Որկրամոլները տեսակ-տեսակ քաղցրաճաշակ կերակուրներով թմրեցնում են իրենց բնական ախորժակը, բայց քաղցն արթուն է մնում և կերակրի կարիք զգում: Եվ քանի որ ամեն տեսակ կերակուրներից ծանծրացել է, նոր տեսակներ է հնարում և նրանցից հագեցած՝ փնտրում ուրիշը և շարունակ տանջվում նորերը գտնելու համար: Եվ կարելի է ասել, թե որկրամոլները եղան կերակուրների բազմատեսակ լինելու պատճառը, և դրանցից են առաջ գալիս մահն արագացնող բազմօրինակ հիվանդություններ:

Ուստի եթե մեկը կամենում է ախորժանքով ուտել, թող պարզ կերակուր ուտի, և այդ՝ չափավոր կամ սակավ և ոչ թե ազահաբար կամ անասնորեն: Եվ եթե կամենում է առողջ ապրել, ժամանակ առ ժամանակ թող ծոմ պահի կամ անոթի մնա, որպեսզի կերակուրների մնացորդները մաքրվեն ստամոքսից: Քանզի անոթությունը դեղ է և առողջության պահապան, եթե պատշաճ ժամանակ կիրառվի, ինչպես և հայտնի է փորձով:

Ը. Կան մարդիկ, որ ուրախանում են տխուր բաների վրա և տրտմում ուրախալի բաներից, և թեպետ այս երկու կրքերը՝ ուրախությունն ու տրտմությունը, բնավորված են հոգում շարժվելու իրենց առարկայից (օրինակ՝ եթե առարկան ցավալի է, հարկավ տրտմություն է պատճառվում), բայց ոմանք, առարկաներն ուղիղ չդատելով, հեշտալին ցավալի են համարում, և ցավալին՝ հեշտալի, ուստի և ներհակ կրքերով են շարժվում: Որովհետև մարմնական զեխությունը՝ որկրամոլությունն ու արբեցությունը, հեշտալի առարկա են համարում, և դրանք գործելիս ուրախանում, երբ պետք էր տրտմել, իսկ հո-

գևոր ճգնությունը՝ պահքն ու ժուժկալությունը, ցավալի առարկա են համարում, և դրանք գործելիս տրտմում, երբ պատշաճ էր ուրախանալ:

Թ. Հնարավոր չէ մարմնի հանգստով ու որկորի հղիությամբ շահել հոգին, որովհետև մարմնի փափկակեցության մեջ հոգու հանգստություն չկա: Պարարտ կերակուրներով հղիանալը ոչ այնքան մարմնին է վնասակար, որքան հոգուն, որովհետև զգայական կրքերն ապստամբեցնում է բանակա- նության դեմ և աղախնին իբրև տիկին դարձնում: Բարվոք չի ապրում նա, ով իրեն գրգանքով է շրջա- պատում:

Ժ. Վայ նրան, ով ծառայում ու անվարձ է մնում. բայց էլ ավելի վայ նրան, ով ծառայությունից տու- ժում է, ինչպիսին է մարմնի ու որկորի ծառան: Ով սանձ չի դնում երիվարի բերանին, բնավ չի հոգում, թե կգահավիժի, և ով ժուժկալությամբ չի նվաճում մարմինը, անփույթ է իր գլորման հանդեպ:

«Եթե կան մարդիկ, որոնք իրենց կյանքից վախենալով կամ որկրամոլությունից դրդված՝ հրաժարվել են իրենց նախնիների օրենքներից, արքունի դատարանում իրենց հոժարության համար արդարանալ երբեք չեն կարող» (Գ Մակբ. Է 7):

«Ով փափկասուն է լինում մանկուց, պիտի ծառա դառնա & հետո մորմոքի ինքն իր մեջ» (Առակ. ԻԹ 21):

## Գ Լ ՈՒ Խ Ժ

## Հ Ա Ր Բ Ե Ց Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Հարբեցողությունը մարդու բանականությունն ապականող թույն է. որովհետև եթե նույնիսկ չի սպանում, գոնե մթագնում է մտքի լույսը և մարդուն վերածում անբան անասունի կամ այլանդակ գա- զանի:

Բ. Էակներն ինչով որ տեսականապես հաստատվում են իրերի բնության մեջ, նույնով էլ տարբեր- վում են մյուսներից, և քանի որ մարդու բնությունը տեսականապես հաստատվում է բանականու- թյամբ, ապա դրանով էլ տարբերվում է այլ բոլոր արարածներից:

Եվ ինչպե՞ս մարդ կոչվի հարբեցողը, որ զուրկ է բանականությունից. որովհետև պատահում է՝ խելագարի պես ցնորվում է, կամ իբրև դիվահար մոլեգնում, կամ գայլի պես դժնի դառնում, կամ էլ մեռյալի պես անզգայանում:

Էլ չեմ ասում, որ կույրի պես չի կարողանում տեսնել բարեկամին ու թշնամուն և խուլի պես չի կա- րողանում լսել խրատական խոսքերը: Ուստի բոլոր ազգերի մոտ պահվեց այս օրենքը՝ հարբեցողին չխրատել, քանի դեռ չի սթափվել:

Գ. Թեպետ գինին ըստինքյան չար չէ, բայց նրա չարաչար գործածությունը պատճառում է մեծա- մեծ չարիքներ՝ խռովություն, ծուլություն, հիվանդություն և այլ բազում անկարգություններ: Այդ պատ- ճառով էլ իշխանը պարտավոր է իր ժողովրդին հեռու պահել հարբեցողությունից, որպեսզի այս չա- րիքները չպատահեն:

Դ. Մարդիկ, Աստծու պարզևները չարաչար գործածելով, բարկացնում են անբարկանալի Բնութ- յանը՝ այլևս չտալու բարի պարզևներ կամ իրենց զրկելու նախկինում տրված բարիքների վայելումից:

Գինին տրվեց որպես ընկերական սիրո միջնորդ ու տրտմության փարատիչ, իսկ հարբեցողներն

այն դարձրին կռվի ու տրտմության նյութ: Բժիշկները կամեցան այն տալ ուժաթափ հիվանդներին որպես զորացուցիչ ու առողջարար դեղ, հարբեցողներն օգտագործեցին՝ նրա միջոցով իրենց առողջությունը կորցնելու և անբժշկելի ցավեր ձեռք բերելու համար: Ծերերը նրա չափավոր կիրառությամբ առույգանում են, երիտասարդները, անկարգաբար օգտագործելով այն, արագացնում են տկար ծերության գալուստը և շատ անգամ վաղ մեռնում: Ով առանց գինու չի պահպանում իր առողջությունը, գինով կկորցնի այն:

Ե. Բարի են Աստծու բոլոր արարածները, բայց ովքեր չարաչար են վարվում նրանց հետ, դրանք նրանց համար տանջանքների են վերածվում, ինչպես որ հարբեցողները, գինին ոչ բարվոք գործածելով, արժանի են նրանից տանջվելու:

Զ. Հարբեցողությունը հույժ վնասակար է, որովհետև մարդուն անխելք, շռայլ ու անարգ է դարձնում: Որովհետև հարբեցողը, խելքը կորցնելով, կորցնում է ունեցվածքն ու պատիվը: Երբեմն ուրախալի խնջույքներում ծոցում ունեցած ամեն ինչ անարժաններին է շռայլաբար պարգևում, երբեմն իր սրտի գաղտնիքներն է հրապարակում՝ իրեն վնաս ու անարգանք պատճառելով: Երբեմն ննջում է, երբեմն կաքավում, երբեմն լալիս է, երբեմն ծիծաղում, երբեմն պապանձվում ու անզգայանում է, երբեմն էլ անընդհատ ավել-պակաս խոսում, հակառակվում ու կռվում, և չկա մի անարգություն, որ հարբեցողը չհամարձակվի անել, որով բոլոր մարդկանցից ավելի անարգ ու նախատելի է դառնում:

Է. Թեպետ բոլոր մոլություններն էլ չար ու վնասակար են, բայց միայն թյուրում են միտքը և ոչ թե կորցնել տալիս: Ինչպես որ գողը բազում միջոցներ է ի գործ դնում ունեցվածքը գողանալու և մարդկանց ձեռքը չընկնելու համար, շնացողը՝ պես-պես հնարների դիմում, որ չխայտառակվի, և ստախոսն էլ՝ ջանում հարմար պատճառ գտնել, որպեսզի իր սուտը չբացահայտվի:

Այս կերպով նաև այլ չարագործներն են միտքն ամբողջ պահում, թեպետ ո՛չ առողջ, գործում են բանավորապես, թեպետ ո՛չ բարեպես, իսկ հարբեցողությունը կորցնել է տալիս մարդու միտքը և մարդուն հեռացնում մարդկային կարգից, որովհետև մարդը մտքով է մարդ:

Եվ ի՞նչ է արդյոք հարբեցողը: Անզգա գոյացություն չէ, որովհետև Աստծու հավիտենական օրենքի համաձայն՝ անզգա արարածներն անդադար շարժվում են աշխարհի օգտի համար, ինչպես չորս տարրերն ու նրանցից կազմված անզգա արարածները, իսկ հարբեցողը չարաչար վնասում է իրեն ու ընկերոջը: Անասուն չէ, որովհետև անասունները իլու հպատակությամբ անխոնջ ծառայում են մարդկանց կարիքների համար, իսկ հարբեցողը ոչ մի բանով պիտանի չէ: Գազան չէ, որովհետև գազանները բնավ չեն մեղանջում նրա հանդեպ, ում հետ ընտել են, իսկ հարբեցողը չի ճանաչում բարեկամներին ու ընտանիքը, տիրոջ ու բարերարի, ամենքին հայիոյում է, ամենքին սպառնում, ամենքի հետ կռվում, որովհետև միտքը կորցրել է և դարձել մի այլանդակ հրեշ: Բայց երանի՜ թե մտքի կորչելու հետ նաև ինքը կորչեր, որովհետև ո՞ր ականջն է հանդուրժում լսել նրա անկարգ խոսքերը, ո՞ր աչքն է հանդուրժում տեսնել նրա անվայել շարժումները, ո՞ր ունջը չի զգվում նրա բերանի գարշահոտությունից:

Ահա քսակում ունեցած դրամը սպառվեց, և ինքը որպես անպիտան աղբ գինետնից դուրս չպրտվեց՝ գլուխը բաց, գոտին արծակ, կոշիկները փողոցում ընկած, և որպես կույր՝ խարխափանքով դեգերելով, պատեպատ զարնվելով, խոզի պես տղմաշաղախ՝ ու զիջերին հասնում է տան դռներին:

Այնտեղ պետք է տեսնել հին հարսանիքի նոր հրավիրվածներին. այնտեղ դևերն են կաքավում, երբ այր ու կին իրար խաժատում են: Տունը խավարին է՝ ո՛չ յուղ կա, ո՛չ մոմ, մանուկներն անոթի լալիս են՝ ո՛չ հաց կա, ո՛չ պանիր, կինը խռոված կամ ծեծված՝ սրտի կսկիծից խփում է իր զավակներին, և տունը լցվում է վայերով ու ճիչով: Գինեմոլը՝ իբրև վիրավոր արջ, հայիոյանքով հարձակվում է կնոջ ու զավակների վրա և գլորվում-ընկնում:

Դրացիները, այս թշվառ վիճակը տեսնելով, ցավակցում ու ավաղում են, ոմանք էլ, անտանելի հայիոյանքներից ու անդադար խռովությունից ծանծրացած, բողոք բարձրացնելով առավոտ շուտ դիմում են դեպի պատրիարքարան, և պատրիարքի փոխանորդը գինեմոլին իր մոտ բերել է տալիս, մեկերկու անգամ խրատում ու հանդիմանում և գործի ուղարկում: Բայց երբ տեսնում է, որ դրանով չի զգաստանում, ծեծելով բանտ է գցում:

Եվ ի՞նչ այնուհետև. ո՛չ հացագործը հաց է տալիս, ո՛չ նպարավաճառը՝ բրինձ, յուղ ու մոմ, դեռ ավելին՝ գալիս ու նեղում է հարբեցողի կնոջը և պահանջում առաջին պարտքը, իսկ կինը ոչ մի դրամ չունի: Հոր տանից բերած օժիտը վաղուց սպառվել է, և պղնձե անոթները հետզհետե պակասել են տանից:

Ուրեմն՝ հարբեցողությունը չար այստ է, որից իբրև ակունքից հոսում են ամեն տեսակ թշվառություն ու եղկություն:

«Գինին անառակության է մղում,  
հարբեցությունը՝ թշնամության,  
& ով անձնատուր է լինում դրանց, խելացի չէ» (Առակ. Ի 1):

«Ո՞ւմ համար է վայր, ո՞ւմ համար է խռովությունը,  
ո՞ւմ համար են դատաստանները,  
ո՞ւմ համար են դաժանություններն ու տարակուսանքները... Ո՞չ արդյոք նրանց, ովքեր տարվում են գինով,  
ովքեր նայում են, թե որտեղ գինարբուք կա» (Առակ. ԻԳ 29-30):

## Գ Լ Ո Ի Խ Ժ Ա

## Բ Ղ Զ Ա Խ Ո Հ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա. Ախտավոր ցանկությունը կիզող հուր է ամեն տարիքի համար: Որովհետև ինչպես որ կրակը բոցակիզում է ոչ միայն չոր փայտն ու խռիվը, այլև նրանց մեջ եղած դալար փայտը, այդպես էլ ցանկությունը ոչ միայն անփորձ երիտասարդներին գիտի այրել, այլև տարիքով ու մտքով կատարյալներին, եթե պատճառին մոտ են: Եվ ինչպես որ կրակը, մոտենալով ոչ կիզանուտ նյութերին, զոնե տաքացնում է դրանք, այդպես էլ ցանկությունը, թեպետ չկարողանա կիզել կատարյալ մարդկանց, բայց գերծ չի թողնում ծխամահ կրքերից: Ուստի ամեն տարիքի մարդ էլ պիտի փախչի ախտավոր ցանկության պատճառից, որպեսզի կարողանա անվնաս մնալ:

Ինչպես որ բնական էակները միշտ շարժման մեջ են, որի պատճառն իրենց հատկությունը, բաղադրությունն ու զորությունն են, նաև այն էակների զորությունը, որոնցից ազդվում են, եթե մի վայրկյան իսկ դադարեին շարժվելուց, արդարև կդադարեին նաև էակ լինելուց, այդպես և ցանկության կիրքը միշտ գործում է ամենքի մեջ և երբեք չի դադարում, սակայն երիտասարդների մեջ գորեղ է, իսկ մանուկների ու ծերերի մեջ անզոր ու տկար է, սակայն իսպառ մեռած չէ, քանի դեռ մարդը կենդանի է: Որովհետև եթե մանուկների ու ծերերի մտքի ու կամքի գործողությունը չի պակասում, ապա չի պակասում և կրքի գործողությունը, որովհետև այս երեքն անբաժան լծորդներ են: Ուրեմն՝ թող յուրաքանչյուրը զգույշ լինի իր հանդեպ, որպեսզի չհաղթվի կրքերից, մանավանդ՝ մարմնի ցանկությունից:

Բ. Երիտասարդները պատերազմական մրցումներով կրթվելուց ավելի պետք է իրենց առաջ նպատակ դնեն առաքինությամբ կրթվելը, որով կարող են փառք ձեռք բերել և քաջությամբ հաղթել բոլոր ձախողություններին: Քաջությունը ոչ միայն վտանգավոր պատերազմում մահն արհամարհելն է, այլև մարմնի մոլեկան վայելքները ոտնահարելը:

Գ. Մոլեկան սիրով բորբոքվածները կույր ու խուլ են լինում, որովհետև չեն զգում ու չեն տեսնում ուրիշներին, այլ միայն նրան, ում չարաչար կերպով սիրում են. բոլոր բարիքներից հրաժարվում են, որպեսզի չհրաժարվեն նրանից: Ոտնակապ գերի են և իրենց ազատ են համարում, որովհետև առավել հոժար են մեռնել, քան նրանից հեռանալ:

Հնարավոր չէ մոլեկան սիրուն հաղթել ուրիշ կերպ, եթե ոչ փախուստով միայն: Ինչպես որ կրակը,

նյութից զրկվելով, շիջում է, այդպես էլ ցանկությունը, պատճառից հեռանալով, հաղթահարվում է: Որովհետև ախտավոր սերը բոլոր չարիքներից մեծ է, և ոչ այնքան պետք է երկնչել ամեհի ալիքներից, որքան նրանից:

Դ. Նավաբեկությունն ու մահը մարմնի հեշտանքից սակավ աղետաբեր են: Առավել պետք է երկնչել հեշտանքից, քան ծովի կարծր ժայռերից: Թող երիտասարդները զգույշ լինեն գեղեցիկ ծաղիկների տակ թունավոր օձի պես սողացող հեշտալի քաղցր խոսքերից, որպեսզի նրանց մահաբեր խայթիչներից անբժշկելի խայթվածներ չստանան: Գարշ հեշտանքի սերը նենգավոր ու դավաճան է, որովհետև քաղցրության քողի տակ ծածկում է իր դառնությունը:

Ե. Այն երիտասարդը, որ կանանց պես սիրում է պաճուճազարդ երևալ, պատվի ու փառքի անարժան է, որովհետև փառքը նրա վարձն է, ով հաղթում է հեշտալի հաճույքներին:

Զ. Մոլեկան ցանկությունը երբեմն այնքան է կատաղում ու տիրում մարդուն, որ չի թողնում, որ մարդն իրեն ճանաչի: Մոլին կարծում է, թե հանգիստ ու դյուրություն է փնտրում, բայց ամեն ինչում նրան ընդառաջ են ելնում տանջանքն ու մահը: Մարմնական հեշտանքն առավել է մաշում մարդու կյանքը, քան աշխատանքն ու ջանքը:

Է. Շատերը, որ աշխարհում հռչակավոր դարձան թշնամիների դեմ հաղթանակներով, ցանկության կույր սիրուց հաղթվեցին ու տկարացան: Նա է հաղթող ախոյան, ով հաղթում է հեշտալի սիրուն: Որևէ վտանգի մեջ ընկնելիս հեշտասերներն արագ են հուսալքվում:

Ը. Մարմնական ցանկությունը միշտ մարտնչում է իմաստության հետ. մեկը մյուսից ավելի է ջանք թափում նվաճելու մարդկանց սիրտը, և մարդիկ անդադար տարուբերվում են երկու հակառակ ուժերի կողմից: Երանելի է նա, ով իմաստությամբ հաղթում է մարմնի ցանկությանը և ոչ թե հաղթվում:

Թ. Երիտասարդական աշխույժ տարիքին հատուկ հեշտանքի ցանկությունը չի թողնում երիտասարդին հավատալ խրատատուների խոսքերին, բայց երբ ծախորդությունների ու վտանգների մեջ է ընկնում, այնժամ փորձով հասկանում է նրանց խոսքերի ճշմարիտ լինելն ու զգաստանում, բայց այդ անում է իրեն վնասներ պատճառելով:

Ժ. Գեղեցիկ ու զվարթամիտ որևէ երիտասարդ, եթե նաև աշխատասեր ու բարեկարգ է, գովության ու սիրո է արժանի, իսկ ով մատաղ տարիքում մարմնի անգործությանն ու հեշտանքին է ծառայում, վատառողջ ու վատանում է դառնում աշխարհում:

ՃԱ. Երիտասարդների հեշտանքից առաջ եկած հիմար բերկրանքը թեպետ այդժամ զգայական բաղձանքին զվարճություն է պատճառում, սակայն սիրտը խճմտանքով չարաչար խայթում է ու անբժշկելի վերք թողնում: Իսկ բանական բերկրանքը, որ ծնվում է ուղիղ մտքից ու բարեգործությունից, հոգին ուրախացնում է և նրանում թողնում մի անտխրական ցնծություն:

ՃԲ. Ոչ մի ուրիշ ցավաբեր ախտ այնքան անողորմաբար չի տանջում երիտասարդներին, որքան մոլեկան սիրո ախտը: Ավելի շատ մեռնում են ցանկական սիրուց, քան երկաթե սրով: Մոլեկան ցանկությունը ոչ միայն միտքն է խանգարում, այլև մաշում ու նիհարեցնում է մարմինը: Վերցրու փայտը կրակի միջից, և կրակ այլևս չի մնա. մտքից վերցրու ցանկության առարկան, և ցանկություն այլևս չի մնա:

ՃԳ. Խոզերը փախչում են քաղցր հոտից, և բղջախոհները՝ համեստ վարքից: Ով չի ճանաչում առաքինության հարգը, նրա համար համեստությունն արհամարհելի է:

ՃԴ. Բժիշկներն արտաքին կերպարանքից գուշակում են հիվանդի մարմնի ներքին ախտերը. իմաստունները զգեստներից ու պահվածքից նշմարում են երիտասարդի հոգու մոլեկան կրքերը: Երբ խըստաշունչ քամին լռում է, ծովի ալիքները խաղաղվում են. երբ ախտավոր կրքերը դադարում են, սիրտն ամբոխումներից հանդարտվում է:

ՃԵ. Նա չէ գովելի, ով գեղեցիկ մարմին ու մաքուր հանդերձ ունի, այլ ով ախտավոր ցանկություններից ազատ սիրտ ունի: Որովհետև գեղանձն մոլին դամբարանի նման է, որ դրսից վայելուչ է երևում, բայց ներսից լի է նեխությամբ:

ՃԶ. Թող անբան արարածներից ամաչի նա, ով ընդդեմ բնության օրենքի պղծությամբ է զբաղվում.

որովհետև անբաններն ավելի հոժար են մեռնել, քան բնության կարգը եղծել:

ԺԷ. Բղջախոհը գուցե չի գգում դևերի պատճառած տանջանքները, որովհետև առավել իր ախտավոր կրթերից է չարչարվում, քան դևերից: Կրակը կան ջրով է մարում, կան հողով, կան նյութի պակասությամբ. բղջախոհությունը կան պահեցողությամբ է խափանվում, կան ծերությամբ, կան մահվամբ:

ԺԸ. Ուր բղջախոհ կա, թող այնտեղ կույր կան դիվահար չփնտրվի, որովհետև բղջախոհը և՛ կույր է, և՛ դիվահար:

ԺԹ. Ավելի դյուրավ բուժվում են երկսայրի սրի խոցվածքները, քան ախտավոր սիրո վերքերը: Պետք է նայել այն բանին, որը չարժե ցանկանալ:

Ի. Ախտավոր ցանկությունը նման է սրտի անոթում ծածկված վառողի, որ երբեմն հայացքներից կան խոսակցությունից, ասես կայծից բորբոքվելով, այնպես է հրդեհվում, որ կործանում է երիտասարդին: Ուստի ով կամենում է անվնաս մնալ, թող վնասի պատճառից հեռանա:

ԻԱ. Չարժե, որ երիտասարդը բնակվի այնտեղ, ուր կասկածելի է, թե ցանկության խայթոցից անվնաս կմնա: Եթե փշերի վրա ընկնելն ու չվիրավորվելն անհնարին է, ապա գեթ խիստ դժվարին է: Որովհետև ով արտաքուստ շարժվում է առարկայից և ներքուստ էլ մղվում բնական կրքից, դյուրավ է կործանվում, եթե նույնիսկ հոգևոր մեկն է:

Ուստի մեկը որքան հեռու մնա այնպիսի առարկաներ տեսնելուց, որոնք միտքն ամբոխում ու հոգուն տհաճ բաներ են խորհել տալիս, այնքան ավելի կվայելի խաղաղություն:

ԻԲ. Մարմնական հեշտանքը գիտի, որ ինքն անարժան է մարդկանց սիրուն, ուստի իբրև լկտի կին՝ բյուրատեսակ հնարներով պճնվում է, որպեսզի հիմարների աչքին ցանկալի երևա, ինչպես անպարկեշտ կանայք՝ անխելք երիտասարդների աչքին: Քանզի եթե իսկապես սիրո արժանի լիներ, իմաստուններն ու առաքինիներն անշուշտ կսիրեին նրան: Այդ պատճառով էլ երբ մի հիմարի հափշտակելով իր սիրո մեջ է գցում, չի կամենում երբեք բաց թողնել, և միշտ թաքուն ու գաղտագողի է շրջում, որպեսզի իմաստուններից ու առաքինիներից չհանդիմանվի:

ԻԳ. Մարմնի ցանկությունը ծաղրում է իրեն սիրողներին՝ լկտի կանանց նման, որովհետև հազիվ մեկին պատրոդական սիրով կամենալով՝ իսկույն հեռանում-գնում է ուրիշների մոտ և ինչպես որ առաջինին խաբեց, պարզ է, որ նույն կերպով կխաբի նաև երկրորդին, նմանապես և՛ ուրիշներին: Եվ խաբուսիկ ու անկայուն լինելով՝ շարունակ մեկից անցնում է ուրիշներին, բայց ոչ ոքի չի հագեցնում, այլ ամենքին ծանակում ու նենգում է, մանավանդ, երբ սիրվում է, առավել դառնացնում է, քան հաճույք պատճառում: Ուստի հիմար է նա, ով մոլեգին սիրով հետապնդում է նրան ունենալու համար:

«Իսկ եթե մեկը շնանում է խելքի պակասության պատճառով, նա կորստի է մատնում ինքն իրեն...,  
& երբեք չի ջնջվելու նրա նախատինքը» (Առակ. Զ 32-33):

«Որդյա՛կ, անձնատուր մի՛ եղիր հեշտասիրության  
& թշնամիներից ուտնակոխ չես լինի» (Սիրաք ԺԸ 30-31):

**Գ Լ Ո Ի Խ Ժ Բ**

**Բ Ա Մ Բ Ա Ս Ա Ն Ք**

Ա. Արարածների մեջ ի՞նչն է ավելի ազնիվ ու գերազանց, քան մարդը, որ հրեշտակների նման ունի հոգեղեն կարողություն, կենդանիների նման կենդանական, բույսերի նման՝ տնկական և անզգաների նման՝ անզգայական, որովհետև Աստծու պատկերն ու նմանությունն է և բոլոր արարածների պաս-

կը: Եվ թեպետ հոգին մարմնից պատվով ու գերազանցությամբ առավել է, բայց մարմինն էլ իսպառ զուրկ չի մնում պատվից:

Ունի գործարաններ՝ ծառայելու հոգու կարողությանն ու գործունեությանը, այսինքն՝ հինգ զգայա-րանները, որոնք են՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք և շոշափելիք, որոնցով հոգին, իբրև թագավոր, հավատարիմ ծառայողներով ու գործակալներով կառավարվում ու կառավարում է մարդու բնության քաղաքը:

Նրանց մեջ լսելիքը, որ ականջն է, և ճաշակելիքը, որ բերանն է, մյուսներից առավել կարևոր են: Նրանցից առաջինը, այսինքն՝ ականջը, որպես լրտես, ազդարարող է դրսից դեպի ներս՝ հոգին, որով-հետև ինչ որ լսում է, անդանդադ հասցնում է մտքին, իսկ մյուսը, այսինքն՝ բերանը, որպես ներքին խորհրդակից, դեպի դուրս է ծանուցում ինչ որ հոգին մտքում խորհում ու պատրաստում է:

Եթե ականջը չլիներ, մարդը ոչինչ չէր իմանա, ինչպես հայտնի է խուլերից, և եթե չլիներ բերանը, ոչինչ չէր կարողանա իմացնել ուրիշներին: Ուստի մարդիկ իմանալով ու իմացնելով են հաղորդակց-վում միմյանց և առաջ բերում տեսական ու գործնական բազմահնար արհեստներ ու գաղափարներ: Ուստի ականջն ու բերանը մարդու մեջ որպես թռչունի երկու թև են, որոնցով ուր կամենում, թռչում են, և ինչ բաղձում, դրան հասնում են:

Իսկ արդ՝ սրանք մարդու մեջ որքան արժանահարգ ու կարևոր են իրենց պաշտոնները ճիշտ վա-րելիս, այնքան անարգ ու անպիտան են զարտուղելիս:

Ականջի ուղղությունն ուրիշներից լսածը մտքին հայտնելն է, բերանի ուղղությունը՝ մտքում ունե-ցածն ուրիշներին ասելը: Իսկ եթե ականջը՝ լսած խոսքը, և բերանը՝ մտքի խոսքը խառնակ կերպով այ-լափոխում են, մեկն իրեն է խաբում, մյուսն՝ ուրիշներին, որով և ճշմարտությունը վերացվում է. իսկ սրանից ավելի չար ի՞նչ կա աշխարհում:

Բ. Եթե ականջը ներս չի տանում լսածը, բերանը չի կարող դուրս հանել՝ ասելու համար: Եվ այս հավաստի է փորձից, որովհետև բոլոր խուլերը նաև համր են: Արդարև, համր չէր գտնվի, եթե խուլ չլի-ներ. որովհետև չկա մտքում մի բան, որ նախ չլինի զգայարանների մեջ:

Ուստի երանելի է ականջը, եթե լսում է, և ավելի երանելի, եթե ինչպես որ լսում է, այդպես էլ նույն չափով ու կերպարանքով, հասցնում է մտքին, և է՛լ ավելի երանելի է, եթե միայն բարին է լսում և չարի հանդեպ իր դժները փակում: Նույն երանությունը կընդունի և բերանը, եթե ուղիղն ու բարին միշտ խո-սի:

Գ. Ականջներն արդարև խցաններ են, որոնք աստվածային պատվիրանի հանդեպ դժվարալուր ու համրաշարժ են, իսկ բամբասանքի հանդեպ՝ դյուրալուր ու արագաշարժ:

Դ. Բնությունը, որ ոչինչ զուր տեղը չի գործում, մարդուն տվեց երկու ականջ՝ միշտ բաց, մի բե-րան՝ հաճախ փակ, որպեսզի մարդ ի բնե սովորի շատ լսել և սակավ խոսել: Եվ մյուս զգայարանները շարժուն ստեղծեց, իսկ ականջը՝ անշարժ, որպեսզի ինչ որ մի անգամ լսում է, անմոռաց ու անշարժ պահի:

Արտաքին դիրքերը, խոռոչներն ու ճանապարհը, որով ձայնը մտնում է, բնությունը դարուփոս ու շրջապատույտ կազմեց, որպեսզի լսած ո՛չ ամեն ձայն ականջը թողնի ներս մտնել, այլ ասես մաղով անցկացնելով՝ բարին ու ազնիվը ներս մտցնի, իսկ խոսքի անարգ թեփը դուրս թափի:

Ե. Կանանց ականջի բլթակից մարդիկ սովորեցին օղ կախել, որը հին դարերում գերի լինելու նշան էր, բայց այժմ՝ զգաստության նշան, որպեսզի կանայք չմոռանան ականջները փակել՝ վնասա-կար բաներ չլսելու համար, նաև որպեսզի իրենց հնազանդ ճանաչեն իրենց ամուսիններին:

Այս մտքով էլ մանուկները երբեմն ականջներին օղ են կրում, որպեսզի նրանք էլ, մանկական տա-րիքի բերումով չունենալով մտքի կատարելություն, գոնե մի արտաքին ազդարարից խրատվեն լինե-լու զգաստ և իրենց ծնողներին ու դաստիարակներին հնազանդ:

Զ. Այո՛, բամբաստողն ամենքի մեջ անարգ է, բայց նրանից ոչ պակաս անարգ ու արհամարհելի է և բամբասանք լսողը: Ուրեմն՝ որքա՛ն անարգ ու վատթար է նա, ով գործը թողած՝ տարբեր տեղեր է շրջում, ուր հաճախ բնակվում են դատարկապորտ, քսու ու լկտի անզգամներ՝ նրանցից լսելու որևէ



մեկի մասին բամբասանքներ:

Ականջն ու բերանն Աստծուց տրվեցին որպես բարիքների գործիքներ, բայց սրանք դարձնում են դրանք չարիքների ծառաներ: Ի՞նչն է սրանից ավելի չար, երբ մեկը չի հագնում սուտ խոսելուց ու բամբասելուց, իսկ մյուսը չի ասում՝ հերիք է ականջ դնեմ:

Է. Մարդիկ երբեմն բամբասանքի արատի մեջ իրենց անմեղ ցույց տալու համար ասում են. «Ճշմարտությունն ասացինք», ինչպես որ մեղք չէ, երբ մեկն իր լսածն ուրիշներին է պատմում:

Արդարև, կա բան, որը լսողն ու ասողը չեն մեղանշում, բայց ասելիքն ու լսելիքը ճիշտ ընտրել ամենքը չէ, որ կարող են: Ուրեմն՝ ավելի լավ է չասել ու չլսել այն բաները, որոնց վնասն ու օգուտը չես կարող լավ ճանաչել, որպեսզի չլինի թե վնասակարն անվնաս համարելով՝ անզգույշ լեզվով խոսես՝ նպաստելով լսողների կործանմանը:

Ը. Եթե չես կամենում բամբասանքի մեղքի մեջ գլորվել, ուրիշների խոսքերին դյուրահավան մի՛ լինիր, երբ մեկին վատահամբավում են: Այլ մտքով կշռիր, թե ո՞վ և ինչպիսի՞ մեկն է, որ պատմում է քեզ ուրիշների մասին, արդյոք առաքինի՞ է, թե՞ մոլի, խոհե՞մ է, թե՞ պարզամիտ, ստախո՞ւ է, թե՞ ճշմարտախոս, դատարկաշրջի՞կ է, թե՞ գործունյա, թշնամի՞ է նրան, ումից խոսում է, թե՞ բարեկամ, շահախնդնի՞ր է, թե՞ արդարամիտ, և այսպես բարվոք քննելով՝ կարող ես ճշմարիտը ստից տարբերել:

Քանզի մոլին բամբասում է, որպեսզի ինքը բարի երևա, պարզամիտը բամբասում է, որովհետև խելացի չէ, ստախոսը բամբասում է, որովհետև դա է իր սեփական պաշտոնը, դատարկակյացը բամբասում է, որպեսզի ժամավաճառ լինի, թշնամին բամբասում է, որպեսզի վրեժ առնի, շահախնդիորդ բամբասում է, որպեսզի ինչ-որ բան շահի:

Իսկ դու, եթե չես ախտացել այդ մոլությամբ, այդպիսիներից հեռու մնա, որպեսզի ականջներդ չապականվեն, սիրտդ չգայթակղվի, և հանիրավի դատելովդ՝ դու ևս չդատվես Աստծուց ու մարդկանցից:

Թ. Բամբասողն առավել եռանդուն է իր ազգին, ծանոթներին, մերձավորներին ու իրեն հավասարներին բամբասելու մեջ, քան օտարներին: Քանզի սրանց խոսքերն ու գործերն իրեն ավելի են հայտնի և որևէ կերպ իրեն են վերաբերում, ուստի որպես վրեժխնդիր ու որպես ուղղիչ ելույթ է ունենում՝ դատաստան անելու համար:

Բայց ողորմելին չգիտի, որ այլ է վրեժխնդրության, ճշմարտության ու դատաստանի գործը, և այլ՝ բամբասանքինը: Քանզի նրանք գործում են կամ օրենքի արդարության համար կամ ընկերոջ սիրո, կամ էլ Աստծու փառքի համար, իսկ սա, այսինքն՝ բամբասանքը, գործում է անիրավության, ատելության ու նախատինքի համար: Նրանք գործում են ինչ-որ ազնիվ նպատակով առաջնորդվելով, իսկ սա՝ հանդըզնությամբ, որովհետև հանդզնություն է մեկին դատելն առանց իրավունքի առաջնորդության: Ուստի բամբասողները հանդուգն են ու արդար օրենքին հակառակող, ընկերությունն ատող և Աստծու փառքն արհամարհող:

Ժ. Իրավացի բամբասանքն այն է, երբ մարդն ինքն իրեն է բամբասում, այսինքն՝ իր թերությունները քննում է և իրեն մեղավոր համարում: Եթե այս անում է, ահա նա է ճշմարտախոս, արդար ու բարեմիտ: Իսկ եթե իր հանցանքները թողած՝ ուրիշների թերությունն է մեջտեղ բերում ու դատում, ստախոս է ու անիրավ, որովհետև կամենում է ուղղել ուրիշների վարքը և ոչ իրենը:

Այն լեզուն, որ ուրիշներին բամբասում է, ուրիշների մեղքերն իրենով մաքրում է, իսկ ով իրեն է բամբասում, իր մեղքերի խոցը մաքրում ու բուժում է:

ժԱ. Շատ անգամ մարդն անգիտությամբ է ընկնում բամբասանքի մեջ, երբ պատմում է մեկի գործերի մասին: Եվ թեպետ ասողի միտքն ուղղակի նպատակ չունի ուրիշներին դատել, այլ միայն պարզաբար ասել ինչ որ տեսավ կամ լսեց, սակայն խոսքն այնպես է շրջվում, որ լսողն իր հետաքրքրասիրությամբ խոսքը բամբասանքի է վերածում: Որովհետև բազմիցս պատահում է, որ փոփոխվում են գործողի ու գործի դիտավորությունները, այսինքն՝ գործողի դիտավորությունն ուրիշ նպատակ է հետապնդում, բայց գործի ելքն այդ նպատակից տարբեր է լինում: Ուստի պետք է խիստ զգույշ լինել որևէ մեկի մասին ինչ-որ բան պատմելիս:

ժԲ. Շատերն էլ, իբրև թե խղճահարությունից, մեկի թերության մասին պատմելիս, խոսքն իբրև

խոստովանություն են ներկայացնում, կարծես եթե խոստովանություն են անում, այդ բամբասանք չէ. սակայն մեծապես խաբվում են: Քանզի ստույգ բամբասող է, ով մեկի թերությունը հայտնում է մյուսին. եթե պետք է խոստովանել, ոչ ոք իրավունք չունի խոստովանելու ուրիշների մեղքերը, այլ իր հանցանքները: Ուստի այսպիսիները, խղճահարությանը սկսելով, անխղճորեն բամբասում են:

ԺԳ. Նրա վրա է մեկը խոժոռվում, նրան բամբասում ու դատում, ում մասին լսում է, թե որևէ բան է խոսել կամ գործել ի վնաս իրեն: Բայց դո՛ւ, ո՛վ մարդ, արագ մի՛ հավատա ու դատիր, այլ քննիր ու տես, թե արդյոք նա բարեկա՞մ է քեզ, թե՞ անծանոթ:

Եթե բարեկամ է, սիրով գնա՛ նրա մոտ, հարցրո՛ւ, իմացիր, թե լսածդ ճշմարի՞տ է, թե՞ սուտ. բայց այս արա ո՛չ թե խռովված սրտով ու վրեժխնդրության հոգով, այլ եղբայրական սիրով: Եթե ճշմարիտ է, խրատիր կամ քո իրավացի փաստերը հայտնիր, որպեսզի երկուսդ էլ բժշկվեք և դադարեք իրար գաղտնի վշտացնելուց: Իսկ եթե ճշմարիտ չէ, ուրեմն վերջ վեճին:

Բայց եթե նա անծանոթ է քեզ ու օտար, լսածիդ համար բնավ մի՛ վշտանա և մի՛ բամբասիր նրան, որովհետև իրավունք չունես ամենքին քեզ հնազանդեցնելու և ամենքի լեզուն ու ձեռքերը կապելու ու արծակելու ըստ քո կամքի: Ձոարների գործերը քո ի՞նչ հոգսն են. օտարը որքան էլ նետահարի, սաստիկ չի վիրավորում, որովհետև հեռվից արծակված նետը տկար է հարված հասցնելու համար: Իսկ եթե այսպես չվարվես, հնարավոր չէ, որ անհավանությունից ու բամբասանքից զերծ մնաս:

ԺԴ. Կասկածամիտները, ինչպիսին են կանայք, դյուրամետ են դեպի բամբասանքը և դժվարությամբ են ողջամիտ դառնում ու բամբասելուց դադարում, որովհետև ոչ ոքի չեն հավատում, այլ իրենց չար կարծիքի մեջ հաստատում են մնում: Գուցե իրենց լսածն ու կասկածն անհիմն ու սուտ են. բայց ո՞վ կարող է ուղղել նրանց մտքի թյուր դատողությունը:

Ավելի լավ է ոչ թե խոսքով ջանալ այդպիսիներին հավանության բերել, այլ գործերի արդյունքով: Որովհետև ինչ անտեղի կարծիք որ ունենի մեկի մասին, երբ գործով դրա հակառակն են տեսնում, այդժամ ինքնին փոխում են իրենց կարծիքը և ուղղվում: Ինչպես որ բարբարոսները Մելիտինեում, երբ տեսան Պողոսի ձեռքից կախված իժը, ասացին. «Այս մարդը մարդասպան է», բայց երբ տեսան, որ ոչ մի վնաս չեղավ նրան, խոսքը շրջելով ասացին. «Աստված է սա» (Գործ. ԻԸ 3-6):

Իսկ եթե մեկն ուրիշ կերպ վարվի կասկածամիտների հետ, ոչ մի օգուտ չի ունենա, այլ առավել կգրգռի նրանց անփոփոխ մնալու նրա մեջ, ինչի մեջ մի անգամ մտքով գահավիժեցին:

ԺԵ. Բամբասանքն այլ մոլություններից ավելի հաճախ է հանդիպում մարդկանց մեջ, որովհետև առաջ է գալիս գործի կամ խոսքի որևէ թերությունից: Եվ քանի որ առանց թերության մարդ չկա, մեկը գործերի մեջ է սխալվում, մյուսը՝ խոսքի, եթե մեկի բոլոր սխալները մեջտեղ բերելով՝ մարդ բամբասի, հարկ է, որ բոլորին բամբասի, և այդժամ բամբասողին ո՞վ կդատի, որովհետև ինքն էլ է սխալական մարդ:

Ուրեմն՝ ներիր մարդկանց սխալները, որպեսզի դու էլ ներում գտնես քո հանցանքներին:

ԺԶ. Ավա՛ղ, ինչպիսի՛ աղետներ ու անհնարին դառն կրքեր. հազարավոր երիտասարդներ ու մանուկներ, կույսեր ու մանկամարդներ ավելի շատ մեռան ու մեռնում են քսու կանանց, մանավանդ շատաշրջիկ բանասարկու պառավների չարաթույն լեզվից, քան այլ պատահարներից:

Քանզի թունավոր օձի պես, մահվան գործիք դարձնելով իրենց լեզուն, հարվածում ու սպանում են բյուրավոր մարդկանց, որոնք ոչ մի մեղք չգործեցին իրենց հանդեպ: Եվ սրտում ունենալով խռովության դեհն, մանավանդ իրենք իսկ մարմնազգեցիկ դև լինելով՝ ստահող բամբասանքով, ասես բրիչներով ու մուրճերով, քանդում-կործանում են սիրո հիմքը, որ դրված էր երկու կողմերի՝ փեսացուի ու հարսնացուի միջև, և անհաշտ թշնամություն գցում նրանց միջև, մինչև որ ուրանում են նշանախոսությունն ու բաժանվում են: Որովհետև բամբասանքի սերմը խոսեցյալների և նրանց ազգականների ու մերձավորների մեջ չարաչար ու դառն ատելություն բուսցրեց:

Եվ ո՞վ կարող է թվել դրանից հետո ի հայտ եկող չարիքները: Երբեմն տղան տարագնաց լինելով հեռանում է հայրենիքից, երբեմն կարեվեր տրտմությունից անբուժելի ցավերով է պատվում, երբեմն հուսահատությունից մոլեգնելով մոլության անվայել ախտերի մեջ ընկնում: Իսկ արդյոք ի՞նչ վտանգ

չի կրում աղջիկը, որի անունը բժավորվեց հանիրավի. ո՞վ կտեսնի նրան մաքուր աչքերով, որ համբավվեց նախատինքով, թեպետև այն զուր և սուտ լինի. բայց ի՞նչ շահ դրանից, ամեն ոք խորշում է նրանից:

Ավա՛ղ, ինչպիսի՜ թշվառություն: Աղջիկն ամոթից իր մահն է կամենում, արտասուք թափում, չի թողնում տանը խորշ ու անկյուն, ուր թախծոտ սրտով չհառաչի, չի կարողանում չարախոսների սուտը ցույց տալ և իր անմեղությունը հայտնել: Եվ քանի որ կանացի բնությունը տկար է, ցավերով ու հեծությամբ զարկվում է սրտից, մինչև որ հյուծական ախտով է պաշարվում և տարածան մեռնում կամ հուսաբեկ լինելով՝ անմիտ բաներ գործում:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում նրա ծնողների հետ: Բնական մահն այնքան չի վշտացնում նրանց, որքան բարոյական մահը: Իսկ այսքան դառնադետ ու չարաչար վշտերի պատճառը ոչ այլ ոք է, եթե ոչ բամբասող լեզուները: Ուստի կամ բամբասողները պարտավոր են կանգ առնել ու զղջալ մահառիթ բամբասանքի համար, կամ պիտի չորանա նրանց լեզուն, որպեսզի անմեղներին մահվան չմատնեն:

ԺԷ. Բամբասողները մատնիչներից պակաս չեն մեղանչում, չասեմ թե՛ ավելի: Որովհետև կամ նախանձից են կամենում արատավորել մեկի անունը, կամ իրենց շահի համար են զուր ու սուտ խոսում: Եվ խիստ հաճախ են պատահում նրանց մեջ այս վերջինները, որոնք չարախոսում են աղջկանից կամ տղայից, որպեսզի նրանք ուրիշների հետ նշանվեն և իրենք էլ սրանցից դրամով կաշառք ստանան կամ մի ուրիշ բան՝ ընծայի անվան տակ: Այսպիսիները դասակից են մեր Տիրոջ մատնիչ Հուդային, որ արծաթի համար մատնեց Տիրոջը:

Չարախոսների մեջ կան և այնպիսիք, որ ունեն չափահաս ուստրեր կամ դուստրեր և այս անում են, որպեսզի ուրիշների նշանը խափանելով իրենց զավակների համար հաստատեն: Բայց ինչպես որ իրենք արեցին ուրիշներին, այդպես էլ իրենց հետ կվարվեն ուրիշները, որովհետև ստույգ վճիռ է, թե ինչով որ մեկը չափում է ուրիշներին, նույնով կչափվի և իրեն:

Արդարև, ով այսպիսի անիրավություններ է գործում, իրեն ու իր զավակին մատնում է հոգու և մարմնի վնասի ու դատապարտության:

ԺԸ. Բամբասանք անունը կարող է ստուգաբանվել որպես «բամ ասված բան», այսինքն՝ սին ու դատարկ զրույց: Որովհետև «բամ» բառը զուր և ունայն է նշանակում, իսկ ի՞նչ ավելի դատարկ խոսքեր կան, քան բամբասական խոսքը, որով մեկն ուրիշներին զրպարտում է: Իսկ ըստ հարմարագրության՝ ստուգաբանվում է որպես «բամբ ասված բան», այսինքն՝ դրդածայն խոսք: Որովհետև «բամբ» բառը բոմբյուն ու դրդոյուն է նշանակում, քանզի ամեն բամբասող դրդագնում, խռովում է ուրիշներին և աղմուկ գցում: Կարող է ստուգաբանվել նաև որպես «բան բասրանք», այսինքն՝ մեղադրական ու նախատական խոսք: Որովհետև բամբասող լեզուն ուրիշներին որպես հանցավոր դատում է ու մեղադրում:

Բայց քանի որ ստապատիր մեղադրանքով ընդդեմ ճշմարտության է կռվում, աններելի մեղքի մեջ է ընկնում, որովհետև նախանձի ու ատելության պատճառով լույսը խավար է կոչում: Ուստի չարախոսները թող դադարեն բամբասելուց և սովորեն բարին խոսել: Որովհետև աններելի մեղքին համապատասխան աններելի տանջանք կկրեն:

ԺԹ. Ոմանց առավել քաղցր է թվում եկեղեցականներին բամբասելը, եթե մարդկային սխալմունքների փոքր-ինչ արատ են նշմարում նրանց մեջ. բայց չգիտեն, որ այս դրդումը դիվական է:

Որովհետև ով մի անգամ իր կարգավորներից մեկին բամբասում է, պարզ է, որ նրանից գայթակղվում է, որով նրան համարում է անարգ ու փոքր և նրա խոսքը՝ արհամարհելի ու սին: Բայց դրանից հետո ո՞ւմ պիտի հնազանդվի, ո՞ւմ անսա, ումի՞ց խրատվի, ո՞ւմ առաջ մեղքերը խոստովանի:

Եվ ի՞նչ այնուհետև. կարգավորներից օտարանալով՝ հեռանում է նաև Եկեղեցու սրբարար խորհուրդներից: Այս ախտը հետզհետե այնքան է զորանում, որ կարգավորների քարոզած օրենքն արհամարհել է տալիս, և ահա այս էր չար դևի նպատակը՝ բամբասողներին զցել կորըստյան վիճի:

Ի. Ամեն ընդհանուր բաղկանում է առանձնավորներից. որովհետև բոլոր առանձնավորները, միմյանց համանման լինելով, իրենց տեսակի համաձայն՝ մի ընդհանուր են ստեղծում:

Արդ, ընդհանուրն ազգն է, որի առանձնավորներն անհատներն են: Ուստի եթե այսօր որևէ անհատի տեսնելով ինչ-որ սխալմունքի մեջ՝ բամբասում ես, գուցե վաղն էլ ուրիշին բամբասես, մյուս օրն էլ՝ մեկ ուրիշի: Եվ օր առ օր բամբասանքը շատացնում ես, մինչև այն քեզ սովորություն է դառնում, հետզհետե՝ երկրորդ բնություն, և այնուհետև դառնում ես ամեն մարդու դատավոր, ավելին՝ դահիձ, քանզի մարդկանցից ոչ ոք անսխալ չէ:

Ուստի բոլոր մասնավորներին դատելով՝ բամբասում ես քո ընդհանուր ազգը, բայց քանի որ դու ևս ազգի նույն ընդհանրության մասն ես, ուստի ինքդ քեզ ես բամբասում, ուրեմն սխալվելով դատում և քեզ: Ուստի զգուշացի՛ր քո եղբայրներին բամբասելուց, որպեսզի դու էլ արժանի չդառնաս բամբասանքի:

ԻԱ. Մի բամբասանքից սովորաբար երեք չարիք է ծնվում. առաջին՝ բամբասողը մահու չափ մեղանջում է, երկրորդ՝ լսողը մեղսակից է դառնում, երրորդ՝ բամբասվածը նույն մեղքով մեղանջում է կամ ուրիշ մեղքեր էլ գործում:

Որովհետև բամբասվածը, լսելով, որ մեկի կողմից բամբասվում է, կամ սկսում է իրեն բամբասողին բամբասել, կամ նետահար արջի պես սրտի ցավից կատաղելով՝ նրան մեծամեծ չարիքներ է հասցնում, որ վրեժ առնի, և այսպես միմյանց դատելու չարի հրդեհը օր առ օր բորբոքվում և այրելով տոչորում է ամենքին:

Արդարև, չարիքների մեջ բամբասանքից ավելի մեծը չկա և այժմ չկա նրանից ավելի տարածվածը, և թեպետ ամենքը գիտեն, որ ուրիշներին բամբասելը ծանր մեղք է, բայց տակավին շարունակում են նույնը:

ԻԲ. Բամբասանքի թունավոր նետերից մարդկանցից ոչ ոք անխոց չի մնում, բացի մանուկներից, և սրա համար մանուկները երջանիկ են: Իսկ բոլոր չափահաս տղամարդիկ ու կանայք, նրա երեքթևյան նետերով վիրավորվելով հոգուց, գեշի պես թավալվում են միմյանց արյան մեջ, և ոչ միայն այսքան, այլև մեռյալների արյամբ են շաղախվում:

Քանզի կա մարդ, որ մարմնով կենդանի է, բայց հոգով մեռած, և բամբասում է նրան, ով մարմնով մեռած է, բայց հոգով կենդանի: Ինչպիսի՞ ողբերգություն. եթե միայն կենդանի եղողին բամբասեր, ո՞վ գիտի, գուցե մի օր մտքում զղջալով՝ գնար ու նրանից ներում խնդրեր, իսկ մեռյալին, ում գրպարտության մեջ վատահամբավեց, որտե՞ղ կարող է գտնել: Կգտնի, այո՛, գերեզմանում, երբ ինքն էլ թաղվի նրա մոտ, բայց հանցանքն իր մեջ կմնա, որովհետև հանդերձյալ աշխարհում չկա մեղքերի ու դրանց թողության առևտրի տոնավաճառ, որովհետև այնտեղ ոչ ոք չի կարող մեղանջել մեկի հանդեպ, և ոչ ոք չի կարող ներել մեկի հանցանքները:

ԻԳ. Թերևս մեկը կամենա ասել, թե ինչպե՞ս է, որ բամբասանքը մեղք է համարվում, երբ պատմում են այն, ինչ ուրիշներն ասացին կամ արեցին. մի՞թե արգելված է ճշմարիտն ասելը. հապա անցյալ դարերի բազում գրքերում արձանագրված չէ՞ն մարդկանց գործերը՝ բարի կամ չար:

Լսի՛ր, ո՞վ դու, որ այս ասում ես: Եթե բարի է այն գործը, որ պատմում ես, այդ բամբասանք չէ, այլ գովասանք, պատշաճ է այն հռչակել և ոչ թե թաքցնել, որպեսզի գործողը փառավորվի, և լսողները շահեն: Իսկ եթե չար է, պատշաճ է այն ծածկել, որպեսզի գործողը վատ համբավ չունենա, և լսողները չզայթակղվեն: Որովհետև քո վատաբանելով չարը բարի չի դառնում, այլ է՛լ առավել չար, և դու չարիքների պատճառ ես դառնում:

Իսկ այն գործերը, որ գրքերում են պատմվում, դրանք գրվում են կամ դեպի բարին հորդորելու համար, եթե գործը բարի է, կամ լսողների զգուշության համար, եթե գործը չար է: Արդ, դու ևս, եթե լսողների զգուշության համար ես պատմում, որպեսզի ուրիշները չհետևեն չար օրինակին, սա բամբասանք չի համարվում, այլ զգուշության խրատ՝ չարից խորշելու համար, և այդժամ միայն գործն է արհամարհելի լինում, իսկ գործողը՝ ցավակցության արժանի, որովհետև մարդկորեն սայթաքեց:

ԻԴ. Չի կարող իրեն արդարացնել, ով առանց քաջատեղյակ լինելու՝ մեկին դատում ու բամբասում է: Ուստի չես կարող անհանցապարտ մնալ, բամբասող, որ չիմանալով գործողի միտքը և չնայելով գործի նպատակին՝ սկսում ես անդուռ բերանով դատել գործն ու գործողին: Քանզի հնարավոր է, որ

ում այժմ անգիտությամբ հանցավոր ես համարում, հետո նրա անմեղության մեջ համոզվելով՝ գիտությամբ գովես նրան, և ում սկզբում հանցագործ էիր կարծում, նա հետո բարերար երևա քեզ:

Բայց այնժամ դու ինչպե՞ս կհամարձակվես բանալ բերանդ՝ գովելու համար նրան, ում ավելի առաջ պախարակեցիր: Ուրեմն պարտավոր ես կամ բերանդ փոխել, կամ միտքդ: Բերանդ փոխել չես կարող, որպեսզի տեսնողների առաջ ծմնված ու ծաղրելի չլինես, ուրեմն ստիպված ես միտքդ փոխել, որովհետև սա անմարմին է, հակառակ կարծիքի փոխվելիս դեմքդ չի ծռում և քեզ այլանդակ չի դարձնում: Բայց այդ դեպքում դու անխոհեմ ես երևում, որովհետև չկարողացար սկզբից հասու լինել գործի էությանը:

ԻԵ. Մարդ կա, որ բարի մտադրությամբ հասարակական մի գործ է սկսում հոգուտ ազգի կամ քաղաքի, Աստծուն օգնության կանչում, երկար խորհրդածությամբ քննում գործի պարագաները և պատշաճ միջոցներ ընտրում՝ հաջողությամբ հասնելու նպատակադրված գործի վախճանին, բայց քանի որ մարդը միայն որոշում է, իսկ օգնությունը Տեր Աստծուց պիտի լինի, ուստի եթե Աստված ինչ-ինչ գաղտնի պատճառներով չի օգնում, և գործը բարի էլքով չի հաջողվում, իսկույն պիտի տեսնես բամբասողների ծափաձայն ցնծությունը: Բայց ի՞նչ մեղք գործեց նա. կամեցավ հայրենիքին բարիք գործել, բայց Աստված չկամեցավ այդ գործի հաջողությունը:

Ահա այնպիսին են բամբասողները, որ եթե հնար լինի, Աստծուն էլ կբամբասեն, բայց նրան չկարողանալով հասնել՝ չարաչար դատում ու վատահամբավում են Աստծու կամքի գործիքին, որ մարդն է:

ԻԶ. Քանի որ կանայք ի բնե շատախոս ու դատարկաբան են, նրանց մոտ սովորական բան է բամբասանքը, և եթե նրանցից ոմանք լռում են, համրի պես են երևում:

Եվ քանի որ կանայք գիտություններից ու գաղափարներից զուրկ են և կարևոր ու օգտակար բաների մասին չգիտեն, սկսում են իրար բամբասել:

Ուստի ով էլ որ լինի՝ դրացի, խնամի, թե ընտանիքի անդամ, զերծ չի մնում նրանց լեզվից, որովհետև բոլոր ասեղնագործություններից ավելի լավ գիտեն ծաղկեցնել բամբասանքը՝ մեկը հազարով բազմապատկելով, փոքրը մեծացնելով, լուր փիղ դարձնելով:

Նրանց դատարկաբան լեզուն ամբողջ գիշեր ու ցերեկ անվի պես անդադար պտտվում է բամբասելով և չի ասում՝ բավական է:

Վայ նրան, ով կանանց բերանն ընկավ:

ԻԷ. Հետաքրքրասեր մարդն արագորեն է սահում բամբասական խոսքերի մեջ, որովհետև շարունակ ցանկանում է իմանալ նորանոր բաներ ուրիշների խոսքերի կամ գործերի մասին: Իսկ այդ ամենին վերջակետ ու սահման չկա. որովհետև աշխարհում գտնվող բոլոր մարդկանցից էլ միշտ ծնվում են նորանոր խոսքեր ու գործեր:

Եվ քանի որ հետաքրքրասերը չի կարող այդ բոլորին տեղյակ լինել, ուստի միշտ տանջվում ու տառապում է: Եվ հագուրդ տալու համար իր անհագ բաղձանքին՝ ձգտում է ամեն ժամ ու ամեն տեղ լսել ու իմանալ ուրիշներին վերաբերող բաներ, և ինչ որ մի անգամ կարողանում է իմանալ, անհապաղ ուրիշներին հաղորդել է ջանում, քանզի հետաքրքրասիրության նպատակը սրան է միտում՝ լսածը պատմել ուրիշներին:

Մանավանդ որ հաճախ մտքում տազնապում է, թե ինչպե՞ս կարողանա խոսքերը սքանչելի կերպով զարդարել, որ ախորժական ու ըղձալի դարձնի ունկնդիրների ականջներին, ասես որպեսզի դրանով հանձարեղ ու լավ ճարտասան երևա: Եվ այս չի հաջողվում այլ բանով, եթե ոչ ստով, շատախոսությամբ, դատարկ շաղակրատությամբ, դերասանությամբ:

Ահա սրանք են, որոնցից վերընծյուղվում են բազմապատիկ դատարկաբանությունները, ժամավաճառություններն ու բամբասանքները, և սրանց բոլորի դայակն ու մայրը հետաքրքրասիրությունն է:

ԻԸ. Սուրբ Գրքի ու գիտությունների մխիթարությունից զրկվածները հաճախ են ընկնում բամբասանքի մեջ, քանզի չիմանալով օգտակար ու հոգևոր թեմաներով մի բան խոսել՝ անխտիր ամենքին բամբասում են, որպեսզի ժամանակն անցկացնեն:

Իսկ եթե նրանց մեջ մի իմաստուն ու գրագետ մարդ է գտնվում և գրքերից մի բան է ասում, շուտով ձանձրանում են և նրան շաղակրատ ու թեթևամիտ համարում, արհամարհում և զրույցի թեման փոխելով՝ նրան լռել տալիս: Մարդիկ էլ կան, որ հանդգնում են ասել՝ բավական է, ինչ որ վարդապետեցիր, մի փոքր կանգնիր, ուրիշներն էլ խոսեն: Եվ բնավ զարմանալի չէ. որովհետև ովքեր սովոր են ըմբռնվել աղբի գարշ հոտը, տաղտկանում ու խորշում են ծաղիկների անուշաբուրությունից:

ԻԹ. Բամբասողի լեզուն պապանձվում-կարկամում է, երբ բամբասվողը համբերում է: Եթե ասվածը ճիշտ է, անշուշտ առանց վշտանալու պիտի համբերի, որովհետև լսում է այն, ինչ արել է: Իսկ եթե բամբասանքը հանիրավի է, դարձյալ պետք չէ զայրանալ ու ընդդիմաբանել, այլ մանավանդ ծիծաղել կամ քաղցր ու համոզիչ խոսքերով սեփական անմեղությունը ցույց տալ: Իսկ ավելի լավ է աղոթել Աստծուն բամբասողի համար, որովհետև այդժամ Աստված, տեսնելով բամբասվածի բարեմտությունը, կամ իր շնորհով զգաստացնում է բամբասողին, կամ իր արդարությամբ պատժում, եթե նույն չարիքի մեջ համառում է:

Լ. Սրանից ավելի իրավացի բամբասանք չկա, եթե մեկը մտքում իրեն բամբասի, որով և զերծ կմնա ընկերոջը չարաչար բամբասելուց: Ով կարողանում է տեսնել իր թերությունները, այդքան չի կարող տեսնել ուրիշներինը:

ԼԱ. Գավազանի հարվածն այնքան չի ցավեցնում մարդուն, որքան լեզվի հարվածը. որովհետև թեպետ լեզուն ոսկոր չունի, բայց ոսկոր փշրում է:

Ինչպես որ կրակն է լավում փայտը, այդպես էլ բամբասողի լեզուն՝ անմեղի ոսկորները: Ավելի պետք է զգույշ մնալ խածնող շուրթերից, քան կատաղի շների ժանիքներից:

ԼԲ. Լեզուն գուցե այն պատճառով է համարձակվում չար բաներ խոսել, որ չունի աչքեր, որոնցով ամաչի, և չունի ականջ, որով լսի իր խոսքերը, չի տանջվում, որ վախենա, և բերանից դուրս չի գալիս, որ վտարվի: Եթե այսպես չլիներ, գուցե չհանդգներ շատ վնաս գործել:

ԼԳ. Եթե այն ամենը, որ լեզուն խոսում է, ձեռքերը կատարեն, շուտով նրանց մատները կփշրվեն, քանի որ լեզուն, ոսկոր չունենալով, կարող է շատ բան խոսել ու անվնաս մնալ, բայց ձեռքը, ոսկորներից կազմված լինելով, եթե այդ ամենն անի, սաստիկ կերպով կփշրվի:

ԼԴ. Մարդիկ իրավացիորեն են հանդիմանում ու պատժում նրանց, ովքեր միայն լեզվով են անտեղի, թյուր ու վնասակար պատմություններ անում, թեպետ մտքով չհամաձայնեն իրենց խոսքերին: Քանզի մարդ կարող է միայն արտաքին բաներն իմանալ և ըստ այդմ է դատում, և նրա դատաստանն արդար է: Իսկ ըստ ներքին մտածումների ու կամքի դատելն Աստծուն է հատուկ, որ գաղտնիքները քննող է: Ուստի ամեն ոք պիտի իր լեզուն զսպի անվայել բաներ խոսելուց, որպեսզի դատաստանի չարժանանա՝ ըստ Տիրոջ վճռի. «Քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ 37):

«Արդար շուրթերը լռեցնում են թշնամանքը,  
իսկ բամբասանք տարածողները անզգամներ են»  
(Առակ. Ժ 18):

«Ով զսպում է իր բերանն ու լեզուն,  
իր անձը պահպանում է նեղությունից» (Առակ. ԻԱ 23):

«Այսուհետև զգույշ եղեք անօգուտ քրթմնջյունից  
& բամբասանքներից խնայեցե՛ք ձեր լեզուն,  
որովհետև գաղտնի շնջյունը գուր չի անցնի,  
& ստախոս բերանը կսպանի հոգին» (Իմաստ. Ա 11):

«Շատերն են ընկել սուսերի սայրից, բայց ոչ նրանց չափ, ովքեր ընկել են լեզվի երեսից» (Սի-

րաք ԻԸ 22):

«Լեզուն մի փոքր անդամ է,  
բայց մեծամեծ բաներ է բարբառում:  
Ահա թե մի փոքր կրակ  
ինչպիսի՜ անտառներ է հրդեհում» (Հակոբ Գ 5):

«Եղբայրներ՛ր, միմյանց մի՛ բամբասեք.  
ով բամբասում է իր եղբորը կամ դատում է իր եղբորը,  
չարախոսում է օրենքի մասին  
& դատում է օրենքը» (Հակոբ Դ 11):

«Եթե միմյանց խածոտեք & հոշոտեք, զգո՛ւյշ եղեք,  
գուցե թե միմյանց ոչնչացնեք» (Պաղատ. Ե 15):

**Գ Լ ՈՒ Խ Ժ Գ**

**Դ Ա Տ ՈՒ Մ**

Ա. Բազմապատիկ չարիքները, որոնցից մարդիկ վնասվում են, սովորաբար առաջ են գալիս թյուր կասկածներից: Իսկ արդ՝ կասկածը մտքի երկբայական դատումն է անորոշ ու ներընդունական իրողությունների ու խոսքերի վերաբերյալ, որոնք ոչ աներկբա ճշմարիտ են, ոչ էլ լիովին սուտ, որովհետև ինչ որ միտքն ընկալում է, այն դատում է ըստ իր կարողության: Եթե միտքը պայծառացած է գիտության ու խոհեմության լույսով, ազատ է կանխակալությունից և զերծ՝ կրքերի ամբոխումից, չի սխալվում որևէ բան դատելիս. որովհետև չի հետևում երկբայական կասկածին, որ շատ անգամ սուտ է լինում, այլ հետևում է իր ստույգ ու բացահայտ ճանաչողությանը և ըստ տեղի, ժամանակի ու անձի պարագաների պահանջի արդարորեն է դատում:

Իսկ եթե միտքը զուրկ է գիտության ու խոհեմության լույսից կամ պաշարված է կանխակալությամբ, կամ վարակված ինչ-ինչ մոլեկան կրքերով, այնժամ կասկածն ընդունվում է որպես աներկբա ճշմարտություն, դրան հակվում է նաև միտքը դատելիս, ինչին հետևում է և կամքը՝ սիրելիս կամ ատելիս:

Բ. Աննենգ ու պարզամիտ մարդիկ մեկի մասին դատելիս իրենց կասկածն ավելի շրջում են դեպի բարի կողմը, իսկ նենգավորներն ու խորամանկները՝ դեպի չար կողմը: Որովհետև մարդկանց հատուկ է իրենց նման ճանաչել ու համարել ուրիշներին և ըստ այդմ դատել նրանց խոսքերի ու գործերի մասին:

Ուստի պարզամիտներն արագ են խաբվում, որովհետև ամենքին հավատում են՝ կարծելով, թե ամենքը պարզամիտ են, իսկ խորամանկները ոչ ոքի չեն հավատում, և այս երկու ծայրերն էլ մոլեկան են: Որովհետև ինչպես որ պատշաճ չէ ամենքին հավատալ, այդպես և պետք չէ ամենքին նենգավոր կարծել, այլ պետք է իրերի մասին արդարությամբ դատել, առանց աջ կամ ձախ խոտորվելու:

Գ. Ոմանք դատելիս տգիտության պատճառով են սխալվում և թերևս արժանի են ներման. բայց շատ են նրանք, որոնք ատելությունից են չարաչար դատում ուրիշներին: Չեն նայում գործողի մտադրությանը և ոչ էլ գործի էությանը, այլ կրքից մոլեգնելով՝ չար կասկածներ են ծնում, որոնցից առաջ են գալիս անխիղճ դատումներ: Սրանք չեղածն էլ են իբրև եղած տեսնում, սակավը շատացնում, փոքրը մեծացնում, խաղաղությունը խռովության փոխարկում, սերն ատելություն դարձնում:

Ուրիշների արած բոլոր բարիքները մարդիկ չար կասկածներով կարող են թյուրել, որով ոչ միայն

ուրիշներին են խռովում, այլև իրենք են շարունակ խռովված աղմկում: Եթե սրանք իրենց կասկածն ուղղեին դեպի բարի կողմը, կարող էին հասկանալ գործի էությունը կամ գործողի մտադրությունը, չէին հանդգնի անտեղի, մոլորաբար դատել, և չէր լինի այդքան գծություն ու երկպառակություն սիրելիների կամ ազգատոհմի և կամ ընտանիքի մեջ:

Որովհետև ահա ամեն օր տեսնում ենք, թե ամուսինն՝ իր կնոջից, կինն՝ ամուսնուց, եղբայրը՝ եղբորից, բարեկամը՝ բարեկամից ունայն ու սխալ կասկածների պատճառով բողոքում են դատելով: Սրանցից ոմանք, անցնելով մարդկայնության սահմանը, անագորույն մտքով միմյանց մատնում են հոգու ու մարմնի զանազան վնասների:

Դ. Սխալ կասկածից ծնված չարաչար դատումը եղավ ու միշտ կլինի քաղաքների կործանման, անմեղ արյան հեղման, հանիրավի տարագրության, անհաշտ խռովության և այլ բազում վնասների ու թշվառությունների պատճառ: Վերջապես ասեմ, որ աշխարհում չկան այնպիսի մեծամեծ չարիքներ, որ առաջ չգան երկբայական ու չար կասկածներից:

Ո՛վ չար ու սխալ կասկած, մարդկային կյանքի խոշտանգիչ ու խաղաղության թշնամի, որ քողարկվում ու թաքնվում ես բոլոր մոլությունների մեջ և չարաչար տանջում մարդկային ցեղը:

Ե. Հպարտը, լսելով կամ տեսնելով ուրիշների գործերը, չի խոնարհվում քննելու ստույգը, այլ համարում է այնպես, ինչպես կամենում է, և այսպես ընկնում չար կասկածների ու դատումների մեջ և արհամարհում ուրիշներին:

Զ. Նախանձողը, տեսնելով ուրիշների բարիքները, նախանձի կրքով բորբոքվելով, հնոցի պես վառվում ու չարաչար կասկածներով դատում է, թե՝ «Անարժան են նրանք այն բարիքներին, որ վայելում են»:

Է. Բարկացողը, սրտմտության կրքից կուրացած, չի կարողանում շրջահայաց լինել և լսածն ու տեսածը ճշտել, այլ արագորեն կասկածում է, թե այդ ամենն իրեն հակառակ ու վնասակար է:

Ը. Ծուլը, աշխատել չկամենալով, կարծում է, թե աշխատանքը տկարացնում է իրեն, գուցե և վաղաժամ մահ պատճառում:

Թ. Ազահն իր ունեցածն իր կարիքներին բավական չի համարում և ջանում է ավելին ժողովել, ասես պատրաստվում է հավիտենապես ապրել:

Ժ. Որկրամոլը կարծում է, թե մարդիկ ապրում են, որ ուտեն, և ոչ թե ուտում, որ ապրեն. ժուժկալելիս նեղվում է, որովհետև համարում է, թե իր կյանքը կապված է որկորի զեխության հետ, և թե կարագացնի իր մահվան օրհասը, եթե սակավ կամ պարզ կերակուր ուտի:

ՃԱ. Բղջախոհը կարծում է, թե հանգիստ կգտնի մարմնի գարշ հեշտանքի մեջ. թշվառը չգիտի, որ ինչքան շատացնում է մարմնի ցանկությունները, այնքան առավել է տառապում նրանից:

ԺԲ. Կան նաև այնքան անվճռական ու մտախաբ մարդիկ, որ ժամ առ ժամ փոխում են իրենց կարծիքը, ինչի հետևանքով միշտ վարանելով տանջվում են մտքով: Արդ, եթե բազում տգետներ ու կրքերով պաշարվածներ, միասին հավաքվելով, իրենց կարծիքներն առաջ բերեն, ինչ թվով մարդիկ որ լինեն, այնքան տարածայն կարծիքներ երևան կգան: Մեկն ասում է խուժ, մյուսը՝ դուժ, և մեկը մյուսի կարծիքը չի հավանում:

Եվ այս խառնախորթ կարծիքներից ինչպիսի՞ հրեշավոր չարիքներ առաջ չեն գալիս ի վնաս նրանց կամ հասարակության. փորձը ոչ մի տեղ պակաս չէ, միտք ունեցող ամեն ոք կարող է տեսնել:

ԺԳ. Կասկածամիտը տանջվում է առանց տանջողի և փախչում առանց հալածչի: Որովհետև ինչ որ չի ասել մեկը, կարծում է, թե ասել է, և ինչ չի արել, կարծում է, թե արել է, ուստի միշտ հոգ է անում, տառապում ու հանգիստ չունի: Ամենքին իրեն ատող է համարում, ամենքին՝ թշնամի, ամենքին՝ բամբասող, բայց եթե իր ունայն կասկածը սրտից հաներ, կտեսներ, որ շատերն են իրեն սիրող, բարեկամ ու գովիչ:

ԺԴ. Հանդուգն չարություն է եղբորը դատելն այն հանցանքի մեջ, որից ինքը դատողն էլ զերծ չէ. արդյոք ի՞նչ կշահի, եթե ոչ իրեն կրկնապատիկ ու եռապատիկ հանցանքներով բեռնավորելը: Առաջին՝ որ հանիրավի դատեց իր եղբորը, երբ ինքն իրավունք չունեի դատելու: Երկրորդ՝ որ իրեն արդա-



րացրեց՝ ստելով իր խղճի դեմ, ինչը ճշմարտությանը հակառակել է նշանակում: Որովհետև անստելի ճշմարտություն պետք է համարել խղճմտանքով դատաստանը, իսկ ով իր խղճի դեմ է խոսում ու գործում, ընդդեմ ճշմարտության է զինվում ու մաքառում: Երրորդ՝ լսողին խաբում է և դառնում խարդախ, կեղծավոր ու գայթակղեցնող, որովհետև լսողը, գուցե տեղյակ լինելով երկուսի էլ՝ բամբասողի ու բամբասվողի գործերին, մտքում գայթակղվում ու դատում է, թե սա, նույնպիսին լինելով, ինչպես է ուրիշներին բամբասում:

Արդարև, եթե այդպիսին կամենում էր անհանցապարտ երևալ, պետք և արժան էր նախ հանցանքը գործողին արդարացնել, թե ակամա գլորվեց, և ցավակցություն ցույց տալ, թե սխալական մարդ է: Երկրորդ՝ խոստովանել, թե ինքն էլ է ժամանակին այդպիսի մի հանցանք գործել ու զղջացել: Սրանով իսկ և իսկ կշահեր լսողին և իր մասին բարի կարծիք կստեղծեր՝ սրանով արդարև արժանի դառնալով գովության ու բարի վարձքի:

ԺԵ. Մերն ու ատելությունը կուրացնում են հոգու աչքերը և նրան չեն թողնում տեսնել արդարն ու իրավացին և ճշտորեն դատաստան անել: Որովհետև սիրողը սիրելի անձի մեջ որևէ արատ կամ թերություն չի տեսնում, այլ մտածում է, թե նրա մեջ եղած ամեն ինչ բարի ու վայելուչ է, իսկ ատողն ատելի անձի մեջ որևէ բարի բան չի նշմարում, այլ մտածում է, թե նրա մեջ եղած ամեն ինչ չար ու թյուր է:

ԺԶ. Ատելությունը թյուրում է մարդու ուղիղ դատողությունը. որովհետև սխալ կասկածի պատճառով մարդկանցից ասվող որևէ զրլխավոր մարդ, եթե իր խոհեմությամբ ու ջանասիրությամբ որևէ բարիք է գործում հասարակությանը, ասում են. «Աստված արեց մեզ այդ բարիքը, և ո՛չ թե նա»:

Իսկ եթե բարուն հանկարծական դիպվածով հետևում է որևէ վնաս, անմիջապես աղաղակ են բարձրացնում, թե՛ «Նա իր անզգուշությամբ կամ կամակորությամբ եղավ այս չարիքի պատճառը», և բնավ չեն հոժարում ասել, թե՛ «Աստված ըստ Իր անքնին խորհուրդների թույլ տվեց, որ այս վնասը պատահեր մեզ, որպեսզի զգաստանանք»:

ԺԷ. Եթե մարդիկ թյուր կասկածը վերացնեին իրենց մտքերից, թշնամությունն իսպառ բնաջինջ կլիներ կամ հույժ սակավ կլիներ: Քանզի մարդկանցից շատերը թշնամությունն անիրավ դատումով միմյանց վրա են զցում կամ անձիշտ կասկածով աճեցնում: Հանդըզնություն ու տմարդություն է առանց քաջատեղյակ լինելու ուրիշներին դատելն ու վատահամբավ դարձնելը:

ԺԸ. Բանական՝ մտածելու և կշռադատելու ընդունակ մարդ չէ, այլ չար ու դաժան գազան, ով սին կասկածով չարաչար դատում է ընկերոջը, ատում և ջանում ու հնարներ է մտածում չարիք հասցնելու նրան, գուցե տանջելու և մահվան մատնելու: Նրա կյանքն իր համար տանջանք է համարում, իսկ նրա տառապանքը՝ հանգիստ ու դյուրություն:

Ծիծաղում է, երբ տեսնում է նրան լաց լինելիս, և սուգով համակվում, երբ նա ուրախանում է: Երբ նա մեռնում ու հող է դառնում, իր սրտում ունեցած թշնամությունը չի մեռնում, որովհետև երբեք չի դադարում նրա մասին չարախոսելուց:

Այս գործը դևերին է հատուկ, և ով այս անում է, մարդակերպ դև է, նույնիսկ դևերից էլ դաժան, որովհետև նրանք այնքան թշնամություն չունեն իրենց ընկերների հանդեպ, որքան սա՝ իր եղբոր ու ազգակցի:

ԺԹ. Սրանից ավելի ի՞նչ անիրավ դատաստան, քան որ մարդ ինչ-որ հանցանքի պատճառով դատում ու բամբասում է ընկերոջը՝ ինքը ևս ունենալով նույն հանցանքը, գուցե ավելի մեծը: Թող լսի Տիրոջը, որ ասում է. «Կեղծավոր, նախ քո աչքից գերանը հանիր և ապա լավ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Ղուկ. 2 42):

«Մի՛ դատեք, որ Աստուծոց չդատվեք, որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու» (Մատթ. Է 1):

«Դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային.

կանգնած լինի, թե ընկած, իր տիրոջ համար է» (Հռոմ. ԺԴ 4):

«Մեկը բռնված է հակառակության խոսքեր & խնդիրներ առաջացնելու հիվանդությամբ, որոնցից առաջ են գալիս նախանձ, կռիվ, հայհոյություններ, չար կասկածներ, խարդախություններ» (Ա Տիմ. Զ 4):

## Գ Լ ՈՒՆ Ժ Դ

### Մ Ա Ր Դ Ա Հ Ա Ճ Ո

Ա. Կասկածելի է բարեհաջող նավարկությունը, երբ օդը պարզ է երևում. վտանգավոր է հիվանդությունը, երբ անվնաս է կարծվում. մահաբեր է դառնում թույնը, երբ իբրև դեղ է մատուցվում: Ուստի միշտ վնասակար ու զգուշալի է թշնամին, որը բարեկամի կերպարանք է առնում և մարդագող շողոքությամբ որսում սրտի գաղտնիքները:

Եթե հայտնի թշնամի լիներ, հնարավոր էր դիմադրել ու հետ մղել կամ խույս տալ ու ազատվել: Բայց քանի որ իր թշնամությունը ծածկել է բարեկամության քողով, շատ անգամ մեկին անպատրաստ գտնելով՝ որոգայթի ու ապականության մեջ է գցում:

Ուստի կարևոր է, որ ամենքն անմոռաց պահեն այս զգուշալից պատվերը, թե՛ ամեն հոգու մի՛ հավատաք:

Բ. Որևէ հարուստ, որքան էլ իմաստուն ու բարեկարգ լինի, տակավին որևէ թերություն կունենա. որովհետև սխալական մարդ է՝ ընկած իրեն շրջապատող մարդահաճոների անթիվ պատրանքների մեջ, մանավանդ եթե դաստիարակվել է սնափառության ու ազատականության մեջ:

Գ. Մարդահաճո հացկատակները, կամենալով մեծամեծներին հաճոյանալով խոսել, ստում ու ճշմարտությունն աղավաղում են, և սա կրկնապատիկ չար է, որովհետև դրանով ոչ միայն իրենց են վնասում, այլև նրանց, որոնց հաճոյանալ են կամենում:

Դ. Դժբախտ է այն իշխանը, որ անկարող է անձամբ հասու լինել հպատակների հակառակություններին ու հարթել նրանց վեճերը: Հավատում է այն օգտախնդիր շողոքորթների ստերին, որոնք հավատարմության կերպարանքով ծածկելով իրենց թույնը՝ արտաքուստ ցույց են տալիս, թե սիրում են իշխանին ու ճշմարիտն են խոսում, բայց իրականում նրան ատում են և հեռու են ճշմարտությունից: Որովհետև ոչ թե իշխանին են սիրում, այլ այն օգուտը, որ ակնկալում են նրա շնորհիվ ստանալ:

Ե. Թշվառ է իշխանի վիճակը, երբ թունավորվում է մարդահաճոների պատիր խոսքերից, որոնց հետ կենցաղավարում է, և նրա կողքին չի գտնվում առաքինի մարդ, որ նրան ճշմարիտը հայտնի: Քանզի արի ու իրավախոս մարդիկ շահախնդիր համոզիչների նենգավոր դավաճանությամբ ընկել են վշտերի մեջ ու օտարացել նրանից:

Զ. Մարդահաճոներն ավելի շատ հպարտ իշխանին են խաբում ու վտանգի մեջ գցում, որովհետև իրերի մասին խոսում են ոչ այնպես, ինչպես իրենք գիտեն, այլ ինչպես հաճելի է իշխանի կամքին: Ուստի միշտ փոխում ու աղավաղում են ճշմարիտը, մանավանդ այն, որ վերաբերում է նույն իրեն իշխանին:

Է. Շահախնդիր մարդահաճոները շատ անգամ խաբում են նաև իմաստուն իշխանին, որովհետև շարունակ շրջապատելով նրան՝ իրենց շահասիրության պատճառով շողոքորթում են, իսկ բարեխոսները հեռու կանգնած սպասում են կանչվելու: Եվ իշխաններն առավել հաճում են կենցաղավարել մարդահաճոների հետ, քան բարեմիտների, որովհետև մարդահաճոներն արագ են ուրիշների ցանկությունները սովորում և շուտ են համոզում գործի մեջ, եթե նույնիսկ այն լինի ընդդեմ խղճմտանքի ու արդարության:

Ուստի անմիտ է նա, ով հավատում է շողոքորթներին: Նրանք հաճախ առերես գովում են մեկին,

բայց ոչ թե որ իրենք հավատում են իրենց գովեստներին, այլ որպեսզի գողանան նրա սրտի գաղտնիքները և խաբեն հոգուտ իրենց: Իսկ մեկին առերես գովելը նրան ծաղրել է նշանակում, և հիրավի արժանի է ծաղր ու ծանակի, ով հաճում է ընդունել այն գովությունը, որ տալիս են նրան հացկատակները:

Ը. Շողոքորթները ոչ այնքան հասարակ մարդկանց, որքան իշխանավորներին են որսում իրենց ցանցերի մեջ, և եթե իշխանը չհեռացնի նրանց ու չսիրի ճշմարտախոսին, իր կորուստն իր ձեռքով կպատրաստի:

Թ. Մարդահաճոները գողերից էլ անգութ են, որովհետև վերջիններս միայն արտաքին ունեցվածքն են գողանում, իսկ սրանք՝ սրտի ներքին խորհուրդները:

Ժ. Կեղծավորները ավելի են արժանի ծանր պատժի, քան չարագործները. որովհետև հայտնի չարագործներից մարդիկ խուսափում են, իսկ կեղծավորները չար լինելով բարի են ձևանում և դրանով խաբում մարդկանց: Այս պատճառով ճշմարիտ առաքինիները նույնպես երկբայելի են դառնում:

ԺԱ. Ով նախկինից ավելի է պատվում մեկին, կամ խաբել է նրան, կամ կամենում է խաբել:

ԺԲ. Մարդահաճոները սովոր են ավելի շատ գովել չարերին, քան բարիներին, քանզի գիտեն, որ պետք է ավելի երկնչել չարերից, քան բարիներից:

ԺԳ. Շատ նենգավորներ շողոքորթ քաղցրաբանությամբ սիրելի են դառնում իբրև բարեբարոներ, և շատ առաքինիներ իրենց խիստ ու անաչառ խոսքերով ատելի են դառնում իբրև դաժանաբարոներ ու անկենցաղավարելիներ:

ԺԴ. Ով ցանկանում է ամենքին սիրելի լինել, չի կարող մնալ առանց մոլությունների, որովհետև ով կամենում է ամենքին հաճոյանալ, ստիպված է իր ընթացքը նրանց ճանապարհին հարմարեցնել, և քանի որ մոլիները բազում են, ուստի ինքը ևս նմանվում է նրանց, որպեսզի սիրվի նրանցից:

ԺԵ. Շահասիրությունը խիստ վտանգավոր է, և ամենքը պետք է զգոն ու զգույշ լինեն, որ հանկարծ չդավաճանվեն նրա կողմից: Որովհետև շահասիրությունն ընտանի թշնամի է, մտնում է մարդու ներքին խորհուրդների մեջ, և եթե մեկն անսույն է նրան, նենգում ու որոգայթի մեջ է զգում:

ԺԶ. Պետք է ավելի երկնչել թշնամու խորամանկությունից, քան նրա ուժից, որովհետև ուժն առանց խորամանկ հնարների դժվարանում է հաղթել:

«Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները»  
(Սաղմ. ԾԲ 6):

«Նրանց նենգավոր լեզուները խոցոտող նետ են:  
Նրանց բերանի խոսքերը իրենց ընկերոջ հետ  
խաղաղության մասին են խոսում,  
իսկ նրանք իրենց սրտում թշնամություն ունեն»  
(Երեմ. Թ 8):

«Ո՛չ թե հսկողության տակ ծառայելով,  
որպես մարդահաճո անձեր, այլ որպես Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամ-  
քը» (Եփես. Զ 6):

«Եթե ջանայի մարդկանց հաճելի լինել,  
ապա Քրիստոսին ծառա չէի լինի» (Գաղատ. Ա 10):

**Գ Լ Ո Ի Խ Ժ Ե**

## Հ Ա Յ Հ Ո Յ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա. Ի՞նչ պետք է ասել լեզվի ու բերանի հանդգնության մասին, որ հաստատվեցին մարդու այս բնության մեջ որպես մտքի թարգման ընկերոջը. մտքի թարգման, որովհետև ինչ որ միտքը խորհում է, նույնը պիտի խոսեն լեզուն ու բերանը, որոնք թեպետ տարբեր են, բայց նույն պաշտոնին են կարգված:

Արդարև հույժ բարի ու պիտանի են սրանք, երբ պատշաճն են խոսում, այսինքն՝ ընկերոջը խրատում են, տգետին ուսուցանում, տրտմածին մխիթարում կամ Աստծուն աղոթում, նրան օրհնում ու նրանից շնորհակալ լինում: Իսկ եթե անվայելն ու անպատեհն են բարբառում, խիստ վնասակար ու չար են դառնում:

Բ. Բոլոր արարածները զարհուրում են, երբ մտավոր ու իմացական բնությունից, ինչպիսին է մարդը, լսվում են հայիոյություն կամ անիծաբանություն, կամ նզովք, կամ հիշոց՝ թե իր անձի և թե ուրիշների հասցեին: Սա դեմ է ոչ միայն Աստծուն, այլև բանական բնությանը. որովհետև բնությունն իսկ խորշում է բերանի անկարգաբար խոսելուց ու բնության օրենքը կորցնելուց:

Իսկ արդ՝ ինչպիսի՞ սարսափ ու դող չի պաշարում բարկասիրտ հայիոյողին. նրա ձեռքերը դողդոջում են, ծնկները՝ իրար գարնվում, սիրտն ուժգին տրոփում է, աչքը՝ շրջվում, երեսը՝ գունաթափվում, բերանը՝ փրփրում, լեզուն՝ կապվում, և նա, մարդկային սահմանից լիովին օտարացած, գիշակեր գազանի է կերպարանափոխվում: Եվ ո՞ր կիրքն է սրանից ավելի թշվառ, որով վարակվում են բարկասիրտ հայիոյողները:

Այդժամ կարելի է տեսնել մի այլանդակ հրեշի կամ անզգամ ու անբան մեկի, որովհետև բարկասիրտ հայիոյողն իսպառ կորցնում է բարին ու չարն ընտրելու ընդունակությունը: Ո՛չ ծնողներին է ճանաչում, ո՛չ որդուն խնայում, ո՛չ սիրելիներին ու բարեկամներին տարբերում, այլ առհասարակ ամենքին անարգում է ու հայիոյում, մինչև որ խիստ բորբոքվածությունից, բերանը երկրի վրա ունենալով, լեզվով երկնքին է հասնում, խելագարված հանդգնություն է գործում հոգևորի, չասեմ թե Աստծու հանդեպ:

Վա՛յ այս դժբախտություններին. նրանց լեզուները երկսայրի սրի պես մտնում են իրենց սիրտը և մահացու վերք բացում իրենց հոգիներում, բայց հիմարները կարծում են, թե ուրիշներին են վիրավորում: Ուստի խիստ զգուշալի է այս չար ախտը, որովհետև ասելի է դարձնում Աստծու և մարդկանց առաջ:

Գ. Հայիոյությունն անարգական ու անեծքի խոսք է՝ ասված ընդդեմ Աստծու և աստվածայինների: Այս մեծ չարը երբեմն առաջ է գալիս անհավատությունից, որովհետև անհավատները, չինազանդվելով Աստծու օրենքին ու կարգադրությանը և Սուրբ Եկեղեցու ու սուրբ հայրերի կանոններին, ընդդեմ նրանց զինվում ու մտքով մաքառում են կամ հայտնապես հանդգնում հայիոյել:

Դ. Հայիոյությունը երբեմն առաջ է գալիս հպարտությունից. որովհետև հպարտը, ուրիշներին անհավան լինելով, խելագարված մոլեզնում է անհավան լինելու նաև աստվածայինների հանդեպ և սկսում է հետաքրքրվել աստվածային բաներով, թե Սուրբ Երրորդությունն ինչպես է մի Աստված և երեք անձ, և թե ինչպես ստեղծեց այս աշխարհն ու նրանում գտնվող բաները, կամ ինչ կար արարչագործությունից առաջ և ինչ պիտի լինի հետո և այլն:

Ե. Հայիոյությունը երբեմն առաջ է գալիս հանդգնությունից. որովհետև մարդու սահմանափակ իմացողությունը, քննելով մտքին անհասանելին, տարուբերվելով սահում է դեպի թերահավատություն: Եվ քանի որ տատանվում է ամենքին հայտնի դարձնել այս, որպեսզի չհանդիմանվի կամ չպատժվի, և հանձն չի առնում խոնարհությամբ հնազանդվել Աստծու օրենքին, մտքերով վարանում է: Ահա երկսայրի սուր, որ շարունակ տանջում է նրան անողորմ դահիճից առավել, և դրանից հետո նա սկսում է մոլորաբար խոսել Աստծու կամ աստվածայինների մասին: Թեև սրանով դրականապես չի դառնում հայիոյիչ, այսինքն՝ որևէ նախատական բան չի ասում Աստծու և աստվածայինների վերաբերյալ, սակայն բացասաբար է դառնում հայիոյիչ, երբ անհավան լինելով այն բաներին, որ Աստված հայտնեց ու

Սուրբ Եկեղեցին կանոնադրեց՝ դրանք խելաթյուրում ու եղծում է: Այս ախտով շատերն են հիվանդացել ու հիվանդանում հպարտության ու հետաքրքրասիրության պատճառով:

Զ. Հայհոյությունը երբեմն առաջ է գալիս տգիտությունից, որովհետև անտեղյակ լինելով աստվածային օրենքին ու սահմանումներին՝ մարդը տգիտաբար հանդգնում է իր կարծիքը պնդել, թե ճշմարիտ է, և հակառակը խոսելով կամ հավատալով՝ հայհոյիչ է դառնում:

Է. Հայհոյությունը երբեմն առաջանում է հեշտասիրությունից, որովհետև աստվածային օրենքն արգելում է մարմնական հեշտանքների մեջ անասնաբար թավալվելը, իսկ հեշտասերը կամենում է համարձակ մոլագարել դրանց մեջ:

Ուստի բարի օրենքը վերացնում ու իր մտքի մեջ հաստատում է օրենքին հակառակը և հանդգնում հայհոյել, թե չկա մարդկանց գործերի գիտակ ու քննիչ, դատաստան ու հատուցում, և այս անում է, որպեսզի անխիղճ մտքով հարատևի գարշ ու մոլեկան հեշտանքների մեջ:

Ը. Հայհոյությունը երբեմն առաջ է գալիս տրտմությունից: Որովհետև մարդ, տրտմական կրքով պաշարվելով ու չկարողանալով մխիթարություն գտնել, մտքով վարանում է: Եվ քանի որ տրտմության ախտը թուլացնող ու դանդաղաշարժ է, մտքի թանձրության պատճառ է դառնում, մանավանդ եթե ախտակիրը չի ճաշակել Սուրբ Գրքի մտքերը: Որովհետև եթե իմաստուն մեկը լիներ, ինչպիսի վշտերի մեջ էլ ընկներ, անմխիթար չէր մնա: Ուստի ասես անել շավղի մեջ արգելափակվելով՝ սկսում է հուսահատվել, և սրանից ճանապարհ է ընկնում դեպի հայհոյությունը՝ ասելով, թե՛ ինչո՞ւ Աստված այս չարիքներն ինձ վրա բերեց:

Թ. Երբեմն էլ հայհոյությունն առաջ է գալիս սաստիկ կսկիծից՝ սիրելիների մահվան պատճառով, լինի գավակի, թե ամուսնու, եղբոր, թե ծնողի: Որովհետև հայհոյում է, թե ինչո՞ւ Աստված չպահեց նրան մահվանից, արդյոք չտեսա՞վ մեռնելու արժանի մեկ ուրիշի և այլն: Այս մոլորության մեջ հաճախ անմիտ կանայք են գահավիժում, մանավանդ եթե մեռածն առույգ տարիքի միամոր որդի է:

Պետք է զսպել այս անբան կիրքը: Որովհետև ուր ազատության ճար չկա ձեռքներիս, այնտեղ հրամայողի կամքին հնազանդվելն է փրկության ելքը: Եվ արդարև չկա սրտի ցավերը բժշկելու այլ դեղ, բացի համբերությունից ու աստվածային կամքին հնազանդվելուց:

Քանզի հայհոյող լեզուն այդժամ ի՞նչ է շահում, եթե ոչ ցավերի վրա ցավեր ավելացնելը: Կյանքի և մահվան տերն Աստված է, երբ կամեցավ, տվեց, երբ կամեցավ, վերցրեց: Դու՛, ո՞վ սգացող և ընդդեմ Աստծու կամքի բարբառող, ի՞նչ կորցրիր: Ինչ որ քեզանից վերցվեց, քոնը չէր, այլ Տիրոջը: Եթե Տերն իրենն առավ, ինչո՞ւ ես տրտնջում ու հայհոյում, չէ՞ որ երբ կամենա, կարող է և քե՛զ կյանքից զրկել:

Արդարև, բնավ պետք չէ մեռյալների վրա անհուսաբար սգալ ու կոծել հեթանոսների պես և Աստծուն բարկացնել հայհոյության անվայել խոսքերով:

Ժ. Երբեմն էլ հայհոյությունն առաջ է գալիս կամակորությունից: Սա ավելի չար է, որովհետև կամակորությունը ծնվում է հպարտությունից ու տգիտությունից, իսկ երկու չար ծնողներից ծնված դուստրն ավելի չար է: Որովհետև կամակորներին հատուկ է չնահանջել նրանից, ինչ մի անգամ բանավոր կամ գրավոր խոսքով ուսուցանում են, այլ սին փաստերով համառել դրա մեջ:

Ուստի շատերն ընկան աղտեղի խոսքերի ու մոլորությունների մեջ, մանավանդ Աստծու՝ և Սուրբ Եկեղեցու կանոնների դեմ հայհոյությունների մեջ: Եթե սրանք վերացնեին կամակորության ախտը, արագ կճանաչեին ուղիղ ու ողջամիտ ճշմարտությունը:

ժԱ. Պատահում էլ է, որ հայհոյությունն առաջ է գալիս բարկությունից, որովհետև երբեմն բարկացածն այնքան է կատաղում խելացնոր մոլեգնությամբ, որ ընկնում է հայհոյությունների մեջ և անգամ իր մտքին անվայել ու տհաճ բաներ է բարբառում:

Թեպետ այսպիսիք բարկության բոցի անցնելուց հետո ճանաչում են իրենց թույլ տված վրիպումը և զղջում, սակայն հայհոյիչ են անվանվում, որովհետև մեծապես մեղանչեցին մարդկանց ու Աստծու հանդեպ:

ժԲ. Ինչպիսի և որքան անմխիթար ողբի են արժանի նրանք, որ գարշելի են դարձնում իրենց բերանները հիշոց կոչվող հայհոյությամբ, որ արժանի չէ հիշվելու: Ջարմանալի է, որ այդպիսի աղտե-

ղություններ լսելիս մարդիկ հեռու են փախչում, բայց խոսելիս նույնն անում: Ավա՛ղ, ինչպիսի՛ ապու-  
շություն ունեն այն մարդկանց մտքերը, որոնց բերանները լի են հիշոցներով:

ԺԳ. Մարդիկ ինչ որ ուտում ու խմում են, լավ ընտրում են դրանք, իսկ ինչ որ խոսում են, ինչո՞ւ չեն  
կամենում ընտրել. որովհետև սա՛ է մարդավայել, որ մարդու խոսածը լինի բարի, ընտիր, օգտակար և  
մեր մարդկությանն արժանի: Իսկ կերակուրների ընտրությունը ոչ այնքան բանականության գործն է,  
որքան զգայականի. անգամ անասունները, թռչուններն ու զազաններն առավել ունեն կերակուրների  
խտրություն, քան մարդիկ: Որովհետև երբեմն մարդիկ ակամա հակվում են ամեն ինչ ուտելու, իսկ  
անբանները բնավ չեն ուտում այն սնունդը, դեպի որը բնությունը չառաջնորդեց նրանց:

Ուրեմն, ով անվայել բաներ է բարբառում, ինչպիսին հիշոցն է, եղծում է մարդկության օրենքը և  
անբաններից էլ անարգ գտնվում, մանավանդ որ կամովին է այդ կատարում: Ուստի ամեն ինչում  
վատ ու անարգ են հիշոց տվողները, որոնցից պետք է հեռու մնալ, ինչպես թունավոր քարբերից:

ԺԴ. Հայիոյողներն ու հիշոց տվողներն արդյոք ի՞նչ են շահում անվայել բաներ խոսելուց. սա  
պետք է ռիհչներից սովորել, այլ հենց նրանցից՝ հայիոյողներից: Որովհետև այլ մոլությունները թե-  
պետ գարշ, չար ու ատելի են, բայց նրանց մեջ կա մոլություն, որ հաճույք է պատճառում, կա, որով  
մարդ որևէ բան է ավելացնում իր համար, կա, որով մի բան վերցնում է ռիհչից և դրանով վրեժ լու-  
ծում, իսկ հայիոյանքը սրանցից ոչ մեկը չունի: Որովհետև հայիոյելով մարդ հաճույք չի ստանում, որևէ  
բան ձեռք չի բերում և ոչ էլ ռիհչից մի բան վերցնում, այլ հակառակը՝ ինքն իրեն տանջում է. որքան  
կիրքը բորբոքվում է, այնքան հայիոյանքը սաստկանում է, և որքան հայիոյանքը սաստկանում է, այն-  
քան կիրքը՝ բորբոքվում:

Ուրեմն որտե՞ղ են սրանք կանգ առնում կամ ե՞րբ դադարում: Գուցե երբ օրը երեկոյանո՞ւմ է, կամ  
գիշերն առավոտվա՞ փոխվում, և կամ երբ իրենց սրտերը թալկանում ու նվաղո՞ւմ են:

ԺԵ. Երբ մեկը սկսեր հայիոյել, երանի թե նրա ականջն իսկույն կտրելով բերանին կարեին, որ լսեր,  
թե ինչ է խոսում: Արդարև, եթե հայիոյողն ինքը լսեր իր հայիոյանքը, իսկույն ամոթից կխփեր իր բերա-  
նին: Ավելի լավ է համր ու մաքուր բերանը, քան խոսողն ու անմաքուրը:

ԺԶ. Ով շատ է կատարում մի գործ կամ ասում մի խոսք, դա դառնում է սովորություն, և սովորու-  
թյունն էլ վերածվում է երկրորդ բնության: Ուստի ով սովորում է հայիոյելուն, չի կարողանում դրանից  
հետ կանգնել, այլ ինչ խոսում է, դրան խառնում է աղտեղի խոսքեր կամ անպարկեշտ ու անվայել  
պատմություններ, որոնք ըստինքյան հայիոյանք են:

Ուստի բանական մարդն այդպիսի չար սովորությունը տակավ առ տակավ պիտի մոռանա և բա-  
ռերն ու խոսքերը զգաստ մտքով կշռի, որպեսզի նույն չարիքի մեջ վերստին չընկնի:

ԺԷ. Հայիոյանքների կարգին է պատկանում և այն, որ քաղաքական կենցաղավարության մեջ ան-  
պարկեշտ բաներ են խոսում, և թեպետ սրանց նպատակը որևէ հայիոյանք տալը չէ, այլ իբրև թե  
զվարճախոսություն անելը, բայց անխոհեմությամբ դառնում են հայիոյող: Եվ սա փոքր չարիք չէ, որով-  
հետև աղտեղի բաներ հիշելով՝ արատավորվում է նաև միտքը թե՛ խոսողի և թե՛ լսողի:

Ուստի մարդիկ հեռու պիտի մնան այսպիսի անհամեստ խոսակցություններից, որպեսզի անզու-  
շաբար չսահեն հիշոցատվության մեջ:

ԺԸ. Ծնողները, ցանկացած արհեստի վարպետները և ուսուցիչները պարտավոր են նորահաս ե-  
րեխաներին խրատել ու զսպել, որպեսզի չընտելանան հայիոյանքներ տալուն կամ լսելուն: Որովհետև  
նրանց թարմ հասակը հեշտությամբ է սայթաքում այս ախտի մեջ, և մանկական տարիքում սրան ըն-  
տելանալով՝ կամ երբեք չեն մոռանում, կամ շատ դժվարությամբ են մոռանում:

Ուստի ոչ միայն վարձի արժանի գործ է այսպիսիներին խրատելն ու հանդիմանելը, այլև մեծ  
պարտավորություն. և եթե մեկը կարող լինելով զանց է առնում այս անել, նրանց մեղսակից է դառնում:

ԺԹ. Ինչպիսի՛ ապուշություն ունեն որոշ ծնողների մտքերը, որ խոսել նոր սկսած իրենց զավակնե-  
րին, երբ դեռ հազիվ են կարողանում թոթովախոս լեզվով ինչ-ինչ բառեր ասել, սովորեցնում են հայիո-  
յանք տալ: Անմեղ մանուկը բարին ու չարն ընտրելու կարողություն չունի, ինչ լսում է, այն էլ սովորում  
է, և երբ աղտեղի բառեր է արտաբերում, անմիտ ծնողը բերանը բացած ծիծաղում է և հորդորում նույ-

նը երկրորդել: Ինչպիսի՞ թշվառություն, մանուկը դեռ կաթնակեր է, իսկ ծնողները նրան դարձնում են գիշակեր գազան: Հապա վերջում ի՞նչ պիտի դառնա այդպիսի ողորմելի մանուկը, եթե ոչ հայիոյիչ:

Ուստի խնայեցե՛ք, ո՛վ ծնողներ, ձեզ և ձեր զավակներին և մանկությունից սովորեցրե՛ք նրանց բարի բաներ խոսել, որպեսզի բարի մարդիկ դառնան:

Ի. Ամեն մարդ, մանավանդ զավակների տեր հայրը, պարտավոր է լեզուն զուսպ պահել և որևէ անպատեհ պատմություն չպատմել կամ հայիոյանք չտալ նորափոթ երեխաների ու երիտասարդների առաջ: Որովհետև նրանց տարիքի բերումները կապկանման են. մեծերից ինչ լսում ու նրանց մոտ տեսնում են, սովորում են և ջանում համապատասխանել դրան:

Սա մարդու օրենք է, որ ետիները ցանկանում են նմանվել առաջիններին, նույնիսկ գերազանցել նրանց: Ուստի երբ փոքրերն անպարկեշտ բաներ են լսում մեծերից կամ տեսնում նրանցում, հարկավ սովորում են դրանք և իրենք էլ եղածի վրա ավելացնում:

Եվ եթե հայրը մտքով հակվեց չարին առանց առաջնորդի, ապա որդին, դեպի նույն չարն առաջնորդվելով հորից, անկարգության ի՞նչ աստիճանի չի բարձրանա: Արդարև, դրանից հետո հույս չկա, թե կարգի կգա: Քանզի ինչպե՞ս կարող է նա բարիք գործել, որ մանուկ տարիքում չարիքներ է սովորել՝ ըստ այսմ. «Թե որ հնդիկը փոխի իր մաշկը, ընծառյուծը՝ իր խայտուցները, դուք էլ կկարողանաք բարություն անել, դուք, որ սովորել եք չարիք գործել» (Երեմ. ԺԳ 23):

Եվ այս չարիքի պատճառը մեծերի մոլեկան վարքն ու անխոհեմ վարմունքն են:

ԻԱ. Նորահաս երեխաները հասակակիցներից էլ են չար բաներ ու հայիոյանքներ սովորում, երբ տանը կամ փողոցներում ի մի հավաքված՝ մանկական խաղերով են զբաղվում: Ուստի ով կամենում է իր զավակին բարիք անել, թող չթողնի նրան խոսել կամ խաղալ չարերի հետ և թող առանձին չուղարկի նրան ամեն տեղ, որպեսզի նրա մաքուր միտքը չարատավորվի: Որովհետև մանկական տարիքը նման է սպիտակ թղթի, որի վրա մի անգամ դրոշմվածն անջնջելի է մնում:

Սակայն հույժ վայել է նաև, որ դեռահաս երեխաները հլու ու հպատակ լինեն իրենց ծնողներին, վարժապետներին ու ուսուցիչներին և անզգամությամբ բնավ չլրբանան ընդդեմ նրանց խրատների, ապա թե ոչ իրենց արյանն իրենք պարտական կդառնան:

ԻԲ. Ո՞վ պիտի ողբա այնպիսի ծնողների գլուխը, որ բերանի խոսքով անեծք են թափում իրենց որդիների գլխին: Բարկությամբ բորբոքվելիս ի՞նչ չարիք չեն մաղթում, որ Աստուծուց հասնի իրենց զավակներին: Կան այնպիսիք, որ սրտի հառաչմամբ խնդրում են, որ զավակները զրկվեն աչքի լույսից, կան էլ, որ մաղթում են, որ չորանան նրանց ձեռքերը, ոտքերը կամ բերանը: Գտնվում են և ոմանք, որ նաև այլ մեծամեծ չարիքներ են հայցում, մինչև իսկ փափագում իրենց որդիների մահը: Սրանից ավելի ի՞նչ չար բան կա. արդյոք սա ինքն իրեն անիծել չէ՞:

Գազանները, անատունները, թռչունները սրանց համեմատությամբ ավելի գթած են իրենց ծնունդների հանդեպ և ձագերի հանդեպ գորովի պատճառով շատ անգամ մահվան են մատնվում: Իսկ անագորույն մարդիկ նրան, ում երկունքով ծնեցին ու աշխատանքով սնեցին, կամենում են ժամանակի մի վայրկյանում կորցնել:

Այո՛, անհնազանդ որդիները բարկացնում են ծնողներին, սակայն անհնազանդներն անեծքով ու չարամաղթությամբ չէ, որ ուղղվում են, այլ օրհնությամբ ու բարեմաղթությամբ, խրատներով ու հորդորներով: Քանզի անհնազանդ ու կամակոր որդին չար է, իսկ դու, որ ծնող ես, մի չարիքի վրա մեկ ուրիշ չարիք ես մաղթում, ուստի կամենում ես նրան ամենաչար դարձնել: Արդ, Աստուծուց շնորհ ու ողորմություն խնդրիր որդուդ համար, որով չարը կփոխարկվի բարու:

ԻԳ. Եթե Աստված բարկացող մայրերի բոլոր խնդրանքները կատարեր, նրանցից շատերը նույն օրն իսկ անզավակ կդառնային, որովհետև զավակների որևիցե անկարգության վրա բարկանալիս իսկույն աղաղակ են բարձրացնում և դառն անեծքով մահ խնդրում նրանց համար: Կան և այնպիսիք, որ ժանտախտից են բողբոջում, թե անտեսում է զավակներին, և կան այնպիսիք, որ մահաբեր հրեշտակից են գանգատվում, թե չի առնում նրանց հոգիները:

Թեպետ Աստված իր անբավ գթության պատճառով չի լսում նրանց ձայնը և չի կատարում այդպի-

սի անշնորհք ու անվայել խնդրանքները, բայց երբ շատ են նույնը կրկնում, զավակներին բազմիցս վերցնում է աշխարհից որպես պատիժ նրանց ծնողներին:

Եվ թեպետ ծնողներն այնժամ զղջում են, լալիս, կոծում են ու սգում, բայց ի՞նչ շահ այդ ողբից, եթե նրանց որդին անդարձ գնաց իր հավիտենական տունը:

Կան և անմիտ ծնողներ, որոնք հանդգնում են նաև տրտնջալ Աստծուց, որ իրենց որդիներին կյանքից զրկեց: Ինչպիսի՞ հայհոյական խոսքեր ու անհնարին անզգամություն. մարդիկ իրենց կամքը փոխելիս կամենում են նաև Աստծու կամքը փոխել, այսինքն՝ Աստծուն դեպի իրենց կամքը խոնարհել:

Ծնողները կարգված են զավակներին պահպանելու համար միայն՝ նրանց բարի մարդ դարձնելու, և ոչ թե ըստ իրենց կամքի սպանելու կամ ապրեցնելու համար, որովհետև մահն ու կյանքն Աստծու ձեռքում են: Ուստի մեծապես մեղանջում են այն մարդիկ, ովքեր մահ են խնդրում նրանց համար, որոնց տերը չեն:

Ուրեմն դու, ո՛վ ծնող, եթե զավակդ անառակ է, արտասվալից աչքերով աղոթի՛ր Աստծուն, որ նրան շնորհ ու զգաստություն տա, և ինչ վայել է, որ մարդկորեն անես, լինի սաստ, թե խրատ, անձանձիր արա՛, որ շահես նրան: Իսկ եթե չի շահվում ու չի զգաստանում, սրտառուչ պաղատանքով հանձնիր Աստծուն՝ անելու այն, ինչ կամենում է. գուցե քեզ իբրև պատիժ է տրվել, որին պարտավոր ես համբերել, որպեսզի Աստված, գթալով քո տառապանքներին, մի օր կատարի սրտիդ խնդրանքները և իր գործուն շնորհով նրան զգաստություն տա:

«Հեռո՛ւ վանիր ստախոսությունը քո բերանից  
& անիրավ շրթունքները հեռացրո՛ւ քեզանից» (Առակ. Դ 24):

«Իր լեզուն զսպողը պիտի պահպանի իր անձը,  
բայց ում բերանը հանդուգն է,  
պիտի խռովի իր հոգին» (Առակ. ԺԳ 3):

«Մարդու համար փառք է հեռու մնալ հայհոյանքներից,  
բայց ամեն մի անզգամ խառնվում է այդպիսի բաների»  
(Առակ. Ի 3):

## Գ Լ ՈՒՆ ԺՁ

## Ս Ա Տ Ն ՈՒԹՅՈՒՆ

Ա. Մատնությունն ամենազարհուրելի չարիք անվանելն անպատեհ չէ, որովհետև բոլոր սարսռագդու չարիքների ամբողջացումն է: Քանզի նրա մեջ գտնվում են ստախոսություն, սուտ վկայություն, նախանձ, բարկություն, ոխակալություն, թշնամություն, ատելություն, քինախնդրություն, նաև ազահություն:

Եվ ահա չարիքների այսքան դուստրերը ծնվում են հպարտություն թունալից մորից: Որովհետև եթե մարդը հպարտ չլիներ, թեկուզ որևէ կերպ վշտանար իր եղբորից, միևնույն է՝ խոնարհ հոգով կներեր նրան և այսպիսի չարիքներ չէր ձեռնարկի: Արդ, մատնիչն ի՞նչ է շահում, եթե ոչ հոգով ու մարմնով իր տուժելը. իսկ թե ինչպե՞ս, լսի՛ր ներքոգրյալը:

Բ. Սևամաղծությամբ վարակվածը, ախտի բորբոքման ժամանակ կարծելով, թե ուրիշներին է սպանում, իրեն է մեռցնում: Այս կերպ նաև դառն նախանձով ախտահարվածն է կարծում, թե ուրիշներին տուգանքի, տանջանքի կամ մահվան է մատնում, բայց մատնվածը, տառապանքներին համբերելով, իր հոգին ապրեցնում է, իսկ մատնիչն իսկույն կորստյան է մատնվում: Մանավանդ որ ով մեկին ինչ-որ չարիքի է մատնում, նույն չարիքի մեջ և ինքն է ընկնում՝ ըստ այսմ. «Փոս փորողն իր փորած



փոսի մեջ կընկնի» (*տե՛ն Սաղմ. է 16*):

Գ. Ով ռիսակալությունից է մատնում, որպեսզի վրեժ առնի նրանից, ումից ինչ-ինչ վշտեր կամ վնաս է կրել, Աստծու դատաստանը դեպի իրեն է ուղղում և կամ նրա տեսչությունը վերացնում աշխարհից: Քանզի գրված է. «Իմն է վրեժխնդրությունը» (*Հոմ. ժԲ 19*), և թե՛ «Ամեն դատաստան տվել է իր Որդուն» (*Հովհ. Ե 22*):

Ուրեմն, ո՛վ մարդ, եթե քո դատաստանը բռնակալների ձեռքով ես տեսնում, Աստծուն ոչինչ չի մնում, որ դատի քո հանդեպ մեղանշածին, նա քե՛զ է դատում, որ անհամբեր եղար և խնդրի լուծումը չհանձնեցիր Աստծու դատաստանին կամ չվստահեցիր Աստծու տեսչությանը: Որովհետև եթե հավատայիր, թե Աստված գիտի ու դատում է մարդկանց գործերը և յուրաքանչյուրին հատուցում ըստ մտածումների, խոսքերի ու գործերի՝ այստեղ և հանդերձալում, վրեժ չէիր փնտրի, ընկերոջդ չէիր մատնի անհազ բռնակալների ձեռքը և տուգանքի չէիր ենթարկի, այլ կհանձնեիր Աստծուն, որ դատեր, ինչպես և կամենում է:

Դ. Ով իրավացիորեն մեկին տանում է դատարան՝ արդար վճիռ պահանջելու երկրավոր դատավորից կամ իշխանից, որոնց է հանձնված արդարության կշեռքը երկրի վրա՝ ըստ Աստծու կարգադրության, և եթե այնտեղ զրպարտում է դատվողին՝ չեղածն իբրև եղած բարուրելով, այնժամ մատնություն է գործում: Որովհետև արդարությունը պահանջում է միայն տեղի ունեցածի համաձայն ճշմարտությամբ խոսել և դատարանի վճիռն հնազանդվել:

Իսկ եթե մեկն իր իրավացի փաստերին սուտ է խառնում, որպեսզի իսպառ հաղթի հակառակորդին, շատ անգամ կորցնում է իր իրավունքը և հանցապարտ դառնում:

Ե. Ով դատարկաշրջիկ ու ծույլ է, տարօրինակ չէ, որ նաև մատնիչ լինի. քանի որ վաստակելու համար որևէ աշխատանք չի կատարում, անմեղներին մատնում է, որ դրամ ստանա:

Սա բանական մարդ չէ, այլ արյունարբու գազան, որ լեզվով սպանում է իր եղբորը, որպեսզի նրա արյունը խմի: Մատնվածը մեծ գումար է կորցնում, իսկ մատնիչը շահում է հազիվ տասանորդը, շատ անգամ էլ անարգվելով ձեռնունայն արծակվում, բայց դառնում է մատնվածի ողջ տուգանքի պարտապանը: Իսկ առածը չի կարողանում իր կարիքների համար գործածել, այլ անառակություններով վատնում է, որով նրա չարության հանցապարտությունը կրկնապատկվում է. առաջին՝ որ դրամի համար իր եղբորը մատնեց, երկրորդ՝ որ ստացած դրամով չարիքներ գործեց:

Զ. Մատնիչներն ավելի հաճախ մատնում են դրացիներին ու ծանոթներին, քան օտարներին, քանի որ առաջինների խոսքերն ու գործերը ծանոթ են իրենց: Ինչպիսի՞ դժբախտություն. վայրի գազաններն իսկ չգիտեն վնասել նրանց, ում ընտելանում են՝ ըստ այս առածի, թե՛ «Գայլն իր հարևանին չի ուտում»:

Հապա ո՞ւմ շարքն է դասվում նա, ով իր հավատակից ու ազգակից եղբորը կամ սուրբ Եկեղեցին մատնում է բռնակալներին: Պարզ է, որ Հուդայի բաժինն ունի: Որովհետև ինչպես որ նա Եկեղեցու գլխին՝ Տիրոջը, մատնեց, այդպես էլ սա մատնում է Եկեղեցին ու քրիստոնյաներին, որով նաև Քրիստոսին:

Իսկ ի՞նչ շահեց Հուդան, եթե ոչ հավիտենական կորուստը. արծաթից օգուտ չունեցավ, կյանքից էլ զրկվեց: Այսպես է լինում և կաշառակեր մատնիչը, որովհետև կորստական դրամի հետ կորցնում է նաև իր հոգին:

Է. Դատարկաբան շաղակրատն անգիտությամբ դառնում է նաև մատնիչ, որովհետև խոսելիս աջ ու ձախ չնայելով հայտնում է մեկի գաղտնիքը, որն ընկնում է բռնակալների ականջը, և նրան բանտ են գցում ու պատժի ենթարկում: Ահա հիմար շատախոսն իր անզգուշությամբ պարտապան դարձավ մատնվածի կրած վնասին: Ուստի բանական մարդը պետք է խոսելիս զգույշ լինի, որպեսզի որևէ մեկին որևէ չարիք չհասնի:

Ը. Մատնություն է նաև, երբ մեկը հանիրավի վատահամբավում է նրա անունը, ում ատում է, որպեսզի վերջինս նախատվի, իշխանությունից զրկվի կամ որևէ վնաս կրի: Այս գործը մի բարոյական սպանություն է, քանզի այն անողը նախ իր սրտում սպանում է ատելի մարդու անձը և ապա վատա-

համբավում նրա անունը: Այս սպանությունն ավելի փոքր չարիք չէ Աստծու և մարդկանց առաջ, քան իրական սպանությունը:

Թ. Կան և այնպիսիք, որ իշխանության համար են մատնում անմեղին, որպեսզի նրա իշխանությունն իրենց ձեռքն առնեն, սակայն մեծ սխալ են գործում, որովհետև կամ չեն հասնում այն իշխանությանը, որ ցանկանում էին, կամ իրենց հափշտակած իշխանությունը խաղաղության մեջ չեն վայելում:

Ժ. Էլ ավելի չար մատնություն է, երբ մարդ մեկի գաղտնի մտքերը, որ իրեն վստահվել են իբրև հավատարիմ գաղտնապահի, հայտնում է ուրիշներին, որով ոչ սակավ վնաս ու շատերի կործանում են միշտ առաջ եկել ու առաջ գալիս:

ժԱ. Մատնիչները ոչ միայն մատնվածների աչքին են վատ ու անարգ, այլև նրանց, ում առաջ մատնում են:

Եվ թեպետ բռնակալներն առերես շողոքորթում ու գովում են մատնիչներին, բայց մտքում անարգ ու վատն են համարում, ինչպես և կան իսկ: Որովհետև ով ուրիշներին չարիք է կամենում, բարի մարդ չէ: Ուստի նաև բռնակալներն իրենք են զգուշանում մատնիչ մարդուց, որպեսզի իրենց ևս չմատնի ուրիշներին:

ԺԲ. Մատնիչ է համարվում նաև նա, ով երբ տեսնում է իր եղբորն ինչ-որ հանցանքի մեջ, անխոհեմաբար հրապարակում է այն և զցում ժողովրդի բերանը: Իսկ եթե կամենում է նրան ազատել մեղքի որոգայթից, բայց անկարող է այդ անել, ծածուկ թող հայտնի դարձնի հոգևոր առաջնորդին կամ խոստովանահորը և կամ խոհեմ ու գաղտնապահ բարեկամներից մեկին, որպեսզի հանցավորը նրանցից խրատվելով կամ հանդիմանվելով զգաստանա, իսկ ինքը վարձատրության արժանի դառնա: Որովհետև ով մեկին հետ է բերում չար ճանապարհից, իր հոգին փրկում է մահվանից (*տես Հակոբ Ե 20*):

«Ստախոս վկան առանց պատժի չի մնա,  
& չի փրկվի նա, ով գուր տեղն է մեղադրում» (Առակ. ԺԹ 5):

«Կրակարանը շիկանում է ածուխից,  
փայտը բորբոքում է կրակը,  
բանսարկուն էլ հրահրում է կռիվ» (Առակ. ԻԶ 21):

«Դե՛ն զցեք ստախոսությունը.  
յուրաքանչյուրը թող իր ընկերոջն ասի ճշմարտությունը»  
(Եփես. Դ 25):

## Գ Լ ՈՒՆ Ժ Է

## Ն Ռ ՈՎ Վ Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Չարաբարոների կողմից բազում վնասակար չարիքներ են գործվում, որոնց վրեժխնդիր են լինում ոչ միայն դատավորներն ու բռնակալները, այլև դրանց մասին լսողները. այդպիսի չարիք են շնությունը, գողությունը, սպանությունը և այլն: Բայց կա մարդկանց մեջ տարածված մի հույժ վնասակար չարիք ազգի, քաղաքի ու ժողովրդի, մեծերի ու փոքրերի, տղամարդկանց ու կանանց համար, որին ոչ ոք վրեժխնդիր չի լինում: Արդարև այս ախտը նման է պալարախտին, որ ներսից հյուծելով մաշում է, բայց ոչ ոք մոտիկից չի հասկանում նրա վնասի չափը:

Արդյոք ի՞նչն է դա: Դա մարդկանց միմյանցից գուր խռովելն է, և քանի որ արդեն շատերի մեջ խիստ տարածված է իբրև մի հասարակ սովորություն, ոչ ոք հոգ չի տանում այն վերացնելու մասին:

Քանզի հազիվ կարելի է գտնել մարդ, գուցե բնավ հնարավոր չէ գտնել, որ որևէ մեկից խռոված

չլինի: Ինչպիսի՞ թշվառություն: Մինչև ե՞րբ պիտի խռովեք և խռովեցնեք ուրիշներին, ինչո՞ւ եք սիրում նանրությունն ու սուտ փնտրում ի վնաս ձեր անձերի:

Բ. Սովորաբար միմյանցից ավելի խռովում են սիրելիներն ու ծանոթները, քան ատելիներն ու անծանոթները: Որովհետև երբ ատելի ու անծանոթ մեկը որևէ չարիք է գործում, թեպետ լսողներն ատում են նրան ու նրա գործերը, բայց խռովվածության ոխ չեն պահում նրա հանդեպ, որովհետև այդ չարիքն իրենց չի վերաբերում. միայն ճանաչում են այդպիսինին և զգուշանում նրանից:

Իսկ սիրելիներն ու ծանոթներն այն պատճառով են խռովում միմյանցից, որ մեկի խոսքերը կամ գործերը հակառակ են լինում մյուսի կամքին՝ ըստ այսմ. «Եթե թշնամին լիներ ինձ նախատողը, կհամբերեի, կամ իմ ատելին լիներ իմ դեմ մեծախոսողը, կթաքնվեի նրանից: Այլ դու, մարդ, իմ հավասարն ես, իմ առաջնորդն ու ծանոթը» (Սաղմ. ԾԴ 13-14): Ահա այս աղբյուրից է բխում խռովվածությունը:

Պետք է քննել խռովվածության պատճառը, թե այն արդյոք իրավացիորե՞ն է, թե՞ հանիրավի: Արդ, եթե մեկը մյուսի հանդեպ իրավունք ունի, վայել չէ, որ խռովի, այլ պիտի արդար դատաստան պահանջի, և այդժամ սա խռովվածություն չի կոչվի, այլ արդարություն: Իսկ եթե իրավունք չունի, ուրեմն անտեղի է խռովում և իզուր տանջվում:

Գ. Եթե մարդիկ հասկանալին, որ մարդու բնությունը սխալական ու դյուրասահ վիճակով է հաստատված, երբեք չէին խռովի միմյանցից, այլ կներեին միմյանց: Որովհետև իրենք էլ նույն բնությունից լինելով՝ հարկավ երբեմն սխալվում են, չասեմ թե՛ շատ անգամ:

Բայց զարմանալին այն է, որ ամենքը կամենում են, որ ուրիշները կատարյալ լինեն, իսկ իրենք չեն հոգում իրենց կատարելության մասին: Արդ, եթե լավ է կատարյալ ու անսխալ մարդ լինելը, ինչո՞ւ դու չես ջանում այդպիսին լինել. ուրեմն պարզ է, որ ոչ թե նա անկատար գտնվեց, այլ դու ինքդ:

Որովհետև եթե նա որևէ սխալ գործեց, և դու դա հասկացար, մի՞ խռովիր, այլ քո կատարելությամբ ուղղիր նրա թերությունները կամ անխռով մնալով հաղթիր նրան, ինչը եթե կամենաս, կարող ես անել: Ուրեմն անտեղի ես թե դու խռովում և թե խռովեցնում ընկերոջդ:

Դ. Պատահում է նաև, որ մի ավելի մեծ վնասից ազատվելու համար մեկը ստիպված է լինում ինչ-որ չափով վնասակար մի բան կատարելու, որի պատճառով բարեկամը խռովում է: Բայց նա, ով արեց դա, չէր կարող չանել՝ հաշվի առնելով այն ավելի մեծ վնասը, որ հարկադրաբար պիտի առաջ գար դրանից: Ուստի խոհեմ բարեկամը պիտի ցավակցեր նրան և ոչ թե անտեղի խռովեր:

Ե. Հպարտներն արագ են խռովում, որովհետև եղածը չեն հավանում և հանձն չեն առնում համբերել, որի պատճառով խռովության աղմուկ բարձրացնելով՝ վրդովվում են ու շատերին վրդովում:

Զ. Կան և այնպիսիք, որ ինքնախաբի նման իրենք իրենցից են խռովում, երբ հանկարծակի պատահած վնասի մասին վախենում են հայտնել մեկին կամ չեն կարողանում դրանից նահանջել:

Է. Խռովվածությունը լինում է հավասարների միջև, իսկ մեծը փոքրից, և փոքրը մեծից իրականում չեն խռովում, որովհետև խռովվածության նյութը գտնվում է միմյանց փոխառաջիկա դիմադրածելու կարողություն ունեցող կամքերի հակառակության մեջ:

Արդ, եթե մեծը հակառակում է և փոքրի հանդեպ անարդար է, սա կոչվում է բռնություն կամ զրկողություն, և եթե փոքրն է անում նույնը, սա կոչվում է հանդգնություն կամ խարդախություն: Ուստի միայն հավասարների դեպքում է լինում խռովվածություն:

Ը. Խռովելու պատճառը տկարությունն ու փոքրոգությունն են: Որովհետև ուժեղը բացեիբաց վիճում է, իր կամքն առաջ տանում ու հաղթում հակառակորդին թե՛ իրավամբ և թե՛ անիրավ կերպով, իսկ տկարը, գործնականորեն դիմադրել չկարողանալով, մտքով խռովում է, ամեն տեղ տրտնջում, ամենքին գանգատվում, և սա առաջանում է փոքրոգի լինելուց:

Թ. Խորախորհուրդ մարդը երբեմն անհրաժեշտ է համարում անխռով մտքով հեռանալ մեկի սիրուց, երբ զգում է, որ այդ սիրո մեջ կարող է գոյանալ չար բան կամ պատվի արատ: Սա իրականում ատելություն կամ խռովվածություն չէ, այլ զգուշություն:

Բարեսեր մարդիկ այս մտքով են հրաժարվում չարերի հետ հաղորդակցությունից և չեն ախորժում նրանց հետ խոսակից ու սեղանակից լինել, ոչ թե որ նրանց անձերն են ատում, այլ նրանց գործերը:

Եվ այսպիսի դեպքերում համարվում է, թե խռովվածությունը ոչ թե մարդու հանդեպ է, այլ գործերի: Քանզի չար գործի պատճառով արհամարհվում է գործողը, որ ըստինքյան բարի էր: Մարդն իր բնությանը բարի է և արժանի է սիրո, սակայն չարը թյուր կամքով գործելիս ինքն էլ է չար դառնում, և այդպիսինից պետք է խուսափել ու հեռու մնալ որպես չարիքների պատճառից:

Ժ. Խիստ մեծ խռովվածությունները շատ անգամ առաջանում են չնչին բաներից, ինչպես մեծամեծ հրդեհները մի փոքրիկ կայծից: Ուստի ով կամենում է ամենքի հետ հաշտ ու անխռով մնալ, թող նրբանկատ լինի մինչև մանրուքները, որպեսզի իր և որևէ մեկի միջև խռովվածություն չծագի:

ԺԱ. Կա՞ արդյոք այնպիսի անագորույն ու խստասիրտ մեկը, որ մի անգամ մեկից խռովվելով՝ երբեք չկամենա ներել ու հաշտվել, մանավանդ նրա հետ, ով խոնարհված աղաչում է, միջնորդ մեջտեղ գցում և խաղաղություն խնդրում: Արդարև, ով էլ որ լինի նա՝ հաշտվել չկամեցողը, կորցնում է իր հարգն ու պատիվը, էլ՝ ավելին՝ հոգին: Որովհետև բարկացնում է Աստծուն, ով կամենում է ամենքի խաղաղությունը:

Իսկ եթե այդպիսին պնդի, թե իր անձի ու կամքի տերն է, այնժամ առավել ևս պիտի արագ ողջուներ հաշտությունը, որպեսզի իբրև քաջ մարդ՝ վարձատրությամբ հաղթանակի պսակի արժանանար: Բայց հաշտվել չկամենալով՝ ցույց է տալիս, թե իր անձի տերը չէ, այլ տկար ու անզոր՝ նվաճելու իր կրքերը:

ԺԲ. Կան դաժան, ոխակալ մարդիկ, որ մեկից խռովվելիս այնքան են համառում, որ պատեհ ժամանակ են փնտրում վրեժ լուծելու: Սա դիվական ախտ է, և սրանով հիվանդացածները խիստ անողորմ են և անարժան աստվածային ողորմությանը, որովհետև անողորմների հանդեպ անողորմ դատաստան է լինելու (*տե՛ս Հակոբ Բ 13*): Որքան էլ մարդ հանիրավի վշտացած լինի մեկից, պետք է նրա հանդեպ ողորմած լինի, ների իբրև մարդկային տկար բնության վիճակվածի և խռովվածությունը երկար չպահի մտքում:

Ոխակալը նման է կրակից այրվածքներ ստացածի. որովհետև ինչպես որ վերջինս այրվածքի նշանը չի կորցնում, այդպես էլ ոխակալն ատելության նյութը սրտից չի հանում, որով ասես անշիջանելի հրով տոչորվում է և տոչորում նրան, ում հանդեպ ոխ ունի: Ուստի ոխակալը միշտ անհանգիստ ու խռովված է:

ԺԳ. Ընդունած անիրավությունները ներելը արի ոգու նշան է: Եթե մարդ խռովում է մեկից, անշուշտ նշանակում է, թե նրանից հանիրավի ընդունել է որևէ վնաս: Իսկ ով այն անտեսում է և ներում, իրեն ուժեղ ու արի է ցույց տալիս, որ կարողացավ հաղթել վնասին և մնաց անդորրամիտ ու անխռով:

ԺԴ. Խռովասեր քրիստոնյան, որ քենը սրտում ծրարած ատում է իր եղբորը, իրեն դատապարտում է, երբ Տերունական աղոթքն է ասում: Հարկ է, որ կամ սիրենք մեր եղբայրներին, կամ ատենք մեր անձը: Պատշաճ չէ ատել որևէ մեկին, բացի դևերից. միայն դատապարտյալներին է հատուկ միմյանց ատելը:

ԺԵ. Աստված մեզ ներում է, եթե ներում ենք ուրիշներին: Չկա դատապարտության այնպիսի հայտնի նշան, ինչպիսին չներելն է՝ ըստ այսմ. «Եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձե՛զ չի ների ձեր հանցանքները» (*Մատթ. 2 15*):

«Ով կռիվ է փնտրում բարեկամի դեմ,  
նա թակարդ է լարում իր ոտքերի համար» (Առակ. ԻԹ 5):

«Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես  
& այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի,  
քո ընծան թո՛ղ սեղանի առաջ & գնա,  
նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ & ապա ե՛կ,  
քո ընծան մատուցիր» (Մատթ. Ե 23-24):

«Ոչ ոքի չչարախոսեն, չլինեն կռվարար, այլ հեգահամբույր,  
բոլոր մարդկանց հանդեպ քաղցրությամբ վերաբերվեն»  
(Տիտ. Գ 2):

## Գ Լ ՈՒՆ Ժ Ը

### Ս ՈՒՏ

Ա. Սուտը բոլոր չարիքների աղբյուր կոչելն անպատեհ չէ, որովհետև վերացնում է ճշմարտությունը, որ բոլոր բարիքների աղբյուրն է: Եվ թեպետ սուտն էություն չունի, որովհետև ճշմարտության բացակայություն է, բայց մարդուն, որ բնականապես էություն ունի, բարոյապես անէության է փոխարկում, քանզի ամեն ոք ստախոսին ոչինչ է համարում:

Ով մտքում ունեցածից տարբեր բան է խոսում, խաբեբա, դավաճան ու կեղծավոր է, որովհետև սուտն իբրև ճշմարիտ է կեղծում, որպեսզի խաբի ու դավաճանի: Ուստի կորցնում է իր հարգն ու պատիվը և անարգ ու արհամարհելի դառնում բոլորի աչքին:

Բ. Մարդկությանը դեմ է սուտ խոսելը, որովհետև սուտը հակառակվում է խոսողի մտքի ճանաչողությանը: Ով ճիշտը գիտի և ստով աղավաղում է, կեղծում է իր ըմբռնումը և իրեն խաբում, ուստի ինքն իր հետ մաքառում է և կռվում ընդդեմ ճշմարիտ մտքի: Եվ իրոք, չկա ավելի չար բան, քան սա, բայց և չկա մարդկանց մեջ ավելի տարածված բան, քան սա:

Գ. Թեպետ ստախոսներն ամեն ինչում արժանի են անարգանքի, բայց երբ դատավորները, գիտունները, հարուստներն ու իշխաններն են ստում, նրանց անարգանքն այնքան է մեծանում, որ դառնում են մի այլանդակ ու զարհուրելի հրեշ և աշխարհի մեջ՝ վտանգի տագնապ, նման արեգակի խավարով պատվելուն:

Քանզի երբ հասարակությունը տառապում է ստախոս խարդավանողներից, դիմում է դատավորներին, գիտուններին, իշխաններին ու հարուստներին՝ ճշմարիտ արդարությունը նրանց մեջ գտնելու իսկ եթե նրանք ստի սպասավոր լինեն, զրկյալներն արդյոք ո՞ւմ պիտի բողոքեն՝ իրավունք ու դատաստան պահանջելու:

Ուստի բարեմիտ իմաստունները խիստ իրավացիորեն ատելի համարեցին ստախոս մեծատունին: Որովհետև աղքատը գուցե ակամա, և տգետն անգիտությունից է մտածում ստել, իսկ հարուստն ու գիտունն ինչի՞ց են ստիպվում ձեռնարկելու մարդկային ցեղին անախորժ բաներին:

Ուստի ամենքը պարտավոր են հեռու մնալ ստից, մանավանդ իշխանները, դատավորներն ու գիտունները, որպեսզի նրանց հարգն ու պատիվը նախատինքի ու խայտառակության չենթարկվի:

Դ. Ով չի կամենում ստի մեջ ընկնել, թող սակավախոս լինի, որովհետև ճշմարտությունը մեկն է, իսկ սուտը՝ բազում: Ուստի շատախոս մարդը չի կարող ստից զերծ մնալ:

Ե. Կա մարդ, որ իմաստություն ու պարծանք է համարում բազմության առաջ ստերով ճոռոմաբանելը, բայց չգիտի, որ դրանով առավել պարսավվում է, քան զովվում խոհեմագոյն ու իմաստուն անձանցից: Ուստի ավելի լավ է ճշմարտությունը ներկայացնել սակավ ու պարզ խոսքերով, քան ունայնաբանությամբ շատախոսել և ստախոս երևալով՝ պարսավվել:

Զ. Պարզամիտներին առևտրի մեջ կեղծուպատիր ստով խաբելն առավել չար է, քան հայտնի ավազակությունը: Որովհետև ամեն ոք զգուշանում է ավազակներից, իսկ ստախոսը, չարությունը թաքցնելով ճշմարտության կերպարանքի տակ, անկասկածելի է երևում և ավազակից էլ ավելի է կողոպտում ու ներկայցնում ձեռքն ընկած մարդուն:

Մանավանդ քանի որ գողերի ու ավազակների պատիժն ամենքին հայտնի է, շատերը հետ կանգնեցին այսպիսի չարիք գործելուց, բայց քանի որ ստախոսը, պատիր խոսքերով իրեն արդարացնելով,

շատ անգամ ժամանակին անպատիժ է մնում, ուստի և բազմաթիվ մարդիկ նույնը շատ են գործում և համարձակ հանդգնում ստել:

Բայց ամեն ստախոս, ըստ աստվածային արդար իրավունքի, վերջում կրում է իր պատճառած վնասի պատիժը, թեպետ դա ամենքին բացահայտ չի երևում, ինչի պատճառով շատերը չեն զգում, թե պատժի պատճառը սուտն է:

Ուրեմն՝ այդպիսիները թող լավ իմանան, որ չկա չարիք, որ իր հետ չունենա վրեժխնդրության ու պատժի կշիռը թե՛ մարդկանցից և թե՛ Աստուծոց: Որովհետև պատիժը հանցանքի ծանրությունն է, և ինչպես որ չկա մարմին առանց ծանրության, այդպես էլ չկա որևէ չարիք, որ անպատիժ մնա:

Է. Ծնողներն իրենց զավակներին, և ուսուցիչներն իրենց աշակերտներին պարտավոր են մանկությունից հաստատել ճշմարտության մեջ և նրանց ատելի ցույց տալ սուտը: Որովհետև ով մանկական մատաղ հասակում սովորում է ստել, անկասկած մեծ տարիքում ծայրագույն ստախոս ու ծայրագույն չար է դառնում: Որովհետև արմատացած սովորությունը դառնում է երկրորդ բնություն, և հասակի աճելու հետ աճում են նաև ունակությունները՝ թե՛ բարի և թե՛ չար: Ուրեմն՝ ինչով որ զարգանում է մատաղ մանուկը, նրանով էլ զբաղվում է մեծանալիս:

Ը. Մարդ կա, որ ստում է ոչ թե որ ունեցվածք ձեռք բերի, այլ ունկնդիրներից պատիվ ու համբավ որսա: Սա լուսատու որդ է, որ գիշերն ուր որ սողում է, իր թողած հետքերն արծաթի հեղանյութի պես փայլեցնում է:

Արդ, մարդկանցից ո՞վ է այնքան կարճամիտ, որ այդ փայլուն գիծը հեղուկ արծաթ կարծի: Ուրեմն դու, ո՞վ ստախոս ու սնապարծ, մի՛ կարծիր, թե մարդիկ քո սուտը չեն հասկանում, շատ լավ գիտեն տարբերել ուղղախոսին ստախոսից:

Այս պատճառով էլ պատվի ու համբավի փոխարեն, որ կամենում էիր, ստանում ես անարգանք ու անպատվություն, որ չես կամենում, գուցե եթե ինչ-որ պատիվ ունես, դա ևս կորցնում ես:

Ուրեմն՝ ով ճշմարիտ պատիվ ու բարի համբավ է ցանկանում, թող ամեն ինչում ուղղախոս լինի: Քանզի ճշմարտախոսների համար արդեն իսկ ճշմարտությունը փառք, պատիվ ու անկողոպտելի զարդ է:

Թ. Սնապարծը միշտ և ամեն ինչում խաբվում է, բայց առավել այնժամ, երբ լսողները նրան հաճոյանալու համար լռում են ու չեն հակառակում նրա զրախոսություններին, երբ բազմության առաջ մեծ--մեծ բարբառում է իր մասին: Սակայն նրանց լռությունը ստախոսին էլ ավելի է առիթ տալիս անվեհեր արշավելու սուտ ու անսահման պարծենկոտության ասպարեզը, մինչև որ զլորվում է խայտառակության վիհը, որովհետև նրա շատախոսության մեջ հայտնի են դառնում նրա ստերը: Քանզի ով սկզբում խիստ խրոխտ է ճամարտակում, մեջտեղում թուլանում է և վերջում իսպառ նվաղում:

Ուստի պետք է միշտ ճշմարտախոս լինել, առավել ևս բազմության առաջ, և խոսքն էլ պիտի լինի կարճ ու հակիրճ, որպեսզի լսողները չձանձրանան:

Ճ. Սուտն առավել թագավորում է տգետների ու մոլիների մեջ: Տգետը ստում է, որպեսզի իր տգիտության տգեղությունը ծածկի և որպեսզի դրանով իմաստունի համբավ ձեռք բերի, իսկ սա նշանակում է հողը տիղմով գեղերեսել, և մոլին ստում ու ճոխաբանում է, որպեսզի բարի մեկը թվա: Բայց նրանք պետք է հասկանային իմաստուն այն առածը, թե՛ «Պերճախոսներն առաքինությունից զուրկ են»:

Ահա սրանք և սրանց նմանները, կամենալով իրենց տգեղությունները ծածկել ստով, իրենց էլ ավելի գարշելի են դարձնում: Ուստի ամեն ինչում ամեն կերպ պետք է խուսափել ստից:

ԺԱ. Ով խոսելիս մի անգամ ստում է, ստիպված է լինում միշտ ստելու, որով իսպառ օտարանում է ճշմարտությունից և դառնում ստի շտեմարան: Քանզի նախորդ սուտը ծածկելու համար ջանում է այլ սուտ հորինել, որպեսզի չխայտառակվի, երկրորդը քողարկելիս սուտը երրորդում է, դարձյալ աշխատում այլ ստերով քողարկել նաև դա և շարունակ մի ստից մյուսին է դիմում, մինչև կատարյալ ստախոս է դառնում: Ուրեմն՝ պետք է ջանալ հենց սկզբից երբեք չստել:

ԺԲ. Ստախոսը հետին անարգության մեջ է ընկնում, երբ ստում է այն մասին, ինչի իսկությունն

ունկնդիրն ուրիշ տեղից լսել է, սակայն բնավ չզգացնելով՝ սպասում է ուրիշ բաներ էլ լսելու նրանից, որպեսզի լավ հասու լինի նրա ստին: Ուստի պարզամիտ ձևանալով՝ սկսում է խոսակցության մի այլ առարկա առաջարկել, որպեսզի որսա նրա սրտի ամբողջ տարագը:

Իսկ հիմարացած ստախոսը մտքում խնդում է, թե խաբեց, ուստի ջանում է ստի վրա սուտ ավելացնել՝ իր խոսքը հավաստի դարձնելու համար:

Ջարմանալի՝ են թշվառ ստախոսի խայտառակությունն ու նրբամիտ ունկնդրի քողարկված հնարները: Մեկն անգիտությամբ գողանալ տվեց գողունին և կարծում է, թե դեռ իր մոտ է, իսկ մյուսը նրա գաղտնիքը գողացավ, բայց հայտնի չէ, որ գող է:

Այստեղ պիտի տեսնել այս երկուսի՝ միմյանց վրա նետվող զարմանալի հայացքներն ու կեղծուպատիր խնդամտությունները: Մեկը հաղթելով ջախջախվեց, բայց չզգաց իր անկումն ու պարտությունը, իսկ մյուսը հաղթեց ու հաղթանակն առավ, բայց տակավին ցույց է տալիս, թե հաղթված ու ճնշված է:

Սրանից ավելի ի՞նչ թշնամություն կա սեփական անծի հանդեպ, որ նյութեց ստախոսը, որովհետև ահա նրա հանդեպ վստահությունը վերացավ, այլևս ո՞վ կհավատա նրա խոսքերին: Ուստի լավ ասաց նա, ով ասաց. «Ստախոսը միայն այն է շահում, որ երբ ճշմարիտն է ասում, ոչ ոք նրան չի հավատում»:

Ժգ. Մարդու համար լավ է, որ հենց սկզբում խոստովանությամբ ներկայացնի իր կարիքը նրան, ումից կամենում է ինչ-որ բան վերցնել, քան իր կարիքը քողարկի ու ստի, իսկ հետո ամաչեցվի ու նախատվի: Արդարև, չար է այս սովորությունը, և անհնար է, որ չարից որևէ բարի բան առաջ գա:

Արդ, համարենք, թե ստով մեկից օգնություն գտար կամ շահեցիր ինչ-որ բան. բայց դա շահ չէ, այլ մեծ վնաս: Որովհետև մի օր սուտը հարկավորաբար կբացահայտվի, և դու ատելի կդառնաս և այնուհետև չես կարողանա օգնություն գտնել մարդկանցից:

Ուրեմն՝ լավ է ճիշտը խոսել և մարդկանց քո հանդեպ կարեկցության շարժել, քան ստելով ատելի դառնալ ամենքին: Որովհետև մարդկանց սա է հատուկ՝ ուղղախոսին օգնել, իսկ ստախոսին ձեռնունայն արծակել:

Ժդ. Վայել չէ առևտրին սուտ խառնել: Որովհետև ստելու պատճառով արդար շահը փոխվում է անիրավ խաբեության, և ով անիրավությամբ է ունեցվածք հավաքում, դրանից ոչ այլ ինչ է շահում, եթե ոչ անիրավ լինելը, իսկ անիրավությամբ ժողովված ունեցվածքը փորձության քամիով ոչնչանում է, ինչպես կարելի է տեսնել շատերի մոտ:

Ուրեմն՝ եթե մեկն ասի, թե անհնար է առանց ստելու առևտուր անել, հույժ սխալվում է. որովհետև դրանով կամենում է բոլորին ստի ծառա համարել և ճշմարտությունն աշխարհից տարագրել: Սակայն առևտուրն ուղղախոսությամբ առավել արդյունավոր ու հաջող է, քան ստով ու խաբեությամբ: Որովհետև ով մի անգամ ճշմարտախոսի համբավ է ձեռք բերում, ամենքը ցանկանում են նրա հետ առևտուր անել, որով առավել է շահում ու հարստանում, և նրա ունեցվածքը մնում է նրա հետնորդներին որպես անկորուստ ժառանգություն: Սրա փորձը լավ գիտեն արդարախոս վաճառականներն ու արհեստավորները:

Մանավանդ որ իրենք իսկ ստախոսները, վտանգի մեջ ընկնելիս, խղճմտանքից տանջվելով, անշուշտ վկայում են. «Այն պատճառով հասանք այս հետին չքավորությանը» և կամ՝ «Դառը տազնապը մեզ պաշարեց, որովհետև ունեցվածքը ստով ժողովեցինք, և ահա ունեցվածքը կորավ, իսկ մենք մնացինք Աստծու ու մարդկանց առաջ հատուցման պարտապան»:

Արդարև, եթե մեկը կամենում է հարատևել բարօրության մեջ և տեսնել աշխատանքի հաջողություն, գնելիս ու վաճառելիս թող երբեք սուտ չխոսի, այլ նրա խոսքը լինի՝ այո՛ւ, և ոչը՛ ոչ՛ ըստ Տիրոջ պատվիրանի (*հմմտ. Մատթ. Ե 37*): Արդարև, սա դյուրավ կկատարվեր, եթե ամենքն այս մտքով հաստատված լինեին:

Ժե. Երբ ստախոսը մարդկանցից անպատիժ է մնում, այնժամ առավել թող վախենա, որովհետև պիտի պատժվի Աստծուց. սուտը ճշմարտության դեմ է, իսկ ով դեմ է ճշմարտությանը, դեմ է Աստ-

ծուն, որովհետև Աստված ճշմարտություն է:

Ուրեմն՝ ստախոսները թող իմանան, թե սուտը որքան չար է, և զգաստանան:

«Ստախոս շուրթերը պիղծ են Տիրոջ առջև,  
ճշմարտության հավատարիմ բերանը  
հաճելի է նրան» (Առակ. ԺԲ 22):

«Մարդու մեջ չար բիծ է սուտը:  
Այլ բան է գողությունը, & այլ բան՝ ստությունը,  
սակայն երկուսից էլ կորուստ են ժառանգում»  
(Սիրաք Ի 26-27):

«Նա ի սկզբանե մարդասպան էր  
& ճշմարտության մեջ չմնաց,  
որովհետև նրա մեջ ճշմարտություն չկար:  
Երբ որ նա սուտ խոսի, ինքն իրենից է խոսում,  
քանի որ նա սուտ է & ստի հայր» (Հովհ. Ը 44):

## Գ Լ ՈՒՆ Ժ Թ

## Ս ՈՒՏ Վ Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Կա չարիք, որ միայն գործողի համար է չար, ինչպիսին են տրտմությունը, տրտունջը, հուսահատությունը, ձանձրույթը, ծուլությունը, պարապությունը և այլն. որովհետև սրանք ցեցի նման գոյանում են մարդու մեջ ու ապականում նրան տեսակ-տեսակ վնասներով, իսկ եթե անցնում են ուրիշներին վնասելու, ապա դա լինում է պատահաբար և անուղղակի. օրինակ երբ մեկը տրտմությունից մեռնում է, ինչ-որ կերպ վնասվում է նաև նրա ընտանիքը՝ մնալով անխնամ:

Եվ կա չարիք, որ ոչ միայն գործողի համար է չար, այլ նաև ուրիշների, որովհետև նրա չարության ներգործությունն ուղղակիորեն հասնում է ուրիշներին: Այդպիսին են սպանությունը, գողությունը, շնությունը, խաբեությունը և այլն: Սրանց չարքում է և սուտ վկայությունը. որովհետև ոչ միայն սուտ վկան է վնասվում, այլև նա, ում մասին է վկայությունը:

Այսպիսի մարդկանց մեջ ոճրագործության չարիքը կրկնապատկվում է, որովհետև սուտ վկան իրեն կամովին մատնում է չարիքի և ուրիշներին բռնի քաշում վնասի մեջ: Ուստի կրկնակի պատժի է արժանի, մեկը՝ իր անձի համար, և մյուսը՝ նրանց, որոնց վնասեց: Դեռ ավելին, անպատեհ չի լինի, եթե նաև բազմապատիկ պատիժներ ստանա, որովհետև իր օրինակով առաջնորդ եղավ ուրիշներին՝ հանդգնելու նույն մեծաղետ չարիքը սուտ վկայությունն անելու:

Բ. Սուտ վկան, եթե նույնիսկ ուրիշներին չի վնասում, բավական է նրան այն վնասը, որ իր համար է ընդունում, որովհետև դառնում է անարգ ու ատելի: Իսկ եթե սուտ վկայությամբ վնասում է ուրիշներին՝ ընկերոջը մատնելով տուգանքի, տանջանքի կամ մահվան, և կամ մեկի մասին չար համբավ է հանիրավի տարածում, ո՞վ կարող է չարիքների մեծությունը չափել, եթե ոչ միայն ինքը՝ սուտ վկան, երբ կրի պատիժն այստեղ և հանդերձալում՝ համաձայն Աստծու արդար դատաստանի:

Գ. Վկայությունը սահմանվեց արդարության համար: Որովհետև երբ դատավորը, լսելով երկու կողմերին՝ մեղադրողին ու մեղադրյալին, որոնք միապես պնդում են, թե հավաստի են իրենց փաստերը, տարակուսանքով է պաշարվում՝ որոշելու արդարն ու իրավացին, վստահում է վկաների ազնվությանը: Ահա արդարության կշեռքն անցավ վկաների ձեռքը:



Արդ, եթե վկաները ծուում են կշեռքի մետը և դատի ժամանակ սուտ վկայում, հանցանք են գործում արդարության օրենքի դեմ և պարտապան դառնում: Ուստի սուտ վկային էշի վրա, երեսը թիկունքին դարձրած, խայտառակելով պտտեցնում են հրապարակներում, և խիստ իրավացիորեն, որովհետև ով երեսը շրջեց ճշմարտությունից, արժանի է, որ նրա երեսը ևս շրջվի թիկունքի կողմը:

Դ. Ով կաշառքի համար սուտ վկայում է, ոչ միայն իրավունքը դրամի հետ է փոխանակում, այլև արդարությունը մատնում է մարդկանց ծառայության:

Եվ քանի որ դատավորները դատում են ըստ վկաների խոսքերի, ուստի եթե վկան սուտ է, դատարանի վճիռն անիրավ ու գրկող է լինում: Իսկ ով դատվելիս գրկվում է իր իրավունքներից, դուրս գալով գանգատվում է եղած դատից, թե՛ «Ինչպիսի՞ արդարություն է սա, որ ինձ գրկեց իմ իրավունքներից»: Դատավորից չի տրտնջում, որովհետև նա ճիշտ վճռեց. որովհետև ըստ օրենքի նա պարտավոր էր լսել վկային. իսկ արդ, ինչպես վկան վկայեց, այդպես էլ նա դատեց:

Արդարությունը, որ անմեղ է և լավ գիտի յուրաքանչյուրին իրենը բաշխել, սուտ վկայի ձեռքով մատնվեց ու ծառայության տակ ընկավ: Որ ամենուր պարզերես փայլում էր, այստեղ ամոթի ենթարկվեց, որովհետև դատվում է նրա կողմից, ում հանդեպ չմեղանչեց:

Արդյոք տեսա՞ր, թե արդարության ինչպիսի մատնիչ են սուտ վկաները: Բայց թող չակնկալեն անպատիժ մնալ և խաբել բոլոր դատավորներին, որովհետև ստեղծական դատավորների կողմից ճնշվելով՝ արդարությունը դիմում է անստեղծ դատավոր Աստծուն՝ իրավունք պահանջելու: Այնժամ Աստված, որ վկաների կարիք չունի, ուղղապես դատում է և սուտ վկային չարաչար պատժում, իսկ գրկվածն իր իրավունքի տերն է դառնում: Արդարև, սուտ վկաները թող վախենան Աստծուց և դառնան անիրավությունից:

Ե. Ով բարեկամության սիրուց սուտ վկա է դառնում, եղծում է բնության օրենքը և գործում աստվածային օրենքի դեմ: Որովհետև բնության օրենքն ուսուցանում է նախ սեփական անձը պահպանել չարից, ապա ըստ ձեռնհասության ջանալ նաև ընկերոջը պահպանել, և աստվածային օրենքը պատվիրում է. «Պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես» (*հմմտ. Մատթ. Ե 43*): Իսկ ով ընկերոջ սիրո համար գալիս է դատի ժամանակ սուտ վկայելու, իրեն մեծ չարիքի է մատնում, որով ցույց է տալիս, թե իր ընկերոջն ավելի է սիրում, քան իրեն, իսկ սա դեմ է բնության ու Աստծու օրենքներին:

Արդարև, պետք է սիրել ընկերոջը և նրան բարիք կամենալ ու գործով կատարել, բայց այն պայմանով, որ սեփական անձը չտուժի կամ ընդդեմ Աստծու որևէ բան չգործի: Ահա սեփական անձի թշնամի ու Աստծուն հակառակ են նրանք, ովքեր մարդու սիրո համար սուտ վկա դառնալով՝ չարաչար մեղանչում են:

Զ. Ով ինչ-որ թշնամության պատճառով սուտ վկայում է մեկի մասին՝ վնասելու և հաղթելու նրան, նրա փոխարեն ինքն է վնասվում ու հաղթվում: Քանզի թվում է, թե թշնամուն գրկեց իրավունքից կամ նեղությունների ու տուգանքների մեջ գցեց, սակայն այս բոլոր մարմնավոր ու առօրեական կրքերն ու վնասները սակավ են վշտացնում տուժածին, որովհետև կամ ժամանակի անցմամբ մոռացվում են, կամ մահվամբ վերջանում: Իսկ սուտ վկայի վնասը դառն ու դաժան է, որովհետև հոգևոր է ու հավերժական:

Արդարև դու՛, ո՛վ սուտ վկա, քանի որ վնաս պատճառեցիր ավելի քեզ, քան թշնամուդ, ուստի հաղթվեցիր և ոչ թե հաղթեցիր: Ուրեմն դադարի՛ր չարիք գործելուցդ, որպեսզի Աստծու և մարդկանց առաջ հավիտյան պատժապարտ չլինես:

Է. Ո՛չ սակավ խելքի ու նրբամտության կարիքն ունի սուտ վկայության գնալը. որովհետև տգետների ու հիմարների գործ է դատավորի բոլոր հարցումներին պատշաճ պատասխան գտնելը: Բայց ճշմարտությունից հաղթվելով՝ շատերն ամեն օր պատժվում են թիավարությամբ, արքորով, ծեծով կամ այլ պատիժներով և տակավին չեն զգաստանում:

Վա՛յ նրանց կամակորությանն ու անզգամ լրբությանը: Որովհետև եթե ապուշ լինեին, չէին հանդգնի այս ոճիրը գործել, իսկ սրանք ճարպիկ ու գործունյա մարդիկ են, ինչպե՞ս է, որ բնության այդ պանծալի ծիրքերը բարի գործի համար չեն բանեցնում և իրենց ձեռքով չեն վաստակում, որպեսզի իրենց

արդար վաստակն ուտեն զվարթերես ու առանց մեղքի:

Ո՛վ թշվառականներ, մինչև ե՞րբ պիտի դեզերեք դատավորների դռներին տնավերության համար. խնայեցե՛ք ձեզ և հե՛տ դարձեք ձեր չարիքներից, որովհետև ոչ մի չարական անպատիժ չի մնում:

«Ականջ մի՛ դիր սուտ լուրերին:  
Հանձն մի՛ առ հոգուտ անիրավի  
անիրավ վկա լինել» (Ելք ԻԳ 1):

«Անիրավ վկան բորբոքում է ստությունը  
& գրգռություն է գցում եղբայրների միջև» (Առակ. Զ 19):

«Ստախոս վկան առանց պատժի չի մնա,  
& ով թշնամանք է բորբոքում, ով չարություն է գրգռում, պիտի կործանվի» (Առակ. ԺԹ 9):

## Գ Լ ՈՒ Խ Ի Ս ՈՒՏ Ե Ր Դ ՈՒՄ

Ա. Ամեն ստախոս անիրավ է, իսկ ով սուտ երդվում է, անիրավ ու ամբարիշտ է: Որովհետև երբ տեսնում է, որ ստախոսությունը չի օգնում, ավելացնում է նաև երդումը, որպեսզի մարդիկ, լսելով Աստծու անվամբ երդումը, հավատան ասված խոսքերին:

Ինչպիսի՞ անտանելի դժբախտություն. ստախոսությունն ըստինքյան չար է, իսկ երբ իր վրա կրում է Աստծու ամենասուրբ անունը, նրա չարությունը ծանրանում է, և այն դառնում է ամենաչար: Եվ սա ոչ թե Աստծու անունից է, այլ սուտ երդվողի՝ անխաբ ճշմարտության սքանչելի անունն իր վրա կրելու անարժանությունից, ինչպես որ ճառոտ աչքը նեղվելով տանջվում է պայծառ լույսից:

Այո՛, Աստծու անունը ստին վկա կանչելը մեծ ամբարշտություն է: Ուստի ով սուտ է երդվում, անիրավ լինելուց բացի նաև ամբարիշտ է դառնում:

Բ. Երբ մարդիկ չեն կարողանում որևէ ճշմարիտ բան հավաստի դարձնել լսողներին, դիմում են Աստծուն, ով առաջին ճշմարտությունն ու ճշմարտության աղբյուրն է, որպեսզի նրա միջոցով ապացուցեն: Ուստի ով Աստծու անունով է երդվում, Աստծուն վկա է կանչում ճշմարիտ բանին, իսկ ով Աստծու անունով սուտ է երդվում, ճշմարտության հեղինակ Աստծուն ստի վկա է դարձնում, և սրանից մեծ ի՞նչ ամբարշտություն:

Գ. Ծնողները, ուսուցիչներն ու բոլոր արհեստների վարպետները պարտավոր են մատաղ երեխաներին ու երիտասարդներին հեռու պահել ստախոսությունից, մանավանդ սուտ երդումից:

Որովհետև ով մի անգամ մանկական տարիքում որևէ չար ատիտի է սովորում, մեծանալիս շատ աշխատանքով հազիվ է դրանից ազատվում: Եվ ստախոսությունից ու երդվելուց կարող է հույժ դժվարությամբ ազատվել, որովհետև որպես գործիք ունի լեզուն, որը դյուրաշարժ է և ամեն տեղ պատրաստական: Այս պատճառով նորափոթ մանուկների ծնողներն ու դաստիարակները պարտավոր են մեծ արթնությամբ զգույշ լինել, որ նրանք ստել ու երդվել չսովորեն:

Երբ մեկը չնչին բաների համար վկայության է կանչում երկրավոր թագավորներին, արժանի է դառնում դատաստանի, ապա որքան առավել դատաստանի է արժանի նա, ով երկնավոր թագավորին է անտեղի կանչում ի վկայություն իր խոսքերի, որովհետև երդվող ամեն ոք Աստծուն ի վկայություն է կանչում:

Դ. Ավա՛ղ, ինչպիսի՞ թշվառություն. կան մարդիկ, որ երդումն այնքան են սիրում, որ միմյանց հետ

խոսելիս համարձակ հիշատակում են Աստծու անունը: Եվ սա անում են ոչ թե անհրաժեշտության բերումով, այլ չար սովորությամբ: Որովհետև ով սովոր է երդվել, ում հետ էլ խոսում է, ինչ էլ խոսում է, առանց երդման չի խոսում:

Այս վնասակար սովորությունը խիստ տարածված է ռամիկների ու տգետների մեջ, ինչի համար անարգ ու արհամարհելի են իմաստունների ու բարեմիտների աչքին, որովհետև ոչ ոք չի հավատում նրանց:

Ե. Կան մարդիկ, որ անտեղի երդվում են խաղերի, ծաղրաբանությունների ու գինարբուքների մեջ՝ անխիղճ մտքով հիշատակելով Աստծու ահարկու անունը:

Արդարև չարաչար խոցոտվում են հոգով և չեն հասկանում, շնորհից մերկանում են և չեն տրտմում, դևերի հետ են ընկերանում և չեն զարհուրում: Վա՛յ երդվելու սովոր մարդկանց անզգայական հիմարությանը, որովհետև կորչում են և չեն զգում:

Զ. Կան մարդիկ, որ սովոր են երդվել հավատալիքներով, ինչպես օրինակ՝ սրբությամբ, խաչով, Եկեղեցիով ու սրբերի անուններով, և կամ չարիքներ մաղթելով՝ նզովք են կարդում իրենց անձերին, կամ էլ վկա կանչում ինչ-ինչ արարածների, որոնք Աստված պարզեց մարդկանց վայելքի համար: Եվ ահա սրանք և սրանց կարգին դասվող երդումները մեղք ու անօրենություն են: Բայց զարմանալին սա է, թե մարդիկ ինչպե՞ս է, որ չեն հանդիմանում այսպիսիներին:

Միգուցե բոլորի մոտ այս անկարգությունները սովորական լինելու պատճառով է, որ չեն համարձակվում սաստել միմյանց, որպեսզի չլինի թե իրենք էլ հանդիմանության արժանի համարվեն կամ իրենք իրենց դատապարտեն: Եվ իրո՞ք այդպես է. որովհետև արդեն հազիվ կարելի է գտնել մարդու, որ ազատ լինի այսպիսի բաներից: Իսկ ի՞նչն է սրա դարմանը, եթե ոչ միմյանց խրատելն ու սեփական անձանց հանդեպ զգույշ լինելը, որպեսզի չսայթաքեն այսպիսի վտանգների մեջ:

Է. Կարելի՞ է գտնել ավելի անմիտ մարդու, քան նա, ով բարկանալիս կամ ինչ-որ խաղերի մեջ, անխոհեմ խոստումով երդվում է Աստծով կամ աստվածայիններով և իրեն չարիք մաղթում, եթե այսինչ բանը չկատարի:

Ինչպիսի՞ հիմարություն. ինքն իր համար դահիճ է դառնում ու չի հասկանում: Իսկ եթե մեկը խրատում է նրան չեղյալ համարել իր խոստումը՝ հայտնելով դրանից առաջ եկող վնասը, ինքը նույն տեղն իսկույն երդում է առաջարկում:

Սրանից ավելի ի՞նչ խելագարություն. ամեն ոք, քանի դեռ նեղության մեջ է, խոստում ու երդում է տալիս, որ ազատվի, իսկ սա խոստում ու երդում է տալիս, որ վտանգվի: Իր երդումները կատարելու համար ձեռք է զարկում այնպիսի գործերի, որոնց կատարումն իր ձեռքում չէ, և նրանց ելքն անհայտ է:

Ուստի մարդ պարտավոր է զգուշանալ երդվելուց, որպեսզի դրան սովորելով՝ անխոհեմությամբ չերդվի կատարելու այն, ինչից վնաս պիտի կրի հոգով ու մարմնով:

«Իմ անունով սուտ երդում մի՛ տվեք  
& ձեր Տեր Աստծու անունը մի՛ պղծեք» (Ղևտ. ԺԹ 12):

«Մի՛ սիրեք սուտ երդումը,  
որովհետև ես ատեցի այս բոլորը», - ասում է  
Ամենակալ Տերը» (Զաքար. Ը 17):

«Մի՛ ընտելացրու քո բերանը երդումի...  
հարվածներն անպակաս կլինեն քո տնից» (Սիրաք ԻԳ 9-12):

**Գ Լ Ո Ւ Խ Ի Ա**

## Կ Ա Ն Ա Ր Դ Ն Ե Ր

Ա. Աստվածպաշտությունն Աստծուն հավատարմությամբ, հոժար կամքով ծառայելն է, և այս ծառայությունը կատարվում է հնազանդությամբ աստվածային պատվիրաններին, որոնք Սուրբ Գրքում դրոշմվելով Սուրբ Հոգով ավանդվեցին:

Ուստի ով Սուրբ Գրքին հակառակն է անում, հակառակվում է աստվածային պատվիրաններին, իսկ ով հակառակվում է աստվածային պատվիրաններին, աստվածպաշտությունը կորցնում է, և ով աստվածպաշտությունը կորցնում է, հարկավ դրանից հետո անաստված է դառնում: Իսկ Սուրբ Գիրքն ամբողջապես արգելում է կախարդությունը. ուրեմն կախարդները, ընդդեմ Սուրբ Գրքի գործելով, ոտնատակ են անում աստվածային պատվիրանը, ինչ պատճառով անաստված են դառնում:

Բ. Թեպետ կռապաշտներն անաստված են, որովհետև ճշմարիտ Աստծուն չեն ճանաչում, սակայն դևերին էլ չեն ծառայում, քանի որ դև են: Ուստի կախարդները կռապաշտներից վատ են, որովհետև Աստծուն գիտեն, բայց խնկարկում ու ծառայում են դևերին, կանչում ու ապավինում նրանց և ոչ թե Աստծուն:

Գ. Ով բարեկամանում է մեկին ատելի անձանց հետ, նրան ատելի է դառնում, իսկ կախարդները բարեկամանում են Աստծու ատելիների հետ, որ դևերն են, ուրեմն կախարդներն ատելի են Աստծուն:

Հետևաբար կախարդների մոտ գնացողներն Աստծուն ատելի են դառնում, որովհետև ակնկալում են ինչ-որ բարեկամություն գտնել կախարդական դիվագործությունից, այլապես երբեք չէին գնա կախարդի մոտ:

Դ. Դևերն առավել արագաշարժ են մարդկանց զցելու կախարդական գործերի մեջ, քան այլ չարիքների, որովհետև թեպետ մյուս բոլոր չար գործերում դևի կամքն է կատարվում, բայց նրան չեն ծառայում, իսկ կախարդության մեջ դևին որպես գործի հեղինակի ծառայում են: Ուստի մյուս մեղքերը մարդուն չարագործ են դարձնում, իսկ սա՝ դիվապաշտ:

Արդարև, կախարդն ու նրան հետևողն ըստ ամենայնի արժանի են դատապարտության:

Ե. Դևերը սովոր են կախարդների միջոցով խաբել հիմարներին՝ իբրև թե գաղտնիքներ հայտնելով: Բայց ոչ թե անհայտը ճշմարտապես ցույց տալ են կարողանում, այլ խաբեությամբ տարակուսանքների մեջ են զգում մարդկանց, որպեսզի առավել մտատանջեն ու չարչարեն:

Քանզի ով ի բնե չար է ու մարդկանց թշնամի, ինչպե՞ս կարելի է նրանից որևէ բարիք հուսալ: Եվ ով ի սկզբանե ստախոս է, ինչպե՞ս է հնարավոր, որ ճիշտը խոսի: Ուրեմն՝ կախարդներն ինչ որ գուշակում են՝ դևերից սովորելով, կեղծիք է, սուտ և խարդախությամբ լի:

Զ. Ոմանք հիմարաբար կարծում են, թե դևերն են մարդկանց պատճառում որոշ հիվանդություններ, որոնք կոչում են «դրսևե»:

Ավա՛ղ, ինչպիսի՛ կուրություն ունեն նրանց սրտերը: Դևերն առանց Աստծու թույլտվության չեն կարող ցավերով տանջել որևէ մեկին: Ախտերն ու հիվանդությունները բազում պատճառներով են առաջ գալիս և բժիշկների դեղերի ու օգնության կարիքն ունենում: Իսկ եթե որևէ ախտ դիվական է, այդժամ պետք է Աստծուն աղաչել ու սուրբերին բարեխոս դարձնել բուժվելու համար:

Եվ քանի որ մեր փրկիչ Քրիստոսը կապեց դևերի զորությունը, ուստի դևը չի կարող մարդկանց վնասել այնքան, որքան կամենում է, այլ որքան Աստված թույլ է տալիս: Եվ սա մարդու որևէ հանցանքի կամ մեզանից թաքցված ու անգիտելի պատճառներով, այլապես դևերը բոլոր մարդկանց չարաչար կտանջեն: Իսկ այն քրիստոնյային, որ շնորհի մեջ է, դևը երբեք չի համարձակվում մոտենալ՝ ըստ այսմ. «Ահա ձեզ իշխանություն տվի կոխելու օձերին, կարիճներին և թշնամու ամբողջ զորության վրա» (Պուկ. Ժ 19):

Է. Շատ անգամ հիվանդությունը պատահում է արյան ապականությունից, մաղասներից, մաղձեղից կամ սևամաղձությունից, այլև ուրիշ բազմադիմի պատճառներից: Ուստի և կան հիվանդներ, որ իբրև դիվալլուկներ փրփուր են թափում բերանից, սարսափում, ճչում, գետնին թավալվում, ծամածո-

վում, պապանձվում և այլն:

Բնության ու խառնվածքի այս և սրանց նման ախտերն ու տկարությունները կարիքն ունեն բժշկական դեղորայքի, երակահատության, օդափոխության ու պահեցողության: Բայց անգետներն ու թերահավատներն այսպիսի ախտերի պատահելու դեպքում դիմում են կախարդական հնարների. իրենց հիվանդներին իզուր տանջում են, շատ դրամ իզուր մսխում և ոչինչ չեն շահում, բացի դատապարտությունից:

Ը. Հիվանդությունը պատահում է կամ Աստուծոց՝ ի պատիժ մեղքերի, կամ հենց իրենից՝ մարդուց, իր բնության տկարության կամ իր անզուշության պատճառով: Երկուսն էլ կարիքն ունեն նախ աստվածային օգնության, ապա բժշկական դեղորայքի: Ուստի նախ պետք է ջերմեռանդ աղոթքներով ու ողորմությամբ դիմել Աստծուն և հետո՝ բժիշկներին: Կա նաև ասես բնական հիվանդություն, որ դեպի բնական մահն է առաջնորդում: Դներն այսպիսի հիվանդություններին անհաղորդ են, որևէ օգուտ կամ վնաս տալ չեն կարող:

Սակայն որոշ տկարամիտներ, այս ամենը դների գործառնը վերագրելով, թողնելով բնական դեղերը, որոնց Աստված ախտերը բուժելու գործություն տվեց, և սուրբ Ավետարանն ու հոգևորականներին, գնում են այլևայլ ազգերի խոջանների մոտ՝ օգնություն հայցելու:

Արդարև, սա մահացու մեղք ու անաստվածություն է. որովհետև մոռանալով կյանքի աղբյուր Աստծուն և Աստծու կողմից կարգվածներին՝ դիմում են Աստծուն ատելիներին՝ դներին ու նրանց դիվազգի սպասավորներին:

Թ. Կան և ոմանք, որ ասում են. «Ահա ոչ բժշկական դեղերով և ոչ սուրբ Ավետարանով չբուժվեց մեր հիվանդը: Ի՞նչ անենք, նրան անխնամ թողնենք. ծովն ընկածն օծերից է կառչում»:

Ո՛վ հիմար, հարկ է, որ միայն աղաչես Աստծուն նրան առողջություն տալու: Իսկ եթե Աստված կամեցել է, որ նա շարունակի մնալ նույն հիվանդության մեջ, իզուր է քո տառապելը, և իզուր՝ կախարդների մոտ գնալով մեղանչելը: Գուցե Աստծուն քո բարկացնելու պատճառով հիվանդությունը կամ երկարատև դառնա, կամ մահաբեր:

ժ. Կախարդների հետ դատապարտվում են նաև նրանք, որոնք պարզամիտներին խաբում են այլևայլ դյութական գործողություններով՝ բակլայի, գարու կամ այլ միջոցներով, իբրև թե ծածուկ բաներ են իմանում: Այս բոլոր դյութական հմայությունները դների պատրողական գիտությունն են, որով մարդկանց մոլորեցնում են:

Այսպիսին են չար պառավներից շատերը, որոնք դների բնակարան դառնալով՝ դիվական աղանդներն ուրիշներին են սովորեցնում և դառնում բազում չարիքների պատճառ: Ոչ թե որովհետև կարողանում են չարիք կամ բարիք պատճառել մեկին, այլ որովհետև մարդկանց մեջ խռովության պատճառ են դառնում և անմեղներին իրենց հետ դեպի դատապարտություն տանում: Ուստի ով հավատում է նրանց խոսքերին և ընդունում դյութական խաբեությունները, նրանց հետ մատնվում է հավիտենական կորստյան:

ժԱ. Դյութական միջոց է և նուսխան, որ կոչում են նաև հմայիլ, ուստի եթե մեկն այն իր վրա է կրում, ինչ նշանագրով էլ որ գրված լինի, կախարդական փաթեթ է համարվում, և մեղանջում են գրողն ու պահողը: Որովհետև այդպիսի դյութական հուռութքները մեր սուրբ հավատքին հակառակ են:

«Վհուկներին մի՛ հետևեք & ոգեհանների հետ մի՛ առնչվեք, որպեսզի նրանցով չպղծվեք»  
(Ղևտ. ԺԹ 31):

«Դու ստեցիր նա & քո սուրբ երկրի հին բնակիչներին  
իրենց կատարած գարշելի գործերի՝ կախարդությունների  
& անսուրբ զոհաբերությունների համար» (Իմաստ. ԺԲ 3-4):

# Գ Լ ՈՒ Խ Ի Ք

## Հ ՈՒ Ս Ա Հ Ա Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Ինչպես խարիսխն ալեկոծության ժամանակ նավը փրկում է խորտակումից, այդպես էլ հույսը նեղության ժամանակ մարդուն փրկում է վտանգից: Իսկ երբ հույսի պարանը կտրվում է, մարդն իսկույն ընկնում է հուսահատության հորձանքը. որովհետև ինչ որ նավի մեջ խարիսխն է, նույնը մարդու մեջ հույսն է: Ուստի պետք է ջանալ բոլոր նեղություններում, որ կարող են կյանքի ընթացքում պատահել, աներկմիտ հույս ունենալ, որովհետև միայն նրանով է հնարավոր դիմակայել վրա հասած բոլոր դժվարություններին:

Բ. Աստված մարդու կարողությունից վեր փորձություն չի տալիս, իսկ հուսահատը մեղադրում է Աստծուն, թե թույլ տվեց, որ իր կարողությունից վեր փորձություն գա, և սրանով չարաչար մեղանշում է:

Գ. Հուսահատությունն առաջ է գալիս Աստծու գթության մասին չիմանալուց. որովհետև հուսահատն Աստծուն ներող ու ողորմած չի ճանաչում, կամ Աստծու ողորմությունն իր հանցանքից պակաս է համարում, ինչպես Կայենը՝ ըստ այսմ. «Գործած մեղքս մեծ է թողության արժանի լինելու համար» (Մտնդ. 7 13), ինչ պատճառով հուսահատվածն անարժան է լինում ներման:

Դ. Տգետներն արագ են հուսահատվում, որովհետև նեղությունների մեջ չեն կարողանում ազատության ելք կամ հուսադրական որևէ մխիթարություն գտնել:

Ե. Կարճամիտները, երբ որևիցե դժվարություն է պատահում, անմիջապես հուսահատվում են, որով առավել են ծանրացնում այն վտանգի կշիռը, որ կրում են: Եթե Աստծուն հուսալով համբերեին, կամ վիշտը թեթև կթվար նրանց, կամ վշտերից շուտ կազատվեին:

Զ. Մարմնապաշտներն ու հեշտասերները, երբ դառն վշտերի են հանդիպում, իսկույն հուսահատության մեջ են ընկնում, որովհետև սովորած լինելով ամեն ինչում հանգիստ ու հաճույքներ վայելելու՝ դուրս վշտերից կտրում են հույսի աղեղը և կամ ճանապարհին անընտել երիվարի նման մի փոքր դժվարությունից վազքն իսկույն դադարեցնում:

Է. Հպարտները չարաչար են հուսահատվում, երբ իրենց պատվին ու կարծիքին հակառակ որևէ վտանգ է իրենց պատահում: Քանզի չեն կամենում խոնարհվել աստվածային կարգադրության առաջ, որ արդարության արժանի չափով է պատրաստում ու կատարում յուրաքանչյուրի գործերի հատուցումը:

Ը. Բարկացողները դյուրամետ են դեպի հուսահատությունը, որովհետև կրքից հափշտակվելով՝ չեն նկատում գործի վախճանը, ուստի երբ պատահում է կրել որևէ տառապանք, իսկույն գլորվում են հուսահատության անդունդը:

Թ. Հուսահատության դեմ պատրաստ դեղ է մտքում հաստատելը, թե աշխարհի օրենքն այս է, ոչ ոք անվիշտ չի մնում: Կամ շատերն ավելի դաժան վշտերի մեջ ընկան, բայց արիաբար համբերեցին: Կամ սա արդարացիորեն պատահեց իրեն՝ ըստ իր գործերի: Կամ այս պատիժները սակավ են՝ հատուցելու կյանքում իր գործած չարիքները: Կամ մեծ վարձքի է արժանի դառնում, եթե սիրով տանում ու համբերում է նեղությանը: Կամ այս փորձությունը, կամ ցավն Աստծուց է եկել, և պետք է համբերել: Կամ իր համբերությունից շատերը բարի օրինակ են վերցնում, և իր վարձքն ավելանում է, իսկ հուսահատվելուց չարաչար գայթակղվում են, և իր պատիժներն են ավելանում: Կամ հնարավոր է, որ առավել ծանր վշտեր լինեն: Եվ մանավանդ ինչ վիշտ էլ որ պատահում է, պիտի աղոթքով դիմի Աստծուն, որ վշտից ազատվի կամ կարողանա համբերել: Ահա այսպիսի բարի մտքերով հուսադրվելով՝ վտանգվածը հուսահատության մեջ չի ընկնում:

Ճ. Եթե հուսահատվել չես կամենում, սրտիդ ցավը մի՛ հայտնիր նրան, ով վշտեր կրելիս անհամբեր է կամ վախկոտ, կամ այս դյուրափոփոխ կյանքի հանգամանքներին անտեղյակ, կամ տառապանքի մեջ բնավ չի ընկել:

Քանզի այսպիսիք, փորձանավորների ու ցավագնաժների որպիսությունը չիմանալով ու փորձած չլինելով, մի բանի տեղ մի ուրիշ բան են խոսում և հուսահատական խոսքերով առավել բորբոքում վերքերը, քան բժշկում։ որովհետև չգիտեն մարդուն համոզել համբերելու կամ հուսադրական քաջալերությամբ թեթևացնել ծանր կրքերը կամ ցավերը։ Ուստի ովքեր նեղության ու վշտերի փորձը չեն առել, ինչպես՝ կարող են փորձանավորներին օգնել։

ԺԱ. Այլն՝ պետք չէ հուսալ մխիթարիչ խոսքեր լսել նրանից, ով կարճամիտ է կամ զայրացկոտ, կամ բազմազբաղ, կամ անձնասեր, կամ ինչ-որ ախտերի կրքերով պաշարված, կամ մարդատյաց։ Որովհետև կարճամիտն ինքն է հուսահատության մեջ գլորվում, զայրացկոտը չի կարող շրջահայաց լինել, մտքերով զբաղվածը չի կարող պարզ ու հստակ տեսնել խնդրի բոլոր հանգամանքները, անձնասերը միայն իր օգուտի մասին է մտածում, կրքերով պաշարվածը, մտքով մթազնած լինելով, անկարող է լինում օգտակարն ընտրելու, մարդատյացը չի մտահոգվում ուրիշների գործերով և ավելի կամենում է նրանց վնասը, քան օգուտը։

Այսպիսիք և սրանց նմաններն ավելի կարող են մեկին հուսաբեկ անել, քան մխիթարել, ուստի պատշաճ չէ, որ նեղյալներն իրենց ցավերը հայտնեն նրանց։

ԺԲ. Հուսահատների առաջնորդը Սադայելն է, որ ջանում է մարդկանց հուսահատության մեջ զցել, որպեսզի նրանց մատնի հավիտենական անգտանելի կորստյան։

Քանզի եթե մեկն ուրիշ մեղքերի մեջ է ընկնում, հնարավոր է, որ զղջմամբ ետ դառնա և ներում գտնի՝ հուսալով Աստծու ողորմությանը։ Իսկ ով հուսահատվում է, աստվածային ողորմության դեմ է զինվում, ինչ պատճառով միշտ անզղջության մեջ է մնում, ինչպես դևերը։ Ուստի երբ դևը մեկին ինչ-ինչ նեղությունների մեջ է տեսնում, իսկույն նրա մտքի մեջ զցում է տեսակ-տեսակ հուսահատական մտածումներ, որոնք իրականում չեն եղել ու չեն էլ կարող լինել։ որովհետև այն, ինչ հնարավոր ու կարելի է, ծանր ու անհնարին է կարծել տալիս՝ փորձանավորների միտքը բեռնավորելու և ընկճելու համար, որպեսզի նրանց հուսաբեկ անի։

Ուրեմն աշխարհում կենցաղավարող բոլոր մարդիկ պիտի արթուն ու զգաստ մնան և դևի թելադրությանը չանսան, այլ ապավինեն Աստծուն և նեղություններին արիաբար տոկան։

ԺԳ. Կան և ոմանք, որ վշտացածին մխիթարելու փոխարեն դժվարությունների մասին անհեթեթ խոսքերով զցում են տարակուսանքների մեջ, մինչև որ նրանց հուսակտուր են անում։ Այսպիսի վայրբար մարդիկ կամ տգետ են, կամ թշնամի, կամ չարախնդաց և կամ շարժված են դևերից։

Որովհետև տգետը, չկարողանալով մխիթարական խոսքեր ասել, հակառակն է խոսում, թշնամին ջանում է վշտերի հանգամանքները ծանրացնել, որպեսզի առավել վտանգի, չարախնդացը կամենում է, որ ուրիշները հուսահատվելով կորստյան մատնվեն, և ինքն ուրախանա, իսկ դևերից շարժվածը բյուրատեսակ դժվարությունների մասին մտածումներով է պաշարում վտանգվածի միտքը, որպեսզի ընկճելով ամուր հույսից զրկի նրան։

Ուստի պետք չէ ցավերն ամեն մեկին ասել, որովհետև շատերը մեղանչական բժիշկ են։ Տարակուսանքները կամ վշտերը պետք է հայտնել այնպիսինին, որ խոհեն է, բարեկամ, բարեմիտ ու Աստծու հանդեպ երկյուղած, որպեսզի կարելի լինի նրանից քաջալերություն ու սփոփանք գտնել։

ԺԴ. Եթե պատահի, որ մեկին ինչ-որ բան հարցնես, նախ խորհիր, որ խոսքդ նրան չվերաբերի, որովհետև չես կարող նրանից ճիշտ պատասխան ստանալ քո տարակուսանքները ցրելու համար. յուրաքանչյուր ոք իր շահի մասին ավելի է մտածում, քան ուրիշների։ Ուստի խոսքերդ թյուր կողմը շրջելով՝ անհնարին դժվարություններով հուսաբեկ կանի քեզ։ Հարցրու նրան, ում որևէ կերպ չի վերաբերում այն, ինչի մասին հարցնում ես, որպեսզի ճիշտ պատասխան ստանաս։

ԺԵ. Ով չի կարողանում իրեն կառավարել, ինչ վիճակում և ինչ պարագաներում էլ որ լինի, ծածուկ խելագար է։ Քանզի նա է խոհեն ու կատարյալ, ով այս կյանքի բոլոր շրջադարձներում ու փոփոխություններում հնարներ է գտնում իրեն կառավարելու և երբեք հուսահատվելով չի ընկճվում ու վհատվում։

«Դուք, որ երկյուղ եք կրում Տիրոջից,  
ակնկալեցեք նրա ողորմությունը,  
մի՛ խոտորվեք, որպեսզի չգլորվեք» (Սիրաք Բ 7):

«Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա» (Ե-  
րեմ. ԺԷ 7):

«Հույսը երբեք չի ամաչեցնում,  
որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերում  
Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. Ե 5):



Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Ք Ր Ի Ս Տ Ո Ն Յ Ա Յ Ի  
Փ Ր Կ Ո Ի Թ Յ Ա Ն Ն Ա Ն Հ Ր Ա Ժ Ե Շ Տ  
Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր Ը

Գ Լ Ո Ի Խ Ա

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ա. Մարդը սահմանված է ոչ միայն բնական կոչումով, այլև գերբնական: Բնական կոչումից պարտավորվում է ուղղել միտքն ու կամքը և բարեկարգել զգայական կրթերի ներքին ցանկություններն ու կրթերից առաջ եկող արտաքին գործողությունները՝ մարմնով երջանիկ ապրելու նպատակով: Սա կատարվում է չորս բարոյական առաքինություններով, այսինքն՝ արիությամբ, արդարությամբ, խոհեմությամբ ու ժուժկալությամբ: Գերբնական կոչումից պարտավորվում է ուղղել այդ առաքինությունների միտքը, կամքն ու գործառնությունները՝ հոգով հավիտենական երջանկություն վայելելու նպատակով: Սա էլ կատարվում է երեք աստվածաբանական առաքինություններով, այսինքն՝ հավատով, հույսով և սիրով:

Բայց քանի որ անկյալ բնության վիճակում գտնվող մարդը դյուրասահ է դեպի մոլորություններն ու անկարգությունները, որով նախ իր բնական կոչումից և ապա գերբնականից է խոտորվում, ինչը չարիքների մեջ ծայրագույնն է, ուստի մեր Տերը սահմանեց ապաշխարության սուրբ խորհուրդը, որպեսզի մեղքերի մեջ ընկածները սրանով ոտքի կանգնեն և Քրիստոսի շնորհի օգնությամբ հասնեն հավիտենական կյանքի երջանկությանն ու փառքին:

Այս պատճառով պատշաճ համարեցինք այստեղ փոքր-ինչ խոսել ապաշխարության մասին, այսինքն՝ զղջման, խոստովանության ու վճարման, որպեսզի մեղանչած հավատացյալներից ոչ ոք, վիատվելով, թե հոգու փրկության հնարներ չկան, անհույս չկորչի, այլ անսխալ ու առողջարար սպեղանիներ ստանա ու բժշկվի:

Բ. Արդ, մեղանչելը միտքն ու կամքը Ծայրագույն Բարուց դեպի արարածները դարձնելն է, որը նշանակում է ատել ու արհամարհել Աստծուն և սիրել արարածներին: Որովհետև եթե մեկը նախ մտքից չի հանում Աստծու հանդեպ սերը և կամքով չի հարում արարածների հանդեպ սիրուն, չի կարող մահու չափ մեղանչել:

Իսկ ապաշխարելն է լալ, ողբալ ու աշխարել այն մեղքերի համար, որ մարդ գործեց մոլոր մտքով ու թյուր կամքով: Ուստի ապաշխարողը նախ պետք է մտքով վերստին շրջվի դեպի Աստված, ապա կամքով հարի Աստծու հանդեպ սիրուն: Սա կորած սերը կրկին գտնելն է, ինչը նախ զղջմամբ է լինում:

Քանզի զղջումը ատելն ու նահանջելն է նրանից, որին մարդու միտքն ու կամքը հոժարությամբ ու սիրով նախապես միացել էին: Ուստի զղջումը, որ մարմնական բոլոր ցավերից վեր պիտի լինի, ապաշխարության առաջին աստիճանն է, որով մեկն ատում է մեղքերը՝ այն հաստատուն մտադրությամբ, թե այլևս պիտի չմեղանչի, այլև հոժար կամքով հանձն առնում պատիժներ կրել՝ հատուցելու այն անարգանքի դիմաց, որով անարգեց ու վշտացրեց Աստծուն, միայն թե Աստված հաշտվի իր հետ:

Գ. Քանի որ մեղանչողը, որ Աստծուն արհամարհեց ու արարածներին սիրեց, Աստծուն պարտապան է դառնում, իսկ Աստված իրավունքի տերն է, ուստի խոստովանահայրը խիստ վայելչաբար սահմանվեց դատավոր նրանց միջև, որպեսզի Եկեղեցու գլխավորությամբ հարթի Աստծու և մեղավորի միջև ծագած վեճը՝ ըստ այսմ. «Հուդայի երկրի մարդիկ (խոստովանահայրեր), իմ ու իմ այգու դատն արեք» (տե՛ս Եսայի Ե 3):

Դ. Այսպիսով զղջացողը, խղճից՝ որպես արդարության ոստիկանից կամ սպասավորից տանջվելով, բերվում է խոստովանության աստյան, ուր որպես Աստծու կողմից մեղադրող՝ աստվածային օ-

րենքն ամբաստանում է մեղավորին և դատավորից իրավունք պահանջում:

Եվ դատավորը, այսինքն՝ խոստովանահայրը, որ քաջատեղյակ է արդարության օրենքին, ըստ հանցանքների չափի՝ վճարում է դնում իր մեղքերը զղջալով խոստովանող պարտապանի վրա, ով ճանաչելով իր պարտքը՝ հոժար կամքով հանձն է առնում կատարել խոստովանահոր պատվերները, որպեսզի ազատվի մեղքի պարտապանությունից և հաշտվի Աստծու հետ: Եվ քանի որ Աստված դատող հանձնեց խոստովանահորը, ուստի երբ վերջինս երկրի վրա ազատում է պարտապանին մեղքերի կապանքներից՝ ըստ սուրբ Եկեղեցու կանոնների, Ինքն Աստված երկնքում նույնպես արձակում է պարտապանի կապանքներն ու ներում նրան՝ ըստ այսմ. «Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի, և եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (*Հովհ. Ի 23*):

Ե. Ուստի ով գաղտնի խոստովանության ատյանում կատարյալ զղջմամբ գանգատվում ու ամբաստանում է իրենից, մտադրվում այլևս չմեղանչել, հանձն առնում վճարումը կատարել և արձակվում է մեղքերի կապանքներից, ազատվում է հավիտենական պատիժների պարտապանությունից և պարտապան դառնում միայն ժամանակավոր պատիժների վճարմանը՝ իբրև մի հիվանդ, որ մահվան վտանգից ազատվելով՝ միայն զգուշության, պահեցողության ու զորացուցիչ դեղերի կարիքն է ունենում, որպեսզի հասնի կատարյալ առողջ վիճակի:

Ուրեմն՝ մարդուն ամեն ինչում պետք են վճարման սպեղանիներ՝ վճարելու նաև մեղքերի դիմաց պատժի ժամանակավոր պարտքը, որպեսզի կարողանա հարատևել Աստծու արդարացուցիչ շնորհի մեջ, որը կորցրել էր, և գտավ: Որովհետև Աստված մեղավորից, որպես անարժան մեկից, վերցնում է Իր շնորհը՝ ըստ այսմ. «Իմ հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են» (*Ծննդ. 2 3*): Եվ դարձյալ շնորհը տալիս է, երբ մարդն ապաշխարում է՝ ըստ այսմ. «Նրանց վրա փչեց և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի» (*Հովհ. Ի 22-23*):

Զ. Քաղաքացիական օրենքով դատի և եկեղեցական օրենքով դատի միջև տարբերությունն այս է. քաղաքացիական օրենքով, երբ հանցավորն իր հանցանքը խոստովանում է, չի ազատվում գոնե մարմնավոր պատժից, իսկ եկեղեցական օրենքով, երբ խոստովանահոր առաջ գաղտնաբար խոստովանում է, ազատվում է հավիտենական պատիժներից:

Է. Դարձյալ՝ քաղաքացիական օրենքով, եթե հանցավորն իր արածը չի խոստովանում, և հանցանքը վկանների միջոցով չի ապացուցվում, հանցավորը դատապարտությունից ազատվում է: Իսկ եկեղեցական օրենքով, որն աստվածային ատյան է, եթե հանցավորն իր արածը չի խոստովանում, մինևույն է, հանցանքը հայտնի է Աստծուն, որովհետև ամենատես է, և վկա պետք չէ, որովհետև հանցավորի խղճի խայթը բավական է: Ուստի այդպիսին հոգով հավիտենապես է մեռնում, շատ անգամ մեռնում է նաև մարմնով, որովհետև այս աշխարհում անպակաս են Աստծուց տրվող մահվամբ պատիժները, որոնք ստանում են չարիքների մեջ համառողները:

Ը. Արդարև, առանց ապաշխարության խորհրդի ոչ մի չափահաս հավատացյալ չի կարող մկրտությունից հետո գործած մեղքերի ներումը ստանալ: Այսպես է վկայում ճշմարիտ հավատքը, այսպես է ընդունում նաև Քրիստոսի ընդհանրական Եկեղեցին:

Բայց դեերից կամ դիվաբնակ աղանդավորներից խաբված կամ մարդկային ամոթով պաշարված որոշ մարդիկ կամ երկար ժամանակով անտեսում են խոստովանությունը, կամ մեղքերն ամբողջապես չեն խոստովանում և կամ մեղքերի կարևոր ու էական հանգամանքները թաքցնում են:

Գուցե կան այնպիսիք, որ սրտի զղջումը բավական են համարում փրկության համար, սակայն գաղտնի խոստովանության արհամարիությամբ՝ լոկ զղջումը ոչ մի փրկություն չի գործում մահու չափ մեղանչածներին, որովհետև մարգարեն ասում է. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենությունները, որ արդարացվես» (*Եսայի ԽԳ 26*):

Արդ, զղջումը, որով մեկն իրեն միայն պարտապան է համարում, տեսական ճանաչում է: Սակայն լոկ ճանաչմամբ ապաշխարություն չի լինում, պետք է նաև գործնական մի բան. իսկ դա լեզվով խոստովանելն է նրան, ով ունի դատ անելու՝ Եկեղեցուց տրված իրավունք, և կրելն այն վճարումը, որ նա

դնում է մեղանշածի վրա՝ մեղքերի հատուցման համար:

Թ. Քանզի ապաշխարության խորհուրդը պահանջում է, որ վճարումը սահմանվի խոստովանահոր կողմից: Ուստի առանց խոստովանահոր կարգադրության կատարված առաքինական մեծամեծ գործերը վճարում կամ բավարարում չեն համարվում և ապաշխարության խորհրդին չեն վերաբերում: Որովհետև նրանց մեջ ո՛չ Եկեղեցու առաջնորդություն ու իշխանություն է երևում, ո՛չ էլ հպատակների հնազանդության նշան:

Այս իշխանությունը դատ անողի հրամանն է հնազանդվողներին, և հնազանդվողները, ենթարկվելով Քրիստոսի հիմնած Եկեղեցու կանոններին, կատարում են այն ամենը, որ Եկեղեցին հրամայում է իր սպասավորի միջոցով: Եվ այսպիսով հնազանդվողների մեջ կատարվում է ապաշխարության խորհուրդը, որի միջոցով են լինում մեղքերի թողությունն ու հոգիների փրկությունը:

Ժ. Արդ, եթե խոստովանությունը վերանա, կվերանա նաև Եկեղեցու՝ դատ անելու իշխանությունը, այլև հնազանդության գործը, ուստի այլևս չի լինի ոչ ապաշխարության խորհուրդ, հետևաբար և ոչ մեղքերի թողություն: Արդարև, երբ մի ամբողջության էական մասը վերանում է, ամբողջությունը եղծվում է: Իսկ խոստովանությունն ապաշխարության խորհրդի էական մասն է: Ուստի երբ խոստովանությունը վերանում է, ապաշխարության խորհրդի էությունը եղծվում է: Արդ, ապաշխարության խորհուրդը սահմանվեց Քրիստոսի կողմից. ուրեմն ով այն եղծում է, Քրիստոսին հակառակ է և դժոխքի ժառանգ:

ԺԱ. Եթե նույնիսկ վճարումը կամավորաբար է կատարվում, պետք է կատարողին հաճելի չլինի, որովհետև մեղքերի պատիժ է: Այստեղից էլ հետևում է, որ ուրիշից պիտի սահմանվի: Այն, ինչ մեկն ինքն իսկ և իր ցանկությամբ փխրոժում է անել ու կրել, իրեն հաճելի է թվում, ուստի վճարում չի համարվում: Ուրեմն՝ ապաշխարության վճարում է այն, ինչը գաղտնի խոստովանության ժամանակ պատվիրում է խոստովանահայրը:

ԺԲ. Դարծյալ՝ ոչ ոք չի կարող իր բժիշկն ու դատավորը լինել: Իսկ եթե մեղավորն ինքն է իր համար վճարման կանոն սահմանում, ինքն իր բժիշկն ու դատավորն է դառնում, որը հակառակ է բնությանը:

ԺԳ. Դարծյալ՝ վճարումն արդարության գործ է. ուստի որքան մեկը մեղքերով վշտացրեց Աստծուն, այդքան սիրո գործեր պիտի կատարի, որպեսզի Աստված հաշտվի:

Բայց եթե մեկն ինքն իր որոշմամբ է սիրո գործը կատարում, տակավին երկբայության մեջ է մնում. չի կարողանում որոշել, թե արդյոք բավականաչափ հատուցե՞ց իր պարտքը, թե ոչ, և սրանով ընկնում է կամ հուսահատության մեջ, կամ անհոգության:

ԺԴ. Դարծյալ՝ հնարավոր չէ, որ որևէ իրի մեծությունը կամ ծանրությունն իրենով չափվի կամ կշռվի, այլ պիտի չափվի կամ կշռվի մեկ ուրիշ իրի հետ բաղդատությամբ:

Որովհետև ինչպես որ միևնույն իրը չի կարող ինքն իրեն նման կամ ոչ նման համարվել, այլ նման կամ տարբեր լինել կարող է ուրիշ իրերի հետ համեմատվելով, այդպես և նույն իրն առանց այլ իրի հետ բաղդատվելու մեծ չափ կամ ծանր կշիռ ունենալ չի կարող:

Իսկ ով ինքն է իր համար սահմանում բավարարման կամ վճարման կանոն, ինքն իրեն է չափում ու պարտապան կամ անպարտ համարում, որը հակառակ է բնությանը:

Ուրեմն՝ ըստ Եկեղեցու կանոնների, մեղքերը պետք է խոստովանել քահանային, որն իբրև խոհեմ դատավոր՝ պիտի որոշի պատիժը ոչ թե թվաբանական, այլ երկրաչափական արդարությամբ՝ տնօրինելով ըստ անձի, տեղի և ժամանակի որպիսության:

ԺԵ. Կան մեղքեր, որ քաղաքացիական օրենքին են դեմ, կան մեղքեր էլ, որ դեմ են աստվածային օրենքին: Թագավորներն ու իշխանները պատժում են քաղաքացիական օրենքի դեմ մեղանշածին, եթե նրա մեղքը բացահայտվում ու ապացուցվում է: Այդպիսի մեղքեր են սպանությունը, գողությունը, շնությունը, սուտ վկայությունը և այլն: Թեպետ այս մեղքերը դեմ են նաև աստվածային օրենքին, բայց քանի որ հասարակության վնասին են վերաբերում, աշխարհի իշխաններն են դրանք դատում: Իսկ այն մեղքերը, որ դեմ են աստվածային օրենքին և վնասում են միայն մեղանշած անձին և ոչ որևէ կերպ՝

հասարակության բարուն, եթե նույնիսկ հայտնի ու հանրածանոթ են, թագավորներն ու իշխանները, դրանք անտեսելով, մեղանչածին անպատիժ ու անդատապարտ են թողնում: Այդպիսի մեղք է հակառակվելը Եկեղեցու խորհուրդներին, այսինքն՝ ապաշխարության, հաղորդության սրբաարությանը, նաև մեղքերի քավությանն ու շնորհի ներգործությանը և այլն: Այդպիսի մեղքերը կրոնին են վերաբերում և պիտի դատվեն կամ պատժվեն Եկեղեցու իշխանությամբ:

Իսկ եթե Եկեղեցին թողնում է, որ նրանք անպատիժ մնան, Աստված ինքն է վրեժխնդիր լինում, որովհետև ամեն չարիք վաղ թե ուշ պատժվում է: Այս պատճառով էլ չեն պակասում տեսակ-տեսակ պատիժները մեղքերի վրեժը լուծելու համար:

Եթե ամեն ոք իր մեղքերը խոստովանել և հանձն առնել կրել այն պատիժը, որ քահանան իբրև դատավոր սահմանում էր վճարել Աստծու դեմ անիրավության դիմաց, պատիժները երկրի վրա չէին շատանա՝ ըստ այսմ. «Քո ապստամբությունը քեզ խրատ է լինելու, և քո չարությունները կշտամբելու են քեզ: Խելքի կգաս ու կտեսնես, որ քեզ համար դառնադետ է ինձ լքելը» (Երեմ. Բ 19): Եվ դարձյալ՝ «Եթե չկամենաք Ինձ լսել, սուրը պիտի ուտի ձեզ» (Եսայի Ա 20):

Ուրեմն՝ հարկ է գղջալ, խոստովանել ու վճարում կատարել, որով ոչ միայն պատժից ազատ կլինենք, այլև երանական փառքը կժառանգենք:

ժԶ. Եթե մեկն ասի. «Եթե Աստված չարիքների պատճառը չէ, հապա ինչո՞ւ է պատիժ տալիս, ինչը չար բան է», պատասխանն այս է. չարիքը երկու տեսակ է լինում՝ մեղքի չարիք և պատժի չարիք: Արդ, Աստված պատճառը չէ մեղքի չարիքի, որն ըստինքյան չար է՝ Աստծու օրենքին դեմ ու մարդկանց վնասակար լինելու պատճառով, բայց պատճառն է պատժի չարիքի, որը բարի բան է, որովհետև արդարության գործ է և մարդկանց օգուտ: Պատժի չարիքի մասին Աստված ասում է. «Ես եմ, որ խաղաղություն եմ անում և հաստատում չարը» (Եսայի ԽԵ 7), իսկ Ամոսն ասում է. «Քաղաքում չարիք կպատահի՞, եթե Տերը չի արել այն» (Ամոս Գ 6): Քանի որ մարդիկ, Աստծու դեմ մեղանչելով, մեղքի չարիքն են իրագործում, դրա համար էլ Աստված արդար իրավունքով տալիս է պատժի չարիքը՝ իբրև բժիշկ, որը հիվանդին դառն դեղ է մատուցում նրա առողջության համար:

Ուրեմն՝ եթե մարդիկ բնավ չմեղանչեն կամ մեղանչելու դեպքում իսկույն գղջալով խոստովանեն իրենց հանցանքն ու ապաշխարեն, պատժի չարիքը չէին կրի: Որովհետև Աստված ատելությունից չէ, որ այս կյանքում պատժում է մարդկանց, այլ սիրուց ու ողորմությունից, որպեսզի զգաստանալով հետ դառնան մեղքերից և ապրեն:

Ուստի եթե այստեղ ժամանակավոր պատիժներով վրեժխնդիր չլինի մեղավորներին, անշուշտ ուրեմն վրեժխնդիր կլինի հանդերձալում՝ հավիտենական պատիժներով, ըստ աստվածային արդար դատաստանի պահանջի: Քանզի եթե մեկն այս կյանքում արհամարհում է Աստծու ողորմությունը, պարզ է, որ Աստծու արդարությունից չի երկընչում: Այդպիսին հանդերձալում նրա ողորմությունից զրկվում է և նրա արդարության կողմից պատժվում:

Բայց Աստված, քանի որ ողորմած է, մարդկանց շարունակ հրավիրում է դեպի ճշմարտության գիտությունը և այն դեպքի համար, երբ մարդկային տկարությամբ սխալվելով՝ մեղքերի մեջ են ընկնում, կարգել է ապաշխարության խորհուրդը՝ դեպի մեղքերը գլորումից նրա միջոցով բարձրանալու՝ ըստ այսմ. «Անօրենը եթե հետ կանգնի իր գործած անօրենություններից ու պահի Իմ բոլոր պատվիրանները, արդարություն գործի ու ողորմածություն անի, ապրելով ապրելու է ու չի մեռնելու» (Եզեկ. ժԸ 21):

ժԷ. Հապա ինչո՞ւ են ոմանք խույս տալիս խոստովանության խորհրդից: Պարզ է ուրեմն, որ կամ չեն կամենում մեղքերից ազատվել ու արդարացվել, կամ չեն հավատում խորհրդի ներգործությանը: Արդ, եթե արդարացվել չեն կամենում, խելագար են, որովհետև իրենց շահն ու վնասը չգիտեն, ինչը հատուկ է խելագարներին: Իսկ եթե չեն հավատում, անհավատ են, որովհետև անհավատներին է հատուկ չհավատալ այն խորհուրդների սրբաարությանը, որոնք անմիջաբար կամ միջոցաբար կարգվել են Աստծուց:

«Այն տղամարդը կամ կինը, որ մարդկային որ&է

մեղք է գործում... հանցանք գործած կլինի:  
Թող նա խոստովանի իր մեղքերը, թող լրիվ հատուցի նրան, ում վնաս է պատճառել» (Թվեր Ե 6-7):

«Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ,  
& Դու թողություն կտաս  
իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը» (Սաղմ. ԼԱ 5):

«Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք & միմյանց համար աղո՛թք արեք, որպեսզի բժշկվեք»  
(Հակոբ Ե 16):

## Գ Լ ՈՒՆ Ք

### Ա Ղ ՈԹ Ք

Ա. Քանի որ ապաշխարության խորհուրդն ունի երեք մաս, զոջումն ու խոստովանությունը՝ որպես խորհրդի հաստատիչ, և վճարումը՝ որպես ամբողջացուցիչ, ուստի մենք պարտք ենք համարում այստեղ կարճիկարճո խոսել նրա ամբողջացուցիչ մասից, որն է՝ աղոթք, պահք և ողորմություն, որոնց մեջ կարող են պարունակվել նաև մյուս գրեթե բոլոր բարեգործությունները, որոնցով մեղքերի արատից մաքրվելով՝ ապաշխարողն այս կյանքում արժանի է դառնում Աստծու շնորհին, իսկ շնորհի մեջ արդեն գտնվողի շնորհն աճում է, և նա հանդերձալույս հասնում է երանական փառքին:

Բ. Երբ մարդը, վրիպելով ուղիղ բանականության լույսից, թողնում է իր ճշմարիտ բարին, որն Աստվածն է, և շրջվում է դեպի արարածները, սա մեղանչում է համարվում, ինչն իրեն վտանգելն է, Աստծուն կորցնելը, սեփական հարգն ու պատիվը չճանաչելը, մեծ չարիքի պատահելը: Իսկ այս բոլոր չարիքները մարդ գործում է կամ հոգու զորությամբ, կամ մարմնի դրդմամբ և կամ ունեցվածքի պատճառով:

Գ. Արդ, հոգին ասես մի ներքին բարիք է, մարմինը՝ միջին, և ունեցվածքը՝ արտաքին, որովհետև հոգին մարմնից է առավել, և մարմինը՝ ունեցվածքից: Ուստի ով այս բարիքների հետ չարաչար է վարվում ու Աստծու դեմ մեղանչում, սրանցով էլ պարտավոր է ապաշխարել ու Աստծու հետ հաշտվել: Եվ այն բոլոր առաքինությունները, որ մարդիկ կարողանում են գործել, արդյունքն են այս բարիքների, այսինքն՝ հոգու, մարմնի և ունեցվածքի: Որովհետև կամ հոգուն են վերաբերում, ինչպիսին է աղոթքը, կամ մարմնին, ինչպիսին է պահքը, և կամ ունեցվածքին, ինչպիսին է ողորմությունը: Սրանք են կազմում ապաշխարության վճարումը, կամ որ նույնն է՝ բավարարումը:

Մարդն աղոթքով ընծայում է Աստծուն հոգու բարիքները, պահքով՝ մարմնին, և ողորմությամբ՝ արտաքին բարիքները: Առաջինով հաղթում է սատանային, երկրորդով՝ մարմնին, երրորդով՝ աշխարհին, որովհետև ըստ սուրբ Հովհաննեսի՝ «Այն ամենը, ինչ աշխարհի մեջ կա, մարմնի ցանկություն է, աչքերի ցանկություն և այս կյանքի ամբարտավանություն» (Ա Հովհ. Բ 16):

Եվ այս երեք չարիքներն են, որ մարդուն օտարացնում են Աստծուց՝ ամբարտավան բաղձանքը կամ կամապաշտությունը, զգայական հաճույքի անկարգ ցանկությունը և ունեցվածքի հանդեպ անհագ սերը:

Առաջինի դեղն աղոթքն է, որով իր միտքն ու կամքն ուղղելով՝ մարդը հպատակվում է աստվածային օրենքին, և սրանով էլ կոտրվում է ամբարտավանության ու կամապաշտության եղջյուրը:

Երկրորդի դեղը պահքն է, որով մարդ ճնշում է իր մարմինն ու սանձահարում կատաղի զգայական կիրքն ու ցանկությունը:

Երրորդի դեղը ողորմությունն է, որով մարդ հաղթում է հարըստության, ունեցվածքի և այս աշխարհի բոլոր բաների հանդեպ սիրուն:

Դ. Ուրեմն՝ նախ խոսենք աղոթքի մասին, որը հոգու պտուղն ու նվերն է Աստծուն: Այն խոնարհամիտ երկյուղածությամբ մատուցելով Աստծուն՝ ցույց ենք տալիս մեզ վրա ունեցած նրա գերագույն իշխանությունը: Որովհետև ինչով որ մեկը գերազանցություն ունի, նախ նրանով պիտի ծառայի Աստծուն՝ իբրև բնության արարչապետի: Իսկ մարդը հոգով է, որ գերազանցություն ունի, որովհետև հոգին ունի իմացական միտք ու անձնիշխան կամք, որոնցով տարբերվում է զգայականներից և նմանվում Աստծուն: Ուրեմն՝ պետք է նախ հոգով ծառայել Աստծուն, այսինքն՝ աղոթանվեր մաղթանքներով:

Քանի որ մարդու էությունը պահանջում է ունենալ մարդուն հատուկ ինչ-որ շարժում կամ գործունեություն, ուստի այն բոլոր գործերը, ուր միտքն ու կամքն ընթացակից չեն լինում, բանական մարդու գործ չեն համարվում, այլ լոկ կենդանու, այդ պատճառով և արժանի չեն վարձատրության կամ պատիժների:

Ուստի ով փափագում է Աստծուց վարձք ընդունել, պարտավոր է մտքով ու կամքով ջանք գործադրել նրան հաճոյանալու և վարձատրության արժանի կդառնա:

Ե. Մտքի գործերին են պատկանում Աստծուն խոկալը, Նրա հետ խոսակցելը, Նրան փառավորելը, գովելն ու օրհնելը, Նրանից բարիք խնդրելն ու Նրա վրա հույսը դնելը: Կամքի գործերին են պատկանում Աստծուն սիրելը և ի նշան սիրո՝ սիրո արդյունքներ ցույց տալը:

Միտքը, ճանաչելով ճշմարիտ սիրելի Աստծուն, կամքին կարգադրում է սիրել Նրան, և երկուսը միասին, ըստ իրենց հատկությունների, սիրո գործեր են նվիրում Աստծուն: Նախ նվիրում են փառաբանական աղոթք՝ որպես ներքին բարիքի պտուղ, որովհետև միայն դրանով կարող են Աստծու հանդեպ ջերմեռանդ բաղձանքը ցույց տալ, և ապա համարձակվում մատուցել բարեպաշտական այլ գործեր:

Զ. Հետևաբար աղոթքն աստվածսիրության առաջին պտուղն ու անդրանիկ ծնունդն է, և որքան մեկի սերը զորավոր ու բարձրաթռիչ է, այնքան նրա աղոթքի արդյունքները վեր են սլանում և մոտենում Աստծուն:

Եվ թեպետ բոլոր առաքինական գործերի աղբյուրն ու արմատը սերն է, սակայն աղոթքը նրանց մեջ որպես սկզբնական անխառն ծորում ու երախայրի պտուղ է:

Արդարև, ոչ ոք չի կարող իրեն անբասիր ներկայացնել, եթե աղոթքն անտեսում է: Որովհետև ամեն ժամ ու ամենուր, ինչ վիճակում էլ որ մեկը լինի՝ թե՛ առողջ և թե՛ հիվանդ, կարող է Աստծուն մտքում ունենալ, Նրան փառավորել, գովել ու օրհնել. այս իսկ է աղոթելը:

Է. Աղոթքն իբրև մի ամբողջություն կարող է մասերի բաժանվել, դրանք են՝ փառատրություն, գովություն, օրհնություն, գոհություն և խնդրանքներ:

Փառատրություն կամ փառաբանություն է Աստծուն փառք տալը, որովհետև միայն Նա է զորությունների տեր, փառքի թագավոր և ամեն փառաբանության արժանի, որովհետև անհուն կարողություն է, անհաս իմաստություն, անչափ մեծություն, ամենաբարի և բոլոր կատարելությունների ամբողջացում:

Գովությունը Աստծու մեծությունն ու բարերարությունը հռչակելն է, որովհետև արժանի է ամեն գովեստի, և իրականում ոչ մի արարած չի կարող ըստ արժանվույն գովել Աստծուն, այլ միայն իր իղծի եռանդն է ցույց տալիս, երբ ջանում է Նրան գովել:

Պրիությունը ուրիշների առաջ հռչակելն է Աստծու անչափ սերը, անհուն ողորմությունը, անբավ բարերարությունը, որոնք միշտ ձրի արեց և անում է մեզ համար, որովհետև օրհնելը հայտնել ու հռչակել պետք է հասկանալ: Ուստի մեր կողմից Աստծու օրհնությունը Նրա գովաբանությունն է:

Գոհությունը շնորհակալ ու գոհացող լինելն է այն բարերարությունների համար, որոնք ընդունել ենք Աստծուց, Նրա պարգևները պատվելը և երախտագետ մտքով ճանաչելը Նրա ողորմության ու մարդասիրության մեծությունը, որ Իր առատաձեռնությամբ միշտ հոգում է մեր կարիքները:

Իսկ խնդրանքը, պաղատանքը, աղաչանքն ու հայցվածքն ուղղվում են Աստծուն կամ մեղքերի թողության համար և կամ որևէ այլ խնդիրի, որը մեզ օգտակար է և Աստծու համար վայելուչ, որ տա:

Ուստի Սուրբ Գրքում լայնորեն կիրառվող աղոթք անունը բազում իմաստներ է պարունակում, և

աղոթքի ուժի սահման չկա, որովհետև ամեն ոք թե՛ մտքում և թե՛ բանավոր կերպով կարող է աղոթական խոսքեր հարմարել, միայն թե անկանոն ու դատարկ չլինեն:

Ը. Ուրեմն՝ աղոթելիս նախ պետք է մտաբերել Աստծու մեծությունն ու փառքը, փառավորել, գովել ու օրհնել Աստծուն, գոհանալ ու շնորհակալ լինել մեր հանդեպ գործած Նրա անբավ երախտիքների ու բարերարության համար:

Երկրորդ՝ ճանաչել մեր նվաստությունն ու պարտականությունը, թե պարտավոր ենք միշտ խոնարհ հոգով, զգաստությամբ ու երկյուղով ծառայել Աստծուն, որովհետև մեր արարիչն ու բարերարն է:

Երրորդ՝ մտածել մեր ապերախտության ու մեղքերի մասին, որոնցով մեղանչեցինք Նրա մեծության դեմ:

Չորրորդ՝ խորհել Նրա երկայնմտության ու գթության մասին, որովհետև ըստ մեր հանցանքների մեզ չի պատժում, այլ խրատում է, որպեսզի դառնանք դեպի Իրեն, իսկ եթե մեզ պատժում է, Նրա դատաստանն արդար է:

Հինգերորդ՝ սրտանց զղջալ, մտադրվել այլևս չմեղանչել, ապաշխարության լուծը կրել, մեղքերի քավություն ու շնորհ խնդրել, ցույց տալ, թե միշտ կարոտ ենք Նրա ողորմությանն ու օգնությանը, որոնց թեպետ անարժան ենք, բայց թող կամենա մեզ շնորհել ըստ Իր մեծ ողորմության ու մարդասիրության: Նաև՝ Նրա հանդեպ մեր հույսն աներկմիտ է, և Նրանից բացի հույս ու ապավեն չունենք:

Թ. Աղոթքի սկզբում պետք է միտքն իր մեջ ամփոփել, զգայարանների դռներն արտաքին առարկաների առաջ փակել և մտքում հայցման որևէ նպատակ ունենալ, որովհետև երբ որևէ խնդրանք նպատակ չունի, միտքն աղոթելիս տարտամորեն հաժում է:

Ժ. Ամեն ինչից առաջ պետք է Աստծուց ողորմություն խնդրել, որպեսզի մեղքերի թողություն ստանանք և երկնային փառքը ժառանգենք: Այս է նախ Աստծու արքայությունը խնդրելն ըստ Տիրոջ խոսքի (*տե՛ս Մատթ. 2 33*): Որովհետև ուր կա Աստծու ողորմությունը, այնտեղ կան մեղքերի թողություն ու երկնքի արքայություն:

ԺԱ. Աղոթքների մեջ չկա ավելի մեծ աղոթք, քան Տերունականը, այսինքն՝ «Հայր մեր»-ը, որը նույն ինքը մեր Տեր Քրիստոսը սովորեցրեց: Սրան հետևում են սաղմոսները, որոնք Դավիթ մարգարեն Սուրբ Հոգու ազդմամբ գրեց, ապա եկեղեցական աղոթքներն ու երգերը, որոնք սուրբ հայրերը Սուրբ Հոգու շնորհով խորհրդաբար կարգեցին:

Թեպետ աղոթքները հույժ բազում են, սակայն նրանցում արեգակի պես փայլում է մեր ազգի մեջ սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթական մատյանը: Ազդու և պարզ է սուրբ Ներսես Շնորհալու ստեղծած «Հավատով խոստովանիմ»-ը, որը թե՛ այր և թե՛ կին պարտավոր են սովորել և ամեն օր նրանով աղոթել Աստծուն, ուր էլ գտնվեն:

Իսկ եթե մեկը չի կարողանում հասու լինել աղոթքի խոսքերի ու բառերի իմաստներին, թող չվհատվի, այլ հավատով, հույսով ու սիրով աղոթի. որովհետև Աստված, որ գիտի մարդկանց մտածումները, հասկանում ու ընդունում է աղոթքը և ըստ ջերմեռանդության ու բաղձանքի չափի՝ յուրաքանչյուրին շնորհներ է տալիս և խնդրանքները կատարում:

ԺԲ. Առանձնական աղոթքը, երբ էլ որ արվում է, Աստված ընդունում է, սակայն նախընտրելի է գիշերային կամ առավոտյան ժամանակը: Որովհետև վաղ առավոտյան, երբ մարդ քնից զարթնում է, պիտի աղոթի Աստծուն, շնորհակալ լինի Նրա բարերարությունից, որ խաղաղությամբ հասցրեց առավոտյան ժամին, և Նրա առատ մարդասիրությունից հայցի շնորհել առաջիկա օրն առանց մեղքերի, անփորձանք ու խաղաղ անցկացնել:

Այդպես և երեկոյան է պետք աղոթել Աստծուն և սուրբ խաչի նշանով երեսը տյառնագրել, Ս. Աստվածածնին, պահապան հրեշտակներին ու սրբերին բարեխոսության կանչել և հետո քնել:

Ուրեմն՝ ծնողները, խոստովանահայրերն ու ուսուցիչները պարտավոր են մանուկներին կրթել, որ վերջիններս դեռ մանուկ հասակից սովորեն ոչ միայն աղոթքներ, այլև աղոթելու կարգը, ժամն ու բարեձևությունը:

ԺԳ. Քանի որ աղոթքը մտքի բարձրացումն է դեպի Աստված, ուստի աղոթելիս միտքը պիտի գերծ լինի աշխարհային բոլոր անվայել մտածումներից, և կամքը բարի կամեցողության մեջ լինի:

ԺԴ. Եթե մտքի դիտավորությունն աղոթքին չի ընկերանում, լեզուն ու շուրթերն ապարոյուն են շարժվում, որովհետև առանց մտադրության աղոթելն անպտուղ աշխատանք է:

ԺԵ. Մարմնական տրտմությունն ու այս կյանքի հոգսերը խափանում են աղոթքի զորությունն ու աղոթքն անպտուղ դարձնում, իսկ տրտմությունը, որ զղջացած սրտից բխում է մեղքերի համար, որպես ապաշխարության կանոնի կատարում, օգնում է, որ աղոթքը զորավոր լինի, և աճեցնում շնորհի պարզաները:

ԺԶ. Աղոթքը որպես մարդկանց դեսպան կամ աղաչավոր պատգամավոր ու միջնորդ է Աստծու առաջ, որը հույժ ընդունելի ու զորավոր է, երբ առաքվում է ընդհանուր Եկեղեցու կողմից:

Ուստի այն աղոթքը, որ արվում է եկեղեցում բազում ժողովրդի կողմից, առանձնական աղոթքից նախապատիվ է և հույժ օգտակար, որովհետև աղոթքի համար նախատեսված տեղը եկեղեցին է, ուր երբ ամենքի սիրտն ու կամքը միանում են Աստծուն փառաբանելու, աղոթողները նմանվում են երկնային փառաբանիչներին:

Ուրեմն՝ հավատացյալները պարտավոր են անխափան գնալ եկեղեցի՝ մասնակցելու հասարակաց ժամերգությանը, ոչ միայն տերունական ու հանդիսավոր օրերին, այլև եթե հնարավորություն կա, ամեն օր: Այս պատճառով էլ եկեղեցի գնալիս կանոնադրված ժամանակից առանց լուրջ պատճառի ու շանալն առանց մեղքի չի մնում, մանավանդ երբ սուրբ Պատարագի ահեղ խորհուրդն է մատուցվում:

ԺԸ. Առանձնական աղոթքը հույժ օգտակար է: Բայց հարկ է նախ հասարակաց աղոթքը կատարել եկեղեցում և հետո առանձնականը: Իսկ եթե մեկը ծուլության պատճառով չի գնում եկեղեցի և համարում է, թե առանձնական աղոթքով ազատվում է պարտքից, մեծապես խաբվում է: Քանզի եթե եկեղեցի կա, և ինքը կարող է գնալ այնտեղ, զանց առնելով մեղանջում է:

ԺԹ. Կերակուրը մարմնի սնունդն է, իսկ աղոթքը՝ հոգու: Ուստի մարմնի պես պետք է ամեն օր սնել նաև հոգին, այլապես կնվաղի, կհիվանդանա կամ կմեռնի: Որովհետև առանց աղոթքի հոգին չի կարող ապրել Աստծու շնորհի մեջ, և Աստծու շնորհն առանց աղոթքի չի մնում հոգու մեջ:

Ուստի մարդիկ որքան օտարանում են աղոթքից, այնքան Աստծու շնորհը հեռանում է նրանցից, մինչև որ մեծամեծ մեղքերի մեջ են ընկնում, ինչը հոգու մահ է:

ԺԺ. Մարդու միտքը հարկավ պահանջն ունի ինչ-որ բան խոկալու, լինի աստվածային ու բարի, թե աշխարհային ու չար: Հետևաբար մարդ միտքն ու խորհուրդները պիտի ուղղի դեպի Աստված, որպեսզի աստվածայինը շարունակ խոկա և բարու մեջ հարատևի: Այսպիսի մտածական աղոթքը մարդուն երկնաքաղաքացի ու հրեշտակներին նմանակից է դարձնում. բացի այդ, Աստված առավել լսում է միտքը, քան ծայնը:

Ի. Աղոթողը պարտավոր է ճանաչել, թե Աստծու առաջ է, և անվայելը խորհելուց ու խոսելուց զգուշանալ: Որովհետև աղոթելիս որևէ չար բան խորհելը համարվում է աղոթքի աղտեղություն. աշխարհային հոգսերն ու զբաղմունքները հիշելը՝ խանգարում, մտքի ցնդումն ու անզգայանալը՝ գողություն, անօգուտ և ունայն բան մտածելը՝ արատավորություն:

ԻԱ. Ջերմեռանդ սրտով, խոնարհ հոգով ու մաքուր մտքով արված աղոթքը ոչ միայն այս կյանքի զանազան փորձանքներից է ազատում, այլև Աստծու շնորհը մարդու հոգու մեջ աճեցնում, որով մարդը կարողանում է օրըստօրե արիանալ առաքինական գործերում և հասնել կատարելության:

ԻԲ. Աղոթքը փրկության համար այնքան է հարկավոր, որ առանց աղոթքի ոչ մի չափահաս չի կարող փրկվել: Որովհետև մեր բոլոր բարեգործություններն Աստծու շնորհով են մեզ արժանացնում փրկությանն ու հավիտենական կյանքին, իսկ Աստծու շնորհը տրվում է միմիայն աղոթքով ու խնդրանքներով՝ ըստ այսմ. «Խնդրեցե՛ք Աստծուց, և Նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնեք» (Մատթ. Է 7): Այդ պատճառով էլ մեր Տերն Աստծու Սուրբ Հոգին ընդունեց աղոթքով՝ ըստ այսմ. «Երբ աղոթքի կանգնեց, երկինքը բացվեց, և Սուրբ Հոգին... իջավ Նրա վրա» (տե՛ս Դուկ. Գ 21-22): Սա արեց, ոչ թե որ Իրեն պետք էր, քանի որ դեռ մոր որովայնում լցված էր Սուրբ Հոգով, այլ արեց մեզ համար և մեզ իբրև



օրինակ, որպեսզի ստեպ աղոթենք, որով Աստծու Սուրբ Հոգին մեր ներսը կընդունենք և հավիտենական կյանքը կժառանգենք:

ԻԳ. Աղոթելիս նախ պետք է խնդրել Աստծու արքայությունը միայն իր անձի համար, իսկ այլ բաները՝ արքայության համար: Որովհետև այն, ինչ կարգված չէ երկնքի արքայությունը ստանալու համար կամ նրան չի վերաբերում, վայել չէ Աստծուց հայցել:

Ուստի եթե մեկը խնդրում է կյանք, իմաստություն, զավակ կամ ունեցվածք, մտքում պիտի դնի դրանցով ծառայել Աստծուն. այսինքն՝ կյանք է խնդրում, որ ապաշխարի, իմաստություն, որ սխալվելով մեղքի մեջ չընկնի, զավակ, որ նրան Աստծու ծառա դարձնի, ունեցվածք, որ աղքատներին ու կարոտյալներին բաշխի:

Սակայն մենք պիտի խնդրենք Աստծու արքայությունն ու Նրա արդարությունը, և այլ բոլոր բաները, որոնց կարիքն ունենք, քանի դեռ մարմնի մեջ ենք, Աստված Ինքը մեզ կտա, որովհետև գիտի մեր պետքերն ու կարիքներն ավելի լավ, քան մենք խնդրում ենք ու գիտենք (*տես Սառթ. 2 33*):

ԻԴ. Աղոթելիս պետք է խնդրել, որ Աստծու կամքը կատարվի մեր մեջ և ոչ թե մերը՝ ըստ այսմ. «...ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու ես կամենում» (*Մարկ. ԺԴ 36*): Սրանում են հաստատված աղոթքի կատարելությունն ու մարդու երջանկությունը, որովհետև նրա համար ենք աղոթում, որ հաճելի լինենք Աստծուն, իսկ այն ժամանակ ենք հաճելի լինում, երբ Աստծու կամքն է մեր մեջ կատարվում, և ուր Աստծու կամքն է կատարվում, այնտեղ են բոլոր բարիքների լրումն ու երջանկությունը:

ԻԵ. Աղոթելիս պետք է խնդրել, որ Աստված մեզ տա ջերմեռանդության շնորհ, որովհետև ինչպես որ խունկն առանց կրակի չի բուրում, այդպես էլ աղոթքն առանց ջերմեռանդության արդյունք չի տալիս:

Ոչ թե խոսքի երկարությունն է աղոթքն ընդունելի դարձնում, այլ սրտի ջերմեռանդությունը, որովհետև Աստված ոչ թե աղոթքի քանակին է նայում, այլ որակին:

Ծնողները, տեսնելով, որ զավակները ջանում են հրամանին հնազանդվել, բայց անգոր են կատարելու, օգնում են, որ նրանք սրտապընդվեն: Նմանապես և Աստված, տեսնելով մեր սրտի ջերմեռանդությունը, Իր շնորհով օգնում է մեզ՝ տկարներին:

ԻԶ. Աղոթքը պահանջում է նախ հավատ և հույս. որովհետև եթե մեկը չհավատար, թե Աստծու խոստումը՝ խնդրողներին տալ երկնքի արքայությունը, ճշմարիտ է, այլևս հույսով չէր ակնկալի աղոթքի հայցմամբ ստանալ այն Նրանից:

Պահանջվում է նաև սեր. որովհետև եթե մարդ չսիրեր Աստծուն իբրև ծայրագույն բարու և իր բաղձանքները կատարողի, չէր ցանկանա Աստծու հետ միանալ: Քանզի աղոթքի վերջնական նպատակն Աստծուն ժառանգելն է, իսկ դա սերտ սիրով է լինում, որովհետև սերն է միավորիչ կապը: Եվ քանի որ մահացու մեղքը սերը վերացնում է և մեզ Աստծուց բաժանում՝ ըստ այսմ. «Ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծու միջև, ձեր անօրենությունների պատճառով է Նա Իր երեսը շրջել ձեզնից, որ չգթա» (*Եսայի ԾԹ 2*), ուստի աղոթելիս մեղքերի թողություն պիտի խնդրենք, որպեսզի Աստծու սերը նորոգվի մեր մեջ:

Ղարձյալ՝ աղոթքը պահանջում է խոնարհություն. որովհետև ով աղոթում է, պիտի ճանաչի բարիքներ գործելու իր անգորությունն առանց աստվածային շնորհի օգնության:

ԻԷ. Քանի որ աղոթքը մտքի խոսք է, մարդուն բարձրացնում է հրեշտակներին նման լինելու, որովհետև ինչպես որ հրեշտակներն են Աստծու հետ մտքով խոսում, այդպես էլ՝ աղոթողները:

Պարարտ կերակուրներից իրեն պահելը և կարոտյալներին ողորմություն տալը, այո՛, աստվածահաճ բարեգործություն են, բայց մարդուն պատշաճում են, որովհետև նյութական մարմին ունի, իսկ աղոթքը մարդուն պատշաճում է, որովհետև մարդը, հրեշտակների նման, աննյութ հոգի ունի:

ԻԸ. Աստծուն աղոթելը կարևոր է բոլորի և առանձին յուրաքանչյուր մարդու համար. որովհետև բոլոր մարդիկ, կարիքների մեջ ընկած լինելով, չեն կարողանում բոլոր վշտերի մեջ օգնել միմյանց, ուստի ամենակարող աջի օգնության կարիքն ունեն և այն որպես օգնական կարող են ունենալ աղոթքի

միջնորդությամբ:

Անզգա առարկաներին աղոթելն անօգուտ է, որովհետև ո՛չ աչք ունեն, որ մեր թշվառությունը տեսնեն, ո՛չ ականջ, որ մեր աղաղակը լսեն, և ո՛չ որևէ գորություն, որ մեզ օգնեն:

Ղևերին դիմելը խելագարություն է, ավելին՝ մեծ ամբարշտություն, որովհետև դևերը մարդկանց թշնամի են և Աստծուն առելի:

Իսկ հրեշտակներին կամ սրբերին ձայնելը թեև կարևոր է, բայց ոչ հարկավոր, որովհետև նրանք ևս առանց Աստծու հրամանի չեն կարող օգնել:

Հետևաբար, ամեն պարագայում պետք է Աստծուն աղոթել, մեր ցավերն ու կարիքները Նրա առաջ սփռել, որովհետև Նա է մեզ համար բարերար ու խնամածու՝ հորից ու մորից առավել:

Ուրեմն ով չի աղոթում, Աստծու օգնությունից ու խնամքից զուրկ է մնում: Եթե արդար մեկն է, իր արդարությունը կորցնում է, որովհետև աղոթքն է, որ մարդուն Աստծու շնորհի մեջ է պահում: Իսկ եթե մեղավոր մեկն է, չի կարող մեղքի վիհից ելնել ու արդարացվել, որովհետև զոջման շնորհն աղոթքով է պարգևավում:

Աստծու պարգևները նման են աշխարհի վրա ծագած արեգակի լույսի: Սակայն ինչպես որ լույսը վայելելու համար աչք է հարկավոր, այդպես էլ Աստծու պարգևներն ընդունելու և վայելելու համար աղոթք է պետք. որովհետև աղոթքն է մտքի ու հոգու աչքը:

ԻԹ. Երբ անբան արարածները տառապանքի մեջ հեծում ու գոռում են, հավանական է, որ դեպի բնության Ստեղծիչն են աղաղակում ու Նրա օգնությունը խնդրում. որովհետև բնությունը հարկավորաբար դիմում է Արարչին՝ իբրև իր ապավենի: Այլապես իզուր է նրանց աղաղակը, որ բնությունից ունեն, իսկ բնությունն ունայն բանի չի ձգտում: Սաղմոսերգուն էլ ասում է, թե Աստված լսում է անբանների աղաղակը և քաղցրությամբ խնամում նրանց՝ ըստ այսմ. «Նա ուտելիք է տալիս անասուններին ու ագռավի ձագերին, որոնք դիմում են Իրեն» *(Սաղմ. ՃԽԶ 6)*:

Ուստի ով Աստծուն չի աղոթում, անբաններից էլ անբան է, Աստծու խնամքին անարժան, իր բարերարի հանդեպ ապերախտ ու ապաշնորհ, որովհետև բարիքներն առնում ու վայելում է, իսկ բարիքները տվողին չի ճանաչում ու չի փառավորում:

Լ. Միտքը կույր է, եթե չի խոկում Աստծուն, համր է, եթե չի աղոթում, խուլ է, եթե Աստծու պատվիրանները չի լսում, մեռած է, եթե Աստծուն չի սիրում, Աստծուն թշնամի է, եթե սիրում է այն, ինչ ատում է Աստված: Ամբարշտություն է խնդրել Աստծուց այն, ինչ Աստված չի կամենում:

ԼԱ. Սուրբ հայրերն աղոթքը նմանեցնում են երկնքից երկիր կախված ոսկե շղթայի, որն աղոթասերները, ջանալով ձեռքով դեպի իրենց քաշել, հոգով երկինք են ելնում:

ԼԲ. Թեպետ Աստված շնորհում է այն բոլորը, ինչի կարիքն ունենք, սակայն կամենում է, որ մենք աղոթքով խնդրենք դրանք, որպեսզի ճանաչվեն Աստծու մեծությունն ու մեր հանդեպ բարերարությունը և Նրա հանդեպ մեր կարիքավորությունը:

ԼԳ. Աղոթելիս պետք է բառերն ուշադիր արտաբերել, խոսքերի իմաստը հասկանալ և միտքն առ Աստված ուղղել՝ հայցելով խնդիրքի կատարումը՝ ըստ այսմ. «Պիտի աղոթեմ հոգով, պիտի աղոթեմ նաև մտքով» *(Ա Կորնթ. ԺԴ 15)*:

ԼԴ. Աղոթքն անպարտելի զենք է դևերի դեմ պատերազմներում, և քանի որ դևերը գիտեն, որ աղոթքով հաղթվում են մարդկանցից, այդ պատճառով առավել ջանում են խափանել մարդկանց աղոթքը, քան այլ բարեգործություններ: Ուստի ծանծրույթ, նեղություն ու ծանրություն են պատճառում սրտին և տեսակ-տեսակ չար մտածումներ միտքը գցում, որպեսզի աղոթքը խափանեն կամ անպտուղ դարձնեն:

Հետևաբար, ով աղոթելիս ծանծրույթ ու ինչ-որ նեղություն է զգում, թող իմանա, որ դա դևերի որոգայթ է, և երբեք չթուլանա աղոթելիս, այլ ջանքերով առավել զորանա՝ Տիրոջից օգնություն հայցելով: Եվ Աստված, որ մոտ է նրանց, ովքեր փշրված սրտով փնտրում են Իրեն, իսկույն օգնության է հասնում, և դևերն անմիջապես հալածվում ու չքանում են:

ԼԵ. Աղոթելիս պետք է կրոնասիրությամբ ցույց տալ հարգանքի ու պատկառանքի արտաքին նշան՝

հայտնելու հոգու խոնարհությունն ու սրտի երկյուղը: Այդպիսի նշան են դեմքը դեպի արևելք ուղղելը, բազուկները տարածելը, ոտքի վրա կանգնելը, ծնրադրելը, արտասուք թափելը, երեսը գետնին դնելը, քանգի աղոթելը միևնույն ժամանակ նաև երկրպագել է:

ԼԶ. Շատ անգամ Աստված մեր խնդրանքը չկատարելով առավել է ողորմում, քան կատարելով: Քանգի երբ անգիտությամբ որևէ վնասակար բան ենք խնդրում՝ կարծելով, թե լավ բան է, Աստված չտալով մեծ ողորմություն է մեզ անում:

Ուստի վայել չէ տրտմել ու Աստծուց տրտնջալ, թե մեր խնդրանքը չկատարեց, այլ պետք է ուրախ սրտով ապավինել Աստծու կամքին, որ անի, ինչպես կամենում է: Քանգի միշտ մեր օգուտն է կամենում ու Իր բարերարությամբ այն տալիս:

ԼԷ. Աստված երբեմն ուշացնում է տալ մարդկանց խնդրածը, որպեսզի պարզևների հարզը լավ իմանան և ինչ որ առնում են, չկորցնեն, քանգի մարդիկ սովոր են անաշխատ ստացած բարիքներն անհոգությամբ կորցնել:

Երբեմն էլ ուշացնում է, որպեսզի խնդրողներին առավել արհացնի աղոթքի ջանքերի մեջ և գերագույն պարզևների արժանացնի: Իսկ երբեմն արագորեն շնորհում է, որպեսզի կարճատևությամբ վհատվելով՝ չհուսալքվեն:

ԼԸ. Իմաստունների ու տարիքն առածների աղոթքը նման է չափահաս երեխաների աղաչանքի, իսկ ռամիկներինն ու տկարներինն՝ մանկիկների լացի: Եվ ինչպես որ ծնողները չափահաս զավակների խնդրանքները երբեմն անտեսում են կամ ուշ կատարում, որովհետև փորձով գիտեն նրանց հոգու արիության չափն ու համբերելու քաջությունը, իսկ փոքրիկ զավակների խնդրանքն արագ կատարում են, որովհետև գիտեն նրանց անհամբեր բարքը, որ երբ խնդրածն արագ չեն ստանում, աղաղակ են բարձրացնում, լալիս, ողբում ու հուսալքվում, այդպես էլ Աստված իր ծառաների խնդրանքները երբեմն շուտ և երբեմն ուշ է կատարում, որովհետև քաջ գիտի պատշաճն ու վայելուչը տալ և գիտի այն ժամանակը, երբ պիտի տա մարդկանց՝ Իրենից խնդրածը:

ԼԹ. Պետք է բոլոր պարագաներում աղոթել. ձախորդության մեջ, որպեսզի նեղությունից ազատվենք, հաջողության մեջ, որպեսզի փորձության վտանգների մեջ չընկնենք: Հաջողության ժամանակ արված աղոթքը նման է նախապահպանիչ դեղի, իսկ ձախորդության ժամանակվանը՝ առողջացուցիչ: Ուստի պիտի աղոթելու մեջ հարատևենք, որպեսզի մեր կյանքը խաղաղությամբ անցկացնենք:

ԼՍ. Աղոթք անելիս պետք է Աստծուն աղաչել, որ չթողնի մեզ մեր կամքով ընթանալ, այլ իր շնորհով մեզ պահի մեղքերից, տա մեզ մարմնով մեռնել, քան մահու չափ մեղանչել:

Քանգի ավելի լավ է համարվում մեռնել, քան Աստծուն մեղքերով բարկացնել ու հավիտենապես դժոխքի դատապարտվել: Սա ոչ թե սեփական մահը խնդրել է նշանակում, այլ սրտի եռանդը ցույց տալ, թե մարդն առավել հոժար է մարմնով մեռնել, քան մեղքի մեջ ընկնել:

Այսպիսի խնդրանքը ծնվում է Աստծու հանդեպ սիրո սաստիկ ջերմեռանդությունից, որ հաղթում է մահվանը՝ ըստ այսմ. «Հզոր է սերը մահվան պես» (Երգ Ը 6): Եվ այսպիսի մաղթանքներով Աստված առավել է գութով լցվում ողորմելու և օգնելու մեզ՝ տկարներին:

ԼՍԱ. Բոլոր խնդրանքների կատարման համար աղոթք է հարկավոր, Աստծուց խնդրածը հոգևոր բարիք լինի, թե մարմնավոր: Սակայն ինչ որ վայել է նաև մարդուն՝ ջանքն ու աշխատանքը, այդ բարիքի կատարման համար, պետք չէ զանց առնել: Ուստի ով աղոթում ու Աստծուց ինչ-որ բան է խնդրում, հարկ է, որ ինքն էլ ջանք թափի, որքան կարող է, ստանալու իր խնդրանքի կատարումը:

ԼՍԲ. Աղոթքը հույժ կարևոր է նրա համար, որ աստվածային շնորհն ընդունվի, և խնդրանքները կատարվեն: Եվ պատահում է, որ մարդ միևնույն ժամանակ ստանում է և՛ շնորհ, և՛ իր խնդրածը, երբ աղոթքն ըստ պատշաճի է, և խնդրանքը՝ աստվածային կամքին համաձայն:

Երբեմն էլ շնորհը ստանում է, իսկ խնդրածը՝ ոչ, երբ աղոթքն ըստ պատշաճի է, բայց խնդրանքն՝ անընդունելի: Եվ երբեմն էլ, թեև աղոթողի խնդրանքը վայելուչ է, ոչ շնորհն է առնում և ոչ խնդրածը, երբ մահացու մեղքի մեջ է. որովհետև խնդրողի անարժանությունն արգելում է, որ խնդրանքը կատարվի:

Պատահում է նաև, որ խնդրածն առնում է, իսկ շնորհը՝ ոչ, քանզի թախանձանքով խնդրում է Աստծու կամքին հակառակ բան և իր օգուտը չի հանձնում Աստծու կամքին: Ուստի Աստված բարկանալով կատարում է խնդրանքը, որ խնդրողը դրանով պատժվի ու զգաստանա: Ինչպես իրայելացիներն անապատում միս խնդրեցին, և Աստված լորամարգի տվեց, բայց կերակուրը դեռ բերաններում՝ Աստծու բարկությունը թափվեց նրանց վրա (*տես Թվեր ժԱ 33*): Նաև թագավոր խնդրեցին, և Աստված Սավուդին տվեց, բայց նա նրանց համար պատիժ դարձավ (*տես Ա Թագ. Ը-ժե*): Ուրեմն՝ այն, ինչ մեզ օգտակար է թվում, մենք աղոթքով պիտի խնդրենք Աստծուց, իսկ խնդիրքի կատարումը հանձնենք Աստծու բարեհոգությանը:

ԽԳ. Այդպես է նաև սուրբ Պատարագի աղոթքների ժամանակ: Պատահում է, որ մարդն ընդունում է և՛ Խորհուրդը, և՛ Խորհրդի շնորհը, երբ արժանապես է հաղորդվում:

Պատահում է, որ Խորհուրդն ընդունում է, բայց Խորհրդի շնորհը՝ ոչ, երբ անարժանությամբ է հաղորդվում, և սա նրա համար որպես պատիժ է լինում:

Երբեմն էլ Խորհուրդը չի ընդունում, բայց շնորհն ընդունում է, երբ Պատարագի արարողությանն արժանապես է մասնակցում:

Եվ երբեմն էլ ո՛չ Խորհուրդն է ընդունում, ո՛չ էլ շնորհը, երբ Պատարագի արարողությանն անարժանությամբ է մասնակցում:

ԽԴ. Պետք է առանձնական աղոթքի մեջ Աստծուն աղաչել քրիստոնեական մեր սուրբ հավատի պայծառության, Եկեղեցու հաստատունության, ազգի ու համայն աշխարհի խաղաղության, մեղավորների դարձի ու զղջման համար, որպեսզի նրանց հոգիները հավիտենական կորստյան չմատնվեն, այլ և շնորհի մեջ ննջածների հոգիների փրկության համար: Այս օրենքը պահում է Տիեզերական Սուրբ Եկեղեցին, որին պարտավոր ենք հետևել որպես ամբողջության անդամներ:

Յուրաքանչյուր հավատացյալ պարտավոր է Աստծուն աղաչել ընկերոջ և ողջ հասարակության համար. պատահում է, որ մեկն աղոթում է ամենքի համար, պատահում էլ է, որ ամենքն աղոթում են մեկի համար, և այսպես բոլորը միմյանց աղոթքներից օգուտ են ստանում:

Աղոթելիս կարևոր ու օգտակար է Աստծու սուրբերին, մանավանդ սուրբ Աստվածածնին խնդրել, որ բարեխոսեն Աստծու առաջ: Ուստի սուրբ Եկեղեցին իր բոլոր արարողություններում կարգեց սուրբ Աստվածածնին ուղղված արժանավոր մաղթանքներ՝ ապավինելով նրա անդառնալի բարեխոսությանը:

ԽԵ. Աստծուն հասցեագրված բարի գործերն աղոթք են համարվում: Բայց պետք չէ, նրանց վրա հույսը դնելով հետ մնալ հասարակաց կամ առանձնական աղոթքից, որովհետև բարեգործություններն աղոթքով են արդյունք տալիս:

ԽԶ. Եթե մեկը հաջողության ժամանակ լսում է Աստծու պատվիրաններին, Աստված էլ նրա ներդրության ժամանակ նրան է լսում: Իսկ ով հաջողության մեջ, ականջները փակելով, չի հնազանդվում Աստծու պատվիրանին, խիստ իրավացիորեն Աստված չի լսում նրան, երբ նեղության ու տառապանքի վտանգի ժամանակ աղաղակում է Իրեն:

ԽԷ. Ամեն դժվարին ու օգտակար գործի սկզբում պետք է աղոթքով հայցել Աստծուց գործի լրմանը հաջողությամբ հասնել: Եվ գործը կատարելուց հետո պետք չէ անտեսել աղոթքը, այլ առավել ևս հարատևել աղոթքի մեջ ու գոհանալ Աստծուց: Քանզի մարդ ավելի շատ աշխատանքի կարիք ունի ունեցածը պահելու համար, քան չունեցածը ստանալու:

ԽԸ. Բազում պատճառներ կան, որ աղոթքի զորությունը խափանում են և խնդրանքի կատարմանն ընդդիմանում: Դրանք են մեղքը, չար մտածումը, երկբայությունը, անվայել խնդրանքը, խնդրողի խստասրտությունը՝ ուրիշների հանցանքները ներելու մեջ, անգթությունը, անհամբերությունը, որոնց մասին է ասում սուրբ առաքյալ Հակոբոսը. «Խնդրում եք ու չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում» (*Հակոբ 7 3*): Ուստի ով խնդրում է բարիքներ ստանալ Աստծուց, թող վերացնի արգելիչ պատճառները, իսկ եթե ինքը չի վերացնում, և խնդրանքը չի կատարվում, թող Աստծուն չբամբասի, որ իր աղոթքը չլսեց, այլ իրեն մեղադրի, որ չարամտորեն խնդրեց:

ԽԹ. Բոլոր աղոթքները երկու բանի են վերածվում: Դրանք են խնդրանքն այն բարիքների համար, որոնց կարիքն ունենք, և ազատումն այն չարիքներից, որոնցից տառապում ենք:

Արդ՝ սկզբնական բարին Աստված է. ուստի ով գտնում է Աստծուն, գտնում է ամեն բարիք: Իսկ սկզբնական չարը մեղքն է. ուստի ով մեղքից հեռանում է, բոլոր չարիքներից ազատվում է:

Ծ. Աստված երբեմն մեզ ցույց է տալիս բարին ընդհանրապես, բայց թողնում է, որ աղոթքով Իրենից խնդրենք այն բարին, որ մասնավորապես պարտավոր ենք անել, և կամ որ մարդկանցից սովորենք դրա գործադրության եղանակն ու կերպը, թե ուր, երբ և ինչպես է հարկ անել:

Այդ պատճառով նախ պետք է աղաչել Աստծուն, որ Ինքն առաջնորդի մեզ, ինչպես և կամենում է՝ ըստ այսմ. «Սովորեցրու՛ ինձ կատարել կամքը Քո, քանզի Դու ես Աստվածն իմ» (Սաղմ. ՃԽԲ 10), և թե՛ «Ցույց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ» (Սաղմ. ՃԽԲ 8): Եվ երկրորդ՝ պետք է դիմել իմաստուն քահանաներին ու խոստովանահայրերին, որոնք աստվածային կամքի թարգման են համարվում, նրանցից խորհուրդ հարցնել և սովորել բարու կիրառության եղանակը, ինչպես Պողոսին ասվեց. «Այդ քաղաքը մտի՛ր, և քեզ կասվի, թե ինչ պիտի անես» (Գործ. ԻԷ 31): Որովհետև թեպետ Աստված Պողոսին ցույց տվեց բարին ընդհանրապես, բայց թողեց, որ Անանիա առաքյալից մասնավորապես սովորի դրա գործադրությունը (տե՛ս Գործ. Թ 10-19):

Ուրեմն՝ ով էլ լինի, արժանահայց աղոթքների և առաքինի մարդկանց խորհուրդների ու խրատների օգնության կարիքն ունի, որպեսզի կարողանա անսայթաք գնալ բարու ճանապարհով, որն Աստված ցույց է տվել վաղնջական ժամանակներից: Որովհետև ըստ աստվածաբանների՝ նախասահմանությունը կատարվում է աղոթքներով, ինչպես նախորոշել է Աստված:

Աստված շատ բան այնպես է կամենում ու սահմանում, որ աղոթքով ու մեկի միջնորդությամբ տա մեզ, ինչպես որ Աստծու հրեշտակի հայտնությամբ Պողոսը նախ ասաց, թե ոչ ոքին վնաս չի լինի (տե՛ս Գործ. ԻԷ 22), իսկ երբ նավավարները կամենում էին փախչել, հարյուրապետին ու զինվորներին ասաց. «Եթե դրանք նավի մեջ չմնան, դուք ազատվել չեք կարող» (Գործ. ԻԷ 31): Տեսիլքի պատճառով սուրբ առաքյալը չերկմտեց սրա վրա, սակայն նույնը հաստատեց իրերի կարգի գործադրությամբ. որովհետև թեպետ Աստված Պողոսին շնորհեց նավում գտնվող բոլոր անձանց, սակայն ոչ առանց նավաստիների օգնության:

ԾԱ. Բոլոր ստեղծական բնություններն այս երեք բառերն են քարոզում մարդկանց՝ ընդունի՛ր, հատուցի՛ր և վախեցի՛ր: Այսինքն՝ Աստծուց բարիքներ ընդունի՛ր, գոհության պա՛րտքը հատուցի՛ր և քո ապերախտությունից վախեցի՛ր:

Իսկ ով, հոգու ականջները բնության ձայների հանդեպ փակելով, Աստծուց աղոթքով չի խնդրում բարիքներ կամ ընդունած բարիքների համար շնորհակալ չի լինում և կամ չի վախենում Աստծու արդարությունից, որն անշնորհակալներին դատում է, որպես չար ու վատ ծառա Աստծուց արժանապես պատժվում է:

«Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի  
& իմ Աստծուն աղաղակեցի. Նա լսեց ինձ  
& իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից, Նրան ուղղված աղաղակս Նրա ականջին է հասնելու»  
(Սաղմ. ԺԷ 7):

«Օրական երեք անգամ նա ծնրադրում էր  
& աղոթում» (Դան. Զ 10):

«Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով,  
կստանաք» (Մատթ. ԻԱ 22):

«Երբ տեղ հասավ, ասաց նրանց.

«Աղոթքի՝ կանգնեցեք, որ փորձության մեջ չընկնեք»  
(Ղուկ. ԻԲ 40):

«Հույսով ուրախացե՛ք, նեղության համբերեցե՛ք,  
հաճախակի աղոթեցե՛ք» (Հռոմ. ԺԲ 12):

«Նա էր, որ մարմնի մեջ եղած իր օրերում աղոթքներ  
ու պաղատանքներ էր մատուցում  
ուժգին գոչումով & արտասուքներով Նրան,  
ով կարող էր փրկել իրեն մահվանից:  
Եվ նա լսելի եղավ իր բարեպաշտության համար»  
(Եբր. Ե 7):

«Ինչ էլ խնդրենք ըստ Նրա կամքի, Նա մեզ կլսի»  
(Ա Հովհ. Ե 14):

## Գ Լ ՈՒՆ Գ

### Պ Ա Հ Ք

Ա. Աղոթքի մասին մեր խոսելուց հետո խոսքիս կարգը պահանջում է ինչ-որ բան ասել և պահքի մասին, որի համար հարկավոր է միջին բարիքը՝ մարմնի առողջությունն ու զորությունը, որոնցով են լինում ծոմապահությունն ու պահեցողությունը: Ով առողջ և ուժեղ է, կարող է իրեն պահել պարարտ ու ախորժելի կերակուրներից ու ըմպելիքներից կամ կերակուրների մեջ ժուժկալել՝ ճնշելու մարմինն ու մեռցնելու զգայական բաղձանքների ախտավոր կրքերն ու անկարգ ցանկությունները, որպեսզի կարողանա իր մարմնի անդամները ծառայեցնել Աստծուն: Այդպիսի ծառայություններ են հիվանդներին խնամելը, բանտարկյալներին այցելելը, անտեր մեռելներին թաղելը, սրբատեղիներ ուխտ գնալը, այլև վշտերի ու նեղությունների համբերելը, մինչև իսկ Աստծու սիրո համար մարմինը ծեծի, բանտարկության կամ մահվան ենթարկելը: Սրանցով և սրանց նման գործերով է մարմինը նվաճվելով հնազանդվում հոգու կամքին: Որովհետև ինչպես որ երբ մարմինը կերակուրներով զորանում է, հոգին տկարանում է, այդպես էլ երբ մարմինը պահեցողությամբ տկարանում է, հոգին զորանում է՝ ըստ այսմ. «Երբ տկար են, այն ժամանակ են զորավոր» (Բ Կորնթ. ԺԲ 10):

Ուրեմն՝ պետք է ծոմով, պահեցողությամբ ու ժուժկալությամբ ճնշել մարմինը, որպեսզի հլու հպատակությամբ մինչև վերջ ծառայի Աստծուն:

Բ. Ամենքի վրա պարտավորություն է դրված ամբողջապես պահել սուրբ Եկեղեցու կարգած կանոնական պահեցողությունները: Իսկ եթե մեկը, պահքն ավելորդ ու անօգուտ նեղություն համարելով, գայթակղվում և ուրիշներին էլ գայթակղեցնում է, մեծապես մեղանջում է, որովհետև դատում է այն սուրբ հայրերին, որոնք Սուրբ Հոգով սահմանեցին Եկեղեցու կանոնները:

Գ. Մարդը պահեցողությամբ է հատուցում իր մարմնի պարտքն Աստծու հանդեպ և արդարության գործ կատարում: Քանզի Աստված է որպես գերագույն Տեր, ինչ բարիք որ սովել է մեզ, դրանցից տասանորդներ է պահանջում, ինչը նրա իշխանության նշան է, որովհետև երկրի տերերն իրենց հպատակներից իրավունքով պահանջում են հասույթներ կամ հարկ, և ովքեր զլանում են տալ, ապստամբ են համարվում:

Այդ պատճառով էլ պետք է մարմնի հասույթը կամ հարկը, որ պահեցողությունն է, մատուցել Աստծուն, որ մեր Տերն ու Բարերարն է՝ ըստ այսմ. «Ի՞նչ ունես, որ ստացած չլինես, և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես» (Ա Կորնթ. 7 7):

Պահեցողությամբ նաև սիրո գործ է կատարվում. երբ մեկը կամավոր հոժարությամբ ճնշում է մարմինը, իր մեջ ցույց է տալիս Աստծու հանդեպ կատարյալ սերը: Իսկ սա լինում է նախ պահքով, ապա՝ մարմնի այլ ծառայություններով:

Ե. Պահքը վերաբերում է ոչ միայն ճաշակելիքին, այսինքն՝ բերանին, հեռու մնալու պարարտ կերակուրներից, այլև բոլոր զգայարաններին: Քանզի պահքի նպատակը մտքի մաքրությունն ու սրտի սրբությունն է, որոնց կարող են արատավորել նաև աչքերով նայելը, ականջներով լսելը, ռունգներով հոտոտելն ու շոշափելիքներով զգալը, ուստի հարկ է պահքի օրենքը նրանց վրա ևս կարգել՝ ըստ յուրաքանչյուր աստիճանի: Որովհետև անօգուտ է միայն բերանով պահք պահելը և մյուս զգայարաններով չզգուշանալը մեղքի պատճառից: Ուրեմն՝ մարդ պետք է իրեն պահի ոչ միայն պարարտ կերակուրներից, այլև մեղքի ամեն պատճառից:

Զ. Կան և մարդիկ, որ պահք պահում են, բայց արդյունքում անվարձ են մնում, ինչպես օրինակ, երբ ժլատը պահում է, որ դրամը չծախսվի, կեղծավորը պահում է, որ գովեստներ ընդունի, տկարը պահում է, որ մարմինը չվտանգվի, աղքատը պահում է, որովհետև կերակուր չունի: Այսպիսիք պահքը պահում են իրենց և ոչ թե Աստծու համար: Սակայն իրականում պահքը պիտի լինի միայն Աստծու փառքի համար:

Է. Պահեցողությունը ոչ միայն հոգուն է հարկավոր, այլև մարմնին է օգտակար ու պիտանի, ինչ պատճառով նաև բժիշկներն են մարմնի առողջության համար պատվիրում պահք պահել: Ուստի ով տրտնջում է սուրբ Եկեղեցու կանոնական պահքից և զեխությամբ անձնատուր լինում կերակուրներ ու ընպելիքներ ըմբռնելուն, ոչ միայն հոգուն է վնասում՝ հպատակեցնելով զորավոր կրքերին, այլև վնասում է մարմնին՝ ենթարկելով զանազան ախտերի ու հիվանդությունների: Տե՛ս նաև որկրամոլության վերաբերյալ ասվածները (հատոր Բ, գլուխ Թ):

«Նրանց հալածանքի ժամանակ ես քուրձ էի հագնում,  
ծոմով խղճալի էի դարձնում ինձ,  
& իմ աղոթքներն ինձ վերադարձան» (Սաղմ. ԼԴ 13):

«Եվ արդ,- ասում է ձեր Տեր Աստվածը,- դարձե՛ք Ինձ  
ձեր ամբողջ սրտով, ծոմապահությամբ,  
լալով ու կոծելով» (Հովել Բ 12):

«Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսները այլանդա-  
կում են, որպեսզի մարդկանց այնպես երձան, թե ծոմ են պահում» (Մատթ. Զ 16):

## Գ Լ ՈՒՆ Դ

## Ո Ղ ՈՐ Մ ՈՒԹ Յ ՈՒՆ

Ա. Աղոթքից ու պահքից հետո պետք է խոսել և ողորմության գործի մասին, որ կատարվում է արտաքին ու ձեռքբերովի բարիքով, այսինքն՝ ունեցվածքով: Ողորմության գործեր են քաղցածներին կերակրելը, մերկ մարդկանց հագցնելը, օտարներին հյուրընկալելը, գերիներին ազատելը, կարոտյալների կարիքները հոգալը, որոնցով մարդ հատուցում է Աստծու հանդեպ իր ունեցվածքի պարտքը:

Բ. Թեպետ ողորմության գործը կարոտյալ մարդու համար է կատարվում, սակայն երբ ողորմություն գործողի վերջնական նպատակն Աստծուն է ուղղված, Աստված համարում է, թե ողորմությունն իր համար է արված, քանի որ վերջնական նպատակը գործի պատճառների մեջ առաջինն է՝ ըստ այսմ. «Քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, Ի՛նձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40):

գ. Մարդիկ ավելի հեշտությամբ ողորմության գործ են կատարում, քան աղոթում ու պահք պահում: Քանզի ճիգ ու ջանք է պետք աղոթելիս ծանծրայթն ու տաղտուկը վանելու և պահք պահելիս համադամ կերակուրների ցանկությունը զսպելու համար, իսկ ողորմությունը ջանք չի պահանջում, այլ միայն պահանջում է ընկերոջ կարիքը հոգալու կամեցողություն:

Մանավանդ որ աղոթքն ու պահքը նվեր են հոգու և մարմնի կողմից, որոնք մարդու բուն ու էական մասերն են, իսկ ողորմությունը նվեր է ունեցվածքից, որը մարդու մասը չէ: Սակայն ողորմած մարդն արտաքին ունեցվածքի հետ նաև իր սիրտն ու կամքը պիտի մատուցի, որովհետև ողորմությունն այնժամ է ընդունելի, երբ սրտի ձեռքով է բաշխվում: Քանզի Աստված ողորմությունը չի հավանում, եթե ձեռքը տալիս է, իսկ սիրտն՝ ափսոսում: Աստված ոչ թե տվածին է նայում, այլ տվողի սրտին:

Ուստի ողորմությունն այնժամ է բարձրագույն պարծենում դատաստանի ժամանակ, երբ նրան հարակից են զվարթ միտքն ու հոժար կամքը՝ ըստ այսմ. «Աստված սիրում է զվարթառատ տուրքը» *(Բ Կորնթ. Թ 7):*

դ. Մարդը ողորմություն գործելու է մղվում ոչ միայն Աստծու հանդեպ սիրուց, այլև իր բնությունից: Որովհետև մարդը, որի խառնվածքը բարեկարգ է, բնական կերպով մղվում է ընկերոջը գթալու: Իսկ աղոթելուն ու պահք պահելուն ամենքը մղվում են միայն Աստծու հանդեպ սիրուց և ոչ երբեք բնությունից: Քանզի ամեն ոք իր բնությունից սիրում ու փնտրում է իր հանգիստն ու հարմարավետությունը, բայց բնությամբ չի դրդվում աղոթելու և հաճելի կերակուրներից հրաժարվելու:

Ուրեմն միայն Աստծու հանդեպ սիրուց է մարդը մղվում աղոթքով ու պահքով իրեն նեղելու:

ե. Այն տուրքն է վայել ողորմություն կոչել, որ Աստծու հանդեպ սիրո համար կարոտյալներին մատուցվում է արդար վաստակից՝ ըստ տվողի կարողության չափի, զվարթագին, անտրտունջ, առանց հապաղման ու ծածուկ:

զ. Գթության գործը գործողի իղձով ու կարողությամբ է չափվում: Եթե մեկը շատ ունեցվածք չունի՝ կարոտյալների տուրքը լիաձեռն մատուցելու, թող այնքան տա, որքան կարող է: Ուստի մեր Տերն ասաց. «Ով այս փոքրիկներից մեկին միայն մի բաժակ սառը ջուր կտա խմելու՝ իբրև աշակերտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, իր վարձը պիտի չկորցնի» *(Մատթ. Ժ 42):*

է. Քաղաքացիական աստանում դատավորները պատժում են գողերին ու հափշտակողներին, բայց ոչ ազահներին ու անգութներին: Իսկ Աստված ոչ միայն գողերին ու հափշտակողներին է պատժում, այլև ազահներին ու անգութներին:

Ազահը, ժողովրդի բարիքներն անկարգ բաղձանքով հավաքելով, իր սրտի հետ միասին ամուր պահում է, և անգութը, ողորմությունն աշխարհից տարագրելով, կարիքի մեջ մարդկանց սպանում է: Ուստի սրանք վաղ թե ուշ իրավամբ են չարաչար պատժվում աստվածային արդարությունից:

զ. Դատաստաններից չեն ազատվում և նրանք, ովքեր թեպետ աղքատների հանդեպ ողորմած են, սակայն զինարքուքների ու խնջույքների ժամանակ բռերով լիքը արծաթ ու ոսկի են մատուցում երգողներին ու պարողներին: Քանզի մարմնավոր բարիքները, որ Աստծուց նրանց պարգևվել են բարեկարգ մատակարարությամբ ձեռք բերելու հոգևորը, անպիտան ու վնասակար բաների համար են չարաչար գործածվում՝ ըստ այսմ. «Լավ չէ մանուկների հացն առնել ու շներին գցել» *(Մատթ. ԺԵ 26):*

Ուստի է՛լ ավելի պատիժների են արժանի համարվում, ովքեր աղքատների հանդեպ անողորմ են և սատանայական խաղերում ու զեխություններում առատաձեռն:

թ. Չարիքների մեջ անզղջում մարդիկ թող չհուսան փրկության հասնել լոկ ողորմությամբ ու տուրքերով: Քանզի հանդգնություն է, ողորմության արդյունքի վրա հույսը դնելով, առանց խղճի խայթի մեղանջելը կամ մեղքերից հետ չդառնալը. ողորմությունն իրավունքը թյուրող կամ Աստծու արդարությունը խափանող կաշառք չէ:

Այո՛, ողորմությունը մեղքերը քավում ու Աստծու ցասումը մեղմացնում է, սակայն պահանջում է ունենալ կատարյալ զղջում ու խոստովանություն, ինչպես նաև աղոթք ու պահեցողություն: Որովհետև Աստված ոչ միայն ողորմած է, այլև արդար: Նա, ով ասաց, թե՛ «Ողորմություն տվեք, և ահա ձեր ամեն ինչը մաքուր կլինի» *(Ղուկ. ԺԱ 41)*, և թե՛ «Ողորմություն են կամենում և ոչ թե գոհ» *(Օտե 2 6, Մատթ. Թ*



13), նույնն ասաց. «Եթե չապաշխարեք, ամենքդ էլ այդպես պիտի կորչեք» (Ղուկ. ԺԳ 3):

Ուրեմն՝ պետք է կարոտյալներին ողորմություն տալ, բայց երբեք զանց չառնել կատարյալ զղջումն ու խոստովանությունը, աղոթքն ու պահեցողությունը:

Թեպետ միայն մի չարիքը բավական է մարդու հոգին հավիտենապես կորստյան մատնելու, բայց միայն մի բարեգործությունը բավական չէ նրան փրկության հասցնելու, որովհետև ըստ իմաստասերների ասույթի՝ բարին գոյանում է պատճառների ամբողջությունից, իսկ չարը՝ որևէ պակասությունից: Ուստի կենդանի արարածը ծնվում է բազում զուգընթաց պատճառներով, բայց կարող է մեռնել մի՛ պատճառից:

Ժ. Ողորմության ներգործության մասին ճոխագույնս ճառելն ավելորդ է թվում. որովհետև յուրաքանչյուր ոք կարող է նրա օգուտն իր վրա փորձել:

Անգամ բազում մեղավորներ աղքատներին ու Աստծու տան սպասավորներին տված ողորմությունների պատճառով արժանացան աստվածային ողորմության ու շնորհների, իրենց մեղքերից հեռացան ու արդարացան: Շատերն էլ տուրքերով ու ողորմությամբ ազատվեցին տառապանքներից ու վշտերից. հիվանդներն առողջություն գտան, փորձանավորները՝ փորձությունից ելք, ծախորդության մեջ ընկածները՝ բարեհաջողություն: Եվ ոչ միայն այսքանը. այլև մեռյալները կենդանություն ստացան, ինչպես որ բարեպաշտուհի Տաբիթան, այն այրիների աղաչանքով, որոնց ողորմություն էր անում, մեռած վիճակից սուրբ Պետրոսի ձեռքով կենդանության եկավ (տես Գործ. Թ 36-42):

«Քո մեղքերը քավի՛ր ողորմությամբ  
& քո անօրենությունները՝ աղքատներին գթալով»  
(Ղան. Դ 24):

«Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է»  
(Ղուկ. Զ 36):

«Որովհետև քաղցած էի, & ինձ ուտելիք տվեցիք,  
ծարավ էի, & ինձ ջուր տվեցիք՝ խմելու.  
օտար էի, & ինձ ձեր մեջ առաք» (Մատթ. ԻԵ 35):

### Գ Լ Ո Ւ Ն Ե

## Ա Ղ Ո Թ Ք , Պ Ա Հ Ք Ե Վ Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ - Յ Ո Ւ Ն

Ա. Երեք տեսակ բարի գործ կա, որ կարևոր է քրիստոնյային մեղքերից մաքրվելու և հավիտենական կյանքին հասնելու համար: Դրանք են աղոթքը, պահքը և ողորմությունը:

Երեք տեսակ են նաև թշնամիները, որոնք ջանում են արգելք լինել բարի գործերին և զրկել հավերժական կենդանությունից: Դրանք են սատանան, մարմինն ու աշխարհը:

Սատանան ներքին թշնամի է, որ բազմատեսակ խաբեական հնարներով դրդում է մարդկանց դադարեցնելու աղոթքը: Աղոթողի մտքի մեջ աղտեղի մտածումներ, սնափառություն, աշխարհային հոգսեր է գցում և կամ միտքը ցրում ու պղտորում սին մտածումներով, տրտմությամբ կամ թերահավատությամբ՝ այլ չարիքներով հանդերձ:

Մարմինը լծակից թշնամի է, որ հոգուն անդադար ստիպում է կատարել իր քմահաճույքները և ոչ թե Աստծու կամքը, պահքից խորշել տալիս՝ պատճառ բերելով իր տկարությունը, և հոգուն իրեն կամակից դարձնում՝ որովայնն ամեն օր փխրոթելի կերակուրներով խճողելու:

Աշխարհն արտաքին թշնամի է, որ իր սին վայելչությամբ հրապուրում է միայն երկրավոր բաների մասին մտածել. առաջարկում է հարստություն, փառք, փափկակեցություն, ջանում ողորմածների ծեռքերն աղքատներից ու կարոտյալներից պահել, որպեսզի այս կյանքը ճիշտ ունեցվածքով վայելեն ու ոչնչի պակասություն չունենան:

Այս մշտամարտ թշնամիներից ամենքից առավել վնասվում են նրանք, որ բարի գործերի ճանապարհին նորաքայլ ու հողդողդուն են: Իսկ երբ բարի գործերի մեջ հարատևում են, ազատաքայլ ու անսայթաք են դառնում և որպես քաջ զինվոր ոտնատակ տալով զորեղ թշնամուն՝ իրենց քաջության հաղթանակը տանում:

Եվ քանի որ ամեն ինչ անկատարությունից դեպի կատարելություն է դիմում, և ամեն գործ սկզբում դժվար է թվում, բայց հետզհետե վայելչաբար ու դյուրավ կատարվում, ուստի բարի գործեր կատարելու մեջ չհմտացածները թող չվհաստվեն, երբ բարիք գործելու ժամանակ որևէ դժվարություն կամ թերություն է առաջ գալիս, այլ ջանան գործի մեջ հարատևել, մինչև այն իրենց համար սովորություն դառնա:

Նույնը կարելի է տեսնել և արհեստավորների մեջ: Սկզբում անփորձները շատ դժվարություններ են կրում ու շատ սխալներ գործում, բայց երբ անձանձիր աշխատասիրությամբ հմտանում են արհեստին, այդուհետև դյուրավ ու անսխալ են աշխատում:

Բ. Աստված երբեմն մարդու կամքի հոժարությունը, որ հաստատել է բարին գործելու համար, գործի տեղ է ընդունում, ինչպես որ Աբրահամի հոժարությունն իբրև կատարված գործ ընդունեց, երբ զոհում էր իր Իսահակ որդուն (*տես Մանր. ԻԲ*), ինչպես նաև իբրև ավարտված գործ ընդունեց Տեր Հիսուսի մարմինն օծելու գնացող յուղաբեր կանանց հոժարությունը:

Այսպես էլ Աստված որպես գործ է ընդունում եկեղեցում աղոթել փափագող հիվանդների, կարոտյալներին ողորմություն տալ կամեցող չքավորների ու պահք պահել բաղձացող տկարների հոժարությունը:

Բայց երբեմն էլ կամքի հոժարության հետ նաև գործն է պահանջում, ինչպես որ Տերը բավական չհամարեց Ջեբեղեոսի որդիների՝ մահվան բաժակից խմելու հաստատուն փափագը (*տես Մատթ. Ի 22-23*), այլ կամեցավ, որ իրականում էլ խմեն, ինչպես և եղավ. մեկը վկայական արյամբ, և մյուսը մշտաչարչար ձգնությամբ լեցուն բաժակից խմեցին:

Ուրեմն՝ ով կարող է գործով կատարել աղոթք, երկրպագություն, պահք ու ողորմություն, թող դրանք զանց չառնի՝ հույս ունենալով, թե միայն կամքի հոժարությունը բավական կլինի: Իսկ նա, ով գործով կատարել չի կարողանում, թող չվհաստվի, թե վարձատրությունից զրկվեց, որովհետև Աստված երբեմն որպես վարձատրության արժանի գործ է ընդունում բարեմիտ կամքի պատրաստությունն ու հոժարությունը, երբ կամքը հաստատուն է:

Գ. Մարդու կատարելությունն Աստծուն սիրելու մեջ է, իսկ Աստծու հանդեպ սիրո նշան են այն բարի գործերը, որ վերաբերում են կամ Աստծուն, կամ իրեն, կամ ընկերոջը:

Աստծուն վերաբերում է աղոթքը, որովհետև աղոթքի առարկան Աստվածն է, իրեն վերաբերում է պահքը, որովհետև պահքի առարկան իր մարմինն է, և ընկերոջը վերաբերում է ողորմությունը, որովհետև սրա առարկան մարդուն ողորմելն է:

Բայց քանի որ աղոթքը, պահքն ու ողորմությունը՝ որպես ապաշխարության խորհրդի մասեր, կրոնական առաքինություններ են, երեքն էլ վերջին հաշվով վերաբերում են Աստծուն և իրենց գործությունն աստվածային շնորհի ներգործությունից ունեն:

Արդար մարդը մեղքի արատից զգուշանում է, որպեսզի չաղտեղանա ու շնորհից չզրկվի, իսկ մեղքերով արատավորվածն ապաշխարում է, որպեսզի մաքրվելով արդարացվի ու շնորհ ընդունի: Առաջինը գործում է ասես պաշտպանական զենքերով, իսկ մյուսը՝ վանողական:

Այս զենքերն աղոթքի, պահքի ու ողորմության գործողություններն են, որոնցով Աստծու շնորհը, եթե մեկի մեջ կա, չի կորչում, իսկ եթե կորել է, վերագտնվում է:

Թեպետ այս երեքը մի ակունքից՝ Աստծու սիրուց են բխում, ինչպես ջերմությունը, լույսն ու ստվե-

րը՝ մի արեգակից, սակայն միմյանցից զանազանվում են, որովհետև ներգործության տարբեր առարկաներ ունեն։ Եվ չնայած սրան՝ երեքը միասին երանության մի պսակ են հյուսում իրենց գործողի զլխի համար։

Արդ, ով աղոթում է Աստծուն, գիտի, որ ինքն Աստծու առաջ է, և Աստված՝ իր, ուստի չի կարող չար բան գործելու մասին մտածել, այլ հակառակը՝ ցանկանում է Նրան հաճելի լինել, իրեն ու իրեն վերաբերող ամեն ինչ հանձնում է Աստծու կամքին, ամեն ինչում ամենուրեք Աստծու փառքը փնտրում և խոնարհ մտքով հնազանդվում Նրա հրամաններին։ Այս բոլորն ու սրանց կարգը դասվողները համարվում են աղոթքի գործեր, որոնք սկիզբ են առնում մտքից, բայց կատարվում մարմնի սպասավորությամբ։

Հարկավորաբար սրանց հետևում են մարմինը պահքով ճնշելը, զգայարանները զսպելը, մարմնավոր հաճույքի ախտավոր բաղձանքի անկարգ կիրքը մեռցնելը, բոլոր վշտերին ու ծախողակի պատահարներին համբերելը, մինչև մարմինը կորցնելը, ինչի մեջ է գտնվում հոգու ճշմարիտ կյանքը՝ ըստ այսմ. «Ով կամենա իր անձը փրկել, այն կկորցնի» (*Մատթ. ԺԶ 25*):

Սրանք և առաքինական սրանց նման այլ գործերը վերաբերում են պահեցողությանը, որովհետև մարմնի մեջ ու մարմնով են կատարվում, սակայն ոչ առանց հոգու ու մտքի սատարության։

Սրանց հետևում են նաև ողորմության գործերը, այսինքն՝ կարոտյալի կարիքն ամբողջովին կամ մասամբ հոգալու համար ունեցվածքից մատուցելը, ինչի համար հարկավոր են մարմնի՝ ունեցվածք ձեռք բերելու համար ջանքն ու աշխատանքը և հոգու՝ սեփական կարողությունն ու կարոտյալի կարիքը կշռելու խոհեմ խորհրդածությունը, որպեսզի տալն արժանապես ու վայելչաբար լինի։ Ողորմության գործերի թվին են պատկանում ներումը, խրատը, ուսուցանումը, կարեկցությունը, մխիթարությունը և սրանց նմանները։

Սրանցով են կատարվում զղջումից ու զաղտնի խոստովանությունից հետո մեղքերի վճարման գործերը, որոնք խոստովանահայրը սահմանում է ըստ անձի ու ժամանակի որպիսության՝ որպես հոգու բոլոր հիվանդությունների ու վերքերի դեղ ու սպեղանի։ Սրանք, իրենց ներգործությունը Քրիստոսի չարչարանքների գործունից ունենալով, արդյունքում այս կյանքում շնորհներ են բերում և հանդերձյալում՝ փառք։

Դ. Սրանցում են ամփոփված ավետարանական ինը երանիները։ Որովհետև հոգով աղքատ, հեզ ու սրտով սուրբ են աղոթասերները, սգավոր, քաղցած, ծարավ, արդարության համար հալածված ու նախատված են պահեցողները, ողորմած ու խաղաղարար են ունեցվածքով կամ խոսքով օգնություն մատուցողները։

Արդ, ովքեր սրանք կատարում են Աստծու հանդեպ սիրով, նրանցն է երկնքի արքայությունը, նրանք են մխիթարվում, երկիրը ժառանգում, հագնում, ողորմություն գտնում, նրանք են Աստծուն տեսնում, Աստծու որդի կոչվում, երկնքում ցնծում և ուրախանում, որովհետև նրանց վարձքը շատ է այս կյանքում ու հանդերձյալում՝ ըստ մեր Քրիստոս Աստծու անսուտ խոստման (*տես Մատթ. Ե 3-12*):

Ե. Աղոթքի, պահքի ու ողորմության գերազանցության ու հարկավորության մասին ոչ միայն նախկին իմաստասերները, հայրերն ու վարդապետներն են գրում ու մարդկանց հորդորում դրանք կատարելու, այլև Հին ու Նոր Կտակարանների աստվածաշունչ գրքերն են ամենուր ասես փողի ձայնով հռչակում։

Ուստի թող բավարար համարվեն այստեղ սակավ-ինչ ասածներս, այլ բազում հոգեշահ խրատաբանությունների հետ միասին, որոնք ասես հոգու և մարմնի կարևոր զարդ են իբրև մի սուրբ կույս ու գեղափայլ պճնված անարատ հարս համարձակ մտնելու երկնավոր Փեսայի լուստ առագաստը՝ վայելելու անվախճան փառքը։

«Բարի են աղոթքները՝ պահեցողություններով, ողորմություններով & արդարություններով» (Տոբիթ ԺԲ 8):

«Այս տեսակ դ&ը այլ կերպ դուրս չի ելնում,  
եթե ոչ աղոթքով ու ծոմապահությամբ» (Մատթ. ԺԷ 20):

«Չէր հեռանում տաճարից, այլ ծոմապահությամբ &  
աղոթքով գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն» (Ղուկ. Բ 37):

«Քո աղոթքներն ու քո ողորմությունները  
հիշատակվելով՝ Աստծու առաջ ելան» (Գործ. Ժ 4):

**Գ Լ Ո Ւ Խ Զ**

Ա Ս Տ Ծ Ո Ւ Ը Ն Տ Ր Յ Ա Լ Ն Ե Ր Ի ,  
Ո Ր Ո Ն Ք Փ Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ն Ժ Ա Ռ Ա Ն -  
Գ Ե Լ Ո Ւ ,  
Հ Ա Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ր Ո Շ Ն Շ Ա Ն Ն Ե Ր  
Կ Ա Մ Հ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ա. Այս կյանքում ոչ ոք չի կարող համոզված լինել իր փրկության մեջ, առանց Աստծու մասնավոր հայտնության. բայց և ոչ ոք հույսը պիտի չկտրի իր փրկությունից, այլ մեծ հույսով ու երկյուղով ջանա հասնել փրկությանը՝ ըստ այսմ. «Ահով և դողով դուք ձեր փրկության համար աշխատեցե՛ք» (Փիլա. Բ 12):

Այսպես են սովորեցնում Աստվածաշունչ մատյանը, սուրբ հայրերն ու աստվածաբանները: Սուրբ Գիրքը նաև ցույց է տալիս ողորմության անոթների, այսինքն՝ Աստծու ընտրյալների որոշ նշաններ, որոնցով նրանք տարբերվում են բարկության անոթներից, այսինքն՝ անարգվածներից (հմմտ. Հռոմ. Թ 22-23):

Ստույգ է, որ նա է փրկվում, ով գնում է փրկության ճանապարհով: Ուստի ամեն ոք, ով միտք ունի, կարող է հավանական համարել, թե ընտրյալների դասում է, եթե ուշադրություն դարձնի այն ճանապարհին, որում գտնվում է:

Եվ այս համարումը պիտի լինի ոչ այնքան մարդկային զգացումով, որքան Քրիստոսի Հոգու ազդմամբ, ինչի մասին ասում է առաքյալը. «Նույն Ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թե Աստծու որդիներ ենք» (Հռոմ. Ը 16):

Ը Ն Տ Ր Յ Ա Լ Ն Ե Ր Ի Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ն Շ Ա Ն Ն Ե -  
Ր Ը ,  
Ո Ր Ա Ս Տ Կ Ա Մ Ա Ք Ա Ն Ն Ե Ր Ը  
Վ Ե Ր Ց Ն Ո Ւ Մ Ե Ն Ս Ո Ւ Ր Ք Գ Ր Ք Ի Ց ,  
Հ Ե Տ Ե Վ Յ Ա Լ Տ Ա Ս Ն Ե Ն

Ա. Ով ուղիղ հավատ ու աներկբա հույս ունի, սիրում է Աստծուն ու ընկերոջը, Աստծուց երկնչում է և պահում Նրա բոլոր պատվիրանները, նախանձավոր է լինում Աստծու փառքին ու ջանք թափում ընկերոջ փրկության համար:

Բ. Ով բոլոր գործերում որպես իր վերջին նպատակ ունի Աստծու արքայությունը, չունի հարստության, փառքի, պատվի և աշխարհի բոլոր բաների անկարգ բաղձանք:

Գ. Ով հանուն Քրիստոսի անտրտունջ համբերում է բոլոր վշտերին ու փորձություններին, իրեն ու իրեն վերաբերող ամեն ինչ հանձնում է աստվածային տեսչությանը և ամեն ինչում համաձայնում Աստծու կամքին:

Դ. Ով հեզ ու խոնարհամիտ է, ամենքին բարիք է կամենում և ոչ ոքի չարիք գործել չի խորհում, թշնամիներին ներում է և նրանց փրկության համար աղոթում:

Ե. Ով ամեն ժամանակ իր կարողության չափով ողորմություն է տալիս կարոտյալներին, խնամում հիվանդներին, օգնում փորձանավորներին, ուսուցանում տգետներին ու խրատում անխրատներին:

Զ. Ով իրեն բոլոր մարդկանցից մեղավոր է համարում, հոգու խոնարհությամբ զղջում մեղքերի համար, հաճախ խոստովանում ու ապաշխարում և արժանապես մոտենում հաղորդվելու Տիրոջ մարմնի ու արյան կենարար Խորհրդին:

Է. Ով ըստ ամենայնի զգուշանում է մահացու մեղքերից, և որքան հնարավոր է, ներելի հանցանքներից, հեռանում է մեղքի պատճառից և իր զգայարաններն ամեն անվայել բանից հեռու պահում, մարմնավոր հաճույքներից ու փափկությունից փախչում և մարմինը պահքով ու ժուժկալությամբ ճնշում:

Ը. Ով հոժարամտությամբ ունկնդրում է հոգեշահ խրատներ և Աստծու պատգամները սրտի ուրախությամբ լսում ու ջանում է կատարել:

Թ. Ով ջերմեռանդությամբ մասնակցում է սուրբ Պատարագին, անձանձիր կատարում է իր ամենօրյա աղոթքները, ապավինում սուրբ Աստվածածնին և նրան խնդրում բարեխոսել Աստծու առաջ:

Ժ. Ով միշտ խոկում է իր մահվան ու Աստծու դատաստանի, արքայության փառքի ու դժոխքի տանջանքների մասին: